Սորմոնի Գիրք

Ավետարանի Վարդապետության Ուսուցչի Ձեռնարկ

Մորմոնի Գիրք

Ավետարանի Վարդապետության Ուսուցչի Ձեռնարկ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից

Դիտողություններ և առաջարկություններ

Այս ձեռնարկի վերաբերյալ ձեր դիտողությունները և առաջարկությունները կարևոր են մեզ համար: Խնդրում ենք դրանք ուղարկել հետևյալ հասցեով.

Curriculum Planning
50 East North Temple Street, Floor 24
Salt Lake City, UT 84150-3200
USA
E-mail: cur-development@ldschurch.org

Խնդրում ենք գրել ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Չմոռանաք գրել ձեռնարկի վերնագիրը: Այնուհետև, գրի առեք ձեռնարկի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ ձեր դիտողությունները և առաջարկությունները:

© 2001, 2002 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են:

Printed in Belgium

Անգլերենի հաստատումը. 8/96
Թարգմանության հաստատումը. 8/96

Book of Mormon: Gospel Doctrine Teacher's Manual թարգմանություն

35683 201
Armenian East

Բովանդակություն

	Դասի համարը և վերնագիրը	Էջ
	Օգնություն ուսուցիչներին	V
1	«Մեր կրոնի պորտաքարը»	1
2	«Բոլոր բաները՝ ըստ Իր կամքի» (1 Նեփի 1–7)	6
3	Կենաց ծառի տեսիլքը (1 Նեփի 8–11; 12.16–18; 15)	11
4	«Բաները, որոնք ես տեսա մինչ հեռու էի տարվել՝ հոգով» (1 Նեփի 12–14)	16
5	«Ականջ դնել ճշմարտությանը և ուշք դարձնել դրան» (1 Նեփի 16–22)	20
6	«Ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք» (2 Նեփի 1–2)	25
7	«Ես գիտեմ՝ ում եմ ապավինել» (2 Նեփի 3–5)	29
8	«Օհ, որքան մեծ է բարությունը մեր Աստծո» (2 Նեփի 6–10)	33
9	«Իմ հոգին հրճվում է Եսայիայի խոսքերից» (2 Նեփի 11–25)	37
10	«Նա հրավիրում է բոլորին գալ Իր մոտ» (2 Նեփի 26–30)	42
11	«Առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ» (2 Նեփի 31–33)	47
12	«Դուք որոնեք Աստծո՛ արքայությունը» (Հակոբ 1–4)	51
13	Ձիթենու ծառի այլաբանությունը (Հակոբ 5–7)	56
14	«Իմաստուն նպատակի համար» (Ենովս, Հարոմ, Օմնի, Մորմոնի Խոսքերը)	61
15	«Հավերժ պարտական եք ձեր Երկնային Հորը» (Մոսիա 1–3)	66
16	«Դուք կկոչվեք Քրիստոսի զավակներ» (Մոսիա 4–6)	71
17	«Տեսանողը . . . իր մերձավորների համար դառնում է մեծ բարիք» (Մոսիա 7–11)	75
18	«Աստված ինքը . . . պիտի փրկագնի իր ժողովրդին» (Մոսիա 12–17)	79
19	«Ոչ մեկը ի զորու չեղավ նրանց ազատել, բացի Տիրոջից» (Մոսիա 18–24)	84
20	«Իմ հոգին այլևս չի ցավում» (Մոսիա 25–28; Ալմա 36)	89
21	«Ալման . . . դատում էր արդար դատավճիռներ» (Մոսիա 29; Ալմա 1–4)	94
22	«Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին» (Ալմա 5–7)	98
23	«Ավելի, քան մեկ վկա» (Ալմա 8–12)	102
24	«Տուր մեզ ուժ ըստ մեր հավատքի, որը Քրիստոսում է» (Ալմա 13–16)	107
25	«Նրանք սովորեցնում էին Աստծո զորությամբ և իշխանությամբ» (Ալմա 17–22)	112
26	«Դարձի բերվեցին առ Տերը» (Ալմա 23–29)	116
27	«Բոլոր բաները մատնանշում են՝ կա՛ Աստված» (Ալմա 30–31)	120
28	«Խոսքը ի փրկություն՝ Քրիստոսում է» (Ալմա 32–35)	124
29	«Ականջ դիր իմ խոսքերին» (Ալմա 36–39)	128

30	«Երջանկության մեծ ծրագիրը» (Ալմա 40–42)	133
31	«Հաստատուն Քրիստոսի հավատքում» (Ալմա 43–52)	138
32	«Նրանք հնազանդվում . . . էին ճշգրիտ կատարել հրամանի ամեն մի բառը» (Ալմա 53–63)	142
33	«Հաստատուն հիմք» (Հելաման 1–5)	146
34	«Ինչպես կարողացաք մոռանալ ձեր Աստծուն» (Հելաման 6–12)	150
35	«Ապաշխարել ու վերադառնալ դեպի Տերը» (Հելաման 13–16)	155
36	«Էգուց ես գալիս եմ աշխարհ» (3 Նեփի 1–7)	160
37	«Ով որ գա, նրան ես կընդունեմ» (3 Նեփի 8–11)	164
38	«Հին բաներին վերջ տրվեց և բոլոր բաները դարձան նոր» (3 Նեփի 12–15)	168
39	«Ահա, իմ ցնծությունը լիակատար է» (3 Նեփի 17–19)	173
40	«Եվ այդ ժամանակ կհավաքեմ ես նրանց» (3 Նեփի 16; 20–21)	177
41	«Նա մեկնաբանեց նրանց բոլոր բաները» (3 Նեփի 22–26)	181
42	«Այս է իմ ավետարանը» (3 Նեփի 27–30; 4 Նեփի)	185
43	«Ինչպե՞ս կարողացաք հեռանալ Տիրոջ ուղիներից» (Մորմոն 1–6; Մորոնի 9)	190
44	«Ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք» (Մորմոն 7–9)	194
45	«Երբեք մարդը չի հավատացել ինձ, ինչպես դու» (Եթեր 1–6)	198
46	«Հավատքով են բոլոր բաները կատարվում» (Եթեր 7–15)	202
47	«Պահելու նրանց ճշմարիտ ուղու վրա» (Մորոնի 1–6)	206
48	«Եկե՛ք դեպի Քրիստոսը» (Մորոնի 7–8; 10)	210

Օգնություն ուսուցիչներին

Տասներկու Առաքյալների հետ հանդիպման ժամանակ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասաց եղբայրներին, «որ Մորմոնի Գիրքը երկրի վրա եղած բոլոր գրքերից ամենաճիշտն է և մեր կրոնի պորտաքարը, և մարդն ավելի կմոտենար Աստծուն ապրելով ըստ նրա ցուցումների, քան՝ ըստ որևէ այլ գրքի» (Եկեղեցու Պատմություն, 4:461; տե՛ս նաև Մորմոնի Գրքի նախաբանը):

Որպես ավետարանի վարդապետության ուսուցիչ դուք այս տարի հնարավորություն կունենաք սովորեցնելու «աշխարհի ամենաճիշտ գրքից»: Առաջնորդվելով Սուրբ Հոգով, դուք կկարողանաք դասարանի անդամներին օգնել հասկանալ հավերժական սկզբունքները և զորացնել Հիսուս Քրիստոսի, Նրա ավետարանի և Մարգարե Ջոզեֆ Սմիթի առաքելության մասին իրենց վկայությունները: Դուք կկարողանաք նրանց օգնել ստանալու այլ օրհնություններ, որոնք գալիս են Մորմոնի Գրքի կանոնավոր ուսումնասիրության արդյունքում և որոնց մասին խոսել է Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը:

«Մորմոնի Գիրքը բացահայտում է Քրիստոսի թշնամիներին: Այն բացահայտում է կեղծ ուսմունքները և դադարեցնում հակառակությունները (տե՛ս 2 Նեփի 3.12): Այն զորացնում է Քրիստոսի հնազանդ հետևորդներին՝ մեր օրերում չարի ծրագրերի, ռազմավարության և սատանայի ուսմունքների դեմ պայքարելիս: Մորմոնի Գրքում նկարագրված ուրացությունները նման են մեր օրերի ուրացություններին: Իր խորաթափանց կանխատեսությամբ Աստված այնպես է կազմել Մորմոնի Գիրքը, որպեսզի մենք այսօր կարողանանք ճանաչել սխալը և իմանալ ինչպես պայքարել կրթական, քաղաքական, կրոնական և փիլիսոփայական կեղծ գաղափարների դեմ» (in Conference Report, Apr. 1975, 94–95; or *Ensign*, May 1975, 64):

«Գրքում կա մի ուժ, որը կսկսի լցվել ձեր կյանքն այն պահից, երբ սկսեք գրքի լուրջ ուսումնասիրությունը: Դուք ավելի մեծ ուժ կգտնեք գայթակղությանը դիմակայելու համար: Դուք ուժ կգտնեք խաբեությունից խուսափելու համար: Դուք ուժ կգտնեք անձուկ ու նեղ արահետի վրա մնալու համար . . . Երբ այդ խոսքերից հետո դուք սով ու ծարավ զգաք, ապա կգտնեք մի կյանք, որն ավելի ու ավելի լիառատ է» (in Conference Report, Oct. 1986, 6; կամ *Ensign*, Nov. 1986, 7):

Ուսուցանելու ընթացքում Տիրոջ Հոգին վկայություն կբերի Մորմոնի Գրքի զորության մասին, որը մարդկանց Հիսուս Քրիստոսի և Նրա վարդապետության մասին ամուր և հաստատուն գիտելիք է պարգևում:

Ուսուցանել Սուրբ Հոգով

Ավետարանի Ուսմունքի դասին նախապատրաստվելիս շատ կարևոր է փնտրել Սուրբ Հոգու ոգեշնչումը և առաջնորդությունը: Հոգին ձեզ կտրվի հավատի աղոթքի միջոցով, ասել է Տերը, և, եթե չստանաք Հոգին, չպետք է սովորեցնեք (տե՛ս Վ և Ու 42.14): Հիշեք, որ ձեր դասարանի ուսուցիչը պետք է լինի Սուրբ Հոգին:

Սուրբ Հոգու առաջնորդությունը դուք կարող եք փնտրել աղոթելով, ծոմ պահելով, ամեն օր ուսումնասիրելով սուրբ գրությունները և պահելով պատվիրանները: Դասին նախապատրաստվելիս, աղոթեք, որպեսզի Սուրբ Հոգին օգնի ձեզ հասկանալ սուրբ գրությունները և դասարանի անդամների պահանջները: Սուրբ Հոգին ձեզ կարող է նաև օգնել ծրագրել ձեր դասը սուրբ գրությունները լավագույն եղանակով քննարկելու և մեր կյանքում այն

կիրառելու համար (տե՛ս 1 Նեփի 19.23): Սուրբ Հոգու առաջնորդությամբ դուք Տիրոջ ձեռքում արդյունավետ գործիք կդառնաք Իր խոսքը Իր զավակներին ուսուցանելու գործում:

Սուրբ Հոգին ձեր դասարան հրավիրելու համար մի քանի առաջարկություններ բերվում են ստորև.

1. Դասարանի անդամներին հրավիրեք դասից առաջ և հետո աղոթքներ ասելու: Դասի ժամանակ աղոթեք ձեր սրտում Սուրբ Հոգու առաջնորդության, դասարանի անդամների սրտերը բացելու և ոգեշնչում ու վկայություն ստանալու համար:
2. Օգտագործեք սուրբ գրությունները (տե՛ս «Կենտրոնանալ սուրբ գրությունների վրա» բաժինը):
3. Բերեք ձեր վկայությունը ոչ միայն դասի վերջում, այլև այն պահին, երբ Սուրբ Հոգին հուշում է: Վկայեք Հիսուս Քրիստոսի մասին: Դասարանի անդամներին հաճախ հրավիրեք բերելու իրենց վկայությունները:
4. Օգտագործեք օրհներգերը, Երեխաների Միության և այլ հոգևոր երաժշտություն՝ նախապատրաստելու դասարանի անդամների սրտերը Սուրբ Հոգին զգալու համար:
5. Արտահայտեք դասարանի անդամների, մարդկանց, Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատը:
6. Երբ հարմար է, կիսվեք դասին վերաբերող ձեր ներշնչումներով, զգացումներով և փորձով: Դասարանի անդամներին հրավիրեք նույն կերպ վարվել: Դասարանի անդամները կարող են նաև պատմել, թե ինչպես են կիրառել նախորդ դասերի ժամանակ սովորած սկզբունքները:

Կենտրոնանալ սուրբ գրությունների վրա

Երեց Ք. Բոյդ Փաքերը սովորեցրել է. «Ճշմարիտ ուսմունքը, հասկանալու դեպքում, փոխում է վերաբերմունքը և վարքը» (in Conference Report, Oct. 1986, 20; կամ *Ensign*, Nov. 1986, 17): Դասին պատրաստվելիս և դասի ընթացքում աշխատեք ավետարանի ուսմունքները ներկայացնել այնպես, ինչպես տրված են սուրբ գրություններում և վերջին օրերի մարգարեների ուսմունքներում: Դա ձեզանից կպահանջի սուրբ գրությունների լուրջ ուսումնասիրություն աղոթքների միջոցով: Տերը պատվիրել է, որպեսզի մենք ոչ թե հայտարարենք Իր խոսքը, այլ սկզբում փնտրենք Նրա խոսքը, այնուհետև կարող ենք խոսել դրա մասին, ապա, եթե, ցանկանում ենք, պետք է ունենանք Նրա Հոգին և Նրա խոսքը, և Աստծո զորությունը մարդկանց համոզելու համար (տե՛ս Վ և Ու 11.21):

Դասարանի անդամներին խրախուսեք սուրբ գրությունները իրենց հետ բերել ամեն շաբաթ: Որոշ հատվածներ քննարկելիս, միասին կարդացեք դրանք: Երբ հնարավոր է, օգտագործեք սուրբ գրությունների Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հրատարակումները:

Մորմոնի Գրքով կիսվելը

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը Եկեղեցու անդամների առաջ խնդիր է դրել ներկայացնել Մորմոնի Գիրքը ուրիշներին: Նա ասել է.

«Վաղուց եկել է այն ժամանակը, երբ երկիրը պետք է լիովին հեղեղվեր Մորմոնի Գրքով . . . Աստված մեզանից պատասխան կպահանջի, եթե այժմ հիմնավորապես առաջ չքաշենք Մորմոնի Գիրքը . . .

Մենք ունենք Մորմոնի Գիրքը, մենք ունենք անդամներ, մենք ունենք միսիոներներ, մենք ունենք միջոցներ, իսկ աշխարհը կարիք ունի:

Ժամանակը եկել է» (In Conference Report, Oct. 1988, 4; կամ *Ensign*, Nov. 1988, 4–5):

Այս տարի Կիրակնօրյա դպրոցում Մորմոնի Գիրքը ուսուցանելիս, դասարանի անդամներին խրախուսեք կիսվել Մորմոնի Գրքով իրենց ոչ անդամ ընկերների և ծանոթների հետ (տե՛ս դաս 1-ում տրված ուսուցանման լրացուցիչ մտքեր բաժինը): Տարվա սկզբում, խորհրդակցեք եպիսկոպոսության կամ ծխի միսիայի ղեկավարի հետ դասարանի անդամներին լրացուցիչ Մորմոնի Գրքեր տրամադրելու վերաբերյալ, որպեսզի նրանք կիսվեն դրանցով ուրիշների հետ:

Այս ձեռնարկի օգտագործումը

Այս ձեռնարկը ձեզ կծառայի որպես գործիք ավետարանի ուսմունքները սուրբ գրություններից ուսուցանելու համար: Այն գրված է Ավետարանի Ուսմունքի դասարանի երիտասարդ և մեծահասակ անդամների համար և կարող է օգտագործվել ամեն չորս տարին մեկ: Դասերն ուսուցանելիս պարտադիր չէ օգտագործել լրացուցիչ հղումները և առաջարկությունները: Երեց Մ. Ռասել Բալլարդն ասել է. «Նախքան լրացուցիչ նյութերին դիմելը ուսուցիչներին խորհուրդ է տրվում լրջորեն ուսումնասիրել սուրբ գրությունները և իրենց ձեռնարկները: Շատ ուսուցիչներ շեղվում են ուսումնական ծրագրով նախատեսված նյութերից առանց լրջորեն դրանց հետ ծանոթանալու: Եթե ուսուցիչները դասը ներկայացնող սուրբ գրություններից և ձեռնարկներից դուրս լրացուցիչ նյութերի կարիք են զգում, ապա առաջին հերթին պետք է օգտագործեն Եկեղեցու ամսագրերը» (In Conference Report, Apr. 1983, 93; կամ *Ensign*, May 1983, 68):

Առնվազն մեկ շաբաթ առաջ կարդացեք դասը: Երբ ընթերցման հանձնարարությունը և դասի նյութը նախորոք եք ուսումնասիրում, շաբաթվա ընթացքում մտքեր և ներշնչումներ եք ունենում, որոնք օգնում են ձեզ մատուցել դասը: Շաբաթվա ընթացքում դասի շուրջ մտորելիս աղոթեք, որպեսզի Սուրբ Հոգին առաջնորդի ձեզ: Հավատ ունեցեք, որ Տերը կօրհնի ձեզ:

Այս ձեռնարկի յուրաքանչյուր դասն ավելի շատ տեղեկություն է պարունակում, քան դուք ի վիճակի կլինենք ուսուցանել մի դասի ընթացքում: Առաջնորդվեք Սուրբ Հոգով ընտրելու համար այն սուրբ գրությունները, հարցերը և դասի այլ նյութերը, որոնք լավագույն ձևով կբավարարեն դասարանի անդամների պահանջները:

Յուրաքանչյուր դաս ներառում է հետևյալ բաժինները.

1. *Վերնագիր*: Վերնագիրը բաղկացած է երկու մասերից. կարճ նկարագրական մեջբերում կամ արտահայտություն և սուրբ գրություն, որը պետք է կարդաք դասը պատրաստելիս:

2. *Նպատակ*:Նպատակի սահմանումը առաջարկում է այն գաղափարը, որի վրա դուք պետք է կենտրոնանաք դասը պատրաստելիս և անցկացնելիս:

3. *Նախապատրաստություն*: Այս բաժինը ամփոփում է դասում նշված սուրբ գրությունը: Այն նաև կարող է ընդգրկել լրացուցիչ ընթերցում և այլ առաջարկներ դասին նախապատրաստվելու համար, օրինակ՝ այնպիսի նյութեր, որոնք դուք ձեզ հետ դասարան կարող եք բերել: Այդ նյութերից շատերը կարելի է ձեռք բերել ժողովատան գրադարանից: (Հինգ նիշանի համարը, որը հաջորդում է առաջարկվող նկարի վերնագրին ժողովատան գրադարանային համարն է: Եթե նկարը ներառված է Ավետարանի արվեստի նկարների ժողովածուի մեջ, համարը ևս տրված է:)

4. *Ուշադրության վարժություն*: Այս բաժինը պարունակում է պարզ գործողություն, դասի առարկան, մեջբերում կամ հարց, որոնք դասարանի անդամներին կօգնեն պատրաստվել լսելու, մասնակցելու և Սուրբ Հոգու ազդեցությունը զգալու համար: Անկախ նրանից, օգտագործում եք ձեռնարկում տրված ուշադրության վարժությունը, թե ձեր սեփական վարժությունն եք անցկացնում, կարևոր է դասարանի անդամների ուշադրությունը գրավել դասի սկզբից: Վարժությունը պետք է կարճատև լինի:

5. *Սուրբ գրությունների քննարկում և կիրառում*: Սա դասի հիմնական մասն է: Աղոթքով ուսումնասիրեք սուրբ գրությունները, որպեսզի կարողանաք արդյունավետ ուսուցանել և քննարկել դրանք: Ուսուցանման եղանակները բազմազան դարձնելու և դասարանի հետաքրքրությունը պահպանելու համար օգտագործեք «Խրախուսել դասարանային քննարկումներ» և «Սուրբ գրությունները ուսուցանելիս բազմազան եղանակների օգտագործում» բաժիններում տրված առաջարկությունները (էջեր VIII–IX): Ընտրեք այն հարցերը և եղանակները, որոնք համապատասխանում են դասարանի անդամների տարիքին և փորձին:

6. *Եզրափակում*: Այս բաժինը ձեզ օգնում է ամփոփել դասը և դասարանին խրախուսել ապրել այն սկզբունքների համաձայն, որոնք դուք քննարկել եք: Այն նաև հիշեցնում է ձեզ բերել ձեր վկայությունը: Հետևեք, որպեսզի ժամանակը բավարարի դասը եզրափակելու համար:

7. *Ուսուցանման լրացուցիչ մտքեր*: Այս բաժինը ընդգրված է ձեռնարկի դասերի մեծ մասում: Այն կարող է ընդգրկել լրացուցիչ ճշմարտություններ սուրբ գրություններից, ուսուցանման մոտեցման այլ եղանակներ, վարժություններ կամ այլ առաջարկություններ դասը լրացնելու համար: Այդ մտքերից մի քանիսը կարող եք օգտագործել դասի ընթացքում:

Խրախուսել դասարանային քննարկումներ

Սովորաբար, դուք չպետք է դասախոսություններ կարդաք: Փոխարենը, դասարանին օգնեք սուրբ գրությունների քննարկումներին իմաստալից մասնակցություն ցուցաբերել: Դասին մասնակցելը կօգնի նրանց.

1. Սուրբ գրությունների մասին ավելի շատ սովորել:
2. Սովորել ինչպես կիրառել սուրբ գրությունները:
3. Ավելի նվիրված լինել ավետարանի սկզբունքներին համաձայն ապրելուն:
4. Սուրբ Հոգին դասարան հրավիրել:
5. Սովորեցնել և ոգևորել միմիանց, որպեսզի յուրաքանչյուրն օգուտ քաղի մյուսների պարգևներից, գիտելիքներից, փորձից և վկայություններից:

Քննարկումները պետք է օգնեն դասարանին մոտենալ Փրկչին և ապրել Նրա աշակերտների նման: Փոխեք քննարկման ուղին, եթե այս նպատակը չի իրականացվում:

Մտածելու տեղիք տվող հարցերը կարող են լինել ուսուցանման ամենաարդյունավետ եղանակներից մեկը: Այս եղանակը Փրկիչն օգտագործում էր ուսուցանելիս: Փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը այս ձեռնարկի հարցերը ուսումնասիրելիս և որոշեք որ հարցերը օգտագործել: Ձեռնարկը սուրբ գրություններից մեջբերումներ է առաջարկում ձեր և դասարանին օգնելու գտնել այդ հարցերի պատասխանները: Այլ հարցերի պատասխանները կստացվեն դասարանի անդամների փորձից:

Ավելի կարևոր է դասարանի անդամներին օգնել հասկանալ և կիրառել սուրբ գրությունները, քան պարզապես մատուցել դասի պատրաստված ամբողջ նյութը: Եթե դասարանի անդամները սովորում են քննարկումների ժամանակ, միշտ օգտակար է շարունակել, այլ ոչ թե աշխատել մատուցել ամբողջ նյութը:

Օգտագործեք հետևյալ ցուցումները դասարանային քննարկումներ վարելու համար.

1. Հարցեր տվեք, որոնք տեղիք կտան մտածելու և քննարկելու, մի տվեք հարցեր, որոնց պատասխանները միայն *այո* կամ *ոչ* կարող են լինել: Այն հարցերը, որոնք սկսում են *ինչո՞ւ, ինչպե՞ս, ո՞վ, ի՞նչը, ե՞րբ* և *որտե՞ղ* հարցական բառերով քննարկում սկսելու ամենաարդյունավետ եղանակներն են:

2. Դասարանին խրախուսեք կիսվել իրենց փորձով, որը կարող է ցույց տալ, թե ինչպես սուրբ գրությունների սկզբունքները և ուսմունքները կարող են օգտագործվել կյանքում: Նաև խրախուսեք նրանց կիսվել իրենց զգացմունքներով՝ սուրբ գրություններից իրենց սովորածի մասին: Շնորհակալություն հայտնեք իրենց աշխատանքի համար:

3. Զգայուն եղեք դասարանի անդամներից յուրաքանչյուրի կարիքների նկատմամբ: Թեպետ և բոլոր անդամները պետք է խրախուսվեն մասնակցել դասարանային քննարկումներին, որոշ անձիք կարող են տատանվել: Դուք կարող եք նրանց հետ առանձին զրույց ունենալ և հարցնել, թե արդյոք վատ չեն զգա բարձրաձայն կարդալ կամ մասնակցություն ցուցաբերել դասի ժամանակ: Ուշադիր եղեք, որպեսզի չհարցնեք այն անդամներին, որոնք կարող են իրենց անհարմար զգալ:

4. Տվեք սուրբ գրությունների վկայակոչումները՝ դասարանին օգնելու պատասխանել հարցերին:

Սուրբ գրություններն ուսուցանելիս բազմազան եղանակների օգտագործումը

Օգտագործեք հետևյալ առաջարկությունները սուրբ գրություններն ավելի արդյունավետ և բազմազան եղանակներով ուսուցանելու նպատակով.

1. Դասարանին օգնեք հասկանալ, թե ինչ է սուրբ գրությունը սովորեցնում Հիսուս Քրիստոսի մասին: Խնդրեք նրանց մտածել, թե ինչպես են տարբեր հատվածներ զորացնում Փրկչի հանդեպ իրենց հավատքը և օգնում զգալ Նրա սերը:

2. Դասարանի անդամներին խնդրեք մտածել և ասել, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրությունը կյանքում: Խդրեք նրանց մտովի իրենց պատկերացնել հատվածներում նկարագրված մարդկանց փոխարեն:

3. Ուսմունքը ուսուցանելուց բացի ընդգծեք Մորմոնի Գրքի ոգեշնչող պատմությունները: Հետևեք, որպեսզի դասարանի անդամները հասկանան պատմությունները և քննարկեն դրանք կիրառելու ճանապարհները: Հարցրեք.«Ինչո՞ւ է, ձեր կարծիքով, այս հատվածը ընդգրկված Մորմոնի Գրքում» կամ «Այս պատմությունից ի՞նչ մենք կարող ենք սովորել, որը կօգնի Քրիստոսի ավելի լավ հետևորդները լինել»:

4. Դասարանի անդամներին խնդրեք գտնել այնպիսի բառեր, արտահայտություններ կամ մտքեր, որոնք սուրբ գրություններում հաճախ են կրկնվում կամ իրենց համար հատուկ իմաստ են պարունակում:

5. Գրատախտակին գրեք արտահայտություններ, հիմնական բառեր կամ հարցեր որոնք վերաբերվում են սուրբ գրությունների տվյալ հատվածին: Այնուհետև, կարդացեք և ամփոփեք այդ հատվածը: Երբ դասարանի անդամները լսում են արտահայտությունները, կարևոր բառերը կամ հարցերի պատասխանները, կանգ առեք և քննարկեք դրանք:

6. Մորմոնի Գրքում «այսպիսով մենք տեսնում ենք» արտահայտությունն օգտագործվում է ուսուցանվող սկզբունքը ամփոփելու համար (տե՛ս օրինակ Հելաման 3.28): Սուրբ գրությունների հատվածը կարդալուց հետո դասարանի անդամներին խնդրեք բացատրել հատվածը՝ օգտագործելով «այսպիսով մենք տեսնում ենք» արտահայտությունը:

7. Գտեք և քննարկեք Մորմոնի Գրքում օգտագործվող խորհրդանիշները: Օրինակ, ուղիղ և նեղ ճանապարհը հաճախ օգտագործվում է ավետարանը խորհրդանշելու համար (տե՛ս, օրինակ, 2 Նեփի 31.17–20; 33.9; Հակոբ 6.11; 3 Նեփի 14.13–14; 27.33):

8. Գտեք, սուրբ գրությունների այն մարդկանց կամ իրադարձությունները, որոնք կարելի է հակադրել միմյանց կամ համեմատել միմյանց հետ: Օրինակ, դուք կարող եք հակադրել Լամանին և Լեմուելին և իրենց եղբայրներ Նեփիին և Սամին, կամ համեմատել ինչպես է տրվում Փրկչի Լեռան Քարոզը Նոր Կտակարանում և 3 Նեփի 12–14 հատվածներում:

9. Դասարանի անդամներին խնդրեք բեմականացնել սուրբ գրությունների պատմությունները՝ բարձրաձայն կարդալով տարբեր կերպարների խոսքերը: Բեմականացման ընթացքում ուշադիր եղեք, որպեսզի պահպանեք սուրբ գրությունների հանդեպ հարգանքը:

10. Դասարանը երկու կամ ավելի խմբերի բաժանեք: Սուրբ գրության հատվածը կարդալուց հետո, յուրաքանչյուր խմբի խնդրեք գրի առնել այդ հատվածում ուսուցանվող սկզբունքները և ուսմունքները: Այնուհետև, խմբերին խնդրեք հերթով քննարկել այդ սկզբունքների կիրառումը կյանքում:

11. Դասարանի անդամներին խնդրեք իրենց հետ մատիտներ բերել քննարկման ընթացքում կարևոր հատվածները նշելու համար:

12. Ցույց տվեք հատվածներ *Book of Mormon Video Presentation* (53911) տեսաֆիլմից, ինչպես առաջարկվում է տարբեր դասերի «Նախապատրաստություն» բաժիններում:

Նոր անդամներին օգնելը

Դուք հնարավորություն կունենաք ուսուցանել այնպիսի մարդկանց, որոնք նոր են միացել Եկեղեցուն: Ձեր ուսուցանումը կօգնի այդ անդամներին դառնալ հաստատուն իրենց հավատքի մեջ:

Առաջին Նախագահությունն ասել է. «Եկեղեցու յուրաքանչյուր անդամ սիրո և սնուցման կարիք ունի, հատկապես մկրտությունից հետո առաջին ամիսների ընթացքում: Երբ նոր անդամները անկեղծ ընկերների են հանդիպում, ծառայելու հնարավորություններ և Աստծո խոսքը ուսումնասիրելու արդյունքում հոգևոր սնուցում ստանում, նրանք հաստատուն նորդարձներ են դառնում և լինում «սուրբերի հետ քաղաքացիներ և Աստուծոյ ընտանիքներ» (Եփեսացիս Բ 2:19)» (Առաջին Նախագահության նամակ, 15 Մայիսի, 1997):

Ավետարանի ուսուցանումը երիտասարդներին

Երիտասարդներին ուսուցանելիս, հիշեք, որ նրանք հաճախ ակտիվ մասնակցության և քննարկվող ուսմունքների պատկերավոր ներկայացման կարիք են զգում: Ձեռնարկում առաջարկվող տեսաֆիլմերի, նկարների և վարժությունների օգտագործումը կարող է օգնել երիտասարդներին պահպանել իրենց հետաքրքրությունը դասի ժամանակ: Երիտասարդներին ավետարանն ուսուցանելու այլ մտքերի համար օգտվեք *Teaching – No Greater call* (33043) *և Ուսուցանման Ուղեցույց* (34595) ձեռնարկներից:

«Մեր կրոնի պորտաքարը»

Դաս
1

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, թե ինչու է Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարը հանդիսանում և ինչպես կարող ենք ավելի մոտենալ Աստծուն՝ հետևելով Մորմոնի Գրքի ուսմունքներին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին. 1 Նեփի 13.38–41;19.23; 2 Նեփի 25.21–22; 27.22; 29.6–9; Մորմոն 8.26–41; Եթեր 5.2–4; 10.3–5; Մորոնի 1.4; 10.3–5; Վարդապետություն և Ուխտեր 10.45–46; 20.8–12; 84.54–58: Ուսումնասիրեք նաև Մորմոնի Գրքի ներածական բաժինները, ներառյալ Վերնագրի էջը, Նախաբանը, Երեք Վկաների Վկայությունը, Ութ Վկաների Վկայությունը և Մարգարե Ջոզեֆ Սմիթի Վկայությունը:
2. Լրացուցիչ ընթերցանություն. «Մորմոնի Գիրքը – մեր կրոնի պորտաքարը» (Էզրա Թավք Բենսոն, *Ensign,* Nov. 1986, 4–7; տե՛ս նաև Conference Report, Oct. 1986, 3–7):
3. Դասարանի յուրաքանչյուր անդամի համար ձեռք բերեք *Մորմոնի Գրքի Դասարանի Անդամի Ուսուցման Ուղեցույց*-ի (35684) մեկ օրինակ: (Դուք պետք է ստանաք այդ օրինակները Կիրակնօրյա Դպրոցի Նախագահությունից:)
4. Դասարանի որևէ անդամի նախօրոք խնդրեք նախապատրաստվել ամփոփելու Մարգարե Ջոզեֆ Սմիթի Վկայությունը, երկրորդին՝ Երեք Վկաների Վկայությունը, իսկ երրորդին՝ Ութ Վկաների Վկայությունը:
5. Հետևյալ նյութերի առկայության դեպքում պատրաստվեք օգտագործել դրանք դասի ընթացքում.

   ա. «Մորոնին հայտնվում է Ջոզեֆ Սմիթին նրա սենյակում» (62492; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 404) և «Ջոզեֆ Սմիթը ստանում է ոսկյա թիթեղները» (62012; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 406) նկարները:

   բ. «Մեր օրերի համար» չորս րոպեանոց հատվածը Մորմոնի Գիրքը Տեսաֆիլմից (53911):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրատախտակին նկարեք քարե կամար:



Բացատրեք, որ, եթե այս կամարը ճիշտ է կառուցված, այն կարող է կանգուն մնալ առանց քարերն իրար ամրացնող որևէ կպչուն նյութի:

- Ի՞նչն է պահում այդ կամարը:

Գրեք պորտաքար բառը կամարի կենտրոնական քարի վրա: Բացատրեք, որ կամարի պորտաքարը պահում է կամարի մյուս քարերը: Այս դասը քննարկում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պորտաքարը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը կամ դասի նյութերը, որոնք լավագույնս կհամապատասխանեն ձեր դասարանի անդամների կարիքներին: Քննարկեք, ինչպես կարելի է ընտրված հատվածները օգտագործել առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել դասի ժամանակ քննարկած սուրբ գրություններին վերաբերվող իրենց փորձով:

1. Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է:

Դասարանի անդամներին խնդրեք բացել Մորմոնի Գրքի Նախաբանը և որևէ մեկին խնդրեք կարդալ վեցերորդ պարբերությունը:

Եթե կատարել եք ուշադրության վարժությունը, ապա գրատախտակի վրա *պորտաքար* բառի տակ գրեք *Մորմոնի Գիրքը*:

Եթե չեք կատարել ուշադրության վարժությունը, ապա գրատախտակին գրեք *Մորմոնի Գիրքը = պորտաքար* և բացատրեք, որ կամարի պորտաքարն օգնում է մնացած բոլոր քարերին մնալ իրենց տեղերում և կանխում է կամարի փլուզումը:

- Ինչո՞ւ է Ջոզեֆ Սմիթը կոչել Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարը:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը բացատրել է. «Ինչպես կամարն է փլուզվում, երբ պորտաքարը հեռացվում է, այնպես էլ Եկեղեցին կփլուզվի կամ կմնա կանգուն կախված Մորմոնի Գրքի ճշմարտացիությունից» (In Conference Report, Oct. 1986, 5; կամ *Ensign*, Nov. 1986, 6):

- Ինչո՞ւ է Եկեղեցին «կանգուն մնում կամ փլուզվում կախված Մորմոնի Գրքի ճշմարտացիությունից»:

Այս հարցը քննարկելուց հետո, դասարանի անդամերից մեկին խնդրեք կարդալ Նախագահ Բենսոնի հետևյալ խոսքերը. «Երեք ճանապարհներ կան, որոնցով Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է դառնում: Այն Քրիստոսի հանդեպ մեր հավատքի վկայության պորտաքարն է: Այն մեր վարդապետության պորտաքարն է: Այն մեր վկայության պորտաքարն է» (In Conference Reoprt, Oct. 1986, 4; կամ *Ensign*, Nov. 1986, 5):

Գրատախտակին գրեք *Քրիստոսի Վկա* բառերը:

- Խնդրեք դասարանի անդամներին բացել Մորմոնի Գրքի վերնագրի էջը և բացատրեք, որ այս էջը գրվել է Մորոնի մարգարեի կողմից: Ըստ երկրորդ պարբերության, որո՞նք են Մորմոնի Գրքի երեք նպատակները: (Ցույց տալու Իսրայելի տան մնացորդին այն մեծ գործերը, որ Տերն արեց նրանց հայրերի համար; սովորեցնելու Տիրոջ պահանջած պատվիրանները; և համոզելու բոլոր մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է, որը հայտնեց Իրեն բոլոր ազգերին:)

- 1982 թվին Մորմոնի Գրքի վերնագրին ավելացվեց Եվս Մեկ Վկայություն Հիսուս Քրիստոսի Մասին ենթավերնագիրը: Ինչո՞ւ է կարևոր ունենալ Փրկչի մասին լրացուցիչ վկայություն: (Տե՛ս 1 Նեփի 13.38–41; 2 Նեփի 29.6–9:) Ինչո՞ւ է կարևոր հայտարարել աշխարհին այն մասին, որ Մորմոնի Գիրքը վկայում է Քրիստոսի մասին:

- Ի՞նչ սովորեցիք Հիսուս Քրիստոսի մասին Մորմոնի Գրքից: Ինչպե՞ս Մորմոնի Գիրքը զորացրեց Հիսուս Քրիստոսի մասին ձեր վկայությունը:

Գրատախտակին գրեք *Վարդապետություն*:

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը մեր «վարդապետության պորտաքարը»: (Տե՛ս Վ և Ու 10.45–46; 20.8–12:)

  Նախագահ Բենսոնն ասել է. «Տերն Ինքն է ասել, որ Մորմոնի Գիրքը պարունակում է «Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը» (Վ. և Ու. 20.9): Սա չի նշանակում, որ այն պարունակում է ամեն մի ուսմունք, ամեն մի վարդապետություն, որ երբևիցե տրվել է հայտնության միջոցով: Սա նշանակում է, որ Մորմոնի Գրքում մենք կգտնենք այն ուսմունքների ամբողջությունը, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Եվ դրանք ուսուցանվում են հասկանալի և պարզ ձևով, որպեսզի անգամ երեխաները կարողանան սովորել փրկության և վեհացման ճանապարհների մասին» (in Conference Report, Oct. 1986, 4; or *Ensign,* Nov. 1986, 6):

- Ինչպե՞ս Մորմոնի Գիրքը օգնեց ձեզ ավելի լավ հասկանալ ավետարանի կարևոր վարդապետությունները:

Գրատախտակին գրեք *Վկայություն*:

- Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքը այդքան կարևոր վերականգնված ավետարանի մասին վկայություն ունենալու համար:

- Ինչպիսի՞ օրհնություններ են ստանում նրանք, ովքեր վկայություն են ստանում Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին և հետևում են դրա ուսմունքներին: Ի՞նչ մենք պետք է անենք Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին վկայություն ստանալու համար: (Տե՛ս Մորոնի 10.3–5:)

Դասարանի անդամներին խնդրեք պատմել այն մասին, թե ինչպես նրանք իմացան, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

2. Շատ վկաներ վկայել են Մորմոնի Գրքի մասին:

Եթե օգտագործում եք «Մորոնին հայտնվում է Ջոզեֆ Սմիթին» և «Ջոզեֆ Սմիթը ստանում է ոսկյա թիթեղները» նկարները, ցույց տվեք դրանք այս պահին: Դասարանի անդամներից մեկին խնդրեք ամփոփել Ջոզեֆ Սմիթի Վկայության իրադարձությունները: Այնուհետև բացատրեք, որ Մորմոնի Գրքի թարգմանության ավարտից հետո, այլ մարդիկ պատիվ ունեցան տեսնելու թիթեղները: Խնդրեք դասարանի այն անդամներին, որոնց նախօրոք հանձնարարված էր, ամփոփել Երեք Վկաների Վկայությունը և Ութ Վկաների Վկայությունը:

- Ինչո՞ւ էր կարևոր ոսկյա թիթեղների մասին վկաներ ունենալը: (Տե՛ս Եթեր 5.2–4:) Լրացուցիչ վկաների առկայությունն ինչպե՞ս օգնեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին:

- Ինչպիսի՞ այլ վկայություններ ունենք Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:

Եթե օգտագործելու եք «Մեր օրերի համար» տեսաֆիլմը, ապա ցույց տվեք այն այս պահին:

3. Մորմոնի Գիրքը գրված է մեր օրերի համար

Շեշտեք, որ, թեպետ և Մորմոնի Գիրքը հին փաստաթուղթ է, այն գրված և պահպանված է մեր օրերի համար (2 Նեփի 25.21–22; 27.22; Մորմոն 8.34–35; Մորոնի 1.4):

- Դասարանի հետ միասին կարդացեք Մորմոն 8.26–41: Բացատրեք, որ այս տողերը պարունակում են Մորմոնի Գրքի աշխարհ գալու մասին մարգարեություններ: Համաձայն Մորոնիի կանխատեսումների, ինչպիսի՞ հանգամանքներ էին տիրելու աշխարհում, երբ Մորմոնի Գիրքը կրկին կտրվեր մարդկանց: (Դասարանի անդամների պատասխանները գրեք գրատախտակի վրա: Պատասխանները կարող են լինել ստորև տրված ցուցակից:) Ինչպե՞ս են այդ հանգամանքներն ի հայտ գալիս այսօր աշխարհում:

ա. «Աստծո զորությունը կուրանան» (հատված 28):
բ. «Կլինեն մեծ աղտոտվածություններ երկրի երեսին» (հատված 31):
գ. Մարդիկ կբարձրացնեն իրենց «իրենց սրտերի հպարտությունից» (հատված 36):
դ. Մարդիկ կսիրեն «փողը . . . ավելի, քան» կսիրեն «աղքատին ու կարիքավորին» (հատված 37):
ե. Մարդիկ կամաչեն իրենց «վրա վերցնել Քրիստոսի անունը» (հատված 38):

- Ինչպե՞ս հին օրերի մարգարեների ուսմունքները կարող են օգնության աղբյուր լինել մեզ համար: Իմանալով, որ Մորմոնի Գիրքը գրվել է մեր օրերի համար, ինչպե՞ս կարող է փոխվել մեր վերաբերմունքն այն ուսումնասիրելու հարցում: (Տե՛ս 1 Նեփի 19.23:)

  Նախագահ Բենսոնը սովորեցրել է. «Մորմոնի Գիրքը . . . գրվել է մեր օրերի համար: Նեփիացիները երբեք չեն ունեցել այդ գիրքը, ոչ էլ հին օրերի Լամանացիներն են ունեցել այն: Այն մեզ համար է գրվել: . . . Մորմոնի Գրքի հիմնական գրողները վկայել են, որ գրում են ապագա սերունդների համար . . . Եթե նրանք այս օրերի ականատեսները լինեին և ընտրեին այն, ինչ մեծագույն արժեք կներկայացներ մեզ համար, չէ՞ր լինի դա արդյոք այն եղանակը, որով մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը: Մենք անընդհատ պետք է հարց տանք մեզ. «Ինչո՞ւ Տերը ներշնչեց Մորմոնին (կամ Մորոնիին կան Ալմային) ընդգրկել դա իր գրառումների մեջ: Ի՞նչ դաս կարող եմ ես քաղել, որը կօգնի ինձ իմ կյանքում, այսօր և այս տարիքում» (in Conference Report, Oct. 1986, 5; or *Ensign*, Nov. 1986, 6):

4. Մորմոնի Գիրքը կարող է մեզ ավելի մոտեցնել Աստծուն:

Դասարանի որևէ անդամի խնդրեք կրկին կարդալ Մորմոնի Գրքի Նախաբանի վեցերորդ պարբերությունը:

- Ի՞նչ են ցուցումները: (Պատվիրաններ կամ սկզբունքներ:) Ինչպե՞ս կարող են Մորմոնի Գրքի ցուցումները մեզ ավելի մոտեցնել Աստծուն:
- Եթե չուսումնասիրենք Մորմոնի Գիրքը, ինչպիսի՞ն կլինեն հետևանքները մեզանից յուրաքանչյուրի և ամբողջ Եկեղեցու համար: (Տե՛ս Վ. և Ու. 84.54–58:)
- Ինչպիսի՞ փոփոխություններ և օրհնություններ եք ստացել ձեր կյանքում Մորմոնի Գիրքը կանոնավոր կերպով կարդալու և դրա շուրջ մտորելու արդյունքում:

Եզրափակում

Կարդացեք կամ դասարանի որևէ անդամի խնդրեք կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Այն պահից, երբ սկսեք Մորմոնի Գրքի լուրջ ուսումնասիրությունը, ավելի մեծ ուժ կգտնեք գայթակղությանը դիմակայելու համար: Դուք ուժ կգտնեք պատրանքներից խուսափելու համար: Դուք ուժ կգտնեք անձուկ ու նեղ ճանապարհի վրա մնալու համար . . . Եթե այդ խոսքերից հետո քաղց և ծարավ զգաք, ավելի ու ավելի լիառատ կյանք կգտնեք» (in Conference Report, Oct. 1986, 6; or *Ensign*, Nov. 1986, 7):

Դասարանի անդամներին խրախուսեք այս տարվա ընթացքում Մորմոնի Գրքի ուսումնասիրության արդյունքում տեսնել իրենց համար այդ խոստումների իրականացումը:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով, վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Դասարանի անդամներից յուրաքանչյուրին ուսուցման ուղեցույց տվեք: Անդամներին խրախուսեք ամեն շաբաթ դասին նախապատրաստվելիս ուսումնասիրել սուրբ գրություններն՝ օգտվելով այդ ուղեցույցներից:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութերը լրացնում են դասի առաջարկվող ընթացքը: Այդ մտքերից մեկը կամ մի քանիսը կարող եք օգտագործել որպես դասի մի մաս:

1. Մորմոնի Գրքի կարևորությունը ավետարանի վերականգնման գործում

Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունները առանց համապատասխան համարների.

6. Տաճարային աշխատանքը մահացածների համար սկսվում է:
3. Մելքիսեդեկյան Քահանայությունը վերականգնված է:
5. Առաքյալները կանչված են:
1. Ջոզեֆ Սմիթը ստանում է Առաջին Տեսիլքը:
4. Եկեղեցին կազմակերպված է:
2. Մորմոնի Գիրքը թարգմանված է:

Դասարանի անդամներին խնդրեք գտնել այդ իրադարձությունների հաջորդականությունը (ձախում գրված համարները ցույց են տալիս դրանց ճիշտ հերթականությունը. ավելացրեք այդ համարները գրատախտակին անդամների յուրաքանչյուր ճիշտ պատասխանից հետո): Այնուհետև կարդացեք կամ անդամներից մեկին խնդրեք կարդալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի դիտողությունը.

«Մորմոնի Գրքի կարևորության զորեղ վկայությունն է հանդիսանում այն, թե երբ էր Տերը նախատեսել Վերականգնմանը նախորդող ժամանակաշրջանում Մորմոնի Գրքի աշխարհ գալը: Դրան նախորդող միակ իրադարձությունը Առաջին Տեսիլքն էր . . .

Մտածեք դրա իմաստի մասին: Մորմոնի Գրքի աշխարհ գալը նախորդեց քահանայության վերականգնմանը: Այն հրատարակվեք Եկեղեցու կազմավորումից միայն մի քանի օր առաջ: Սրբերը Մորմոնի Գիրքը ստացան նախքան այնպիսի մեծ ուսմունքների հայտնություն-ները, ինչպիսին են՝ փառքի երեք աստիճանները, հավերժական ամուսնությունը կամ մահացածների համար աշխատանքը: Այն եկավ քահանայության քվորումներից և Եկեղե-ցու կազմավորումից առաջ: Արդյոք սա ինչ որ բան չի ասում մեզ այն մասին, թե ինչպես է Տերը վերաբերվում այդ սրբազան աշխատանքին» (in Conference Report, Oct. 1986, 3; or *Ensign*, Nov. 1986, 4):

2. Մորմոնի Գրքով կիսվելը

Խորհրդակցեք եպիսկոպոսության և ծխի միսիայի ղեկավարի հետ անդամներին Մորմոնի Գրքի օրինակներ բաժանելու վերաբերյալ, որպեսզի նրանք կարողանան դրանցով կիսվել իրենց ոչ անդամ ընկերների և ծանոթների հետ:

Դասարանում հայտարարեք, որ այս տարվա նպատակն է կիսվել Մորմոնի Գրքով ընկերների և ծանոթների հետ: Դասարանին բացատրեք, թե ինչպես կարելի է ձեռք բերել Մորմոնի Գրքի օրինակները և խրախուսեք նրանց տարվա ընթացքում Գրքի մեկ օրինակ տալ որևէ ընկերոջ կամ ծանոթի:

Մի քանի անգամ տարվա ընթացքում Սուրբ Հոգու հուշումով դասարանի անդամներին հարցրեք, կիսվե՞լ են նրանք արդյոք Մորմոնի Գրքով: Այն անդամներին, ովքեր արել են դա, խնդրեք պատմել իրենց փորձի մասին: Շարունակեք խրախուսել անդամներին կիսվել Մորմոնի Գրքով ուրիշների հետ:

Դաս
2

«Բոլոր բաները՝ ըստ Իր կամքի»

1 Նեփի 1–7

Նպատակ

Օգնել դասարանին Լեքիի և Նեփիի օրինակների վրա համոզվել, որ ապահովությունը և փրկությունը գալիս են Տիրոջը հնազանդվելու հետևանքով:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 1 Նեփի 1–2: Լեքին տեսիլքով իմանում է, որ Երուսաղեմը պետք է կործանվի: Նա զգուշացնում է մարդկանց և կոչ անում նրանց ապաշխարել, սակայն նրանք հրաժարվում են և ցանկանում են սպանել նրան: Տերը Լեքիին պատվիրում է վերցնել իր ընտանիքը և հեռանալ Երուսաղեմից: Լեքին և նրա ընտանիքը հեռանում են անապատ:

   բ. 1 Նեփի 3–4: Նեփին և նրա եղբայրները վերադառնում են Երուսաղեմ՝ Լաբանից արույրե թիթեղները վերցնելու նպատակով:

   գ. 1 Նեփի 5: Նեփին և նրա եղբայրները վերադարձնում են թիթեղները իրենց ընտանիքին: Այդ թիթեղները Լեքիի ընտանիքին հնարավորություն են տալիս պահպանել իրենց լեզուն, տոհմաբանությունը, ուսմունքները և Աստծո պատվիրաններն իրենց սերունդների համար:

   դ. 1 Նեփի 7: Նեփին և նրա եղբայրները վերադառնում եմ Երուսաղեմ՝ համոզելու Իսմայելին և նրա ընտանիքին իրենց հետ անապատ հեռանալ:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Մոսիա 1.3–7; Ալմա 3.11–12:

3. Դասարանի անդամներից մեկին նախօրոք խնդրեք նախապատրաստվել ամփոփելու Լաբանից արույրե թիթեղները ձեռք բերելու Նեփիի և նրա եղբայրների ջանքերը (1 Նեփի 3.9–4.38):

4. Հետևյալ նյութերի առկայության դեպքում, օգտագործեք դրանք դասի ընթացքում:

   ա. «Լեքին մարգարեանում է Երուսաղեմի ժողովրդին» (62517; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 300) և «Լեքիի ընտանիքը հեռանում է Երուսաղեմից» (62238; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 301) նկարները:

   բ. Մատիտ կամ գրիչ և մեկական թուղթ դասարանի յուրաքանչյուր անդամի համար:

5. Դասը սկսելուց առաջ գրատախտակի վրա գրեք էջ 8–ի վրա տրված վերնագրերը և սուրբ գրությունների վկայակոչումները:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին խնդրեք պատկերացնել, թե իրենք հենց նոր իմացել են, որ քաղաքը, ուր իրենք ապրում են, պետք է կործանվի և նրանք պետք է անմիջապես հեռանան:

- Ինչպե՞ս ձեզ կզգաք այդ նորությունը իմանալուց հետո: Ինչպե՞ս կվարվեք:
- Ձեր զգացումները և վարվելաձևը կփոխվի արդյո՞ք, եթե իմանաք, որ այդ տեղեկությունն Աստծո մարգարեից է ստացվել:

Բացատրեք, որ այս դասը Լեքիի և նրա ընտանիքի մասին է, որոնք հեռացան Երուսաղեմում գտնվող իրենց տնից, որովհետև քաղաքը պետք է կործանվեր: Այս դասում կքննարկվի, թե ուր նրանք գնացին և ինչ արեցին Երուսաղեմից հեռանալու հետո:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք առավելագույնս կհամապատասխանեն դասարանի անդամների կարիքներին: Քննարկեք, ինչպես են ընտրված սուրբ գրությունները վերաբերվում մեր առօրյա կյանքին: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել իրենց այն փորձով, որն առնչվում է սուրբ գրությունների այդ սկզբունքների հետ:

1. Լեքիին թողնում է Երուսաղեմը և տանում իր ընտանիքը անապատ:

Քննարկեք 1 Նեփի 1–2: Դասարանի անդամներին հրավիրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Մորմոնի Գրքում նկարագրված առաջին իրադարձություններից մեկը Լեքիի և նրա ընտանիքի Երուսաղեմից հեռանալն էր: Ինչո՞վ էր պայմանավորված այդ դեպքը: (Տե՛ս 1 Նեփի 1.4–15, 18–20; 2.1–3: Եթե օգտագործելու եք մարգարեացող Լեքիի նկարը, օգտագործեք այս պահին:)
- Ինչո՞ւ Երուսաղեմի մարդիկ մերժեցին Լեքիի և այլ մարգարեների ուղերձները: (Տե՛ս 1 Նեփի 1.19–20; 2.12–13; 16.1–2:) Ինչո՞ւ են այսօր շատ մարդիկ ըմբոստանում Տիրոջ և Նրա ծառաների դեմ: Ինչպե՞ս Նեփին պատասխանեց իր հոր ուղերձին: (Տե՛ս 1 Նեփի 2.16, 19:) Ի՞նչ կարող ենք Նեփիից սովորել այն մասին, թե ինչպես պետք է բացենք մեր սրտերը մարգարեների ուսմունքների առաջ:
- Ի՞նչ խոստացավ Տերը Նեփիին, եթե վերջինս հնազանդվեր Իր պատվիրաններին: (Տե՛ս 1 Նեփի 2.19–20, 22:) Ի՞նչ Տերը խոստացավ, որ կպատահի Լամանի և Լեմուելի հետ, եթե նրանք ըմբոստանան: (Տե՛ս 1 Նեփի 2:21, 23–24:) Ինչպե՞ս է այդ խոստումներից յուրքանչյուրը վերաբերվում մեզ:
- Ո՞ւր տարավ Լեքիին իր ընտանիքին Երուսաղեմից հեռանալուց հետո: (Տե՛ս 1 Նեփի 2.2: Եթե օգտագործելու եք «Լեքիի ընտանիքը հեռանում է Երուսաղեմից» նկարը, ապա ցույց տվեք այն այս պահին:) Ի՞նչ թողեցին նրանք հեռանալուց: (Տե՛ս 1 Նեփի 2.4.) Ինչպե՞ս էր, ձեր կարծիքով, զգում Լեքիի ընտանիքն իր տունը, ունեցվածքը և ընկերներին լքելիս: Ինչպիսի՞ զոհաբերությունների եք դիմել դուք Տիրոջը հնազանդվելու համար: Ինչպե՞ս եք օրհնվել այդ զոհաբերությունները կատարելուց հետո:
- Անապատում երեք օր անցկացնելուց հետո, Լեքին մի զոհասեղան պատրաստեց և գոհություն հայտնեց Աստծուն (1 Նեփի 2.6–7; տե՛ս նաև 1 Նեփի 5.9; 7.22): Ինչպե՞ս կարող ենք երախտագիտության զգացում ունենալ անգամ շատ դժվար իրավիճակներում:
- Ի՞նչ կարևոր օրհնություններ ստացավ Լեքին Տիրոջը հնազանդվելու և Երուսաղեմից հեռանալու արդյունքում: (Դասարանի անդամների պատասխանները գրեք գրատախտակին: Որպես պատասխան կարող եք գրել, որ Լեքիի և Իսմայելի ընտանիքները փրկվեցին կործանումից, Իսրայելի ճյուղը առաջնորդվեց ավետյաց երկիր և Մորմոնի Գիրքը, որը Հիսուս Քրիստոսի մասին ևս մեկ վկայություն է, տրվեց ժողովրդին:)

2. Նեփին և նրա եղբայրները վերադառնում են Երուսաղեմ՝ արույրե թերթերը ձեռք բերելու համար:

Կարդացեք և քննարկեք 1 Նեփի 3–4-ից ընտրված հատվածները:

- Ինչո՞ւ Լեքին իր որդիներին հետ ուղարկեց Երուսաղեմ: (Տե՛ս 1 Նեփի 3.1–4:) Ինչպե՞ս դրան արձագանքեցին Լամանը և Լեմուելը: (Տե՛ս 1 Նեփի 3.5:) Ինչպե՞ս արձագանքեց Նեփին: (Տե՛ս 1 Նեփի 3.7:) Եթե ձեզ առաջարկեին կատարել այդ ճանապարհորդությունը, ինչպե՞ս դուք կարձագանքեիք: Կփոխվե՞ր արդյոք ձեր վերաբերմունքը, եթե իմանայիք, որ Տերն է խնդրել դա անել:

- Ինչո՞ւ համար էին Լեքիի ընտանիքին հարկավոր արույրե թիթեղները: (Տե՛ս 1 Նեփի 3.3, 19–20; 4.15–16; տե՛ս նաև 1 Նեփի 521–22; Մոսիա 1.3–7:)

Խնդրեք դասարանի այն անդամին, որին նախօրոք հանձնարարված էր, ամփոփել թիթեղները ձեռք բերելու Նեփիի և նրա եղբայրների ջանքերը (1 Նեփի 3.9–4.38):

- Ի՞նչ իրավիճակներում մենք կարող ենք ղեկավարվել Տիրոջ Հոգով, չիմանալով նախօրոք այն բաները, որ պետք է կատարենք: (Տե՛ս 1 Նեփի 4.6:) Ի՞նչ կարող ենք սովորել «Այնուամենայնիվ, ես առաջ գնացի . . . » Նեփիի խոսքերից (1 Նեփի 4.7):
- Ինչո՞ւ Նեփին չէր կամենում սպանել Լաբանին: (Տե՛ս 1 Նեփի 4.10:) Ինչպե՞ս Նեփին համոզվեց, որ պետք է սպանի Լաբանին: (Տե՛ս 1 Նեփի 4.11–18:)
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 1 Նեփի 3:7: Ինչպե՞ս Տերը Նեփիի համար պատրաստեց ուղի՝ անելու համար այն, ինչ պատվիրել էր: Ինչպե՞ս է Տերը ձեզ համար պատրաստել ճանապարհներ, որպեսզի դուք պահեք Նրա պատվիրանները:
- Ինչո՞ւ էին Նեփին և նրա եղբայրները ցանկանում, որպեսզի Զորամը իրենց հետ վերադառնա անապատ: (Տե՛ս 1 Նեփի 4.35–36:) Ի՞նչը ստիպեց Զորամին հետևել Նեփիին և նրա եղբայրներին: (Տե՛ս 1 Նեփի 4.31–34: Բացատրեք, որ Լեքիի ժամանակներում երդումը սուրբ էր: Զորամը գիտեր, որ Նեփին երբեք չի խախտի իր երդումը:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մենք հայտնի լինենք որպես խոստումը պահող մարդիկ:

Շեշտեք, որ, թեև Լամանը և Լեմուելը հնազանդվեցին իրենց հորը, գնալով անապատ և այնուհետև վերադառնալով Երուսաղեմ արույրե թիթեղները բերելու համար, այնուամենայնիվ, ճանապարհին անընդմեջ տրտնջում և ըմբոստանում էին: Նեփին և Սամը, ընդհակառակը, հավատարիմ և հնազանդ էին մնում իրենց ունեցած փորձությունների շնորհիվ: Կարող եք բացատրել, որ, թեպետ և Սամը հաճախ չի հիշատակվում, նա նույնպես Նեփիի նման հավատքով լի և հնազանդ էր (1 Նեփի 2.17; 8.3):

Դասարանի անդամների կեսին խնդրեք կարդալ գրատախտակին Նեփի վերնագրի տակ գրված սուրբ գրությունների հատվածները: Խնդրեք նրանց գտնել Նեփիին բնութագրող խոսքերն ու արտահայտությունները: Դասարանի մյուս անդամներին խնդրեք կարդալ մնացած հատվածները, փնտրելով Լամանին և Լեմուելին բնութագրող խոսքերը կամ արտահայտությունները: Յուրաքանչյուր անդամի կարող եք թուղթ և մատիտ տալ կարդալիս նշումներ կատարելու համար: Այնուհետև դասարանի անդամներին խնդրեք հաղորդել իրենց հայտնաբերածը: Գրատախտակին գրեք յուրաքանչյուր հատվածի համառոտ բովանդակությունը (տե՛ս ստորև բերված օրինակը. պարտադիր չէ օգտագործել միևնույն խոսքերը):

ՆԵՓԻ	ԼԱՄԱՆ և ԼԵՄՈՒԵԼ
1.1 Գիտեր, որ «լավ ծնողներ» ուներ	2.11 Տրտնջում էին իրենց հոր դեմ
2.16 Հավատում էր իր հոր բոլոր խոսքերին	2.13 Չէին հավատում Լեքիի բոլոր խոսքերին
2.16, 19 Դիմեց Տիրոջը հասկանալու համար	2.12 «Չգիտեին գործերն . . . Աստծո»
3.7 Պատրաստ էր գնալու և անելու այն, ինչ Տերը պատվիրել էր	3.5 Դժգոհում էին, որ Տերը «դժվար բան» էր պահանջում
3.15 Հրաժարվեց վերադառնալ առանց հիշատակարանի	3.14 Չցանկացան շարունակել առաջին անհաջողությունից հետո
4.1, 3 Գիտեր, որ Տերը Լաբանից հզոր էր	3.31 Կասկածում էին, որ Տերը կարող է հանձնել Լաբանին իրենց ձեռքը

Երբ ցուցակը ավարտված լինի, քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչպե՞ս Նեփին ցուցաբերեց ամուր և հաստատուն հավատ: Ինչպե՞ս կարող ենք հետևել նրա օրինակին:
- Ինչո՞ւ էին Լամանը և Լեմուելը տրտնջում և ըմբոստանում: (Տե՛ս 1 Նեփի 2.11–12:) Ինչո՞ւ նրանք ի վիճակի չէին իմանալ Աստծո գործերը (Տե՛ս 1 Նեփի 2.18:)

3. Նեփին և նրա եղբայրները բերում են արույրե թիթեղները իրենց ընտանիքին:

Կարդացեք և քննարկեք 1 Նեփի 5-ից ընտրված հատվածները:

- Ինչպե՞ս Լեքին և Սարիան արձագանքեցին, երբ նրանց չորս որդիները վերջապես վերադարձան բերելով արույրե թիթեղները: (Տե՛ս 1 Նեփի 5.1–9:) Ինչպե՞ս նրանց վերադարձը զորացրեց Սարիայի վկայությունը: (Տե՛ս 1 Նեփի 5.8:)
- Ի՞նչ էր պարունակվում արույրե թիթեղների վրա: (Տե՛ս 1 Նեփի 5.10–16; 13.23: Դրանք պարունակում էին Մովսեսի հինգ գրքերը, հրեաների գրառումները սկսած թագավոր Սեդեկիայի ժամանակներից [Քրիստոսի ծննդից 600 տարի առաջ], սուրբ մարգարեների մարգարեությունները և Լեքիի ընտանիքի տոհմաբանությունը:)
- Ի՞նչ է Լեքին մարգարեացել արույրե թիթեղների մասին (Տե՛ս 1 Նեփի 5.17–19:) Ինչպե՞ս են այդ մարգարեությունները իրականացել:

4. Նեփին և նրա եղբայրները վերադառնում են Երուսաղեմ Իսմայելի և նրա ընտանիքի հետևից:

Կարդացեք և քննարկեք 1 Նեփի 7-ից ընտրված հատվածները:

- Ինչո՞ւ Նեփին և նրա եղբայրները արույրե թիթեղները բերելուց հետո շուտով կրկին վերադարձան Երուսաղեմ: (Տե՛ս 1 Նեփի 7.1–2:) Ինչպե՞ս Իսմայելը և նրա ընտանիքը համաձայնվեցին միանալ Լեքիի ընտանիքին: (Տե՛ս 1 Նեփի 7.4–5:)
- Ինչո՞ւ էին Լամանը, Լեմուելը և Իսմայելի զավակներից ոմանք անապատում ճանապարհորդության ժամանակ ըմբոստանում: (Տե՛ս 1 Նեփի 7:6–7:) Ինչո՞ւ էին նրանք ցանկանում վերադառնալ Երուսաղեմ: Ըստ Նեփիի, ի՞նչ կպատահեր իրենց հետ, եթե նրանք շարունակեին իրենց ճանապարհը և հավատարիմ մնային Տիրոջը (Տե՛ս 1 Նեփի 7.13:) Ըստ Նեփիի, ի՞նչ կպատահեր իրենց հետ, եթե նրանք վերադառնային Երուսաղեմ: (Տե՛ս 1 Նեփի 7.13–15:)
- Ի՞նչ հատկություններ էր Նեփին դրսևորում իր եղբայրների հանդեպ իր վերաբերմունքի ընթացքում: (Տե՛ս 1 Նեփի 2.17–18 և 7.21 օրինակների համար:) Ինչպե՞ս մենք կարող ենք այս հատկանիշները ցուցաբերել մեր ընտանիքի անդամների և ուրիշների հետ մեր հարաբերություններում:

Եզրափակում

Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Լեքիի և Նեփիի պատրաստակամ հնազանդության շնորհիվ միլիոնավոր մարդիկ օրհնվեցին: Դասարանի անդամներին խրախուսեք միշտ գնալ և անել այն, ինչ պատվիրել է Տերը (տե՛ս 1 Նեփի 3.7):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով, վկայեք դասի ընթացքում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութերը լրացնում են առաջարկվող դասի ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերը կամ դրանցից մի քանիսը որպես դասի մի մաս:

1. **«Ծնված լինելով լավ ծնողներից» (1 Նեփի 1.1)**

- Որո՞նք են «լավ ծնողների» պատասխանատվություններն իրենց զավակների հանդեպ (Տե՛ս 1 Նեփի 1.1:) Ի՞նչ կարող են սովորել ծնողները Լեքիից և Սարիայից՝ այդ պատասխանատվությունները կատարելու մասին:

2. **Յուրաքանչյուր մարդ հանդիպում է ճախորդությունների**

Գրատախտակին գրեք հետևյալ բառերը. *հոգևոր, քաջ, մտահոգված, ամուր, ուրախ, հավատքով լի, տխուր, վստահող, հուսալքված, ջանասեր, համբերատար, գթասիրտ:*

Դասարանի անդամերին խնդրեք որոշել, թե այդ բառերից որոնք են բնութագրում Նեփիին: Շրջանակի մեջ վերցրեք նրանց ընտրած բառերը և խնդրեք համառոտ պատմել դրանց համապատասխանող այն դեպքերը, որոնք պատկերում են Նեփիի այդ հատկանիշները:

Այնուհետև բացատրեք, որ բոլոր բառերը բնութագրում են Նեփիին իր կյանքի տարբեր ժամանաընթացքում: Շեշտեք, որ Նեփին հավատքով լի անձնավորություն էր և կհիշվի պատվիրաններին իր նվիրվածության համար: Այնուամենայնիվ, անգամ Նեփին երբեմն դառնում էր մտահոգված, հուսալքված և տխուր: Շեշտեք, որ մենք հաճախ կարծում ենք, որ մարգարեները և Եկեղեցու ղեկավարները միայն դրական փորձ են ունենում և երբեք պայքարի մեջ չեն լինում: Սակայն, ինչպես և մենք, նրանք նույնպես ճախորդություններ և տխուր պահեր են ունենում:

- Ինչպե՞ս դա կարող է օգնել մեզ իմանալ, որ մարգարաները և Եկեղեցու ղեկավարները նույնպես փորձությունների են հանդիպում:

- Թեպետ և Նեփին «տեսած լինելով շատ չարչարանքներ [իր] օրերի ընթացքում», գիտեր, որ մեծապես հովանավորված էր Տիրոջ կողմից (1 Նեփի 1.1): Ինչպե՞ս է հնարավոր բազմաթիվ չարչարենքներ ունենալ, սակայն հովանավորված լինել Աստծո կողմից: Ինչպե՞ս չարչարենքները կարող են օգնել մեզ օրհնություններ ստանալ: (Դասարանի անդամներին խնդրեք մտածել այս հարցի շուրջը, եթե չեն ցանկանում իրենց պատասխաններով կիսվել դասարանի հետ:)

3. **Նեփիի գրառումների բովանդակությունը**

- 1 Նեփին 6 պարունակում է բացատրություն այն մասին, թե ինչ Նեփին պետք է գրի առներ: Ո՞րն էր ըստ Նեփիի իր գրառումների նպատակը: (Տե՛ս 1 Նեփի 6.3–4: Նշեք, որ Աբրահամի, Իսահակի և Հակոբոսի Աստվածը Հիսուս Քրիստոսն է:) Ինչպե՞ս Նեփիի գրվածքները օգնեցին ձեզ գալ Քրիստոսի մոտ:

Դասարանի անդամներին խրախուսեք իրենց անձնական օրագրերում գրի առնել իրենց վկայությունները և այլ հոգևոր փորձեր, մտքեր և զգացմունքներ:

Կենաց ծառի տեսիլքը

Դաս
3

1 Նեփի 8–11; 12.16–18; 15

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ տեսիլքում կենաց ծառի խորհրդանիշները և դրանց կիրառումը կյանքում:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին. 1 Նեփի 8–11; 12.16–18; 15:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Նպատակահարմարության դեպքում դասի ընթացքում օգտագործեք հետևյալ սուրբ գրությունները:

Բացատրեք, որ սուրբ գրություններում գրի են առնվել բազմաթիվ երազներ և տեսիլքներ, որոնք խորհրդանշանական իմաստ ունեն: Այնուհետև, կիսվեք հետևյալ օրինակներով և խնդրեք դասարանի անդամներին բացատրել յուրաքանչյուր խորհրդանիշի իմաստը.

ա. Նաբուգոդոնոսոր թագավորն երազում մարդու մի մեծ արձան էր տեսել: Այդ մարդու մարմնի տարբեր մասերը տարբեր նյութերից էին պատրաստված: Քարը, որ զատվեց արձանին, մեծ սար դարձավ և լցրեց բոլոր երկիրը: (Տե՛ս Դանիել 2.31–45; տե՛ս նաև Վ. և Ու. 65.2: Մարդու տարբեր մասերը ներկայացնում էին երկրի թագավորությունները: Քարը ներկայացնում էր Աստծո արքայությունը, որը վերջին օրերին կփոխարիներ բոլոր թագավորություններին:)

բ. Փարավոնը երազում տեսավ յոթ նիհար և վտիտ երինջներ, որոնք կերան յոթ պարարտ ու գեղեցիկ երինջներին, և յոթ դատարկ խորչակահար հասկեր, որոնք կերան յոթ լավ և լիքը հասկերի: (Տե՛ս Ծննդոց 41.17–31: Յոթ պարարտ ու գեղեցիկ երինջները և յոթ լավ ու լիքը հասկերը ներկայացնում էին Եգիպտոսին սպասվող բարգավաճման յոթ տարիները: Յոթ նիհար ու վտիտ երինջները և յոթ դատարկ ու խորչակահար հասկերը ներկայացնում էին սովի յոթ տարիները, որ պետք է հաջորդեին լիության տարիներին:

գ. Իր տեսիլքում Պետրոս Առաքյալը տեսավ ոչ մաքուր կենդանիների, որոնք իջնում էին երկնքից մեծ կտավի վրա, և նրան պատվիրվեց սպանել և ուտել այդ կենդանիներին: (Տե՛ս Գործք Առաքելոց 10.9–16, 28, 34–35: Անմաքուր կենդանիները ներկայացնում էին հեթանոսներին, որոնց պետք է ուսուցանվեր ավետարանը:)

Բացատրեք, որ այս դասը քննարկում է սուրբ գրություններում նկարագրված մեկ այլ խորհրդանշական երազ՝ Լեքիի և Նեփիի տեսիլքները, որոնց մեջ նրանց երևաց կենաց ծառը: Ի տարբերություն շատ այլ երազների և տեսիլքների, որոնք վերաբերվում են որոշակի մարդկանց կամ որոշակի ժամանակաշրջանների (Փարավոնի երազը երինջների և հասկերի մասին), կենաց ծառի տեսիլքը վերաբերվում է Աստծո զավակներից յուրաքանչյուրին:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Սովորեցնելով հետևյալ սուրբ գրությունները, քննարկեք, թե ինչպես կարող են նրանց մեջ պարունակվող խորհրդանիշները վերաբերվել մեր առօրյա կյանքին: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել իրենց այն փորձով, որն առնչվում է այդ խորհրդանիշներով պատկերված սկզբունքներին:

1. Կենաց ծառի տեսիլքի խորհրդանիշները

Բացատրեք, որ Լեքին ստացավ տեսիլքը և պատմեց դրա մասին իր ընտանիքին (1 Նեփի 8.2): Տեսիլքի մասին իր հոր խոսքերը լսելուց հետո, Նեփին նույնպես ցանկացավ «տեսնի, և լսի, և իմանա այն բաների մասին» (1 Նեփի 10.17; տե՛ս նաև առաջին միտքը ուսուցանման լրացուցիչ մտքեր բաժնում): Հիսուս Քրիստոսի հանդեպ իր հավատքի շնորհիվ, Նեփիի խնդրանքը բավարարվեց (1 Նեփի 11.6): Այդ փորձի մասին Նեփիի գրառումների շնորհիվ մենք այժմ գիտենք այդ տեսիլքի մեկնաբանությունը:

Քննարկեք կենաց ծառի տեսիլքը: Լեքիի և Նեփիի տեսածը քննարկելիս, գրատախտակի վրա նկարեք (կամ խնդրեք դասարանի անդամներին նկարել) տեսիլքի հիմնական տարրերը: Ավարտված նկարում պետք է լինեն.



Կենաց ծառը և դրա պտուղները

Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 1 Նեփի 8.2–10: Այնուհետև գրատախտակի վրա նկարեք (կամ խնդրեք դասարանի անդամներին նկարել) ծառը և պտուղները:

- Երբ Նեփին տեսավ կենաց ծառը, նա ցանկացավ իմանալ դրա մեկնաբանությունը (1 Նեփի 11.8–11): Ի՞նչ նա իմացավ ծառի նշանակության մասին: (Տե՛ս 1 Նեփի 11.21–25:) Ի՞նչ Նեփին տեսավ և ինչպե՞ս դա նրան օգնեց ավելի լավ հասկանալ Աստծո սերը (Տե՛ս 1 Նեփի 11.13–21, 24, 26–33: Նա տեսավ Հիսուս Քրիստոսի ծնունդը, ծառայությունը և Քավությունը:)

  Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հովհաննես 3.16: Շեշտեք, որ Երկնային Հայրը ցույց տվեց մեր հանդեպ Իր սիրո խորությունը, երբ զոհաբերեց Իր Միածին Որդուն: Քավությունը մեր հանդեպ Հիսուս Քրիստոսի մեծ սիրո վկայությունն է:

  Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը սովորեցնում է, որ կենաց ծառը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին: Նա ասել է. «Քրիստոսի և ծառի պատկերները անբաժանելիորեն կապված են միմյանց հետ … Մորմոնի Գրքի ամենասկզբում … Քրիստոսը պատկերվել է որպես հավերժական կյանքի և երջանկության աղբյուր, աստվածային սիրո կենդանի վկայություն և ճանապարհ, որով Աստված կիրականացնի Իսրայելի տան և ամբողջ մարդկության հետ կապած իր ուխտը, վերադարձնելով նրանց իրենց հավերժական խոստումները» (*Christ and the New Covenant* [1997], 160, 162):

- Ինչպիսի՞ ազդեցություն է թողել Աստծո սերը մեր կյանքի վրա: Ինչպե՞ս կարող ենք ավելի լիարժեք զգալ մեր հանդեպ Աստծո սերը:

- Ի՞նչ է խորհրդանշում ծառի պտուղը: (Տե՛ս 1 Նեփի 15.36; Վ. և Ու. 14.7:)

- Ինչպե՞ս են նկարագրում կենաց ծառի պտուղները Լեքին և Նեփին: (Դասարանի անդամներին խնդրեք սուրբ գրությունների համապատասխան հատվածներում գտնել

ստորև նշված տողերը: Գտնելու ընթացքում այդ տողերը գրի առեք գրատախտակի վրա: Անհրաժեշտության դեպքում կրճատեք դրանք:)

ա. «Ամենաքաղցրն էր բոլորից, որ ես նախկինում երբևիցե փորձել էի» (1 Նեփի 8.11)
բ. «Ճերմակ է՝ գերազանցելով ամեն ճերմակություն» (1 Նեփի 8.11; տե՛ս նաև 1 Նեփի 11.8)
գ. «Բաղձալի է բոլոր մյուս պտուղներից ավելի» (1 Նեփի 8.12; տե՛ս նաև 15.36)
դ. «Նրա գեղեցկությունը անհամեմատ վեր էր . . . , գերազանցելով ամեն գեղեցկություն» (1 Նեփի 11.8)
ե. «Բոլորից արժեքավորն էր», «ամենաքանկը» (1 Նեփի 11.9; 15.36)
զ. «Հոգու համար ամենաբերկրալին» (1 Նեփի 11.23; տե՛ս նաև 1 Նեփի 8.10)
է. «Աստծո բոլոր պարգևներից ամենամեծն է» (1 Նեփի 15.36)

Շեշտեք, որ հավերժական կյանքը «ամենաքաղցր» և «ամենաքանկ» օրհնությունն է, որ մենք կարող ենք ստանալ: Մեր հանդեպ Աստծո սիրո շնորհիվ և Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով այդ օրհնությունը մեզ համար մատչելի է դարձել:

- Ի՞նչ ցանկացավ Լեքին տեսիլքում, երբ ճաշակեց ծառի պտղից: (Տե՛ս 1 Նեփի 8.12:) Ինչպե՞ս կարող ենք օգնել մեր սիրելի մարդկանց ավելի մոտենալ Փրկչին և ստանալ հավերժական կյանքի խոստումը:

Երկաթյա ձող

Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 1 Նեփի 8.19–20: Այնուհետև նկարեք (կամ դասարանի անդամներից մեկին խնդրեք նկարել) երկաթյա ձող և դեպի ծառը տանող մի արահետ:

- Ի՞նչ է ներկայացնում երկաթյա ձողը: (Տե՛ս 1 Նեփի 11.25; 15.23–24:) Որտե՞ղ կարող ենք գտնել Աստծո խոսքը: (Սուրբ գրությունների, վերջին օրերի մարգարեների ուսմունքների և Սուրբ Հոգու հուշումների մեջ:) Ինչպե՞ս է Աստծո խոսքն օգնում մեզ գալ Քրիստոսի մոտ: Ինչպե՞ս է այն մեզ պահում հավերժական կյանքի ուղու վրա:

Կեղտոտ ջրերի գետը, խավարի մեգը և մեծ ու ընդարձակ շենքը

Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 1 Նեփի 8.13, 23, 26–27: Այնուհետև նկարեք (կամ դասարանի անդամներին խնդրեք նկարել) գետ, խավարի մեգ և մեծ ու ընդարձակ շենք:

- Ի՞նչ է ներկայացնում կեղտոտ ջրերի գետը: (Տե՛ս 1 Նեփի 12.16; 15.26–29:)

- Ի՞նչ է ներկայացնում խավարի մեգը: (Տե՛ս 1 Նեփի 12.17:) Որո՞նք են խավարի մեգի ազդեցությունները: (Տե՛ս 1 Նեփի 8.23; 12.17:) Ինչո՞ւ է Սատանան ցանկանում, որպեսզի մեր աչքերը կույր լինեն Աստծո սիրո, Հիսուս Քրիստոսի Քավության և Աստծո խոսքի հանդեպ: Ի՞նչ ճանապարհներով է Սատանան կուրացնում մեր աչքերը:

- Երկաթյա ձողը, որը «ձգվում էր գետի ափի երկայնքով» (1 Նեփի 8.19), հանդիսանում էր որպես պաշտպանություն, բաժանելով անձուկ ու նեղ արահետը կեղտոտ ջրերից: Այն նաև տեսիլքի մարդկանց օգնում էր բռնվել, երբ նրանք հայտնվում էին խավարի մեգի մեջ: (1 Նեփի 8.24, 30): Ի՞նչ է սա մեզ սովորեցնում այն մասին, թե ինչպես Աստծո խոսքը կարող է օգնել մեզ:

- Ի՞նչ է ներկայացնում մեծ և ընդարձակ շենքը: (Տե՛ս 1 Նեփի 11.34–36; 12.18:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի շենքը տեղադրված լիներ օդում: (Տե՛ս 1 Նեփի 8.26: Նշեք, որ շենքը կայուն հիմք չուներ:) Ինչպե՞ս կարող է հպարտությունը խանգարել մարդուն ստանալ հավերժական կյանք:

- Տեսիլքում որոշ մարդիկ ճաշակեցին ծառի պտղից, սակայն ամաչեցին, քանի որ մեծ և ընդարձակ շենքի մարդիկ ծաղրում էին նրանց: (1 Նեփի 8.26–28): Ինչպե՞ս կարող ենք ուժ ստանալ հալածանքին դիմակայելու համար:

2. Կենաց ծառի տեսիլքի մարդիկ

Բացատրեք, որ տեսիլքում Լեքին տեսավ «մարդկանց բազմաթիվ բազմություններ» (1 Նեփի 8.21): Ծառը և պտուղը փնտրելու իրենց գործողություններին համաձայն այդ մարդիկ կարող են բաժանվել չորս տեսակների: Դասարանի անդամներին խնդրեք տարբերակել և նկարագրել այդ չորս տեսակները, օգտագործեք ստորև տրված հատվածները: (Կարող եք դասարանի անդամներին բաժանել չորս խմբերի և յուրաքանչյուր խմբին հանձնարարել կարդալ հատվածը և նկարագրել այդ հատվածում նշված մարդկանց գործողությունները:)

ա. 1 Նեփի 8.21–23: (Նրանք, ովքեր սկսում են գնալ արահետով, սակայն կորում են խավարի մեգում:)
բ. 1 Նեփի 8.24–28: (Նրանք, ովքեր բռնվում են երկաթյա ձողից մինչև որ հասնում են ծառին և ճաշակում պտղից, սակայն հետո ամաչում և շեղվում են:)
գ. 1 Նեփի 8.30: (Նրանք, ովքեր բռնվում են երկաթյա ձողից մինչև հասնում են ծառին և ճաշակում պտղից, և հետո պահպանում են իրենց հավատքը:)
դ. 1 Նեփի 8.31–33: (Նրանք, ովքեր երբեք չեն կանգնում արահետի վրա, այլ անմիջապես գնում են դեպի մեծ և ընդարձակ շենքը:)

- Ինչպե՞ս են մարդկանց այդ տեսակները ի հայտ գալիս այսօր աշխարհում: (Օրինակ մարդիկ, որոնք ասում են, որ հավերժական կյանք են ցանկանում, սակայն տարվում են այլ բաներով, ինչպիսիք են՝ նյութական հարստությունը կամ աշխարհիկ հաճույքները, նման են մարդկանց, որոնք սկսում են գնալ արահետով, սակայն հետագայում կորչում են:)
- Տեսիլքում ի՞նչ ճանապարհներով են գնում այն մարդիկ, որոնք հեռանում են երկաթյա ձողից կամ կենաց ծառից: (Տե՛ս 1 Նեփի 8.28, 32; 12.17:) Ի՞նչ է պատահում նրանց հետ, ովքեր գնում են այդ ճանապարհներով: Եթե մենք գնում ենք «արգելված», «տարօրինակ» և «լայն» ճանապարհներով, ինչպե՞ս կարող ենք վերադառնալ անձուկ ու նեղ արահետի վրա:
- Ի՞նչ պետք է անենք անձուկ ու նեղ արահետի վրա մնալու համար: Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին մնալ այդ արահետի վրա:

Եզրափակում

Դասարանի անդամներին առաջարկեք իրենց սուրբ գրություններում ընդգծել հետևյալ բառերը. *սկսեցին* (1 Նեփի 8.22), *բռնեցին* (1 Նեփի 8.24), *կառչելով* (1 Նեփի 8.24), և *անընդհատ* (1 Նեփի 8.30): Շեշտեք, որ այս բառերը մեզ օգնում են հասկանալ, թե ինչ մենք պետք է անենք կենաց ծառին հասնելու համար. մենք պետք է սկսենք ուղիղ և նեղ արահետից, բռնվենք երկայթյա ձողից և կառչելով դրանից անընդհատ առաջ մղվենք դեպի կենաց ծառը:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով, վկայեք դասի ընթացքում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութերը լրացնում են առաջարկվող դասի ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերը կամ դրանցից մի քանիսը որպես դասի մի մաս:

1. «Նա, ով ջանասիրաբար որոնում է, կգտնի» (1 Նեփի 10.19)

- Ի՞նչ ցանկացավ Նեփին, տեսիլքի մասին իր հոր խոսքերը լսելուց հետո: (Տե՛ս 1 Նեփի 10.17:) Ի՞նչ նա արեց իր ցանկությունը բավարարելու համար: (Տե՛ս 1 Նեփի 10.17–19; 11.1–6:) Ինչպե՞ս կարող է Նեփիի օրինակը մեզ օգնել հասկանալ ավետարանի ճշմարտությունները: (Դասարանի անդամներին խնդրեք կիսվել իրենց այն վկայություններով, որոնց ժամանակ Աստված իրենց օգնել է հասկանալ ավետարանի ճշմարտությունները:)

- Ինչպե՞ս արձագանքեցին իրենց հոր տեսիլքին Լամանը և Լեմուելը, և ինչո՞վ էր այդ արձագանքը տարբերվում Նեփիի արձագանքից: (Տե՛ս 1 Նեփի 15.1–2:) Ինչո՞ւ Լամանը և Լեմուելը ի վիճակի չէին հասկանալու Լեքիի սովորեցրած ճշմարտությունները: (Տե՛ս 1 Նեփի 15.3, 8–11:)

2. «Գիտե՞ս դու Աստծո բարեհաճության մասին» (1 Նեփի 11.16)

Դասարանի անդամներին օգնեք հասկանալ «Աստծո բարեհաճություն» արտահայտությունը (1 Նեփի 11.16, 26), բացատրեք, որ այս արտահայտության մեջ *բարեհաճություն* բառը նշանակում է իջնել մեկ աստիճան ներքև: Այնուհետև կիսվեք Երեց Բրյուս Մակ-Քոնկիի հետևյալ խոսքերով.

«Աստծո (Հոր իմաստով) բարեհաճությունը բաղկացած է այն փաստից, որ … Նա դարձավ մահկանացու կնոջից ծնված մահկանացու Զավակի անձնական և իրական Հայրը: Եվ Աստծո (Որդու իմաստով) բարեհաճությունը բաղկացած է այն փաստից, որ Նա (Հիսուս Քրիստոսը) հանձնեց Իրեն մահկանացու կյանքի բոլոր փորձություններին, տառապելով ավելի, քան մարդկային որևէ էակ ի վիճակի էր տառապելու՝ գայթակղություններից, մարմնի ցավից, սովից, ծարավից և հոգնածությունից (տե՛ս Մոսիա 3.5–8), վերջապես դատապարտվելով մահվան ամենադաժան եղանակով» (*Mormon Doctrine*, 2nd ed. [1966], 155):

3. «Եվ նրանք զբաղված էին ծաղրելով» (1 Նեփի 8.27)

Երբ դասարանի անդամները կքննարկեն մեծ և ընդարձակ շենքը, շեշտեք, որ շենքի մարդիկ «զբաղված էին ծաղրելով»: Այդ ծաղրը շատերին ստիպեց պտուղը ճաշակելուց հետո ամաչել և հեռանալ (1 Նեփի 8.27–28):

- Ինչպե՞ս կարող է ուրիշների հանդեպ մեր վերաբերմունքը ստիպել նրանց հեռանալ:

Շեշտեք, որ պատասխանատու անձինք պատասխան են տալիս իրենց անձնական արարքների համար: Սակայն, ուրիշների հանդեպ մեր վերաբերմունքը կարող է կամ զորացնել նրանց իրենց արդար ջանքերում, կամ հուսահատեցնել նրանց: Դասարանի անդամներին խրախուսեք միմյանց զորացնել և երբեք չծաղրել կամ չքննադատել ուրիշներին:

4. Օրհներգ

Դասարանի հետ միասին երգեք կամ կարդացեք «Երկաթյա ձողը» օրհներգը (*Օրհներգեր*, հ. 274):

Դաս
4

«Բաները, որոնք ես տեսա մինչ հեռու էի տարվել՝ հոգով»

1 Նեփի 12–14

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ Նեփիի տեսիլքում նկարագրված ապագան և այն, թե ինչպես են տեսիլքի նախազգուշացումները և խոստումները վերաբերվում մեր օրերին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 1 Նեփի 12: Նեփին տեսիլքում տեսնում է իր սերունդներին և իր եղբայրների սերունդներին: Նա տեսնում է, որ նրանք կռվում են միմյանց դեմ և տեսնում, թե ինպես են չարերը կործանվում Փրկչի գալստից առաջ: Նա տեսնում է, որ Փրկչի գալստից հետո նրանք որոշ ժամանակ արդար կյանքով են ապրում, սակայն հետագայում նորից չարանում են:

   բ. 1 Նեփի 13: Նեփին տեսիլքում տեսնում է մեծ և պիղծ եկեղեցու ստեղծումը, Ամերիկայի հայտնաբերումը, Ուրացությունը և ավետարանի Վերականգնումը վերջին օրերում:

   գ. 1 Նեփի 14: Նեփին տեսիլքում տեսնում է խոստումները, տրված այն հեթանոսներին, որոնք կմնան հավատարիմ, և պատիժները, որ կտրվեն այն հեթանոսներին, որոնք կկորցնեն իրենց հավատքը, և Աստծո Գառի Եկեղեցու վերջնական հաղթանակը մեծ և պիղծ եկեղեցու նկատմամբ:

2. Եթե անց եք կացնելու ուշադրության վարժությունը, ապա մեծ թղթի կամ գրատախտակի վրա նկարեք ժամանակային սխեմա:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Հղում կատարեք հետևյալ ժամանակային սխեմային.



Դասարանի անդամներին օգնեք ժամանակային սխեմայի վրա տեղավորել հետևյալ իրադարձությունները: Կախված դասարանի անդամների գիտելիքներից կարող եք ժամանակային սխեմայի վրա գրել տարեթվերը և խնդրել անդամներին գտնել այն իրադարձությունը, որը կատարվել է տվյալ թվին: Կամ կարող եք գրատախտակի վրա գրել իրադարձությունների ցանկը և խնդրել դասարանի անդամներին գտնել տարեթվերը:

ա. Հիսուս Քրիստոսի Խաչումը (Մ.Թ. 33)
բ. Մեծ Ուխտադրժությունը (մոտավորապես Մ.Թ. 100 մինչև Մ.Թ. 1800 թ.)
գ. Լամանացիների և Նեփիացիների վերջին ճակատամարտը (մոտավորապես Մ.Թ. 385)
դ. Ամերիկայի հայտնաբերումը Քրիստաֆոր Կոլոմբոսի կողմից (Մ.Թ. 1492)
ե. Հիսուս Քրիստոսի ավետարանի Վերականգնումը (Մ.Թ. 1820-ներկա)

Երբ դասարանի անդամները կտեղավորեն իրադարձությունները ժամանակային սխեմայի վրա, բացատրեք, որ Նեփին տեսել է այդ և ապագայի վերաբերյալ այլ դեպքեր իր տեսիլքում:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք լավագույնս կհամապատասխանեն դասարանի անդամների կարիքներին: Քննարկեք, ինչպես են ընտրված սուրբ գրությունները վերաբերվում մեր առօրյա կյանքին: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Նեփին տեսնում է իր և իր եղբայրների սերունդների ապագան:

Քննարկեք 1 Նեփի 12: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ 1 Նեփի 12-ում Նեփին նկարագրում է իր սերմի (սերնդի) և իր եղբայրների սերմի ապագայի մասին իր տեսիլքը: Այս գլուխը քննարկելիս, նշեք, ինչպես են կենաց ծառի տեսիլքի խորհրդանիշները (խավարի մեգը, մեծ և ընդարձակ շենքը, կեղտոտ ջրերի գետը) ներկայացրել Նեփիի սերմի անկումը:

- Ինչպե՞ս էր Նեփին նկարագրում երկրի վրա տիրող այն պայմանները, որոնք նախորդելու էին Փրկչի այցին Ամերիկա: (Տե՛ս 1 Նեփի 12.1–6:) Որքանո՞վ են այդ պայմանները նման Փրկչի Երկրորդ Գալստին նախորդող պայմաններին: (Տե՛ս Ջոզեֆ Սմիթ – Մաթևոս 1.27–37:) Ինչպե՞ս է Նեփին նկարագրել այն պայմանները, որոնք կհաջորդեն Փրկչի այցին: (Տե՛ս 1 Նեփի 12.11–12; տե՛ս նաև նրա մարգարեության իրականացումը, որը գրառված է 4 Նեփի 1.2–4-ում:) Ի՞նչը բերեց այդ արդարությունն ու խաղաղությունը: (Տե՛ս 4 Նեփի 1.15:)
- Նեփին տեսավ, որ մոտ չորս արդար սերունդներ անց, իր և իր եղբայրների սերունդները նորից կսկսեն պատերազմել միմյանց դեմ (1 Նեփի 12.12–15): Ի՞նչ պետք է պատահեր իր սերնդի հետ այդ պատերազմների ժամանակ ըստ Նեփիի տեսիլքի: (Տե՛ս 1 Նեփի 12.19–20:) Ինչո՞ւ Նեփիի սերունդը պետք է պարտվեր և ոչնչանար: (Տե՛ս 1 Նեփի 12.19:) Ինչպե՞ս կարող է հպարտությունը և Սատանայի գայթակղությունները տանեն դեպի կործանում:

2. Նեփին տեսնում է մեծ և պիղծ եկեղեցու ստեղծումը, Ամերիկայի գաղութացումը, Ուխտադրժությունը և ավետարանի Վերականգնումը:

Կարդացեք և քննարկեք 1 Նեփի 13-ից ընտրված հատվածները: Բացատրեք, որ 1 Նեփի 13-ում գրի են առնվել Նեփիի տեսիլքից հետևյալ իրադարձությունները.

ա. Մեծ և պիղծ եկեղեցու ստեղծումը:
բ. Ամերիկայի հայտնագործումը և գաղութացումը:
գ. Ուխտադրժությունը և Աստվածաշնչի շատ պարզ և արժեքավոր մասերի կորուստը:
դ. Մորմոնի Գրքի աշխարհ գալը և ավետարանի Վերականգնումը:

Մեծ և պիղծ եկեղեցու ստեղծումը

- Ի՞նչ ստեղծվեց «Հեթանոսների ազգերի մեջ» համաձայն Նեփիի տեսիլքի: (Տե՛ս 1 Նեփի 13.4–5:) Ո՞վ է մեծ և պիղծ եկեղեցու հիմնադիրը: (Տե՛ս 1 Նեփի 13.6:)

  Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկին ասել է. «Սատանայի եկեղեցու և մեծ ու պիղծ եկեղեցու անունները օգտագործվել են զանազանելու տարբեր անուններ ունեցող կամ տարբեր բնույթի այն բոլոր եկեղեցիները և կազմակերպությունները, լինեն դրանք քաղաքական, փիլիսոփայական, կրթական, տնտեսական, հասարակական, քաղաքացիական կամ կրոնական, որոնց նպատակն է մարդուն հեռացնել Աստծուց և Նրա օրենքներից և, այդպիսով, զրկել փրկությունից և Աստծո արքայությունից» (*Mormon Doctrine*, 2nd ed. [1966], 137–38):

Շեշտեք, որ մեծ և պիղծ եկեղեցին ուխտադրժության բոլոր ձևերի խորհրդանիշ է: Դա կեղծ ուսմունքի, կեղծ պաշտամունքի և հակակրոնական կեցվածքի արտահայտումն է: Այն չի ներկայացնում մեր օրերի եկեղեցիներից որևէ մեկին:

- Ո՞րն են «մեծ և պիղծ եկեղեցու» հատկանիշները (Տե՛ս 1 Նեփի 13.5–9: Պատասխանները կարող են ներառել. այն թուլացնում է հավատքը, ցանկանում է աշխարհիկ հարստություն և մեղքեր, փնտրում է աշխարհի գովքը:) Կենաց ծառի ո՞ր խորհրդանիշն է համապատասխանում մեծ և պիղծ եկեղեցուն: (Համեմատե՛ք 1 Նեփի 13.5–9 և 1 Նեփի 11.35–36:)
- Ի՞նչն է այսօր վկայում այն մասին, որ մեծ և պիղծ եկեղեցին աշխատում է Սրբերին ոչնչացնելու համար: Ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել այն մարդկանցից և կազմակերպություններից, որոնք մարդկանց հեռացնում են Աստծուց և Նրա օրենքներից:

Ամերիկայի հայտնագործումը և գաղութացումը

- Պետք է հասկանալ, որ Հեթանոսները, որոնք առաջ գնացին «շատ ջրերի վրայով», Քրիստափոր Կոլոմբոսը և Ամերիկան հայտնագործած այլ վաղ ճանապարհորդներն էին (1 Նեփի 13.12–13): Ի՞նչը հնարավորություն տվեց այդ ճանապարհորդներին հաջողության հասնել իրենց որոնումներում: (Տե՛ս 1 Նեփի 13.14–19:)
- Ի՞նչ դեր խաղացին այդ վաղ ճանապարհորդները ավետարանի Վերականգնման գործում: (Նրանք նախապատրաստեցին ճանապարհը Ամերիկայի Միացյալ Նահանգները հիմնելու համար: Միացյալ Նահանգների սահմանադրությունը կրոնի ազատություն շնորհեց, որը կարևոր էր Մորմոնի Գրքի աշխարհ գալու և ավետարանի Վերականգնման համար: Տե՛ս Վ. և Ու. 101.77–80:)

Ուխտադրժությունը և Աստվածաշնչի բազմաթիվ պարզ և արժեքավոր մասերի կորուստը

- Ի՞նչ գիրք տեսավ Նեփին հեթանոսների ձեռքում: (Տե՛ս 1 Նեփի 13.20–23: Աստվածաշունչը:) Ինչպե՞ս վարվեց գրքի հետ մեծ և պիղծ եկեղեցին: (Տե՛ս 1 Նեփի 13.24–26:) Ինչո՞ւ: (Տե՛ս 1 Նեփի 13.27:)
- Որո՞նք էին Աստվածաշնչի «պարզ և արժեքավոր մասերի» կորստի հետևանքները: (Տե՛ս 1 Նեփի 13.29:)

Մորմոնի Գրքի ի հայտ գալը և ավետարանի Վերականգնումը

- Տերը գիտեր, որ մեծ և պիղծ եկեղեցին կփորձի ոչնչացնել Աստվածաշնչում Աստծո խոսքը: Ինչպե՞ս Տերը կարող էր ապահովել, որպեսզի Իր խոսքը հայտնվի աշխարհին վերջին օրերում: (Տե՛ս 1 Նեփի 13.35–36:) Որո՞նք էին այդ գրառումները, որ պահվել էին Նեփիի սերնդի կոմից: (Մորմոնի Գիրքը:)
- Ո՞րն է Մորմոնի Գրքի նպատակը: (Տե՛ս 1 Նեփի 13.40–41; տե՛ս նաև Մորմոն 7.8–9; Վ. և Ու. 20.8–12: Կարող եք գրել դասարանի անդամների պատասխանները գրատախտակի վրա:) Ինչպե՞ս են իրականանում այդ նպատակները:
- Որո՞նք են այն ուսմունքները, որ դժվար է հասկանալ Աստվածաշնչում, սակայն պարզ ու արժեքավոր են Մորմոնի Գրքում: (Պատասխանները կարող են ընդգրկել Քավությունը, համբարձումը և մկրտությունը: Կարող եք կիսվել օրինակներով այն մասին, թե ինչպես են այդ ուսմունքները պարզորեն ուսուցանվում Մորմոնի Գրքում: Օրինակ, կարող եք խնդրել դասարանի անդամներին կարդալ Ալմա 11.42–45, որը սովորեցնում է պարզ և արժեքավոր ճշմարտություններ Քավության և համբարձման մասին, կամ 3 Նեփի 11.21–26 և Մորոնի 8.11–12, որոնք սովորեցնում են պարզ և արժեքավոր ճշմարտություններ մկրտության մասին:) Ինչպե՞ս Մորմոնի Գիրքն օգնեց Աստվածաշունչն ավելի հասկանալի դարձնել և զորացնել Աստվածաշնչի մասին ձեր վկայությունը:

3. Նեփին տեսնում է հավատարիմներին տրվող խոստումները: Նա նույնպես տեսնում է մեծ և պիղծ եկեղեցու կործանումը:

Կարդացեք և քննարկեք 1 Նեփի 14-ից ընտրված հատվածները:

Դասարանի անդամներին երկու խմբերի բաժանեք: Խմբերից մեկին խնդրեք 1 Նեփի 14.1–7-ում գտնել հեթանոսներին խոստացված օրհնությունները (ոչ-Իսրաելացիներին), եթե նրանք հավատարիմ մնան Աստծուն: Երկրորդ խմբին խնդրեք կարդալ նույն հատվածը գտնելու հեթանոսներին խոստացված պատիժները, եթե նրանք կարծրացնեն իրենց սրտերը և շրջվեն Տիրոջից: Գրի առեք դրանք գրատախտակի վրա: Այնուհետև հարցրեք նրանց.

- Ի՞նչ մենք պետք է անենք մեր սրտերը փափկացնելու համար, որպեսզի կարողանանք ստանալ այդ օրհնությունները:
- Ինչպե՞ս կարելի է հասկանալ, որ աշխարհում այսօր միայն երկու ուժեր կան: (Տե՛ս 1 Նեփի 14.10; 2 Նեփի 10.16:)
- Ի՞նչ, վերջ ի վերջո, կպատահի մեծ և պիղծ եկեղեցու հետ: (Տե՛ս 1 Նեփի 14.3–4, 15–17; 22.23:)
- Նեփին տեսավ, որ, թեպետ և Տիրոջ Եկեղեցու անդամները վերջին օրերում համեմատաբար քիչ կլինեն, այնուամենայնիվ նրանք ի վիճակի կլինեն հաղթահարելու մեծ և պիղծ եկեղեցու հալածանքը: Ինչո՞վ էին զինված Աստծո Սրբերը Նեփիի տեսիլքում: (Տե՛ս 1 Նեփի 14.14:) Ինչպե՞ս կարող ենք զինվել «արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով»:

Եզրափակում

Բացատրեք, որ Նեփիի տեսիլքում երևացին շատ իրադարձություններ, որոնք տեղի էին ունենում և դեռ պետք է տեղի ունենային երկրի պատմության մեջ: Դրանք նույնպես ցույց են տալիս, որ մենք ընտրության միայն երկու տարբերակ ունենք. հետևել Հիսուս Քրիստոսին կամ գործել Նրա դեմ և, այդպիսով, հետևել Սատանային: Դասարանի անդամներին հիշեցրեք, որ 1 Նեփի 14-ում խոստացված օրհնությունները մատչելի կլինեն մեզ միայն այն դեպքում, եթե հետևենք Հիսուս Քրիստոսին:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ընթացքում քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս

5

«Ականջ դնել ճշմարտությանը և ուշք դարձնել դրան»

1 Նեփի 16–22

Նպատակ

Ոգեշնչել դասարանի անդամներին հետևել Նեփիի հավատքի և պատրաստակամ հնազանդության օրինակին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին:

   ա. 1 Նեփի 16; 17.1–3: Լեքիի որդիները և Զորամը ամուսնանում են Իսմայելի դուստրերի հետ: Տերը մարդկանց Լիահոնան է տալիս, որի միջոցով Նա առաջնորդում է նրանց համաձայն իրենց հավատքի և ջանասիրության: Նեփիի աղեղը կոտրվում է, ինչի հետևանքով դժվար է դառնում որսորդություն անելը: Բոլորը տրտնջում են բացի Նեփիից, որը նոր աղեղ է պատրաստում, հարցնում Լեքիին, որտեղ ուտելիք հայթհայթել և մարդկանց համար ուտելիք է բերում:

   բ. 1 Նեփի 17.4–55; 18.1–4: Նեփին անսասան հավատք է դրսևորում հնազանդվելով նավ կառուցելու Տիրոջ պատվիրանին:

   գ. 1 Նեփի 18.5–25: Լամանը, Լեմուելը, Իսմայելի որդիները և նրանց կանայք ըմբոստանում են նավի վրա: Լամանը և Լեմուելը կապում են Նեփիին, որը, չնայած այդ փորձությանը, քաջություն և երախտագիտություն է դրսևորում: Տերը մեծ փոթորիկ է ուղարկում: Լամանը և Լեմուելը ազատում են Նեփիին, և վերջինս առաջնորդում է նավը դեպի խոստումի երկիր:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Ալմա 37.38–46:

3. Դասարանի երեք անդամներից յուրաքանչյուրին նախօրոք խնդրեք պատրաստվել ամփոփելու ստորև տրված սուրբ գրությունների հատվածներից մեկը: Նրանց խնդրեք միայն վերարտադրել այդ հատվածներում կատարվող դեպքերը, իսկ ուսմունքը կամ անձնական փորձերը կքննարկվեն դասի ժամանակ:

   ա. 1 Նեփի 16.9–33
   բ. 1 Նեփի 17.4–55; 18.1–4
   գ. 1 Նեփի 18.5–22

4. Հետևյալ նյութերի առկայության դեպքում, նախապատրաստվեք օգտագործել դրանք դասի ժամանակ.

   ա. «Լիահոնա» (62041; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 302) և «Լեքին իր մարդկանց հետ հասնում է խոստացված երկիր» նկարները (62045; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 304):

   բ. «Ես կպատրաստեմ ճանապարհը» ութ բոպեանոց հատված *Մորմոնի Գրքի Տեսաֆիլմերից* (53911):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ այլ վարժություն դասը սկսելու համար:

Հետևյալ արտահայտությունները գրեք գրատախտակի վրա.

Ես չեմ ցանկանում:
Ես կմտածեմ դրա մասին:
Ես կփորձեմ:

Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 1 Նեփի 3.4:

- Ի՞նչ կարող էր պատահեր, եթե Նեփին Տիրոջ պատվիրաններին պատասխաներ գրատախտակի վրա գրված այդ արտահայտություններից մեկով: Ինչպե՞ս պատասխանեց Նեփին: («Ես կանեմ»: Տե՛ս 1 Նեփի 3.7:)

Ջնջեք գրատախտակի վրա գրված արտահայությունները և մեծ տառերով գրեք *ԵՍ ԿԱՆԵՄ*: Բացատրեք, որ Նեփին և իր ընտանիքը դեպի ավետյաց երկիր իրենց ճանապարհորդության ժամանակ օրհնվում էին, որովհետև Նեփին շարունակում էր իր «Ես կանեմ» վերաբերմունքը, նա երբեք չէր տատանվում հնազանդվելու Տիրոջ պատվիրաններին: Այս դասը ցույց է տալիս, թե ինչպես մենք կարող ենք հետևել Նեփիի հավատքի և պատրաստակամ հնազանդության օրինակին:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք լավագույնս կհամապատասխանեն դասարանի անդամների պահանջներին: Քննարկեք, թե ինչպես են այդ սուրբ գրությունները վերաբերվում մեր այսօրվա կյանքին: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների հետ առնչվող իրենց փորձով:

1. Տերն առաջնորդում է Լեքիի և Իսմայելի ընտանիքներին՝ համաձայն նրանց հավատքի և ջանասիրության:

Եթե օգտագործում եք «Լեքին գտնում է Լիահոնան» նկարը, ապա ցույց տվեք այն այժմ: Խնդրեք այն անդամներին, որոնց նախօրոք հանձնարարված էր, ամփոփել 1 Նեփի 16.9–33-ում նկարագրված իրադարձությունները: Այնուհետև կարդացեք և քննարկեք 1 Նեփի 16; 17.1–3-ից ընտրված հատվածները:

- «Գունդը, կամ ուղեցույցը», որ Տերը տվեց Լեքիին, կոչվեց «Լիահոնա» (Ալմա 37:38): Որո՞նք էին Լիահոնայի նպատակները: (Տե՛ս 1 Նեփի 16.10, 29:) Ի՞նչ պետք է մարդիկ անեին, որպեսզի Լիահոնան աշխատեր: (Տե՛ս 1 Նեփի 16.28–29; Ալմա 37.40:) Ինչպիսի՞ն էին մարդկանց հավատքի բացակայության և անհնազանդության հետևանքները: (Տե՛ս Ալմա 37.41–42:)
- Որո՞նք են Լիահոնան հիշեցնող մեր կյանքի ուղեցույցները, որոնք գործում են համաձայն մեր հավատքի և ջանասիրության: (Պատասխանները կարող են ներառել սուրբ գրությունները, ինչպես բացատրվում է Ալմա 37.38–46-ում, Սուրբ Հոգին, հայրապետական օրհնությունը կենդանի մարգարեների ուսմունքները և մեր խիղճը, ինչպես բացատրվում է ստորև տրված մեջբերումով:) Ինչպե՞ս են այդ ուղեցույցները օգնել ձեզ:

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է.

  «Տերը յուրաքանչյուր մարդու խիղճ է տվել, որը զգուշացնում է նրան ամեն անգամ, երբ նա կանգնում է սխալ ճանապարհի վրա: Մարդը միշտ կզգուշացվի, եթե լսի, սակայն մարդիկ այնքան են սովորում այդ ուղերձներին, որ չեն նկատում դրանք, մինչև անգամ սկսում են բացարձակորեն անտեսել:

  Դուք պետք է հասկանաք, որ ձեր համակարգում ունեք ուղեցույցի պես Լիահոնայի նման մի բան: Յուրաքանչյուր երեխայի տրված է այն . . . Եթե նա արհամարի իր սեփական կազմում եղած Լիահոնան, ապա վերջ-ի-վերջո կզրկվի դրա հուշումներից . . . Մեր նավը սխալ ճանապարհով չի ուղևորվի . . . եթե մենք լսենք մեր անձնական Լիահոնայի թելադրանքին, որը կոչում ենք խիղճ» (in Conference Report, Oct. 1976, 117; or *Ensign*, Nov. 1976, 79):
- Ինչպե՞ս արձագանքեցին Լամանը և Լեմուելը, երբ Նեփին կոտրեց աղեղը: (Տե՛ս 1 Նեփի 16.18, 20:) Ինչպե՞ս արձագանքեց Լեքին: (Տե՛ս 1 Նեփի 16.20:) Ինչպե՞ս

արձագանքեց Նեփին: (Տե՛ս 1 Նեփի 16.22–23:) Ի՞նչ կարող ենք սովորել այս փորձության մեջ Նեփիի պատասխանից և ինչպե՞ս այն մեզ կարող է օգնել դիմակայելու դժվարություններին: (Պատասխանները կարող են ներառել այն, որ մենք ապավինում ենք Տիրոջը, ջանասիրաբար աշխատում ենք դժվարությունները հաղթահարելու համար, և խուսափում ենք Տիրոջ և Նրա ծառաների դեմ տրտնջալուց:)

- Նոր աղեղ պատրաստելուց հետո, Նեփին Լեքիին հարցրեց, թե ուր գնա ուտելիք հայթայթելու համար (1 Նեփի 16.23): Ինչպե՞ս պատասխանեց Լեքին իր որդուն (Տե՛ս 1 Նեփի 16.24–25:) Որո՞նք էին Լեքիի խոնարհության և դեպի Տերը շրջվելու արդյունքները: (Տե՛ս 1 Նեփի 16.26–32:) Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ հետ Լեքիի այս հարաբերություններից: (Պատասխանները կարող են ներառել այն, որ Տերը կների և կօրհնի մեզ, եթե մենք խոնարհեցնենք մեզ և շրջվենք դեպի Նա:)
- Լիահոնայի մասին խոսելիս, Նեփին նկատում է, որ «փոքր միջոցներով Տերը կարող է առաջ բերել մեծ բաներ» (1 Նեփի 16.29; տե՛ս նաև Ալմա 37.6–7; Վ.և Ու. 64.33): Ձեր կյանքում, ինչպե՞ս եք համոզվել դրանում: Ինչպե՞ս կարող է այդ սկզբունքի մասին մեր գիտելիքն օգնել մեզ:

2. Նեփին անսասան հավատք է դրսևորում, կատարելով նավ կառուցելու Տիրոջ պատվիրանը:

Դասարանի անդամներից մեկին խնդրեք ամփոփել 1 Նեփի 17.4–55; 18.1–4-ում նկարագրված իրադարձությունները: Այնուհետև կարդացեք և քննարկեք այդ գրություններից ընտրված հատվածները:

- Ի՞նչ կարող ենք սովորել Նեփիի պատասխանից նավ կառուցելու Տիրոջ պատվիրանին: (Տե՛ս 1 Նեփի 17.8–11, 16–19, 50–51; 18.1–3; տե՛ս նաև Հակոբ 2.17–18:)

  Երեց Լ. Թոմ Փերին ասել է. «Սա սուրբ գրություններում մեր ունեցած ամենահետաքրքիր պատմություններից մեկն է, որովհետև այն պատմում է այն մասին, թե ինչպես էր Տերն օգնում, սակայն հետո մի կողմ էր կանգնում թույլ տալով Իր զավակներից մեկին շարժվել իր նախաձեռնությամբ: Երբեմն ես մտածում եմ, թե ինչ կարող էր պատահել, եթե Նեփին Տիրոջից գործիքներ խնդրեր, այլ ոչ թե հարցներ այն տեղի մասին, որտեղ նա կարող էր նյութ գտնել գործիքներ պատրաստելու համար: Ես կասկածում եմ, որ Տերը կբավարեր Նեփիի խնդրանքը: Դուք տեսնում եք, Տերը գիտեր, որ Նեփին ի վիճակի է գործիքներ պատրաստել, և շատ հազվադեպ դեպքերում Տերը կանի մեզ համար այն, ինչը մենք կարող ենք մեզ համար ինքներս անել» (in Conference Report, Oct. 1991, 87–88; or *Ensign*, Nov. 1991, 64):

Եթե օգտագործում եք «Կպատրաստեմ ձեր առջև ճանապարհը» տեսաֆիլմը, ապա ցուցադրեք այն այժմ: Ֆիլմը ցուցադրելուց հետո, քննարկեք, թե ինչպես Տերը Սյուզանի համար ճանապարհ պատրաստեց ավետարանով կիսվելու համար: Դասարանի անդամներին օգնեք տեսնել, որ Նեփիի և Սյուզանի նման իրենք նույնպես կարող են զորություն գտնել «ես կպատրաստեմ ձեր առջև ճանապարհը, եթե լինի այնպես, որ դուք պահեք իմ պատվիրանները» Տիրոջ խոստումի մեջ (1 Նեփի 17.13):

- Ինչպե՞ս արձագանքեցին Լամանը և Լեմուելը, երբ տեսան, որ Նեփին պատրաստվում է նավ կառուցել (Տե՛ս 1 Նեփի 17.17–22:) Նեփին նախատեց նրանց հիշեցնելով Եգիպտոսից Իսրաելացիների դուրս գալու մասին: Ինչպե՞ս էր Լեքիի և նրա ընտանիքի դուրս առաջնորդվելը հիշեցնում Մովսեսի և Իսրաելացիների ելիցը: (Տե՛ս 1 Նեփի 17.23–44:)
- Նեփին Լամանին և Լեմուելին ասաց, որ նրանք անզգայացած էին և չէին կարող զգալ Տիրոջ խոսքերը (1 Նեփի 17.45): Ի՞նչ է նշանակում զգալ Տիրոջ խոսքերը: (Տե՛ս ստորև բերված մեջբերումը:) Ի՞նչն է մարդկանց ստիպում դառնալ «անզգայացած»: Ինչպե՞ս կարող ենք պատրաստվել Տիրոջ խոսքերը զգալու համար:

Երեց Բոյդ Ք. Փաքերը սովորեցնում է. «Սուրբ Հոգին հաղորդակցվում է հոգու հետ ավելի շատ մտքի, քան ֆիզիկական զգայարանների միջոցով: Այդ առաջնորդությունը գալիս է որպես մտքեր՝ զգացմունքների, տպավորությունների և հուշումների միջոցով: Սուրբ գրությունները մեզ սովորեցնում են, որ մենք ավելի շուտ զգում ենք, այլ ոչ թե լսում, հոգևոր հաղորդակցության խոսքերը, և տեսնում ենք ավելի շուտ հոգևոր, քան ֆիզիկական աչքերով (տե՛ս 1 Նեփի 17.45)» (in Conference Report, Oct. 1989, 16; or *Ensign*, Nov. 1989, 14):

- Ինչպիսի՞ հետևանքների են դեմ հանդիման կանգնում այն մարդիկ, որոնք Լամանի և Լեմուելի նման կարծրացնում են իրենց սրտերը ճշմարտության դեմ: (Տե՛ս 1 Նեփի 17.46–47:)
- Նեփին իր եղբայրներին կոչ է անում չտրտնջալ իրենց հոր դեմ (1 Նեփի 17.49): Ինչպե՞ս է տրտնջալն ազդում մեր ընտանիքների վրա: Ինչպե՞ս մենք կարող ենք հաղթահարել ընտանիքի անդամների մասին բամբասելն ու չարախոսելը:
- Նավը կառուցելու ընթացքում Նեփին շարունակում էր աղոթել հրահանգներ ստանալու համար (1 Նեփի 18.1–3): Ինչպե՞ս Տերը պատասխանեց նրա աղոթքներին: (Տե՛ս 1 Նեփի 18.1, 3–4:) Ինչո՞ւ է մեզ համար կարևոր հաճախ փնտրել Տիրոջ առաջնորդությունը մեր աղոթքներում:

3. Լամանը և Լեմուելը կապում են Նեփիին, որը, չնայած այդ փորձությանը, քաջություն և երախտագիտություն է դրսևորում: Երբ նրան ազատում են, Նեփին առաջնորդում է նավը դեպի խոստումի երկիր:

Խնդրեք դասարանի անդամին, որին նախօրոք հանձնարարված էր, ամփոփել 1 Նեփի 18.5–22-ում նկարագրված իրադարձությունները: Այնուհետև կարդացեք և քննարկեք 1 Նեփի 18.5–25-ից ընտրված հատվածները:

- Դեպի խոստումի երկիր իրենց ճանապարհորդության ժամանակ Լամանը, Լեմուելը, Իսմայելի որդիները և նրանց կանայք «սկսեցին զվարճանալ» (1 Նեփի 18.9): Ինչպե՞ս Նեփին արձագանքեց նրանց արարքներին: (Տե՛ս 1 Նեփի 18.10:) Ինչո՞ւ էր այդ զվարճությունը սխալ: (Տե՛ս 1 Նեփի 18.9: Նրանք մոռացան Տիրոջ մասին և կոպտացան: Կարող եք համեմատել այս տողերը Վ. և Ու. 136.28 տողերի հետ:)
- Ո՞րն էր այն միակ բանը, որ կարող էր համոզել Լամանին և Լեմուելին ազատել Նեփիին (Տե՛ս 1 Նեփի 18.15–20:) Տիրոջ դեմ ըմբոստանալով, ապաշխարելով, այնուհետև շարունակելով ըմբոստանալ Լամանը և Լեմուելը դառնում էին ավելի կարծրասիրտ (համեմատեք 1 Նեփի 18.20-ն 1 Նեփի 2.14; 7.19–21; 16.39; 18.4 հետ): Ո՞րն է միևնույն մեղքը կրկին ու կրկին կրկնելու վտանգը (Տե՛ս Վ. և Ու. 82.7:)
- Ինչպե՞ս Տերը օրհնեց մարդկանց նրանից հետո, երբ Լամանը և Լեմուելը ապաշխարեցին և ազատեցին Նեփիին (Տե՛ս 1 Նեփի 18.21–25: Եթե օգտագործում եք խոստումի երկիր մարդկանց հասնելու նկարը, ապա ցուցադրեք այն այժմ:)
- Անապատով և ծովով ճանապարհորդելու ընթացքում ինչպիսի՞ հանգամանքներ էին մարդկանց դրդում տրտնջալու: (Տե՛ս 1 Նեփի 16.18–20, 34–36; 17.21:) Ինչպիսի՞ն էր Նեփիի դիրքորոշումը այդ դժվար պահերին: (Տե՛ս 1 Նեփի 18.16: Շեշտեք, որ անգամ, երբ իր կողքին բոլորը բողոքում էին Աստծու դեմ, Նեփին երբեք չտատանվեց իր խոնարհության և Տիրոջ հանդեպ սիրո մեջ:)

Եզրափակում

Նշեք, որ Մորմոնի Գրքում Նեփիի կողմից գրված վերջին խոսքերը նրա իսկական բնավորության նկարագիրն են տալիս. «Այդպես է պատվիրել ինձ Տերը, և ես պետք է հնազանդվեմ» (2 Նեփի 33.15): Այնուհետև կիսվեք Երեց Հեբեր Ջ. Գրանտի հետևյալ խոսքերով.

«Չկան խոչնդոտներ, որոնք անհաղթահարելի են, երբ Տերը պատվիրում է մեզ և մենք հնազանդվում ենք» (in Conference Report, Oct. 1899, 18):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութերը լրացնում են դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք դրանցից մեկը կամ մի քանիսը օգտագործել դասի ընթացքում:

1. Սուրբ գրությունների որոնում

Դասարանի անդամներից մեկին խնդրեք մտքում կարդալ 1 Նեփի 16–18, փնտրելով Նեփիին, Լամանին և Լեմուելին բնութագրող բառերը: Գրեք բառերը գրատախտակին և օգտագործեք դրանք ցույց տալու համար Նեփիի և նրա ըմբոստացող եղբայրների միջև տարբերությունները:

2. Ներշնչումներ 1 Նեփի 19–22-ից

- Երբ Նեփիի ընտանիքը հասավ խոստումի երկիր, առաջին բաներից մեկը, որ Տերը պատվիրեց Նեփիին անել, դա իր ժողովրդի մասին գրառումներ կատարելն էր (1 Նեփի 19.1–4): Նեփին ասաց, որ իր ժողովրդի համար գրել է «սրբազան բաներ», որպեսզի համոզի նրանց միշտ հիշելու Տիրոջը՝ իրենց Քավիչին (տե՛ս 1 Նեփի 19.5, 18): Ի՞նչ օրհնությունների կարող են արժանանալ մեր սերունդները, եթե մենք գրի առնենք մեր կյանքի սուրբ իրադարձությունները:
- Համաձայն Նեփիի, ինչպե՞ս կընդունի աշխարհը Փրկչին երկրի վրա Նրա ծառայության ժամանակ: (Տե՛ս 1 Նեփի 19.7–10:) Ինչո՞ւ աշխարհը չընդունեց Հիսուսին և դատեց նրան որպես «ոչ պիտանի մի բան» (Տե՛ս 1 Նեփի 19.9:) Ինչո՞ւ էր Հիսուսը պատրաստ դիմանալու այդ հալածանքին: (Տե՛ս 1 Նեփի 19.9:)
- Համաձայն Նեփիի, ինչո՞ւ հրեաները «կխարազանվեն բոլոր ժողովուրդների կողմից» (Տե՛ս 1 Նեփի 19.13–14:) Ի՞նչ կպատահի, եթե հրեաները «չխոտորեն իրենց սրտերը» Հիսուսի դեմ: (Տե՛ս 1 Նեփի 19.15–16:)
- Նեփին իր եղբայրներին սովորեցնում էր «հին մարգարեների վերաբերյալ» և «Տիրոջ գործերի մասին ուրիշ երկրներում, հնադարյան մարդկանց մեջ» (1 Նեփի 19.21–22): Ինչպե՞ս եք դուք օրհնվել, երբ ուսումնասիրել եք սուրբ գրությունները և սովորել հին ժամանակների մարգարեների մասին:
- Ինչո՞ւ է կարևոր «բոլոր սուրբ գրությունները վերագրել մեզ» (1 Նեփի 19.23): Ինչպե՞ս կարող եք օգուտ քաղել այդպես վարվելուց:

1 Նեփի 21–22-ն պարունակում է վերջին օրերի վերաբերյալ կարևոր մարգարեություններ: Կարող եք կարդալ հետևյալ հատվածները.

ա. 1 Նեփի 21.22–23; 22.6–8: Ավետարանի Վերականգնումը ցրված Իսրայելին նորից կհավաքի:
բ. 1 Նեփի 21.26; 22.10–12: Տերը Իսրայելը «դուրս կբերի . . . մթությունից և խավարից. և նրանք կիմանան, որ Տե՛րն է իրենց Փրկիչը և իրենց Քավիչը»: (Շեշտեք, որ Մորմոնի Գիրքը կարևորագույն դեր ունի Տիրոջ գործում՝ ուխտերը իրագործելու և Նրա ավետարանը տալու նրանց, ովքեր Իսրայելի տնից չեն: Համեմատեք 1 Նեփի 22.11–12-ն Մորմոնի Գրքի վերնագրի էջի հետ:)
գ. 1 Նեփի 22.13–15: Աստծուն մերժող ազգերը կպատերազմեն իրար մեջ և կոչնչացվեն:
դ. 1 Նեփի 22.16–19: Տերը կպահպանի արդարներին:
ե. 1 Նեփի 22.26: Սատանան կապանքների մեջ կլինի հազարամյակում՝ Քրիստոսի թագավորելու ընթացքում:

«Ազատ են՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք»

Դաս
6

2 Նեփի 1–2

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին մեծացնել իրենց ցանկությունը «ընտրելու ազատություն և հավերժական կյանք» Հիսուս Քրիստոսի՝ «բոլոր մարդկանց մեծ Միջնորդի» միջոցով (2 Նեփի 2.27):

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 2 Նեփի 1: Լեքին սովորեցնում է, որ իր ժողովուրդը ձեռք է բերել ուխտով խոստացված երկիրը: Նա կոչ է անում իր որդիներին ապաշխարել, հնազանդվել Տիրոջ պատվիրաններին և հագնել արդարության զենքերը:

   բ. 2 Նեփի 2.1–10: Լեքին սովորեցնում է, որ մեղքերի թողությունը տրվում է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

   գ. 2 Նեփի 2.11–30: Լեքին սովորեցնում է, որ հակադրությունն անհրաժեշտ է Երկնային Հոր ծրագրի համար և, որ մենք «ազատ ենք՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք . . . կամ ընտրել գերություն և մահ»:

2. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժությունը, մի զարթուցիչ բերեք դասարան:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստված որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ձեզ հետ դասարան բերեք մի զարթուցիչ և լարեք այն, որպեսզի այն զանգի դասի սկզբում: Երբ այն զանգի, ասացեք, որ մենք հաճախ զարթուցիչի նման մի բանի կարիք ունենք, որպեսզի այն մեզ արթնացնի: Բացատրեք, որ այս դասը սկսվում է Լեքիի խորհրդից, որը կօգնի իր որդիներին հոգեպես արթնանալ:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Այս դասում քննարկված սուրբ գրությունների գլուխները պարունակում են իր որդիներին ուղղված Լեքիի վերջին խոսքերը: Դասարանի անդամներին խնդրեք գտնել Լեքիի խորհուրդն իրենց կյանքում կիրառելու եղանակներ: Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածներ, հարցեր և դասարանային այլ նյութեր, որոնք լավագույնս կհամապատասխանեն դասարանի անդամների կարիքներին:

1. Լեքին խորհուրդ է տալիս իր որդիներին ապաշխարել, հնազանդվել Տիրոջ պատվիրաններին և հագնել արդարության զենքերը:

Քննարկեք 2 Նեփի 1: Դասարանի անդամներին հրավիրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ այս գլուխը պարունակում է իր մահից առաջ որդիներին ուղղված Լեքիի խորհուրդը: Դասարանին խնդրեք գտնել այն ամենը, ինչ Լեքին խորհուրդ է տալիս իր որդիներին կատարել և այն օրհնությունները, որոնք նա խոստանում է, եթե նրանք լսեն իր խորհրդին:

- Լեքին ասաց, որ չնայած չարչարանքներին, իր ժողովուրդը ձեռք բերեց ուխտով խոստացված երկիրը (2 Նեփի 1.5): Ո՞րն էր Լեքիի ժողովրդի և Տիրոջ միջև կապած ուխտը:

(Տե՛ս 2 Նեփի 1.6–7, 9–10:) Ի՞նչ, ըստ Լեքիի, կպատահեր երկրի բնակիչներին, եթե նրանք մերժեին Փրկչին: (Տե՛ս 2 Նեփի 1.10–12:)

- Լեքին իր որդիներին կոչ արեց ապաշխարել, խնդրելով նրանց արթնանալ «խորը քնից . . . այսինքն՝ դժոխքի քնից» և թոթափել «ահավոր շղթաները» որոնցով կապված էին (2 Նեփի 1.13; տե՛ս նաև հատվածներ 14, 21, and 23): Ինչո՞ւ է մեղավոր լինելը նմանեցվում խորը քնին: Ինչո՞ւ է մեղավոր լինելը նմանեցվում ահավոր շղթաներով կապված լինելուն:

- Լեքին իր որդիներին խորհուրդ տվեց ելնել փոշուց և լինել տղամարդ (տե՛ս 2 Նեփին 1.21): Որո՞նք են արդար մարդկանց հատկանիշները: (Տե՛ս 2 Նեփի 1.21–27: Դասարանի անդամներին խնդրեք այդ հատվածներում գտնել Լեքիի առաջարկած հատկանիշները: Գրեք այս և մյուս հատկանիշները գրատախտակին:) Ո՞րն է մարդկության աշխարհի սահմանումը: Ինչպե՞ս կարող ենք օգնել երիտասարդներին ընտրել արդարությունը, և ոչ թե մարդկության հասկացությամբ աշխարհը:

- Ինչպիսի՞ օրհնություններ ստացավ Լեքին իր հավատարմության շնորհիվ: (Դասարանի անդամներինց մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 1.15: Նշեք, որ մինչ իր որդիներից ոմանք կապված էին մեղքի «ահավոր շղթաներով», Լեքին «հավերժորեն օղակված էր [Փրկչի] սիրո բազուկներով»: Շեշտեք, որ ապաշխարությամբ և հնազանդությամբ խոնարհաբար Քրիստոսի մոտ գալով, մենք փրկագնում կստանանք և «հավերժորեն օղակված կլինենք Նրա սիրո բազուկներով»:)

2. Լեքին վկայում է Հիսուս Քրստոսի Քավության մասին:

Կարդացեք և քննարկեք 2 Նեփի 2.1–10:

- Լեքին ասել է, որ «օրենքով ոչ մի մարմին չի արդարացվում. կամ օրենքով՝ մարդիկ կտրված են» (2 Նեփի 2.5): Արդարացված լինել նշանակում է Աստծո հետ ներդաշնակության մեջ լինել, ներված լինել մեղքերի պատժից և լինել հայտարարված արդար և անմեղ: Ինչպե՞ս է օրենքը կտրում մեզ և զրկում արդարացված լինելու հնարավորությունից: (Տե՛ս Հակոբոս 2.10; 1 Նեփի 10.21: Երբ մենք խուսափում ենք պատվիրանները կատարելուց, ապա դառնում ենք մեղավոր և անմաքուր, իսկ ոչ մի անմաքուր բան չի կարող լինել Աստծո հետ:)

- Քանի որ մենք չենք կարող օրենքով արդարացվել, ինչպե՞ս կարող ենք արդարցված լինել և արժանի դառնալ Աստծո ներկայություն մուտք գործելու համար: (Տե՛ս 2 Նեփի 2.6–8: Շեշտեք, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել, և մեր մեղքերը կներվեն:)

- Լեքին ասաց, որ Փրկիչը կբավարարի «օրենքի պահանջները» (2 Նեփի 2.7): «Օրենքի պահանջները» պետք է հասկանալ որպես Անկման հետևանքները և այն պատիժը, որը սահմանված է Աստծո պատվիրաններին չհնազանդվելու պատճառով (2 Նեփի 2.5, 10): Ինչպե՞ս Փրկիչը բավարարեց օրենքի պահանջները: (Տե՛ս 2 Նեփի 2.7; Ալմա 34.13–16; Վ. և Ու. 19.16–19; 45.3–5; տե՛ս նաև ստորև տրված մեջբերումը:)

  Նախագահ Ջոզեֆ Սմիթն ասել է. «Հիսուսը եկավ և տանջվեց, արդարների և անարդարների համար, Նա, ով առանց մեղքի էր, մեղավորի համար ենթարկվեց պատժի այն օրենքով, որը խախտել էր մեղավորը» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 204):

- Ինչպե՞ս պետք է ապրենք, որպեսզի արդարացված լինենք մեր մեղքերի համար՝ Հիսուս Քրիստոսի տանջանքների միջոցով: (Տե՛ս 2 Նեփի 2.7; տե՛ս նաև Հռոմեացիներին 10.4; Վ.և Ու. 19.15–16; Հավատո Հանգանակ 1.3:)

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 2.8: Որո՞նք են «այս բաները», որ մենք պետք է հայտնի դարձնենք: (Տե՛ս 2 Նեփի 2:6–8:) Ինչպե՞ս կարող ենք «այս բաները հայտնի դարձնել»: Այդ բաները հայտնի դարձնելն ինչպե՞ս է օգնում մեզ հայտնել մեր երախտագիտությունը Փրկչին Քավության համար:

3. Լեքին սովորեցնում է հակադրության և բարու ու չարի միջև ընտրության ազատության կարևորության մասին:

Կարդացեք և քննարկեք 2 Նեփի 2.11–30-ից ընտրված հատվածները:

Իր որդիներին հակադրության անհրաժեշտության մասին սովորեցնելիս, Լեքին վերհիշեց Ադամի և Եվայի արգելված պտուղը ճաշակելու պատմությունը: Դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ 2 Նեփի 2.15–25-ից ընտրված հատվածները: Խնդրեք նրանց գտնել (1) այն պայմանները, որոնք տիրել են Ադամի և Եվայի շուրջ արգելված պտուղը ճաշակելուց առաջ և (2) հակադրությունը, որ զգացին Ադամն ու Եվան պտուղն ուտելուց հետո: Ամփոփեք դասարանի անդամների պատասխանները գրատախտակի վրա: Պատասխանները պետք է դասավորված լինեն ստորև տրված սխեմայի տեսքով:

Նշեք, որ 2 Նեփի 2-ում Լեքին հիշեցնում է այն պայմանները, որոնք ի հայտ եկան Անկման հետևանքով: Սակայն, Անկման ուսմունքը ավելի մեծածավալ է, քան այն ներկայացված է այս գլխում: Դասարանի անդամները պետք է հասկանան, որ Անկումը աշխարհ բերեց ֆիզիկական և հոգևոր մահերը, որոնք անհրաժեշտ են անկման ծրագրի համար, այսպիսով գործի դնելով փրկագնման ծրագիրը:

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՈՐ ՏԻՐՈՒՄ ԷԻՆ ՊՏՈՒՂԸ ՃԱՇԱԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ	ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ Ի ՀԱՅՏ ԵԿԱՎ ՊՏՈՒՂԸ ՃԱՇԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ
Նրանք կարող էին գործել ինքնուրույն (2 Նեփի 2.15–16), սակայն նրանք չէին անում «բարիք, քանզի նրանք չգիտեին մեղքը» (2 Նեփի 2.23):	Նրանք կարող էին բարիք գործել, և կարող էին նաև մեղք գործել (2 Նեփի 2.23): Նրանց պատվիրվել էր ապաշխարել իրենց մեղքերի համար (2 Նեփի 2.21):
Նրանք կարիք չունեին հող մշակելու, անգամ պտուղներ աճեցնելու համար (2 Նեփի 2.19; տե՛ս նաև Մովսես 2.29):	Նրանք պետք է աշխատեին կերակուր ունենալու համար (2 Նեփի 2.19):
Նրանք չգիտեին թշվառություն կամ ուրախություն (2 Նեփի 2.23):	Նրանք տեսան թշվառություն և ուրախություն (2 Նեփի 2.23):
Նրանք մնալու էին «նույն վիճակում . . . հավիտյան մնային և չունանային վերջ» (2 Նեփի 2.22):	Նրանք անկում ապրեցին և դարձան մահկանացու, այսինքն՝ ենթակա ֆիզիկական մահվան (2 Նեփի 2.22; տե՛ս նաև Մովսես 6.48):

- Եթե Ադամը և Եվան չճաշակեին պտուղը, նրանք չէին հանդիպի այդ սխեմայում նշված հակադրությանը (2 Նեփի 2.22–23): Ինչպիսի՞ օրհնություններ կարող ենք ստանալ Ադամի և Եվայի անկման պատճառով, աշխարհ եկած հակադրության հետևանքով: (Տե՛ս 2 Նեփի 2.23–27; Մովսես 5.10–12:)

- Լեքին իր զավակներին ասաց, որ «անպայման պետք է որ հակադրություն լինի բոլոր բաներում» (2 Նեփի 2:11; տե՛ս նաև տող 15): Ինչպե՞ս եք համոզվել, որ մեր այսօրվա կյանքում հակադրությունը կարևոր դեր է խաղում: (Այս հարցի քննարկման ժամանակ դասարանի անդամներին կարող եք խնդրել կարդալ 2 Նեփի 2.11–13:) Ինչպե՞ս է հակադրությունը նպաստում մեր առաջնթացին:

- Համաձայն 2 Նեփի 2.24–28, ի՞նչ է մեզ ցանկանում մեր Երկնային Հայրը: (Ուրախություն, ազատություն և հավիտենական կյանք:) Ինչպե՞ս է նա մեզ համար ճանապարհ պատրաստում այդ օրհնությունները ստանալու համար: (Տե՛ս 2 Նեփի 2.26–27; տե՛ս նաև Հովհաննես 14.6:) Ի՞նչ է մեզ ցանկանում Սատանան: (Տե՛ս 2 Նեփի 2.18, 27, 29: Թշվառություն, գերություն, և հոգևոր մահ:) Ինչպե՞ս են մեր անձնական արարքները որոշում, կստանանք մենք արդյոք ուրախություն, ազատություն և հավիտենական կյանք, թե՝ թշվառություն, գերություն և հոգևոր մահ:

  Երեց Ջոզեֆ Բ. Ուիրթինը սովորեցրել է. «Տերը ձեզ ազատ ընտրության պարգև է տվել (տե՛ս Մովսես 7.32) և բավականին գիտելիք բարին չարից տարբերելու համար (տե՛ս 2 Նեփի 2.5): Դուք ազատ եք ընտրելու (տե՛ս 2 Նեփի 2.27) և ազատ եք գործելու (տե՛ս 2 Նեփի 10.23; Հելաման 14.30), սակայն դուք ազատ չեք ընտրելու ձեր գործերի հետևանքները: Բացարձակ ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ բարի և ճիշտ ընտրությունները երջանկություն և խաղաղություն են պարգևում, մինչդեռ մեղքի և

չարի ընտրությունները վերջ ի վերջո տանում են դժբախտության, վշտի և թշվառության» (in Conference Report, Oct. 1989, 94; or *Ensign*, Nov. 1989, 75):

- 2 Նեփիին պարունակում է Արարման (2 Նեփի 2.14–15), Անկման (2 Նեփի 2.4–5, 8, 18–25), և Քավության (2 Նեփի 2.3–4, 6–10, 26–27) ուսմունքները: Ինչո՞ւ են այս ուսմունքները Երկնային Հոր փրկության ծրագրի կենտրոնական մասը կազմում:

Եզրափակում

Շեշտեք, որ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, մենք կարող ենք «հավերժորեն օղակված լինենք Փրկչի սիրո բազուկներով» (2 Նեփի 1.15): Բացատրեք, որ ընտրության ազատությունը մեծ օրհնություն է և դասարանի անդամներին խրախուսեք «ընտրել ազատությունը և հավերժական կյանքը » Հիսուս Քրիստոսի՝ «բոլոր մարդկանց մեծ Միջնորդի» միջոցով (2 Նեփի 2.27):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով, վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութերը լրացնում են դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք դրանք օգտագործել որպես դասի մի մաս:

Օգտագործել Լեքիի ուսմունքները աշխարհիկ ուսմունքներին հակադրելու համար

Գրատախտակին գրեք «Աշխարհի կեղծ ուսմունքները» վերնագրի տակ ստորև տրված արտահայտությունները: Դասարանի անդամներին խնդրեք պատկերացնել, որ իրենց ընկերը, գործընկերը կամ դպրոցական ուսուցիչը համոզված պաշտպանում է այդ կեղծ արտահայտությունները: Այնուհետև բացատրեք, որ Լեքին մեզ հետ կիսվում է այն ճշմարտություններով, որոնք կօգնեն մեզ խաղաղություն և վստահություն ձեռք բերել աշխարհի կեղծ ուսմունքներին հակադրվելիս: Գրատախտակին գրեք «Լեքիի ուսմունքները» վերնագրի տակ տրված արտահայտությունները: Դասարանի անդամներին խնդրեք կարդալ սուրբ գրությունների յուրաքանչյուր հատվածը և որոշել, թե ինչպես այն կարող է օգնել իրենց ստանալ խաղաղություն, եթե աշխարհի կեղծ ուսմունքները անհագստացնում են իրենց: Դասարանի անդամներին խրախուսեք քննարկել այդ սուրբ գրություններն իրենց կյանքում կիրառելու եղանակները:

ԱՇԽԱՐՀԻ ԿԵՂԾ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ	ԼԵՔԻԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ
Չկա բարի կամ չար:	2 Նեփի 2.5: («Եվ մարդիկ բավականին ուսուցանված են, որ տարբերեն չարը բարուց»:)
Չկա օրենք:	2 Նեփի 2.5: («Եվ օրենքը տրված է մարդկանց»:)
Չկա Քրիստոս:	2 Նեփի 2.6: («Փրկագնումը գալիս է Սուրբ Մեսիայի մեջ և նրա միջոցով»:)
Չկա կյանք մահից հետո:	2 Նեփի 2.10: («Բոլոր մարդիկ . . . կանգնում են նրա [Աստծո] ներկայության մեջ, դատվելու նրա կողմից»:)
Չկա Աստված:	2 Նեփի 2.14: («Կա՛ Աստված»:)
Չկա կյանքում նպատակ:	2 Նեփի 2.25: («Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն»:)
Մեր արարքները որոշվում են գեներով և միջավայրով:	2 Նեփի 2.26–27: (Մենք ազատ ենք «գործելու ինքնուրույն և չներգործվելու»: Մենք «ազատ ենք՝ ընտրելու ազատություն և հավերժական կյանք . . . կամ ընտրել գերություն և մահ»:)

«Ես գիտեմ՝ ում եմ ապավինել»

Դաս
7

2 Նեփի 3–5

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին զորացնել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին իրենց վկայությունները և խրախուսել նրանց երջանկություն գտնել Տիրոջն ապավինելու և Նրա պատվիրանները կատարելու միջոցով:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին:

   ա. 2 Նեփի 3: Լեքին իր որդի Ջոզեֆին սովորեցնում է հին օրերի մարգարե Ջոզեֆի մասին, որը մարգարեացել է Ջոզեֆ Սմիթի մասին: Լեքին Ջոզեֆին սովորեցնում է, որ իրենց սերունդները օրհնված կլինեն Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի միջոցով:

   բ. 2 Նեփի 4: Իր վերջին խորհուրդը զավակներին և թոռներին տալուց հետո Լեքին մահանում է: Նեփին զղջում է իր մեղքերի համար, սակայն հրճվում է Աստծո բարությամբ:

   գ. 2 Նեփի 5: Նեփիի դեմ Լամանի և Լեմուելի զայրույթը մեծանում է: Նեփիի հետևորդները համաձայն Տիրոջ պատվիրանի առանձնանում են Լամանի հետևորդներից: Նեփիյացիները ապրեցին երջանիկ, իսկ Լամանացիները անիծվեցին իրենց անօրինությունների համար:

2. Կարող եք դասարանի անդամներից մեկին խնդրել պատրաստվել բարձրաձայն կարդալ 2 Նեփի 4.15–35: Դասարանի անդամին տեղեկացրեք, որ այդ հատվածը երբեմն կոչվում է «Նեփիի Սաղմոս» և այն արտահայտում է Նեփիի ամենախորը զգացմունքները:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին ասացեք, որ 2 Նեփի 3-ում նշված են չորս մարդիկ, որոնք կրում են նույն անունը: Դասարանի անդամներին խնդրեք 2 Նեփի 3.1–15-ում գտնել այդ չորս մարդկանց: Երբ դասարանի անդամները կվերջացնեն փնտրելը, հարցրեք, թե ում նրանք գտան: Ճիշտ պատասխանները տրվում են ստորև.

ա. Հովսեփը, Լեքիի և Սարիայի ամենափոքր որդին (2 Նեփի 3.1–3)
բ. Եգիպտոսի Հովսեփը (2 Նեփի 3.4–5)
գ. Ջոզեֆ Սմիթ Կրտսերը (2 Նեփի 3.6–15)
դ. Ջոզեֆ Սմիթ Ավագը (2 Նեփի 3.15)

Այս վարժությունից հետո անմիջապես անցեք 2 Նեփի 3–ի քննարկմանը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք լավագույնս կհամապատասխանեն դասարանի անդամների կարիքներին: Քննարկեք, թե ինչպես կարելի է ընտրված սուրբ գրությունները կիրառել կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. **Լեքին սովորեցնում է, որ իր սերունդները կօրհնվեն Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի միջոցով:**

Քննարկեք 2 Նեփի 3: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Լեքին իր որդի Հովսեփին սովորեցնում է Հակոբի և Ռաքելի որդի Հովսեփի մարգարեության մասին, այն Հովսեփի, որը տարվել էր գերի Եգիպտոս (2 Նեփի 3.4; տե՛ս նաև Ծննդոց 30.22–24; 37.1–3, 23–28): Ինչո՞ւ էին այն ուխտերը, որոնք Եգիպտոսի Հովսեփը կապեց Տիրոջ հետ, կարևոր Լեքիի ընտանիքի համար: (Տե՛ս 2 Նեփի 3.4–5; Հակոբ 2.25; տե՛ս նաև Ծննդոց 45.7:)
- Ո՞վ էր այն «ընտրյալ տեսանողը», որին Եգիպտոսի Հովսեփը տեսավ իր տեսիլքում: (Տե՛ս 2 Նեփի 3.6–15: Մարգարե Ջոզեֆ Սմիթը:) Ինչպե՞ս Ջոզեֆ Սմիթը «առաջ բերեց Աստծո խոսքը»: (Տե՛ս 2 Նեփի 3.11 և ստորև տրված մեջբերումը:) Ինչպե՞ս եք դուք օրհնվել այն բանի շնորհիվ, որ Ջոզեֆ Սմիթը առաջ բերեց Աստծո խոսքը:

  Երեց Լեգրանդ Ռիչարդսոնն ասել է. «Մարգարե Ջոզեֆ Սմիթը մեզ տվեց Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, Մեծագին Մարգարիտը և շատ այլ գրություններ: Որքանով որ ցույց են տալիս մեր գրառումները, նա մեզ ավելի շատ հայտնությամբ ստացված ճշմարտություններ է տվել, քան երկրի երեսին երբևէ ապրած որևէ այլ մարգարե» (in Conference Report, Apr. 1981, 43; or *Ensign*, May 1981, 33):
- Տերը Եգիպտոսի Հովսեփին պատմել է Աստվածաշնչի մասին, որը կպարունակի Հուդայի սերունդների կողմից գրի առած խոսքերը, և Մորմոնի Գրքի մասին, որը կպարունակի Ջոզեֆի սերունդների կողմից գրի առած խոսքերը (2 Նեփի 3.12): Ինչպե՞ս են Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը «սերտաճվում»: Ի՞նչ օրհնություններ, ըստ Տիրոջ, կտրվեն Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի «սերտաճման» հետևանքով: (Տե՛ս 2 Նեփի 3.12:)
- Տերը խոստացել է, որ Եգիպտոսի Հովսեփի սերնդի արդար ճյուղը «պետք է կտրվի, սակայն, հիշվի, Տիրոջ ուխտերում» (2 Նեփի 3.5): Ինչո՞ւմն է կայանում Ջոզեֆ Սմիթի և Մորմոնի Գրքի դերը այս ուխտերի կատարման մեջ: (Տե՛ս 2 Նեփի 3.12–13, 18–21; 30.3–6:) Ինչպե՞ս է այս խոստումը կատարվում այսօր: Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը մեզ օգնում հիշել և պահել Տիրոջ հետ կապած ուխտերը:
- Բացի անունից, ի՞նչ է կապում Եգիպտոսի Հովսեփին, Լեքիի որդի Հովսեփին և Ջոզեֆ Սմիթին միմյանց հետ: (Տե՛ս 2 Նեփի 3.4–7, 11–12, 18–21: Պատասխանները կարող են ընդգրկել տոհմածառը, ուխտերը և Մորմոնի Գիրքը:)

2. **Նեփին զջում է իր մեղքերի համար, սակայն հրճվում է Աստծո բարությամբ:**

Կարդացեք և քննարկեք 2 Նեփի 4-ից ընտրված հատվածները: Բացատրեք, որ իր մահից առաջ Լեքին խորհուրդներ և օրհնություններ տվեց իր զավակներին և թոռներին (2 Նեփի 4.3–12):

Լեքիի մահից քիչ ժամանակ անց «Լամանը և Լեմուելը, և Իսմայելի որդիները, Տիրոջ խրատների պատճառով, բարկացան» Նեփիի վրա (2 Նեփի 4:13): Գրելով այդ շարունակվող դժվարությունների մասին, Նեփին գրի առավ իր զգացմունքները մի հատվածում, որը երբեմն կոչվում է «Նեփիի սաղմոսը»: Որպես ներածություն Նեփիի սաղմոսի քննարկման համար, բացատրեք որ սաղմոսն իրենից ներկայացնում է պոէմ կամ օրհներգ, որը հիշեցնում է մեր օրերի օրհներգերը: Դասարանի անդամներին կարող եք խնդրել նշել իրենց սիրած օրհներգերը և համառոտ բացատրել, թե ինչու են դրանք կարևոր իրենց համար:

Եթե դասարանի անդամներից մեկին հանձնարարել եք պատրաստել Նեփիի սաղմոսը, ապա խնդրեք նրան կարդալ դա: Դասարանի մյուս անդամներին խնդրեք հետևել նրան իրենց գրքերով:

- Նեփին ասել է. «Հոգիս հրճվում է Տիրոջ բաներով. և սիրտս շարունակ խորհում է այն բաների վրա» (2 Նեփի 4.16): Ի՞նչ բաների համար էր հրճվում Նեփին: (Տե՛ս 2 Նեփի

4.15–16:) Ի՞նչ է նշանակում խորհել: Ի՞նչ մենք կարող ենք անել Տիրոջ բաների վրա խորհելու համար: Ինչպե՞ս կարող է Տիրոջ բաների վրա խորհելը օգնել մեզ:

- Ի՞նչ բառեր դուք կօգտագործեիք Նեփիին նկարագրելու համար (Պատասխանները կարող են ընդգրկել արդար, հնազանդ և խոնարհ:) Ինչո՞ւ էր Նեփին ասում, որ «թշվառ մարդ է», որի «հոգին մորմոքվում է . . . անօրինությունների պատճառով»: (Տե՛ս 2 Նեփի 4.17, 27; տե՛ս նաև 1 Նեփի 10.6:) Ինչո՞ւ է կարևոր ընդունել մեր ընկած վիճակը Աստծո առջև:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Ճիշտ այնպես, ինչպես մարդը սննդի կարիք չունի, քանի դեռ քաղցած չէ, այնպես էլ նա չի ցանկանում Քրիստոսի փրկությունը, քանի դեռ չգիտի, թե ինչու նա ունի Քրիստոսի կարիքը: Ոչ ոք ճշգրիտ չգիտի, թե ինչու նա ունի Քրիստոսի կարիքը, մինչև որ չի հասկանում և ընդունում Անկման ուսմունքը և դրա ազդեցությունը մարդկության վրա» (in Conference Report, Apr. 1987, 106; or *Ensign*, May 1987, 85):

- Ինչպե՞ս Նեփին գտավ հույսը, թեև «պարփակված էր գայթակղությունների և մեղքերի պատճառով»: (Տե՛ս 2 Նեփի 4.18–19:) Ինչպե՞ս էր Տերն օգնում Նեփիին անցյալում: (Խնդրեք դասարանի անդամներին կարդալ 2 Նեփի 4.20–25 այս հարցի պատասխանները գտնելու համար: Գրեք նրանց պատասխանները գրատախտակի վրա: Որոշ հնարավոր պատասխաններ տրվում են ստորև:)

  Տերը.

  ա. Օգնել է Նեփիին (2 Նեփի 4.20):
  բ. Առաջնորդել է Նեփիին անապատի դժվարությունների միջով (2 Նեփի 4.20):
  գ. Լցրել է նրան Իր սիրով (2 Նեփի 4.21):
  դ. Նվաստացրել է նրա թշնամիներին (2 Նեփի 4.22):
  ե. Լսել է նրա կանչը (2 Նեփի 4.23):
  գ. Գիտելիք է տվել նրան տեսիլքների միջոցով (2 Նեփի 4.23):

- Ե՞րբ եք դուք Տիրոջից նմանատիպ օրհնություններ ստացել: Ինչպե՞ս կարող է անցյալում ստացած օրհնությունների վերհիշումը օգնել ձեզ դժվար պահերին:

- Նեփին հարցնում է իրեն, թե ինչո՞ւ նա պետք է անձնատուր լինի վշտին և մեղքին, երբ տեսել և իմացել է այդքան մեծ բաներ (2 Նեփի 4.26–27): Չնայած ավետարանի մասին մեր իմացությանը, ինչո՞ւ ենք մենք, երբեմն, պայքարում վշտի և փորձության հետ: Ի՞նչ կարող է մեզ սովորեցնել Նեփիի սաղմոսը՝ վիշտը և փորձությունը հաղթահարելու մասին: (Տե՛ս 2 Նեփի 4.28–30:)

- Իր սաղմոսի առաջին մասում Նեփիի խոսքերն ուղղված էին հենց իրեն (2 Նեփի 4.15–30): Սաղմոսն եզրափակվում է աղոթքով (2 Նեփի 4.30–35): Ի՞նչ Նեփին խնդրեց Հորից իր աղոթքի մեջ (Տե՛ս 2 Նեփի 4.31–33: Դասարանին խնդրեք քննարկել Նեփիի աղոթքի այն մասերը, որոնք առավել մեծ նշանակություն ունեն իրենց համար: Քննարկումը խրախուսելու նպատակով կարող եք օգտագործել ստորև տրված հարցերը:)

  ա. Ինչպե՞ս է Տերը «ազատում թշնամիների ձեռքից»: (Տե՛ս 2 Նեփի 4.31, 33:)
  բ. Ի՞նչ է նշանակում «Ցնցվել մեղքի տեսքից»: (Տե՛ս 2 Նեփի 4.31; Մոսիա 5.2; Ալմա 13.12:)
  գ. Ի՞նչ է, ձեր կարծիքով, նշանակում «քայլել ցածր հովտի արահետով» և «անհողդողդ լինել հարթ ճանապարհին» (2 Նեփի 4.32):
  դ. Ի՞նչ է, ձեր կարծիքով, նշանակում «շուրջանակել արդարության պարեգոտով» (2 Նեփի 4.33):

- Ի՞նչ Նեփին խոստացավ կատարել իր աղոթքում (Տե՛ս 2 Նեփի 4.30, 34–35: Նա խոստացավ ապավինել Աստծուն և միշտ փառավորել Նրան:) Ի՞նչ Նեփին նկատի ուներ, երբ ասում էր. «Ես չեմ դնի իմ վստահությունը մարմնի բազկի վրա»: (Տե՛ս 2 Նեփի 4.34; 28.31:) Ինչպե՞ս մարդիկ կարող են դնել իրենց «վստահությունը մարմնի բազկի վրա»: Ինչո՞ւ է դա վտանգավոր: Ի՞նչ կարող ենք անել մեր Տիրոջ հանդեպ մեր վստահությունը մեծացնելու համար:

3. Լամանի և Լեմուելի զայրույթը Նեփիի դեմ աճում է, և Տերը պատվիրում է Նեփիի հետևորդներին առանձնանալ Լամանի հետևորդներից:

Կարդացեք և քննարկեք 2 Նեփի 5-ից ընտրված հատվածները.

- Ինչո՞ւ էին Լամանը և Լեմուելը զայրացած Նեփիի վրա (Տե՛ս 2 Նեփի 4.13; 5.3:) Ի՞նչ էին Լամանը և Լեմուելը ցանկանում անել իրենց զայրույթի պատճառով: (Տե՛ս 2 Նեփի 5:2, 4: Համեմատեք նրանց զայրույթը՝ զայրույթը զսպելու Նեփիի ջանքերի հետ, ինչպես գրված է 2 Նեփի 4.27–29-ում:) Որո՞նք են աճող զայրույթի վտանգավոր հետևանքները: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի խաղաղարարների դեր կատարենք տանը, համայնքնում և Եկեղեցում:

  Նախագահ Հովարդ Ու. Հանթերը սովորեցնում է. «Մենք ավելի խաղաղ աշխարհի կարիք ենք զգում, որը կարող է առաջանալ խաղաղ ընտանիքներից, հարևաններից և համայնքներից: Այդպիսի խաղաղությունը ապահովելու և զարգացնելու համար «մենք պետք է սիրենք միմյանց, անգամ մեր թշնամիներին, ինչպես մեր ընկերներին» . . . Մենք պետք է առաջարկենք ընկերության ձեռքը: Մենք պետք է ավելի բարի, ավելի մեղմ, ավելի ներող և զայրույթի մեջ ավելի դանդաղկոտ լինենք: Մենք պետք է սիրենք միմյանց Քրիստոսի մաքուր սիրով: Թող սա լինի մեր ուղին և մեր իղձը» (in Conference Report, Apr. 1992, 87; or *Ensign*, May 1992, 63):

- Իր եղբայրների զայրույթի պատճառով Նեփին աղոթում էր օգնության համար (2 Նեփի 5.1): Ինչպե՞ս Տերը պատասխանեց նրա աղոթքներին: (Տե՛ս 2 Նեփի 5.5:)

- Երբ Նեփին և նրա ժողովուրդը հեռացան, նրանք երջանիկ ապրեցին (2 Նեփի 5.27): Ի՞նչ նրանք արեցին իրենց երջանկությունը մեծացնելու համար: (Տե՛ս 2 Նեփի 5.10–17: Պատասխանների մեջ կարող եք ընդգրկել. պատվիրանների կատարումը, պղնձե թիթեղների գրառումների պահպանումը, տաճարի կառուցումը և համատեղ աշխատանքը:) Ինչպե՞ս Նեփիի օրինակը կարող է մեզ օգնել երջանիկ ապրել:

Եզրափակում

Առաջնորդվելով Սուրբ Հոգով, վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այս միտքը որպես դասի մի մաս:

«Զարթնի՛ր իմ հոգի ... Ուրախացի՛ր, ո՛վ իմ սիրտ» (2 Նեփի 4.28)

Բացատրե՛ք, որ հուսահատության պահերին մենք կարող ենք հետևել Նեփիի օրինակին: 2 Նեփիի 4 և 5 գլուխները օրինակներ են բերում այն մասին, թե ինչպես մենք կարող ենք հաղթահարել հուսահատության մեր զգացմունքները: Դասարանի հետ քննարկեք հետևյալ օրինակները.

ա. Կարդացե՛ք սուրբ գրությունները (2 Նեփի 4.15):
բ. Հրճվե՛ք և խորհե՛ք Տիրոջ բաների վրա (2 Նեփի 4.16):
գ. Ապավինե՛ք Տիրոջը և նայե՛ք Նրան օգնության համար (2 Նեփի 4.20–21, 34):
դ. Հզոր աղոթքի մեջ եղե՛ք (2 Նեփի 4.24):
ե. Աշխատասեր եղե՛ք և աշխատե՛ք (2 Նեփի 5.15, 17):
զ. Ծառայե՛ք տաճարում (2 Նեփի 5.16):

«Օհ, որքան մեծ է բարությունը մեր Աստծո»

Դաս
8

2 Նեփի 6–10

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավության անհրաժեշտությունը և սովորեցնել նրանց, ինչպես կարելի է ստանալ Քավության բոլոր օրհնությունները:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 2 Նեփի 9.1–26, 39–54: Հակոբը վկայում է, որ Փրկչի Քավության շնորհիվ մենք կարող ենք փրկվել մեր ժամանակավոր և հոգևոր մահից: Նա քննարկում է այն սկզբունքները, որոնք մեզ օգնում են ստանալ Քավության բոլոր օրհնությունները:

   բ. 2 Նեփի 9.27–38: Հակոբը քննարկում է այն դիրքորոշումը և արարքները, որոնք կարող են զրկել մեզ Քավության բոլոր օրհնություններից:

   դ. 2 Նեփի 10: Հակոբը մարգարեանում է այն մասին, որ Փրկիչը կկոչվի Քրիստոս: Հակոբը մարգարեանում է այն մասին, որ Նեփիացիների սերունդները կընկնեն անհավատության մեջ և Երուսաղեմի հրեաները կխաչեն Փրկչին և կցրվեն մինչև որ հավատք ձեռք բերեն Նրա հանդեպ: Հակոբը վկայում է Տիրոջ ուխտերի մասին, որոնք Նա կապել է Իր ժողովրդի հետ, և կոչ է անում մարդկանց հաշտվել Աստծո կամքի հետ:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Եսայիա 49–52: Կարող եք համեմատել Եսայիա 49.22–26 և 2 Նեփի 6.6–7, 16–18; Եսայիա 50 և 2 Նեփի 7; Եսայիա 51 և 2 Նեփի 8.1–23; և Եսայիա 52.1–2 և 2 Նեփի 8.24–25:

3. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, ապա բերեք հետևյալ նկարները դասարան. Լեռան քարոզը (62166; Ավետարանի արվեստի ժողովածու 212); Հիսուսը բուժում է կույրին (62145; Ավետարանի արվեստի ժողովածու 213); Փոքորկի հանդարտեցումը (62139; Ավետարանի արվեստի ժողովածու 214); Հիսուսը օրհնում է Հայրոսի դստերը (62231; Ավետարանի արվեստի ժողովածու 215); Քրիստասը երեխաների հետ (62467; Ավետարանի արվեստի ժողովածու 216); Հիսուսը Գեթսեմանում աղոթելիս (62175; Ավետարանի արվեստի ժողովածու 227); և Խաչումը (62505; Ավետարանի արվեստի ժողովածու 230):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ այլ վարժություն դասը սկսելու համար:

Ցույց տվեք «Նախապատրաստություն» բաժնում նշված նկարները: Դասարանի անդամներին խնդրեք նայել նկարներին և մտածել այն մասին, թե ինչ է Հիսուս Քրիստոսն արել իրենց համար: Այնուհետև, խնդրեք նրանց կիսվել իրենց մտքերով: Գրե՛ք նրանց մտքերը գրատախտակին:

Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ հետևյալ հատվածները. 2 Նեփի 6.17; 7.2; 8.3–6, 12: Խնդրե՛ք նրանց գտնել այն խոսքերը, որոնք նկարագրում են այն ամենը, ինչ Քրիստոսն անում է մեզ համար: Գրի առե՛ք այդ խոսքերը գրատախտակին: Այդ ցանկում կարող են լինել հետևյալ խոսքերը. *ազատել* (2 Նեփի 6.17; 7.2), *փրկագնել* (2 Նեփի 7.2), *մխիթարել, մխիթարություն* (2 Նեփի 8.3, 12), *լույս* (2 Նեփի 8.4), *դատաստան, դատել* (2 Նեփի 8.4–5) և *փրկություն* (2 Նեփի 8.5–6):

Բացատրե՛ք, որ այս դասը քննարկում է Քավությունը, որն ամենամեծ բանն է, ինչ Քրիստոսն արել է մեզ համար:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք լավագույնս կհամապատասխանեն դասարանի անդամների կարիքներին: Քննարկե՛ք, ինչպես կարելի է կիրառել այդ հատվածները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսե՛ք կիսվել իրենց այն փորձով, որն առնչվում է այդ սուրբ գրությունների սկզբունքներին:

1. Իր Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը փրկություն է առաջարկում ժամանակավոր և հոգևոր մահից:

Բացատրե՛ք, որ 2 Նեփի 9 պարունակում է Նեփիի փոքր եղբայրներից մեկի՝ Հակոբի քարոզը Հիսուս Քրիստոսի Քավության մասին, որը փրկության ծրագրի կենտրոնական մասն է կազմում: Այս գլխի ուսմունքները հասկանալու համար, օգտակար է իմանալ, թե ինչպես է Հակոբը նկարագրում ժամանակավոր և հոգևոր մահերը:

Ժամանակավոր մահը դա ֆիզիկական մարմնի մահն է և հոգու բաժանումը ֆիզիկական մարմնից: Ադամի Անկման հետևանքով, բոլոր մարդիկ ժամանակավոր մահ կապրեն (2 Նեփի 9.6): 2 Նեփի 9-ում Հակոբն օգտագործում է հետևյալ խոսքերը և արտահայտությունները ժամանակավոր մահը նկարագրելու համար. «մահ» (հատված 6), «մահը մարմնի» (հատված 10), և «գերեզմանը» (հատված 11):

Հոգևոր մահը դա բաժանումն է Աստծո ներկայությունից: Ադամի Անկման հետևանքով մենք բոլորս բաժանվել ենք Աստծո ներկայությունից (2 Նեփի 9.6): Մենք ավելի ենք հեռանում Աստծո ներկայությունից, երբ մեղք ենք գործում (Հռոմեացիներին 3.23; Ալմա 12.16; Հելաման 14.18): 2 Նեփի 9-ում Հակոբն օգտագործում է հետևյալ բառերը և արտահայտությունները հոգևոր մահը կամ Աստծուց բաժանումը նկարագրելու համար. «զրկված Աստծո ներկայությունից» (հատված 9), «մահը հոգու» (հատված 10), «հոգևոր մահ» (հատված 12), «դժոխք» (հատված 12), և «մահ» (հատված 39):

Քննարկե՛ք 2 Նեփի 9.1–26, 39–54: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Ի՞նչ արեց Փրկիչը ժամանակավոր և հոգևոր մահերը հաղթելու համար: (Տե՛ս 2 Նեփի 9.5–7, 12, 21–22; տե՛ս նաև Ղուկաս 22.44; Մոսիա 3.7; Վ . և Ու. 19.16–19:)
- Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ բոլոր մարդիկ հարություն կառնեն՝ կփրկվեն ժամանակավոր մահից (2 Նեփի 9.12–13, 22): Ի՞նչ կպատահեր մեզ, եթե չլիներ Քրիստոսի Հարության զորությունը: (Տե՛ս 2 Նեփի 9.6–9: Ժամանակավոր և հոգևոր մահերը մշտական կլինեն: Մենք ընդմիշտ կզրկվեինք Աստծո ներկայությունից, և մեր հոգիները կենթարկվեին Սատանային: Մենք կմնայինք «ստերի հոր հետ» թշվառության մեջ:) Ինչպե՞ս է այս ամենը ցույց տալիս, որ ժամանակավոր և հոգևոր մահերը «սարսափելի հրեշ» են (2 Նեփի 9.10):
- Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ բոլոր մարդիկ կվերականգնվեն Աստծո ներկայության մեջ դատվելու համար (2 Նեփի 2.10; 9.15: Սակայն, ոչ բոլոր մարդիկ կփրկվեն Աստծո արքայությունում կամ հնարավորություն կունենան ընդմիշտ ապրելու Աստծո ներկայության մեջ (2 Նեփի 9.23; Մորմոն 7.7): Ըստ Հակոբի, ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի կարողանանք «փրկվել Աստծո արքայության մեջ» (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 2 Նեփի 9.18, 21, 23–24, 39, 41, 50–52 այս հարցի պատասխանները գտնելու համար: Ամփոփե՛ք նրանց պատասխանները գրատախտակի վրա: Քննարկե՛ք պատասխանները ստորև տրված եղանակով:)

  ա. Հավատացե՛ք Հիսուս Քրիստոսին՝ Իսրայելի Սրբին, և եկե՛ք դեպի Նա (2 Նեփի 9.18, 23–24, 41): Ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքն այդքան էական Նրա Քավության բոլոր օրհնությունները ստանալու համար:

բ. Դիմացե՛ք աշխարհի խաչերին և արհամարհե՛ք դրա ամոթը (2 Նեփի 9.18): Ի՞նչ է նշանակում դիմանալ աշխարհի խաչերին (Տե՛ս Մաթեոս 16.24, ծանոթություն 24դ; 3 Նեփի 12.29–30:) Ի՞նչ է նշանակում արհամարհել աշխարհի ամոթը: (Տե՛ս 2 Նեփի 9.49:)
գ. Ականջ դրե՛ք Տիրոջ ձայնին (2 Նեփի 9.21): Ինչպե՞ս մենք կարող ենք լսել Տիրոջ ձայնը: (Տե՛ս Վ. և Ու. 1.38; 18.33–36; 88.66:)
դ. Ապաշխարե՛ք, մկրտվե՛ք և դիմացե՛ք մինչև վերջ (2 Նեփի 9.23–24):
ե. Եղե՛ք հոգևոր մտածելակերպով (2 Նեփի 9.39; տե՛ս նաև Հռոմեացիներին 8.5–8): Ի՞նչ է նշանակում հոգևոր մտածելակերպով լինել: Ինչպե՞ս կարող է հոգևոր մտածելակերպը տանել դեպի «հավերժական կյանք»: Ի՞նչ է նշանակում մարմնական մտածելակերպով լինել: Ինչպե՞ս կարող է մարմնական մտածելակերպը տանել դեպի հոգևոր մահ: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի լինենք հոգևոր մտածելակերպով:
զ. «Ճաշակե՛ք այն, ինչը չի ոչնչանում» (2 Նեփի 9.50–51): Ինչե՞ր երբեք չեն ոչնչանում: Ինչպե՞ս մենք կարող ենք ճաշակել այդ բաներից:
է. Հիշե՛ք Աստծո խոսքերը (2 Նեփի 9.52): Ինչպե՞ս կարող է Աստծո խոսքերը հիշելն օգնել մեզ ստանալ Քավության բոլոր օրհնությունները: (Տե՛ս 3 Նեփի 15.1:)
ը. Միշտ աղոթե՛ք և շնորհակալություն հայտնե՛ք (2 Նեփի 9.52): Ինչպե՞ս են աղոթելն ու երախտագիտություն հայտնելն օգնում մեզ ավելի մոտենալ Նրան և Նրա Որդուն:

2. Որոշակի դիրքորոշումը և արարքները զրկում են մեզ Քավության բոլոր օրհնություններից:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 9.27–38: Բացատրե՛ք, որ ի լրումն Քավության բոլոր օրհնությունները ստանալու մասին խոսելուն, Հակոբը խոսեց այն մտածելակերպի և գործերի մասին, որոնք կարող են զրկել մեզ այդ օրհնություններից:

- Որո՞նք են այդ մտածելակերպը և գործերը, որ մեզ կարող են զրկել Քավության բոլոր օրհնությունները ստանալուց: (Դասարանի անդամներին խնդրե՛ք կարդալ 2 Նեփի 9.27–38 այս հարցին պատասխանելու համար: Պատասխաններն ամփոփե՛ք գրատախտակի վրա: Քննարկե՛ք ստորև տրված պատասխանները:)

  ա. Տիրոջ պատվիրաններն արհամարելը և իրենց փորձության օրերը վատնելը (2 Նեփի 9.27): Մորմոնի Գրքում մարգարեները հաճախ բնութագրում են մեր երկրային կյանքը որպես «փորձության օրեր» կամ ստուգման ժամանակահատված (2 Նեփի 2.21; տե՛ս նաև 2 Նեփի 2.30; Մորմոն 9.28): Ինչպե՞ս կարող են որոշ մարդիկ վատնել իրենց փորձության օրերը (Տե՛ս 2 Նեփի 9.38; Ալմա 34.31–33; Հելաման 13.38:)
  բ. Գիտելիքը, փողը և այլ կուռքերը Աստծուց վեր դնելը (2 Նեփի 9.28–30, 37): Ինչպե՞ս կարող է իմաստության և հարստության վրա հույս դնելը զրկել մեզ Քավության բոլոր օրհնություններից: (Տե՛ս 2 Նեփի 9.28, 30, 42:) Ե՞րբ է իմաստությունն ու հարստությունը լավ: (Տե՛ս 2 Նեփի 9.29; Հակոբ 2.18–19:)
  գ. Հոգեպես կույր և խուլ լինելը (2 Նեփի 9.31–32): Ի՞նչ է նշանակում լինել հոգեպես կույր և խուլ: Ինչպե՞ս կարող ենք բացել մեր ականջները և աչքերը ավետարանի ճշմարտությունների դիմաց:
  դ. «Սրտով չթլպատված» լինելը (2 Նեփի 9.33): Հին Իսրայելում, եթե մեկը չէր թլպատվում, ապա խախտում էր Աստծո հետ ուխտը (Ծննդոց 17.11, 14): Այս իմաստով, ի՞նչ է նշանակում «սրտով չթլպատված» լինել:
  ե. Ստելը, մարդ սպանելը և պոռնկություն անելը (2 Նեփի 9.34–36):

3. Տերը հիշում է Իր ժողովրդի հետ կապած ուխտերը:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 10-ից ընտրված հատվածները:

- Հակոբը մարգարեանում է, որ Նեփիյացիների սերունդները «կոչնչանան մարմնում՝ անհավատության պատճառով» և, որ Հրեաները Երուսաղեմում կխաչեն Փրկչին և կցրվեն իրենց մեղքերի պատճառով (2 Նեփի 10.2–6): Ի՞նչ Տերը կանի այդ մարդկանց համար, եթե նրանք հավատան Իրեն և ապաշխարեն իրենց մեղքերը (Տե՛ս 2 Նեփի 10.2,

7–8, 21–22; տե՛ս նաև 1 Նեփի 21.15–16; 2 Նեփի 9.1–3, 53; 30.2:) Ինչպե՞ս է դա վերաբերվում մեզանից յուրաքանչյուրին: (Տե՛ս Մոսիա 26.22:)

Երեց Բոյդ Ք. Փաքերը սովորեցրել է. «Հուսահատեցնող միտքն այն մասին, որ կարող է շատ ուշ լինել ուղղելու մեկ սխալը (կամ մի շարք սխալներ), չի գալիս Տիրոջից: Նա ասել է, որ, *եթե* մենք ապաշխարենք, Նա ոչ միայն կների մեր մեղսագործությունները, այլ նաև կմոռանա դրանք և այլևս չի հիշի մեր մեղքերը (տե՛ս Եսայիա 43.25; Եբրայեցիներին 8.12; 10.17; Ալմա 36.19; Վ. և Ու. 58.42)» (in Conference Report, Apr. 1989, 72; or *Ensign,* May 1989, 59):

- Հակոբն ասել է, որ իր մարդիկ պետք է «ուրախացնեն [իրենց] սրտերը», որովհետև Տերը հիշում է Իր ուխտի ժողովրդին (2 Նեփի 10.22–23): Ինչպե՞ս կարող ենք մխիթարություն գտնել, իմանալով, որ Տերը հիշում է Իր ուխտի ժողովրդին:
- Վերջացնելով ժողովրդին ուղղված իր խոսքը, ի՞նչ արեց Հակոբը նրանց խրախուսելու համար հիշել դա: (Տե՛ս 2 Նեփի 10.23–24:) Ի՞նչ ճանապարհներով ենք մենք ընտրություն կատարում հավիտենական մահվան և հավերժական կյանքի միջև: (Տե՛ս 2 Նեփի 2.26–27:) Ի՞նչ է նշանակում Աստծո կամքի հետ հաշտվելը: Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ «դա միայն Աստծո շնորհով և շնորհիվ է», որ մենք փրկվում ենք:

Եզրափակում

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 10.25, որը պարունակում է Հակոբի ճառի եզրափակող խոսքերը: Արտահայտե՛ք ձեր երախտագիտությունը Հիսուս Քրիստոսի Քավության համար և դասարանի անդամներին խրախուսեք «ընտրել . . . հավերժական կյանքի ճանապարհը» (2 Նեփի 10.23):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Այս մտքերից մեկը կամ մի քանիսը կարող եք օգտագործել որպես դասի մաս:

1. Օրհներգ

Դասարանի անդամների հետ միասին երգեք Հիսուս Քրիստոսի սիրո մասին որևէ օրհներգ կամ կարդացեք այդ օրհներգի բառերը:

2. Իսրայելի հավաքումը

- Ինչպե՞ս Իսրայելը պետք է հավաքվի (Տե՛ս 2 Նեփի 10.8–9:)

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը սովորեցրել է.

«Աբրահամի սերմի (որին մենք ևս պատկանում ենք) պատասխանատվությունն է լինել միսիոներներ և բերել ծառայությունը և Քահանայությունը բոլոր ազգերին (տե՛ս Աբրահամ 2.9): Մովսեսը Ջոզեֆ Սմիթին Քրթլենդի տաճարում շնորհեց քահանայության բանալիները Իսրայելը հավաքելու համար (տե՛ս Վ. և Ու. 110.11):

«Ո՞րն է այժմ այն գործիքը, որը Տերը ստեղծել է այս հավաքման համար: Դա այն նույն գործիքն է, որը ստեղծվել էր աշխարհին համոզելու, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Ջոզեֆ Սմիթն Իր մարգարեն է և, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ճշմարիտ է: Դա այն սուրբ գրությունն է, որ հանդիսանում է մեր կրոնի պորտաքարը» (in Conference Report, Apr. 1987, 107–8; or *Ensign*, May 1987, 85):

«Իմ հոգին հրճվում է Եսայիայի խոսքերից»

Դաս
9

2 Նեփի 11–25

Նպատակ

Ոգեշնչել դասարանի անդամներին կարդալ Եսայիայի մարգարեությունները և օգնել նրանց հասկանալ, ինչպես կարելի է կիրառել դրանք կյանքում:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 2 Նեփի 11; 25.1–7: Նեփին վկայում է Եսայիայի գրվածքների կարևորության մասին և տալիս է բանալիներ, որոնք մեզ օգնում են հասկանալ դրանք:
   բ. 2 Նեփի 12.1–12: Եսայիան տեսնում է վերջին օրերի տաճարը և Իսրայելի հավաքումը:
   գ. 2 Նեփի 15.26–29; 21.12: Եսայիան մարգարեանում է այն մասին, որ Տերը դրոշակ կբարձրացնի և կհավաքի Իսրայելը:
   դ. 2 Նեփի 16; 22; 25.19–30: Եսայիան և Նեփին վկայում են Փրկչի փրկագնող զորության մասին:

2. Հետևյալ նկարների առկայության դեպքում, պատրաստվեք օգտագործել դրանք դասի ընթացքում. «Եսայիան գրում է Քրիստոսի Ծննդի մասին» (62339; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 113); «Սոլթ Լեյքի տաճարը» (62433; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 502); և «Հիսուս Քրիստոսը» (62572; Ավետարանի նկարների արվեստի ժողովածու 240):

3. Եսայիայի գրվածքներն ավելի լավ հասկանալու համար կարող եք կարդալ Հին Կտակարանի Ավետարանի Ուսմունքի Ուսուցչի Ձեռնարկ-ը (35570):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Կարդացե՛ք Մոսիա 8.17–18: Այնուհետև դասարանի անդամներին տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կարող են տեսնել տեսանողները: (Անցյալ, ներկա և ապագա իրադարձությունները:) Ինչո՞ւ են տեսանողներն այդքան կարևոր մեզ համար:

Բացատրե՛ք, որ տեսանող լինելու շնորհիվ Եսայիան տեսավ այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են՝ Պատերազմը Երկնքում, Երուսաղեմի կործանումը Փրկչի մահից հետո, Արմագեդոնի պատերազմը և Փրկչի թագավորումը Հազարամյակի ընթացքում:

Եսայիայի գրվածքներից շատերը դժվար է հասկանալ, քանի որ դրանք խորհրդանշական լեզվով նկարագրում են անցյալ և ապագա շատ դեպքեր: Ինչևէ, մենք կարող ենք հասկանալ դրանք, եթե աղոթքով հաստատուն կերպով ջանանք դրանք կարդալ և ուսումնասիրել: Այս դասը քննարկում է Եսայիայի առավել կարևոր գրվածքները:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը կամ դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է կիրառել ընտրված հատվածները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների ճշմարտությունների հետ առնչվող իրենց փորձով:

1. **Նեփին վկայում է Եսայիայի գրվածքների մասին և տալիս է բանալիներ դրանք հասկանալու համար:**

Քննարկե՛ք 2 Նեփի 11; 25.1–7: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Եթե օգտագործելու եք լրացուցիչ ուսուցանման մտքերից առաջին միտքը, ապա դասարանի անդամներից մեկին խնդրեք համառոտ պատմել Եսայիայի և նրա ժամանակների մասին:

- Ինչո՞ւ Նեփին Եսայիայի խոսքերը կարևոր համարեց իր գրառումների համար: (Տե՛ս 1 Նեփի 19.23; 2 Նեփի 11.2–6, 8; 25.3: Դասարանի տարբեր անդամների խնդրե՛ք բարձրաձայն կարդալ այդ հատվածներից յուրաքանչյուրը: Միևնույն ժամանակ դասարանի անդամներից մեկին խնդրե՛ք գրատախտակի վրա գրի առնել ամեն հատվածի վկայակոչումը և Եսայիային մեջբերելու պատճառը: Օրինակը տրված է ստորև:)

ԻՆՉՈ՞Ի Է ՆԵՓԻՆ ՄԵՋԲԵՐՈՒՄ ԵՍԱՅԻԱՅԻՆ	
1 Նեփի 19.23	«Ավելի լիովին համոզել նրանց՝ հավատալու Տիրոջը»
2 Նեփի 11.2–4	Տալ ևս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին
2 Նեփի 11.5–6, 8	Օգնել մեզ (ընթերցողներին) հրճվանք ապրել
2 Նեփի 25.3	Իմանալ Աստծո դատաստանները

- Ինչո՞ւ են այս պատճառները կարևոր մեզ համար այսօր: Ինչպե՞ս Եսայիայի խոսքերը հասկանալը կարող է մեզ հրճվանք պարգևել:

Բացատրե՛ք, որ Նեփին մի քանի բանալիներ է տալիս մեզ՝ օգնելու ավելի լավ հասկանալ Եսայիայի գրվածքները: Եթե ժամանակը թույլ է տալիս, քննարկե՛ք այդ բանալիները դասարանի անդամների հետ:

Բանալի 1: «Բոլոր սուրբ գրությունները վերագրել մեզ» (1 Նեփի 19.23; տե՛ս նաև 2 Նեփի 11.2, 8): Եսայիայի մարգարեություններից շատերը վերաբերվում են վերջին օրերի իրադարձություններին: Տեսնելով, թե ինչպես են այդ մարգարեություններն իրականանում և դրանց մասնակիցը դառնալով, մենք ավելի լավ ենք սկսում հասկանալ Եսայիայի ուսմունքները և սովորում ենք կիրառել դրանք մեր կյանքում: Օրինակ, 2 Նեփի 15 պարունակում է Եսայիայի մարգարեությունն այն մասին, որ Տերը «դրոշակ կբարձրացնի հեռու ազգերին»՝ Իսրայելը հավաքելու համար (2 Նեփի 15.26): Այս մարգարեությունը մեզ օգնում է ավելի լավ հասկանալ, թե որքան կարևոր է կիսվել վերականգնված ավետարանով, որը դրոշակ է, կամ չափանիշ, բոլոր ազգերը Տիրոջ մոտ առաջնորդելու համար:

Բանալի 2. Հասկանալ «մարգարեանալու ձևի մասին Հրեաների մեջ» (2 Նեփի 25.1): Եսայիայի մարգարեությունները գրված են մի ոճով, որը ծանոթ էր Հրեաներին և նրանք կարող էին կարդալ և լսել դրանք: Մենք ավելի լավ կարող ենք հասկանալ Եսայիայի գրվածքները, եթե հիշենք, որ նա պատկերավոր և խորհրդանշական ոճ էր օգտագործում, որը ծանոթ էր իր ժամանակների Հրեաներին: Օրինակ, 2 Նեփի 12:1–3-ում Եսայիան օգտագործում է «սար» բառը խորհրդանշելու բարձր հոգևոր վայր, մարգարեանալու և Աստծուն մոտենալու վայր, ինչպիսին է տաճարը:

Բանալի 3. «Իմանալ Աստծո դատաստանները» (2 Նեփի 25.3; տե՛ս նաև հատված 6): Եսայիան կանխատեսում է, թե ինչպես Իսրայելի և Հուդայի թաքավորությունները կչարչարվեն իրենց չարագործությունների պատճառով, սակայն նա նաև կանխատեսում է, որ նրանց օրհնությունները կվերականգնվեն, երբ նրանք ապաշխարեն և հետևեն Հիսուս

Քրիստոսին: Հուդայի և Իսրայելի, ինչպես նաև Իսրայելի տան վերականգնման մասին Եսայիայի գրվածքներից մենք ավելի լավ ենք հասկանում, ինչպես է Աստված կատարում իր գործերը մեր կյանքում և ինչպես է Նա օրհնում ազգերը համաձայն նրանց արդարության:

Բանալի 4. Իմանալ «մոտակա շրջանների մասին [Երուսաղեմի]» (2 Նեփի 25.6): Աշխարհագրությանը ծանոթանալը և Իսրայելի տարբեր վայրերի անվանումներն իմանալը մեզ կօգնի ավելի լավ հասկանալ Եսայիայի մարգարեությունները Իսրայելի և Հուդայի թագավորությունների և դրանց սպառնացող ազգերի մասին: Օրինակ, 2 Նեփի 20.28–34-ում Եսայիան թվարկում է Ասորիքի այն քաղաքները, որոնց միջով կանցնի բանակը, և նկարագրում է, թե ինչպես այն պետք է կանգնեցվի Երուսաղեմին հասնելուն պես: Դա պատահեց հենց այնպես, ինչպես նա մարգարեացել էր:

Բանալի 5. Լինել «լցված մարգարեության ոգով» (2 Նեփի 25.4):

- Ի՞նչ է մարգարեթյան ոգին: (Տե՛ս Հայտնություն 19.10:) Ինչպե՞ս կարող ենք այն ձեռք բերել: Ինչպե՞ս մարգարեության ոգին կարող է մեզ օգնել հասկանալ Փրկչի մասին Եսայիայի ուսմունքները:

2. Եսայիան տեսնում է վերջին օրերի տաճարը և Իսրայելի հավաքումը:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 12.1–12: Եթե օգտագործելու եք Սոլթ Լեյքի տաճարի նկարը, ապա ցույց տվեք դա այս պահին:

- Ինչպե՞ս է Սոլթ Լեյքի տաճարը իրականացնում 2 Նեփի 12.2–3-ում տրված Եսայիայի մարգարեության մի մասը: Ինչո՞ւ է Եսայիան տաճարը նկարագրել որպես «Տիրոջ սար»: (Հնադարյան մարդիկ հաճախ սար էին բարձրանում Տիրոջ հետ հաղորդակցվելու և Նրանից հայտնություններ ստանալու համար:) Ինչպե՞ս կարող են բոլոր տաճարները լինել մեր երկրպագության «սարերը»:

  Շեշտե՛ք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին հիմնվել է սարերի գագաթին և տաճարները կառուցվում են այնպես, որպեսզի մարդիկ կարողանան գալ և սովորել Տիրոջ մասին:

- Եսայիան տաճարները նկարագրում է որպես «տաղավար» շոգից և փոթորիկներից (2 Նեփի 14.6): Որո՞նք են մեր կյանքի հոգևոր փոթորիկները: Ինչպե՞ս տաճարը կարող է մեզ պաշտպանել այդ փոթորիկներից:

- Որպես Վերջին Օրերի Սրբեր, ինչպե՞ս կարող ենք օգնել հիմնել երկրի վրա Աստծո արքայությունը, ինչպես նկարագրված է 2 Նեփի 12.3–5: (Տե՛ս Վ. և Ու. 133.7–14:)

- Եսայիան կոչ է անում, որպեսզի Հակոբի տունը քայլի Տիրոջ լույսով, այլ ոչ թե մոլորվի և «ամեն ոք [գնա] դեպի իր անբարիշտ ճանապարհները» (2 Նեփի 12.5): Որո՞նք են 2 Նեփի 12.7–12-ում մի քանի հատուկ մեղքերը: Ինպե՞ս են այդ մեղքերը գերակշռում այսօր: Ինչպե՞ս կարող ենք խուսափել այդ մեղքերից և «քայլել լույսով»:

3. Եսայիան մարգարեանում է այն մասին, որ Տերը կբարձրացնի դրոշակը և կհավաքի Իսրայելը:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 15.26–29; 21.12:

- Եսայիան մարգարեանում է այն մասին, որ Տերը «դրոշակ կբարձրացնի հեռու ազգերին» (2 Նեփի 15.26; տե՛ս նաև 2 Նեփի 21.12): Ի՞նչ է դրոշակը: Ի՞նչ էր Եսայիան ասում այն մասին, ինչ կպատահի, երբ կբարձրացվի դրոշակը (Տե՛ս 2 Նեփի 15.26–29:)

- Երբ Մորոնի հրեշտակը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին, նա ասաց, որ Եսայիայի 11 գլուխը (մեջբերում 2 Նեփի 21-ում) մոտ էր իրականացմանը (Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.40): Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը բոլոր ազգերին դրոշակ հանդիսանում: (Տե՛ս Վ. և Ու. 64.41–43; 105.39; 115.4–6:)

- Ինչպե՞ս է այսօր իրականանում մարգարեությունն այն մասին, որ ազգերը կհավաքվեն: (Տե՛ս 2 Նեփի 21.12: Միսիոներները գնում են աշխարհի տարբեր ծայրերը սովորեցնելու ավետարանը և հավաքելու մարդկանց ճշմարտության համար:) Ինչպե՞ս կարող ենք նպաստել այդ մարգարեության իրականացմանը:

4. Եսայիան և Նեփին վկայում են Հիսուս Քրիստոսի փրկագնող զորության մասին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 16; 22; 25.19–30-ից ընտրված հատվածները: Եթե օգտագործում եք «Եսայիան գրում է Հիսուսի ծննդի մասին» և «Հիսուս Քրիստոսը» նկարները, ապա ցուցադրեք դրանք այս պահին:

- 2 Նեփի 16 պարունակում է Եսայիայի գրվածքները իր տեսիլքի մասին, որում նա տեսել է Տիրոջը: Ինչպե՞ս էր Եսայիան նկարագրում իր տեսիլքի մթնոլորտը: (Տե՛ս 2 Նեփի 16.1–4:) Ինչպե՞ս էր Եսայիան իրեն զգում Տիրոջ ներկայությամբ: (Տե՛ս 2 Նեփի 16.5:)
- Ի՞նչ էր խորհրդանշում հրեշտակը, որը դիպչեց Եսայիայի շրթունքներին բոցավառվող ածուխով: (Տե՛ս 2 Նեփի 16.6–7: Եսայիայի մեղքերը ներված էին:) Ինչպե՞ս Եսայիան պատասխանեց, երբ լսեց Տիրոջ ձայնը: (Տե՛ս 2 Նեփի 16.8:) Ո՞ր այլ սուրբ գրություններում է օգտագործվում նման լեզու: (Տե՛ս Աբրահամ 3.27:) Ե՞րբ մենք պետք է նման պատասխան տանք Տիրոջը:
- Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 2 Նեփի 22.1–6: Բացատրե՛ք, որ այդ հատվածները պարունակում են Եսայիայի գրվածքներն այն մասին, թե ինչպես են մարդիկ փառավորելու Փրկչին Հազարամյակի ժամանակ: Այդ հատվածներից որո՞նք են ձեզ վրա առավել մեծ տպավորություն գործել: Ինչպիսի՞ «մեծամեծ բաներ» է արել մեզ համար Փրկիչը (2 Նեփի 22.5):
- Դասարանի անդամներին խնդրեք մտքում կարդալ 2 Նեփի 25.19–30 և քննարկել Փրկչի մասին Նեփիի վկայությունը: Ի՞նչը ձեզ վրա տպավորություն գործեց Նեփիի վկայությունից: Ինչպե՞ս մենք կարող ենք Նեփիի նման «աշխատել ջանասիրաբար . . . համոզել մեր զավակներին . . . հավատալու Քրիստոսին» (2 Նեփի 25.23; տե՛ս նաև հատված 26):
- Նեփին սովորեցրել է, որ «շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, որ մենք կարող ենք անել» (2 Նեփի 25.23): Ի՞նչ են սովորեցնում այս տողերը այն հարաբերությունների մասին, որոնք գոյություն ունեն Հիսուս Քրիստոսի շնորհի և մեր գործերի միջև: (Տե՛ս 2 Նեփի 10.24–25; Վ. և Ու. 20.29–31:) Ինչպե՞ս են այս տողերը ձեզ ոգեշնչում անել այն ամենը, ինչ կարող եք:
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 2 Նեփի 25.29: Ի՞նչ կարող եք անել այս շաբաթ, որպեսզի ավելի լիակատար հետևեք Նեփիի կոչին՝ երկրպագելու Տիրոջը «ողջ զորությամբ, մտքով, և ուժով, և ձեր ողջ հոգով»: (Կարող եք դասարանի անդամներին առաջարկել բարձրաձայն չպատասխանել, այլ միայն մտքում մտածել այդ հարցի պատասխանի շուրջ:)

Եզրափակում

Նշեք, որ Փրկիչը հետևյալ տողով հաստատել է Եսայիայի ուսմունքները «Այո, մի պատվիրան եմ ձեզ տալիս, որ դուք ջանասիրաբար քննեք այս բաները. քանզի մեծ են Եսայիայի խոսքերը» (3 Նեփի 23.1):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այս մտքերից մեկը կամ մի քանիսը՝ որպես դասի մի մաս:

1. Եսայիան և նրա ժամանակները (դասարանի անդամի ելույթը)

Այս դասն անցկացնելուց մեկ շաբաթ առաջ դասարանի անդամներից մեկին խնդրեք պատրաստել կարճ ելույթ Եսայիայի մասին: Դասարանի այդ անդամին խնդրեք ելույթ ունենալ այս դասի 1 բաժնի սկզբում:

2. Օրհներգ

2 Նեփի 15.26 քննարկման ժամանակ, դասարանի որևէ անդամի խնդրեք երգել «Բարձր լեռան վրա» օրհներգը կամ կարդալ դրա բառերը (Օրհներգեր, հ. 5): Դասարանի հետ կարող եք քննարկել այն, թե ինչպես է այս օրհներգը գովերգում ավետարանի Վերականգնման մասին Եսայիայի մարգարեության իրականացումը:

3. «Չարը բարի» և «բարին՝ չար» կոչելը (2 Նեփի 15.20)

- Ինչպե՞ս մենք կարող ենք, հին Իսրայելի նման, սխալվել և կոչել «չարը բարի . . . և բարին՝ չար» (2 Նեփի 15.20): Ինչպե՞ս կարող ենք հավաստիանալ, որ տարբերում ենք բարին չարից: (Տե՛ս Մորոնի 7.12–17:)

4. Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնում մեզ ավելի լավ հասկանալ Եսայիային

Մորմոնի Գիրքը մեծագույն ուղեցույցներից մեկն է, որն օգնում է մեզ հասկանալ Եսայիայի գրվածքները: Դասարանի հետ կիսվեք ստորև տրված եղանակներով, որոնց միջոցով մենք ավելի լավ կարող ենք հասկանալ Եսայիային:

ա. Մորմոնի Գիրքը մասամբ կամ ամբողջությամբ մեջբերում է կատարում Եսայիայի գրքի 66 գլուխներից 22-ը, և լրացուցիչ մեկնաբանություններ կատարում այդ գլուխների վերաբերյալ: Քանի որ Մորմոնի Գրքի մարգարեները ապրել են Եսայիայի ժամանակաշրջանին մոտ, նրանց մեկնաբանությունները կարող են մեզ օգնել հասկանալ նրա ուսմունքները:

բ. Մորմոնի Գրքում մեջբերված Եսայիայի գրվածքները պարունակում են խոսքեր, արտահայտություններ և բացատրություններ, որոնք չեն հանդիպում Եսայիայի գրքերից ոչ մեկում:

գ. Եսայիայի գրքի աշխարհում հայտնի ամենահին օրինակը հայտնաբերվել է Մեռյալ Ծովի Մագաղաթներում: «Եսայիայի մագաղաթը» գրվել է Քրիստոսի Ծննդից առաջ 200 թվին (Bible Dictionary, “Dead Sea Scrolls,” 654): Ինչևէ, Մորմոնի Գրքի Եսայիայի գլուխները գրվել են Նեփիի ժամանակաշրջանում, Քրիստոսի ծննդից մոտ 600 տարի առաջ: Մորմոնի Գրքի Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը աշխարհին պարգևում է Եսայիայի գրվածքները, որոնք Մեռյալ Ծովի օրինակներից 400 տարով հին են:

դ. Քանի որ առաջին 33 գլուխների ոճը տարբերվում է վերջին 33 գլուխների ոճից, շատերը մտածում են, որ Եսայիայի գիրքը գրվել է երկու տարբեր մարդկանց կողմից: Մորմոնի Գիրքը մեջբերումներ է կատարում Եսայիայի գրքի ինչպես առաջին, այնպես էլ վերջին մասերից, և նշում է Եսայիային որպես հեղինակ, այդպիսով վկայելով և հաստատելով նրա գրվածքները:

Դաս
10

«Նա հրավիրում է նրանց բոլորին գալ Իր մոտ»

2 Նեփի 26–30

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, որ ավետարանի Վերականգնման և Մորմոնի Գրքի ուսմունքների միջոցով Տերը կիրականացնի ճշմարտության հաղթանակը չարի հանդեպ:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. 2 Նեփի 26: Նեփին մարգարեանում է Փրկչի ծառայության մասին Նեփիացիների միջև: Նեփին տեսնում է հպարտությունը և քահանայանենգումները և իր ժողովրդի կործանումը:
բ. 2 Նեփի 27: Նեփին վկայում է Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին, ինչը ավետարանի Վերականգնման գործի մասն է կազմում:
գ. 2 Նեփի 28: Նեփին մարգարեանում է այն մասին, որ Սատանան կտարածի կեղծ ուսմունքներ վերջին օրերերում:
դ. 2 Նեփի 29–30: Նեփին սովորեցնում է Մորմոնի Գրքի կարևորության և այն օրհնությունների մասին, որոնք կտրվեն այն մարդկանց, ովքեր կստանան Մորմոնի Գիրքը:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Կարդացեք Երեց Ջին Ռ. Քուկի հետևյալ խոսքերը.

«Անցած ամառ, երբ մեքենայով ճանապարհորդում էինք անապատով ձգվող մի ուղիղ և դատարկ ավտոմայրուղիով, առջևում տեսանք, որ ճանապարհին ջուր էր լցված: Երեխաներս պատրաստ էին իրենց բոլոր խնայողություններից հրաժարվել այդ փաստը ապացուցելու համար: Սակայն մի քանի րոպե անց, երբ մոտեցանք այդ տեղին, ջրի ոչ մի կաթիլ չտեսանք: Ինչպիսի պատրանք:

Որքան շատ բաներ կան կյանքում, որ թվում են մի բան, բայց իրականում պարզվում է լրիվ այլ բան են . . . Սատանան գործում է այդ եղանակով: Նա պատրանքների վարպետն է: Նա պատրանք է ստեղծում, փորձելով շեղել, թուլացնել և խոտորել Վերջին Օրերի սրբերի զորությունը և ուշադրությունը Աստծո կատարյալ ճշմարտությունից» (in Conference Report, Apr. 1982, 35–36; or *Ensign*, May 1982, 25):

- Ի՞նչ է պատրանքը: (Մի բան, որ խաբում կան շփոթեցնում է:) Որո՞նք են այն պատրանքները, որ Սատանան ստեղծում է մարդկանց շեղելու համար: Ինչպե՞ս կարող ենք տարբերել ճշմարտությունը այդ պատրանքներից:

Բացատրե՛ք, որ այս դասում քննարկվող գլուխները պարունակում են վերջին օրերին վերաբերվող զորեղ մարգարեություններ: Նեփին մարգարեացել է այն մարդկանց մասին, որոնք կխաբվեն Սատանայի կողմից և կշեղվեն ճշմարտությունից: Այնուամենայնիվ, նա նաև կանխատեսում է ավետարանի Վերականգնումը և այն օրհնությունները, որ կտրվեն արդարներին: Այս դասը քննարկում է, թե ինչպես են այդ մարգարեությունները մեզ օգնում խուսափել Սատանայի խաբեություններից և ինչպես մենք կարող ենք հավատարիմ մնալ ճշմարտությանը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել այդ հատվածները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել իրենց այն փորձով, որն առնչվում է այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ:

1. Նեփին մարգարեանում է Փրկչի ծառայության մասին Նեփիացիներին:

Քննարկե՛ք 2 Նեփի 26: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրե՛ք, որ Նեփին կանխատեսում էր, որ Փրկչի այցից առաջ «կլինեն մեծ պատերազմներ ու հակառակություններ» Նեփիացիների շատ սերունդների համար (2 Նեփի 26.1–2): Նա մարգարեացավ այն մասին, որ Քրիստոսի մահվան և Նրա ծառայության միջև ընկած ժամանակահատվածում անարդարները կոչնչանան (2 Նեփի 26.3–7):

- Ինչպե՞ս էր Նեփին նկարագրում այն մարդկանց, ովքեր չեն ոչնչանա Փրկչի գալստի ժամանակ: (Տե՛ս 2 Նեփի 26.8:) Ինչո՞ւ են այս նույն հատկանիշները կարևոր մեզ համար այսօր: Ինչպե՞ս էին օրհնվել արդար Նեփիյացիները և նրանց սերունդները: (Տե՛ս 2 Նեփի 26.9:)
- Նեփին մարգարեացավ այն մասին, որ չորս սերունդներ կապրեն խաղաղության և արդարության մեջ, այնուհետև նրա ժողովուրդը «սրընթաց կործանում» կապրի (2 Նեփի 26.10): Ի՞նչը կբերի դեպի այս կործանումը: (Տե՛ս 2 Նեփի 26.10–11:) Ինչո՞ւ է հպարտությունը այդպիսի լուրջ մեղք համարվում: Ի՞նչ մենք կարող ենք անել մեր կյանքում Տիրոջ Հոգին մեզ հետ ունենալու համար:
- Ինչպե՞ս էր Նեփին նկարագրում մարդկանց դեպի կործանում տանող ճանապարհները: (Տե՛ս 2 Նեփի 26.22: Կարող եք բացատրել, որ վուշե պարանը պատրաստված է բարակ նուրբ թելերից:) Ինչպե՞ս է Սատանան օգտագործում «վուշե պարանը» մինչև որ կապում է մարդկանց «ամուր պարաններով»:
- Ինչպե՞ս է Նեփին նկարագրում այն ճանապարհը, որով Փրկիչը առաջնորդում է մարդկանց դեպի փրկություն: (Տե՛ս 2 Նեփի 26.23–27, 33:) Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին, որպեսզի նրանք ճաշակեն Նրա փրկությունից (2 Նեփի 26.24):
- Նեփին նախազգուշացնում էր քահանայանենգումների համար: Ի՞նչ են քահանայանենգումները: (Տե՛ս 2 Նեփի 26.29; Ալմա 1:16:) Քահանայանենգումների ինչպիսի՞ օրինակներ ենք տեսնում աշխարհում այսօր: Ինչպե՞ս կարող ենք խուսափել նման պայմաններից: (Տե՛ս 2 Նեփի 26.30–31; 3 Նեփի 18.24; Մորոնի 7.45–47:)

2. Նեփին վկայում է Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 27-ից ընտրված հատվածները:

- Գլուխ 27 պարունակում է մարգարեություններ վերջին օրերի մասին: 2 Նեփի 27-ում նկարագրված ո՞ր իրադարձություններն են իրականացել այս ժամանակաշրջանում: (Դասարանի անդամներին մի քանի րոպե տվեք կարդալու 2 Նեփի 27.6–35: Կարող եք դասարանը բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբի խնդրել կենտրոնանալ տարբեր հատվածների վրա: Նրանց պատասխանները ամփոփեք գրատախտակին: Ստորև տրված են պատասխաններից մի քանիսը և քննարկման հարցեր, որոնք կօգնեն խրախուսել անդամների մասնակցությունը:)

  ա. Մի հնագույն գիրք կտրվի մի մարդու թարգմանելու համար (2 Նեփի 27.9:) Ո՞րն է այդ գիրքը: (Տե՛ս 2 Նեփի 27.6:) Ի՞նչ պատճառով էր Տերն ընտրելու մի երիտասարդի, որը ուսյալ չէ, Մորմոնի Գիրքը թարգմանելու համար: (Տե՛ս 2 Նեփի 27.19–23:)

  բ. Գրքի մի մասը ցույց կտրվի մի ուսյալ մարդու, որը կցանկանա այն տեսնել (2 Նեփի 27.15): Ի՞նչ իրադարձությյունների մասին է մարգարեացվում այս տողերում: (Տե՛ս Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.63–65:) Ինչո՞ւ մենք իմացանք այդ ուսյալ մարդու

մասին, որը ցանկացավ տեսնել գիրքը (Տե՛ս 2 Նեփի 27.16:) Ի՞նչ ճանապարհներով կարող է Մորմոնի Գիրքը անհասանելի լինել այն մարդկանց համար, ովքեր փնտրում են աշխարհի փառքը:

գ. Վկաները կվկայեն Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին (2 Նեփի 27.12–14): Ինչո՞ւ էր կարևոր, որպեսզի վկաները տեսնեին թիթեղները (Տե՛ս Եթեր 5.2–4; տե՛ս նաև 2 Կորնթացիներին 13.1:)

դ. Մորմոնի Գրքի զորությունը կերևա մարդկանց կյանքերում (2 Նեփի 27.26, 29–30, 35): Ինչպիսի՞ փոփոխություններ եք տեսել ձեր կամ մյուսների կյանքում Մորմոնի Գրքի զորության շնորհիվ:

3. Նեփին մարգարեանում է այն մասին, որ Սատանան վերջին օրերին կտարածի կեղծ ուսմունքներ:

Կարդացեք և քննարկե՛ք 2 Նեփի 28-ից ընտրված հատվածները:

- Նեփին մարգարեանում է, որ վերջին օրերում մարդիկ կմերժեն Աստծո զորությունը և կտարածեն կեղծ, դատարկ և հիմար ուսմունքներ (2 Նեփի 28.3–9; տե՛ս նաև 2 Նեփի 26.20–21): Ինչպիսի՞ հանգամանքներ էին առկա Ջոզեֆ Սմիթի ժամանակներում: (Տե՛ս Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.5–6, 19, 21:) Ինչպե՞ս են դրանք առկա այսօր:

- Ինչպե՞ս էր Նեփին նկարագրում այն կեղծ ուսմունքները, որոնք մարդիկ կօգտագործեն իրենց մեղքերը արդարացնելու նպատակով: (Տե՛ս 2 Նեփի 28.7–9:) Ինչպե՞ս են այսօր մարդիկ արդարացնում իրենց մեղքերը: Ինչո՞ւ է վտանգավոր չանհանգստանալ «մի փոքր մեղք գործելու» համար (2 Նեփի 28.8):

- Նեփին նաև կանխատեսում է, որ վերջին օրերին մարդիկ լցված կլինեն հպարտությամբ (2 Նեփի 28.12–15): Ո՞րն էր Նեփիացիների հպարտության վերջնական արդյունքը (Տե՛ս 2 Նեփի 26.10–11:) Ինչպե՞ս հպարտությունը կարող է գայթակղության քար դառնալ մեր հոգևոր աճի համար: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել հպարտությունը:

- Նեփին սովորեցնում էր, որ հպարտությունը շատերին կդրդի «կողոպտելու աղքատներին» (տե՛ս 2 Նեփի 28.13): Ինչպե՞ս կարող է «գեղեցիկ հանդերձները» կամ այլ շքեղություններ ունենալու մեր ցանկությունը հանգեցնել նրան, որ մենք արհամարենք աղքատներին: Ինչպե՞ս կարող ենք օգնել նրանց, ովքեր ինչպես ֆիզիկապես, այնպես էլ հոգեպես դժբախտ են:

- Համաձայն Նեփիի խոսքերի, ինչպե՞ս շատերը կարձագանքեն վերջին օրերին Տիրոջ խոսքերին: (Տե՛ս 2 Նեփի 28.20, 28:) Ինչո՞ւ են Աստծո խոսքերը հաճախ «մոլեգնում մարդկանց զավակների սրտերում և դրդում նրանց բարկության ընդդեմ նրա, ինչը բարի է»:

- Նեփին մարգարեանում էր, որ Սատանան կհանդարտեցնի մարդկանց, «տանելով դեպի մարմնական ապահովություն» (2 Նեփի 28.21): Ի՞նչ է մարմնական ապահովությունը: (*Մարմնական* բառը վերաբերվում է մեր մարմնին: Մարմնական ապահովություն գտնելը նշանակում է ապահովություն գտնել բավարարելով մարմնի ցանկությունները կամ ապավինել աշխարհիկ առարկաներին կամ գաղափարներին:) Ինչպե՞ս կարող է մարմնական ապահովությունը մեզ հեռացնել ապաշխարությունից: Ի՞նչ է նշանակում «զգուշորեն առաջնորդում է նրանց հեռու» արտահայտությունը (2 Նեփի 28.21) և ի՞նչ է այն ասում Սատանայի ծրագրերի մասին:

  Երեց Ջեյմս Ե. Ֆաուստը կիսվում է հետևյալ համանմանությամբ. «Թոմաս Ռ. Ռոուանն ասել է. «Հեղինակ և մեկնաբան Մալկոլմ Մագրիջը մի պատմություն պատմեց գորտերի մասին, որոնք առանց որևէ դիմադրության կենդանի վիճակում խաշվում էին կաթսայում: Ինչո՞ւ նրանք չէին դիմադրում: Որովհետև, երբ նրանց տեղավորում էին կաթսայի մեջ, ջուրը սենյակային ջերմաստիճանին հավասար էր: Այնուհետև ջերմաստիճանը թեթևակի բարձրացվում էր, . . . ավելի ու ավելի բարձր տաքության, և այդպես շարունակ: Փոփոխությունը կատարվում էր այնքան աստիճանաբար, որ համարյա թե աննկատելի էր դառնում, և գորտերը հարմարվում էին նոր միջավայրին, մինչև որ շատ ուշ էր լինում փրկվելու համար: Պրն. Մագրիջի այս օրինակը ոչ թե գորտերի, այլ մեր մասին էր: Մենք

ընդունում ենք չարիքը քանի դեռ այն այնդքան էլ ակնհայտ չէ, մինչև որ այն հանկարծակիորեն կլանում է մեզ: Մենք հակված ենք ընդունելու բարոյապես սխալ արարքները, եթե դրանք միայն մի փոքր են տարբերվում այն բաներից, որոնք մենք արդեն ընդունել ենք» *(National Press Club Forum)*:

Այս համանմանությամբ կիսվելուց հետո Երեց Ֆաուստն ասաց. «Այս աստիճանաբար ընթացքը կանխագուշակվել էր դեռ հին մարգարեների կողմից» (in Conference Report, Apr. 1989, 40; or *Ensign*, May 1989, 32):

- Ինչպե՞ս էր Նեփին նկարագրում այն ճանապարհները, որոնցով Սատանան «շողոքորթում է» որոշ մարդկանց: (Տե՛ս 2 Նեփի 28.22:) Ինչո՞ւ է Սատանան ցանկանում մեզ հավատացնել, որ գոյություն չունի ոչ դև, որ էլ դժոխք: Ինչպե՞ս կարող է Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը մեզ օգնել հոգեպես արթուն լինել և խուսափել «Սիոնում հանգիստ» լինելուց» (տե՛ս 2 Նեփի 28.24):

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Մորմոնի Գիրքը բացահայտում է Քրիստոսի թշնամիներին: Այն հերքում է կեղծ ուսմունքները և վերջ դնում հակառակություններին: (Տե՛ս 2 Նեփի 3.12:) Այն մեր օրերում զորացնում է Քրիստոսի հնազանդ հետևորդներին սատանայի չար ծուղակների, ծրագրերի և ուսմունքների դեմ: Մորմոնի Գիրքն ուրացողները նման են այսօրվա ուրացողներին: Աստված, Իր անսահման կանխագիտությամբ, այնպես է կազմել Մորմոնի Գիրքը, որպեսզի մենք կարողանանք տեսնել սխալը և իմանալ, ինչպես պայքարել մեր օրերի կրթական, քաղաքական, կրոնական և փիլիսոփայական կեղծ գաղափարների դեմ» (in Conference Report, Apr. 1975, 94–95; or *Ensign*, May 1975, 64):

4. Նեփին սովորեցնում է Մորմոնի Գրքի կարևորության մասին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 29–30-ից ընտրված հատվածները:

- Ինչո՞ւ վերջին օրերում որոշ մարդիկ կհրաժարվեն Մորմոնի Գրքից: (Տե՛ս 2 Նեփի 29.3; տե՛ս նաև 2 Նեփի 28.29:) Ինչո՞ւ մենք պետք է ուսումնասիրենք Մորմոնի Գիրքը ի լրումն Աստվածաշնչի: (Տե՛ս 2 Նեփի 29.4–14; տե՛ս նաև 2 Նեփի 28.30:)
- Նեփին մարգարեանում է այն մասին, որ Մորմոնի Գիրքը հաջողություն կունենա Հեթանոսների (2 Նեփի 30.3), Լեքիի սերունդների (2 Նեփի 30.3–6), և Հրեաների (2 Նեփի 30.7) մոտ, հավատ ներշնչելով Հիսուս Քրիստոսի, որպես մեր Փրկչի, հանդեպ:

Եզրափակում

Բացատրե՛ք, որ Մորմոնի Գրքի և կենդանի ավետարանի ուսումնասիրության միջոցով մենք զորություն կստանանք խուսափելու Սատանայի մոլորեցնող պատրանքներից և առաջնորդություն կստանանք, եթե աշխատենք մնալ անձուկ ու նեղ արահետի վրա: Դասարանի անդամներին խրախուսեք ուսումնասիրել Մորմոնի Գիրքն ինքնուրույն կամ ընտանիքներում, որպեսզի ստանան Տիրոջ կողմից արդարներին խոստացված օրհնությունները:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. «Մեծ բաժանում ժողովրդի մեջ» (2 Նեփի 30.10)

- Նեփին մարգարեացավ, որ Հազարամյակից առաջ Տերը «մեծ բաժանում կառաջացնի ժողովրդի մեջ» (2 Նեփի 30.10): Ինչպե՞ս է Նեփին նկարագրում այդ բաժանումը: (Տե՛ս 2 Նեփի 30.10:) Ինչպիսի՞ օրհնություններ կվայելեն Հազարամյակի ժամանակ արդարները: (Տե՛ս 2 Նեփի 30.12–18:)

2. Վարժություն երիտասարդների համար

Դասարանի անդամներին ցույց տվեք այս էջի վրա պատկերված շփոթություն առաջացնող երեք տեսողական պատկերները (հնարավորության դեպքում դասարանի յուրաքանչյուր անդամին մեկական նկար տվեք): Դասարանի անդամների հետ քննարկե՛ք ստորև տրված հարցերը (Պատկեր 1, Ա և Բ գծերը նույն երկարությունն ունեն: Պատկերներ 2 և 3, միջին հատվածը միացած չէ երկու մյուս հատվածներին:) Մի քանի րոպե այս պատկերների մասին խոսելուց հետո, տվե՛ք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ են այս նկարները խաբուսիկ: Ինչպիսի՞ պատրանքներ է օգտագործում Սատանան մեզ խաբելու նպատակով: Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի տեսնենք և հասկանանք ճշմարտությունը:

Պատկեր 1



Ո՞րն է ավելի երկար, Ա-ն, թե Բ-ն:



Պատկեր 2

Ո՞ր մասում են միացած միջին հատվածները:



Պատկեր 3

«Առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ»

Դաս
11

2 Նեփի 31–33

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ Քրիստոսի վարդարպետությունը և մեծացնել Նրա խոսքով սնվելով առաջ մղվելու իրենց ցանկությունը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 2 Նեփի 31.1–18: Նեփին սովորեցնում է Քրիստոսի վարդարպետությունը: Նա սովորեցնում է, որ Հիսուսը մկրտվեց «կատարելու ամեն արդարություն», և մենք նույնպես պետք է մկրտվենք և հետևենք Նրան: Նա նաև սովորեցնում է Սուրբ Հոգու օրհնությունների և զորության մասին:

   բ. 2 Նեփի 31.19–21: Նեփին սովորեցնում է, որ մենք պետք է առաջ մղվենք և դիմանանք մինչև վերջ:

   գ. 2 Նեփի 32: Նեփին խոսում է Քրիստոսի խոսքով սնվելու և միշտ աղոթելու կարևորության մասին:

   դ. 2 Նեփի 33: Նեփին հայտարարում է, որ մարդիկ կհավատան իր խոսքերին, եթե հավատան Քրիստոսին: Նա նախազգուշացնում է, որ մենք պետք է դատվենք կախված նրանից, ընդունում ենք իր խոսքերը, թե հրաժարվում ենք դրանցից:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Մորոնի 7.13–17; Վարդապետություն և Ուխտեր 20.37, 71–74:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին խնդրեք նկարագրել մի ճաշկերույթ: Ի՞նչ տեսակի ուտելիքներ են լինում սեղանի վրա: Ինչո՞վ է ճաշկերույթը տարբերվում սովորական ճաշից: Մի քանի րոպե քննարկելուց հետո, դասարանի անդամներին խնդրեք կարդալ 2 Նեփի 32.3, սկսելով «Այդ պատճառով, ես ասացի ձեզ» խոսքերով: Դասարանի անդամներին ասացեք, որ Տերը մեզ հրավիրել է այնպիսի ճաշկերույթի, որը մեզ հավերժական կյանք է պարգևում: Այս դասը քննարկում է Նեփիի ուսմունքներն այն մասին, թե ինչպես պետք է ապրել ըստ Քրիստոսի վարդապետության և սնվել Նրա խոսքով:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Նեփին հանդիսանում է Աստծո ամենախիզախ որդիներից մեկը: Թեպետ և նա ընտանեկան անախորժություններ է ունեցել, պատերազմներ է տեսել և այլ փորձություններ հանդիպել, նա միշտ սիրել է Աստծուն իր ամբողջ սրտով: Նա լցված է եղել հավատքով, մեծ եռանդով ու շիտակությամբ, և երբեք չի տատանվել իր հնազանդության մեջ: Ուսումնասիրելով հանձնարարված գլուխները, հիշե՛ք, որ դրանք Նեփիի վերջին խոսքերից են:

1. Նեփին սովորեցնում է Քրիստոսի վարդապետությունը

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 31.1–18-ից ընտրված հատվածները: Շեշտե՛ք, որ Նեփին իր վերջին գրվածքները սկսում է ասելով, որ պետք է խոսի «Քրիստոսի վարդապետության վերաբերյալ» (2 Նեփի 31.2): Դասարանի անդամներին խնդրեք 31 գլուխը ընթերցելիս

մտածել այդ արտահայտության իմաստի մասին: Բացատրեք, որ ավելի ուշ դասի ժամանակ դուք կհարցնեք, թե ո՞րն է Քրիստոսի վարդապետությունը:

- Նեփին սկսեց մարդկանց հիշեցնել, որ նախկինում խոսել է Հիսուսի մկրտության մասին (2 Նեփի 31:4): Ինչո՞ւ Հիսուսը մկրտվեց: (Տե՛ս 2 Նեփի 31.5:) Ինչպե՞ս Նա մկրտվելով «կատարեց ամեն արդարություն»: (Տե՛ս 2 Նեփի 31.6–7: Կարող եք նշել, որ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է, որ ամեն արդարություն կատարելը նշանակում է «կատարել օրենքը» [in Conference Report, Apr. 1912, 9]):

- Համաձայն 2 Նեփի 31.9, ի՞նչ այլ պատճառով Հիսուսը մկրտվեց: Ինչո՞ւ մենք պետք է մկրտվենք: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 2 Նեփի 31.13, 17 և Վարդապետություն և Ուխտեր 20.37, 71–74 այս հարցին պատասխանելու համար: Պատասխաններն ամփոփեք գրատախտակին: Պատասխաններից մի քանիսը տրված են ստորև:)

  ա. Ստանալու համար Սուրբ Հոգու պարգևը (2 Նեփի 31.13):
  բ. Ստանալու համար մեղքերի թողություն (2 Նեփի 31.17):
  գ. Մտնելու համար այն դարպասը, որը տանում է դեպի հավերժական կյանք (2 Նեփի 31.17):
  դ. Դառնալու համար Տիրոջ Եկեղեցու անդամ (Վ. և Ու. 20.37, 71–74):

- Նեփին իր ժողովրդին կոչ էր անում «հետևել Որդուն սրտի ողջ նվիրվածությամբ, չգործելով ո՛չ կեղծավորություն, ո՛չ խաբեություն Աստծո առաջ» (2 Նեփի 31.13): Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում չգործել ո՛չ կեղծավորություն, ո՛չ խաբեություն Աստծո առաջ: Ինչպե՞ս կարող ենք հետևել Որդուն «սրտի ողջ նվիրվածությամբ» և ինչպե՞ս դա կարող է մեզ օգնել խուսափել կեղծավորությունից և խաբեությունից:

- Ի՞նչ պարգև ենք մենք ստանում, երբ պատրաստակամություն ենք ցուցաբերում «հետևել Փրկչին՝ իջնելով ցած ջրի մեջ» և մկրտվել (2 Նեփի 31.13): Ինչպե՞ս էր Նեփին նկարագրում այն եղանակը, որով մենք կարող ենք խոսել մկրտվելուց և Սուրբ Հոգու պարգևը ստանալուց հետո: (Տե՛ս 2 Նեփի 31.13:) Ի՞նչ է նշանակում «խոսել հրեշտակների լեզվով»: (Տե՛ս 2 Նեփի 32.2–3: Դա նշանակում է խոսել Քրիստոսի մասին Սուրբ Հոգու զորությամբ:) Ինչպիսի՞ իրավիճակներում մենք կարող ենք օրհնվել «հրեշտակների լեզվով» խոսելու ունակությամբ: (Պատասխանները կարող են ընդգրկել. երբ ընկերներին կամ ընտանիքի անդամներին սովորեցնում ենք կամ վկայություն ենք բերում, խոսում ենք եկեղեցում կամ աղոթում ենք:)

- Նեփին նաև սովորեցնում էր, որ մկրտությունից հետո մենք ստանում ենք մեղքերի թողություն «կրակով և Սուրբ Հոգով» (2 Նեփի 31.17): Ինչո՞ւ էր Նեփին օգտագործում «կրակ» բառն այդ ընթացքը նկարագրելու համար: (Ինչպես կրակն է մաքրում և սրբացնում, այնպես էլ Սուրբ Հոգին է մեղքերից մաքրում նրանց, ովքեր անկեղծ ապաշխարում են և մկրտվում:)

- Նեփին սովորեցնում էր, որ Սուրբ Հոգին «վկայում է Հոր և Որդու մասին» (2 Նեփի 31.18): Ինչո՞ւ է մեզ համար այդքան էական Հոր և Որդու մասին վկայություն ստանալ Սուրբ Հոգու միջոցով:

- Ինչպե՞ս կարող է Սուրբ Հոգու վկայությունը գալ մեզ մոտ: (Տե՛ս Վ. և Ու. 8.2 և հետևյալ մեջբերումը:) Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, թե ինչպես է Սուրբ Հոգին խոսում մեզ հետ: (Տե՛ս 2 Նեփի 32.5:)

  Նախագահ Բոյդ Ք. Փաքերը սովորեցրել է. «Սուրբ Հոգին խոսում է մի ձայնով, որը դուք ավելի շուտ զգում եք, քան լսում: Այն բնութագրվում է որպես հանդարտ ցածր ձայն (in Conference Report, Oct. 1994, 77; or *Ensign,* Nov. 1994, 60):

Նշում. Եկեղեցու անդամները բազմաթիվ անգամ զգում են Հոգու ազդեցությունը, սակայն գլխի չեն ընկնում, որ իրենց ապրած զգացմունքները Սուրբ Հոգուց են գալիս: Տարվա

ընթացքում ժամանակ առ ժամանակ, երբ դասի ընթացքում զգում եք Հոգու ազդեցությունը, կարող եք կանգ առնել և կիսվել ձեր զգացմունքներով դասարանի անդամների հետ: Բացատրեք, որ նրանք կարող են զգալ Սուրբ Հոգու ազդեցությունն այլ եղանակով, ոչ այնպես, ինչպես դուք եք զգում, սակայն Հոգու ազդեցությունը խաղաղություն և երջանկություն է պարգևում:

2. Նեփին սովորեցնում է, որ մենք պետք է առաջ մղվենք և համբերենք մինչև վերջ:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 31.19–21: Դասարանի անդամներին բացատրեք, որ Նեփին սովորեցնում էր, որ մկրտությունը դարպաս է հավերժական կյանքի անձուկ և նեղ արահետը մտնելու համար: Նա նաև սովորեցնում էր, թե ինչ է նշանակում քայլել այդ արահետով:

- Ի՞նչ է հարցնում Նեփին 2 Նեփի 31.19-ում: Ո՞րն է այդ հարցի պատասխանը: (Տե՛ս 2 Նեփի 31.19–20:) Ի՞նչ է նշանակում «առաջ մղվել»: (Առաջ մղվել հաստատակամությամբ, անկախ դժվարություններից և փորձություններից:) Որո՞նք են այն բաները, որ կարող են մեզ շեղել և խանգարել առաջ մղվել: Ինչո՞ւ է առաջ մղվելը մինչև վերջ համբերելու կարևոր մասը հանդիսանում:
- Ի՞նչ է նշանակում ունենալ «Քրիստոսի հանդեպ հաստատամտություն» (2 Նեփի 31.20): Քրիստոսին հետևելը ինչպե՞ս կարող է մեզ օգնել ունենալ «հույսի կատարյալ պայծառություն»: Ինպե՞ս կարող ենք օգնել միմյանց առաջ մղվելու մեր ջանքերում: Ինչպե՞ս կարող ենք օգնել Եկեղեցու նոր անդամներին, երբ նրանք սկսում են իրենց ճանապարհորդությունը այդ ուղիով:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին սովորեցրել է. «Նորդարձների թվի նման մեծացման հետ մեկտեղ մենք պետք է ավելի մեծ ջանքեր գործադրենք նրանց օգնելու գտնել իրենց ճանապարհը»: (in Conference Report, Apr. 1997, 66; or *Ensign*, May 1997, 47):
- 2 Նեփի 31-ում Նեփիի ուսմունքների հիման վրա, ինչպե՞ս կնկարագրեիք «Քրիստոսի վարդապետությունը»: (Տե՛ս 2 Նեփի 31.13, 15; տե՛ս նաև 3 Նեփի 11.31–40: Պատասխանները կարող են ընդգրկել. հավատալ Քրիստոսին, ապաշխարել, մկրտվել, ստանալ Սուրբ Հոգու պարգևը և մինչև վերջ դիմանալ:)

3. Նեփին խոսում է Քրիստոսի խոսքով սնվելու կարևորության մասին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 32-ից ընտրված հատվածները:

- 2 Նեփի 32-ում Նեփին լրացուցիչ հրահանգներ է տալիս այն մասին, թե ինչ մենք պետք է անենք հավերժական կյանքի արահետի վրա կանգնելուց հետո (2 Նեփի 32.1–3): Ինչպիսի՞ հատուկ հրահանգներ են տրվում հատված 3-ում: Ինչպիսի՞ աղբյուրներ մենք ունենք Քրիստոսի խոսքը ստանալու համար:
- Ի՞նչ է, ձեր կարծիքով, նշանակում սնվել այդ խոսքերով: (Տե՛ս ստորև բերված մեջբերումը:) Ինչո՞վ է սնվելը տարբերվում կարդալուց կամ, անգամ, ուսումնասիրելուց: Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին սնվել:

  Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Մենք պետք է սնվենք Քրիստոսի խոսքերով սուրբ գրություններից և ապրող մարգարեներից այդ խոսքերը ստանալով: Ժամանակ առ ժամանակ մի քիչ կարդալը բավական չէ: (Տե՛ս 2 Նեփի 31.20 և 32.3:) Սնվելը նշանակում է վերցնել դա մեծ ցանկությամբ և . . . լիովին հաճույք ստանալ, նշանակում է քաղցած լինելիս ոչ թե մեկ անգամից մեծ քանակությամբ սնունդ ընդունել, այլ ուտել երախտագիտությամբ, հաճույք ստանալով, մի սքանչելի կերակուր, որը խնամքով և սիրով պատրաստված է . . . դարերի ընթացքում» (*Wherefore Ye Must Press Forward* [1977], 28):
- Ի՞նչ խոստում է տվել Նեփին Քրիստոսի խոսքերի վերաբերյալ: (Տե՛ս 2 Նեփի 32.3:) Ինչպե՞ս գիտեք, որ դա ճշմարիտ է:

- Նեփին սովորեցրել է, որ Հոգին մարդուն սովորեցնում է, կամ խրախուսում է, աղոթել (2 Նեփի 32.8): Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի աղոթենք «որևէ բան Տիրոջ համար» կատարելուց առաջ (2 Նեփի 32.9): Ինչպե՞ս եք օրհնվել, երբ հետևել եք այս խորհրդին:

4. Նեփին հայտարարում է, որ մարդիկ կհավատան իր խոսքերին, եթե հավատան Քրիստոսին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 33-ից ընտրված հատվածները: Բացատրե՛ք, որ այս գլուխը պարունակում է Նեփիի վկայությունը իր խոսքերի ճշմարտացիության վերաբերյալ և դրանց կարևորությունը բոլոր մարդկանց համար:

- Ինչո՞ւ են Նեփիի խոսքերը «մեծ արժեքի»: (Տե՛ս 2 Նեփի 33.3–5:) Ինչպե՞ս կարող ենք իմանալ այդ խոսքերի արժեքի մասին: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ Նեփիի խոքերը ճշմարիտ են: (Տե՛ս 2 Նեփի 33.10; տե՛ս նաև Մորոնի 7.13–17:)
- Նեփին ասել է, որ մենք պետք է հանդիպենք իրեն «երես առ երես» դատարանի առջև (2 Նեփի 33.11): Նեփիի խոսքերն ինչպե՞ս կարող են «դատապարտել մեզ վերջին օրը»: (Տե՛ս 2 Նեփի 33.14: Եթե մենք ընտրենք մերժել այս խոսքերը կամ չհնազանդվել այդ խոսքերով տրված պատվիրաններին, ապա կկտրվենք Տիրոջ ներկայությունից:)
- Նեփիի վերջին խոսքերից է հետևյալ հայտարարությունը. «Քանզի այսպես է պատվիրել ինձ Տերը, և ես պետք է հնազանդվեմ» (2 Նեփի 33.15): Ինչո՞ւ է սա Նեփիի գրառումների պատշաճ ավարտը հանդիսանում: Ի՞նչ սովորեցիք Նեփիի օրինակից և ինչպես այն կարող է ձեզ օգնել դառնալ ավելի հնազանդ:

Եզրափակում

Կրկին ամփոփեք Քրիստոսի վարդապետությունը, որն ընդգկում է Քրիստոսին հավատալը, ապաշխարելը, մկրտվելը, Սուրբ Հոգու պարգևը ստանալը և մինչև վերջ համբերելը:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունները սուրբ գրությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այս մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. Օրհներգ

Դասարանի անդամների հետ միասին երգեք «Առաջ մղվեք, Սրբեր» օրհներգը կամ կարդացեք դրա բառերը (*Օրհներգեր,* հմ. 81):

2. Հաղթահարել հասկանալու արգելքները

- Կարդացե՛ք և քննարկե՛ք 2 Նեփի 32.7: Ինչո՞ւ էր Հոգին արգելում Նեփիին խոսել: Ինչպե՞ս են այսօր դեռևս գերիշխում այդ հատվածում նշված խնդիրները: Ինչպե՞ս կարող ենք միմյանց օգնել խուսափել այդ ծուղակներից:

«Դուք որոնեք Աստծո՛ արքայությունը»

Դաս
12

Հակոբ 1–4

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին ավելի մեծ ցանկություն ձեռք բերել փառավորելու իրենց կոչումները, լինելու պարկեշտ և հրավիրելու ուրիշներին գալ դեպի Քրիստոսը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Հակոբ 1: Հակոբը փառավորում է իր կոչումը Տիրոջ համար՝ մարդկանց ապաշխարություն քարոզելով:
   բ. Հակոբ 2–3: Հակոբը նախազգուշացնում է դեպի հարստությունները սեր ունենալու, հպարտության և բարոյապղծության համար: Նա խոստանում է սրտով մաքուրներին, որ Աստված կմխիթարի փորձությունների ժամանակ, եթե նրանք իրենց հայացքը ուղղեն դեպի Նրա խոսքը և աղոթեն հավատքով:
   գ. Հակոբ 4: Հակոբը վկայում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Նա մարդկանց նախազգուշացնում է «նշանակետից այն կողմ նայելու» վտանգի մասին:

2. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժությունը, ապա ձեզ հետ դասարան բերեք մի խոշորացույց (կամ դասից առաջ գրատախտակին մի խոշորացույց նկարեք):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ցույց տվեք խոշորացույցը (կամ նկարեք այն գրատախտակին):



- Ի՞նչ է անում խոշորացույցը: Ի՞նչ է նշանակում «խոշորացնել» բառը: (Մեծացնել, ավելացնել, ավելի մեծ գնահատանքով կամ հարգանքով վերաբերվել ինչ-որ բանին:) Ի՞նչ է նշանակում «մեծացնել» կոչումը Եկեղեցում:

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հակոբ 1.17–19: Մյուս անդամներին խնդրեք գտնել այն արտահայտությունները, որոնք նկարագրում են, թե

ինչպես էր Հակոբը փառավորում Տիրոջից ստացած իր կոչումը: Նրանց պատասխանները կարող եք գրի առնել գրատախտակին: Ցուցակում պետք է ընդգրկված լինեն հետևյալ պատասխանները.

ա. Ստացավ իր հանձնարարությունը Տիրոջից (Հակոբ 1.17):
բ. Կարգվեց, կամ ձեռնադրվեց (Հակոբ 1.18):
գ. Ստանձնեց պատասխանատվություն (Հակոբ 1.19):
դ. Սովորեցրեց Աստծո խոսքը ջանասիրությամբ (Հակոբ 1.19):
ե. Աշխատեց իր զորությամբ (Հակոբ 1.19):

Բացատրե՛ք, որ, երբ Նեփիի մահկանացու կյանքը մոտեցավ ավարտին, նա իր փոքր եղբայրներին՝ Հակոբին և Հովսեփին, փոխանցեց Նեփիացիների հոգևոր բարեկեցության պատասխանատվությունը: Հակոբը զգում էր իր կոչման ծանրությունը և վշտանում էր իր ժողովրդի հպարտության համար, որը նրանց ժլատ և անբարոյական էր դարձրել: Նա խստորեն հորդորեց նրանց ապաշխարել՝ հաշտվել Աստծո հետ Քավության միջոցով: Դասարանի անդամներին խնդրեք մտածել Եկեղեցում իրենց կոչումների և այն մասին, թե ինչպես իրենք կարող են փառավորել դրանք:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք այն սուրբ գրությունները, հարցերը կամ դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների հատվածների հետ առնչվող իրենց փորձով:

1. Հակոբը փառավորում է Տիրոջից ստացած իր կոչումը:

Քննարկե՛ք Հակոբ 1: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրե՛ք, որ Հակոբը Լեքիի և Սարիայի որդին էր, որը ծնվեց անապատում: Երիտասարդ տարիներին նա տեսել էր Փրկչին և կարգվել էր քահանայության (2 Նեփի 2.4; 6.2; 11.3): Նա դարձավ փոքր թիթեղների խնամակալը և փոխարինեց Նեփիին նրա ծառայության մեջ:

- Փոքր թիթեղները հանձնելու հետ մեկտեղ Նեփին Հակոբին հատուկ ցուցումներ տվեց: Ի՞նչ Նեփին պատվիրեց Հակոբին գրել այդ թիթեղների վրա: (Տե՛ս Հակոբ 1.1–4:) Ինչո՞ւ էր կարևոր գրի առնել և պահպանել այդ տեղեկությունները: (Տե՛ս Հակոբ 1.5–8:) Ի՞նչ են այս տողերը մեզ սովորեցնում մեր կյանքի իրադարձությունները գրի առնելու վերաբերյալ:
- Հակոբը գրում էր, որ իր ժողովուրդը «չափազանց սիրում էր Նեփիին» (Հակոբ 1.10): Ինչո՞ւ էին նրանք սիրում Նեփիին այդպիսի մեծ սիրով: (Տե՛ս Հակոբ 1.10:) Ինչպե՞ս եք վերաբերվում այն մարդկանց, ովքեր աշխատում են ձեզ ծառայել:
- Ի՞նչ Հակոբը նկատի ուներ, երբ ասում էր, որ նախքան իր ժողովրդին սովորեցնելը՝ «սկզբում ստացավ իր հանձնարարությունը Տիրոջից»: (Տե՛ս Հակոբ 1.17–18): Ինչպե՞ս ենք մենք ստանում մեր հանձարարությունը Տիրոջից: (Կանչվելով ծառայության և ձեռնադրումով:) Ինչպե՞ս կարող ենք պարզել, թե ինչ է Տերը մեզանից ակնկալում կատարել մեր կոչումներում:
- Համաձայն Հակոբի խոսքերին, ի՞նչ կպատահեր, եթե նա և Հովսեփը ջանասիրաբար չսովորցնեին մարդկանց: (Տե՛ս Հակոբ 1.19:) Ինչո՞ւ է այդքան կարևոր փառավորել մեր կոչումները: (Եթե չեք օգտագործել ուշադրության վարժությունը, ապա մի քանի րոպե տրամադրեք քննարկելու համար, թե ինչ է նշանակում փառավորել կոչումը:)
- Ի՞նչ լավ օրինակների եք հանդիպել, երբ մարդիկ փառավորել են իրենց կոչումները: Ինչպե՞ս ավելի լավ կարող ենք փառավորել մեր կոչումները (Տե՛ս Վ. և Ու. 58.26–28:) Ինչպե՞ս եք օրհնվել, երբ աշխատել եք լավագույն կերպով կատարել ձեր հանձնարարությունները:

2. Հակոբը նախազգուշացնում է հարուստների հանդեպ սիրո, հպարտության և անմաքրության դեմ:

Քննարկե՛ք Հակոբ 2–3: Դասարանի անդամներին խնդրեք կարդալ ընտրված հատվածները:

- Սկսելով քարոզել Նեփիի ժողովրդին Հակոբն ասաց, որ նա «նեղված էր շատ ավելի մեծ ցանկությամբ և մտահոգությամբ», քան երբևէ նախկինում (Հակոբ 2.3): Ինչո՞ւ էր Հակոբի հոգին «վշտացած»: (Տե՛ս Հակոբ 2:5–9; տե՛ս նաև Հակոբ 1.15–16:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Հակոբը նկարագրում մեղքը որպես գործ: (Հակոբ 2.5):
- Նյութական հարստության որոնումը ինչպե՞ս կարող է գայթակղության քար դառնալ Հակոբի օրերի Նեփիացիների համար: (Տե՛ս Հակոբ 2.12–16:) Նյութական հարստության որոնումն ինչպե՞ս կարող է տանել դեպի հպարտություն: Ո՞րն է հարստության օգտագործման ճիշտ ճանապարհը: Ի՞նչ խորհուրդ է մեզ տվել Հակոբը, որպեսզի մենք կարողանանք ճիշտ օգտագործել հարստությունը: (Տե՛ս Հակոբ 2.17–21:)

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը սովորեցրել է.

  «Հարստություն ունենալը չի նշանակում լինել մեղսագործ: Սակայն մեղքը կարող է առաջանալ հարստության ձեռք բերման և օգտագործման ընթացքում . . . «Որովհետև արծաթսիրությունը ամեն չարիքների արմատն է. որին մի քանիսը անձնատուր լինելով հավատքիցը մոլորվեցան, և իրանց անձերը շատ ցավերով խոցեցին: Բայց դու, ով Աստուծոյ մարդ, փախիր սորանցից, և հետևիր արդարութեան, հավատքի, սերի, համբերութեան, հեզության»: (Ա Թիմոթ. 6.10–11:)

  «Մորմոնի Գրքի պատմությունը բացահայտում է հարստության հանդեպ կիրք ունենալու կործանարար ազդեցությունը . . . Եթե մարդիկ իրենց հարստությունը բարի նպատակների համար են օգտագործում, ապա նրանք կվայելեն շարունակվող բարգավաճում: Սակայն, թվում է, թե, մարդիկ ի վիճակի չեն երկար ժամանակի ընթացքում միաժամանակ լինել և՛ հարուստ, և՛ արդար» (*The Miracle of Forgiveness* [1969], 47–48):
- Հպարտության և հարստության հանդեպ սիրո մասին մարդկանց նախազգուշացնելուց հետո, Հակոբը կոչ է անում նրանց ապաշխարել իրենց անբարոյական վարքի համար: (Տե՛ս Հակոբ 2.23–24:) Ինչպե՞ս են այսօր շատ մարդիկ արդարացնում իրենց անբարոյականությունը:
- Ինչո՞ւ է կարևոր բարոյապես մաքուր լինել: (Տե՛ս Հակոբ 2.27–29; տե՛ս նաև Ելից 20.14; 1 Կորնթացիս 6.18–20:) Սեռական անմաքրությունը ինչպե՞ս կարող է ազդել մեղսագործի ընտանիքի, ընկերների և հասարակության բոլոր անդամների վրա: (Տե՛ս Հակոբ 2.31–35; 3.10:) Ի՞նչ խորհուրդ և մխիթարություն է տալիս Հակոբը նրանց, ովքեր վնասներ են կրել ուրիշների անբարոյականության հետևանքով: (Տե՛ս Հակոբ 3.1–2:)
- Ի՞նչ պետք է մարդն անի անբարոյականության մեղքերից ազատվելու համար:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը հինգ քայլ է առաջարկում անբարոյականությունից ներում ստանալու համար («Ողջախոհության Օրենքը», in *Brigham Young University 1987–88 Devotional and Fireside Speeches* [1988], 53–54): Դասարանի անդամների հետ միասին քննարկեք այդ քայլերը.

  «1. Անմիջապես ազատվեք այնպիսի իրավիճակներից, որոնք ձեզ մեղքի են դրդում կամ կարող են մեղքի դրդել:

  2. Ատծուց հաղթահարելու ուժ խնդրեք:

  3. Ձեր քահանայության ղեկավարներին հնարավորություն տվեք օգնել ձեզ ազատվել ձեր մեղսագործությունից և ետ վերադառնալ Տիրոջ հետևորդների շարքերը:

  4. Խմե՛ք աստվածային աղբյուրից [սուրբ գրություններից և մարգարեների խոսքերից] և ձեր կյանքը լցրեք զորության դրական աղբյուրներով:

  5. Հիշե՛ք, որ ապաշխարության միջոցով դուք նորից կարող եք մաքուր դառնալ»:

- Համաձայն Հակոբի, ինչպե՞ս օրհնվեցին Լամանացիները մաքուր լինելու համար: (Տե՛ս Հակոբ 3.5–7:) Որո՞նք են բարոյապես մաքուր լինելու օրհնությունները:

3. Հակոբը վկայում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք ընտրված հատվածները Հակոբ 4-ից:

- Իր ժողովրդին ապաշխարության կոչ անելուց հետո, Հակոբն ավարտում է իր քարոզը՝ վկայելով Քավության շնորհիվ ներման հույսի մասին: Ինչպե՞ս են սուրբ գրությունները և մարգարեները մեզ օգնում Քավության մասին վկայություն ձեռք բերել: (Տե՛ս Հակոբ 4.4–6:) Ինչպե՞ս ենք մենք ձեռք բերում Քրիստոսի հանդեպ այն հույսը, որի մասին խոսում էր Հակոբը: (Տե՛ս Հակոբ 4.10–12:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում նայել «նշանակետից այն կողմ», որը վերաբերվում էր Հրեաներին: (Տե՛ս Հակոբ 4.14: Հրեաներն օժտված էին սուրբ գրությունների բարդ տեքստը հասկանալու պարգևությամբ, սակայն առանց հավատքի և սուրբ Հոգու օգնության նրանք չէին կարող հասկանալ դրանք: Նրանք արհամարեցին «պարգևությունը» սուրբ գրություններում և փրկություն որոնեցին ոչ թե Հիսուս Քրիստոսի միջոցով, այլ ուրիշ ճանապարհներով և միջոցներով:)
- Մեր առօրյա կյանքում ինչպե՞ս կարող ենք երբեմն «նշանակետից այն կողմ նայել»: Ինչպե՞ս կարող ենք ավելի ջանասեր լինել մեր կյանքում Փրկչի կարևորությունը հիշելու համար:

Այս բաժինը եզրափակելու համար, դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 3.17:

Եզրափակում

Բացատրեք, որ Հակոբի ուսմունքները մեզ օգնում են հասկանալ մեր կոչումները փառավորելու և հպարտությունից ու անբարոյականությունից խուսափելու կարևորությունը: Իր քարոզի վերջում շեշտը դնելով Քավության վրա Հակոբը սովորեցրեց, որ մենք պետք է ապավինենք Փրկչին:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք այդ մտքերից մեկը կամ մի քանիսը օգտագործել որպես դասի մաս:

1. Հակոբը դատապարտում է անօրինական բազմակնությունը

- Ո՞ւմ էին Նեփիացիները օրինակ բերում իրենց պոռնկությունները արդարեցնելու համար: (Տե՛ս Հակոբ 2.23–24:) Ինչո՞ւ էին Դավիթն ու Սողոմոնը անարժան օրինակներ հանդիսանում: (Տե՛ս Վ. և Ու. 132.38–39: Տերը Դավթին և Սողոմոնին կանայք և հարճեր էր տվել, սակայն նրանք մեղք գործեցին ուխտից դուրս ավելի շատ կանանց հետ ամուսնանալով: Կարող եք բացատրել, որ հնում հարճը համարվում էր ոչ թե անբարոյական սպասուհի, այլ հասարակական ավելի ցածր դիրք ունեցող օրինական կին (տե՛ս Բրյուս ՄակՔոնկի, *Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 154):
- Ինչպիսի՞ ամուսնական օրենքի մասին էր սովորեցնում Հակոբը Նեփիացիներին: (Տե՛ս Հակոբ 2.27–28:)

  Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցնում էր. «Ես շարունակ ասել եմ, որ ոչ մի տղամարդ չպետք է ունենա մեկից ավելի կին, եթե Տերը չի պատվիրում դա» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 324):

  Բացատրեք, որ Տերը տվել էր նման հրահանգ (տե՛ս Վ. և Ու. 132), սակայն հետագայում Նա հետ է դա վերցրել: Նա բազմակնություն թույլ տվեց, երբ հանգամանքները փոփոխվեցին (տե՛ս Պաշտոնական Հայտարարություն–1): Շեշտեք, որ բազմակնության մասին Տիրոջ օրենքը նույնն է, ինչ Հակոբի օրերին:

2. Ճանաչել բռնությունը և խուսափել դրանից

Հակոբը նախատում է Նեփիացիներին իրենց կանանց և երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի համար (տե՛ս Հակոբ 2.9, 31–32, 35): Վերջին Օրերի Եկեղեցու ղեկավարները նույնպես խստորեն նախազգուշացում են ստացել ամեն տեսակի չարաշահման դեմ: Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Խորհուրդը զգուշացրել են, որ «այն անձինք, ովքեր խախտում են ողջախոհության օրենքը, որոնք բռնություն են գործադրում իրենց կանանց և երեխաների հանդեպ, կամ ովքեր չեն կատարում իրենց ամուսնական պարտականությունները, մի օր պատասխանատվության կկանչվեն Աստծո առջև» (“The Family: A Proclamation to the World,” *Ensign,* Nov. 1995, 102):

Բռնությունը դա այն է, երբ որևէ մեկի հետ վերաբերվում կամ խոսում ես այնպիսի եղանակով, որը ֆիզիկական վնաս կամ լուրջ վիրավորանք կարող է հասցնել տվյալ անձին: Եթե նպատակահարմար է, դասարանի անդամների հետ քննարկեք հետևյալ հատուկ սահմանումները.

Երեխայի հանդեպ բռնությունը տեղի է ունենում, երբ ինչ-որ մեկը, ով երեխայի մոտ վստահություն է վայելում կամ երեխայի վրա իշխանություն ունի, սպառնում է կամ ֆիզիկական կամ էմոցիոնալ վնաս է պատճառում երեխային: Դա կարող է լինել ֆիզիկական բռնություն կամ անտեսում, էմոցիոնալ բռնություն, կամ սեռական բռնություն:

Ամուսնական բռնությունը նույնպես կարող է լինել ֆիզիկական, էմոցիոնալ կամ սեռական: Էմոցիոնալ բռնությունը կարող է ընդգրկել՝ մականուններով կոչելը, վիրավորական արտահայտություններ ասելը, ուժ գործադրելը, սպառնալը, մեկուսացնելը, վախեցնելը կամ օգտագործելը: Ֆիզիկական բռնությունը ընդգրկում է առաջին անհրաժեշտության իրերից զրկելը կամ ֆիզիկապես բռնանալը, օրինակ՝ հրելը, խեղդելը, ճանկռելը, ճմկտելը, ձերբակալելը կամ հարվածելը: Սեռական բռնությունը կարող է լինել և՛ էմոցիոնալ, և՛ ֆիզիկական: Այն կարող է ընդգրկել սեռական ոտնձգությունները, սեռական կապի պարտադրելը, ուժ գործադրելը կամ վախեցնելը:

Քահանայության ղեկավարները, ընտանիքի անդամները կամ այլ մարդիկ պետք է անեն հնարավորին ամեն-ինչ բռնությունը կանխելու և վնասված անձին օգնելու կամ բուժելու համար: Ղեկավարները և ընտանիքի անդամները նույնպես պետք է օգնեն բռնություն գործադրող անձին ապաշխարել, անհրաժեշտության դեպքում, կարող են օգտագործվել Եկեղեցու պատժամիջոցները:

Եթե դասարանը բռնության վերաբերյալ լրացուցիչ տեղեկության կարիք կունենա, ապա կարող եք դիմել եպիսկոպոսին Եկեղեցու կողմից թողարկված *Preventing and Responding to Child Abuse* (33196) և *Preventing and Responding to Spouse Abuse* (35869) բրոշյուրները ձեռք բերելու համար: Բացի դա, նրանք պետք է իրենց ազատ զգան հատուկ դեպքերում դիմելու եպիսկոպոսին բռնությանը արձագանքելու և դա կանխելու վերաբերյալ խորհրդի համար:

- Ի՞նչ կարող ենք անել բռնությունը ճանաչելու և կանխելու համար: Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել նրանց, ովքեր բռնության զոհ են դարձել:

3. Հակոբը նախազգուշացնում է ռասսայական նախապաշարմունքների դեմ

- Ինչո՞ւ էին շատ Նեփիացիներ Լամանացիներին ցածր համարում: (Տե՛ս Հակոբ 3.5, 9:) Ի՞նչ էր ասում Հակոբը այդ նախապաշարմունքների մասին: (Տե՛ս Հակոբ 3.8–9:) Ինչպե՞ս դրանք կարող են խանգարել Եկեղեցուն իր աստվածային միսիան կատարելուց:

  Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ասել է.

  «Վերականգնված ավետարանը աստվածային սիրո մասին ուղերձ է բոլոր մարդկանց համար, ամենուրեք, որի հիմքում ընկած է համոզմունքը, որ բոլոր մարդիկ մեկ Աստծո զավակներն են . . .

  «Մեր հավատքի արժեքը և զորությունը չեն սահմանափակվում պատմությունով, ազգությամբ կամ մշակույթով: Դրանք ոչ մի մարդու կամ ոչ մի սերնդի սեփականությունը չեն» (in Conference Report, Oct. 1991, 23–24; or *Ensign,* Nov. 1991, 19):

Դաս
13

Ձիթենու ծառերի այլաբանությունը

Հակոբ 5–7

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին ավելի լավ հասկանալ ձիթենու ծառերի Զենոսի այլաբանությունը և կիրառել այն կյանքում:

Նախապատ-րաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Հակոբ 5: Հակոբը մեջբերում է կատարում ընտանի և վայրի ձիթենու ծառերի Զենոսի այլաբանությունից, որը նկարագրում է Իսրայելի տան պատմությունը և ճակատագիրը:
   բ. Հակոբ 6: Հակոբն իր ունկնդիրներին հորդորում է ապաշխարել և հետևել Փրկչին:

2. Լրացուցիչ ընթերցանություն. 1 Նեփի 10.12–14; 22.3–5:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրատախտակին ձիթենու մի ծառ նկարեք և դասարանի անդամներին խնդրեք մեկ րոպե մտածելուց հետո ձիթենու ծառի մասին պատմել որքան հնարավոր է շատ: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին, նկարի կողքին: Եթե դասարանի անդամներն օգնության կարիք կունենան, առաջարկեք ստորև տրված կամ ուսուցանման լրացուցիչ մտքեր բաժնում բերված պատասխանները:



Բացատրեք, որ այս դասը քննարկում է, թե ինչպես է ձիթենու ծառն օգտագործվում որպես խորհրդանիշ Իսրայելի տան հետ Տիրոջ գործերը նկարագրելու համար:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները առօրյա կյանքում: Դասարանի

անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների այդ սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Հակոբը մեջբերում է կատարում ձիթենու ծառերի մասին Զենոսի այլաբանությունից:

Քննարկեք Հակոբ 5: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ այս գլխում Հակոբը մեջբերում է կատարում Մորմոնի Գրքում մի շարք անգամ նշվող Եբրայեցի մարգարե Զենոսի այլաբանությունից: Այլաբանությունը գրականության մեջ օգտագործվում է որպես եղանակ նկարագրելու որևէ երևույթ կամ մի երևույթով որևէ այլ երևույթ պատկերելու համար: Զենոսի այլաբանության մեջ ձիթենու ծառերն օգտագործվում են Իսրայելի պատմությունն ամփոփելու և ճակատագիրը կանխատեսելու նպատակով:

- Ինչպիսի՞ խորհրդանիշներ էր օգտագործում Զենոսն իր այլաբանության մեջ: Ո՞րն է այդ խորհրդանիշների իմաստը:

  Դասարանի անդամներին թույլ տալով հնարավորին չափ ակտիվորեն մասնակցել, այլաբանության մեջ գտեք հիմնական խորհրդանիշները և նրանց նշանակությունը: Դրանք գրեք գրատախտակին: Ամբողջ ցուցակը պետք է ընդգրկի.

ԶԵՆՈՍԻ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդանիշ	Իմաստը
Այգի	Աշխարհը
Այգու Տերը	Հիսուս Քրիստոսը
Ընտանի ձիթենու ծառը	Իսրայելի տունը, Տիրոջ ուխտի ժողովուրդը
Վայրի ձիթենու ծառը	Հեթանոսները (ժողովուրդներ, որոնք չեն ծնվել Իսրայելի տնից)
Ճյուղերը	Մարդկանց խմբերը
Ծառաները	Մարգարեները և ծառայության կանչված այլ մարդիկ
Պտուղը	Մարդկանց կյանքը և գործերը

  Այս ցուցակը թող մնա գրատախտակի վրա ամբողջ դասի ընթացքում

- Այլաբանությունը սկսում է նրանով, որ այգու տերը բացահայտում է, որ ընտանի ձիթենու ծառը սկսել է փտել (Հակոբ 5.3–4): Ի՞նչ է ներկայացնում այդ փտումը: (Ուրացությունը:) Ի՞նչ արեց այգում տերը, երբ բացահայտեց, որ իր ընտանի ձիթենու ծառը փտում է: (Տե՛ս Հակոբ 5.4–14: Կարող եք բացատրել, որ պատվաստումը մի եղանակ է, որի միջոցով մի բույսը միանում է մյուսին այնպես, որ դառնում է դրա մշտական մասը:) Ինչո՞ւ տերը ծառային խնդրեց պատվաստել վայրի ճյուղերից մի քանիսը: (Տե՛ս Հակոբ 5.11, 18:)

- Ի՞նչ է ներկայացնում պատվաստումն այս այլաբանության մեջ: (Հեթանոսների միացումն Իսրայլի տանը մկրտության միջոցով:) Ե՞րբ ավետարանն առաջին անգամ տրվեց Հեթանոսներին: (Տե՛ս Գործք 10:)

- Ի՞նչ էր ներկայացնում ընտանի ճյուղերի վերատնկումը այգու հեռավոր մասում (Տե՛ս 1 Նեփի 10.12–13:) Ինչպիսի՞ հատուկ խմբեր կարող են ներկայացնել այդ ընտանի ճյուղերը: (Տե՛ս 1 Նեփի 2.19–20; 22.3–4:) Ինչո՞ւ Իսրայելը ցրվեց: (Տե՛ս Ամոս 9.8–9:)

- Այգու տերն իր ծառայի հետ միասին շարունակ աշխատում էր իր ծառն էտելու, շուրջը փորելու և սնուցելու համար: Ի՞նչ է սա սովորեցնում Իր ժողովրդի կյանքում Հիսուս Քրիստոսի գործերի մասին:
- Երբ տերն երկրորդ անգամ այցելեց այգին, ինչպիսի՞ն էին ընտանի ծառի վրա պատվաստված վայրի ճյուղերը: (Տե՛ս Հակոբ 5.15–18:) Ի՞նչ է խորհրդանշում բարի պտուղը: Ինչպե՞ս կարող են նորադարձները Եկեղեցուն կյանք և զորություն պարգևել:
- Ի՞նչ տերը տեսավ, երբ այցելեց այգու տարբեր մասերում տնկած ընտանի ճյուղերին (Տե՛ս Հակոբ 5.19–25: Նշեք, որ աղքատ հողում տնկած ճյուղերը տվեցին ինչպես լավ, այնպես էլ վատ պտուղներ:) Ինչպե՞ս է այս ամենը վերաբերվում մեզ այսօր:
- Երբ տերն այցելեց այգին երրորդ անգամ, ի՞նչ էր պատահել բոլոր պտուղներին: (Տե՛ս Հակոբ 5.29–32, 37–42:) Ի՞նչ են խորհրդանշում փչացած պտուղները: (Համընդհանուր ուրացություն:) Ի՞նչն էր ուրացության պատճառը: (Տե՛ս Հակոբ 5.37, 40, 48:) Ի՞նչ կարող է խորհրդանշել այգու «անբարտավանությունը»: Ինչպե՞ս մեր անբարտավանությունը կամ հպարտությունը, կարող է զրկել մեզ լավ պտուղ բերելուց:
- Իր փչացած այգին տեսնելուց հետո տիրոջ պատասխանն ի՞նչ է մեզ ասում Իր ժողովրդի հանդեպ Տիրոջ զգացմունքների մասին: (Տե՛ս Հակոբ 5.41, 47:) Իմանալով, որ Տերը սիրում է ձեզ, ինչպիսի՞ տարբերություն եք զգում ձեր կյանքում:

  Կարող եք նշել Տիրոջ սերը մեր հանդեպ պատկերող այլ հատվածներ: Որոշ առաջարկություններ տրվում են ստորև.

  ա. «Ես կէտեմ այն, և կփորեմ նրա շուրջը, և կսնուցեմ այն, որ . . . չոչնչանա» (Հակոբ 5.4):
  բ. «Ինձ վշտացնում է, որ ես պետք է կորցնեմ այս ծառը» (Հակոբ 5.7):
  գ. «Ի՞նչ անենք ծառի համար, որ ես նորից լավ պտուղ պահպանեմ՝ իմ սեփական անձի համար» (Հակոբ 5.33):
  դ. «Ես կարողանամ ուրախություն ունենալ իմ այգու պտղով» (Հակոբ 5.60):
- Ի՞նչ որոշեց անել տերը իր փչացած այգին փրկելու համար: (Տե՛ս Հակոբ 5.49–54, 58, 62–64: Նա որոշեց մեկ անգամ ևս սնուցել և էտել այգին և նորից պատվաստել վերատնկած ճյուղերը առաջին ծառին:) Ի՞նչ են ներկայացնում այդ վերջնական սնուցումը, էտումը և պատվաստումը: (Տե՛ս 1 Նեփի 10.14; 2 Նեփի 29.14; Վ և Ու 33.3–6: Ավետարանի վերականգնումը և ցրված Իսրայելի հավաքումը:)
- Ովքե՞ր են Հակոբ 5.61, 70-ում նշված «ուրիշ ծառաները»: (Տե՛ս Վ և Ու 133.8:) Թեպետ և այդ ծառաները քիչ են քանակով, որո՞նք են նրանց ջանքերի արդյունքները: (Տե՛ս Հակոբ 5.71–75:) Ինչպե՞ս կարող ենք Տիրոջ այգում օգնել այդ վերջնական սնուցման, էտման և պատվաստման գործում:

2. Հակոբն իր ունկնդիրներին կոչ է անում ապաշխարել և հետևել Քրիստոսին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք Հակոբ 6-ից ընտրված հատվածները:

- Ի՞նչ մարգարեացավ Հակոբը Զենոսի այլաբանությանը անդրադառնալուց հետո: (Տե՛ս Հակոբ 6.1:) Ո՞ր ժամանակահատվածի մասին էր խոսվում Հակոբ 6.2-ում: (Վերջին օրերի մասին:) Ի՞նչ է սա մեզ ասում Զենոսի այլաբանությունը մեզ վերագրելու մասին:
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հակոբ 6.4–5: Ի՞նչ են այս հատվածները մեզ սովորեցնում այն մասին, թե ինչպես Փրկիչը կհավաքի Իսրայելը վերջին օրերին:
- Ինչպիսի՞ ավետարանական սկզբունքներ էր շեշտում Հակոբը նրանից հետո, երբ վկայեց, որ Զենոսի այլաբանության բոլոր իրադարձությունները պետք է իրականանան: (Տե՛ս Հակոբ 6.3–13:) Որո՞նք էին այն մարդկանց պարտականությունները, ովքեր «սնուցվում էին Աստծո բարի խոսքով»: (Տե՛ս Հակոբ 6.11–12; Մորոնի 6.3–4:) Որո՞նք են այն ճանապարհները, որոնց միջոցով կարելի է կատարել այդ պարտականությունները:

(Ծեշտեք, որ Եկեղեցու ցանկացած անդամ կարող է կատարել այդ պարտականությունները: Օրինակ, մենք կարող ենք հրավիրել մեր ոչ-անդամ ընկերոջը զրուցել միսիոներների հետ, կարող ենք ջանասիրաբար ծառայել որպես տնային ուսուցիչներ կամ այցելող ուսուցիչներ, իսկ զույգերը կարող են ծառայել որպես լրիվ օրվա միսիոներներ:)

Եզրափակում

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Այսօր Վերջին Օրերի Սրբերը որպես այգու ծառաներ գնում են աշխարհի բոլոր ծայրերը՝ հավաքելու պտուղները և ամբարելու դրանք Տիրոջ եկող ժամանակի համար» (*Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 4.142): Ծեշտե՛ք, որ մենք պետք է մասնակցենք մեծ հավաքման գործին: Քանի որ մենք սնուցվել ենք Տիրոջ կողմից, մենք պարտավոր ենք օգնելու ուրիշներին նույնպես ստանալու այդ սնուցումը:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. Սերեմի կեղծ ուսմունքները

Քննարկե՛ք Հակոբ 7.1–23-ում գտնվող Սերեմի պատմությունը:

- Ինչպե՞ս էր Սերեմը բազմաթիվ մարդկանց հեռացնում ճշմարտությունից: (Տե՛ս Հակոբ 7.1–7:) Ինչպիսի՞ վկայություն կա մեր օրերում այն մասին, թե ինչպես են որոշ մարդիկ նման եղանակներ օգտագործում մյուսներին Քրիստոսից հեռացնելու համար:
- Ինչպե՞ս Հակոբն ի վիճակի եղավ կարկամեցնել Սերեմին: (Տե՛ս Հակոբ 7.8–22:) Ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել հակա-Քրիստոսների խաբեություններից: (Տե՛ս Հակոբ 7.23; Հռոմեացիս 16.17–18; Եփեսացիս 4.11–15:)

  Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «*Աշխարհում չկա առավել կարևոր բան, քան Հիսուս Քրիստոսի ավետարանին հնազանդվելը:* Եկե՛ք քննենք սուրբ գրությունները: Եկե՛ք իմանանք, ինչ է Տերը հայտնել: Եկե՛ք մեր կյանքը ներդաշնակության մեջ դնենք Նրա ճշմարտության հետ: Այդ ժամանակ մենք չենք խաբվի» (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1.301):

2. Լրացուցիչ տեղեկություններ ձիթենու ծառի մասին

Որքան շատ մենք իմանանք ձիթենու ծառերի մասին, այնքան ավելի լավ կհասկանանք, թե ինչու էր Զենոսը ներշնչվել օգտագործելու այս ծառը՝ Իսրայելը խորհրդանշելու համար: Եթե նպատակահարմար է, օգտագործեք այս տեղեկությունները դասի ժամանակ (անհրաժեշտության դեպքում այս տեղեկությունը կարող եք օգտագործել ուշադրության վարժության ժամանակ:)

ա. Ձիթենին կենդանի ծառ է, որը կարող է շատ պտուղներ տալ: Այն շարունակ սնուցում է պահանջում իր գոյության համար:
բ. Ձիթենու ճյուղը սովորաբար օգտագործվում է որպես խաղաղության խորհրդանիշ:
գ. Ծառը պետք է խնամքով էտվի բերքառատ լինելու համար:
դ. Որպեսզի վայրի ձիթենին դառնա ընտանի և պտղաբեր, դրա իրանը պետք է ամբողջովին կտրվի և ընտանի ձիթենու ճյուղ պետք է պատվաստվի վայրի ծառի իրանին:
ե. Ձիթենին կարող է դարերի ընթացքում պտղաբեր լինել: Ներկայումս Իսրայելում աճող որոշ ձիթենիներ արդեն 400 տարուց ավել է առատ պտուղներ են տալիս:
զ. Երբ ծառը ծերանում և սկսում է մեռնել, արմատները նոր շիվեր են տալիս, որոնք, եթե պատվաստվեն և էտվեն, կարող են վերածվել լիարժեք հասուն ծառի: Այսպիսով, ծառի արմատները կարող են շարունակել ապրելը՝ հազարամյակների ընթացքում նոր ծառեր և պտուղներ տալով:

3. Վարժություն երիտասարդների համար

Ձիթենու ծառի այլաբանությունը կարող է դժվար հասկանալի լինել երիտասարդների համար: Քննարկման ժամանակ դասարանի անդամներին կարող եք խնդրել պատկերել այլաբանությունը գրատախտակի վրա: Կամ կարող եք դասարանը այգու (աշխարհի) նման դասավորել և դասարանի անդամներին խնդրել քննարկման ժամանակ վարվել ստորև տրված եղանակով.

Մեծ թղթի վրա նկարեք ձիթենու ծառը և անվանեք այն *Երուսաղեմ (կամ Իսրայելի տուն):* Տեղավորեք նկարը հատակին սենյակի մեջտեղում: Այլ թղթերի վրա նկարեք ձիթենու մեկական ճյուղ: Այդ նկարները համապատասխանորեն անվանեք տարբեր աշխարհամասերի անուններով, ուր ցրվել է Իսրայելի տունը (*Ամերիկա, Եվրոպա, Աֆրիկա, Ասիա և այլն*): Այդ նկարները տեղավորեք հատակին՝ Իսրայելի տան նկարի շուրջը: Դասարանի անդամներին խնդրեք շարժվել մի նկարից մյուսը՝ ըստ այլաբանության համապատասխան դեպքերի: Օրինակ, դասարանի անդամներից մի քանիսին խնդրեք ներկայացնել Իսրայելի տունը (ընտանի կամ բնական ճյուղերը), մյուսներին՝ Հեթանոսներին (վայրի ճյուղերը): Երբ քննարկում եք այգու տիրոջ կողմից վայրի ճյուղերի պատվաստումը, Հեթանոսներին ներկայացնող դասարանի անդամներին խնդրեք շարժվել դեպի կենտրոնական նկարը: Երբ քննարկում եք, թե ինչպես է այգու տերը վերցնում ընտանի ճյուղերը և տնկում դրանք այգու տարբեր մասերում, Իսրայելի տունը ներկայացնող դասարանի անդամներին խնդրեք շարժվել դեպի հիմնական նկարի շուրջը դասավորված նկարները:

«Իմաստուն նպատակի համար»

Դաս
14

Ենովս, Հարոմ, Օմնի, Մորմոնի Խոսքերը

Նպատակ Շեշտել, որ սուրբ գրությունները գրվել և պատրաստվել են մեզ առաջնորդելու և ուղղություն տալու համար:

Նախապատրաստություն

1. Կարդացե՛ք հետևյալ սուրբ գրությունները, խորհե՛ք դրանց շուրջ և աղոթե՛ք դրանց մասին.

   ա. Ենովս: Իր հոր ուսմունքների տպավորության ներքո Ենովսն աղոթում է ներման համար: Ներում ստանալուց հետո, Ենովսն աղոթում է իր ժողովրդի՝ Նեփիացիների և իր ժողովրդի թշնամիների՝ Լամանացիների համար: Նա Տիրոջից խնդրում է պահպանել Նեփիացիների հիշատակարանները:

   բ. Հարոմ: Հարոմը գրում է, որ Լամանացիները հաճախ պատերազմում էին Նեփիացիների հետ: Նեփիացիները հաջողությամբ պաշտպանվում էին և բարգավաճում իրենց երկրում, որովհետև մարգարեները և ուսուցիչները շարունակ կոչ էին անում նրանց ապաշխարել, պահել Աստծո պատվիրանները և սպասել Մեսիայի գալստին:

   գ. Օմնի: Օմնին, Ամարոնը, Քեմիսը, Աբինադոմը և Ամաղեկին գրում են հիշատակարաններում: Նեփիացիներն ունեցել էին խաղաղության և պատերազմների ժամանակներ, և նրանց «առավել անբարիշտ մասը կործանվել էր»: Մոսիան և նրա հետևորդները հայտնաբերում են Զարահեմլայի ժողովրդին (Մուղեքացիներին):

   դ. Մորմոնի Խոսքերը: Մորմոնը միացնում է Նեփիի փոքր թիթեղները և Նեփիի մեծ թիթեղների իր կրճատումները, իմանալով, որ դա անում է «իմաստուն նպատակի համար»:

2. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժություն, ապա դասարանի անդամներից մեկին խնդրեք կիսվել այնպիսի մի դեպքով կամ զգացումով, որը կարող էր մոռացվել, եթե գրի չառնվեր օրագրում: Կամ դուք ինքներդ պատրաստվեք կիսվել ձեր օրագրում գրի առնված նման դեպքով:

3. Հետևյալ ցուցակը արտագրեք մի մեծ թղթի վրա կամ գրեք գրատախտակին.

Մորմոնի և Մորոնիի կողմից կրճատված և կազմված հիշատակարանները



4. Եթե առկա է «Մորմոնը կրճատում է թիթեղները» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ժամանակ (62520; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 306):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի այն անդամին, որին նախօրոք հանձնարարված էր, խնդրեք պատմել այն դեպքի մասին, որը նա մոռացած կլիներ, եթե չգրեր իր օրագրում (կամ պատմեք ձեր փորձից): Դասարանի անդամներին խնդրեք պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչո՞ւ եք գրել այդ դեպքի մասին (կամ զգացմունքի): Ինչո՞ւ է օգտակար այդ տեղեկությունը ունենալ օրագրում:

Այնուհետև դասարանի անդամներին խնդրեք քննարկել հետևյալ հարցը.

- Ի՞նչ պատճառներ էր Նեփին կարևորում հիշատակարանը պահելու համար: (Տե՛ս 1 Նեփի 6.4; 9.5; 19.3; 2 Նեփի 25.26:)

Բացատրեք, որ հետագայում Մորմոնի Գիրք դարձած հիշատակարանների գրողները մեծ զորությամբ աշխատել են, որպեսզի պահպանեն Տիրոջ խոսքը և Նրա պատվիրանները պահելու իրենց ժողովուրդների փորձությունները: Նրանք հասկանում էին այդ տեղեկությունը ապագա սերունդների համար գրի առնելու կարևորությունը: Այս հիշատակարանը գրելիս նրանց ջանասիրության և Աստծո պաշտպանության շնորհիվ է, որ մենք այսօր հնարավորություն ունենք սովորելու այն մարդկանց հոգևոր հաջողություններից և ձախողումներից, որոնք ապրել են մեզանից առաջ:

Նշեք, որ այս դասում քննարկվող չորս գրքերը՝ Ենովսի, Հարոմի, Օմնիի Գրքերը և Մորմոնի Խոսքերը, գրվել են ութ հոգու կողմից, որոնք, ինչպես Նեփին, հասկանում էին սուրբ հիշատակարանները գրելու կարևորությունը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը կամ դասարանային նյութերը, որոնք լավագույնս կհամապատասխանեն դասարանի անդամների կարիքներին: Քննարկեք, ինչպես կարելի է ընտրված հատվածները կիրառել մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների այդ սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ենովսն աղոթում է իր, Նեփիացիների և Լամանացիների համար:

Քննարկեք Ենովսի գիրքը: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Ո՞ւմ էր Ենովսը երախտապարտ ավետարանը սովորելու համար: (Տե՛ս Ենովս 1.1:) Ո՞վ էր Ենովսի հայրը: (Տե՛ս Հակոբ 7.27:) Ի՞նչ է նշանակում սովորեցնել երեխաներին «խրատով և Տիրոջ ուսմունքի մեջ»: (Տե՛ս ստորև տրված մեջբերումը:) Ինչպե՞ս կարող է արդար ծնողների ուսուցանումը և օրինակը երեխաներին օգնել զարգացնել Փրկչի հանդեպ հավատքը:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ծնողներին կոչ է արել իրենց երեխաների համար արդար օրինակ ծառայել, ինչպես Ենովսի հայրն եղել էր Ենովսի համար. «Ձեր երեխաներին վերաբերվեք որպես Աստծո որդիների և դուստրերի: Եղե՛ք բարի: Աղոթե՛ք նրանց համար: Առաջնորդե՛ք նրանց և Աստված կօրհնի և՛ նրանց, և՛ ձեզ» (in *Church News,* 1 Nov. 1997, 2):

- Ի՞նչ ազդեցություն գործեցին Ենովսի վրա Հակոբի ուսմունքները: (Տե՛ս Ենովս 1.3–4:) Ինչպե՞ս էր Ենովսը նկարագրում Տիրոջն ուղղված իր աղոթքը: (Տե՛ս Ենովս 1.2:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Ենովսը իր ապրումները «գոտեմարտ» կոչում: Ի՞նչ կարող ենք սովորել ապաշխարության մասին՝ ներում որոնելու Ենովսի փորձից:
- Ինչպե՞ս Ենովսն իմացավ, որ իր մեղքերը ներված են: (Տե՛ս Ենովս 1.5–6:) Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ, որ մեր մեղքերը ներված են: (Տե՛ս ստորև բերված մեջբերումը:) Ի՞նչը Ենովսին հնարավորություն տվեց ստանալու իր մեղքերի ներումը: (Տե՛ս Ենովս 1.7–8:) Ինչո՞ւ է Քրիստոսի հանդեպ հավատքը անհրաժեշտ ապաշխարելու և ներում ստանալու համար:

  Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել է. «Երբ կգա ժամանակը, որ դուք արած կլինեք հնարավորին ամեն-ինչ ձեր մեղքերից ապաշխարելու համար . . ., դուք կցանկանաք ստանալ հաստատումը, արդյոք Տերն ընդունեց այդ ամենը: Ապաշխարություն որոնելու ձեր գործում, եթե փնտրում եք և գտնում եք խղճի հանգստություն, այդ նույն ձևով կարող եք իմանալ, որ Տերն ընդունել է ձեր ապաշխարությունը» (*Stand Ye in Holy Places* [1974], 185):
- Իմանալով, որ իր մեղքերը ներված են, ինչի՞ համար Ենովսն աղոթեց: (Տե՛ս Ենովս 1.9, 11–13:) Ինչո՞ւ էր Ենովսը ցանկանում հավաստիանալ, որ հիշատակարանը կպահպանվի: (Տե՛ս Ենովս 1.13–14:)
- Ի՞նչ կարող ենք սովորել Ենովսի աղոթքից:
- Ենովսն իր ժամանակի Նեփիացիներին նկարագրեց որպես «խստապարանոց ժողովուրդ», որի վրա ազդում էր միայն «չափից դուրս խստությունը» և «խոսքի անչափ մեծ պարզությունը» (Ենովս 1.22–23): Ինչպիսի՞ նմանություններ եք տեսնում Ենովսի ժամանակի Նեփիացիների և այսօրվա մարդկանց միջև:
- Ի՞նչն է ձեզ վրա տպավորություն գործել Ենովսի հավատքից և վկայությունից: (Տե՛ս հատկապես Ենովս 1.15–18, 26–27:)

2. Նեփիացիները բարգավաճում են շարունակ ապաշխարության շնորհիվ:

Կարդացեք և քննարկեք Հարոմի գրքից ընտրված հատվածները:

- Ո՞րն էր, ըստ Հարոմի, հիշատակարանում գրելու նպատակը: (Տե՛ս Հարոմ 1.1–2:) Ինչո՞ւ Հարոմը գրի չէր առնում այն մարգարեությունները և հայտնությունները, որոնք ստանում էր:
- Ինչպե՞ս Հարոմը նկարագրեց իր ժողովրդին՝ Նեփիացիներին (Տե՛ս Հարոմ 1.3–4; տե՛ս նաև ուսուցանման լրացուցիչ մտքեր բաժինը:) Ինչպե՞ս նրանք կարողացան բարգավաճել երկրում և հաղթել Լամանացիներին: (Տե՛ս Հարոմ 1.5, 7–12:)
- Ի՞նչ դեր էին խաղում մարգարեները, քահանաները և ուսուցիչները Նեփիացիների հաջողությունների մեջ: (Տե՛ս Հարոմ 1.11–12:) Ի՞նչ է նշանակում «խոսքով խայթում էին նրանց սրտերը» (Հարոմ 1.12): Ե՞րբ է ձեր սիրտը խոցվել մարգարեի, Եկեղեցու այլ ղեկավարի կամ ուսուցչի խոսքերից:
- Նեփիացիների առաջնորդները համոզում էին ժողովրդին «սպասելու Մեսիային և հավատալու նրա գալուն այնպես, կարծես թե նա արդեն եկել էր» (Հարոմ 1.11; տե՛ս նաև Մոսիա 3.13): Ինչպե՞ս կարող ենք հետևել այս խորհրդին պատրաստվելով Փրկչի Երկրորդ Գալստին:

3. Օմնին, Ամարոնը, Քեմիսը, Աբինադոմը և Ամաղեկին գրում են հիշատակարանում:

Կարդացեք և քննարկեք Օմնիի Գրքից ընտրված հատվածները: Նշեք, որ Օմնիի Գիրքը տալիս է մոտ 200 տարիների պատմություն և գրված է հինգ հոգու կողմից, սակայն միայն 30 հատված է պարունակում:

- Թեպետ և Օմնիի Գրքի գրողները քիչ են գրել, նրանցից յուրաքանչյուրը ենթարկվել է թիթեղների վրա գրելու և դրանք պահպանելու պատվիրանին: Ինչո՞ւ էր թիթեղների պահպանումն այդքան կարևոր:

Բացատրեք, որ Օմնիի Գրքի երկրորդ մասը, որը գրվել է Ամաղեկիի կողմից, ցուցադրում է հիշատակարանները պահպանելու կարևորությունը, պատմելով, թե ինչ պատահեց այն ժողովրդին, որը չէր պահպանում իր հիշատակարանները:

- Ամաղեկին գրի առավ Մոսիայի և նրա հետևորդների պատմությունը, որոնց Տերը պատվիրել էր հեռանալ Նեփիի երկրից: Ո՞ւր առաջնորդվեցին Մոսիան և նրա հետևորդները: (Տե՛ս Օմնի 1.13:) Ո՞ւմ նրանք հայտնաբերեցին Զարահեմլայի երկրում: (Տե՛ս Օմնի 1.14:) Որտեղի՞ց էին եկել այդ մարդիկ: (Տե՛ս Օմնի 1.15–16; տե՛ս նաև 1 Նեփի 1.4, որը բացատրում է, որ Սեդեկիան թագավորում էր Երուսաղեմում այն ժամանակ, երբ Լեքին և իր ընտանիքը հեռացան անապատ:)

- Ինչո՞ւ էին Զարահեմլայի մարդիկ (Մուղեքացիները) այդքան երջանիկ՝ տեսնելու Մոսիային և նրա հետևորդներին: (Տե՛ս Օմնի 1.14:) Ըստ Ամաղեկիի, ի՞նչ ազդեցություն ունեցավ Մուղեքացիների վրա Երուսեղեմը թողնելիս իրենց հետ ոչ մի հիշատակարան չբերելը: (Տե՛ս Օմնի 1.17: Նրանց լեզուն ապականվել էր և նրանք կորցրել էին Հիսուս Քրիստոսի և Նրա ուսմունքների մասին իրենց գիտելիքը:) Ի՞նչ կարող էր մեզ պատահել, եթե չունենայինք սուրբ գրությունները: (Տե՛ս Մոսիա 1.3–5:) Ի՞նչ է պատահում, երբ, ունենալով սուրբ գրությունները, չենք ուսումնասիրում դրանք:

Բացատրեք, որ Մուղեքացիների կողմից պահված քարե փորագրությունները թարգմանելով, Մոսիան իմացավ մեկ այլ քաղաքակրթության՝ Հարեդացիների մասին, որոնք ապրել էին այդ երկրում (Օմնի 1.20–22): Հարեդացիներն արևմտյան կիսագունդ էին եկել Բաբելոնյան Աշտարակի ժամանակներում: Կորիանթումրը, որը Հարեդացիների ազգի վերջին ներկայացուցիչն էր, որոշ ժամանակ ապրել էր Մուղեքացիների հետ: Նշեք, որ Հարեդացիների հիշատակարանները կրճատվել են Եթերի գրքում և այն կքննարկվի հետագա դասերում:

- Ի՞նչ կարող ենք սովորել Ամաղեկիի մասին Օմնի 1.25–26-ից: Ինչպե՞ս կարող ենք «մատուցել [մեր] ողջ հոգիները որպես ընծա» Փրկչին, ինչպես խորհուրդ էր տալիս Ամաղեկին:

4. Մորմոնը միացնում է Նեփիի փոքր թիթեղները մեծ թիթեղների իր կրճատումների հետ:

Կարդացե՛ք և քննարկե՛ք Մորմոնի Խոսքերից ընտրված հատվածները: Նշեք, որ 1 Նեփիից մինչև Օմնին Մորմոնի Գիրքը խստորեն պահպանում է պատմական ժամանակագրությունը: Սակայն, Մորմոնի Խոսքերը, գրվել են Ամաղեկիի կողմից Օմնիի գիրքն ավարտելուց մոտ 500 տարի հետո: Եթե պատրաստվում էիք օգտագործել «Մորմոնը կրճատում է թիթեղները» նկարը, ապա ցուցադրեք այն այժմ:

- Ե՞րբ և ինչո՞ւ Մորմոնը գրեց Մորմոնի Խոսքերը: (Տե՛ս Մորմոնի Խոսքերը 1.1–5:)

  Բացատրեք, որ Նեփիի մեծ թիթեղները կրճատելուց հետո Մորմոնը գտավ Նեփիի փոքր թիթեղները և ընդգրկեց դրանք հիշատակարանի մեջ (Մորմոնի Խոսքերը 1.3–5): Մորմոնի Գրքի առաջին վեց գրքերը, սկսած 1 Նեփի-ից մինչև Օմնի, այդ փոքր թիթեղների թարգմանությունն է: Մորմոնի Խոսքերը վերնագրված գիրքը պարունակում է Մորմոնի բացատրությունը փոքր թիթեղների ընդգրկման վերաբերյալ: Դա անցումային բաժին է փոքր թիթեղներից դեպի մեծ թիթեղները:

- Ինչպիսի՞ն էր Մորմոնի տպավորությունը փոքր թիթեղներից: (Տե՛ս Մորմոնի Խոսքերը 1.4, 6:) Ինչո՞ւ նա որոշեց ընդգրկել փոքր թիթեղները իր հիշատակարանի մեջ: (Տե՛ս Մորմոնի Խոսքերը 1.7:) Ո՞րն էր այն «իմաստուն նպատակը», որի մասին խոսում էր Մորմոնը:

Ցուցադրեք սխեման, որը պատկերում է հիշատակարանը, որը Մորմոնը և Մորոնին կրճատել և կազմել են (տե՛ս «Նախապատրաստություն», 4)։ Նշեք, որ սխեմայում բացակայող գրքերը (Մորմոնի Խոսքերը, Մորմոն և Մորոնի) գրվել են Մորմոնի և Մորոնիի կողմից։

Բացատրեք, որ Նեփիի փոքր թիթեղները գրվել են մոտավորապես նույն ժամանակահատվածում (600-ից 200 տարի Ք. Ա.), ինչպես և մեծ թիթեղները։ Ոչ մի ակնհայտ պատճառ չկար Մորմոնի կողմից դրանք հիշատակարանի մեջ ընդգրկելու համար։ Սակայն Տերը գիտեր, որ մեծ թիթեղների առաջին գրառումների թարգմանությունը պետք է կորստի ենթարկվեր դարեր անց, երբ Մարտին Հարիսը Մորմոնի Գրքի 116 էջեր վերցրեց իր ընտանիքին և ընկերներին ցույց տալու համար։ Այս դեպքից հետո թարգմանության 116 էջեր կորցվեցին, և Տերը Ջոզեֆ Սմիթին պատվիրեց չթարգմանել դրանք նորից (Վ և Ու 10.8–14)։ Այդ գրառումները այսօր բացակայում են Մորմոնի Գրքից։ Փոխարենը, նույն ժամանակահատվածը նկարագրված է փոքր թիթեղների գրառումներով։

- Ո՞րն էր, ըստ Մորմոնի, այդ ամբողջ սուրբ հիշատակարանի կրճատման պատճառը։ (Տե՛ս Մորմոնի Խոսքերը 1.2, 8; տե՛ս նաև Մորմոնի Գրքի վերնագրի էջը։) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի Մորմոնի Գիրքը կարդալիս մենք հիշենք դա։

Եզրափակում

Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Մորմոնի Գրքի գրողները պահել և պահպանել են իրենց ժողովրդի հիշատակարանները, որպեսզի ապագա սերունդները իմանան Տիրոջ գործերը այդ ժողովուրդների հետ։ Դասարանի անդամներին խրախուսեք ուսումնասիրել Մորմոնի Գիրքը, որպեսզի նրանք կարողանան առաջնորդվել դրանում պարունակված Աստծո խոսքով։

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին։

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը։ Կարող եք այն օգտագործել որպես դասի մաս։

Զգալ Սուրբ Հոգու հուշումները

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հարոմ 1.3։

- Ինչպիսի՞ չորս պայմաններ նշեց Հարոմը, որոնք կարող են խանգարել մեզ զգալ Սուրբ Հոգու հուշումները։ (Սրտերի կարծրություն, ականջների խլություն, մտքերի կուրություն և պարանոցների խստություն։)

Դասարանի անդամների հետ քննարկեք այդ չորս խորհրդանշական պայմանները և այն, թե ինչպես կարող են դրանք մեզ խանգարել զգալ Սուրբ Հոգու հուշումները։

- Ի՞նչ օրհնություններ կտրվեն նրանց, ովքեր կհաղթահարեն այդ պայմանները։ (Տե՛ս Հարոմ 1.4։)

Դաս
15

«Հավերժ պարտական եք ձեր Երկնային Հորը»

Մոսիա 1–3

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին ավելի լավ հասկանալ իրենց պարտքը Աստծո առջև և խրախուսել նրանց իրենց միջից «հանել բնական մարդուն … Տեր Քրիստոսի քավությամբ» (Մոսիա 3.19):

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Մոսիա 1: Բենիամին թագավորն իր որդիներին սովորեցնում է արույրե թիթեղների վրա պարունակված ճշմարտությունների կարևորության մասին: Նա ընտրում է իր որդի Մոսիային իրենից հետո թագավոր դառնալու համար և պատվիրում է նրան ի մի հավաքել ժողովրդին:
   բ. Մոսիա 2: Բենիամին թագավորը մարդկանց սովորեցնում է այն մասին, որ, երբ նրանք ծառայում են մյուսներին, ապա ծառայում են Աստծուն: Նա հիշեցնում է, որ նրանք «հավերժ պարտական են … Երկնային Հորը՝ մատուցելու նրան բոլորը», ինչ ունեն և կան:
   գ. Մոսիա 3: Բենիամին թագավորը կրկնում է հրեշտակների մարգարեությունները Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին:

2. Եթե հետևյալ նյութերն առկա են, պատրաստվեք օգտագործել դրանք դասի ընթացքում:

   Բենիամին թագավորի նկարը (62298; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 307):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին խնդրեք նայել այս ձեռնարկի կազմի նկարին: Նշեք, որ դասարանի անդամի ուսուցման ուղեցույցի կազմի վրա պարունակվում է նույն նկարը: Այնուհետև կիսվեք հետևյալ տեղեկությամբ.

ա. Մորմոնի Գիրքը պարունակում է 238 գլուխներ:
բ. Այս գլուխներից միայն 50 (մոտ 21 տոկոսը) պարունակում են այն իրադարձությունների նկարագրությունը, որոնք տեղի են ունեցել Հիսուսի ծննդից հետո:
գ. Այս գլուխներից միայն 18-ը (մոտ 8 տոկոս) պարունակում են Նեփիացի ժողովրդին Հիսուսի այցի նկարագրությունը:

Դասարանի անդամներին խնդրեք մտքում մտածել հետևյալ հարցի շուրջը.

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է այս նկարը ընտրվել ներկայացնելու Մորմոնի Գրքի ուսուցման ձեռնարկը:

Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 3.13: Շեշտեք, որ Հիսուս Քրիստոսը Մորմոնի Գրքի կենտրոնական կերպարն է: Նրա Քավությունը վերաբերվում է այն մարդկանց, որոնք ապրել են Նրա երկրային ծառայությունից առաջ, Նրա երկրային

ծառայության ժամանակ և այսօր: Բացատրեք, որ այս և հետագա դասերը պետք է կենտրոնանան Բենիամին թագավորի խոսքերի վրա: Նա մարգարե-առաջնորդ էր, որն իր ժողովրդին օգնեց զարգացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը Նրա երկրային ծառայությունից և Քավությունից հարյուրավոր տարիներ առաջ:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Դասը պատրաստելիս և մատուցելիս, աշխատեք բավական ժամանակ թողնել Մոսիա 3 քննարկելու համար, որը զորեղ ուսմունքներ է պարունակում Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

1. Բենիամին թագավորը սովորեցնում է իր որդիներին և պատվիրում Մոսիային հավաքել ժողովրդին:

Քննարկեք Մոսիա 1: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Մորմոնի Գրքում Բենիամին թագավորն առաջին անգամ պատկերվում է ոչ թե որպես թագավոր, այլ որպես իր որդիներին սովորեցնող հայր (Մոսիա 1.2–8): Ի՞նչ է դա սովորեցնում Բենիամին թագավորի մասին: Ի՞նչ կարող են սովորել ծնողներն այս օրինակից:
- Ի՞նչ էր Բենիամին թագավորը սովորեցնում իր որդիներին (տե՛ս Մոսիա 1.2–7: Նշեք, որ 3 և 5 հատվածներում *խորհուրդներ* բառը վերաբերվում է հոգևոր այն ճշմարտություններին, որոնք տրվում են միայն հայտնության միջոցով:) Ո՞րն էր տարբերությունը սուրբ գությունները ուսումնասիրած Նեփիացիների և դրանք չկարդացած Լամանացիների միջև: (Տե՛ս Մոսիա 1.5:) Ինչպե՞ս եք այդ տարբերությունը նկատում ժամանակակից հասարակության մեջ: Ինչպե՞ս ծնողները կարող են օգնել իրենց երեխաներին սեր զարգացնել սուրբ գրությունների նկատմամբ:
- Բենիամին թագավորը Մոսիային տալիս է «պատասխանատվություն այն հիշատակարանների համար, որոնք փորագրված էին արույրե թիթեղների վրա» (Մոսիա 1.16): Տերը այսօրվա մարգարեներին, տեսանողներին և հայտնություններ ստացողներին պատվիրել է պահպանել սուրբ գրություններն ապահովության մեջ (տե՛ս Վ և Ու 42.56): Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի սուրբ գրությունները պահպանվեն ապահովության մեջ: (Տե՛ս Մոսիա 1.3–5:)
- Ինչո՞ւ Բենիամին թագավորն իր որդի Մոսիային խնդրեց հավաքել ժողովրդին: (Տե՛ս Մոսիա 1.10–12: Նշեք, որ անունը, որի մասին խոսում էր Բենիամին թագավորը, Քրիստոսի անունն էր: Իր խոսքի վերջում Բենիամին թագավորը մարդկանց սովորեցնում է իրենց վրա վերցնել Քրիստոսի անունը: Այս ուսմունքը կքննարկվի դաս 16-ում:)

2. Բենիամին թագավորն իր ժողովրդին սովորեցնում է Աստծո առջև նրանց հավերժական պարտքի մասին:

Կարդացե՛ք և քննարկե՛ք Մոսիա 2-ից ընտրված հատվածները:

- Ինչպե՞ս մարդիկ դասավորվեցին, երբ եկան տաճարի մոտ Բենիամին թագավորին լսելու: (Տե՛ս Մոսիա 2.5–6; տե՛ս նաև ուսուցանման լրացուցիչ մտքերից առաջինը:) Ի՞նչ արեց Բենիամին թագավորը, երբ տեսավ, որ ոչ բոլոր մարդիկ կարող են լսել իր խոսքերը: (Տե՛ս Մոսիա 2.7–8: Եթե պատրաստվել եք օգտագործելու Բենիամին թագավորի նկարը, ապա ցուցադրեք այն այժմ:) Ինչո՞վ էր այդ հավաքը հիշեցնում այսօրվա գերագույն կոնֆերանսը:
- Բենիամին թագավորը ժողովրդին հայտնեց, որ չէր կարգադրել նրանց հավաքվել իր խոսքերով կատակաբանելու համար (Մոսիա 2.9; նշեք, որ ինչ-որ մեկն ասել է, որ կատակաբանելը նշանակում է անլուրջ վերաբերվել այդ խոսքերին): Ի՞նչ նա խորհուրդ տվեց իրենց անել իր ուսմունքները լսելիս: (Տե՛ս Մոսիա 2.9:) Ի՞նչ է նշանակում բացել աչքերը, սրտերը և մտքերը ապրող մարգարեների խոսքերի առջև:

- Ի՞նչ տպավորություն ձեզ վրա գործեց Բենիամինի թագավորման եղանակը: (Տե՛ս Մոսիա 2.10–16:) Ինչպե՞ս ազդեց Բենիամին թագավորի առաջնորդությունը իր ժողովրդի վրա: (Տե՛ս Մոսիա 1.1; 6.7:)
- Ի՞նչ սովորեցրեց Բենիամին թագավորը ծառայության մասին: (Տե՛ս Մոսիա 2.17–19:) Ինչպե՞ս է ուրիշների համար մեր ծառայությունը ապացուցում մեր երախտագիտությունը Աստծու հանդեպ: Ինչպե՞ս է ծառայությունը ուրիշներին ներշնչում շնորհակալություն հայտնել իրենց երկնային Թագավորին: (Որոշ օրինակների համար տե՛ս Մոսիա 18.8–10; Վ. և Ու. 18.10–16:)
- Դասարանի անդամներից որևէ մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 2.20–21: Ի՞նչ է նշանակում լինել անպիտան ծառա: Ինչո՞ւ ենք մենք Աստծո անպիտան ծառաներ հանդիսանում, անգամ եթե փառավորում և ծառայում ենք նրան մեր ողջ հոգով (Տե՛ս Մոսիա 2.22–25; տե՛ս նաև ստորև տրված մեջբերումը և ուսուցանման լրացուցիչ մտքերից երկրորդը:) Ի՞նչ է սա սովորեցնում այն մասին, թե որքան է մեզ սիրում մեր Երկնային Հայրը:

  Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Ի՞նչ եք կարծում, մեզանից որևէ մեկի համար երբևէ հնարավոր կլինի, անկախ նրանից, թե որքան տքնաջան կաշխատենք, վարձահատույց լինել մեր Հոր և Հիսուս Քրիստոսի այն օրհնությունների համար, որոնք ստանում ենք նրանցից: Մեծագույն սերը, դրան ուղեկցող օրհնությունները, որոնք մեզ են շնորհվել Հիսուս Քրիստոսի խաչման, տանջանքների և հարության միջոցով, մեր մարմնական ըմբռնումից դուրս են: Մենք երբեք չենք կարողանա վարձահատույց լինել» (in Conference Report, Apr. 1966, 102; or *Improvement Era,* June 1966, 538):
- Որպես անպիտան ծառաներ մենք «հավերժ պարտական ենք մեր երկնային Հորը՝ մատուցելու նրան բոլորը, ինչ ունենք և՝ ենք» (տե՛ս Մոսիա 2.34): Ինչպե՞ս կարող ենք անել դա: (Տե՛ս Մոսիա 2.17, 22; 4.10:) Ի՞նչ մեզ կտա Երկնային Հայրը, եթե մենք տանք Նրան «բոլորը, ինչ ունենք և՝ ենք»: (Տե՛ս Մոսիա 2.22, 41; տե՛ս նաև Վ և Ու 84.38:)
- Ինչպիսի՞ն են պատվիրանները սովորելուց հետո դրանց չհնազանդվելու հետևանքները: (Տե՛ս Մոսիա 2.36–39:) Ըստ Բենիամին թագավորի, ո՞րն է պատճառը չվերջացող տանջանքի, որը հաճախ նմանեցվում է կրակի լճի: (Տե՛ս Մոսիա 2.38; տե՛ս նաև Մոսիա 3.23–27:)

3. Բենիամին թագավորը կրկնում է հրեշտակների մարգարեությունները Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 3-ից: Բացատրեք, որ իր ժողովրդին դիմելուց առաջ Բենիամին թագավորին մի հրեշտակ այցելեց, որն եկել էր «հայտնելու . . . մեծ ուրախության ավետիքը» (Մոսիա 3.1–4): Մոսիա 3 պարունակում է հրեշտակի ուղերձը:

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 3.5–10: Ինչո՞ւ Հիսուսը տարավ փորձություններ, մարմնի ցավ, քաղց, ծարավ և հոգնածություն: (Տե՛ս Ալմա 7.11–12:) Ինչո՞ւ Նա ապրեց տվայտանք իր ժողովրդի ամբարշտության պատճառով: (Տե՛ս ստորև բերված մեջբերումը այս հարցին պատասխանելու համար և հետևյալ երեք հարցերը:) Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Նա Աստծո և Մարիամի որդին էր: Ինչո՞ւ Նա զոհաբերեց Իր կյանքը: Ինչո՞ւ է այդ ուղերձը «ուրախության ավետիք» մեզ համար (Մոսիա 3.3):

  Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ասել է. «Մենք պետք է հիշենք, որ մեր Փրկիչը, և միայն Նա, ուժ գտավ զոհաբերելու Իր կյանքը և կրկին վերցնել այն: Իր մահկանացու մորից՝ Մարիամից ունակություն ձեռք բերեց մահանալու, իսկ Իր անմահ Հորից ունակություն ձեռք բերեց հաղթահարելու մահը: Մեր Փրկիչը, Հիսուս Քրիստոսը, պատրաստակամորեն և կամավոր գնաց դեպի Իր մահը, հայտնելով իր հետևորդներին, որ դա պետք է պատահեր: «Ինչո՞ւ», – կարող է հարցնել մեկը: Պատասխանն է՝ «անմահություն պարգևելու բոլոր մարդկությանը և տալու հավերժական կյանքի խոստում բոլոր նրանց,

ովքեր կհավատան Իրեն (տե՛ս Հովհաննես 3.15), տալու Իր անձնական կյանքը մյուսների փրկագնման համար (տե՛ս Մաթեոս 20.28), հաղթահարելու Սատանայի զորությունը և հնարավոր դարձնելու մեղքերի թողությունը: Առանց Հիսուսի Քավության, Աստծո և մահկանացու տղամարդկանց ու կանանց միջև մի անհաղթահարելի խոչընդոտ կլիներ: Երբ մենք ըմբռնում ենք Քավությունը, ապա հիշում ենք Նրան ակնածանքով և երախտագիտությամբ» (in Conference Report, Oct. 1997, 34; or *Ensign,* Nov. 1997, 26):

- Համաձայն հրեշտակի, ով կարող է փրկություն ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: (Տե՛ս ստորև տրված ցուցակը:) Ինչպե՞ս է դա ցույց տալիս Քավության զորությունը և հավաստիացնում, որ «մի արդար դատաստան կգա մարդկանց զավակների վրա» (Մոսիա 3.10):

  ա. Մարդիկ, «որոնք մահացել են՝ չիմանալով Աստծո կամքն իրենց վերաբերյալ, կամ ովքեր անգիտակցորեն են մեղք գործել» (Մոսիա 3.11; նշեք, որ Վարդապետություն և Ուխտեր 137.7–9-ից մենք սովորում ենք, որ այն մարդիկ, որոնք մահանում են չիմանալով ավետարանի մասին, սակայն կընդունեին այն իրենց ամբողջ սրտով, կլինեն սելեստիալ արքայության ժառանգները):
  բ. Մարդիկ, որոնք ստացել են ավետարանի մասին գիտելիքը և ապաշխարել ու հավատացել են Հիսուս Քրիստոսին (Մոսիա 3.12–13):
  գ. Փոքր երեխաները, որոնք վաղ հասակում մահացել են (Մոսիա 3.16, 18, 21; տե՛ս նաև Վ և Ու 137.10):

- Ինչո՞ւ են փոքր երեխաները «անմեղ Աստծո առաջ»: (Տե՛ս Մոսիա 3.16, 21; Մորոնի 8.12; Վ և Ու 29.46: Թեպետ և «բնությամբ նրանք ընկնում են», նրանք «անմեղ են Աստծո առաջ», որովհետև «կենդանի են Քրիստոսում» Քավության միջոցով:)

- Հրեշտակն ասաց. «բնական մարդն Աստծո մի թշնամի է» (Մոսիա 3.19): Ի՞նչ է նշանակում «բնական մարդ» արտահայտությունը: (Տե՛ս Ալմա 42.6–10 և ստորև բերված մեջբերումը:)

  Երեց Բրյուս ՄակՔոնկիին ասել է. «Ադամի անկումից հետո, մարդն իր էությամբ դարձավ մարմնական, զգայական և դիվային, նա դարձավ *ընկած մարդ* . . . Երկրի վրա բոլոր պատասխանատու մարդիկ ժառանգել են այդ ընկած վիճակը, այդ փորձնական վիճակը, այն վիճակը, որում աշխարհիկ բաները ցանկալի են մարմնական էությանը: Լինելով այս վիճակում, լինելով «բնական մարդ», որը «Աստծո մի թշնամի է», անգամ այս դեպքում նա համապատասխանում է փրկագնման մեծ ծրագրին և կարող է կրկին ծնվել արդարության մեջ: (Մոսիա 3.19:) Այսպիսով, ամբողջ մարդկությունը կմնար կորած և ընդմիշտ ընկած, եթե չլիներ մեր Տիրոջ քավությունը: (Ալմա 42.4–14:)» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 267–68):

- Ինչպե՞ս կարող ենք «հանել մեր միջից բնական մարդուն»: (Տե՛ս Մոսիա 3.19: Քննարկեք պատասխանները ստորև տրված ձևով:)

  ա. Լսել Սուրբ Հոգու հորդորներին: Ինչպես դա կարող է մեզ օգնել «հանել մեր միջից բնական մարդուն»: (Տե՛ս 2 Նեփի 32.5; Մոսիա 5.2; 3 Նեփի 28.11:)
  բ. Դառնալ «սուրբ՝ Տեր Հիսուս Քրիստոսի քավության միջոցով»: Ի՞նչ է նշանակում լինել ճշմարիտ սուրբ: (Կարող եք նշել, որ սուրբ բառը վերաբերվում է սրբացմանը կամ սրբությանը: Մորմոնի Գրքում, այս բառն օգտագործվում է Տիրոջ Եկեղեցու նվիրված անդամներին բնորոշելու նպատակով: Օրինակ, տե՛ս սուրբ բառի օգտագործումը 1 Նեփի 14.12-ում և 2 Նեփի 9.18-ում:) Ինչպե՞ս է Քավությունը մեզ օգնում դառնալ ճշմարիտ սրբեր:
  գ. Դառնալ «երեխայի պես»: Ինչպե՞ս կարող ենք դառնալ կենդանի՝ Քրիստոսում, ինչպես երեխաներն են: (Տե՛ս Մոսիա 3.17–19, 21; տե՛ս նաև 2 Նեփի 25.23–26; Մորոնի 8.10:)

Եթե պատրաստվել եք օգտագործել «Դառնալ Քրիստոսի զավակները» տեսաֆիլմը, ապա ցուցադրեք այն այժմ:

- Ըստ հրեշտակի, որտե՞ղ պետք է տարածվեր Փրկչի մասին գիտելիքը: (Տե՛ս Մոսիա 3.20:) Ինչպե՞ս է այդ մարգարեությունն իրականացել: Ինչպե՞ս է այն շարունակվում իրականանալ:

Եզրափակում

Եթե դասի ընթացքում չեք կարդացել Մոսիա 3.19, ապա դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ այդ հատվածը:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ երկուսը որպես դասի մաս:

1. «Նրանք իրենց վրանները խփեցին տաճարի շուրջբոլորը» (Մոսիա 2.6)

Երբ մարդիկ գնացին լսելու Բենիամին թագավորի խոսքը, «նրանք խփեցին իրենց վրանները տաճարի շուրջբոլորը, ամեն մարդ ունենալով իր վրանը՝ դրա դուռը դեպի տաճարը» (Մոսիա 2.6): Համեմատեք այդ մարդկանց Լոթի հետ, որը խփեց իր վրանը դեպի Սոդոմը (Ծննդոց 13.12): Բացատրեք, որ սկզբում Լոթը ապրում էր անարդար քաղաք Սոդոմի շրջակայքում, սակայն վերջ-ի-վերջո նա և իր ընտանիքը ապրում էին հենց Սոդոմ քաղաքում (Ծննդոց 14.12):

- Ինչպիսի՞ արարքներ մենք կարող ենք անել, որոնց հետևանքով մեր վրանները խփված կլինեն դեպի Սոդոմը: Ինչպիսի՞ արարքներ մենք կարող ենք անել, որոնց հետևանքով մեր վրանները խփված կլինեն դեպի տաճարը: Ինչպե՞ս կարող ենք մեր տները շրջել դեպի տաճարը, այլ ոչ թե դեպի աշխարհիկ վայրերը:

2. «Հավերժ պարտական» (Մոսիա 2.34)

Գրատախտակին նկարեք հետևյալ կշեռքը.



- Ինչո՞ւ է այս սանդղակը անհավասարակշիռ:

Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 2.20–25: Կարդալու ընթացքում, նրանց խնդրեք գտնել այն ամենը, ինչ մենք կարող ենք տալ Տիրոջը, և այն օրհնությունները, որ Նա տալիս է մեզ: Մեր զոհողությունները կամ նվիրատվությունները գրեք կշեռքի այն կողմում, որտեղ գրված է *Մեր նվիրատվությունները:* Գրեք Աստծո օրհնությունները կշեռքի այն կողմում, ուր գրված է *Աստծո օրհնությունները:* Դասարանի անդամներին օգնեք հասկանալ, որ մենք հավերժ պարտք ենք Աստծուն:

«Դուք կկոչվեք Քրիստոսի զավակներ»

Դաս
16

Մոսիա 4–6

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին որոնել և պահպանել սրտի հզոր փոփոխությունը, որը գալիս է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելու շնորհիվ:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Մոսիա 4.1–12: Բենիամին թագավորի ժողովուրդը պատասխանեց նրա խոսքերին՝ խոնարհաբար որոնելով և ստանալով իրենց մեղքերի թողությունը:

   բ. Մոսիա 4.13–30: Բենիամին թագավորն իր ժողովրդին կոչ է անում սովորեցնել ավետարանն իրենց զավակներին, բաժին հանել իրենց ստացվածքից աղքատներին և հնազանդվել Աստծո պատվիրաններին:

   գ. Մոսիա 5–6: Բենիամին թագավորի ժողովուրդը սրտի «զորեղ փոփոխություն է» զգում և Աստծո հետ Նրա պատվիրանները պահելու և Նրա կամքը բոլոր բաներում կատարելու ուխտի մեջ է մտնում: Բենիամին թագավորը մարդկանց ասում է, որ ուխտի շնորհիվ, որի մեջ նրանք մտել են, նրանք կկոչվեն Քրիստոսի զավակները:

2. Եթե առկա է Բենիամին թագավորի նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ընթացքում (62298; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 307):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Հետևյալ վերնագրերը գրեք գրատախտակին.

Աստծո ձախ կողմը *Աստծո աջ կողմը*

- Ի՞նչ է նշանակում նստել Աստծո աջ կողմում: (Ստանալ վեհացում և նորից ապրել Աստծո հետ:) Ինչպիսի՞ մարդիկ կարժանանան Աստծո աջ կողմում նստելուն, ձախ կողմում նստելուն: (Տե՛ս Մաթեոս 25.33–34; Վ. և Ու. 29.27: Դասարանի անդամների պատասխանները գրի առեք գրատախտակի վրա համապատասխան վերնագրի տակ:)

Բացատրեք, որ իր քարոզի վերջում Բենիամին թագավորն իր ժողովրդին ասաց, թե ինչ նրանք պետք է անեն Աստծո ձախ կողմում նստելուն արժանանալու համար: Մենք կարող ենք սովորել Բենիամին թագավորի խոսքերից, քանի որ նույն պահանջները վերաբերվում են նաև մեզ:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Բենիամին թագավորի մարդիկ որոնում և ստանում են իրենց մեղքերի թողությունը:

Կարդացե՛ք և քննարկե՛ք Մոսիա 4.1–12: Եթե պատրաստվել եք օգտագործել Բենիամին թագավորի նկարը, ապա ցուցադրեք այն դասի ժամանակ:

- Նրանից հետո, երբ Բենիամին թագավորն իր ժողովրդին սովորեցրեց Փրկչի առաքելության մասին (տե՛ս դաս 15), նա տեսավ, որ «նրանք ընկել էին գետնին» (Մոսիա 4.1): Ինչո՞ւ էին մարդիկ ընկել գետնին: (Տե՛ս Մոսիա 4.1–2:) Ինչո՞ւ ենք մենք «ավելի չնչին քան հողի փոշին»: (Տե՛ս Հելաման 12.4–8; Մովսես 1.9–10:) Ինչո՞ւ էր Բենիամին թագավորը շեշտում իր ժողովրդի «ոչնչությունը» և «արժեզուրկ վիճակը»: (Տե՛ս Մոսիա 4.5–8, 11–12:) Ինչո՞ւ է մեզ համար այդքան կարևոր հասկանալ մեր կախվածությունը Տիրոջից:

- Երբ Բենիամին թագավորի մարդիկ հասկացան իրենց «մարմնական վիճակը, ի՞նչ նրանք արեցին: (Տե՛ս Մոսիա 4.2:) Ի՞նչն էր պատճառը, որ նրանք «լցվեցին ուրախությամբ» (Տե՛ս Մոսիա 4.3:) Ի՞նչը նրանց հնարավորություն տվեց մաքրվել մեղքերից: Ինչպե՞ս նրանք իմացան, որ իրենց մեղքերը ներվեցին: Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ, որ ներվել ենք ապաշխարությունից հետո: (Որպես օգնություն այս հարցերին պատասխանելու համար կարող եք վկայակոչել էջ 63-ում Նախագահ Հարոլդ Բ. Լիի մեջբերված խոսքերը:)

- Ի՞նչ սովորեցրեց Բենիամին թագավորն այն մասին, թե ինչպես կարող ենք մեղքերի թողություն ձեռք բերել: (Տե՛ս Մոսիա 4.9–10:) Ի՞նչ է նա սովորեցնում այն մասին, թե ինչպես մենք կարող ենք միշտ ունենալ մեր մեղքերի թողությունը: (Տե՛ս Մոսիա 4.11–12, 26:) Ի՞նչ է նշանակում միշտ ունենալ մեր մեղքերին թողություն:

- Բենիամին թագավորի խոսքերն ինչպե՞ս են մեզ հույս պարգևում, երբ մենք հուսահատված ենք մեր թուլությունների պատճառով:

2. Բենիամին թագավորն իր ժողովրդին սովորեցնում է ապրել Քրիստոսանման կյանքով:

Կարդացե՛ք և քննարկե՛ք Մոսիա 4.13–30-ից ընտրված հատվածները: Կարող եք քքնարկումը սկսել, դասարանը բաժանելով երեք խմբերի: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեք ստորև տրված հատվածներից մեկը և խնդրեք միասին կարդալ և ամփոփել այն մի նախադասությամբ: (Հնարավոր ամփոփման մի նախադասություն տրված է յուրաքանչյուր վկայակոչումից հետո. պարտադիր չէ, որ դասարանի անդամներն օգտագործեն այդ նախադասությունները նույնությամբ:)

Խումբ 1. Մոսիա 4.13–15 (Սովորեցնել զավակներին:)
Խումբ 2. Մոսիա 4.16–26 (Կիսվել կարիքավորների հետ:)
Խումբ 3. Մոսիա 4.27–30 (Հետևել մտքերին, խոսքերին և գործերին:)

Երբ երեք խմբերը կավարտեն կարդալը և ամփոփելը, գրատախտակին գրեք *Բենիամին թագավորի խորհուրդը* վերնագիրը: Յուրաքանչյուր խմբից մի աշակերտի խնդրեք գրատախտակին այս վերնագրի տակ գրել ամփոփիչ նախադասությունը:

- Ըստ Բենիամին թագավորի, ինչպիսի՞ պատասխանատվություն ունեն ծնողներն իրենց զավակների հանդեպ: (Տե՛ս Մոսիա 4.14–15:) Աշխարհում այսօր ինչպիսի՞ պայմաններ են տիրում, որոնք հատկապես կարևոր են դարձնում Բենիամին թագավորի խորհուրդը ծնողների համար: Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ ծնողները սովորեցնեն ավետարանն իրենց երեխաներին:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Յուրաքանչյուր հասարակության առողջությունը, դրա մարդկանց երջանկությունը, նրանց բարեկեցությունը և նրանց խաղաղությունը իրենց արմատներն են գտնում հայրերի և մայրերի կողմից իրենց զավակներին ուսուցանելու մեջ» (in Conference Report, Oct. 1993, 79; or *Ensign,* Nov. 1993, 60):

- Ինչպե՞ս կարող ենք սովորեցնել մեր երեխաներին սիրել և ծառայել միմյանց: (Երիտասարդների ուսուցիչները կարող են քննարկել դասարանի անդամների այն օրինակները, որոնք կարող են ազդեցություն գործել ավելի փոքր երեխաների վրա:)

- Բենիամին թագավորն իր ժողովրդին պատվիրեց հոգ տանել կարիքավորների համար (Մոսիա 4.16): Համաձայն Բենիամին թագավորի խոսքերին, ինչո՞ւ են ոմանք հրաժարվում օգնել կարիքավորներին: (Տե՛ս Մոսիա 4.17, 22:) Ինչո՞ւ մենք «մեծ պատճառ

ունենք ապաշխարելու» (Տե՛ս Մոսիա 4.18–23:) Ի՞նչ իմաստով ենք մենք մուրացկան: (Տե՛ս Մոսիա 4.19–20:)

- Ինչո՞ւ է բարեգործությունը համարվում Քրիստոսի Եկեղեցու անդամների կարևոր հատկանիշներից մեկը:
- Տալով մեր ունեցածից կարիքավորներին, ինչպե՞ս կարող ենք հետևել Երկնային Հոր օրինակին: (Տե՛ս Մոսիա 4.16, 20–21:) Ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ կարիքավորին օգնելով ցուցաբերում ենք ճիշտ օգնություն ճիշտ ճանապարհով:

  Կարող եք բացատրել, որ գոյություն չունի կարիքավորին օգնելու մեկ ճիշտ եղանակ: Մենք պետք է հիշենք Բենիամին թագավորի սովորեցրած սկզբունքները և յուրաքանչյուր իրավիճակում Սուրբ Հոգու առաջնորդությանը դիմենք (տե՛ս Մորոնի 7:18): Կարող եք նշել, որ Տերն ուղիներ է տվել, որոնց միջոցով մենք կարող ենք օգնել կարիքավորներին: Երբ մենք վճարում ենք ծոմապահության նվիրատվությունները կամ դրամ, իրեր, ժամանակ ենք նվիրաբերում, կամ ծառայություն ենք կատարում Եկեղեցում, մենք կարող ենք համոզված լինել, որ մեր ներդրումը ճիշտ ճանապարհով է օգտագործվում:
- Ի՞նչ խորհուրդ տվեց Բենիամին թագավորը կարիքավորներին, որոնք չեն կարող հատկացնել իրենց ունեցվածքից: (Տե՛ս Մոսիա 4.24–25:) Ինչպե՞ս կարող ենք անկախ մեր ֆինանսական վիճակից մեծահոգի լինել:
- Ինչո՞ւ եք կարծում, որ ուրիշներին օգնելը մեզ հնարավորություն է տալիս ունենալ մեղքերի թողության պահպանում: (Տե՛ս Մոսիա 4.26:)
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 4.27: Ի՞նչ է նշանակում անել ամեն բան «իմաստությամբ և կարգով»: Ինչպե՞ս է այս խորհուրդը օգնում ձեզ:
- Բենիամին թագավորն իր մարդկանց սովորեցնում էր, որ մեղքից խուսափելու և Աստծուն տված իրենց խոստումը պահելու համար, նրանք պետք է հետևեն իրենց մտքերին, խոսքերին և գործերին (Մոսիա 4.29–30): Ինչպե՞ս են մեր մտքերը, խոսքերը և գործերը շաղկապված միմյանց: Ինչպե՞ս կարող են փոխվել մեր խոքերը և գործերը, եթե մենք հետևենք մեր մտքերին:

3. Բենիամին թագավորի մարդիկ սրտի «զորեղ փոփոխություն» են զգում և ուխտի մեջ են մտնում Աստծո հետ՝ կատարելու Նրա կամքը բոլոր բաներում:

Քննարկե՛ք Մոսիա 5–6: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Ինչպե՞ս մարդիկ իմացան, որ Բենիամին թագավորի խոսքերը ճշմարիտ էին: (Տե՛ս Մոսիա 5.2:) Ի՞նչ ազդեցություն գործեց Տիրոջ Հոգին մարդկանց վրա: (Տե՛ս Մոսիա 5.2–5:) Ինչպե՞ս կարող են մեր կյանքը և փոխհարաբերությունները փոխվել, եթե մենք «այլևս հակում չունենանք չարիք անելու»:
- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Բենիամին թագավորի քարոզը լսած և իրենց սրտերում զորեղ փոփոխություն ունեցած մարդիկ արդեն Եկեղեցու անդամներ էին դարձել:
- Եթե մենք մեկ անգամ զգանք «մեր սրտերում մի զորեղ փոփոխություն» (Մոսիա 5.2), ապա ինչպիսի՞ դժվարությունների կարող ենք հանդիպել աշխատելով պահպանել այդ փոփոխությունը: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել այդ դժվարությունները:
- Ի՞նչ է նշանակում դառնալ Քրիստոսի զավակները: (Տե՛ս Մոսիա 5.2, 5–7:) Ի՞նչ է նշանակում մեզ վրա «վերցնել Քրիստոսի անունը»: (Տե՛ս Մոսիա 5.8–11; տե՛ս նաև հաջորդ էջի վրա տրված մեջբերումը:) Ի՞նչ կարող ենք անել ամեն օր, որպեսզի կարողանանք ունենալ Քրիստոսի անունը գրված մեր սրտերում»: (Տե՛ս Մոսիա 5.11–15:)

  Երեց Դալին Հ. Օուքսը բացատրել է. «Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա վերցնելու մեր պատրաստակամությունը հաստատում է մեր խոստումը՝ անել հնարավորին

ամեն ինչ համարվելու համար նրանց շարքերում, ովքեր վերջին օրը կընտրեն կանգնել Նրա աջ կողմում և կոչվել Նրա անունով: Այս սուրբ իմաստով, մեր վկայությունն այն մասին, որ մենք պատրաստ ենք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը հանդիսանում է մեր թեկնածության հայտարարագիրը արեգակնային արքայությունում Համբարձմանն արժանանալու համար: Համբարձումը հավերժական կյանք է, Աստծո պարգևներից ամենամեծը (տե՛ս Վ. և Ու. 14.7)» (in Conference Report, Apr. 1985, 105; or *Ensign,* May 1985, 83):

- Ինչո՞վ է Բենիամին թագավորի ժողովրդի կապած ուխտը նման այն ուխտին, որը մենք կապում ենք մկրտության ժամանակ և որը նորացնում ենք ամեն անգամ հաղորդությունն ընդունելիս: (Տե՛ս Մոսիա 5.5, 7–8; Վ. և Ու. 20.37, 77, 79:) Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ մենք հաճախ նորացնենք մեր ուխտը:
- Բենիամին թագավորը տեսավ, որ բոլոր իր մարդիկ (բացի ամենաերիտասարդներից) ուխտի մեջ են մտել՝ պահելու Աստծո պատվիրանները (Մոսիա 6.1–2): Ինչո՞ւ էր կարևոր արձանագրել նրանց անունները:
- Ինչո՞ւ էր կարևոր մարդկանց վրա նշանակել ուսուցիչներ և քահանաներ: (Տե՛ս Մոսիա 6.3:) Ինչպե՞ս են մեր ուսուցիչները և Եկեղեցու ղեկավարները մեզ օգնում հիշել մեր կապած ուխտերը և խոստումները:

Եզրափակում

Կարդացե՛ք կամ դասարանի անդամներից որևէ մեկին խնդրեք կարդալ Մոսիա 5.15, որոնք Բենիամին թագավորի քարոզի վերջին խոսքերն են: Նշեք, որ այս օրհնությունները մատչելի են մեզանից յուրաքանչյուրին: Դասարանի անդամներին խրախուսեք գտնել և պահպանել սրտի «զորեղ փոփոխությունը», որը նրանց հնարավորություն կտա դառնալ Քրիստոսի զավակները:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով՝ վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք դրանք օգտագործել որպես դասի մաս:

1. «Եվ այս անվան ներքո դուք դարձվում եք ազատ» (Մոսիա 5.8)

- Կոչելով իր ժողովրդին Աստծո զավակներ, Բենիամին թագավորն ասաց. «Եվ այս անվան ներքո դուք դարձվում եք ազատ» (Մոսիա 5.8): Տիրոջը հնազանդվելն ինչպե՞ս կարող է ազատություն պարգևել:

  Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է, որ «հնազանդության մեջ կա անարատ և կատարյալ ուրախություն և խաղաղություն, և մեր երջանկությունը նախագծելիս Տերը . . . իր ժողովրդին երբեք չի տվել և չի տա այնպիսի ծես կամ պատվիրան, որն իր էությամբ հաշվարկված չլինի այնպես, որ մեզ երջանկություն պարգևի» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 256–57):
- Ինչպե՞ս եք համոզվել, որ Աստծո պատվիրաններին հնազանդվելը ձեր և ձեզ շրջապատողների կյանք երջանկություն է բերել:

2. «Ինչպե՞ս է մարդ ճանաչում տիրոջը, որին նա չի ծառայել» (Մոսիա 5.13)

- Բենիամին թագավորը հարցնում էր. «Ինչպե՞ս է մարդ ճանաչում տիրոջը, որին նա չի ծառայել» (Մոսիա 5.13): Ինչպե՞ս Քրիստոսին ծառայելու միջոցով սկսեցիք Նրան ավելի լավ ճանաչել:

«Տեսանողը … իր մերձավորների համար դառնում է մեծ բարիք»

Դաս
17

Մոսիա 7–11

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին հետևել Եկեղեցու ղեկավարների խորհուրդներին, հատկապես նրանց խորհուրդներին, ում Տերը կանչել է որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնություն ստացողներ:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. Մոսիա 7–8: Ամմոնն արշավ է կազմակերպում գտնելու համար այն մարդկանց, ովքեր տարիներ առաջ հեռացել էին Զարահեմլայից՝ Նեփիի երկիր վերադառնալու համար: Ամմոնը և նրա եղբայրները գտնում են Լիմքիին և նրա ժողովրդին: Ամմոնը սովորեցնում է Լիմքիի ժողովրդին, ստանում է այդ ժողովրդի հիշատակարանը, և իմանում է, որ Հարեդացիների 24 թիթեղներ հայտնաբերվել են այդ ժողովրդի կողմից: Նա բացատրում է, որ Մոսիան, լինելով տեսանող, կարող է թարգմանել թիթեղների փորագրությունները:

բ. Մոսիա 9–10: Լիմքիի պապ Զենիֆի հիշատակարանի մի մասը տալիս է մի համառոտ պատմություն այն մասին, թե ինչպես Զենիֆի ժողովուրդը ժամանեց Նեփիի երկիր: Հիշատակարանը նաև պատմում է այն մասին, թե ինչպես էր Տերը զորացնում նրանց Լամանացիների դեմ պայքարում:

գ. Մոսիա 11: Զենիֆի որդի Նոյն առաջնորդում է անբարիշտներին: Չնայած մարգարե Աբինադիի նախազգուշացումներին, մարդիկ կույր էին և չէին տեսնում Նոյի և նրա քահանաների անօրինությունները:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրատախտակին գծեք հետևյալ սխեման.



Բացատրեք, որ ժողովրդի հետ Տիրոջ գործերը հասկանալու համար, կարևոր է հասկանալ այն իրադարձությունները, որոնք նկարագրված են 2 Նեփի 5-ում, Օմնիի գրքում, Մոսիա 7 և 9-ում: Դասարանի անդամներին ասացեք, որ կօգտվեք այս սխեմայից՝ համառոտ պատմելու այս իրադարձությունների մասին: Կարդացեք կամ ձեր խոսքերով պատմեք ստորև տրված տեղեկությունը (համարները համապատասխանում են սխեմայի համարներին).

1. Լեքիի մահից հետո, Տերը Նեփիի հետևորդներին պատվիրեց առանձնանալ Լամանի հետևորդներից: Նեփիացիները բնակվեցին մի երկրում, որը կոչեցին Նեփիի երկիր (2 Նեփի 5.5–8): Հետագայում երկիրը նաև հայտնի դարձավ որպես «Լեքի-Նեփիացիների երկիր» (Մոսիա 7.1):

2. Մոտ 400 տարի անց Նեփիացիներին ղեկավարում էր Մոսիա անունով մի թագավոր: Տերը Մոսիային պատվիրեց փախչել Նեփիի երկրից և նրա հետ «բոլոր նրանք, ովքեր ականջ կդնեին Տիրոջ ձայնին»: Մոսիան և նրա ժողովուրդը հայտնաբերեցին մի ժողովուրդ, որը կոչվում էր Զարահեմլայի ժողովուրդ: Երկու ժողովուրդները միացան և կոչեցին իրենց Նեփիացիներ: Մոսիան նշանակվեց լինելու նրանց թագավորը (Օմնի 1.12–19):

3. Նեփիացիների մի խումբ թողնում է Զարահեմլա երկիրը՝ նորից տիրելու Նեփիի երկրի մի մասին (Օմնի 1.27): Նրանք ձեռք բերեցին այդ երկիրը Զենիֆ անունով մի մարդու առաջնորդությամբ, որը դարձավ նրանց թագավորը (Մոսիա 9.1–7):

4. Մոտ 79 տարի անց Մոսիա II թագավորը, առաջին Մոսիա թագավորի թոռը, «ցանկանում էր իմանալ այն ժողովրդի մասին, որը գնաց՝ ապրելու Լեքի-Նեփիի երկրում»: Նա Ամմոն անունով մի մարդու թույլ տվեց այդ նպատակով ղեկավարել մի արշավ (նշեք, որ այդ Ամմոնը այն Մոսիայի որդին չէր, որը հետագայում քարոզում էր ավետարանը Լամանացիներին:): Ամմոնը և նրա եղբայրները գտան Լիմքի թագավորին և նրա ժողովրդին: Լիմքին Զենիֆի թոռն էր (Մոսիա 7.1–11):

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է այդ հատվածները կիրառել մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ամմոնը և նրա եղբայրները գտնում են Լիմքիին և նրա ժողովրդին: Ամմոնը Լիմքիին սովորեցնում է տեսանողի կարևորության մասին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 7–8: Մոսիա 7.1–11-ի բացատրության համար տե՛ս ուշադրության վարժության 4-րդ կետը:

- Ինչո՞ւ Լիմքին գերի վերցրեց Ամմոնին և նրա ուղեկիցներին: (Տե՛ս Մոսիա 7.8–11:) Ինչո՞ւ Լիմքին ուրախացավ, երբ իմացավ, թե ով էր Ամմոնը: (Տե՛ս Մոսիա 7.12–15: Բացատրեք, որ ավելի ուշ այս դասում դուք կքննարկեք, թե ինչպես Լիմքիի ժողովուրդը գերի ընկավ:) Ի՞նչ ուղերձով դիմեց Լիմքին իր ժողովրդին՝ Ամմոնի հետ խոսելուց հետո: (Տես Մոսիա 7.17–20, 29–33:) Ի՞նչ է սա ասում առաջնորդ Լիմքիի հատկանիշների մասին:
- Լիմքին Ամմոնին ասաց, որ 43 մարդ է ուղարկել Զարահեմլայում իրենց եղբայրներին փնտրելու համար (Մոսիա 8.7): Փոխարենը, ի՞նչ գտավ այս խումբը: (Տե՛ս Մոսիա 8.8–11; տե՛ս նաև Եթեր 1.1–2: Նրանք գտան Հարեդական քաղաքակրթության մնացորդները: Հարեդացիներն այնտեղ բնակվել էին Նեփիացիներից դարեր առաջ:)
- Ի՞նչ Լիմքին խնդրեց Ամմոնից Հարեդացիների 24 ոսկե թիթեղների վերաբերյալ: (Տե՛ս Մոսիա 8.11–12:) Ինչո՞ւ էր Լիմքիի ժողովրդի, ինչպես և այսօր մեզ համար, օգտակար իմանալ Հարեդացիների կործանման պատճառը:
- Ինչպե՞ս Ամմոնը պատասխանեց Լիմքիի խնդրանքին: (Տե՛ս Մոսիա 8.13–14: Նա ասաց, որ Մոսիան, Զարահեմլայի թագավորը, տեսանող է և կարող է թարգմանել գրառումները:)

Ի՞նչ այլ անուններ էր Ամմոնը վերագրում տեսանողներին: (Տե՛ս Մոսիա 8.16:) Ո՞ւմ ենք մենք այսօր աջակցում որպես մարգարեների, տեսանողների և հայտնություններ ստացողների: (Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Խորհրդի Անդամներին:)

- Ո՞րն է տեսանողի դերը: (Տե՛ս Մոսիա 8.13, 17–18:) Ինչպե՞ս են վերջին օրերի մարգարեները, տեսանողները և հայտնություն ստացողները կատարում իրենց դերը: (Տե՛ս ստորև բերված մեջբերումը: Կարող եք նաև դասարանի անդամներին խնդրել քննարկել կոնֆերանսի այլ ուղերձները, հայտարարությունները, կամ իրադարձությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Խորհրդի անդամները գործում որպես տեսանողներ:) Ինչպե՞ս են վերջին օրերի մարգարեները, տեսանողները և հայտնություններ ստացողները մեզ համար «մեծ բարիք» հանդիսանում:

Երեց Բոյդ Ք. Փաքերն ասել է.

«Սուրբ գրություններում մարգարեները պատկերվում են որպես աշտարակի վրա գտնվող գիշերային պահակներ, որոնք թշնամուն տեսնում են երբ նա դեռևս հեռու է, և որոնք տեսնում են այն բոլոր բաները, որոնք անտեսանելի են բնական աչքի համար, քանի որ տեսանողը Տիրոջ կողմից է նշանակվել Իր մարդկանց համար:

Տարիներ առաջ Եղբայրները մեզ նախազգուշացրեցին ընտանիքների քայքայման մասին և պատվիրեցին մեզ նախապատրաստվել . . . Շաբաթական ընտանեկան երեկոն տրվեց Առաջին Նախագահության կողմից . . . Ծնողներն ապահովվեցին հիանալի նյութերով իրենց երեխաներին սովորեցնելու համար, և ստացան խոստում, որ հավատարիմները կօրհնվեն:

Մինչ վարդարպետությունը և հայտնությամբ տրված կազմակերպությունը մնաց անփոփոխ, Եկեղեցու բոլոր վարչությունները շտկեցին իրենց հարաբերությունները միմյանց հետ և ընտանիքների հանդեպ . . . Եկեղեցու ամբողջ ուսումնական ծրագիրը վերանայվեց, հիմնված սուրբ գրությունների վրա . . . Տարիներ պահանջվեցին Աստվածաշնչի, Մորմոնի Գրքի, Վարդապետություն և Ուխտեր-ի և Թանկարժեք Մարգարիտի նոր հրատարակությունների համար . . .

Մենք միայն կարող ենք պատկերացնել, թե ինչ կպատահեր, եթե միայն այժմ արձագանքեինք ընտանիքի վերասահմանման սարսափելի երևույթին: Բայց սա այն դեպքը չէ: Մենք չենք նայում մեր շուրջը մոլեգնորեն, փորձելով որոշել, ինչպես վարվել: Մենք գիտենք, ինչ անել և ինչ սովորեցնել . . .

Այն ուղին, որով մենք առաջնորդվում ենք, մեր կողմից չէ ստեղծված: Դա փրկության ծրագիրն է, մեծ երջանկության ծրագիրը, որը տրվել է մեզ հայտնության միջոցով, և մարգարեներն ու Առաքյալները շարունակում են ստանալ հայտնություններ, երբ Եկեղեցին և անդամները դրանց կարիքն են ունենում» (in Conference Report, Apr. 1994, 24–25; or *Ensign,* May 1994, 20):

2. Զենիֆի հիշատակարանը տալիս է Զենիֆի ժողովրդի համառոտ պատմությունը:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 9–10-ից: Բացատրեք, որ Մոսիայի գրքի 9–22 գլուխները պարունակում են այն մարդկանց պատմությունը, որոնք հեռացան Զարահեմլայից՝ Նեփիի երկիր վերադառնալու համար: Պատմությունը սկսում է Լիմքիի պապ Զենիֆի գրառումներից:

- Զենիֆը Նեփիացիների այն խմբի անդամներից էր, որոնք ցանկանում էին Լամանացիներից ետ վերցնել Նեփիի երկրի մի մասը (Մոսիա 9.1): Ո՞րն էր Նեփիացիների նկատմամբ Լամանացիների դիրքորոշումը: (Տե՛ս Մոսիա 10.11–17: Նրանք զայրացած էին, որովհետև կարծում էին, թե իրենց նախնիներ Լամանը և Լեմուելը անարդար վերաբերմունքի էին արժանացել իրենց եղբայրների կողմից: Այդ պատճառով, նրանք իրենց զավակներին սովորեցնում էին ատել Նեփիացիներին:) Ինչպե՞ս կարող են անցյալի

սովորույթները մարդկանց մոտ ատելություն առաջացնել: (Կարող եք դասարանի անդամներին խնդրել կիսվել նմանատիպ օրինակներով, որոնց ականատես են եղել իրենց համայնքներում, երկրներում կամ ամբողջ աշխարհում:) Ինչո՞ւ են այս սովորույթները կրկնվում:

- Ի՞նչ կարող ենք սովորել Զենիֆից ատելության զգացումը հաղթահարելու համար: (Տե՛ս Մոսիա 9.1: Զենիֆը որպես լրտես ուղարկվեց Լամանացիներին կործանելու եղանակներ գտնելու համար: Այնուամենայնիվ, երբ նա տեսավ «այն լավը, ինչ նրանց մեջ էր», նա այլևս չէր ցանկանում ոչնչացնել նրանց:) Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ազնվորեն ուրիշների մեջ լավը տեսնենք:
- Ինչպիսի՞ սխալներ թույլ տվեց Զենիֆը, երբ ջանում էր «ժառանգելու իր հայրերի երկիրը»: (Տե՛ս Մոսիա 7.21–22; 9.3:) Որո՞նք էին Զենիֆի չափից դուրս գերեռանդ լինելու հետևանքները: (Տե՛ս Մոսիա 9.3–12; 10.18:) Ո՞րն է, թեկուզ և բարի նպատակի համար, չափից ավելի գերեռանդ լինելու վտանգը: Ինչպե՞ս կարող ենք եռանդուն լինել Տիրոջ գործը կատարելիս, միևնույն ժամանակ չլինելով չափից ավելի գերեռանդ:
- Նեփիի երկիրը ձեռք բերելու իրենց վճռականությամբ Զենիֆն ու իր ժողովուրդը դանդաղ էին Տիրոջը՝ իրենց Աստծուն, հիշելու մեջ (տե՛ս Մոսիա 9.3): Ի՞նչն ի վերջո բերեց նրան դեպի Տերը: (Տե՛ս Մոսիա 9.13–17:) Ինչպե՞ս նրանք օրհնվեցին, երբ հիշեցին Տիրոջը և աղոթեցին փրկության համար: (Տե՛ս Մոսիա 9.18; 10.19–21:) Որպես Եկեղեցու անդամներ մենք ուխտ ենք կապել՝ միշտ հիշել Տիրոջը (տե՛ս Վ և Ու 20.77, 79): Ի՞նչ կարող ենք անել օգնելու ինքներս մեզ պահել այս պատվիրանը:

3. Աբինադին նախազգուշացնում է իր մարդկանց, սակայն նրանք կույր են Նոյի անարդարությունների հանդեպ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 11-ից:

- Ո՞վ դարձավ թագավոր Զենիֆից հետո: (Տե՛ս Մոսիա 11.1:) Ինչպիսի՞ կառավարիչ էր Նոյը: (Տե՛ս Մոսիա 11.1–19: Կարող եք գրատախտակին գրել այն ուղիները, որոնցով Նոյը «քայլում էր իր սեփական սրտի ցանկությունների համաձայն» և «փոխել էր թագավորության գործերը»:)
- Ինչպիսի՞ն էր Նոյի ազդեցությունն իր ժողովրդի վրա: (Տե՛ս Մոսիա 11.2, 5–7:) Ինչպե՞ս էին Նոյը և ժողովուրդը կիսում իրենց մեղսագործությունների պատասխանատվությունը:
- Տերն ուղարկեց Աբինադի մարգարեին՝ Նոյին և նրա ժողովրդին ապաշխարությանը կոչ անելու համար (Մոսիա 11.20): Ինչպիսի՞ նախազգուշացումներ ուղարկեց Տերն Աբինադիի միջոցով: (Տե՛ս Մոսիա 11.20–25: Ինչպես դասի սկզբում էր քննարկվել, նույնպես կարող եք քննարկել, թե ինչպես Աբինադին կատարեց տեսանողի դերը:)
- Ինչպե՞ս Նոյը և նրա ժողովուրդը պատասխանեցին Աբինադիի նախազգուշացումներին: (Տե՛ս Մոսիա 11.26–28; տե՛ս նաև Մոսիա 12.13–15:) Ինչո՞ւ էին մարդիկ զայրացած Աբինադիի, այլ ոչ թե Նոյի վրա, որը հարկեր էր նրանցից հավաքում և պարտադրում էր նրանց աջակցել իր անօրինություններին: (Տե՛ս Մոսիա 11.7, 29:)
- Ինչո՞ւ այսօր շատ մարդիկ չեն ընդունում Տիրոջ ծառաներին, ինչպիսին էր Աբինադին, և, փոխարենը, ընդունում են այնպիսի մարդկանց, որոնք նման են Նոյին: Ինչո՞ւ է կարևոր ճանաչել և հետևել Աստծո մարգարեներին: (Տե՛ս Մոսիա 8.16–18; Վ և Ու 1.38; 84.36–38:)

Եզրափակում

Դասարանի անդամներին խրախուսեք հետևել արդար առաջնորդների խորհուրդներին, հատկապես նրանց խորհուրդներին, ում Տերը կանչել է որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնություն ստացողներ:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

«Ասված ինքը . . . պիտի փրկագնի իր ժողովրդին»

Դաս
18

Մոսիա 12–17

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին գնահատել Հիսուս Քրիստոսի Քավության կարևորությունը և հավատարիմ մնալ Քավության մասին իրենց վկայություններին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Մոսիա 12–13: Աբինադին Նոյ թագավորին և նրա քահանաներին կոչ է անում ապաշխարության: Նա հորդորում է նրանց պահել պատվիրանները: Նա սովորեցնում է, որ Մովսեսի օրենքի ծեսերը և արարողությունները Հիսուս Քրիստոսի Քավության խորհրդանիշներն են:
   բ. Մոսիա 14–16: Աբինադին մեջբերում է կատարում Եսայիայից: Նա վկայում է Քավության մասին և կոչ է անում Նոյի քահանաներին մարդկանց սովորեցնել այն, որ փրկագնումը գալիս է Քրիստոսի միջոցով:
   գ. Մոսիա 17: Ալման, որը Նոյի քահանաներից էր, ապաշխարում է և գրի է առնում Աբինադիի խոսքերը: Աբինադին իր կյանքով է կնքում Փրկչի մասին իր վկայությունը:

2. Եթե առկա է «Աբինադին Նոյ թագավորի առջև» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ընթացքում (62042; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 308):

3. Եթե պատրաստվում եք ուշադրության վարժություն անցկացնել, ապա դասարան բերեք վարժության մեջ նշված բոլոր նկարները:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Բացատրեք, որ սուրբ գրություններում կան շատ հատվածներ, որտեղ Տերը մարդկանց դժվար հանձնարարություններ է տալիս:

- Որո՞նք են սուրբ գրություններում նշված այդ դժվար առաքելությունները կամ ծառայությունները: (Մի քանի հնարավոր պատասխաններ, ինչպես նաև որոշ իրադարձություններ պատկերող նկարների համարները, տրված են ստորև:)

  ա. Նոյը քարոզում է մարդկանց (62053; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 102)
  բ. Մովսեսն առաջնորդում է Իսրայելացիներին Եգիպտոսից դուրս (62100)
  գ. Լեքին նախազգուշացնում է Երուսաղեմի ժողովրդին (62517; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 300)
  դ. Եսթերը կանգնում է Ասուերոս թագավորի առջև (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 125)
  ե. Աբինադին քարոզում է Նոյ թագավորին (62042; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 308)
  զ. Սամուէլը քարոզում է Զարահեմլայում (62370; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 314)
  է. Ջոզեֆ Սմիթը կատարում է Վերականգնման Մարգարեի իր առաքելությունը (62470; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 403)

- Ինչո՞ւ էին այդ առաքելությունները դժվար: Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին այդ մարդիկ պատրաստ կատարելու իրենց առաքելությունները, չնայած աննախադեպ ծանր հանգամանքների:

Ցույց տվեք «Աբինադին Նոյ թագավորի առջև» նկարը և բացատրեք, որ այս դասը քննարկում է Աբինադիի ուսմունքները: Դասարանի անդամներին խրախուսեք գտնել այն պատճառները, թե ինչո՞ւ էր Աբինադին պատրաստ զոհելու իր կյանքը մարդկանց քարոզելու համար:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է սուրբ գրությունների այդ հատվածները կիրառել առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Աբինադին Նոյին և նրա քահանաներին հորդորում է ապաշխարել, պահել պատվիրանները և սովորեցնում է Քավության մասին:

Քննարկեք Մոսիա 12–13: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Դասի ընթացքում ցույց տվեք «Աբինադին Նոյ թագավորի առջև» նկարը:

- Երկու տարի անց այն բանից հետո, երբ Աբինադին քարոզում էր Նոյի ժողովրդին, նա վերադառնում է նրանց մոտ ասելու, որ չապաշխարելու դեպքում նրանք տանջանքներ կկրեն և կընկնեն ճորտության մեջ (Մոսիա 12.1–7): Նա նույնպես ասաց, որ նրանք կկործանվեն, եթե չապաշխարեն (Մոսիա 12.8): Ինչպե՞ս մարդիկ արձագանքեցին այդ ուղերձին (Տե՛ս Մոսիա 12.9–16:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին նրանք պաշտպանում Նոյին:
- Նրանից հետո, երբ Աբինադին դիմակայեց քահանաների «հարցաքննությանը», ի՞նչ հարցրեց նրան քահանաներից մեկը սուրբ գրության մի հատվածի վերաբերյալ (Մոսիա 12.20–24; դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ այդ հատվածները): Ինչո՞ւ քահանաներն ի վիճակի չէին հասկանալու այդ հատվածը: (Տե՛ս Մոսիա 12.25–27: Նշեք, որ այս հատվածի իմաստը կքննարկվի ավելի ուշ:) Ի՞նչ է նշանակում նվիրել մեր սրտերը հասկանալուն: Ինչո՞ւ է կարևոր նվիրել մեր սրտերը, երբ ուսումնասիրում և սովորեցնում ենք ավետարանը: (Տե՛ս Վ և Ու 8.2–3:)
- Ըստ Աբինադիի, ո՞րն էր քահանաների սխալը, երբ նրանք հայտարարում էին, որ սովորեցնում են Մովսեսի օրենքը: (Տե՛ս Մովսես 12.28–37:) Ինչո՞ւ է կարևոր ապրել ըստ այն ճշմարտությունների, որոնք ուսուցանում ենք:
- Ի՞նչն Աբինադիին հնարավորություն տվեց տեղ հասցնելու իր ուղերձը: (Տե՛ս Մոսիա 13.1–9: Շեշտեք, որ Տերն այնպես արեց, որպեսզի Աբինադին կարողանա վկայել Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Սա ցույց է տալիս Քավության ուղերձի կարևորությունը:)
- Ինչո՞ւ Աբինադին Նոյի և նրա քահանաների համար կարդաց Տաս Պատվիրանները (Տե՛ս Մոսիա 13.11:) Ինչպե՞ս կարող են մեր սրտերում գրված պատվիրանները ներգործել դրանք կատարելու մեր ջանքերի վրա:
- Մովսեսի օրենքը չպահելու համար Նոյին և նրա քահանաներին ապաշխարության կոչելուց հետո Աբինադին ասաց. «Փրկություն չի գալիս միայն օրենքով» (Մոսիա 13.28): Ինչպե՞ս է գալիս փրկությունը: (Տե՛ս Մոսիա 13.14, 28, 32–35; Հավատո Հանգանակ 1.3:)
- Ո՞րն էր Մովսեսի օրենքի նպատակը: (Տե՛ս Մոսիա 13.29–33: Բացատրեք, որ Մովսեսի օրենքի կատարումները և ծեսերը գալիք բաների խորհրդանիշներն էին: Դրանք մարդկանց տրվել էին Քրիստոսի գալստին պատրաստվելու համար:)

2. Աբինադին մեջբերում է կատարում Եսայիայից, վկայում է Քավության մասին և Նոյի քահանաներին հորդորում է մարդկանց սովորեցնել Քրիստոսի միջոցով եկող փրկագնման մասին:

Կարդացեք ընտրված հատվածները Մոսիա 14–16-ից:

- Որպես Հիսուս Քրիստոսի մասին վկայության մի մաս Աբինադին մեջբերեց Եսայիա մարգարեից: Ի՞նչ մենք սովորեցինք Փրկչի մասին Մոսիա 14-ից: (Դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ այս գլխի հատվածները և գտնել այս հարցի պատասխանները: Նրանց պատասխաններն ամփոփեք գրատախտակի վրա: Մի քանի հնարավոր պատասխաններ տրված են ստորև:)

  ա. Փրկիչն ապրել է հեզությամբ և խոնարհությամբ (Մոսիա 14.2):
  բ. Շատ մարդիկ չընդունեցին Նրան (Մոսիա 14.3):
  գ. Նա կրեց մեր ցավերը և վշտերը (Մոսիա 14.4):
  դ. Նա Իր վրա վերցրեց բոլոր մարդկանց մեղքերը (Մոսիա 14.5–6, 8, 10–12):
  ե. Նա Իր հոժար կամքով ենթարկեց Իրեն հալածանքի և մահվան (Մոսիա 14.7–9):
  զ. Նա առանց մեղքի էր (Մոսիա 14.9):

- Աբինադին ասաց, որ Փրկիչը կլինի «բավարարած . . . արդարադատության պահանջները» (Մոսիա 15.9): Որո՞նք էին արդարադատության պահանջները: (Տե՛ս Ալմա 42.11, 14:) Ի՞նչ արեց Փրկիչը արդարադատության պահանջները բավարարելու համար: (Տե՛ս Մոսիա 15.9; Ալմա 42.12–13, 15:)

- Աբինադին խոսեց Հիսուս Քրիստոսի սերնդի, կամ որդիների և դուստրերի, մասին (Մոսիա 15.10; տե՛ս նաև Մոսիա 14.10): Ի՞նչ է նշանակում լինել Փրկչի որդիները և դուստրերը: (Տե՛ս Մոսիա 15.11–14; տե՛ս նաև Մոսիա 5.5–7: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը փրկության հեղինակն է: Նրա և Նրա ավետարանն ընդունողների միջև Հայր-զավակ հարաբերություններ գոյություն ունեն: Մենք դառնում ենք Նրա սերունդը, կամ Նրա որդիներն ու դուստրերը, երբ հավատում ենք Նրան, ապաշխարում ենք մեր մեղքերը և ուխտ ենք կապում՝ կատարելու Նրա կամքը և պահելու Նրա պատվիրանները:)

- Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Նոյի քահանաներից մեկն Աբինադիին խնդրեց բացատրել Եսայիայի խոսքերը. «Որքան գեղեցիկ են սարերի վրա ոտքերը նրա, որ բերում է բարի ավետիք» (Մոսիա 12.20–24): Ո՞րն է այդ բարի ավետիքը: (Տե՛ս Մոսիա 15.19–25; Վ և Ու 76.40–42:) Ովքե՞ր են այդ բարի ավետիք բերողները: (Տե՛ս Մոսիա 15.13–18: Ինքը Փրկիչը, մարգարեները և բոլոր նրանք, ովքեր տարածում են ավետարանը:) Ինչպե՞ս կարող ենք օգնել այդ բարի ավետիքն ուրիշներին հասցնելու գործում:

- Ինչպե՞ս կարող ենք օրհնվել մահից հետո, եթե հավատացել ենք Քրիստոսին, հետևել ենք Նրան և ընդունել ենք Նրա Քավությունը: (Տե՛ս Մոսիա 15.21–23; 16.8–11:) Ի՞նչ կպատահի մեզ հետ, եթե մերժենք Քրիստոսին և Նրա Քավությունը: (Տե՛ս Մոսիա 15.26–27; 16.2–3, 5, 10–12:)

- Իր խոսքի վերջում Աբինադին ի՞նչ կոչ արեց Նոյին և նրա քահանաներին անել: (Տե՛ս Մոսիա 16:13–15:) Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ խորհուրդը մեր կյանքում:

3. Աբինադին կնքում է Փրկչի մասին իր վկայությունը իր մահով:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 17-ից:

- Արդյո՞ք Նոյ թագավորին և նրա մարդկանց ուղղված Աբինադիի առաքելությունը հաջողվեց: Ինչո՞ւ՝ այո, և ինչո՞ւ՝ ոչ: Ո՞վ դարձի եկավ Աբինադիի ուսմունքների շնորհիվ: (Տե՛ս Մոսիա 17.2–4; Ալմա 5.11–12; տե՛ս նաև ուսուցանման լրացուցիչ մտքերից չորրորդը:)

- Երբ Աբինադին ավարտեց իր խոսքը, ինչպե՞ս որոշեցին նրա հետ վարվել Նոյ թագավորը և դատավորները: (Տե՛ս Մոսիա 17.1, 7:) Ի՞նչ կարող էր Աբինադին անել մահից խուսափելու համար: (Տե՛ս Մոսիա 17.8:) Ինչո՞ւ նա հրաժարվեց հետ վերցնել իր խոսքերը: (Տե՛ս Մոսիա 17.9–10, 20:) Թեպետև մենք կարիք չենք ունենա զոհվելու մեր հավատքի համար, ինչպե՞ս կարող ենք հետևել Աբինադիի օրինակին:

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Քրիստոսը փոխում է մարդկանց, և փոխված մարդիկ կարող են փոխել աշխարհը: Մարդիկ, որոնք փոխվել են Քրիստոսի համար, կդառնան Քրիստոսի հետևորդները . . . Մարդիկ, որոնք փոխվել են Քրիստոսի միջոցով, կսպառվեն Քրիստոսում . . . Նրանք կուլ կգնան Նրա կամքին: (Տե՛ս Հովհաննես 5.30:) Նրանք միշտ անում են այնպիսի բաներ, որոնք գոհացնում են Տիրոջը: (Տե՛ս Հովհաննես 8.29:) Նրանք ոչ թե կզոհվեն Տիրոջ համար, այլ, որն ավելի կարևոր է, կցանկանան ապրել Նրա համար» (in Conference Report, Oct. 1985, 5–6; or *Ensign*, Nov. 1985, 6):

Եզրափակում

Նշեք, որ Աբինադիի և Ալմայի գործերը մեզ օգնում են տեսնել Քավության կարևորությունը: Տերը պահպանեց Աբինադիի կյանքը, որպեսզի նա կարողանար վկայել Քավության մասին (Մոսիա 13.1–9): Իր ուղերձը տեղ հասցնելուց հետո Աբինադին «կնքեց իր խոսքերի ճշմարտացիությունն իր մահով» (Մոսիա 17.20): Ալման գրի առավ «բոլոր խոսքերը, որոնք Աբինադին խոսել էր» (Մոսիա 17.4): Այնուհետև նա հնազանդվեց Աբինադիի պատվիրանին «Սովորեցրե՛ք նրանց, որ փրկագնումը գալիս է Տեր Քրիստոսի միջոցով» (Մոսիա 16.15): Դասարանի անդամներին խրախուսեք հավատարիմ մնալ Քավության մասին իրենց վկայությանը և տարածել Քավության ուղերձը:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. Օրհներգ

Դասարանի անդամների հետ միասին երգեք մի օրհներգ Հիսուս Քրիստոսի Քավության մասին, օրինակ՝ «I Stand All Amazed»" (*Օրհներգեր,* հմ. 193) կամ «Որքան մեծ է իմաստությունդ ու սերդ» (*Օրհներգեր,* հմ. 195), կամ կարդացեք այդ օրհներգերի բառերը: Կարող եք Քավության մասին որևէ երգի ձայնագրություն ունկնդրել:

2. Տեսաֆիլմ

Երբ քննարկում եք Փրկչի մասին Աբինադիի վկայությունը և Նոյ թագավորի և նրա քահանաների վերաբերմունքը, ցուցադրեք "What Think Ye of Christ?" հինգ րոպեանոց հատվածը *Family Home Evening Video Supplement 2* (53277) –ից:

3. «Հայրը և Որդին» (Մոսիա 15.2)

Հետևյալ տեղեկությունն օգտագործեք բացատրելու համար Մոսիա 15.1–9-ում Աբինադիի ուսմունքները.

Երբ Աբինադին խոսեց Հիսուսի մասին որպես «Հայր և Որդի», նա չէր սովորեցնում, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը նույն էակն են: Երկնային Հայրը, Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին երեք առանձին և տարբեր անձնավորություններ են (Վ և Ու 130.22):

Երբ հին մարգարեները խոսել են Աստծո կամ Տիրոջ մասին, նրանք հաճախ խոսել են Եհովայի, նախաերկրային Մեսիայի, մասին (Մոսիա 13.33–34; 14.6): Այսպիսով, Աբինադին սովորեցնում էր Հիսուս Քրիստոսի մասին, երբ ասում էր. «Աստված ինքը պիտի գա ներքև՝ մարդկանց զավակների մեջ և պիտի փրկագնի իր ժողովրդին» (Մոսիա 15.1; տես նաև Մոսիա 7.27–28): Մոսիա 15.1–9-ում Աբինադիի ուսմունքները վերաբերվում են որպես Հայր և որպես Աստծո Որդի Հիսուսի դերին:

Որպես Հայր Հիսուսի դերն ընդգրկում է *(ա)* Նրա աշխատանքը որպես «երկնքի և երկրի Հայր, բոլոր բաների Ստեղծող՝ ի սկզբանե» (Մոսիա 3.8); *(բ)* Նրա առաքելությունը որպես Հայր նրանց համար, ովքեր ընդունում են Նրա ավետարանը և հետևում են Իրեն (Մոսիա 5.7; 15.10–13; Եթեր 3.14); և Երկնային Հոր անունից խոսելու և գործելու Նրա իշխանությունը, որը կոչվել է «աստվածային իշխանության հաստատում»: Որպես Աստծո Որդի Հիսուսի

դերն ընդգրկում է *(ա)* աշխարհի մեղքերի Քավությունը (Մոսիա 15:6–9) և *(բ)* Նրա ծառայությունը որպես մեր Միջնորդ և Դատապաշտպան Երկնային Հոր մոտ (Հակոբ 4.10–11; Վ. և Ու. 45.3–5):

Աբինադին ասաց, որ Հիսուսը կոչվել է Որդի, «մարմնի պատճառով» և Հայր, «որովհետև նա հղիացվել է Աստծո զորությամբ» (Մոսիա 15.2–3; տե՛ս նաև Վ. և Ու. 93.3–4): Երբ Աբինադին խոսում էր Որդու կամքի մասին «կուլ գնացած լինելով Հոր կամքին» (Մոսիա 15.7), նա նկատի ուներ Հիսուսին, որը ենթարկում էր Իր մարմինը Իր հոգուն (Մոսիա 15.2–5; տե՛ս նաև 3 Նեփի 1.14): Երբ Հիսուսը ենթարկեց Իր մարմինն Իր հոգուն, Նա նաև ենթարկեց Իր կամքը Երկնային Հոր կամքին (Մաթեոս 26.39; Վ. և Ու. 19.16–19):

4. Միսիոներական աշխատանքի անտեսանելի արդյունքները

Բացատրեք, որ Աբինադին կարող էր այդպես էլ մահանալ առանց իմանալու, որ ինչ-որ մեկը հավատաց իր ուսմունքներին: Սակայն Ալման դարձի եկավ Աբինադիի ջանքերի շնորհիվ, և նա և նրա սերունդները մեծ ազդեցություն ունեցան Նեփիացիների վրա շատ սերունդների ընթացքում: Դասարանի հետ կիսվեք Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ պատմությունով.

«Դուք չեք իմանում, թե որքան շատ բարիք կարող եք անել, դուք չեք կարող կանխատեսել ձեր գործադրած ջանքերի արդյունքները: Տարիներ առաջ Նախագահ Չարլզ Ա. Քոլիսը, որն այդ ժամանակ ծառայում էր Տասներկուսի Քվորումում, բայց նախկինում, քսաներկու տարիների ընթացքում, եղել էր Հարավային Նահանգների Միսիայի Նախագահը, պատմեց ինձ այս պատմությունը: Նա ասաց, որ հարավում ուներ մի միսիոներ, որի միսիան իր ավարտին էր մոտեցել և նա եկել էր իր միսիայից ազատվելու խնդրով: Նրա միսիայի նախագահը ասաց նրան. «Լա՞վ միսիա անցկացրեցիր»:

«Նա ասաց. «Ոչ»:

«Ինչո՞ւ»

«Դե՛, աշխատանքս ոչ մի արդյունք չունեցավ: Միայն վատնեցի ժամանակս և հորս փողերը: Դա ժամանակի կորուստ էր»:

Եղբայր Քոլիսը հարցրեց. «Չմկրտեցի՞ր որևէ մեկին»:

Նա պատասխանեց. «Երկու տարիների ընթացքում ես մկրտեցի միայն մեկ հոգու: Դա տասներկու տարեկան մի տղա էր, Թենեսիի խուլ շրջանում»:

Նա գնաց տուն ձախողման ծանր զգացումով: Եղբայր Քոլիսն ասաց. «Ես որոշեցի հետևել այն տղայի կյանքին, որին նա մկրտել էր: Ցանկանում էի իմանալ, թե ինչ նրանից դուրս եկավ . . .

Տարիների ընթացքում հետևում էի նրան: Նա ծառայեց Կիրակնօրյա Դպրոցում, հետագայում դարձավ ճյուղի նախագահ: Ամուսնացավ: Տեղափոխվեց այն փոքր ֆերմայից, որտեղ իրենից առաջ ապրում էին իր ծնողները, և մի փոքր կտոր սեփական հող ձեռք բերեց, որը դարձրեց պտղատու այգի: Նա դարձավ շրջանի նախագահ: Վաճառեց Թենեսիում այդ հողը և տեղափոխվեց Այդահո, որտեղ Սնեյք Գետի եզերքին մի ֆերմա գնեց և բարգավաճեց: Նրա երեխաները մեծացան: Նրանք մեկնեցին միսիայի: Վերադարձան տուն: Ունեցան իրենց երեխաները, որոնք գնացին միսիայի:

Եղբայր Քոլիսը շարունակեց. «Ես մեկ շաբաթ անցկացրեցի Այդահոյում, գտնելով այդ ընտանիքի յուրաքանչյուր անդամի և զրուցելով նրանց միսիոներական ծառայության մասին: Ես բացահայտեցի, որ Թենեսիի խուլ շրջանում այդ մեկ փոքր տղայի մկրտության արդյունքում այն միսիոների կողմից, որը կարծում էր, որ իր միսիան ձախողվել էր, ավելի քան 1,100 մարդ միացավ Եկեղեցուն:

Դուք երբեք չեք կարող նախօրոք դատել ձեր աշխատանքի արդյունքների մասին, երբ ծառայում եք որպես միսիոներներ, իմ սիրելի եղբայրներ և քույրեր» (*Teachings of Gordon B. Hinckley* [1997], 360–61):

Դաս
19

«Ոչ մեկը ի զորու չեղավ նրանց ազատել, բացի Տիրոջից»

Մոսիա 18–24

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին միշտ պահել մկրտության ուխտը հարգելու և Տիրոջն ապավինելու իրենց պատրաստակամությունը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Մոսիա 18: Ալման սովորեցնում է մկրտության ուխտի մասին, մկրտում է մի խումբ մարդկանց և հիմնում է Եկեղեցին:
   բ. Մոսիա 19: Նոյ թագավորը դավաճանում է իր մարդկանց և մահանում է կրակից: Նոյի որդի Լիմքին դառնում է թագավոր:
   գ. Մոսիա 20–22: Լիմքիի մարդիկ ընկնում են գերի Լամանացիներին: Փորձելով ազատվել գերությունից, նրանք ապաշխարում են և շրջվում դեպի Տերը: Տերը վերջապես ազատում է նրանց գերությունից:
   դ. Մոսիա 23–24: Ալմայի մարդիկ գերի են վերցվում Լամանացիների կողմից: Ամուղոնը, որը Նոյի քահանաներից էր, կառավարիչ էր նրանց վրա: Նրանք շրջվում են դեպի Տերը, և Նա թեթևացնում է նրանց բեռը ու ազատում նրանց գերությունից:

2. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժություն, ապա դասարան բերեք «Ալման մկրտում է Մորմոնի ջրերում» նկարը (62332; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 309): Կարող եք այս նկարն օգտագործել դասի ընթացքում:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին հարցրեք.

- Որո՞նք են ձեր տեսած ամենագեղեցիկ վայրերը: Ի՞նչն է այդ վայրերը ձեզ համար գեղեցիկ դարձնում:

Ցուցադրեք «Ալման մկրտում է Մորմոնի ջրերում» նկարը:

- Ինչո՞ւ էր այդ վայրն այդքան սքանչելի Ալմայի մարդկանց համար: (Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մոսիա 18.30: Դասարանի անդամներից մեկին կամ երկուսին խնդրեք պատմել այն վայրերի մասին, որոնք հոգևոր նշանակություն են ձեռք բերել իրենց համար:)

Բացատրեք, որ այս դասում քննարկվում է այն ուխտը, որն Ալմայի մարդիկ կապեցին «Մորմոնի վայրում»:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների ճշմարտությունների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ալման սովորեցնում է մկրտության ուխտի մասին և մկրտում բազմաթիվ մարդկանց:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 18-ից: Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Ալման, որը Նոյ թագավորի քահանաներից էր, հավատաց Աբինադիի ուսմունքներին: Նա փախչեց Նոյի ծառաներից և թաքնվեց անապատում, որտեղ գրի առավ «բոլոր խոսքերը, որոնք Աբինադին խոսել էր» (Մոսիա 17.2–4): Նա «ապաշխարեց իր մեղքերից . . . և սկսեց սովորեցնել Աբինադիի խոսքերը» (Մոսիա 18.1–3): Ալմային հավատացողները գնացին մի վայր, որը կոչվում էր Մորմոն, նրա ուսուցումները լսելու համար (Մոսիա 18.4–6):

- Ի՞նչ էր Ալման սովորեցնում «Մորմոն վայրում»: (Տե՛ս Մոսիա 18.7:) Ի՞նչ ցանկացան մարդիկ անել նրանից հետո, երբ Ալման սովորեցրեց նրանց: (Տե՛ս Մոսիա 18.8:) Ի՞նչ է նշանակում «գալ Աստծո հոտը և կոչվել Նրա ժողովուրդը»: (Տե՛ս Մոսիա 18.16–17; տե՛ս նաև Եբրայեցիս 8.10; Ալմա 5.60:)

- Ի՞նչ ցանկացան անել մարդիկ որպես «Աստծո հոտի» անդամներ: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Մոսիա 18.8–9 այս հարցի պատասխանները գտնելու համար: Նրանց պատասխաններն ամփոփեք գրատախտակի վրա: Այնուհետև քննարկեք պատասխանները ստորև տրված ձևով:)

  ա. «Կրելու մեկը մյուսի բեռը» (Մոսիա 18.8): Ինչպե՞ս կարող ենք «կրել մեկս մյուսի բեռը»: Ինչպե՞ս «մեկը մյուսի բեռը» կրելը կարող է թեթևացնել այդ բեռը: Ինչպե՞ս եք օրհնվել, երբ ուրիշներն օգնել են կրել ձեր բեռը:
  բ. «Սգալու նրանց հետ, ովքեր սգում են» (Մոսիա 18.9): Ինչո՞ւ է օգուտ «սգալու նրանց հետ, ովքեր սգում են»:
  գ. «Մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության» (Մոսիա 18.9): Ինչպե՞ս կարող ենք պատշաճ ձևով ուրիշներին մխիթարություն առաջարկել:
  դ. «Կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում» (Մոսիա 18.9): Ի՞նչ է նշանակում «կանգնել Աստծո վկաներ բոլոր ժամանակներում և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»: (Մոսիա 18.9):

- Երբ Ալման քարոզեց մարդկանց, ի՞նչ առաջարկեց նրանց անել: (Տե՛ս Մոսիա 18.10: Նա նրանց առաջարկեց մկրտվել և մտնել ուխտի մեջ Տիրոջ հետ:) Ի՞նչ է ուխտը:

  Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը սովորեցրել է. «Ուխտը դա համաձայնություն կամ պայմանագիր է առնվազն երկու կողմերի միջև: Ավետարանային ուխտի դեպքում, կողմերն են՝ Տերը երկնքում և մարդիկ երկրի վրա: Մենք համաձայնվում ենք պահել պատվիրանները, իսկ Տերը խոստանում է վարձահատույց լինել համապատասխանաբար» (in Conference Report, Oct. 1970, 91; or *Improvement Era,* Dec. 1970, 26):

- Մոսիա 18.8–13-ի վերաբերյալ Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին ասել է. «Ես գիտեմ, որ չկա մկրտության ուխտի ավելի լավ բացատրություն» (in Conference Report, Oct. 1975, 109; or *Ensign,* Nov. 1975, 73): Համաձայն Մոսիա 18.8–13, ի՞նչ ենք խոստանում մկրտության ժամանակ: (Տե՛ս նաև Մորոնի 6.2–3; Վ. և Ու. 20.37:) Ի՞նչ է խոստանում Տերն այն դեպքում, եթե մենք մկրտվենք և հավատարիմ մնանք մկրտության մեր ուխտին: (Տե՛ս Մոսիա 18.10, 12–13; տե՛ս նաև 2 Նեփի 31.17:)

- Ինչպե՞ս մարդիկ արձագանքեցին մկտրվելու Ալմայի առաջարկին: (Տե՛ս Մոսիա 18.11: Ցուցադրեք «Ալման մկրտում է Մորմոնի ջրերում» նկարը:) Ի՞նչ կարող ենք անել՝ օգնելու ուրիշներին ստանալ այդպիսի մեծ ուրախություն: (Կարող եք դասարանի անդամներին խրախուսել մտածել այն մարդկանց մասին, ում հետ նրանք կարող են կիսվել ավետարանով:)

- Նրանից հետո, երբ մարդիկ մկրտվեցին, Ալման պատվիրեց նրանց ունենալ «իրենց սրտերը միավորված միասնությամբ ու սիրով մեկը մյուսի հանդեպ» (Մոսիա 18.21): Ի՞նչ կարող ենք անել հետևելու համար այս պատվիրանին տանը, մեր ծխում կամ ճյուղում: (Տե՛ս Մոսիա 18.19–21:)

2. Նոյ թագավորը դավաճանում է իր մարդկանց և ենթարկվում մահվան կրակով:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 19-ից: Բացատրեք, որ Նոյ թագավորի մարդկանցից շատերը սկսեցին ընդդիմանալ նրա դեմ (Մոսիա 19.2–3): Այդ մարդկանցից մեկը՝ Գեդէոնը, արդեն պետք է սպաներ Նոյին, երբ վերջինս տեսավ իրենց վրա շարժվող Լամանացիների բանակը (Մոսիա 19.4–6):

- Ի՞նչ արեց Նոյ թագավորը, երբ տեսավ առաջ շարժվող Լամանացիների բանակը: (Տե՛ս Մոսիա 19.7:) Ո՞ւմ մասին էր ավելի շատ մտահոգված Նոյը: (Տե՛ս Մոսիա 19.8:) Ինչպե՞ս կարելի է Նոյին համեմատել մեր օրերի մարդկանց հետ, որոնք փորձում են հեռացնել մեզ Տիրոջից և Նրա մարգարեներից:
- Ի՞նչ էր մարգարեացել Աբինադին Նոյ թագավորի մահվան մասին: (Տե՛ս Մոսիա 12.3:) Ինչպե՞ս իրականացավ այդ մարգարեությունը: (Տե՛ս Մոսիա 19.18–20: Նշեք, որ մարդիկ, որոնք վերջում Նոյի կյանքը գնահատեցին որպես «մի շոր, թեժ հնոցում», մի ժամանակ կույր էին նրա անարդարութունների հանդեպ, ինչպես պատկերված է Մոսիա 11.29-ում:)

3. Լիմքիի մարդիկ պատժվում են, բայց ի վերջո փրկվում Տիրոջ կողմից:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 20–22-ից (նշեք, որ այդ գլուխները պարունակում են Ամմոնի և նրա եղբայրների պատմությունը, որոնք գտնում են Լիմքիի ժողովրդին, ինչպես քննարկվեց դաս 17-ում): Բացատրեք, որ Նոյի սպանությունից հետո, նրա որդի Լիմքին դարձավ թագավոր: Լիմքին երդվեց, որ նա և նրա ժողովուրդը կվճարեն իրենց ունեցվածքի կեսի չափով Լամանացիներին, եթե նրանք չոչնչացնեն իրենց (Մոսիա 19.25–26):

- Երկու տարի խաղաղ ապրելուց հետո Լամանացիները Լիմքիի ժողովրդին պատերազմ հայտարարեցին (Մոսիա 20.7–10): Ինչո՞ւ էին Լամանացիները ցանկանում ոչնչացնել Լիմքիի ժողովրդին: (Տե՛ս Մոսիա 20.1–6:)
- Երբ Լամանացիներն իմացան, որ սխալ էին դատել Լիմքիի ժողովրդին, նրանք խաղաղությամբ վերադարձան իրենց երկիրը (Մոսիա 20.17–26): Սակայն, «շատ օրեր հետո, Լամանացիները սկսեցին կրկին բարկության դրդվել՝ ընդդեմ Նեփիացիների» (Մոսիա 21.2): Ինչպե՞ս վարվեցին Լամանացիները Նեփիացիների հետ, որպեսզի պահեին իրենց թագավորի տված երդումը՝ չսպանել նրանց: (Տե՛ս Մոսիա 21.3:)
- Ինչպե՞ս Լիմքիի ժողովրդի գերությամբ իրականացան Աբինադիի մարգարեությունները: (Դասարանի անդամներին խնդրեք համեմատել Մոսիա 21.3–5, 14–15 հատվածները Մոսիա 11.20–25 և 12.2, 4–5 հատվածների հետ:) Ինչո՞ւ Լիմքիի ժողովուրդը գերի ընկավ: (Տե՛ս Մոսիա 7.25–32; 20.21: Նրանք մերժեցին Աբինադիի ուսմունքները և նախազգուշացումները իրենց մեղսագործությունների հետևանքների վերաբերյալ:) Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ մեղքը հետևանքներ ունի:
- Երեք անգամ Լամանացիներից անհաջող պաշտպանվելուց հետո, ինչպե՞ս վարվեց Լիմքիի ժողովուրդը: (Տե՛ս Մոսիա 21.13–14:) Ինչո՞ւ էր Տերը դանդաղ նրանց աղաղակներին պատասխանելիս: (Տե՛ս Մոսիա 21.15; տե՛ս նաև Վ. և Ու. 101.1–9:) Թեպետ և Տերը միանգամից չազատեց նրանց, ի՞նչ Նա արեց նրանց համար: (Տե՛ս Մոսիա 21.15–16:) Ինչպե՞ս է Տերը երբեմն մեզ թույլ տալիս «աստիճանաբար բարգավաճել»:
- Ինչպե՞ս Լիմքիի ժողովուրդը փախչեց Լամանացիներից: (Տե՛ս Մոսիա 22.3–12:) Ինչպե՞ս նրանց ընդունեց Զարահեմլայի ժողովուրդը: (Տե՛ս Մոսիա 22.13–14:)

4. Տերը Ալմայի ժողովրդին ազատում է գերությունից:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 23–24: Դասարանի անդամներին օգնեք տեսնել տարբերությունն այն բաների միջև, թե ինչպես Տերն օրհնեց Լիմքիի մարդկանց, որոնք իրենք իրենց ազատելու երեք փորձերից հետո դիմեցին Իրեն, և թե ինչպես Նա օրհնեց Ալմայի ժողովրդին, որն ամբողջովին դեպի Իրեն էր շրջվել:

- Երբ Ալման և նրա մարդիկ գտնվում էին Մորմոնի վայրում, Նոյ թագավորը «ուղարկեց իր զորքը՝ կործանելու նրանց» (Մոսիա 18.33): Տերը նախազգուշացրեց Ալմայի ժողովրդին և զորացրեց նրանց, որպեսզի նրանք կարողանան փախչել (Մոսիա 18.34–35; 23.1–5): Ինչպե՞ս էր դա տարբերվում Լիմքիի ժողովրդի ազատումից: (Տե՛ս Մոսիա 19.6: Նշեք, որ, երբ Լամանացիներն առաջին անգամ հարձակվեցին այդ ժողովրդի վրա, Նոյը դեռ նրանց թագավորն էր, և նրանք ոչ մի նախազգուշացում չստացան:)
- Ի՞նչ ասաց Ալման, երբ մարդիկ նրան խնդրեցին լինել իրենց թագավորը: (Տե՛ս Մոսիա 23.6–7:) Ինչպե՞ս Ալման գիտեր այն վտանգի մասին, որն առաջանում էր, երբ մի մարդ իրեն մյուսից վեր էր դասում»: (Տե՛ս Մոսիա 23.8–14:) Ի՞նչ կարող ենք սովորել Ալմայից և նրա ժողովրդից այդ սխալից խուսափելու համար: (Տե՛ս Մոսիա 23.15:)
- Ալմայի ղեկավարության ներքո մարդիկ ապրում էին արդարության մեջ և բարգավաճում էին (Մոսիա 23.15–20): Այնուամենայնիվ, Տերը թույլ տվեց, որպեսզի նրանք գերի ընկնեն Ամուղոնին, Նոյ թագավորի քահանաներից մեկին (Մոսիա 23.23–39): Ինչպե՞ս Ալմայի մարդկանց գերությունն իրականացրեց Աբինադիի մարգարեությունները: (Տե՛ս Մոսիա 12.2, 4–5:) Ինչպե՞ս կարող են մեր սխալ ընտրությունները հետագայում հետևանքներ ունենալ, անգամ, եթե մեր մեղքերն արդեն ներվել են:

  Երեց Մարվին Ջ. Էշտոնն ասել է. «Մեր արարքներն ընտրելու ազատությունը չի տալիս մեզ անձնական ազատություն այդ արարքների հետևանքներից: Մեր հանդեպ Աստծո սերն հարատև է և չի մարում, սակայն Նա չի կարող փրկել մեզ սխալ ընտրությունների ցավալի արդյունքներից» (in Conference Report, Oct. 1990, 24; or *Ensign,* Nov. 1990, 20):

Նշեք, որ, թեպետև Տերը չէր կարող կանխել Ալմայի ժողովրդի անցյալում կատարած մեղքերի պատճառով ի հայտ եկած տառապանքները, Նա մխիթարեց և զորացրեց նրանց՝ իրենց չարչարանքներում: Դասի մնացած բաժինը պատմում է այն մասին, թե ինչպես Տերն ազատեց նրանց ճորտությունից:

- Ալմայի ժողովրդի ճորտության մասին խոսելիս Մորմոնն ասում է. «Տերը հարմար է տեսնում խրատել իր ժողովրդին» (Մոսիա 23.21): Ինչո՞ւ է Տերը խրատում Իր ժողովրդին: (Տե՛ս Մոսիա 23.21; Վ. և Ու. 95.1–2:) Ինչպե՞ս մենք պետք է պատասխանենք, երբ Տերը խրատում է մեզ: (Տե՛ս Մոսիա 23.22:)
- Ի՞նչ արեց Ալմայի ժողովուրդը, երբ Ամուղոնը սպառնաց սպանել նրանց, եթե աղոթեն: (Տե՛ս Մոսիա 24.10–12:) Ինչպե՞ս Տերը պատասխանեց նրանց լուռ աղոթքներին: (Տե՛ս Մոսիա 24.13–16:) Ինչպե՞ս սա օգնեց նրանց լինել Տիրոջ վկաները Մորմոնի ջրերում ուխտ կապելուց հետո: (Տե՛ս Մոսիա 24.14:)
- Ինչո՞ւ է բեռն ավելի թեթև, երբ մենք «զվարթությամբ և համբերատարությամբ հնազանդվում ենք Տիրոջ ողջ կամքին» (Մոսիա 24.15): Ի՞նչ ճանապարհներով է Տերը զորացնում մեզ օգնելու մեր բեռն ավելի հեշտությամբ կրել: Ինչպե՞ս է դա ձեզ օգնել լինել Աստծո վկա:
- Ինչո՞ւ Տերն օրհնեց ճորտության մեջ գտնվող Ալմայի ժողովրդին ավելի արագ և առատորեն, քան Լիմքիի ժողովրդին: (Համեմատեք Մոսիա 21.5–15 և Մոսիա 23.26–27; 24.10–16:) Ինչպե՞ս է դա վերաբերվում մեր այսօրվա կյանքին:
- Նրանից առաջ, երբ Տերն ազատեց Ալմայի և Լիմքիի ժողովուրդներին, այդ երկու ժողովուրդները գերի էին անարդար կառավարիչներին: Ալման նկատում է, որ Նոյ թագավորի ժամանակ մարդիկ «կապված էին անօրինությունների կապանքներով» (Մոսիա 23.12): Ինչպե՞ս կարող է անօրինությունը կամ մեղքը ճորտության տեսակ լինել: Ի՞նչ կարող ենք սովորել Լիմքիի և Ալմայի ժողովուրդների մեղքի կապանքներից ազատվելու մասին: (Տես Մոսիա 7.33; 21.14; 23.23; 29.18–20; տես նաև Վ. և Ու. 84.49–51: Միայն Տերը կարող է ազատել մեզ մեղքի կապանքներից: Մենք պետք է շրջվենք դեպի Նա ապաշխարության, հավատքի, խոնարհության և մշտական հնազանդության միջոցով:)

Եզրափակում

Համառոտ վերանայեք մկրտության ուխտի Տիրոջ խոստումները (Մոսիա 18.10, 13): Նշեք, որ օրհնությունների լույսի ներքո Տերը մեզ խոստացել է, որ դժվար չի լինի պահել Նրան ծառայելու և Նրա պատվիրաններին հնազանդվելու մեր ուխտը (տե՛ս Մոսիա 18.10): Շեշտեք, որ, երբ մենք կատարում ենք մկրտության ծեսը և շարունակում ենք մնալ ապաշխարության, Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, խոնարհության, հնազանդության մեջ, մենք ազատվում են մեղքի կապանքներից և կանգնում ենք հավերժական կյանքի ճանապարհի վրա (2 Նեփի 31.17–20):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. «Երկուսն էլ՝ Ալման ու Էլամը թաղվեցին ջրի մեջ» (Մոսիա 18.14)

Օգտագործեք ստորև տրված խոսքերը՝ բացատրելու, թե ինչպես Ալման ունեցավ մկրտելու իշխանություն, և ցույց տալու, որ Ալման չմկրտեց իրեն, երբ մկրտեց Էլամին.

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը սովորեցրել է. «Ալման մկրտվել էր և քահանայություն ստացել դեռ Աբինադիի գալստից առաջ, սակայն անարդար Նոյ թագավորի կառավարման ժամանակ գործել էր այլ քահանաների հետ, և Էլամին մկրտելիս նա զգաց, որ մաքրվելու կարիք ուներ, այդպիսով, որպես լիակատար ապաշխարության նշան, նա ամբողջովին մտավ ջրի մեջ» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:336–37):

2. Ծառայել Տիրոջը խոնարհաբար

- Մարդկանց մկրտելուց առաջ Ալման աղոթեց. «Ով, Տեր, դու՛ս թափիր քո Հոգին ծառայիդ վրա, որ նա կարողանա սրտի սրբությամբ անել այս գործը» (Մոսիա 18.12): Ինչպե՞ս կարող ենք օրհնվել, եթե այս ոգով մոտենանք Տիրոջ համար մեր ծառայությանը:

3. «Հարգել հանգստության օրը և պահել այն սուրբ» (Մոսիա 18.23)

- Ինչո՞ւ է կարևոր հարգել հանգստի օրը: (Տե՛ս Մոսիա 18.23, 25:) Ինչպե՞ս եք օրհնվել, երբ հանգստի օրը սուրբ եք պահել: Ինչպե՞ս կարող ենք հանգստի օրը սուրբ պահել:

4. Օգնել կարիքավորներին

- Ի՞նչ սկզբունքներ էր սովորեցնում Ալման կարիքավորներին օգնելու վերաբերյալ: (Տե՛ս Մոսիա 18.27–29:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մենք մյուսներին օգնենք ինչպես՝ նյութապես, այնպես էլ՝ հոգեպես: Ի՞նչ օրհնություններ են շնորհվում առատորեն տալուց և երախտագիտությամբ ընդունելուց:

«Իմ հոգին այլևս չի ցավում»

Դաս
20

Մոսիա 25–28; Ալմա 36

Նպատակ

Ոգեշնչել դասարանի անդամներին շարունակաբար կիրառել ապաշխարության սկզբունքները, դարձի գալ և կիսվել ավետարանով:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Մոսիա 25: Լիմքիի և Ալմայի ժողովուրդները Զարահեմլա երկրում միանում են Մոսիայի ժողովրդին: Լիմքին և նրա մարդիկ մկրտվում են: Մոսիա թագավորն Ալմային իշխանություն է տալիս՝ կազմակերպելու Աստծո Եկեղեցին Զարահեմլա երկրում:

   բ. Մոսիա 26; 27.1–7: Եկեղեցու շատ անդամներ անհավատների պատճառով մեղքի մեջ են ընկնում: Տերն Ալմային ասում է, որ ապաշխարողները կներվեն, սակայն նրանք, ովքեր չեն ապաշխարի, չեն համարվի Եկեղեցու ժողովրդի թվում: Մոսիան հռչակագիր է թողարկում, ըստ որի հավատացյալներին և անհավատներին արգելվում էր հալածել միմյանց:

   գ. Մոսիա 27.8–31; Ալմա 36.6–23: Ալմա Կրտսերը և Մոսիայի չորս որդիները ցանկանում են կործանել Աստծո Եկեղեցին: Ի պատասխան իրենց հայրերի և Եկեղեցու այլ անդամների աղոթքների, մի հրեշտակ է հայտնվում նրանց: Ալմա Կրտսերը և Մոսիայի որդիները դարձի են գալիս: Ալմա Կրտսերը վկայում է իր դարձի մասին:

   դ. Մոսիա 27.32–28.20; Ալմա 36.24: Ալմա Կրտսերը և Մոսիայի որդիները իրենց նվիրում են ավետարանը քարոզելուն:

2. Դասարանի անդամներին խնդրեք պատրաստել այն իրադարձությունների համառոտ ամփոփումը, որոնք պատճառ հանդիսացան Ալմա Կրտսերի և Մոսիայի որդիների դարձի գալու համար (Մոսիա 27.8–24):

3. Եթե առկա է «Ալմա Կրտսերի Դարձը» պատկերող նկարը պատրաստեք այն դասի ժամանակ ցուցադրելու համար (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 321):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին հարցրեք.

- Ձեզանից քանի՞սն են նորադարձներ:

Նշեք, որ մենք հաճախ օգտագործում ենք *նորադարձ* բառը, նկատի ունենալով այն մարդուն, որը մկրտվել է Եկեղեցում ութ տարեկանից բարձր տարիքում: Այդ իմաստով, մեզանից յուրաքանչյուրը պետք է նորադարձ լինի: Անկախ նրանից, թե երբ ենք մկրտվում, մենք բոլորս պետք է Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին մեր անձնական վկայությունը ձեռք բերենք: Ոմանց համար այս դարձը միանգամից և տպավորիչ է լինում, իսկ մեծամասնության համար այն դանդաղ և աստիճանաբար գործընթաց է: Որոշ մարդիկ հեշտ են դարձի գալիս, մինչդեռ մյուսները պայքարում են իրենց վկայությունը և նվիրվածությունը ձևավորելու համար: (Նշեք, որ դաս 22 քննարկում է նորադարձ դառնալու գործընթացը:)

Այս դասը քննարկում է այն հինգ անձանց պատմությունը, որոնք, լինելով Եկեղեցու ամուր և հավատարիմ առաջնորդների որդիներ, իրենց անձնական փորձով դարձի եկան դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը դարձի գալու կարևորությունը և դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Լիմքիի և Ալմայի ժողովուրդները միանում են Մոսիայի ժողովրդին Զարահեմլայի երկրում:

Քննարկեք Մոսիա 25: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ Լիմքիի և Ալմայի ժողովուրդները միացան Մոսիա թագավորի ժողովրդին Զարահեմլայի երկրում (Մոսիա 22.11–14; 24.20, 23–25): Դասարանի անդամներին օգնեք հասկանալ, որ այժմ Զարահեմլայում Մոսիա թագավորի կառավարման ներքո էին գտնվում մարդկանց չորս խմբեր.

ա. Լիմքիի ժողովուրդը, որը Զենիֆի սերունդն էր, և մյուսները, որոնք վերադարձան Զարահեմլայից Նեփիի երկիրը:
բ. Ալմայի ժողովուրդը, որը Նոյի թագավորման ժամանակ սերվել էր Զենիֆի սերնդից:
գ. Նեփիացիները, որոնք մնացել էին Զարահեմլայում:
դ. Մուղեքացիները, Զարահեմլայի բնիկ ժողովուրդը:

Բացատրեք, որ այդ բոլոր մարդիկ իրենց կոչեցին Նեփիացիներ (Մոսիա 25.12–13):

- Մոսիան ի մի հավաքեց մարդկանց Զարահեմլայում և նրանց համար կարդաց Լիմքիի ժողովրդի և Ալմայի ժողովրդի հիշատակարանները (Մոսիա 25.5–6): Ինչպե՞ս արձագանքեց Զարահեմլայի ժողովուրդը, այդ հիշատակարանները լսելուց հետո: (Տե՛ս Մոսիա 25.7–11:) Ինչպե՞ս էին նրանց պատասխանները դրսևորում նրանց գթասրտությունը:
- Ինչպե՞ս եք օգուտ ստացել Լիմքիի և Ալմայի ժողովուրդների հիշատակարաններն ուսումնասիրելիս:
- Ավարտելով հիշատակարանները կարդալը, Մոսիան խոսքը տվեց Ալմային (Մոսիան 25.14): Ինչի՞ մասին խոսեց Ալման: (Տե՛ս Մոսիա 25.15–16:) Ինչո՞ւ էր կարևոր, որ ժողովուրդը հիշեր, թե ով է ազատել իրեն ճորտությունից: Ինչպիսի՞ ազդեցություն գործեցին Ալմայի ուսմունքները Լիմքիի և նրա ժողովրդի վրա: (Տե՛ս Մոսիա 25.17–18:)
- Մոսիան Ալմային իշխանություն տվեց «Զարահեմլայի ամբողջ երկրով մեկ եկեղեցիներ հիմնադրել» (Մոսիա 25.19–20): Ինչպե՞ս մարդիկ ի վիճակի եղան մի եկեղեցում մնալ, տարբեր խմբավորումներում հավաքվելուց հետո: (Տե՛ս Մոսիա 25.21–24:) Ինչպե՞ս կարող է նրանց օրինակն օգնել մեզ այսօր դիմակայելու այն խնդիրներին, որոնք ծագում են աշխարհում տարածված Եկեղեցում «մեկը» մնալուց:

2. Եկեղեցու շատ անդամներ անհավատների պատճառով ընկնում են մեղքի մեջ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 26; 27.1–7:

- Ինչո՞ւ «աճող սերնդից» շատերը հրաժարվեցին միանալ Եկեղեցուն: (Տե՛ս Մոսիա 26.1–4:) Ավագ սերունդը ինչպե՞ս կարող է օգնել երիտասարդներին Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին վկայություններ ձեռք բերել: Ավագ սերունդը ինչպե՞ս կարող է օգնել երիտասարդներին զգալ Աստծո սերը և հասկանալ Նրա հետ իրենց կապը:
- Անհավատները Եկեղեցու շատ անդամների տարել են դեպի մեղքը: Ո՞րն էր Ալմայի պատասխանատվությունը մեղք գործած Եկեղեցու անդամների նկատմամբ: (Տե՛ս

Մոսիա 26.6–8:) Ի՞նչ պատասխանատվություն էր Տերը դրել Եկեղեցու ղեկավարների վրա՝ օգնելու համար լուրջ մեղք գործած անդամներին:

- Ո՞ւմ հետ խորհրդակցեց Ալման, երբ Մոսիան հրաժարվեց դատել մեղք գործած մարդկանց: (Տե՛ս Մոսիա 26.10–14:) Ինչպե՞ս եք առաջնորդություն ստացել ձեր պարտականությունները կատարելիս, երբ աղոթքով դիմել եք Աստծուն:
- Ի՞նչ Տերը պատվիրեց Ալմային անել այն մարդկանց հետ, որոնք մեղք էին գործել: (Տե՛ս Մոսիա 26.29–30, 32:) Ինչո՞ւ է խոստովանությունը ապաշխարության կարևոր քայլը հանդիսանում: Ինչո՞ւ է կարևոր ներել միմյանց (Մոսիա 26.31): Ինչպե՞ս եք օրհնվել, երբ ներել եք ուրիշին կամ ներում ստացել ուրիշի կողմից:
- Թեպետև Եկեղեցին կրկին խաղաղության մեջ ապրեց և բարգավաճեց, Եկեղեցու անդամները հաճախ հալածվում էին անհավատների կողմից (Մոսիա 26.37–38; 27.1): Ի՞նչ արեց Մոսիա թագավորը, երբ Եկեղեցու անդամները դժգոհեցին այդ հալածանքների կապակցությամբ: (Տե՛ս Մոսիա 27.1–5:) Ինչպե՞ս են հալածվում Եկեղեցու անդամներն այսօր: Ինչպիսի՞ արդյունավետ եղանակներով կարելի է այսօր պայքարել այդ հալածանքի դեմ:

3. Ալմա Կրտսերին և Մոսիայի որդիներին այցելում է մի հրեշտակ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 27.8–31; Ալմա 36.6–23: Բացատրեք, որ անգամ հալածանքները արգելելու մասին Մոսիայի կարգադրությունից հետո, որոշ անհավատներ շարունակում էին հետապնդել Եկեղեցին: Այդ անհավատների թվում էին Մոսիայի չորս որդիները և Ալմայի որդիներից մեկը (Մոսիա 27.8–9):

Դասարանի այն անդամին, որին նախօրոք հանձնարարված էր, խնդրեք ամփոփել այն իրադարձությունները, որոնք Ալմա Կրտսերի և Մոսիայի որդիների դարձի գալու պատճառը հանդիսացան (Մոսիա 27.8–24): Ցուցադրեք Ալմա Կրտսերի նկարը:

- Ինչո՞ւ Տերը մի հրեշտակ ուղարկեց Ալմա Կրտսերի և նրա ընկերների հետ խոսելու համար: (Տե՛ս Մոսիա 27.14:) Ինչպե՞ս աղոթքը կարող է մեզ օգնել, երբ մեր սիրելի մարդիկ շեղվում են ավետարանի ճանապարհից:

  Եկեղեցու Կրթական համակարգում աշխատելու ժամանակ Ջեֆրի Ռ. Հոլանդն ասել է. «Մարդկային հոգու ոչ մի տառապանք չի համեմատվի այն տառապանքի հետ, որ կրում է մայրը կամ հայրը իր զավակի հոգու համար: . . . Սակայն ծնողները երբեք չեն հանձնվում, չկորցնելով իրենց հույսը, հոգ տանելով և հավատալով: Անշուշտ, նրանք երբեք չեն կարող դադարել աղոթելը: Ժամանակ է լինում, որ միայն աղոթքն է մնում, սակայն դա բոլոր միջոցներից ամենազորեղն է» (“Alma, Son of Alma,” *Ensign,* Mar. 1977, 80–81):
- Ի՞նչ եղանակներով է Տերն օգնություն ուղարկում ի պատասխան արդարների այն աղոթքներին, որոնք ասվում են ճանապարհից շեղված իրենց սիրելի մարդկանց համար: (Դասարանի անդամներին օգնեք հասկանալ, որ Տերը միշտ հրեշտակ չի ուղարկում, ինչպես Նա արեց Ալմայի դեպքում, սակայն Նա Իր օգնությունն է ուղարկում բազմազան այլ եղանակներով: Նա կարող է ուղարկել հասկացող ղեկավար կամ ընկեր, նվիրված տնային կամ այցելող ուսուցիչներ, կամ ոգեշնչող քարոզ՝ ազդելու համար այն մարդկանց վրա, որոնց համար մենք աղոթում ենք:) Ինչպե՞ս եք ականատես եղել, երբ աղոթքի զորությամբ օգնություն է տրվել այնպիսի իրավիճակում, որն անելանելի է թվացել:
- Ի՞նչ ասաց հրեշտակն Ալմա Կրտսերին: (Տե՛ս Մոսիա 27.13–17:) Ի՞նչ պատահեց Ալմա Կրտսերի հետ հրեշտակի հեռանալուց հետո: (Տե՛ս Մոսիա 27.18–19:) Ինչպե՞ս Ալման արձագանքեց, երբ լսեց իր որդու պատմությունը՝ կապված հրեշտակի հետ: (Տե՛ս Մոսիա 27.20:) Ինչո՞ւ նա հրճվեց:

Բացատրեք, որ դարձի գալուց հետո տարիներ անց Ալման իր որդի Հելամանին պատմում է իր այդ փորձի մասին (Ալմա 36.6–24): Օգտվելով Մոսիա 27 և Ալմա 36-ից, դասարանի անդամներին օգնեք համեմատել Ալմայի զգացմունքները՝ ներվելուց առաջ և հետո

(դասարանի որոշ անդամների խնդրեք կարդալ Մոսիա 27, իսկ մյուսներին՝ Ալմա 36): Կարող եք այդ քննարկումն ամփոփել ստորև տրված սխեմայի օրինակով.

ԱՌԱՋ	ՀԵՏՈ
Մարմնական և ընկած, վտարված (Մոսիա 27.25–27; Ալմա 36.11)	Փրկագնված Տիրոջ կողմից, ծնված Հոգուց (Մոսիա 27.24–25; Ալմա 36.23)
Շատ նեղություններով անցնելիս (Մոսիա 27.28)	Դուրս կորզված հավիտենական այրումից (Մոսիա 27.28)
Դառը մաղձի և անօրինության կապանքների մեջ (Մոսիա 27.29)	Փրկագնված դառը մաղձից և անօրինության կապանքներից (Մոսիա 27.29)
Ամենախավար վիհի մեջ (Մոսիա 27.29)	Տեսնելով հրաշալի լույսը Աստծո (Մոսիա 27.29)
Պրկված հավերժական տանջանքից (Մոսիա 27.29)	Հոգին այլևս չէր ցավում (Մոսիա 27.29)
Տակնուվրա եղած բազում մեղքերի հիշողությունից (Ալմա 36.17)	Այլևս տակնուվրա չէր լինում իր մեղքերի հիշողությունից (Ալմա 36.19)
Ուժգին և անողոք ցավով (Ալմա 36.20–21)	Զգաց սաստիկ և սքանչելի ուրախություն (Ալմա 36.20–21)
Հոգին պրկված աննկարագրելի սոսկումով Աստծո ներկայության մեջ գալու մտքից (Ալմա 36.14–15)	Հոգին տենչում էր լինել Աստծո ներկայության մեջ (Ալմա 36.22)

- Ի՞նչն օգնեց Ալմային ազատվել իր տանջանքներից: (Տե՛ս Ալմա 36.17–18:)
- Ինչպե՞ս կարելի է Ալմայի փորձը համեմատել դարձի գալու մեր անձնական փորձի հետ: (Որպես հարցի մեկ պատասխան տե՛ս ստորև տրված մեջբերումը:)

  Երեց Բրյուս Մակ-Քոնկին ասել է. «Ալմայի պատմությունը օրինակ է ծառայում: Մեղքի այն ահը, որը պատել էր նրան, պետք է զգա ավետարանով չապրող արքայության յուրաքանչյուր անդամ, ապա ապաշխարությունը կգա, ինչպես դա պատահեց Նեփիացի մեր ընկերոջ հետ» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 229):

4. Ալման և Մոսիայի որդիներն իրենց նվիրում են ավետարանը քարոզելու գործին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մոսիա 27.32–28.20; Ալմա 36.24-ից:

- Ի՞նչ արեցին Ալմա Կրտսերը և Մոսիայի որդիները դարձի գալուց հետո: (Տե՛ս Մոսիա 27.32–37:) Ինչպե՞ս է սա ապացուցում, որ նրանք իսկապես դարձի էին եկել: Ինչպե՞ս են մեր գործերն արտացոլում մեր դարձի անկեղծությունը և խորությունը:
- Ինչո՞ւ էին Մոսիայի որդիները և նրանց ուղեկիցները ցանկանում քարոզել ավետարանը Լամանացիներին: (Տե՛ս Մոսիա 28.1–3 և ստորև տրված մեջբերումը:) Ի՞նչ խոստումներ տվեց Տերը Մոսիա թագավորին իր որդիների միսիոներական ջանքերի վերաբերյալ: (Տե՛ս Մոսիա 28.6–7:)

  Երեց Լ. Թոմ Փերին ասել է. «Դարձի գալուց հետո ցանկություն է առաջանում կիսվել, ոչ թե պարտքի զգացումից ելնելով, թեպետև այդ պարտականությունն ընկնում է քահանայության վրա, այլ մեր կյանքը մտնող անկեղծ սիրո և գնահատման համար: Երբ այդ թանկարժեք մարգարիտը մտնում է մեր կյանք, մենք չենք կարող բավարարվել միայն ինքներս դրանով հիանալով: Այն պետք է կիսվի» (in Conference Report, Apr. 1984, 106; or *Ensign,* May 1984, 79):
- Մեկ անգամ դարձի գալուց հետո, ինչպե՞ս կարող ենք մեծացնել մեր նվիրվածությունը ավետարանի քարոզման գործին:

Եզրափակում

Բացատրեք, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է անձնապես դարձի գա: Թեպետև դա ավելի դանդաղ և աստիճանաբար է տեղի ունենում, քան Ալմայի և Մոսիայի որդիների դարձը, այն նույն արդյունքները կունենա:

Կարդացեք Մոսիա 27.29: Շեշտեք, որ ապաշխարության և Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք ներում ստանալ, այնպես որ մեր հոգիները այլևս չեն ցավի: Այնուհետև մենք գործիք կդառնանք Տիրոջ ձեռքում ուրիշների կյանքերն օրհնելու համար:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք այն օգտագործել որպես դասի մաս:

«Նրանք իրենց շողոքորթ խոսքերով խաբեցին շատերին» (Մոսիա 26.6)

- Ինչպե՞ս Ալմա Կրտսերը և Մոսիայի որդիները այլ անհավատների հետ միասին ի վիճակի եղան Եկեղեցու բազմաթիվ անդամներին մեղքի մեջ գցել: (Տե՛ս Մոսիա 26.6; 27.8–9:) Ինչպե՞ս շողոքորթությունը կարող է մոլորեցնել և շեղել մեզ ճանապարհից: Ինչո՞ւ է կարևոր ավելի զգույշ լինել նրանց հանդեպ, ովքեր մեզ վրա ազդեցություն ունեն: (Տե՛ս ստորև տրված մեջբերումը:) Ինչպե՞ս կարող է Հիսուս Քրիստոսի հավատքի հիմքը մեզ օգնել չխաբվել անհավատների շողոքորթությամբ:

  Երեց Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Փնտրելով աշխարհի գովքը, մենք ցանկանում ենք, որպեսզի մեզ պատվեն մարդիկ աշխարհիկ պատվով: Սակայն հենց այդտեղ է թաքնված իրական վտանգը, քանի որ, հաճախ, այդ պատվին արժանանալու համար, մենք պետք է միանանք և հետևենք այն սատանայական ուժերին, ազդեցություններին և գաղափարախոսություններին, որոնք այդ մարդկանց տարել են ղեկավար պաշտոնների: . . . Այսօր մենք պատժված ենք աշխարհի ղեկավար մարդկանց շոգոքորթությամբ» (in Conference Report, Oct. 1964, 57; or *Improvement Era,* Dec. 1964, 1067):

Դաս
21

«Ալման . . . դատում էր արդար դատավճիռներ»

Մոսիա 29; Ալմա 1–4

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ կառավարման արդար սկզբունքները և խուսափել քահանայանենգումներից և հպարտությունից:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. Մոսիա 29: Մոսիան սովորեցնում է ճիշտ կառավարման սկզբունքները և զգուշացնում է իր մարդկանց թագավորներ ունենալու վտանգի մասին: Մարդիկ հետևում են նրա խորհրդին և դատավորներ են նշանակում՝ որպես իրենց քաղաքական առաջնորդներ: Ալմա Կրտսերը նշանակվում է գլխավոր դատավոր:

բ. Ալմա 1: Ալմա Կրտսերը ծառայում է որպես գրխավոր դատավոր և բարձրագույն քահանա: Նա պայքարում է մարդկանց մեջ քահանայանենգումների դեմ:

գ. Ալմա 2–3: Ամղիկին ցանկանում է դառնալ թագավոր, սակայն չի ստանում անհրաժեշտ ձայների քանակությունը: Նա և նրա հետևորդները միանում են Լամանցիներին, կարմիր նշան անում իրենց ճակատների վրա և պատերազմ հայտարարում Նեփիացիներին:

դ. Ալմա 4: Եկեղեցին բարգավաճում է, սակայն դառնում է հպարտ: Ալման հրաժարվում է դատավորի աթոռից ամբողջությամբ իրեն ծառայությանը նվիրելու համար:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության Վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Հետևյալ բառերը գրեք գրատախտակին. *Միապետություն, Հանրապետություն, Ժողովրդավարություն, Թեոկրատիա (կառավարվել Աստծո օրենքներով):*

- Ի՞նչ են նշանակում այս խոսքերը: (Օգտագործեք հետևյալ սահմանումները անդամներին օգնելու համար:)

  Միապետություն. մեկ անձի, օրինակ թագավորի, կողմից բացարձակ կառավարում

  Հանրապետություն. կառավարում ընտրված ներկայացուցիչների խմբի կողմից:

  Ժողովրդավարություն. կառավարում ժողովրդի կողմից՝ ըստ մեծամասնական կանոնի

  Թեոկրատիա. կառավարում Աստծո առաջնորդությամբ մարգարեի հայտնությունների միջոցով

- Կառավարման ինչպիսի՞ ձև էր տիրում Նեփիացիների մոտ՝ Մոսիայի օրոք:

Բացատրեք, որ շատ տարիներ Մոսիան ծառայում էր որպես թագավոր և մարգարե, որն Աստծո կողմից հայտնություններ է ստացել մարդկանց առաջնորդելու համար: Մոսիայի թագավորումից հետո Ալմա Կրտսերը նշանակվեց Նեփիի ժողովրդի վրա որպես գլխավոր դատավոր, այդպիսով սկիզբ դնելով կառավարման նոր ձևի և ժամանակաշրջանի, որը հայտնի է որպես «դատավորների կառավարում»: Համաձայն սուրբ գրությունների՝ «Ալման քայլում էր Տիրոջ ուղիներով և պահում էր նրա պատվիրանները, և նա դատում էր արդար դատավճիռներ» (Մոսիա 29.43): Այս դասը բացատրում է, թե ինչպես էր կազմակերպված դատավորների համակարգը արդար առաջնորդություն մատուցելու համար, և նկարագրում

է այն խնդիրները, որոնց Ալման հանդիպեց, լինելով գլխավոր դատավոր և բարձրագույն քահանա:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը կամ դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է կիրառել ընտրված հատվածները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների ճշմարտությունների հետ առնչվող իրենց փորձով:

1. Մոսիան սովորեցնում է լավ կառավարման սկզբունքները:

Քննարկեք Մոսիա 29: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ, երբ Մոսիա թագավորի բոլոր որդիները հրաժարվեցին ժառանգել գահը, Մոսիան մի գրավոր հռչակագիր ուղարկեց մարդկանց, առաջարկելով հիմնել կառավարման մի համակարգ, որն իր մահից հետո կփոխարիներ թագավորների կառավարմանը:

- Ի՞նչ խորհուրդ տվեց Մոսիան իր ժողովրդին թագավորներ ունենալու վերաբերյալ: (Տե՛ս Մոսիա 29.13, 16:) Ո՞ր երկու մարդկանց նկարագրեց Մոսիան՝ որպես թագավորների օրինակներ: (Տե՛ս Մոսիա 29.13, 18: Կարող եք համառոտ վերանայել այն ազդեցությունները, որ այդ երկու մարդիկ գործեցին մարդկանց վրա:) Ինչպե՞ս Մոսիան նկարագրեց վատ ղեկավար ունենալու հետևանքները: (Տե՛ս Մոսիա 29.16–18, 21–23:)
- Մոսիան առաջարկեց մարդկանց հիմնել դատավորների մի համակարգ թագավորների կառավարումը փոխարինելու համար: Ինչպիսի՞ հատկանիշներ, ըստ Մոսիայի, պետք է ունենային այդ դատավորները: (Տե՛ս Մոսիա 29.11; տե՛ս նաև Վ. և Ու. 98.10:) Ինչո՞ւ են այդ հատկանիշները կարևոր այսօրվա առաջնորդների համար:
- Ո՞րն էր այն օրենքների հիմքը, որով մարդիկ պետք է դատվեին: (Տե՛ս Մոսիա 29.11; տե՛ս նաև Մոսիա 29.12–14:) Ի՞նչ օրհնություններ կարող են մարդիկ ստանալ, եթե ապրեն արդար սկզբունքների վրա հիմնվող օրենքներով:
- Ի՞նչ առաջարկեց Մոսիան սահմանափակելու այն զորությունը, որը կարող են ձեռք բերել անարդար մարդիկ կամ մարդկանց խմբերը: (Տե՛ս Մոսիա 29.24–26, 28–29: Նա առաջարկեց, որ նրանք ամեն ինչ անեն մարդկանց ձայների համաձայն, նշանակեն դատավորներին, որոնք պատասխանատու կլինեն մարդկանց առջև, ունենան մի համակարգ, որով կարելի կլինի բողոքարկել այն դատավորի դեմ, որը չի շարժվել օրենքով:)
- Ըստ Մոսիայի, ի՞նչ կարող է պատահել ժողովրդի հետ, եթե մեծամասնությունն ընտրի անարդարությունը: (Տե՛ս Մոսիա 29.27:) Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին հասկանալ և ընտրել արդարությունը:

2. Ալմա Կրտսերը ծառայում է որպես գլխավոր դատավոր և պայքարում է քահանայանենգումների դեմ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 1-ից: Բացատրեք, որ մարդիկ հետևեցին Մոսիայի խորհրդին և ամբողջ երկրում դատավորներ նշանակեցին, իսկ Ալմա Կրտսերը նշանակվեց գլխավոր դատավոր:

- Դատավորների կառավարման առաջին տարում Նեոր անունով մի մարդ բերվեց Ալմայի մոտ դատվելու (Ալմա 1.1–2, 15): Ի՞նչ էր Նեորը սովորեցնում մարդկանց: (Տե՛ս Ալմա 1.3–4:) Ո՞րն էր նրա ուսմունքների արդյունքը: (Տե՛ս Ալմա 1.5–6:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին Նեորի ուսմունքները դուր գալիս շատ մարդկանց: Ի՞նչ նման ուսմունքներ ենք լսում մեր օրերում:
- Երբ Նեորը քարոզում էր մարդկանց, նա հանդիպեց Գեդէոնին, որը Եկեղեցու անդամ էր և ծառայում էր որպես ուսուցիչ (Ալմա 1.7–8; կարող եք դասարանի անդամներին

հիշեցնել, որ Գեդէոնը եղել էր Լիմքի թագավորի հավատարիմ հրամանատարը): Ինչպե՞ս Գեդէոնը պատասխանեց Նեորի կեղծ ուսմունքներին: (Տե՛ս Ալմա 1.7:) Աստծո խոսքի մասին իմանալը և վկայելը ինչպե՞ս է մեզ օգնում ընդդիմանալ կեղծ ուսմունքներին:

- Նեորը զայրացավ Գեդէոնի վրա և սրով հարվածեց նրան (Ալմա 1.9): Երբ մարդիկ բերեցին Նեորին Ալմայի առջև, ի՞նչ երկու հանցանքների մեջ նրան մեղադրեց Ալման: (Տե՛ս Ալմա 1.10–13: Քահանայանենգում և սպանություն:) Ի՞նչ է քահանայանենգումը: (Տե՛ս Ալմա 1.16; տե՛ս նաև 2 Նեփի 26.29:) Ի՞նչ նախազգուշացում տվեց Ալման քահանայանենգումների վերաբերյալ: (Տե՛ս Ալմա 1.12:) Քահանայանենգումների ինչպիսի՞ օրինակներ եք տեսնում դուք այսօր:
- Թեպետև Նեորն իր հանցանքների համար մահապատժի դատապարտվեց, քահանայանենգումները և այլ հանցանքները շարունակվում էին տարածվել երկրով մեկ (Ալմա 1.15–16): Ի՞նչ սկսեց առաջանալ Եկեղեցուն պատկանող և չպատկանող մարդկանց միջև: (Տե՛ս Ալմա 1.19–22:) Ինչպե՞ս մենք պետք է վերաբերվենք այն մարդկանց, ովքեր չեն ընդունում մեր հավատքը: (Տե՛ս Վ. և Ու. 38.41:)
- Ինչպե՞ս այս հակառակությունները ներգործեցին Եկեղեցու որոշ անդամների վրա: (Տե՛ս Ալմա 1.23–24:) Ի՞նչ կարող ենք սովորել նրանցից, ովքեր մնացին Աստծո Եկեղեցում: (Տե՛ս Ալմա 1.25:) Ինչպե՞ս կարող ենք մնալ «հաստատուն և անխախտ» Աստծո պատվիրանները պահելիս:

Ալմա 1.26–30 նկարագրում է Եկեղեցու անդամների միջև խաղաղության և բարգավաճման ժամանակշրջանի մասին: Կարող եք բարձրաձայն կարդալ այս տողերը և այնուհետև քննարկել հետևյալ հարցերից մի քանիսը:

- Ինչպե՞ս էին քահանաները վերաբերվում նրանց, ում սովորեցնում էին: (Տե՛ս Ալմա 1.26:) Ինչո՞ւ է այս վերաբերմունքը կարևոր ուրիշներին սովորեցնելիս: Ինչպե՞ս եք օրհնվել այն ուսուցիչների կողմից, որոնք խոնարհությամբ սովորեցրել են ձեզ:
- Ինչպե՞ս Ալման նկարագրեց այն եղանակը, որով Եկեղեցու անդամներն օգնում էին կարիքավորներին: (Տե՛ս Ալմա 1.27:) Ինչպե՞ս կարող է հետևյալ օրինակը մեր կյանքում խաղաղություն բերել:

3. Ամոնիկին ցանկանում է լինել թագավոր, սակայն մերժվում է ձայների մեծամասնությամբ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 2–3-ից:

- Դատավորների կառավարման հինգերորդ տարում, Ամոնիկի անունով մի խորամանկ մարդ բազմաթիվ հետևորդներ հավաքեց, որոնք ցանկանում էին նրան թագավոր դարձնել երկրում (Ալմա 2.1–2): Ինչո՞ւ էր Ամոնիկին ցանկանում թագավոր դառնալ: (Տե՛ս Ալմա 2.4:) Ի՞նչ նա արեց, երբ մարդկանց մեծամասնությունը նրան դեմ քվեարկեց: (Տե՛ս Ալմա 2.7–10:)
- Ինչպիսի՞ն էր Նեփիացիների և Ամոնիկիացիների առաջին գոտեմարտի արդյունքը: (Տե՛ս Ալմա 2.16–19:) Երբ Ալման լրտեսներ ուղարկեց Ամոնիկիացիների մնացորդին հետապնդելու համար, ի՞նչ տեսան այդ լրտեսները: (Տե՛ս Ալմա 2.23–25:) Թեպետև Նեփիացիները քանակով քիչ էին, ինչպե՞ս նրանք ի վիճակի եղան պաշտպանվել Ամոնիկիացիների և Լամանացիների միավորված բանակից: (Տե՛ս Ալմա 2.27–28:)
- Ի՞նչ արեցին Ամոնիկիացիները՝ Նեփիացիներից տարբերվելու համար: (Տե՛ս Ալմա 3.4, 13:) Ինչպե՞ս էին այդ նշումները մարգարեությունների իրականացման վկայություն հանդիսանում: (Տե՛ս Ալմա 3.14–19:) Ինչո՞ւ է մեզ համար կարևոր հասկանալ, «որ իրենք բերեցին իրենց վրա անեծքը» (Ալմա 3.19):

4. Եկեղեցին բարգավաճում է, հետագայում դառնալով հպարտ: Ալման հրաժարվում է դատավորի աթոռից՝ իրեն ծառայությանը նվիրելու համար:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 4-ից:

- Թեպետև Նեփիացիներն այդ ճակատամարտում հաղթեցին Ամոնիկիացիներին և Լամանացիներին, այնուամենայնիվ Նեփիացիներից շատերը զոհվեցին, իսկ նրանք, ովքեր փրկվեցին, մեծ վնասներ կրեցին՝ կորցնելով հոտերն ու հատիկը (Ալմա 4.1–2): Որո՞նք էին այդ վնասների արդյունքները: (Տե՛ս Ալմա 4.3–5:) Ինչպե՞ս մեր դժվարությունները կարող են մեզ արթնացնել և հիշեցնել մեր պարտականության մասին:
- Որքա՞ն ժամանակ պահանջվեց, որպեսզի Եկեղեցու անդամները մեծ արդարությունից վերադառնային դեպի հպարտություն և աշխարհիկ կյանք: (Տե՛ս Ալմա 4.5–6: Մեկ տարի:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ է բարգավաճող մարդկանց համար հաճախ դժվար խուսափել հպարտությունից և նյութական բարիքներից: Ինչպե՞ս մենք կարող ենք խուսափել այդ մեղքերից:
- Ինչպե՞ս է հպարտությունը ներգործում ուրիշների հետ Եկեղեցու անդամների հարաբերությունների վրա, ինչպես Եկեղեցում, այնպես էլ Եկեղեցուց դուրս: (Տե՛ս Ալմա 4.8–12:) Ինչպե՞ս է սա ներգործում Եկեղեցու մասին ոչ անդամների պատկերացումների վրա: (Տե՛ս Ալմա 4.10:) Ինչո՞ւ է Եկեղեցու անդամների օրինակը կարևոր Եկեղեցու միսիոներական աշխատանքի համար: Ե՞րբ եք տեսել, որ մարդիկ Եկեղեցու անդամների օրինակների ներգործությամբ փոխվեն դեպի լավը:
- Ի՞նչ արեց Ալման ի պատասխան մարդկանց աճող հպարտությանն ու անօրինությանը: (Տե՛ս Ալմա 4.15–18:) Ինչպե՞ս նա արեց դա: (Տե՛ս Ալմա 4.19:) Ինչպե՞ս Աստծո խոսքը քարոզելը կարող է «տապալել» հպարտությունը, նենգությունը և հակառակության ոգին:
- Ի՞նչ է նշանակում «պարզ վկայությամբ հակադրվել» արտահայտությունը: Ի՞նչ է դա ասում այն զորության մասին, որով Ալման սովորեցնում էր (Ալմա 4.19): Ինչպե՞ս է փոխվել ձեր կյանքը, երբ լսել եք ուրիշների պարզ վկայությունը ավետարանի մասին: Ի՞նչ խնդիրներ կարող են լուծվել այսօր աշխարհում, եթե մարդիկ քարոզեն և ապրեն ըստ ավետարանի:

Եզրափակում

Դասարանի անդամներին խնդրեք մտածել, թե որքանով են Ալմայի խնդիրները նման այսօր մեզ հանդիպող խնդիրներին, և որքանով են նման այդ խնդիրներից շատերի լուծումները:

Բացատրեք, որ հաջորդ շաբաթների ընթացքում դասարանի անդամները կուսումնասիրեն, թե ինչպես վարվեց Ալման՝ որպես բարձրագույն քահանա, այլ խնդիրների հետ: Դասարանի անդամներին խրախուսեք ուշադրություն դարձնել, թե ինչպես էր Ալման քարոզում Աստծո խոսքը ցանկացած բարդ իրավիճակում:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս
22

«Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին»

Ալմա 5–7

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, թե ինչ է նշանակում զգալ սրտի փոփոխություն և շարունակել դարձի գալու գործընթացը:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. Ալմա 5: Ալման Զարահեմլայում Եկեղեցու անդամներին կոչ է անում ապրել այնպես, որպեսզի նրանք կարողանան զգալ սրտի զորեղ փոփոխություն:
բ. Ալմա 6: Զարահեմլայում շատ մարդիկ խոնարհեցրին իրենց և ապաշխարեցին իրենց մեղքերը: Ալման և ժողովուրդը Զարահեմլայում հիմնեցին կարգուկանոնի Եկեղեցի:
գ. Ալմա 7: Գեղէոնի հովտում Ալման վկայում է Հիսուս Քրիստոսի մասին: Նա մարդկանց խրախուսում է շարունակել հետևել Փրկչին:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրատախտակին երկու մեծ սիրտ նկարեք: Բացատրեք, որ սիրտը հաճախ խորհրդանշում է մեր ցանկությունները և հակումները: Գրեք *Հպարտ* բառը սրտերից մեկի վրա:

- Ինչի՞ վրա են հպարտ մարդիկ դնում իրենց սրտերը: (Դասարանի երկու անդամների խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 4.8 և Ալմա 5.53:) Որո՞նք են «աշխարհի ունայն բաների» օրինակները: (Դասարանի անդամների պատասխանները գրեք *Հպարտ* բառով սրտի վրա:)

Գրեք *Խոնարհ* բառը երկրորդ սրտի վրա:

- Ի՞նչ են ցանկանում խոնարհ մարդիկ: (Դասարանի անդամների պատասխանները գրեք *Խոնարհ* բառով սրտի վրա:)

Բացատրեք, որ, երբ մենք մեզ խոնարհեցնում ենք Աստծո առջև, մենք նախապատրաստվում ենք «ծնվել Աստծուց» և զգալ «սրտերի զորեղ փոփոխություն» (Ալմա 5.14): Այս դասը քննարկում է այն պայմանները, որոնց միջոցով Տերը կարող է փոխել մարդկանց սրտերը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է ընտրված սուրբ գրությունները կիրառել առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ալման մարդկանց սովորեցնում է, թե ինչպես նրանք կարող են զգալ սրտի «զորեղ փոփոխություն»:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 5-ից: Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Ալման ժողովրդական կառավարման գլխավոր դատավորն էր: Որպես գլ-

խավոր դատավոր նա իրավունք ուներ կիրառել երկրի օրենքները: Նա նաև Եկեղեցում նախագահող քահանայապետն էր: Որպես քահանայապետ նա պարտավոր էր քարոզել Աստծո խոսքը: Երբ նա տեսավ Եկեղեցու անդամների անօրինությունները, նա հրաժարվեց գլխավոր դատավորի պաշտոնից և «ամբողջությամբ սահմանափակվեց Աստծո սուրբ կարգի բարձրագույն քահանայությամբ, խոսքի վկայությամբ» (Ալմա 4.11–20): Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը սովորեցնում է, թե ինչու էր Ալմայի համար կարևոր գլխավոր դատավոր ծառայելու փոխարեն քարոզել Հիսուս Քրիստոսի ավետարանը.

«Տերն աշխատում է ներսից դուրս: Աշխարհն աշխատում է դրսից ներս . . . Աշխարհը կարող է փոխել մարդուն, փոխելով շրջապատը: Քրիստոսը փոխում է մարդկանց, որոնք այնուհետև փոխում են շրջապատը: Աշխարհը կարող է փոխել մարդու վարքը, իսկ Քրիստոսը կարող է փոխել մարդու էությունը» (in Conference Report, Oct. 1985, 5; or *Ensign,* Nov. 1985, 6):

- Սկսելով իր ուղերձն Ալման խոսեց նախկին սերնդի մասին, որն ազատվել էր ֆիզիկական և հոգևոր ճորտությունից (Ալմա 5.3–9): Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մարդիկ հիշեն իրենց հայրերի ճորտությունը և ազատումը: (Այս հարցը քննարկելիս կարող եք դասարանի անդամներին խնդրել կարդալ Ալմա 5.5–7:) Ինչպե՞ս Ալման նկարագրեց իրենց հայրերին այն բանից հետո, երբ Տերը փոխել էր նրանց սրտերը: (Տե՛ս Ալմա 5.7–9:)

- Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Ալմա 5.10-ում բարձրացված երեք հարցերի պատասխանները: (Տե՛ս Ալմա 5.11–13:) Ո՞րն էր այն ուղերձը, որն Ալմայի հոր սրտում «զորեղ փոփոխություն» կատարեց: (Տե՛ս Մոսիա 16.13–15:) Ի՞նչ պատահեց այն մարդկանց հետ, որոնք հավատացին Երեց Ալմային, երբ նա սովորեցնում էր ավետարանը: (Տե՛ս Ալմա 5.13; տե՛ս նաև Մոսիա 18.1–11:) Ինչպե՞ս Փրկչի մասին ուրիշների վկայությունները կարող են մեզ օգնել զգալ սրտի փոփոխություն:

- Զարահեմլայի ժողովրդին ուղղված իր ուղերձի միջոցով Ալման խոսեց սրտի «զորեղ փոփոխություն» զգալու և «Աստծուց ծնվելու» մասին (Ալմա 5.14): Մենք հաճախ օգտագործում ենք *դարձի գալ* բառը: Ի՞նչ է նշանակում լինել նորադարձ: (Տե՛ս Մոսիա 5.2; 27.24–26:) Արդյո՞ք դարձի գալը միանգամյա երևույթ է, թե տևական գործընթաց:

  Երեց Բրյուս ՄակՔոնկին սովորեցնում է. «Բացի դա լինի անսովոր իրավիճակներում, ինչպես Ալմայի դեպքում էր (Մոսիա 27), հոգևոր վերածնունդը մի գործընթաց է: Այն տեղի չի ունենում անմիջապես: Այն անցնում է աստիճաններով: Ապաշխարող անձինք դառնում են ավելի ու ավելի կենդանի, անցնելով հոգևոր մի իրականությունից մյուսը, մինչև որ դառնում են ամբողջովին կենդանի Քրիստոսում և արժանանում են Նրա մոտ հավերժորեն բնակվելուն» (*Doctrinal New Testament Commentary,* 3 vols. [1966–73], 3:401):

  Որպես այս քննարկման մի մաս կարող եք դասարանի անդամների հետ միասին կարդալ Ալմա 5.45–46: Նշեք, որ անգամ Ալման, որը հրաշքով դարձի եկավ, «ծոմ է պահել և աղոթել շատ օրեր, որ կարողանար իմանալ այս բաները»:

Բացատրեք, որ Զարահեմլայի մարդկանց քարոզելու ժամանակ Ալման նրանց մի շարք հարցեր տվեց: Մենք կարող ենք օգտագործել այս հարցերը մեր դարձի գալու ընթացքում ինքներս մեզ ստուգելու համար: Դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ Ալմա 5.14–21, 26–31: Նրանց խնդրեք քննարկել այդ տողերում տրվող այն հարցերը, որոնք առավել մեծ նշանակություն ունեն իրենց համար: Կարող եք օգտագործել հետևյալ հարցերը դասարանի մասնակցությունը խրախուսելու համար և օգնելու դասարանի անդամներին մտածել, թե ինչպես նրանք կարող են շարունակել դարձի գործընթացը.

- Ալման խոսեց «Աստծո պատկերը փորագրված . . . դեմքերի վրա» ունենալու մասին (Ալմա 5.19): *Պատկերը* վերաբերվում է անձի պահվածքին կամ անձի բնավորության արտահայտմանը: Դասարանի անդամներին խնդրեք մտքում մտածել Ալմայի հետևյալ հարցի պատասխանի մասին. «Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին»:

- Ինչո՞ւ է օգտակար պատկերացնել, որ մենք դատվում ենք Տիրոջ կողմից: (Տե՛ս Ալմա 5.15–19:)
- Ալման հարցրեց. «Եթե դուք զգացել եք սրտի մի փոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավող սիրո երգը, . . . այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում» (Ալմա 5.26): Դասարանի անդամներին խնդրեք մտքում մտածել այս հարցի պատասխանի մասին: Երբ որևէ մեկը տրամադրված է լինում «երգելու քավող սիրո երգը», ի՞նչը կարող է պատճառ դառնալ այդ զգացմունքի կորստի համար: Ի՞նչ կարող ենք մենք անել դարձի գործընթացը շարունակելու համար:
- Ինչպե՞ս կարող ենք մեզ պահել «անարատ Աստծո առաջ»: (Տե՛ս Ալմա 5.27, 50–51:)
- Ինչպե՞ս են հպարտությունը և նախանձը մեզ խանգարում նախապատրաստվել Աստծո հետ հանդիպմանը: (Տե՛ս Ալմա 5.28–29:) Ինչո՞ւ մենք պատրաստ չենք հանդիպել Աստծուն, եթե ծաղրում և հալածում ենք ուրիշներին, ինչպես գրված է 30 և 31 հատվածներում:
- Այս հարցը տալուց հետո Ալման մարդկանց կոչ արեց ապաշխարել իրենց մեղքերից (Ալմա 5.31–32): Այնուհետև նա նրանց հավատացրեց, որ մենք կարող ենք ներում ստանալ Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով (Ալմա 5.33–35): Ի՞նչ հրավեր է ուղարկում մեզ Փրկիչը: (Տե՛ս Ալմա 5.33–35:) Ինչպե՞ս կարող է այս հրավերը մեզ հույս պարգևել:
- Զարահեմլայի անբարիշտ մարդկանց Ալման ասաց. «Մի հովիվ կանչել է ձեր ետևից ու դեռ կանչում է ձեր ետևից, բայց դուք չե՛ք կամենում ականջ դնել նրա ձայնին» (Ալմա 5.37): Ո՞վ է այդ հովիվը, որի մասին խոսում է Ալման: (Տե՛ս Ալմա 5.38:) Ինչպե՞ս է Փրկիչը կանչում մեզ: Ի՞նչ մենք կարող ենք անել Նրա ձայնին ականջ դնելու համար:
- Ի՞նչ կարող ենք սովորել Ալմա 5.43–49-ից մարգարեյին կանչելու վերաբերյալ:
- Ալման մարդկանց նախազգուշացրեց, որ նրանք չպետք է շարունակեն ամբարշտություններ գործել (Ալմա 5.53–56; նշեք, որ Ալման չորս անգամ հարցրեց. «Մի՞թե դուք կշարունակեք»): Ինչո՞ւ է մեղքից ազատումը ապաշխարության անհրաժեշտ մասը հանդիսանում: (Տե՛ս Ալմա 5.56; տե՛ս նաև Մոսիա 16.5; Վ. և Ու. 58.42–43:)
- Ալման իր մարդկանց հրամայեց. «Դո՛ւրս եկեք անբարիշտների միջից և զա՛տ եղեք» (Ալմա 5.57): Ինչպե՞ս մենք կարող ենք մեզ առանձնացնել աշխարհում տիրող անբարշտությունից:

2. Ալման և նրա ժողովուրդը Զարահեմլայում կարգուկանոն են հիմնում Եկեղեցում

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 6-ից:

- Ալմայի ուղերձից հետո շատ մարդիկ ապաշխարեցին իրենց մեղքերից և խոնարհեցրին իրենց Աստծո առջև (Ալմա 6.1–2): Ինչո՞ւ մյուսները չէին ցանկանում ապաշխարել իրենց մեղքերից: (Տե՛ս Ալմա 6.3: Նրանք «բարձրամտացած էին իրենց սրտերի հպարտությունից»:) Ինչո՞ւ է հպարտությունը մարդկանց խանգարում ապաշխարել: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել մեր սրտերի հպարտությունը:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Հպարտության հակապատկերներն են խոնարհությունը, հեզությունը, մատչելիությունը (տե՛ս Ալմա 7.23) . . . .Եկե՛ք ընտրենք հնազանդությունը: Մենք կարող ենք ընտրել հնազանդությունը, սանձելով մեր թշնամությունը մեր քույրերի և եղբայրների հանդեպ, գնահատելով նրանց այնպես, ինչպես գնահատում ենք ինքներս մեզ, և բարձրացնելով նրանց այնքան, որքան բարձր ենք գտնվում մենք, անգամ ավելի բարձր: . . . Մենք կարող ենք ընտրել հնազանդությունը, ընդունելով խորհուրդ և պատիժ: . . . Մենք կարող ենք ընտրել հնազանդությունը, ներելով նրանց, ովքեր վիրավորել են մեզ: . . . Մենք կարող ենք ընտրել հնազանդությունը, մատուցելով ծառայություն և չխնայելով ինքներս մեզ: . . . Մենք կարող ենք ընտրել հնազանդությունը, գնալով միսիայի և քարոզելով աշխարհին այն, ինչ կարող է հնազանդեցնել մյուսներին: . . . . Մենք կարող ենք ընտրել հնազանդությունը, ավելի հաճախ

տաճար հաճախելով . . . Մենք կարող ենք ընտրել հնազանդությունը, սիրելով Աստծուն, ենթարկելով մեր կամքը Նրա կամքին և դնելով Նրան մեր կյանքում առաջին տեղում» (in Conference Report, Apr. 1989, 6; or *Ensign,* May 1989, 6–7):

- Ալման և Զարահեմլայի ժողովուրդը «սկսեցին հաստատել եկեղեցու կարգը», նշանակելով քահանաներ և երեցներ, մկրտելով նորադարձների և հաճախ միասին հավաքվելով ծոմի և աղոթքի (Ալմա 6.1–6): Այդ կարգուկանոնը Եկեղեցում ինչպե՞ս կարող է մեզ օգնել շարունակել դարձի մեր գործընթացը:

3. Ալման վկայում է Հիսուս Քրիստոսի մասին: Նա խրախուսում է Գեդէոնի մարդկանց հետևել Փրկչին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 7-ից: Բացատրեք, որ Զարահեմլայում սովորեցնելուց հետո Ալման գնաց սովորեցնելու Գեդէոնի հովտի ժողովրդին (Ալմա 6.8):

- Ալման Գեդէոնում ժողովրդին ասաց, որ «կան շատ բաներ, որ պետք է գան», սակայն Հիսուս Քրիստոսի գալուստն ամենակարևոր բանն էր (Ալմա 7.7): Ի՞նչ Ալման սովորեցրեց երկրի վրա Փրկչի առաքելության մասին: (Տե՛ս Ալմա 7.10–13:) Ինչո՞ւ Փրկիչն Իր վրա վերցրեց մեր ցավերը, վշտերը, հիվանդությունները և մեղքերը: (Տե՛ս Ալմա 7.11–14: Եթե նպատակահարմար է դասարանի անդամներին հրավիրեք կիսվել իրենց զգացմունքներով Փրկչի զորության մասին, որի միջոցով Նա հասկանում է իրենց կարիքները, փորձությունները և վշտերը, և որի միջոցով Նա վերցնում է իրենց մեղքերը Իր վրա:)
- Ինչպե՞ս էր տարբերվում Գեդէոնում ժողովրդին տրված Ալմայի ուղերձը նրա ուղերձից Զարահեմլայում: Ինչո՞վ էին նման այդ ուղերձները: Ինչո՞ւ էր Ալման Գեդէոնում ապաշխարություն քարոզում, թեպետև այդ մարդիկ արդար կյանքով էին ապրում: (Տե՛ս Ալմա 7.9, 14–16, 22, 26:)

Եզրափակում

Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ Ալմա 7.23–25: Բացատրեք, որ այս հատվածները նկարագրում են մի մարդու, որը զգացել է Ալմայի բնութագրած սրտի փոփոխությունը և որը շարունակում էր «երգել քավող սիրո երգը» (Ալմա 5.26): Շարունակելով դարձի գործընթացը մենք ի վիճակի կլինենք պատրաստվել այն օրվան, երբ կբնակվենք «երկնքի արքայության մեջ, որ այլևս դուրս չգնանք» (Ալմա 7.25):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս
23

«Ավելի, քան մեկ վկա»

Ալմա 8–12

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին ավելի լավ հասկանալ փրկագնման ծրագրի և ավետարանի ճշմարտությունների մասին վկայելու համար մեկից ավելի վկաներ ունենալու զորությունը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 8–9: Մելեքում քարոզելուց հետո Ալման Ամմոնիայի ժողովրդին կոչ է անում ապաշխարության, սակայն նրանք հրաժարվում են: Նա շուտով հեռանում է, սակայն հրեշտակի կարգադրությամբ կրկին վերադառնում է: Ալման ընդունվում է Ամուղեկի կողմից և երկուսին պատվիրվում է քարոզել Ամմոնիայում:

   բ. Ալմա 10: Ամուղեկը քարոզում է Ամմոնիայի մարդկանց և նկարագրում իր դարձի գալը: Մարդիկ ապշում են, լսելով Ալմայի ուսմունքների մեկ այլ վկայի: Ամուղեկը վիճում է անարդար իրավագետների և դատավորների հետ:

   գ. Ալմա 11: Ամուղեկը վիճում է Զիզրոմի հետ և վկայում է Քրիստոսի գալստի, անարդարների դատաստանի, և փրկագնման ծրագրի մասին:

   դ. Ալմա 12: Ալման շարունակում է բացատրել Ամուղեկի խոսքերը, նախազգուշացնելով սրտերի կարծրության և անարդարությունների մասին, և վկայելով Անկման և փրկագնման ծրագրի մասին:

2. Դասարանի անդամներին խնդրեք նախապատրաստվել ամփոփելու Ալմայի և Ամուղեկի հանդիպման պատմությունը (Ալմա 8.19–32):

3. Դասարանի անդամներից երկուսին խնդրեք պատրաստվել կարդալու Ալմա 11.21–40-ի երկխոսությունը, մեկին խնդրեք կարդալ Ամուղեկի խոսքերը, մյուսին՝ Զիզրոմի:

4. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժությունը, ապա դասարան բերեք մի առարկա պարկի կամ արկղի մեջ: Բերեք մի այնպիսի անսովոր առարկա, որը կզարմացնի դասարանի անդամներին: Համոզվեք, որ առարկան չի երևում պարկի կամ արկղի միջից:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ցուցադրեք պարկը կամ արկղը, որի մեջ գտնվում է առարկան (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 4): Դասարանի անդամներին ասացեք, թե ինչ է գտնվում արկղի մեջ, սակայն ցույց մի տվեք այն: Հարցրեք, արդյոք նրանք իսկապես հավատում են, որ այդ առարկան գտնվում է արկղի մեջ:

Անդամների պատասխաններից հետո նրանցից մեկին հրավիրեք գալ և նայել արկղի մեջ: Նրան խնդրեք մյուսներին ասել, թե ինչ է գտնվում արկղի մեջ: Այնուհետև դասարանի անդամներին կրկին անգամ հարցրեք, հավատո՞ւմ են նրանք արդյոք, որ այդ առարկան արկղի մեջ է:

- Ինչո՞ւ էր ավելի հեշտ հավատալ, որ այդ առարկան արկղի մեջ էր, երբ մեկ ուրիշն էլ եկավ և տեսավ այն:

Բացատրեք, որ Ամմոնիայի ժողովրդին քարոզելու ժամանակ Ալմային միացավ Ամուղեկը: Այս դասը քննարկում է, թե ինչպես Ալմայի ուսմունքները զորություն ստացան Ամուղեկի վկայության միջոցով:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը կամ դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք առօրյա կյանքում ընտրված սուրբ գրությունների կիրառման հնարավորությունները: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ալման Ամմոնիայի ժողովրդին կոչ է անում ապաշխարության, սակայն նրանք մերժում են:

Քննարկեք Ալմա 8–9: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Նրանց հիշեցրեք, որ Ալման հանձնեց դատավորի աթոռը Նեփիային և սկսեց իր առաքելական ճամփորդությունները: Այդ ճամբորդության ժամանակ նա այցելեց ամբարիշտ Ամմոնիա քաղաքը:

- Գեդէոնում և Մելեքում Եկեղեցու կարգը հաստատելուց հետո, Ալման գնաց քարոզելու Ամմոնիայի երկիր: Ինչպիսի՞ խնդիրների նա հանդիպեց այնտեղ: (Տե՛ս Ալմա 8.8–9:) Ո՞ր խոսքերն են Ալմա 8.10-ում նկարագրում Ամմոնիայում Ալմայի ջանքերի ուժգնությունը: Ինչպե՞ս Ամմոնիայի ժողովուրդը արձագանքեց Ալմայի քարոզին: (Տե՛ս Ալմա 8.11–13:)
- Ի՞նչ պատահեց, երբ Ալման հեռացավ Ամմոնիայից և բռնեց Ահարոն քաղաքի ճանապարհը: (Տե՛ս Ալմա 8.14–17:) Համաձայն հրեշտակի, ի՞նչ պատճառ ուներ Ալման ուրախանալու: (Տե՛ս Ալմա 8.15:) Ինչպե՞ս Ալման արձագանքեց հրեշտակի հրահանգներին: (Տե՛ս Ալմա 8.18:) Ի՞նչ կարող ենք սովորել նրա պատասխանից:

Դասարանի այն անդամին, որին նախօրոք հանձնարարված էր, խնդրեք համառոտ պատմել Ալմայի և Ամուղեկի հանդիպման պատմությունը (Ալմա 8.19–32): Եթե որևէ մեկին չեք հանձնարարել, ապա ինքներդ պատմեք այդ պատմությունը:

- Ինչպե՞ս Տերը պատրաստեց Ամուղեկին Ալմայի հետ քարոզելուն: (Տե՛ս Ալմա 8.20, 27; 10.7–11:) Ինչպե՞ս մարդիկ կարող են պատրաստվել կատարելու Տիրոջ աշխատանքը:
- Ինչո՞ւ Ամմոնիայի մարդիկ շարունակեցին ժխտել Ալմայի նախազգուշացումները: (Տե՛ս Ալմա 9.5:) Ինչպիսի՞ հիմնավորումներ նրանք օգտագործեցին նրա ուղերձը մերժելու համար: (Տե՛ս Ալմա 9.2, 6:)
- Ալման ասաց, որ Ամմոնիայի ամբարիշտ մարդիկ մոռացել են իրենց հայրերի արդար սովորույթները, Աստծո պատվիրանները և Տիրոջ ձեռքով իրենց հայրերի ազատումը (Ալմա 9.8–11): Ինչպե՞ս է նրանց մոռացկոտությունը տարել դեպի անարդարություն: Ինչո՞ւ են մարդիկ մոռանում այն ամենը, ինչ Տերն արել է իրենց համար: Ինչպիսի՞ արդյունավետ ճանապարհներ կարող եք գտնել ձեզ տրված Տիրոջ օրհնությունները հիշելու համար:
- Ալման նախազգուշացրեց, որ, եթե Ամմոնիայի ամբարիշտ Նեփիացիները չապաշխարեն, դատաստանի օրը ավելի տանելի կլինի Լամանացիների, քան իրենց համար (Ալմա 9:15): Ինչո՞ւ այդպես կլիներ: (Տե՛ս Ալմա 9.14–24; տե՛ս նաև Ղուկաս 12.47–48; Վ. և Ու. 82.3:) Ի՞նչ է պահանջում Տերը նրանցից, ովքեր ավելի մեծ լույս են ստացել:
- Ի՞նչ Ալման սովորեցրեց այն խոստումների մասին, որոնք տարածվել էին Լամանացիների վրա (Ալմա 9.16–17): Ինչպե՞ս են այդ խոստումներն իրականանում այսօր:

2. Ամուղեկը քարոզում է Ամմոնիայի ժողովրդին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 10-ից: Բացատրեք, որ Ալմայի ժողովրդի հետ խոսելուց հետո, Ամուղեկը կանգ առավ և սկսեց քարոզել նրանց: Ամուղեկը

Լեքիի հետնորդներից էր և հարուստ մարդ էր՝ «ոչ փոքր համբավով» հասարակության մեջ (Ալմա 10.2–4):

- Ամուղեկն ասաց, որ կանչվել էր «շատ անգամներ», սակայն չի «կամեցել լսել», և գիտեր «այս բաների վերաբերյալ», սակայն «չէր կամենում իմանալ» (Ալմա 10.6): Ի՞նչ եղանակներով է Տերը կանչում մեզ: Ինչո՞ւ ենք մենք երբեմն դանդաղ Նրան պատասխանելիս: Ինչպե՞ս կարող ենք ավելի զգայուն լինել Նրա հանդեպ:
- Ե՞րբ Ամուղեկը վերջապես դարձի եկավ: (Տե՛ս Ալմա 10.7–11; կարող եք դասարանի անդամների համար բարձրաձայն կարդալ այդ հինգ հատվածները:)
- Ի՞նչ մտադրություն ունեին Ամուղեկին հարցաքննող իրավագետները: (Տե՛ս Ալմա 10.13–16, 31–32:) Ինչո՞ւ նրանք ի վիճակի չէին նրան խաբել: (Տե՛ս Ալմա 10.17:)
- Ամուղեկը նախատեց իրավագետներին և զգուշացրեց, որ նրանք պատրաստում են ժողովրդի կործանման հիմքը (Ալմա 10.17–21, 27): Ինչպե՞ս էին նրանք պատրաստում այդ հիմքը: Ի՞նչն էր պահել մարդկանց կործանումից: (Տե՛ս Ալմա 10.22–23:) Ձեր կարծիքով, ինչպե՞ս են արդար մարդկանց աղոթքներն այսօր օգնում չեզոքացնել անարդարության ազդեցությունը:
- Ինչո՞ւ էին մարդիկ ապշել Ամուղեկի խոսքերից: (Տե՛ս Ալմա 10.12:) Ո՞րն է ավետարանը քարոզելիս մեկից ավել վկաներ ունենալու առավելությունը: Ինչպե՞ս կարող ենք աջակցել միմյանց այս գործում: (Կարող եք նշել Եկեղեցու այն մարդկանց, որոնք զույգերով են ուսուցանում, օրինակ՝ լրիվ օրվա միսիոներներին, տնային և այցելող ուսուցիչներին, ծնողներին:)

Դասարանի անդամներին խնդրեք դասի ընթացքում ուշադրություն դարձնել, թե ինչպես են Ալման և Ամուղեկը շարունակում աջակցել միմյանց, քարոզելով նույն ուսմունքները: Այդ ուսմունքների քննարկման ժամանակ կարող եք ամփոփել դրանք գրատախտակի վրա: Հետևյալ սխեման կարող եք օգտագործել որպես ամփոփման օրինակ:

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	ԱՄՈՒՂԵԿԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	ԱԼՄԱՅԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
Քավություն	Ալմա 11.40	Ալմա 12.33–34
Ապաշխարություն	Ալմա 11.40	Ալմա 12.24
Դատաստան	Ալմա 11.41	Ալմա 12.14
Համբարձում	Ալմա 11.41–42	Ալմա 12.24–25

3. Ամուղեկը վիճաբանում է Զիզրոմի հետ և վկայում է Քրիստոսի մասին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 11-ից: Բացատրեք, որ գլուխ 11-ը սկսում է Նեփիացիների դրամական համակարգի նկարագրությամբ: Ալմա 11.20 սկսում է Ամմոնիայի երկրի ամենախորամանկ դատավոր Զիզրոմի կողմից Ամուղեկի հարցաքննությամբ:

- Ինչպե՞ս էին Ամմոնիայի դատավորները դրամ վաստակում: (Տե՛ս Ալմա 11.1, 20:) Ինչո՞ւ էին նրանք ցանկանում վիճաբանության մեջ մտնել Ալմայի և Ամուղեկի հետ: (Տե՛ս Ալմա 11.20:)

Դասարանի երկու անդամներին խնդրեք կարդալ Ամուղեկի և Զիզրոմի երկխոսությունը (Ալմա 11.21–40-ում): Կամ օգտվեք լրացուցիչ ուսուցանման մտքից այս հատվածները ներկայացնելու համար: Այնուհետև քննարկեք այս բաժնի մնացած հարցերը:

- Ինչպե՞ս Ամուղեկը պատասխանեց Զիզրոմի առաջին հարցին: (Տե՛ս Ալմա 11.21–22:) Ինչպե՞ս մենք կարող ենք Տիրոջ Հոգու հետ ներդաշնակության մեջ պահել մեր խոսքերը և ուսմունքները:
- Զիզրոմն Ամուղեկին հարցրեց, արդյոք Հիսուսը պետք է փրկի մարդկանց իրենց մեղքերի մեջ (Ալմա 11.34): Ինչպե՞ս Ամուղեկը բացատրեց, որ մենք չենք կարող փրկվել մեր մեղքերի մեջ: (Տե՛ս Ալմա 11.34, 37:) Ո՞րն է տարբերությունը մեր մեղքերի *մեջ* փրկվելու կեղծ գաղափարի և մեր մեղքերից փրկվելու ճշմարտության միջև: (Եթե չապաշխարենք և մնանք մեղքի վիճակում, չենք կարող փրկվել: Եթե ապաշխարենք, Հիսուս Քրիստոսը կարող է փրկել մեզ մեր մեղքերից:)
- Քրիստոսի Քավության շնորհիվ ինչպիսի՞ օրհնություններ են տրվում մարդկանց: (Տե՛ս Ալմա 11.42–43:) Ինչպիսի՞ օրհնություններ են տրվում միայն նրանց, ովքեր հավատք ունեն Նրա հանդեպ և պահում են Նրա պատվիրանները: (Տե՛ս Ալմա 11.40–41:)
- Ի՞նչ սովորեցրեց Ամուղեկը համբարձման մասին: (Տե՛ս Ալմա 11.43–4:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մենք իմանանք այդ ճշմարտությունները:

4. Ալման բացատրում է Ամուղեկի խոսքերը և նախազգուշացնում է սրտերի կարծրության վտանգի մասին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 12-ից: Նշեք, որ նրանից հետո, երբ Ամուղեկը պատասխանեց Զիզրոմի հարցերին, Զիզրոմը «սկսեց դողալ» (Ալմա 11.46): Տեսնելով դա, Ալման սկսեց խոսել և «հաստատել Ամուղեկի խոսքերը, . . . բացատրել անցյալ բաները, կամ լուսաբանել անցյալ սուրբ գրքերը, ինչ մինչ այդ Ամուղեկն էր արել» (Ալմա 12.1):

- Ալմա 12.3–6-ում Զիզրոմին ուղղված Ալմայի խոսքերից ի՞նչ կարող ենք սովորել Սատանայի ցանկությունների և գործերի մասին: (Նշեք, որ Սատանան հաճախ փորձում է խաբել մեկ մարդու շատ մարդկանց կործանման տանելու համար:) Ինչպե՞ս կարող ենք պաշտպանվել Սատանայի խորամանկ ծուղակներից:
- Ի՞նչ էր Ալման սովորեցնում այն մասին, թե ինչպես է մեր սրտերի վիճակը ազդում Աստծո խոսքի մեր ըմբռնման վրա: (Տե՛ս Ալմա 12.9–11:) Ինչպիսի՞ օրհնություններ են տրվում նրանց, ովքեր չեն կարծրացնում իրենց սրտերը: (Տե՛ս Ալմա 12.10:) Ինչպե՞ս կարող ենք զարգացնել մեր սրտերը Աստծո խոսքը ճանաչելու, հասկանալու և ընդունելու համար: (Տե՛ս 1 Նեփի 2.16; 15.11:)
- Ալման սովորեցնում էր, որ մարդիկ, որոնք կկարծրացնեն իրենց սրտերը Աստծո խոսքի հանդեպ, կդատապարտվեն իրենց խոսքերով, գործերով և մտքերով (Ալմա 12.13–14): Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը դատում ինչպես ըստ մեր խոսքերի և գործերի, այնպես էլ՝ ըստ մեր մտքերի:
- Ինչպե՞ս Ալման նկարագրեց նրաց վիճակը, որոնք չեն ապաշխարում և, հետևաբար, մեռնելու են իրենց մեղքերի մեջ: (Տե՛ս Ալմա 12.14–18:) Ինչո՞ւ են այդ մարդիկ լինելու այնպես, «կարծես թե փրկագնում արված չէր եղել»: (Տե՛ս Վ. և Ու.19.16–18:)
- Ալմա 12.22–34 պարունակում է Ադամի Անկման և փրկագնման ծրագրի Ալմայի նկարագրությունը: Ի՞նչ էր Ալման սովորեցնում մահկանացու կյանքի մասին: (Տե՛ս Ալմա 12.24:) Ինչպե՞ս այս սկզբունքի ըմբռնումը կարող է մեզ օգնել ապրել ավելի արդար կյանքով:
- Ինչո՞ւ էր այդքան կարևոր, որ «Աստված տվեց նրանց [Ադամին և Եվային] պատվիրաններ փրկագնման ծրագիրը նրանց հայտնի դարձնելուց *հետո*» (Ալմա 12.32): Փրկագնման ծրագրի հասկացողությունն ինչպե՞ս է մեզ օգնում պահել պատվիրանները:

Ինչպե՞ս կարող են ծնողները և ուսուցիչները կիրառել այս սկզբունքը պատվիրանների կարևորության մասին ուսուցանելիս:

- Ինչո՞ւ է մեզ համար անհրաժեշտ իմանալ, որ Աստված մեզ համար փրկագնման ծրագիր է պատրաստել: Ի՞նչ է սովորեցնում է մեզ փրկագնման ծրագիրը Աստծո դատաստանի և գթասրտության մասին:

Եզրափակում

Նշեք, որ Ալման և Ամուղեկը, միասին աշխատելով որպես Հիսուս Քրիստոսի ավետարանի վկաներ, զորացնում էին միմյանց և հզոր ուսմունքներ էին տալիս փրկագնման ծրագրի վերաբերյալ: Դասարանի անդամներին խրախուսեք ավետարանի մասին վկայություն բերելիս միմյանց զորացնելու հնարավորություններ փնտրել:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այս միտքը որպես դասի մաս:

Պատասխանել Զիզրոմի հարցերին

Երբ քննարկումն ավարտված կլինի և սուրբ գրությունները փակված կլինեն, դասարանի անդամներին խնդրեք փորձել ճիշտ պատասխանել Ամուղեկին ուղղված Զիզրոմի հարցերին, որոնք գրված են Ալմա 11.26–39-ում: Պատասխանները համեմատեք Ամուղեկի պատասխանների հետ: Այնուհետև քննարկեք, թե ինչպես էր Զիզրոմը փորձում խորամանկել, որպեսզի Ամուղեկը հակասող պատասխաններ տար: Նշեք, որ շատ կարևոր է հասկանալ ավետարանի սկզբունքները և փնտրել Սուրբ Հոգու առաջնորդությունը, որպեսզի կարողանանք պատրաստ լինել նման հարցերին պատասխանելու համար:

«Տուր մեզ ուժ ըստ մեր հավատքի, որը Քրիստոսում է»

Դաս
24

Ալմա 13–16

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ նախապատրաստած դերերի, կոչումների և քահանայական պարտականությունների կարևորությունը և, որ մարգարեների խորհրդին հետևելը մեզ օգնում է մտնել Տիրոջ հանգստի մեջ:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 13: Ալման զորեղ քարոզ է կարդում քահանայության և նախապես կարգվելու վարդապետության վերաբերյալ:
   բ. Ալմա 14: Ալման, Ամուղեկը և մյուս հավատացյալները հալածվում են իրենց արդարության համար: Տերն ազատում է Ալմային և Ամուղեկին բանտից՝ Քրիստոսի հանդեպ նրանց հավատքի շնորհիվ:
   գ. Ալմա 15: Զիզրոմը ապաքինվում և մկրտվում է: Սիդոնում շատ մարդիկ մկրտվում են:
   դ. Ալմա 16: Ալմայի խոսքերն իրագործվում են՝ Լամանացիները կործանում են Ամմոնիացիներին: Տերը պատրաստում է մարդկանց սրտերը Ալմայի, Ամուղեկի և մյուսների խոսքերն ընդունելու համար:

2. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժություն, ապա դասարան բերեք մի նկար, որի վրա պատկերված է քահանայություն ստացող մի մարդ, օրինակ՝ Առաքյալներին ձեռնադրող Քրիստոսը (62557; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 211) կամ Մելքիսեդեկյան Քահանայության Վերականգնումը (62371; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 408):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժութուն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին ասացեք, որ գրատախտակին պատրաստվում եք գրել ամենակարևոր հարցերից մեկը, որը մենք կարող ենք տալ: Այնուհետև գրատախտակին գրեք *Ինչպե՞ս*:

Բացատրեք, որ այս հարցը կարևոր է, որովհետև այն վերաբերվում է մեր անձնական վարքին: Դա պարզաբանելու համար դասարանի անդամներին խնդրեք պատկերացնել հետևյալը.

ա. Մի երիտասարդ գիտի, որ որոշակի պահին պետք է մի որոշակի վայրում լինի, սակայն չգիտի ինչպես հասնի այնտեղ:
բ. Մի կին գիտի, որ պետք է մկրտվի, սակայն չգիտի ինչպես դա պետք է կատարի:
գ. Մի տղամարդ գիտի, որ Հիսուսը Փրկիչն է, սակայն չգիտի ինչպես գա Նրա մոտ: (Այս օրինակը ներկայացնելիս կարող եք դասարանի անդամներին խնդրել կարդալ 1 Նեփի 15.14:)

Բացատրեք, որ, երբ Ալման սովորեցնում էր Ամմոնիայի մարդկանց, նա խոսեց մի ճանապարհի մասին, որով մենք կարող ենք գալ Քրիստոսի մոտ: *Ինչպես* բառի փոխարեն օգտագործեք «ինչ ձևով»: Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Ալմա 13.1–2:

Ցուցադրեք քահանայության ձեռնադրումը պատկերող նկարը (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 3): Բացատրեք, որ այս դասի մի մասը քննարկում է, թե ինչպես է քահանայության կարգը մեզ օգնում «իմանալ, թե ինչ ձևով սպասենք Որդուն՝ փրկագնման համար» (Ալմա 13.2):

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ալման զորեղ քարոզ է կարդում քահանայության և կարգման վերաբերյալ:

Քննարկեք Ալմա 13: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ Ամմոնիայում Զիզրոմին և մյուսներին փրկագնման ծրագրի մասին սովորեցնելուց հետո, Ալման վկայեց քահանայության և կարգման վարդապետության վերաբերյալ: Նշեք, որ Ալման խոսում էր Մելքիսեդեկյան Քահանայության բարձրագույն քահանաների մասին (Ալմա 13.10):

- Ե՞րբ են մարդիկ լինում «կանչված և պատրաստված» կարգվելու որպես քահանաներ: (Տե՛ս Ալմա 13.3:)

  Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Յուրաքանչյուր մարդ, որը կոչում ունի ծառայելու աշխարհի բնակիչներին, կարգվել էր այդ նպատակի համար դեռ այս աշխարհից առաջ երկնքի Մեծ Խորհրդի ժամանակ» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 365):

- Ինչպե՞ս են մարդիկ իրենց նախաերկրային կյանքում ցուցադրել իրենց արժանավորությունը Մելքիսեդեկյան Քահանայություն ստանալու համար: (Տե՛ս Ալմա 13.3–5:) Ի՞նչ մարդիկ պետք է անեն այս կյանքում իրենց կարգմանը արժանի մնալու համար: (Տե՛ս Ալմա 13.8–10:)

- Կարգման մասին Ալմայի ուսմունքներն ինչպե՞ս կարող են փոխել մեր վերաբերմունքը, երբ մենք աջակցում ենք նրանց, ովքեր կանչված են նախագահելու: Ինչպե՞ս պետք է այս ուսմունքներն օգնեն մեզ արձագանքել քահանայության ղեկավարների կողմից կոչումներ կամ այլ հանձնարարություններ ստանալիս:

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը սովորեցրել է. «Նախքան մեր այստեղ գալը, հավատարիմ կանայք որոշակի հանձնարարություններ են ստացել, իսկ հավատարիմ տղամարդիկ նախապես կարգվել են քահանայական հատուկ ծառայությունների: Թեպետև մենք չենք հիշում մանրամասները, սա չի փոխում այն փառավոր իրականությունը նրա, ինչին մենք մեկ անգամ համաձայնվել ենք: Դուք պատասխանատու եք այն բաների համար, որոնք երկար ժամանակ առաջ դրվել են ձեզ վրա, ինչպես և նրանք, ում մենք հաստատում ենք որպես մարգարեներ և առաքյալներ» (“The Role of Righteous Women,” *Ensign,* Nov. 1979, 102):

- Ալման ասաց, որ տղամարդիկ ստանում են Մելքիսեդեկյան Քահանայություն, որպեսզի կարողանան «սովորեցնել Աստծո պատվիրանները մարդկանց զավակներին, որպեսզի նրանք նույնպես կարողանան մտնել նրա հանգստի մեջ» (Ալմա 13.6; տե՛ս նաև հատված 1): Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները սովորեցնելու ի՞նչ հնարավորություններ ունեն: Ի՞նչ է նշանակում մտնել Տիրոջ հանգստի մեջ: (Տե՛ս ստորև տրված մեջբերումը:) Ինչո՞ւ մենք պետք է սովորեցնենք և սովորենք ավետարանը, որպեսզի կարողանանք մտնել Տիրոջ հանգստի մեջ:

  Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկին սովորեցրել է. «Տիրոջ հանգիստը, ինչ վերվաբերվում է մահկանացուներին, կատարյալ գիտելիքի ձեռք բերումն է վերջին օրերի մեծ աշխատանքի աստվածային բնույթի մասին: [Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է.] «Դա

նշանակում է մտնել Աստծո գիտելիքի և սիրո մեջ, ունենալ հավատք նրա նպատակի և ծրագրի նկատմամբ, այնպես, որ իմանանք, որ ճիշտ ենք, և չենք որսում որևէ այլ բան. չենք շփոթվում վարդապետության ամեն մի քամիով, կամ այն մարդկանց խորամանկություններով և նենգություններով, որոնք սպասում են խաբելու: Դա հանգիստ է աշխարհի կրոնական խառնաշփոթից, գալիք աղմուկից, այստեղ և այնտեղ – Ահա այնտեղ է Քրիստոսը, կամ ահա այնտեղ»: (*Gospel Doctrine,* 5th ed., pp. 58, 125–126:) Տիրոջ հանգիստը, հավերժության մեջ, դա Տիրոջ փառքի լիության ձեռք բերումն է (Վ. և Ու. 84.24:)» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 633):

- Ինչպե՞ս կարող ենք դառնալ ավելի մաքուր Տիրոջ հանգիստը մտնելու համար: (Տե՛ս Ալմա 13.11–12:) Ինչպե՞ս մենք պետք է ապրենք, որպեսզի սրբագործվենք Գառան արյունով և Սուրբ Հոգով: (Տե՛ս Ալմա 13.12–13, 16, 27–29; 3 Նեփի 27.19–20:)

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 13.2, 16: Այնուհետև վերանայեք ստորև տրված հատվածները: Դասարանի անդամներին օգնեք գտնել այն ճանապարհները, որոնցով քահանայության կարգը կարող է օգնել մեզ նայել Փրկչին փրկագնման համար: Հատուկ ուշադրություն դարձրեք շեղագիր խոսքերին և արտահայտություններին:

ա. Ալմա 13.3–4: (Նրանք, ովքեր նախապես կարգվել էին Մելքիսեդեկյան Քահանայություն ստանալու համար եղել են «կանչված և պատրաստված . . . իրենց խիստ մեծ *հավատքի* ու *բարի գործերի* շնորհիվ»:)
բ. Ալմա 13.6: (Նրանք կարգվեցին սովորեցնելու նրա [Աստծո] *պատվիրանները* մարդկանց զավակներին, որպեսզի նրանք ևս կարողանան մտնել նրա հանգստի մեջ»:)
գ. Ալմա 13.8: (Այս կյանքում նրանք կարգվում են *«սուրբ արարողությամբ»:*)
դ. Ալմա 13.10: (*Անսասան հավատքի, բարի գործերի* և *ապաշխարության* միջոցով նրանք ցույց են տալիս, որ արժանի են իրենց կարգմանը:)

- Ինչպե՞ս է հավատքը և ապաշխարությունը մեզ օգնում նայել Քրիստոսին փրկագնման համար: Ինչպե՞ս են բարի գործերը և պատվիրաններին հնազանդվելը օգնում մեզ նայել Նրան: Ինչպե՞ս են քահանայության արարողություններն օգնում մեզ նայել Նրան:

- Ալման խոսում էր Մելքիսեդեկի մասին որպես մի մեծ քահանայապետի (Ալմա 13.14–15): Ի՞նչ կարող ենք սովորել Մելքիսեդեկի օրինակից: (Տե՛ս Ալմա 13.17–18; տե՛ս նաև Joseph Smith Translation, Genesis 14.25–40:)

- Ի՞նչ կարող ենք սովորել Ալմա 13.27-ից Ամմոնիայի մարդկանց հանդեպ Ալմայի սիրո մասին:

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ ժողովրդին ուղղված Ալմայի խրնդրանքը, ինչպես գրված է Ալմա 13.27–29-ում: Ինչո՞ւ է կարևոր չհետաձգել ապաշխարությունը: (Տե՛ս Ալմա 34.32–36:) Ի՞նչ օրհնություններ մենք կստանանք, եթե «արթուն կենանք ու շարունակ աղոթենք»: (Տե՛ս Ալմա 13.28:) Ինչպե՞ս կարող ենք ունենալ «մի հույս, որ պիտի ստանանք հավերժական կյանք»: (Տե՛ս Ալմա 13.29; Մորոնի 7.41:)

2. Ալման, Ամուղեկը և մյուս հավատացյալները հալածվում են իրենց արդարության համար:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 14-ից:

- Ամմոնիայում շատ մարդիկ հավատացին Ալմայի և Ամուղեկի ուսմունքներին և սկսեցին ապաշխարել և ուսումնասիրել սուրբ գրությունները (Ալմա 14.1): Սակայն, ժողովրդի մեծամասնությունը զայրացավ և սկսեց հալածել Ալմային և Ամուղեկին (Ալմա 14.2–5): Ինչո՞ւ են որոշ մարդիկ զայրանում, երբ նրանց կոչ է արվում ապաշխարել: (Տե՛ս 1 Նեփի 16.1–3:)

- Ի՞նչ արեց Զիզրոմը երբ տեսավ, թե ինչ էր ինքն «առաջացրել ժողովրդի մեջ»: (Տե՛ս Ալմա 14.6–7:) Ինչպե՞ս ժողովուրդը պատասխանեց, երբ Զիզրոմը խոստովանեց իր մեղքը և պաշտպանեց Ալմային և Ամուղեկին: (Տե՛ս Ալմա 14.7:)

- Ինչպե՞ս վարվեցին Ամմոնիայի անբարիշտները այն մարդկանց հետ, ովքեր հավատացին Աստծո խոսքին: (Տե՛ս Ալմա 14.7–9:) Ինչո՞ւ Տերը դա թույլ տվեց: (Տե՛ս Ալմա 14.10–11; 60.13:) Ինչո՞ւ էր Աստված կամենում, որպեսզի Ալման և Ամուղեկը չզրկվեին իրենց կյանքից: (Տե՛ս Ալմա 14.12–13:)
- Բանտում շատ օրեր անցկացնելուց հետո, ինչպե՞ս վերջապես ազատվեցին Ալման և Ամուղեկը: (Տե՛ս Ալմա 14.26–29; Եթեր 12.12–13: Նրանք ուժ ստացան և զորություն՝ «ըստ նրանց հավատքի, որը Քրիստոսում էր»:) Որո՞նք են այն բաները, որոնցից մենք պետք է ազատվենք: Ազատություն ստանալու համար ինչո՞ւ պետք է մեր հավատքը կենտրոնացված լինի Քրիստոսի վրա: (Տե՛ս Մոսիա 3.17; Մորոնի 7.33:)

3. Զիզրոմն ապաքինվում է և մկրտվում:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 15-ից: Բացատրեք, որ Տիրոջ օգնությամբ բանտից ազատվելուց հետո Ալման և Ամուղեկը գնացին Սիդոնի երկիր: Այնտեղ նրանք հանդիպեցին մարդկանց, որոնք դուրս էին վռնդվել Ամմոնիայից և քարկոծվել Աստծո խոսքի հանդեպ իրենց հավատքի պատճառով (Ալմա 15.1; տե՛ս նաև Ալմա 14.7): Զիզրոմը նրանցից մեկն էր (Ալմա 15.3):

- Զիզրոմն իր անբարշտության պատճառով մտատանջվում էր և՛ հոգեպես, և՛ ֆիզիկապես, սակայն «նրա սիրտը սկսեց համարձակությամբ լցվել», երբ նա իմացավ, որ Ալման և Ամուղեկը Սիդոնում են (Ալմա 15.3–4): Ի՞նչ նա խնդրեց Ալմայից և Ամուղեկից: (Տե՛ս Ալմա 15.5:) Ի՞նչ է սա բացահայտում նրանց հանդեպ նրա վստահության մասին: Ո՞ւմ նա պետք է վստահեր, որպեսզի ապաքինվեր: (Տե՛ս Ալմա 15.6–10:)
- Ի՞նչ կարող ենք սովորել Զիզրոմի գործերից, նրանից հետո, երբ նա ապաքինվեց: (Տե՛ս Ալմա 15.11–12:)
- Ի տարբերություն Ամմոնիայում մնացած մարդկանց Սիդոնի ժողովուրդը հավատաց Ալմայի և Ամուղեկի ուղերձին և մկրտվեց (Ալմա 15.12–15): Ալման տեսավ, որ ժողովուրդը «զսպված էր՝ ինչ վերաբերում էր իրենց սրտերի հպարտությանը» (Ալմա 15.17; նշեք, որ *զսպված* բառը նշանակում է դանդաղել կամ դադարել): Ի՞նչ արեցին մարդիկ, երբ դարձան ավելի խոնարհ: (Տե՛ս Ալմա 15.17:) Ինչո՞ւ է կարևոր խոնարհեցնել մեզ Աստծո առջև Նրա հանդեպ ճշմարիտ պատկառանք ունենալու համար:
- Ինչի՞ց հրաժարվեց Ամուղեկը, ընտրելով ըստ ավետարանի ապրելը և միսիոներական ծառայությունը: (Տե՛ս Ալմա 15.16:) Ի՞նչ նա ձեռք բերեց: (Տե՛ս Ալմա 8.30; 34.1, 8; Եթեր 12.12–13:) Ինչպիսի՞ զոհաբերություններ եք կատարել, երբ ընտրել եք ապրել ավետարանով և սովորեցնել ավետարանը: Ինչպե՞ս եք օրհնվել դրա շնորհիվ:
- Ի՞նչ Ալման կատարեց Ամուղեկի համար, երբ Եկեղեցին հիմնադրվեց Սիդոնում: (Տե՛ս Ալմա 15.18:) Ի՞նչ է սա ասում Ալմայի մասին: Ինչպե՞ս կարող ենք ծառայել մյուսներին և զորացնել նրանց Տիրոջ մեջ:

4. Ալմայի խոսքերն իրականանում են և Լամանացիները կործանում են Ամմոնիացիներին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 16-ից:

- Մեկ տարի անց այն բանից հետո, երբ Ալման և Ամուղեկը քարոզում էին Ամմոնիայում, Լամանացիները ներխուժեցին Նեփիացիների հողերը (Ալմա 16.1–2): Ի՞նչ պատահեց Ամմոնիայի Նեփիացիներին: (Տե՛ս Ալմա 16.2–3, 9–11:) Ինչպե՞ս այս իրադարձությունները դարձան Ալմայի մարգարեությունների իրականացումը: (Տե՛ս Ալմա 9.4–5, 12, 18:)
- Ինչո՞ւ Զորամը և նրա հետևորդները ի վիճակի եղան ջախջախել Լամանացիներին և փրկել գերի ընկած իրենց եղբայրներին: (Տե՛ս Ալմա 16.4–8:) Ի՞նչ կարող ենք սովորել, համեմատելով Ամմոնիացիների կործանումը Զորամի բանակի հաջողությունների հետ: (Համեմատեք Ալմա 9.1–8; 15.15 Ալմա 16.4–6 հետ; տե՛ս նաև 2 Նեփի 4.34: Շեշտեք, որ մենք պետք է ապավինենք Աստծուն և Նրա մարգարեներին, ոչ թե՝ աշխարհիկ գիտելիքներին, ուժերին կամ իշխանություններին:)

- Ամմոնիացիների կործանումից հետո Տերը նախապատրաստեց մարդկանց սրտերը՝ Ալմայի, Ամուղեկի և այդ գործի համար մյուս ընտրվածների խոսքերն ընդունելու համար (Ալմա 16.13–21): Ինչպե՞ս է Տերը նախապատրաստում մարդկանց սրտերը Իր խոսքն ընդունելու համար: (Տե՛ս Ալմա 16.16:) Ինչպե՞ս կարող ենք հետևել, որպեսզի քարոզենք Աստծո խոսքը «իր անաղարտությամբ»: (Տե՛ս Ալմա 16.21; տե՛ս նաև Մոսիա 18.18–20; Վ. և Ու. 52.9:)

Եզրափակում

Դասարանի անդամներին խնդրեք կիսվելԱլմա 13–16-ի վերաբերյալ իրենց զգացմունքներով և տպավորություններով:

Կարդացեք Մաթեոս 11.28–30 և Ալմա 13.27–29: Շեշտեք, որ կասկածանքով և մոլորությամբ լի աշխարհում, սփոփում է այն միտքը, որ քահանայության միջոցով մենք կարող ենք իմանալ, «թե ինչ ձևով սպասենք Նրա Որդուն՝ փրկագնման համար» (Ալմա 13.2): Սպասելով Տիրոջը, ապավինելով Նրան և հետևելով Նրա մարգարեների խորհրդին, մենք կարող ենք մտնել Նրա հանգստի մեջ:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք այն օգտագործել որպես դասի մի մաս:

«Համաձայն Աստծո կանխագիտությանը» (Ալմա 13.3)

Կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը, որոնք կօգնեն դասարանի անդամներին ավելի լավ ըմբռնել նախօրոք կարգման իմաստը.

«Տերը ձեզ պահել էր, որպեսզի դուք ի հայտ գայիք վերջին օրերում, Տիրոջ երկրորդ գալստից առաջ . . . Վերջին օրերի համար Աստված պահել է Իր ամենազորեղ զավակներին, որոնք կօգնեն փառավորությամբ հաստատել արքայությունը: Ահա, թե երբ եք դուք եկել, քանզի դուք այն սերունդն եք, որը պետք է պատրաստվի դիմավորելու Աստծուն . . .

Բոլոր ժամանակներում մարգարեները ժամանակի միջանցքով նայել են դեպի մեր օրերը: Միլիարդավոր հիվանդներ և նրանք, ովքեր դեռ պետք է ծնվեն, իրենց աչքերն են դարձրել դեպի մեզ: Մի սխալվեք այդ հարցում, դուք ընտրված սերունդ եք: Երբեք այդքան շատ հավատք չի պահանջվել այսքան կարճ ժամանակահատվածում, որքան այժմ պահանջվում է մեզանից» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 104–5):

Դաս
25

«Նրանք սովորեցնում էին Աստծո զորությամբ և իշխանությամբ»

Ալմա 17–22

Նպատակ

Ոգեշնչել դասարանի անդամներին հետևել Մոսիայի որդիների օրինակին, քարոզելով ավետարանը և ծառայելով ուրիշներին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին:

   ա. Ալմա 17.1–18: Մոսիայի որդիները քարոզում են ավետարանը Լամանացիներին:
   բ. Ալմա 17.19–39; 18; 19: Ամմոնը ծառայում և սովորեցնում է Լամոնի թագավորին: Թագավորը, թագուհին և շատ Լամանացիներ դարձի են գալիս:
   գ. Ալմա 20–22: Ամմոնը Սուրբ Հոգու հուշումով ազատում է իր եղբայրներին բանտից: Լամոնիի հայրը դարձի է գալիս:

2. Դասարանի անդամներից մեկին խնդրեք նախապատրաստվել ամփոփելու Ալմա 17:19–39: Նրան խնդրեք միայն պատմել այն, ինչ նկարագրված է սուրբ գրությունների մեջ, ոչ թե ներկայացնել վարդապետությունը կամ իր անձնական փորձը: Դա պետք է արվի նրա ամփոփումից հետո:

3. Եթե առկա է «Ամմոնը պաշտպանում է Լամոնի թագավորի հոտերը» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ժամանակ (62535; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 310):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրեք հետևյալ արտահայտությունները գրատախտակի վրա. *Իմանալ, Զգալ, Կատարել:*

- Ինչպե՞ս են այս արտահայտությունները վերաբերում միսիոներական աշխատանքին:

  Երեց Կարլոս Ե. Ասեյը պատմում է իր փորձից.

  «Վերջերս ես լսեցի մի նորադարձի վկայություն, երիտասարդն անկասկած Սուրբ Հոգու ազդեցության տակ էր: Այլ բաների հետ մեկտեղ նա նշեց, որ իր մեծագույն ցանկությունն էր՝ կիսվել վերականգնված ավետարանով իր ընտանիքի անդամների և ընկերների հետ: Արցունքներն աչքերում դողդոջուն ձայնով նա ասաց.

  Ես ցանկանում եմ, որ նրանք *իմանան* այն, ինչ ես գիտեմ:

  Ես ցանկանում եմ, որ նրանք *զգան* այն, ինչ ես եմ զգում:

  Ես ցանկանում եմ, որ նրանք *կատարեն* այն, ինչ ես կատարեցի»:

  Կա մի միսիոներական ոգի, որը ստիպում է մեզ ապրել մեզնից դուրս և մտահոգվել ուրիշների բարեկեցության մասին: Եվ յուրաքանչյուր անձ, որը երբևիցէ ծառայել է արժանի միսիայում, աջակցել է իր ընկերոջ դարձի գալու ընթացքին, օգնել է որդու կամ դստերը միսիայի բնագավառում կամ շփվել է միսիոներների հետ, կարող է վկայել դրա իրական լինելու մասին» (in Conference Report, Oct. 1976, 58; or *Ensign,* Nov. 1976, 42):

Բացատրեք, որ դարձի գալուց հետո Մոսիայի որդիները մեծ ցանկություն ունեցան կիսվելու ավետարանով մյուսների հետ: Նրանց փորձը սուրբ գրություններում պատկերված միսիոներական ծառայության մեծագույն օրինակ է հանդիսանում: Այս դասը քննարկում է, թե ինչպես նրանք ի վիճակի եղան դառնալ գործիք Աստծո ձեռքերում՝ բերելու Լամանացիներին ճշմարտության գիտելիքին:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Մոսիայի որդիները քարոզում են ավետարանը Լամանացիներին:

Բացատրեք, որ Ալման Մանթի ճամփորդելուց հանդիպեց Մոսիա թագավորի որդիներին, որոնք վերադառնում էին Լամանացիների մոտ անցկացրած իրենց 14–տարվա միսիայից: Ալմա 17–26 պատմում է այդ միսիայի ժամանակ Մոսիայի որդիների փորձի և քարոզի մասին: Կարդացեք և քննարկեք Ալմա 17.1–18:

- Ինչո՞ւ էին Մոսիայի որդիներն այդքան զորեղ և արդյունավետ ուսուցիչներ: (Տե՛ս Ալմա 17.2–4: Գրատախտակին գրեք *Հաջող միսիոներական աշխատանքի բանալիները* վերնագիրը: Այդ վերնագրի տակ գրեք *Ուսումնասիրել, ծոմ պահել և աղոթել:*) Ինչպե՞ս կարող են մեր անձնական արժանավորությունը և նախապատրաստվածությունը օգնել մեզ դառնալ արդյունավետ գործիքներ Տիրոջ համար: Հանդիպե՞լ եք դուք որևէ միսիոների կամ մեկ ուրիշի, որն օրհնվել է անձնական պատրաստվածության շնորհիվ:
- Ինչպիսի՞ զոհաբերություններ պետք է կատարեին Մոսիայի որդիներն իրենց միսիոներական աշխատանքը կատարելու համար: (Տե՛ս Ալմա 17.5–6:) Ինչո՞ւ էին նրանք պատրաստ կատարելու այն: (Տե՛ս Ալմա 17.9, 16; տե՛ս նաև Մոսիա 28.1–3: Գրատախտակին գրեք *Միրել Աստծուն և ուրիշներին:*) Ինչպե՞ս կարող ենք Մոսիայի որդիների նման ուրիշների հանդեպ սեր և մտահոգություն ունենալ:
- Մոսիայի որդիները գնացին քարոզելու «կարծրացած ու կատաղի մի ժողովրդի» (Ալմա 17.14): Ի՞նչ սփոփանք և խուրհուրդ տվեց նրանց Տերը՝ օգնելու պատրաստվել միսիային: (Տե՛ս Ալմա 17.10–11:) Ինչպե՞ս էին իրենց զգում Մոսիայի որդիները Տիրոջից սփոփանք և ուղղություն ստանալուց հետո: (Տե՛ս Ալմա 17.12:) Ինչպե՞ս կարող են այս հատվածները մեզ օգնել մեր կոչումների հետ կապված խնդիրներին հանդիպելիս:

2. Ամմոնը ծառայում և սովորեցնում է Լամոնի թագավորին, և շատ մարդիկ դարձի են գալիս:

Դասարանի այն անդամին, որին նախօրոք հանձնարարված էր, խնդրեք ամփոփել Ալմա 17.19–39-ում նկարագրված իրադարձությունները: Այնուհետև կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 17.19–39; 18; 19-ից: Ցուցադրեք «Ամմոնը պաշտպանում է թագավորի հոտերը» նկարը:

- Ինչո՞ւ Ամմոնի սիրտը «ուրախությունից ուռչեց», երբ թագավորի հոտերը ցրվեցին: (Տե՛ս Ալմա 17.29:) Ինչպե՞ս Ամմոնը դա դրական փորձի վերածեց: (Տե՛ս Ալմա 17.30–39:)
- Ինչպե՞ս թագավորն արձագանքեց, երբ նրա ծառաները պատմեցին, թե ինչպես Ամմոնը պաշտպանեց նրա հոտերը: (Տե՛ս Ալմա 18.2–5:) Ի՞նչ էր անում Ամմոնը, երբ թագավորը հարցրեց, թե որտեղ էր նա: (Տե՛ս Ալմա 18.8–9: Գրատախտակին գրեք *Ծառայել և զարգացնել վստահություն:*) Ինչպե՞ս դա օգնեց Լամոնի թագավորին պատրաստվել սովորելուն: (Տե՛ս Ալմա 18.10–11:)
- Ինչպե՞ս դիմեցին թագավորի ծառաները Ամմոնին, երբ նա եկավ տեսնելու թագավորին: (Տե՛ս Ալմա 18.13:) Լամոնի թագավորին ուղղված Ամմոնի խոսքերն ինչպե՞ս ցույց տվեցին, որ նա դեռ հնազանդ ծառա էր: (Տե՛ս Ալմա 18.14–17:)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Ամմոնի համար կարևոր սովորեցնելուց առաջ նախ ծառայել թագավորին: Ծառայելը և մյուսների հետ լավ հարաբերություններ հիմնելը ինչպե՞ս կարող են օգնել մեզ ներկայացնել նրանց ավետարանի ուղերձը: Ի՞նչ ճանապարհներով կարող ենք մենք ծառայել նրանց, ում սովորեցնում ենք:
- Երբ Ամմոնը սկսեց սովորեցնել Լամոնի թագավորին, ինչպե՞ս նա օգնեց նրան Աստծո և երկնքի մասին գիտելիք ձեռք բերել: (Տե՛ս Ալմա 18.24–33: Նա սովորեցնում էր այնպես, որպեսզի թագավորը կարողանար հասկանալ:) Ինչպե՞ս կարող ենք հետևել այս օրինակին, երբ սովորեցնում ենք ավետարանը:
- Լամոնի թագավորի հետ հասկացողության նույն մակարդակին հասնելուն պես ինչպիսի՞ կարևոր ուսմունքներ սովորեցրեց Ամմոնը նրան: (Տե՛ս Ալմա 18.34–39: Գրատախտակին գրեք *Սովորեցնել փրկագնման ծրագիրը սուրբ գրություններից:*) Ինչո՞ւ է Մորմոնի Գիրքը կարևոր գործիք հանդիսանում այս ճշմարտություններն այսօր սովորեցնելու գործում:
- Ի՞նչ արեց Լամոնի թագավորն Ամմոնի խոսքերը լսելուց և դրանց հավատալուց հետո: (Տե՛ս Ալմա 18.40–41:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մարդիկ փնտրեն ներում, երբ նրանց սովորեցնում են ավետարանի սկզբունքները: Ինչո՞ւ է աղոթքը կարևոր դարձի գալու գործընթացում:
- Աղոթելուց հետո Լամոնի թագավորն ընկավ գետնին: Ինչպե՞ս թագուհին հավատք դրսևորեց, երբ Լամոնին կարծես մահացած լիներ: (Տե՛ս Ալմա 19.1–5, 8–9:)
- Ի՞նչ շեշտեց Լամոնին, երբ դարձի գալուց հետո խոսեց թագուհու հետ: (Տե՛ս Ալմա 19.12–13:)
- Թագուհու հետ խոսելուց հետո Լամոնին կրկին ընկավ գետնին, թագուհին և բացի Աբիշից բոլոր ծառաները նույնպես ընկան գետնին (Ալմա 19.13, 15–16): Ո՞վ էր Աբիշը: (Տե՛ս Ալմա 19.16–17: Երբ դասարանի անդամները քննարկեն Աբիշին, կարող եք նշել, որ նրա օրինակը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է մնալ դարձի եկած վիճակում, անգամ եթե մեզ շրջապատող մարդիկ դարձի չեն եկել:) Ի՞նչ արեց Աբիշը, երբ հասկացավ, թե ինչ տեղի ունեցավ: (Տե՛ս Ալմա 19.17:) Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ ճանաչել և օգտագործել ավետարանը քարոզելու հնարավորությունները:
- Ինչպիսի՞ տարբեր արձագանքներ տվեցին մարդիկ, երբ եկան թագավորի պալատը: (Տե՛ս Ալմա 19.18–28:) Ինչպե՞ս էր Աբիշը փորձում մարդկանց մեջ ծագած վեճը: (Տե՛ս Ալմա 19.28–29:) Ինչպե՞ս թագավորը և թագուհին ցույց տվեցին, որ դարձի են եկել, վեր կենալուց հետո: (Տե՛ս Ալմա 19.29–31, 33:)
- Ձեր կարծիքով, ի՞նչ էր ցանկանում Մորմոնը, որպեսզի մենք սովորեինք Ամմոնի, Լամոնի թագավորի և նրա մարդկանց փորձից: (Տե՛ս Ալմա 19.36: Պատասխանները կարող են ընդգրկել հետևյալը. Տիրոջ ձեռքը «մեկնված է դեպի բոլոր մարդիկ, ովքեր կապաշխարեն ու կհավատան նրա անվանը»:)

3. Ամմոնը Սուրբ Հոգով առաջնորդվում է ազատելու իր եղբայրներին: Լամոնիի հայրը դարձի է գալիս:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 20–22-ից:

- Ի՞նչ ցանկացավ Լամոնին անել թագավորությունում Եկեղեցու հաստատումից հետո: (Տե՛ս Ալմա 20.1:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի նորադարձները կիսվեն իրենց վկայությամբ ուրիշների հետ: Ինչպե՞ս կարող ենք շարունակել նույն ոգևորությամբ:
- Լամոնիի և նրա հոր միջև երկխոսությունն ինչպես դրսևորեց Լամոնիի դարձի գալու խորությունը: (Տե՛ս Ալմա 20.13–15:)
- Ամմոնի հետ կապված ի՞նչն առավել ապշեցրեց Լամոնի թագավորի հորը: (Տե՛ս Ալմա 20.26–27:) Ինչո՞ւ են սերը և վկայությունն այդքան զորեղ մարդկանց սրտերը փափկացնելու գործում: (Դասարանի անդամներին խնդրեք կիսվել իրենց փորձով այն

մասին, թե ինչպես է սերը և վկայությունը փափկացրել իրենց սրտերը կամ իրենց ընտանիքի անդամների և ընկերների սրտերը:)

Բացատրեք, որ Ալմա 21 սկսվում է Ամմոնի եղբայր Ահարոնի և նրա եղբայրների մասին պատմությունով: Նրանք Երուսաղեմում քարոզում էին ավետարանը Ամաղեկացիներին և Ամուղոնացիներին, սակայն այդ անհավատ Նեփիացիաները չափազանց կարծրացած էին իրենց սրտերում և հրաժարվում էին լսել: Ահարոնը և նրա եղբայրները հեռացան և սկսեցին քարոզել Միդոնիի երկրում, ուր նրանք գցվեցին բանտ և ենթարկվեցին չարչարանքների:

- Ի՞նչ արեցին Ահարոնը և նրա եղբայրները, երբ ազատվեցին բանտից, կերակրվեցին և հագնվեցին: (Տե՛ս Ալմա 21.14–15: Գրատախտակին գրեք *Առաջ մղվել առանց տատանման:*) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մենք շարունակենք մեր աշխատանքը Աստծո թագավորությունում, անգամ եթե տառապանքների և դժվարությունների հանդիպենք:
- Ինչպե՞ս Ահարոնը և նրա եղբայրները իմացան, ուր գնալ ավետարանը քարոզելու համար: (Տե՛ս Ալմա 21.16:) Ինչպե՞ս նրանք օրհնվեցին, երբ առաջնորդվեցին Սուրբ Հոգով: (Տե՛ս Ալմա 21.17:) Ինչպե՞ս եք դուք օրհնվել, երբ հետևել եք Սուրբ Հոգու հուշումներին:
- Ահարոնը Սուրբ Հոգով առաջնորդվեց Լամոնի թագավորի հոր երկիրը (Ալմա 22.1): Ամմոնի օրինակն ինչպե՞ս օգնեց Լամոնիի հորը պատրաստվել ուսուցանվելուն: (Տե՛ս Ալմա 22.2–3: Գրատախտակին գրեք *Լինել լավ օրինակ:*) Ականատես եղե՞լ եք արդյոք, երբ Եկեղեցու անդամները լավ ազդեցություն են թողել ուրիշների վրա:
- Լամոնիի հորը Ահարոնի ուսուցումները ինչո՞վ էին նման Լամոնիին Ամմոնի ուսուցումներին: (Համեմատեք Ալմա 18.24–39 և Ալմա 22.7–14:) Ի՞նչ ասաց Ահարոնը, երբ Լամոնիի հայրը հարցրեց, թե ինչ նա պետք է անի փրկագնման հույս ստանալու համար: (Տե՛ս Ալմա 22.16: Դասարանի անդամների պատասխանները գրի առեք գրատախտակին: Դրանք կարող են ներառել ստորև տրված պատասխանները:)

  ա. «Խոնարհվես Աստծո առաջ»:
  բ. «Ապաշխարես քո բոլոր մեղքերը»:
  գ. «Հավատքով կանչես առ նրա անունը»:
- Ի՞նչ զոհողությունների էր պատրաստ թագավորը Աստծուն իմանալու համար: (Տե՛ս Ալմա 22.15, 17–18:) Ի՞նչ կարող ենք սովորել թագավորի օրինակից:

  Ալմա 22.15, 18-ի վերաբերյալ Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Մեզանից յուրաքանչյուրը պետք է հրաժարվի իր մեղքերից, եթե ցանկանում է իսկապես իմանալ Քրիստոսին: Քանզի մենք չգիտենք Նրան, քանի դեռ չենք դարձել Նրա նման: Կան ոմանք, ինչպես այդ թագավորը, որոնք պետք է աղոթեն մինչև որ նույնպես կարողանան իրենց միջից արմատախիլ անել այդ ամբարիշտ ոգին, որպեսզի ստանան նույն ուրախությունը» (in Conference Report, Oct. 1983, 63; or *Ensign,* Nov. 1983, 43):
- Իր որդի Լամոնիի նման, թագավորը ֆիզիկապես Սուրբ Հոգու ներգործությամբ կորցրեց գիտակցությունը: Ուշքի գալով, թագավորը վկայեց իր հետ տեղի ունեցած դեպքի մասին, որի պատճառով շատերը դարձի եկան (Ալմա 22.18–26): Ի՞նչ արեց թագավորը դարձի գալուց հետո, և ինչպե՞ս դա օգնեց միսիոներներին Տիրոջ մասին գիտելիքը հասցնել հազարավոր մարդկանց: (Տե՛ս Ալմա 22.26; 23.1–6:) Ինչպիսի՞ փորձ եք ունեցել կամ տեսել եք արդյո՞ք, երբ մեկը դրական ազդեցություն է թողել ուրիշների վրա:

Եզրափակում

Նշեք, որ միսիոներական աշխատանքի հանդեպ ունեցած մեր ներկա մոտեցումը նման է Ամմոնի և Ահարոնի մոտեցումներին. միսիոներները խրախուսվում են վստահելի հարաբերություններ կառուցել, հետևել Սուրբ Հոգուն և սովորեցնել փրկագնման ծրագիրը սուրբ գրություններից:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս
26

«Դարձի բերվեցին առ Տերը»

Ալմա 23–29

Նպատակը

Խրախուսել դասարանի անդամներին զորացնել իրենց դարձը և մեծացնել ուրիշներին օգնելու ցանկությունը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 23–24: Հազարավոր Լամանացիներ Մոսիայի որդիների կողմից ուսուցանվելուց հետո դարձի եկան: Նորադարձ Լամանացիներն իրենց կոչեցին Անթի-Նեփի-Լեքիներ: Որպես վկայություն Աստծուն, որ նրանք այլևս մեղք չեն գործի, արյուն թափելով, Անթի-Նեփի-Լեքիները թաղեցին իրենց սրերը և հրաժարվեցին վերցնել դրանք, երբ Լամանացիների բանակը հարձակվեց իրենց վրա:

   բ. Ալմա 27–28: Ամմոնն առաջնորդեց Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդին ապահով վայր, Նեփիացիաների մոտ: Նեփիացիներն Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդին տվեցին Երսոնի երկիրը և խոստացան պաշտպանել նրանց թշնամիներից: Լամանացիները կրկին հարձակվեցին Նեփիացիների վրա և պարտվեցին:

   գ. Ալմա 26, 29: Ամմոնը փառավորում է Տիրոջը, տեսնելով իր և իր եղբայրների հաջողությունը Լամանացիներին քարոզելիս: Ալման ցանկանում է, որպեսզի ուրախությունը գա բոլորին ապաշխարության և փրկագնման ծրագրի միջոցով:

2. Եթե առկա է «Անթի-Նեփի-Լեքիի ժողովուրդը թաղում է սրերը» նկարը, պատրաստվեք ցուցադրել այն դասի ժամանակ (62565; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 311):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին հարցրեք.

- Ինչպիսի՞ հատկանիշներ կամ վարքագծեր են բնորոշ ճշմարիտ դարձի եկած մարդկանց:

Բացատրեք, որ այս դասը քննարկում է մարդկանց մի խմբի, որոնք այնքան խոր համոզմունքով դարձի էին եկել առ Տերը, որ սուրբ գրություններում գրվեց, որ նրանք «երբեք չհեռացան» (Ալմա 23.6):

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Անթի-Նեփի-Լեքիցիները դարձի եկան առ Տերը:

Քննարկեք Ալմա 23–24: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Լամոնիի հայրը, որը բոլոր Լամանացիների թագավորն էր, Ահարոնի ուսմունքների շնորհիվ դարձի եկավ (Ալմա 22):

- Ի՞նչ արեց Լամանացիների թագավորը դարձի գալուց հետո: (Տե՛ս Ալմա 23.1–2:) Ինչո՞ւ նա այդպես վարվեց: (Տե՛ս Ալմա 23.3:) Ի՞նչ հետևեց այդ հրովարտակից և Ահարոնի ու նրա եղբայրների համապատասխան գործերից: (Տե՛ս Ալմա 23.4–7:)

- Դարձի եկած Լամանացիների ո՞ր գործերը ապացուցեցին նրանց դարձի գալու ճշմարտացիությունը և անկեղծությունը: (Դասարանի անդամների պատասխանները ամփոփեք գրատախտակի վրա: Որոշ պատասխաններ և քննարկման համար հարցեր տրված են ստորև:)

  ա. Նրանք «դարձի եկան առ Տերը» (Ալմա 23.6): Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Հիսուս Քրիստոսը մեր դարձի գալու առանցքն է: Ի՞նչ այլ պատճառներով կարող են մարդիկ ներգրավվել Եկեղեցի: (Պատասխանները կարող են լինել. միսիոներների բնավորությունները, ընկերների ազդեցությունը, հասարակական այս կամ այն միջոցառումներն ու ծրագրերը:) Ինչո՞ւ այս ամենն առանձին-առանձին չեն կարող ճշմարիտ ձևով դարձի բերել մարդկանց:

  բ. Նրանք «փափագում էին, . . . որպեսզի . . . կարողանային զանազանվել իրենց եղբայրներից» (Ալմա 23.16): Ինչպե՞ս դարձի եկած Լամանացիները որոշեցին տարբերվել իրենց անբարիշտ եղբայրներից: (Տե՛ս Ալմա 23.16–18; 27.27–30:) Ինչպե՞ս ենք մենք զանազանվում աշխարհից, երբ դարձի ենք գալիս: Ինչո՞ւ է կարևոր նման ձևով զանազանվելը:

  գ. Նրանք իրենց երախտագիտությունն էին արտահայտում Աստծուն, անգամ փորձությունների և դժվարությունների պահերին (Ալմա 24.6–10, 23): Ինչպիսի՞ դժվարությունների հանդիպեցին Անթի-Նեփի-Լեքիներն իրենց դարձի գալու հետևանքով: (Տե՛ս Ալմա 24.1–2, 20–22; 27.1–3:) Չնայած այդ դժվարություններին, ինչի՞ համար էին նրանք երախտապարտ: (Տե՛ս Ալմա 24.7–10:) Ինչպե՞ս կարող է Աստծո հանդեպ երախտագիտությունը մեզ օգնել դիմակայել փորձություններին և դժվարություններին:

  դ. «Նրանք վերցրեցին իրենց սրերը, . . . և թաղեցին դրանք խորը՝ հողի մեջ» (Ալմա 24.15–17): Ցուցադրեք Անթի-Նեփի-Լեքիների նկարը: Ինչո՞ւ Անթի-Նեփի-Լեքիները թաղեցին իրենց սրերը և մյուս զենքերը: (Տե՛ս Ալմա 23.7; 24.11–13, 18–19:) Ինչո՞ւ էր հատկապես կարևոր, որ նրանք ոչ թե պարզապես խոստացան չօգտագործել զենքերը, այլ թաղեցին դրանք հողի տակ: Ինչպե՞ս մենք կարող ենք երբեմն «ապստամբել Աստծո դեմ»: Ի՞նչ կարող ենք մենք անել մեր ապստամբության զենքերը թաղելու համար:

  ե. Նրանք մեծ սեր ցուցաբերեցին իրենց եղբայրների հանդեպ (տե՛ս Ալմա 26.31): Զենքերը թաղելու Անթի-Նեփի-Լեքիների որոշումն ինչպե՞ս ապացուցեց նրանց սերը մարդկանց և Աստծո նկատմամբ: (Տե՛ս Ալմա 24.18; 26.32–34:) Ինչպե՞ս կարող է դարձի գալը մեծացնել մյուսների նկատմամբ մարդու սերը:

- Ինչպե՞ս արձագանքեցին դարձի չեկած Լամանացիները, երբ տեսան, որ Անթի-Նեփի-Լեքիները չեն պատրաստվում պատերազմել իրենց դեմ: (Տե՛ս Ալմա 24.20–27:) Համաձայն Մորմոնի, ի՞նչ կարող ենք սովորել այս պատմությունից: (Տե՛ս Ալմա 24.27; նշեք, որ Մորմոնի նկատառումը սկսվում է «այսպիսով, մենք տեսնում ենք» արտահայտությամբ:)

2. Անթի-Նեփի-Լեքիի ժողովուրդը ապահովություն է փնտրում Նեփիացիների մեջ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 27–28-ից:

- Ինչո՞ւ Ամմոնը և նրա եղբայրները կոչ արեցին Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդին գնալ Զարահեմլայի երկիր, ուր ապրում էին Նեփիացիները: (Տե՛ս Ալմա 27.1–5:) Ինչո՞ւ էր թագավորը տատանվում տանել իր ժողովրդին Զարահեմլա: (Տե՛ս Ալմա 27.6:) Ի՞նչը համոզեց թագավորին գնալ Զարահեմլա: (Տե՛ս Ալմա 27.7–14:) Ինչպե՞ս կարող է Տիրոջ հանդեպ մեր հավատքն օգնել մեզ վախի ու տագնապի իրավիճակներում:

- Ի՞նչ արեցին Նեփիացիները, երբ Ամմոնը խնդրեց նրանց ընդունել Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդին իրենց երկիր: (Տե՛ս Ալմա 27.20–26:) Ինչպե՞ս Նեփիացիները օգնեցին Անթի-Նեփի-Լեքիի ժողովրդին պահել Տիրոջ հետ կապած իրենց ուխտը: Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին առ Տերը դարձի եկած վիճակում մնալու համար:

Նշեք, որ այն ժամանակից, երբ Անթի-Նեփի-Լեքիի ժողովուրդը հաստատվեց Երսոնի երկրում, նա հայտնի դարձավ որպես Ամմոնի ժողովուրդ (Ալմա 27.26): Մորմոնի Գրքի մնացած մասում, ինչպես նաև Ավետարանի Վարդապետության այս ուղեցույցի մնացած մասում, նրանք կոչվում են Ամմոնի ժողովուրդ, կամ Ամմոնացիներ:

- Ի՞նչ մեծ ողբերգություն տեղի ունեցավ նրանից հետո, երբ Ամմոնի ժողովուրդը բնակվեց Երսոնում: (Տե՛ս Ալմա 28.1–3:) Այս մեծ ճակատամարտից հետո շատ մարդիկ ողբացին կռվի դաշտում զոհվածների համար (Ալմա 28.4–6): Ինչո՞ւ որոշ ողբացողներ վախեցան, երբ տեսան ուրիշներին ուրախանալիս: (Տե՛ս Ալմա 28.11–12:) Ի՞նչ կարող ենք սովորել այդ պատասխաններից: (Տե՛ս Ալմա 28.13–14:)

3. Ամմոնը և Ալման հրճվում են Տիրոջ գործով:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 26 և 29-ից: Նշեք, որ Ալմա 26-ը պատմում է Ամմոնի զգացմունքների մասին, որոնք կապված էին Լամանացիների մոտ ավետարանը բերելու իր և իր եղբայրների հաջողությունների հետ: Ալմա 29-ը գրում է Ալմայի զգացմունքների մասին կապված Ամմոնի և նրա եղբայրների հաջողությունների հետ, այստեղ խոսվում է նաև Ալմայի ցանկության մասին, որ բոլոր մարդիկ պետք է հնարավորություն ունենան լսելու և ընդունելու ավետարանը:

- Ինչպիսի՞ մեծ օրհնություններ է պարգևել Տերը Ամմոնին և նրա եղբայրներին: (Տե՛ս Ալմա 26.1–9:) Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի արդյունավետ գործիքներ լինել Աստծո ձեռքերում Նրա մեծ գործը կատարելու համար: (Տե՛ս Ալմա 26.22:)

- Ինչպե՞ս պատասխանեց Ամմոնը, երբ Ահարոնը նախատեց նրան պարծենկոտության համար: (Տե՛ս Ալմա 26.10–16, 35–37:) Ինչպե՞ս մենք կարող ենք «պարծենալ Աստծով» և «գովաբանել Աստծուն»: Ինչպե՞ս է Տերը ձեզ օժտում ձեր ուժերից վեր զորությամբ՝ օգնելու համար կատարել Իր գործը:

- Ինչպե՞ս պատասխանեց Զարահեմլայի ժողովուրդը, երբ Ահարոնը և նրա եղբայրները առաջին անգամ հայտարարեցին Լամանացիների համար նախատեսած իրենց առաքելության մասին: (Տե՛ս Ալմա 26.23–25:) Այս օրինակից ի՞նչ կարող ենք սովորել այն մասին, որ պետք է թույլ տալ մարդկանց ինքնուրույն ընդունել կամ մերժել ավետարանը, ոչ թե նախօրոք տրամադրվել, որ նրանք վատ կարձագանքեն ավետարանին: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել այդ տրամադրվածությունը:

- Ի՞նչ կարող ենք սովորել Ամմոնից և նրա եղբայրներից այն մասին, թե ինչպես պետք է դիմակայել դժվարություններին: (Տե՛ս Ալմա 26.27–30:) Համբերությունը և Տիրոջն ապավինելը ինչպե՞ս են ձեզ օգնել դժվար իրավիճակից ելք գտնել:

- Ինչո՞ւ էր Ալման ցանկանում հրեշտակ լինել: (Տե՛ս Ալմա 29.1:) Ըստ Ալմայի, ի՞նչ կպատահեր, եթե «ամեն հոգի» ապաշխարեր և գար առ Աստված: (Տե՛ս Ալմա 29.2; տե՛ս նաև Ալմա 28.14:) Ինչպիսի՞ փորձ եք ունեցել, որը ձեզ սովորեցրել է, որ ավետարանով ապրելը ուրախություն է բերում մեր կյանք:

- Ինչո՞ւ էր Ալման զգում, որ մեղք է գործել, ցանկանալով հրեշտակ լինել: (Տե՛ս Ալմա 29.3, 6–7:) Ինչպե՞ս մենք կարող ենք գոհ լինել նրանով, ինչ Տերը մեզ տվել է, միևնույն ժամանակ ցանկանալ աճել և կատարելագործվել:

- Ալման ասաց, որ Տերը «շնորհում է մարդկանց՝ համաձայն իրենց ցանկության, լինի դա ի մահ, թե ի կյանք» (Ալմա 29.4): Ի՞նչ է սա նշանակում: (Տե՛ս 2 Նեփի 2.27:)

- Ալման հրճվում էր նրանով, ինչ Տերն արել էր իր և իր հայրերի համար (Ալմա 29.10–13): Ի՞նչ է Տերն արել ձեզ և ձեր ընտանիքի համար, որի համար դուք հրճվում եք: (Դասարանի անդամներին խնդրեք խորհել այս հարցի շուրջ, եթե նրանք չեն ցանկանում դասարանի հետ կիսվել իրենց մտքերով:)

Եզրափակում

Վերանայեք այն եղանակները, որոնց միջոցով Անթի-Նեփի-Լեքիներն ապացուցեցին, որ իսկապես դարձի են եկել: Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասում քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք այն օգտագործել որպես դասի մի մաս:

Միսիոներական աշխատանքը սեր և ուրախություն է պարգևում

Ամմոնը շեշտեց այն սերը և ուրախությունը, որը տարածվում է միսիոներների և այն մարդկանց մեջ, որոնց նրանք սովորեցնում են (Ալմա 26.1–4, 9, 11, 13, 30–31, 35): Դասարանի անդամներին խնդրեք արտահայտել այն սերը, որը նրանք զգում են իրենց ավետարանն ուսուցանած մարդկանց հանդեպ, կամ այն ուրախությունը, որը նրանք զգում են ուրիշների հետ ավետարանով կիսվելիս:

Դաս
27

«Բոլոր բաները մատնանշում են՝ Կա՛ Աստված»

Ալմա 30–31

Նպատակը

Օգնել դասարանի անդամներին սովորել ճանաչել և մերժել կեղծ ուսմունքները և մնալ հավատարիմ Հիսուս Քրիստոսի մասին իրենց ճշմարիտ վկայությանը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 30.1–18: Կորիհորը, որը հակաքրիստոս էր, Զարահեմլայում մոլորեցնում է շատերի սրտերը, քարոզելով այն մասին, որ «չպիտի լինի ոչ մի Քրիստոս» և, որ «ինչ որ մարդ արել է, հանցագործություն չէ»:

   բ. Ալմա 30.19–60: Կորիհորը փորձում է քարոզել Երսոնի և Գեդէոնի երկրներում: Մարդիկ հրաժարվում են լսել, և նրանք նրան բերում են իրենց ղեկավարների առջև: Այնուհետև Կորիհորը բերվում է Ալմայի առջև, որը վկայություն է տալիս Քրիստոսի գալստի և Աստծո գոյության մասին: Կորիհորը նշան է պահանջում և զարկվում է համրությամբ:

   գ. Ալմա 31: Ալման գլխավորում է մի առաքելություն՝ ուղղելու ուրացած Զորամացիներին, որոնք որդեգրել էին կեղծ ուսմունքներ և երկրպագության հպարտ մի ձև:

2. Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 31.15–18 և որևէ այլ անդամի խնդրեք պատրաստվել բարձրաձայն կարդալ Ալմա 31.26–35:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին խնդրեք մտածել մի վայրի մասին, որը գոյություն ունի, սակայն որտեղ նրանք երբեք չեն եղել:

- Ինչո՞ւ եք հավատում, որ այդ վայրը գոյություն ունի:

Բացատրեք, այս դասը քննարկում է մի մարդու մասին, որը հայտարարել է, որ մենք չենք կարող հավատալ մի բանի, որը չենք տեսել: Կորիհորը պնդում էր, որ այն մարդը, որը չի տեսել Աստծուն, չի կարող իմանալ Նրա գոյության մասին: Սակայն, ինչպես ուրիշ մարդկանց պատմություններն օգնում են մեզ իմանալ այն վայրերի մասին, որոնք մենք չենք տեսել, այնպես էլ մարգարեների վկայությունները, սուրբ գրությունները և Սուրբ Հոգու պարգևը մեզ օգնում են իմանալ Աստծո գոյության և Նրա ավետարանի ճշմարտացիության մասին:

Նշեք, որ Կորիհորի ուսմունքները նման են այսօր աշխարհում տարածված ուսմունքներին: Նրա կեղծ ուսմունքներին տված մարդկանց պատասխանները կարող են մեզ օգնել, երբ հանդիպում ենք նույնատիպ կեղծ գաղափարախոսությունների և մտքերի:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները մեր առօրյա կյանքում:

Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Կորիհորը Զարահեմլայում մոլորեցնում է շատերի սրտերը:

Քննարկեք Ալմա 30.1–18: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ Ամմոնի ժողովրդի Երսոն երկրում հաստատվելուց և անհանգստացնող Լամանացիներին երկրից դուրս քշելուց հետո Նեփիացիները դատավորների կառավարման 16-րդ և 17-րդ տարվա մեծ մասի ընթացքում ապրեցին խաղաղության մեջ:

- Ի՞նչը խախտեց մարդկանց խաղաղությունը 17-րդ տարվա վերջում: (Տե՛ս Ալմա 30.6, 12:) Ի՞նչ է հակաքրիստոսը: (Տե՛ս Bible Dictionary, "Antichrist," 609, որն ասում է, որ հակաքրիստոսը այն անձն է, որը կեղծում է ճշմարիտ ավետարանը կամ փրկության ծրագիրը և բացահայտ կամ գաղտնի ընդդիմություն է ցուցաբերում Քրիստոսի դեմ:)
- Ինչպիսի՞ կեղծ ուսմունքներ էր տարածում Կորիհորը Զարահեմլայի ժողովրդի մեջ: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Ալմա 30.12–18 այս հարցի պատասխանները գտնելու համար: Որոշ պատասխաններ տրվում են ստորև:)

  ա. «Չպիտի լինի ոչ մի Քրիստոս: . . . Դուք չեք կարող իմանալ բաների մասին, որոնք դուք չեք տեսնում. հետևաբար, դուք չեք կարող իմանալ, որ պիտի լինի ինչ-որ մի Քրիստոս» (Ալմա 30.12–15): Եթե անց եք կացնում ուշադրության վարժությունը, ապա վերհիշեք այն և հակիրճ քննարկեք այն բաները, որոնք մենք գիտենք, որ գոյություն ունեն, սակայն որոնք երբեք չենք տեսել:

  բ. «Ոչ մի մարդ չի կարող իմանալ որևէ բանի վերաբերյալ, որը պետք է գա» (Ալմա 30.13): Նշեք, որ Կորիհորը հակասում էր իր իսկ խոսքերին, ասելով, որ ոչ ոք չի կարող իմանալ գալիք բաների մասին, միաժամանակ պնդելով, որ չի լինի ոչ մի Քրիստոս:

  գ. Քավությանը հավատալը «մոլագար մտքի արդյունք է» (Ալմա 30.16):

  դ. «Ամեն մարդ առաջադիմել է՝ համաձայն իր հանճարի և . . . ամեն մարդ հաղթել է՝ համաձայն իր ուժի» (Ալմա 30.17):

  ե. «Ինչ որ մարդ արել է, հանցագործություն չէ» (Ալմա 30.17):

  զ. «Երբ մի մարդ մեռնում է, այդ է նրա վերջը» (Ալմա 30.18):
- Կորիհորի ուսմունքներն ինչպե՞ս ազդեցին իրեն լսողների վրա: (Տե՛ս Ալմա 30.18:) Ինչո՞ւ են այդ ուսմունքները մարդկանց մեղքերի մեջ գցում: Հիսուս Քրիստոսի, Քավության և մահից հետո կյանքի մասին մեր գիտելիքները ինչպե՞ս են ազդում մեր առօրյա ընտրությունների վրա:

2. Կորիհորը բերվում է Ալմայի առջև, որը վկայում է Քրիստոսի գալստի մասին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 30.19–60: Բացատրեք, որ Զարահեմլայում կեղծ ուսմունքներ տարածելուց հետո Կորիհորը փորձեց նույն ուսմունքները քարոզել նաև Երսոնի և Գեդէոնի ժողովուրդներին: Ի տարբերություն Զարահեմլայի ժողովրդին, այս մարդիկ լավ օրինակ ծառայեցին, թե ինչպես պետք է վարվել Կորիհորի նման մարդկանց հանդիպելիս: Գրատախտակին գրեք *Դիմակայել Մեր Օրերի Կորիհորներին* վերնագիրը: Դրա տակ գրեք այս բաժնում տրված մտքերը քննարկելու ընթացքում:

- Ի՞նչ արեցին Ամմոնի մարդիկ, երբ Կորիհորը փորձեց իրենց մեջ տարածել իր կեղծ ուսմունքները: (Տե՛ս Ալմա 30.19–21:) Նրանց գործողությունները ինչպե՞ս ապացուցեցին, որ նրանք ավելի իմաստուն էին, քան Զարահեմլայի Նեփիացիները: (Զարահեմլայի մարդիկ լսում էին Կորիհորի կեղծ ուսմունքները, իսկ Ամմոնի և Գեդէոնի ժողովուրդները՝ ոչ:) Ինչպե՞ս մենք կարող ենք լինել ավելի իմաստուն և հասկացող նման իրավիճակներում: (Գրատախտակին վերնագրի տակ գրեք *Լինել իմաստուն:*)
- Ինչպիսի՞ կեղծ մեղադրանքներ առաջ քաշեց Կորիհորը Եկեղեցու ղեկավարների դեմ: (Տե՛ս Ալմա 30.23–24, 27–28, 31:) Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ նա այդպես արեց: Եկեղեցու

ղեկավարներին հնազանդվելն ինչպե՞ս է մեզ օգնում լինել ազատ, այլ ոչ թե ընկնել Կորիհորի նշած կապանքների մեջ:

- Ինչպե՞ս Ալման պատասխանեց Եկեղեցու ղեկավարների դեմ ուղղված Կորիհորի մեղադրանքներին: (Տե՛ս Ալմա 30.32–35: Գրատախտակին գրեք *Իմանալ ճշմարտությունը:*) Ինչպե՞ս կարող է ճշմարտության իմացությունը մեզ օգնել դիմակայել կեղծ ուսմունքներին:
- Ինչպե՞ս Ալման պատասխանեց Կորիհորի հայտատարարությանն այն մասին, որ չկա Աստված: (Տե՛ս Ալմա 30.39: Գրատախտակին գրեք *Բերել անձնական վկայություն:*) Ինչպե՞ս ենք մենք օրհնվում, երբ վկայում ենք Հիսուս Քրիստոսի մասին:
- Ի՞նչ Ալման ի վիճակի եղավ հասկանալ Կորիհորի մասին: (Տե՛ս Ալմա 30.42:) Ինչպե՞ս մենք կարող ենք տարբերել ճշմարիտ և կեղծ ուսմունքները: (Տե՛ս Մորոնի 10.5: Գրատախտակին գրեք *Փնտրիր Սուրբ Հոգու առաջնորդությունը:*)
- Երբ Կորիհորը Աստծո գոյության մասին նշան պահանջեց, ի՞նչ նշան ցույց տվեց Ալման որպես ապացույց, որ Աստված ապրում է: (Տե՛ս Ալմա 30.44: Ալման նշեց «բոլոր այս քո եղբայրների», մարգարեների, սուրբ գրությունների և «բոլոր բաների» վկայությունը: Գրատախտակին գրեք *Սովորեցնել ճշմարտությունը մարգարեներից և սուրբ գրություններից:*) Այս ամենն ինչպես են օգնել ձեզ ամրացնել ձեր հավատքը:
- Անգամ Ալմայի վկայությունից հետո Կորիհորը շարունակեց նշան պահանջել (Ալմա 30.45): Ի՞նչ նշան ստացավ Կորիհորը: (Տե՛ս Ալմա 30.49–50:) Ինչո՞ւ տրվեց այդ նշանը: (Տե՛ս Ալմա 30.47:) Նրանից հետո, երբ Կորիհորը ընդունեց, որ խաբվել է, ի՞նչն էր սատանային հետևելու նրա դրդապատճառը: (Տե՛ս Ալմա 30.53:)
- Վերջ ի վերջո ի՞նչ պատահեց Կորիհորին: (Տե՛ս Ալմա 30.54–56, 58–59:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Կորիհորի մասին այս պատմությունն ընդգրկվել թիթեղների մեջ: Ի՞նչ է սովորեցնում այս պատմությունը նրանց ճակատագրի մասին, ովքեր խեղաթյուրում են Տիրոջ ուղիները: (Տե՛ս Ալմա 30.60:)

3. Ալման գլխավորում է մի առաքելություն՝ ուղղելու ուրացած Զորամացիներին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 31-ից:

- Ինչո՞ւ Ալման որոշեց առաքելություն կազմակերպել Զորամացիներին ուղղելու համար: (Տե՛ս Ալմա 31.1–6: Նա վշտացել էր նրանց կռապաշտությամբ: Բացի դա, Նեփիացիները մտահոգված էին, որ Զորամացիները կմիավորվեին Լամանացիների հետ:) Ինչո՞ւ էր Ալման հավատում, որ ինքը և իր եղբայրները պետք է քարոզեն Աստծո խոսքը: (Տե՛ս Ալմա 31.5:) Տեսե՞լ եք արդյոք, ինչպես է Աստծո խոսքը փոխում մարդկանց կյանքը:
- Զորամացիները Եկեղեցու անդամներ էին, սակայն նրանք «ընկել էին մեծ սխալների մեջ» (Ալմա 31.8–9): Ինչո՞ւ էին նրանք ուրացել: (Տե՛ս Ալմա 31.9–11:) Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի պաշտպանվենք անձնական ուրացությունից:
- Ի՞նչ իմացան Ալման և նրա եղբայրները Զորամացիների երկրպագության ձևի մասին: (Տե՛ս Ալմա 31.12–23: Կարող եք նշել, որ երկրպագության սխալ ձև ունենալուց բացի Զորամացիները «վերադառնում էին իրենց տները՝ այլևս երբեք չխոսելով կրկին իրենց Աստծո մասին»:) Ինչպե՞ս արձագանքեցին Ալման և նրա եղբայրները, երբ ականատես եղան այդ կեղծ երկրպագությանը: (Տե՛ս Ալմա 31.19, 24:)

Բացատրեք, որ գլուխ 31պարունակում է երկու աղոթքներ–մեկը՝ Զորամացիների աղոթքը, մյուսը՝ Ալմայի: Դասարանի այն անդամին, որին հանձնարարված էր, խնդրեք կարդալ այդ աղոթքները (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 2): Դասարանի անդամներին խնդրեք մտածել այդ երկու աղոթքների միջև եղած տարբերության մասին: Յուրաքանչյուր աղոթքի կարևոր հատվածները տրված են հաջորդ էջին:

Զորամացիների աղոթքը

Աստված կար, կա և միշտ կլինի հոգի (Ալմա 31.15):
«Մենք չենք հավատում մեր եղբայրների ավանդությանը» (Ալմա 31.16):
«Ոչ մի Քրիստոս չպետք է լինի» (Ալմա 31.16):
«Մենք փրկվենք, մինչդեռ բոլորը . . . ընտրված են . . . գցվելու դեպի դժոխք» (Ալմա 31.17):
Մյուսները կապված են «անհեթեթ ավանդություններով» (Ալմա 31.17):
«Մենք մի ընտրված և մի սուրբ ժողովուրդ ենք» (Ալմա 31.18):

Ալմայի աղոթքը

«Տուր ինձ ուժ, որ ես կարողանամ կրել իմ տկարությունները» (Ալմա 31.30):
«Մխիթարիր իմ հոգին Քրիստոսով» (Ալմա 31.31):
«Տո՛ւր ինձ հաջողություն, և նաև՝ իմ գործակիցներին» (Ալմա 31.32):
«Մխիթարի՛ր նրանց հոգիները Քրիստոսով» (Ալմա 31.32):
Օգնիր մեզ բերել Զորամացիներին «դեպի քեզ» (Ալմա 31.34–35):
«Նրանց հոգիներն արժեքավոր են» (Ալմա 31.35):
«Տո՛ւր մեզ զորություն և իմաստություն» (Ալմա 31.35):

- Ինչո՞վ է տարբերվում Ալմայի աղոթքը Զորամացիների աղոթքից: (Կարող եք Զորամացիների հպարտությունը, եսասիրությունը և անհավատությունը հակադրել Ալմայի խոնարհությանը, ուրիշների հանդեպ տածած սիրուն և հավատքին:)
- Զորամացիների ո՞ր հատկանիշներն էին խոչընդոտ հանդիսանում Քրիստոսի հանդեպ հավատք ունենալու համար: (Տե՛ս Ալմա 31.24–29:) Ինչպե՞ս է մեր հպարտությունն ազդում մեր երկրպագության վրա: (Տե՛ս Ալմա 15.17; 34.38; Վ. և Ու. 59.21:) Ինչո՞ւ է հպարտությունը փրկության համար խոչընդոտ հանդիսանում:
- Ալմայի «սիրտը վշտացավ» Զորամացիների անարդարությունների պատճառով: Նա եռանդով աղոթեց, որպեսզի իր եղբայրների հետ միասին կարողանան բերել Զորամացիներին կրկին դեպի Քրիստոսը (տե՛ս Ալմա 31.24, 34): Ի՞նչ պատասխանատվություն ունենք մենք այսօր օգնելու նրանց, ովքեր շեղվել են Հիսուս Քրիստոսի ուսմունքներից: (Տե՛ս 3 Նեփի 18.32:) Ինչպե՞ս աղոթքը կարող է մեզ օգնել, երբ ծառայում ենք միսիայում կամ աշխատում ենք մեր տարբեր կոչումներում:
- Ինչպե՞ս օրհնվեցին Ալման և նրա եղբայրները: (Տե՛ս Ալմա 31.38:) Ինչպե՞ս Տերը կօգնի մեզ, եթե մենք աղոթենք հավատքով այն բաների համար, որոնք արդար են: (Դասարանի անդամներին խնդրեք կիսվել իրենց այն փորձով, որի ժամանակ նրանք Տիրոջից օրհնություններ են ստացել, երբ հավատքով են աղոթել:)

Եզրափակում

Նշեք, որ Կորիհորի և Զորամացիների գաղափարախոսությունները գերակշռում են այսօր աշխարհում: Դասարաններում, աշխատանքի վայրում, լրատվական միջոցներում, գրականության մեջ, երբեմն ընտանիքներում, կան մարդիկ, ովքեր քարոզում են Կորիհորի կեղծ ուսմունքները՝ «ցնծությունը խանգարելու համար» (Ալմա 30.22): Զորամացիների նման, այսօր շատերն իրենց սրտերը դնում են «աշխարհի ունայն բաների» վրա (Ալմա 31.27): Դասարանի անդամներին խրախուսեք զորացնել իրենց՝ Մորմոնի Գրքի ջանասիրաբար ուսումնասիրության, օրվա աղոթքների և Աստծո պատվիրանների շարունակ հնազանդվելու միջոցով:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս
28

«Խոսքը ի փրկություն՝ Քրիստոսում է»

Ալմա 32–35

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, որ Աստծո խոսքը նրանց կառաջնորդի դեպի Հիսուս Քրիստոսը, և խրախուսել նրանց «սնուցել խոսքը» իրենց սրտերում (Ալմա 32.40):

Նախապատրաստություն

1. Կարդացեք սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.
   ա. Ալմա 32.1–27: Ալման հնազանդ Զորամացիներին խրախուսում է հավատք ցուցաբերել և իրենց սրտերում տեղ տալ Աստծո խոսքին:
   բ. Ալմա 32.28–43: Ալման համեմատում է Աստծո խոսքը սերմի հետ, որը ցանում են մարդկանց սրտերի մեջ: Նա ուսուցանում է, որ մարդիկ պետք է սնուցեն խոսքը մեծ խնամքով, որպեսզի մի օր կարողանան հավերժական կյանք ստանալ:
   գ. Ալմա 33: Ալման մեջբերում է Հիսուս Քրիստոսի մասին մարգարեների վկայությունները և կոչ է անում մարդկանց իրենց սրտերում տնկել Աստծո խոսքը:
   դ. Ալմա 34: Ամուղեկը վկայում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Նա մարդկանց պատվիրում է աղոթել և հավատք գործադրել ապաշխարության համար:
2. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժությունը, ապա դասարան մի սերմ բերեք:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ցույց տվեք ձեր բերած սերմը: Դասարանի անդամներին խնդրեք պատկերացնել, որ ինչ-որ մեկը տվել է իրենց այդ սերմը և ասել է, որ դա կաճի և կդառնա համեղ պտուղներ տվող մի ծառ:

- Ի՞նչ կանեիք, որպեսզի պարզեիք, թե արդյոք այդ սերմը համեղ պտուղներ կարող է բերել:

Բացատրեք, որ այս դասը սկսվում է Ալմա 32-ի քննարկումով: Այս գլուխը պարունակում է մի քարոզ, որի մեջ Ալման համեմատում է Աստծո խոսքը սերմի հետ: Նա հնազանդ Զորամացիների մի խմբի կոչ արեց տեղ տալ, որ մի սերմ ցանվի իրենց սրտերում (տե՛ս Ալմա 32.28): Եթե նրանք սնուցեն այդ սերմը, նա խոստանում է, որ այն կաճի մինչև դառնա կենաց ծառ, որի պտուղը «ամենաթանկարժեքն է» և «քաղցր է բոլորից» (Ալմա 32.40–42):

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ալման հնազանդ Զորամացիներին սովորեցնում է հավատք ունենալ և իրենց սրտերում տեղ տալ Աստծո խոսքին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 32.1–27-ից: Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Ալման, Ամուղեկը և նրանց եղբայրները մտան Զորամացիների ժողո-

վարաններից մեկը: Այնտեղ նրանք լսեցին, թե ինչպես էին Զորամացիները հայտարարում, որ «ոչ մի Քրիստոս չպետք է լինի» (Ալմա 31.16–17): Կեղծ ուսմունքներ լսելուց հետո Ալման, Ամուղեկը և նրանց եղբայրները բաժանվեցին Աստծո խոսքը քարոզելու և Քրիստոսի մասին վկայելու համար (Ալմա 31.36–37; 32:1):

- Երբ Ալման քարոզում էր, Զորամացիների մի մեծ բազմություն մոտեցավ նրան: Ինչո՞ւ Ալման չափազանց ուրախացավ, երբ այդ Զորամացիները մոտեցան իրեն: (Տե՛ս Ալմա 32.6–8:) Ի՞նչ պատահեց, որպեսզի այդ մարդիկ պատրաստվեին Աստծո խոսքը լսելուն: (Տե՛ս Ալմա 32.2–5:)
- Ինչո՞ւ էին օրհնված այն Զորամացիները, որոնք հարկադրված էին լինելու խոնարհ: (Տե՛ս Ալմա 32.12–13:) Ինչո՞ւ է ավելի լավ, երբ ինքներս հոժարակամ ենք հնազանդվում, քան երբ հարկադրված ենք լինել հնազանդ: (Տե՛ս Ալմա 32.14–16:) Ինչպե՞ս կարող է Աստծո խոսքը տանել մեզ դեպի հնազանդություն:
- Ի՞նչ Ալման սովորեցրեց Զորամացիներին հավատք ունենալու մասին: (Տե՛ս Ալմա 32.17–18, 21:) Ըստ Ալմայի, ի՞նչ մենք պետք է անենք Աստծո հանդեպ հավատք ունենալու համար: (Տե՛ս Ալմա 32.22:) Ի՞նչ ճանապարհներով մենք կարող ենք ստանալ Աստծո խոսքը: (Տե՛ս Ալմա 17.2; 32.23; Վ և Ու 1.38; 18.33–36:)
- Ի՞նչ Ալման խրախուսեց իր ունկնդիրներին անել, որպեսզի նրանք իմանային, որ իր խոսքերը ճշմարիտ էին: (Տե՛ս Ալմա 32.26–27:) Ի՞նչ է նշանակում «արթնացնել և զարթեցնել ձեր ունակությունները»: Ինչպե՞ս կարող ենք «փորձել» կամ ստուգել Աստծո խոսքը: (Տե՛ս Հովհաննես 7.17:) Խոսքը փորձարկելու ինչպիսի՞ փորձ ունեք:

2. Ալման սովորեցնում է մարդկանց սնուցել Աստծո խոսքն իրենց սրտերում:

Կարդացեք և քննարկեք Ալմա 32.28–43:

- Համեմատելով Աստծո խոսքը սերմի հետ՝ Ալման Զորամացիներին խորհուրդ է տալիս «տեղ տալ, որ մի սերմ ցանվի» իրենց սրտերում (Ալմա 32.28): Ի՞նչ պետք է անենք մենք Աստծո խոսքին մեր սրտերում տեղ տալու համար:
- Համաձայն Ալմայի, ի՞նչ են սկսում զգալ մարդիկ, երբ Աստծո խոսքը սերմանվում է նրանց սրտերում: (Տե՛ս Ալմա 32.28–31, 33–35: Կարող եք գրել դասարանի անդամների պատասխանները գրատախտակին:) Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում զգալ, ինչպես է խոսքը «ուռչել . . . կրծքում»: Ինչպե՞ս են սուրբ գրությունները հարստացնում մեր հոգիները, լուսավորում մեր հասկացողությունը և ընդարձակում մեր միտքը: (Տե՛ս Ալմա 37.8–9:) Ինչպե՞ս է Աստծո խոսքը համեղ եղել ձեզ համար:
- Ի՞նչ մենք պետք է շարունակենք անել, երբ Աստծո խոսքը սկսում է աճել մեր սրտերում: (Տե՛ս Ալմա 32.37:) Ինչպե՞ս մենք կարող ենք «սնուցել այն մեծ խնամքով»: (Տե՛ս Ալմա 32.41:) Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, երբ խոսքը «արմատ է գցում» մեր սրտերում և աճում է»: (Ալմա 32.37):
- Ի՞նչ կպատահի, եթե մենք արհամարենք խոսքը և չսնուցենք այն, երբ նա սկսի աճել մեր սրտերում: (Տե՛ս Ալմա 32.38–40:) Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի մեր հողը, կամ մեր սրտերը, պտղաբեր լինեն:
- Իր քարոզի վերջում Ալման խոսքը համեմատեց մի ծառի հետ, որն աճել է սերմից (Ալմա 32.37): Ի՞նչ ծառի մասին է նա խոսում: (Տե՛ս Ալմա 32.40–42:)

  Համառոտ վերհիշեք կենաց ծառի մասին Լեքիի և Նեփիի երազները: Դասարանի անդամներին հիշեցրեք, որ կենաց ծառը Հիսուս Քրիստոսի խորհրդանիշն է (տե՛ս այս ձեռնարկի էջ 12): Նշեք, որ Աստծո խոսքը, որը երազում ներկայացված էր երկաթյա ձողի միջոցով, իսկ Ալմայի քարոզում՝ սերմի միջոցով, տանում է Փրկչի մոտ, որը ներկայացված է կենաց ծառի միջոցով:

  Ալմա 32-ի վերաբերյալ Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը սովորեցրել է. «Այս հիանալի քարոզում Ալման ընթերցողին Աստծո խոսքի սերմանման հավատքի ընդհանուր բացատրությունից

տանում է դեպի՝ որպես Աստծո Խոսք Քրիստոսի հանդեպ հավատքի վրա կենտրոնացած քարոզը» (*Christ and the New Covenant* [1997], 169):

- Ո՞րն է կենաց ծառի պտուղը: (Հավիտենական կյանքը: Տե՛ս Ալմա 32.41; 33.23; տե՛ս նաև 1 Նեփի 15.36; Վ և Ու 14.7:)

3. Ալման մեջբերում է մարգարեների վկայությունները Հիսուս Քրիստոսի մասին և կոչ է անում մարդկանց իրենց սրտերում ցանել Աստծո խոսքը:

Կարդարցեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 33-ից: Բացատրեք, որ Ալմայի քարոզը լսելուց հետո մարդիկ ցանկացան իմանալ «ինչ ձևով նրանք պետք է սկսեին գործադրել իրենց հավատքը» (Ալմա 33.1): Ալման պատասխանեց, մեջբերելով Հիսուս Քրիստոսի վերաբերյալ Զենոս, Զենոք և Մովսես մարգարեների ուսմունքները:

- Զենոսի ո՞ր ուսմունքն Ալման մեջբերեց Զորամացիների համար: (Կարող եք դասարանի անդամներին խնդրել հերթով կարդալ Ալմա 33.3–11 հատվածները:) Ի՞նչ նպատակով էր Ալման մեջբերում աղոթքի մասին Զենոսի ուսմունքը: (Տե՛ս Ալմա 33.11–14: Նա ցանկանում էր, որ Զորամացիները հավատք գործադրեին առ Աստծո Որդին: Նշեք, որ դա Նրա Որդու շնորհիվ է, որ Երկնային Հայրը լսում է մեր աղոթքները և հեռացնում դատապարտությունները մեզանից:)
- Ալման Զորամացիներին ասաց, որ Զենոք մարգարեն նույնպես վկայել է Քրիստոսի մասին (Ալմա 33.15): Ի՞նչ էր սովորեցնում Զենոքը: (Տե՛ս Ալմա 33.16:) Ինչո՞ւ էր այս ուսմունքը կարևոր Զորամացիների համար: (Տե՛ս Ալմա 31.12, 16–17:)
- Ալման խոսեց պղնձե օձի մասին, որ Մովսեսը պատրաստել և բարձրացրել էր անապատում (Ալմա 33.19; տե՛ս նաև Թվոց 21.9): Ինչպե՞ս էր օձը նմանեցվում կամ խորհրդանշում Քրիստոսին: (Տե՛ս Ալմա 33.19; տե՛ս նաև Հովհաննես 3.14–16; Հելաման 8.13–15:) Ի՞նչ է սովորեցնում պղնձե օձի վերաբերյալ Ալմայի պատմությունը Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատք գործադրելու մասին: (Տե՛ս Ալմա 33.20–23; տե՛ս նաև Ալմա 37.46:)

4. Ամուղեկը վկայում է Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Նա մարդկանց պատվիրում է աղոթել և հավատք գործադրել ապաշխարության համար:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 34-ից: Բացատրեք, որ Ալմայի խոսելուց հետո Ամուղեկը վեր կացավ և սկսեց սովորեցնել մարդկանց:

- Ալման և Ամուղեկը հասկացան, որ մարդիկ դեռ կասկածում էին, թե արդյոք պետք է հավատային Քրիստոսին (Ալմա 34.2–5): Ինչպե՞ս Ամուղեկը պատասխանեց այս հարցին: (Տե՛ս Ալմա 34.6–8:) Ինչպե՞ս մենք կարող ենք ստանալ Քրիստոսի մասին այդպիսի զորեղ վկայություն: Սուրբ գրությունները, մարգարեները կամ Քրիստոսի այլ վկաները ինչպե՞ս են ամրացրել Նրա մասին ձեր վկայությունը:
- Ինչո՞ւ «ողջ մարդկությունը պետք է . . . ոչնչանա», եթե չլիներ Քրիստոսի Քավությունը: (Տե՛ս Ալմա 34.8–9; տե՛ս նաև Ալմա 22.14:) Ինչո՞ւ է Քրիստոսն այն միակը, ով կարող էր փրկագնել աշխարհի մեղքերը և փրկել մեզ Անկումի հետևանքներից: (Տե՛ս Ալմա 34.10–12:) Ի՞նչ նկատի ուներ Ամուղեկն ասելով, որ Քավությունը «անսահման և հավերժական զոհաբերություն» է: (Տե՛ս Ալմա 34.14–16:)

  Երեց Բրյուս ՄակՔոնկին սովորեցրել է. «Մարդը չի կարող համբարձվել ինքն իրեն, մարդը չի կարող փրկել ինքն իրեն, մարդկային ուժը չի կարող փրկել մեկ ուրիշին, մարդկային ուժը չի կարող քավել մեկ ուրիշի մեղքերը: Փրկագնման գործը պետք է լինի անսահման և հավերժական, այն պետք է արվի հավերժ էակի կողմից, Աստված Ինքը պետք է քավի աշխարհի մեղքերը» (*A New Witness for the Articles of Faith* [1985], 111–12):
- Ձեր կարծիքով, Ալմա 34.17–29-ում Ամուղեկի խորհուրդն ինչպե՞ս օգնեց Զորամացիներին, որոնք հավատացած էին, որ կարող են երկրպագել միայն ժողովարաններում և շաբաթը միայն մեկ անգամ: Ի՞նչ կարող ենք սովորել այս խորհրդից:

- Ի՞նչ պատվիրեց Ամուղեկը մարդկանց այն ամենից հետո, երբ մարդիկ Փրկչի մասին այդքան շատ վկայություններ ստացան: (Տե՛ս Ալմա 34.30–31; տե՛ս նաև հատվածներ 15–17, որտեղ «հավատք ապաշխարության համար» արտահայտությունն օգտագործվում է չորս անգամ:) Ինչո՞ւ է Քրիստոսի հանդեպ հանդեպ հավատքն ապաշխարության այդքան կարևոր մասը կազմում:
- Ամուղեկը նախազգուշացրեց, որպեսզի չուշացնենք, կամ չհետաձգենք ապաշխարության օրը (Ալմա 34.31–36): Ինչո՞ւ են մարդիկ երբեմն հետաձգում ապաշխարությունը: Ինչպե՞ս կարող է Ալմա 34:32-ում տրված խորհուրդն օգնել մեզ մեր կյանքի յուրաքանչյուր օրվա ընթացքում:

Եզրափակում

Նշեք, որ մրգատու ծառ տնկելու նպատակն է՝ կարողանալ հետագայում ճաշակել դրա տված պտուղը: Երբ մենք տեղ ենք տալիս, որպեսզի խոսքը ցանվի մեր սրտերում, մենք կարող ենք սպասել դրա պտղին (տե՛ս Ալմա 32.28, 41): Ալմա 32.41–42-ում կարդացեք այս պտղի Ալմայի նկարագրությունը: Հիշեցրեք, որ պտուղը հավերժական կյանքն է և միայն Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով մենք կարող ենք ճաշակել այդ պտղից (Ալմա 34.14–16):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերը որպես դասի մաս:

1. «Ես ցանկանում եմ, որ դուք հիշեք այս բաները» (Ալմա 34.37)

Եզրափակելով դասը դասարանի անդամներից մեկիկն խնդրեք բարձրաձայն կարդալ Զորամացիներին ուղղված Ամուղեկի վերջին խոսքերը Ալմա 34.37–41-ում:

2. Ամրացնել եկեղեցու նոր անդամներին

- «Զորամացիների առավել հանրաճանաչ մասը» վտարեցին այն մարդկանց, ովքեր հավատացել էին Ալմայի և նրա եղբայրների խոսքերին (Ալմա 35.1–6): Ինչպե՞ս ընդունեց այդ մարդկանց Ամմոնի ժողովուրդը: (Տե՛ս Ալմա 35.7–9:) Ի՞նչ է սովորեցնում այս օրինակը նորադարձներին զորացնելու մասին:

Դաս
29

«Ականջ դիր իմ խոսքերին»

Ալմա 36–39

Նպատակ

Սովորեցնել դասարանի անդամներին ավետարանին հավատարիմ մնալու Ալմայի խորհուրդը, և օգնել ծնողներին հասկանալ, ինչպես սովորեցնել և խորհուրդ տալ արդար և անարդար զավակներին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 36–37: Ալման հիշում է իր դարձի գալը և բերում է իր վկայությունն իր որդի Հելամանին: Նա ցուցում է տալիս Հելամանին՝ պահպանելու սրբազան հիշատակարանները:

   բ. Ալմա 38: Ալման գովում է իր որդի Սիբլոնին հավատարմության համար և խրախուսում է շարունակել մնալ արդարության մեջ, համբերելով մինչև վերջ:

   գ. Ալմա 39: Ալման իր որդի Կորիանթոնին նախատում է անբարոյական արարքների համար և նախազգուշացնում է նման մեղքի հետևանքների մասին:

2. Եթե առկա է Ոսկե Թիթեղները պատկերող նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ընթացքում (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 325):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին հարցրեք.

- Ո՞րն է եղել այն լավագույն խորհուրդը, որը ձեր ծնողները երբևէ տվել են ձեզ: Ինչո՞ւ է այդ խորհուրդը այդքան արժեքավոր:

Դասարանի անդամներին մտածելու ժամանակ տվեք, այնուհետև նրանց խնդրեք կիսվել իրենց պատասխաններով:

Բացատրեք, որ այս դասում քննարկվող գլուխները պարունակում են Ալմայի խորհուրդը իր որդիներին՝ Հելամանին, Սիբլոնին և Կորիանթոնին: Այս խորհրդի խոսքերը վերաբերվում են նաև մեզ:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ալման կիսվում է իր վկայությամբ և հանձնում է հիշատակարանը իր որդի Հելամանին:

Քննարկեք Ալմա 36–37: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Ալմա 36 պարունակում է Ալմայի վկայությունը, որն ուղղված է նրա որդի Հելամանին (տե՛ս հատկապես հատվածներ 3–5 և 26–28): Ինչո՞ւ է կարևոր, որ երեխաները լսեն

իրենց ծնողների վկայությունները: Ինչպե՞ս են ձեր ծնողների վկայություններն ազդել ձեր կյանքի վրա:

- Որպես իր վկայության մաս Ալման Հելամանին պատմեց իր դարձի գալու մասին (Ալմա 36.6–24; տե՛ս նաև Ալմա 38.7–9, որտեղ Ալման իր որդի Սիբլոնին պատմում է իր դարձի գալու պատմությունը, և դաս 20, որը քննարկում է Ալմայի դարձի գալու պատմությունն ավելի մեծ մանրամասներով:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Ալման իր որդիներին պատմում դարձի գալու իր պատմությունը: Ի՞նչ օգուտ եք ստացել, լսելով այլ մարդկանց դարձի գալու պատմությունները:

- Ալման Հելամանին շատ անգամ խրախուսել է հետևել իր օրինակին: (Կարող եք դասարանի անդամների հետ միասին կարդալ ստորև տրված արտահայտությունները, որոնք տալիս են Հելամանին ուղղված Ալմայի խորհուրդը:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի ծնողները իրենց զավակներին արդար օրինակ ծառայեն:

  ա. «Ես կկամենայի, որ դու անեիր, ինչպես ես եմ արել» (Ալմա 36.2):
  բ. «Ես աղաչում եմ քեզ, որ դու լսես իմ խոսքերը և սովորես ինձանից» (Ալմա 36.3):
  գ. «Դուք նույնպես պարտավոր եք պահել հիշողության մեջ, . . . ինչպես ես եմ արել» (Ալմա 36.29):
  դ. «Դուք պարտավոր եք իմանալ, ինչպես ես գիտեմ» (Ալմա 36.30):

- Ցույց տվեք ոսկե թիթեղների նկարը: Ինչպե՞ս Ալման Հելամանին շեշտեց հիշատակարան պահելու կարևորությունը: (Տե՛ս Ալմա 37.1–2, 6–12:) Ի՞նչ իմաստով հիշատակարան պահելը կարող է լինել «փոքր և հասարակ բան», որը կարող է «մեծ բաներ» իրականացնել (Ալմա 37.6–7): Ինչպիսի՞ «մեծ բաներ» կկատարեն մեզ համար սուրբ գրությունները, եթե ջանասիրաբար ուսումնասիրենք դրանք: (Տե՛ս Ալմա 37.8–10:)

- Ի՞նչ Ալման պատվիրեց Հելամանին սովորեցնել մարդկանց: (Տե՛ս Ալմա 37.32–34:) Ինչպե՞ս կարող են ծնողները, ուսուցիչները կամ մյուս մեծահասակները օգնել այսօրվա երիտասարդներին «սովորել իմաստություն երիտասարդության տարիներին» (Ալմա 37.35):

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 37.36–37: Ինչպե՞ս է փոխվել ձեր կյանքը, երբ փորձել եք հետևել այս խորհրդին: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ հետևել այս խորհրդին:

- Ի՞նչ համեմատություն էր կատարում Ալման Աստծո խոսքի և Լիահոնայի միջև: (Տե՛ս Ալմա 37.38–45:) Ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի Աստծո խոսքը մեզ համար Լիահոնա դառնա:

- Ալման Հելամանին խորհուրդ է տալիս «Ե՛կ ալարկոտ չլինենք՝ ճանապարհի հեշտության պատճառով» (Ալմա 37.46; տե՛ս նաև Թուոց 21.5–9; 1 Նեփի 17.41): Ի՞նչ իմաստով է հեշտ հավերժական կյանք տանող ճանապարհը: Ինչո՞ւ է այդ ճանապարհի հեշտությունը որոշ մարդկանց համար փորձության քար հանդիսանում: Ինչպե՞ս կարող ենք կենտրոնացած մնալ Քրիստոսի հանդեպ պարզ փրկող հավատքի վրա: Ինչպե՞ս ենք «նայում առ Աստված և ապրում» (Ալմա 37.47):

2. Ալման գովում և խրախուսում է իր որդի Սիբլոնին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 38-ից: Նշեք, որ Ալման նույնպես բերեց իր վկայությունը իր որդի Սիբլոնին և պատմեց նրան իր դարձի գալու մասին (Ալմա 38.6–9):

- Սիբլոնի ո՞ր հատկանիշներն իր հորը մեծ ուրախություն պատճառեցին: (Տե՛ս Ալմա 38.2–4:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի ծնողները հասկանան և գովեն իրենց զավակներին նրանց լավ հատկանիշների և արդար ապրելաձևի համար:

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 38.5: Աստծուն ապավինելն ինչպե՞ս է ձեզ օգնել փորձության և դժվարության պահերին:

- Թեպետև Սիբլոնն արդար էր, Ալման ավարտեց իր խոսքը նախազգուշացումով (Ալմա 38.10–15): Ինչո՞ւ անգամ արդարների համար կարևոր է ստանալ խորհուրդ և նախազգուշացում: Ինչպե՞ս կարող ենք սովորել խոնարհությամբ ստանալ նման խորհուրդ և նախազգուշացում:
- Ալման Սիբլոնին խորհուրդ է տալիս շարունակել սովորեցնել Աստծո խոսքը, լինելով «ջանասեր և ժուժկալ», գործադրելով համարձակություն, բայց ոչ՝ բռնադատություն» (Ալմա 38.10, 12): Ինչպե՞ս կարող ենք հետևել այս խորհրդին, կիսվելով մեր հավատքով ուրիշների հետ:
- Ալման Սիբլոնին զգուշացնում է՝ չպարծենալ իր իմաստությամբ կամ զորությամբ (Ալմա 38.11): Ինչպե՞ս կարող է իմաստությամբ կամ զորությամբ հպարտանալն ավելի մեծ մեղքի բերել: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել այդպիսի հպարտությունը: (Տե՛ս Ալմա 38.13–14: Մենք կարող ենք ընդունել մեր «անարժանությունը Աստծո առաջ բոլոր դեպքերում»:)
- Ալման Սիբլոնին խորհուրդ է տալիս սանձել բոլոր իր կրքերը (տե՛ս Ալմա 38.12): Ի՞նչ է նշանակում սանձել մեր կրքերը: (Կարող եք նշել, որ սանձի դերը ձիուն ղեկավարելու և ուղղություն տալու մեջ է կայանում:) Ինչո՞ւ մենք պետք է սանձենք մեր կրքերը, որ լցվենք սիրով:

3. Ալման կոչ է անում իր որդի Կորիանթոնին ապաշխարել:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 39-ից: Նշեք, որ իր որդի Կորիանթոնին ուղղված Ալմայի խորհուրդը տարբերվում էր իր մյուս որդիներին ուղղված խորհրդից: Հելամանը և Սիբլոնը արդար էին ապրում, սակայն Կորիանթոնը լուրջ մեղքեր էր գործել:

- Ի՞նչ մեղքեր էր գործել Կորիանթոնը: (Տե՛ս Ալմա 39.2–3:) Ինչո՞ւ է սեռական պղծությունը այդպիսի ցավալի մեղք:

  Երեց Բոյդ Ք. Փաքերը սովորեցրել է.

  «Մեր մարմիններին տրվել է, և դա սուրբ է, ստեղծման զորություն, այսպես ասած, մի լույս, որը զորություն ունի վառելու ուրիշ լույսեր: Այս պարգևը պետք է օգտագործվի միայն ամուսնության սուրբ կապի սահմաններում: Ստեղծման այս զորության օգտագործման միջոցով մահկանացու մի մարմին կարող է ստեղծվել. հոգի կարող է մտնել դրա մեջ և նոր մարդ կարող է ծնվել այս աշխարհում:

  Այս զորությունը հրաշալի է: Այն կարող է ստեղծել և պահպանել ընտանեկան կյանքը, և ընտանեկան կյանքում է, որ մենք գտնում ենք երջանկության աղբյուրները: . . .

  Ստեղծման զորությունը, կամ կարելի է ասել, ծնունդ պարգևելու զորությունը, ծրագրի պատահական մասը չէ, այն կարևոր նշանակություն ունի: Առանց դրա ծրագիրը չի կարող իրագործվել: Դրա սխալ օգտագործումը կարող է խափանել ծրագիրը:

  Ձեր կյանքում ձեզ տրված երջանկության մեծ մասը կախված կլինի նրանից, թե ինչպես եք դուք օգտագործում ստեղծման սուրբ զորությունը: . . . Եթե Սատանան կարողանա դրդել ձեզ օգտագործել այդ զորությունը ժամանակից շուտ, կամ սխալ ձևով, դուք կարող եք կորցնել հավերժական առաջընթացի ձեր հնարավորությունները . . .

  Պաշտպանեք և պահպանեք ձեր պարգևը: Ձեր իրական երջանկությունն է վտանգված: Հավերժական ընտանեկան կյանքը . . . հասանելի է, որովհետև մեր Երկնային Հայրն Իր ամենաընտրյալ պարգևն է տվել մեզ, այն է՝ ստեղծման զորությունը: Դա երջանկության բանալին է» (in Conference Report, Apr. 1972, 136–39; or *Ensign,* July 1972, 111–13):

- Ինչո՞ւ էր Ալման անհրաժեշտ համարում քննարկել այդ մեղքը Կորիանթոնի հետ: (Տե՛ս Ալմա 39.7–8, 12–13:) Ի՞նչ կարող են սովորել ծնողները Ալմայից այն մասին, թե ինչպես պետք է խորհուրդ տալ իրենց զավակներին, որոնք սխալներ կամ մեղքեր են գործել: (Տե՛ս ստորև տրված պատասխանները:)

ա. Ալման Կորիանթոնին հիշեցրեց վերջինիս մեղքի պատճառը (Ալմա 39.2–4):
բ. Նա բացատրեց Կորիանթոնի մեղքի հետևանքները (Ալմա 39.7–9, 11):
գ. Նա Կորիանթոնին սովորեցրեց, թե ինչպես ապաշխարել և խուսափել մեղքից ապագայում (Ալմա 39.9–14):
դ. Նա Կորիանթոնին սովորեցրեց Աստծո սիրո և ներման մասին (Ալմա 39.15–19):

- Կորիանթոնի ո՞ր արարքները կամ վերաբերմունքը նրա մեղքերի պատճառը դարձան: (Տե՛ս Ալմա 39.2–3:) Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի դիմակայենք դեպի անբարոյականություն տանող Սատանայի դրդումներին: (Տե՛ս Ալմա 39.4, 13; Վ. և Ու.121.45:)

- Ինչպե՞ս էին ազդում Կորիանթոնի մեղքերը ուրիշների վրա: (Տե՛ս Ալմա 39.11, 13:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին Զորամացիների վրա ավելի մեծ ազդեցություն գործում Կորիանթոնի արարքները, քան Ալմայի խոսքերը: Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի Եկեղեցու անդամները լավ օրինակ ծառայեն: Արդյո՞ք դուք օրինվել եք լավ օրինակ ծառայող մարդկանց միջոցով: (Դասարանի անդամներին խնդրեք մտքում մտածել, թե ինչպես կարող են իրենց արարքներն ազդել Եկեղեցու մասին այլ մարդկանց կարծիքի ձևավորման վրա:)

- Ի՞նչ խորհուրդ տվեց Ալման Կորիանթոնին այն մասին, թե ինչպես ապաշխարել մեղքից և խուսափել նման մեղքերից ապագայում: (Տե՛ս Ալմա 39.9–14: Դասարանի անդամների պատասխանները գրեք գրատախտակի վրա: Որոշ պատասխաններ քննարկման հարցերի հետ միասին տրված են ստորև:)

  ա. «Այլևս մի գնա քո աչքերի տենչանքների ետևից» (Ալմա 39.9): Ինչպե՞ս են այն բոլոր բաները, որոնց վրա մենք նայում կամ ուշադրություն ենք դարձնում, ազդում բարոյապես մաքուր մնալու մեր որոշման վրա:
  բ. «Հանձ առ խորհրդակցել քո ավագ եղբայրների հետ» (Ալմա 39.10): Մեր ընտանիքի արդար անդամների և ընկերների հետ խորհրդակցելն ինչպե՞ս կարող է մեզ օգնել ավելի մեծ ուժով դիմակայել գայթակղությանը:
  գ. «Քեզ մի՛ թույլ տուր տարվել որևէ ունայն կամ հիմար բանով» (Ալմա 39.11): Որո՞նք են այն ունայն և հիմար բաները, որոնց միջոցով Սատանան փորձում է մեզ շեղել ուղուց:
  դ. «Դարձիր դեպի Տերը քո բոլոր մտքով, կարողությամբ և ուժով» (Ալմա 39.13): Ինչպե՞ս մենք կարող ենք դառնալ դեպի Տերը գայթակղության պահին օգնություն ստանալու համար:
  ե. «Ընդունիր քո սխալները, և այն անիրավությունը, որ դու արել ես» (Ալմա 39.13): Սխալ արարքների ընդունումն ինչո՞ւ է հանդիսանում ապաշխարության կարևոր մասը:
  զ. «Մի՛ որոնիր հարստություններ, ոչ էլ՝ աշխարհի ունայն բաները» (Ալմա 39.14): Հարստություններ և «աշխարհի ունայն բաներ» որոնելն ինչպե՞ս կարող են գայթակղել, դրդելով մեզ մեղք գործել:

- Ի՞նչ սովորեցրեց Ալման Կորիանթոնին Քրիստոսի մասին: (Տե՛ս Ալմա 39.15–19: Դասարանի անդամների պատասխանները գրի առեք գրատախտակի վրա:) Այս բաները հասկանալն ինչպե՞ս մեզ կարող է օգնել, երբ մենք գայթակղության շեմին ենք կանգնած:

Եզրափակում

Նշեք, որ Ալման Կորիանթոնին սովորեցրեց, թե ինչպես ապաշխարել և վերադառնալ հավատքին, նա նաև Հելամանին և Սիբլոնին խորհուրդ տվեց, թե ինչպես մնալ հավատքով: Դասարանի անդամներին խրախուսեք իրենց կյանքում կիրառել Ալմայի խորհուրդը: Ձեր այն անդամներին, որոնք ծնողներ են, խրախուսեք հետևել զավակներին սովորեցնելու և նրանց խորհուրդ տալու Ալմայի օրինակին:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. Խորհուրդ տալ յուրաքանչյուր երեխային առանձին

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Ալմա 35.16:

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածից տարբեր խառնվածքներ, խնդիրներ և կարիքներ ունեցող երեխաներին սովորեցնելու մասին: (Նշեք, որ Ալման խոսեց իր բոլոր որդիների հետ առանձին-առանձին: Նա չխոսեց իր բոլոր որդիների հետ միասին կամ չտվեց նույն խորհուրդը բոլորին: Նա ամեն որդու հետ առանձին խոսեց և ասաց նրանցից յուրաքանչյուրին այն, ինչի կարիքը նրանք ունեին:) Ինչո՞ւ է օգտակար հաճախ անհատապես սովորեցնել երեխաներին:

2. Երեխաների հանդեպ ծնողների պատասխանատվությունը

- Ինչպիսի՞ պատասխանատվություններ ունեն ծնողներն իրենց երեխաներին մեծացնելիս: (Տե՛ս Մոսիա 4.14–15; Վ. և Ու. 68.25–28:)

Դասարանի անդամներին խնդրեք սուրբ գրություններում գտնել արդար ծնողների օրինակներ, որոնք ունեցել են ինչպես արդար, այնպես էլ անարդար զավակներ: Պատասխանները կարող են լինել.

Ադամ և Եվա (Աբել և Կայեն)
Իսահակ և Ռեբեկա (Հակոբ և Եսավ)
Լեքի և Սարիա (Նեփի, Սամ, Հակոբ, Հովսեփ, Լաման և Լեմուէլ)
Ալմա Կրտսեր (Հելաման, Սիբլոն և Կորիանթոն)

Նշեք, որ հաճախ անգամ արդար ծնողները կարող են խնդիրներ ունենալ անարդար զավակների պատճառով: Շեշտեք, որ ծնողները պարտավոր են իրենց զավակներին սովորեցնել ավետարանը և խրախուսել նրանց ապրել ըստ ավետարանի սկզբունքների, սակայն նրանք պետք է նաև հարգեն իրենց զավակների ազատ ընտրության իրավունքը: Ծնողները չեն կարող ստիպել իրենց զավակներին արդար կյանքով ապրել:

3. «Այսպիսի մեծ հանցանք» (Ալմա 39.7)

Կարող եք շեշտել ողջախոհության մասին Ալմայի ուսմունքները: Հետևեք, որպեսզի դասարանի անդամները հասկանան ողջախոհության օրենքը, դրա կարևորությունը և այն, թե ինչպես կարելի է հաստատուն հետևել դրան: Երիտասարդներին ողջախոյության օրենքը սովորեցնելիս կարող եք օգտվել *For the Strength of Youth* (34285) բրոշյուրից: Զրուցեք եպիսկոպոսի հետ դասարանի անդամներին այդ բրոշյուրի օրինակները տրամադրելու համար:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերը նույնպես օգտակար կլինեն.

«Դուք ապրում եք սոսկալի գայթակղությունների աշխարհում: Պոռնոգրաֆիան, իր սողուն գարշելիությամբ, տարածվում է երկրով մեկ, ինչպես մի սոսկալի կլանող ալիք: Դա թույն է: Մի դիտեք կամ կարդացեք այն: Այն կկործանի ձեզ, եթե այդպես վարվեք: . . . Հեռու մնացեք դրանից: Խուսափեք դրանից, ինչպես մի վարակիչ հիվանդությունից, քանզի այն նույնքան մահացու է: Եղեք առաքինի մտքով և գործով: Աստված նպատակով է ձեր մեջ սերմանել մի աստվածային ուժ, որը հեշտությամբ կարող է վերածվել չարի և տանել կործանարար ավարտի: Երբ երիտասարդ եք, մի տարվեք մշտական ժամադրություններով: Երբ հասնում եք ամուսնության տարիքի, դա է ժամանակը: Սակայն դուք, տղանե՛ր, որ դպրոց եք հաճախում, դրա կարիքը չունեք, ինչպես և չունեն դրա կարիքն աղջիկները» (in Conference Report, Oct. 1997, 71–72; or *Ensign,* Nov. 1997, 51):

«Երջանկության մեծ ծրագիրը»

Դաս
30

Ալմա 40–42

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին ավելի լավ պատկերացնել կյանքը մահից հետո և այն ողորմածությունը, որը մատչելի դարձավ նրանց Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 40.1–23: Ալման Կորիանթոնին սովորեցնում է մահվան և հարության մասին:
   բ. Ալմա 40.24–26; 41: Ալման Կորիանթոնին սովորեցնում է, որ հարություն առնելուց հետո արդարները կվերականգնվեն երջանկության մեջ, իսկ ամբարիշտները՝ թշվառության մեջ:
   գ. Ալմա 42: Ալման Կորիանթոնին սովորեցնում է երջանկության ծրագրի արդարադատության և ողորմածության մասին:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Վարդապետություն և Ուխտեր 138:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրատախտակին գծեք հետևյալ սխեման.



Բացատրեք, որ մենք հաճախ գծում ենք նման սխեմաներ փրկության ծրագրի մասին սովորեցնելիս: Սակայն, մենք չնշեցինք Հիսուս Քրիստոսին, որը կենտրոնական կերպարն է այս ծրագրում: Մենք նույնպես չնշեցինք այն վարդապետությունները, որոնք հիմնական դեր են խաղում ծրագրի մեջ, օրինակ՝ Անկումը, Քավությունը և ընտրության ազատությունը:

Կարդացեք Երեց Նիլ Մաքսվելի հետևյալ խոսքերը.

«Տերն Իր փրկագնման ծրագիրը նկարագրել է որպես Երջանկության Ծրագիր: . . . Դարձի գալուց մենք երբեմն այս մեծ նախագծին չափազանց սովորական ենք վերաբերվում, անգամ այնպես ենք գծում այդ նախագիծը պատկերող պարզ սխեմաները գրատախտակներին և թղթերի վրա, կարծես մեր տան մի նոր հատակագիծ լինի: Երբ մենք իսկապես ժամանակ ենք տրամադրում Ծրագրի մասին խորհելուն, այն դառնում է զարմանալի և ապշեցուցիչ մի բան» (“Thanks Be to God,” *Ensign,* July 1982, 51):

Բացատրեք, որ այսօր դուք կքննարկեք Կորիանթոնին ուղղված Ալմայի որոշ խորհուրդները: Կորիանթոնին սովորեցնելիս Ալման խոսեց Երկնային Հոր ծրագրի մասին որպես «վերականգնման ծրագիր» (Ալմա 41.2), «փրկության մեծ ծրագիր» (Ալմա 42.5), «երջանկության մեծ ծրագիր» (Ալմա 42.8), «փրկագնման ծրագիր» (Ալմա 42.11), և «ողորմածության մեծ ծրագիր» (Ալմա 42.31): Ծրագրի մասին սովորեցնելիս Ալման շեշտեց Անկման, Հիսուս Քրիստոսի Քավության և անձնական ընտրության ազատության գաղափարների կարևորությունը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների այն հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, ինչպես կարելի է օգտագործել ընտրված հատվածները մեր առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել այդ սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. **Ալման Կորիանթոնին սովորեցնում է մահվան և հարության մասին:**

Բացատրեք, որ Ալմայի գրքի 40–42 գլուխներում Ալման շարունակում է խորհուրդ տալ իր անհնազանդ որդի Կորիանթոնին: Ալման հասկանում էր, որ Կորիանթոնի սխալ վարքի պատճառը մասամբ վկայության պակասն էր և ավետարանի որոշ հիմնական ուսմունքների մասին սխալ պատկերացումը: Ալման Կորիանթոնին օգնեց հասկանալ, թե ինչ է տեղի ունենում մահից հետո:

Քննարկեք Ալմա 40.1–23: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Ինչպե՞ս Ալման որոշեց, թե ինչի մասին պետք է խոսեր Կորիանթոնի հետ: (Տե՛ս Ալմա 40.1; տե՛ս նաև 41.1; 42.1:) Ձեր կարծիքով, ինչպե՞ս էր Ալման ի վիճակի «զգալ» Կորիանթոնի մտահոգությունները: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ զգալ նրանց կարիքները, ում սովորեցնում ենք:
- Ի՞նչ է պատահում մեր հոգիների հետ մահվան և հարության միջև ընկած ժամանակահատվածում: (Տե՛ս Ալմա 40.11–13: Նրանք ընկնում են դրախտ կամ բանտ: Բացատրեք, որ հատված 13-ում նշված «արտաքին խավարը» այն տեղն է, որը մենք, սովորաբար, կոչում ենք հոգևոր բանտ:) Ինչպե՞ս Ալման նկարագրեց դրախտը և հոգևոր բանտը: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Ալմա 40.11–15, 21 այդ հարցի պատասխանները գտնելու համար: Կարող եք դասարանի անդամների պատասխանները ամփոփել գրատախտակին, հաջորդ էջում տրված սխեմայի տեսքով:)

ԴՐԱԽՏ	ՀՈԳԵՎՈՐ ԲԱՆՏ
Երջանկության վիճակ	Թշվառության վիճակ
Հանգստի և խաղաղության վիճակ	Խավարի վիճակ լաց ու կոծով և ատամների կրճտոցով
Հոգսերի և վշտի բացակայություն	Զարհուրելի վիճակ, երկյուղով սպասելով Աստծո զայրույթին

Բացատրեք, որ 1918թ. Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը ստացավ մի հայտնություն, որը մեզ օգնում է ավելի լավ հասկանալ մահվան և հարության միջև ընկած ժամանակահատվածում մեր հոգիների վիճակը (Վ. և Ու.138): Այս հայտնության մեջ, Նախագահ Սմիթը տեսավ Փրկչի ծառայությունը դրախտում և ավետարանի ուսուցանումը նրանց, ովքեր գտնվում էին հոգևոր բանտում: Նախագահ Սմիթն իմացավ, որ հոգևոր բանտում գտնվող հոգիներին կուսուցանվի ավետարանը և, որ մինչև վերջին դատաստանը նրանք ապաշխարելու հնարավորություն կունենան (Վ. և Ու. 138.29–34, 57–59):

- Ալման ասաց, որ նշանակված ժամանակ մենք հարություն կառնենք (Ալմա 40.21): Ի՞նչ է նշանակում հարությունը: (Տե՛ս Ալմա 40.21, 23: Հոգին և մարմինը վերամիավորվում են իրենց «կատարյալ կառուցվածքով»:) Ովքե՞ր հարություն կառնեն: (Տե՛ս Ալմա 40.5; տե՛ս նաև 11.42–44:)
- Ալման նշեց, որ կան բաներ մահվան և հարության մասին, որոնք նա չգիտի (Ալմա 40.2–5, 8, 19–21): Ի՞նչ կարող ենք սովորել այն փաստից, որ Ալման վկայեց հարության վարդապետության մասին, չիմանալով բոլոր մանրամասները: (Դասարանի անդամներին օգնեք հասկանալ, որ պարտադիր չէ հասկանալ վարդապետության կամ դեպքի բոլոր մանրամասները դրա ճշմարիտ լինելու մասին վկայություն ստանալուց առաջ:)

2. Ալման սովորեցնում է, որ հարությունից հետո արդարները կվերականգնվեն երջանկության մեջ, իսկ ամբարիշտները՝ թշվառության մեջ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 40.24–26; 41-ից:

- Ալման հարության մասին խոսում էր որպես վերականգնման մասին, քանի որ հոգին և մարմինը վերամիավորվում են իրենց «կատարյալ կառուցվածքով» (Ալմա 40.23; 41.2): Ի՞նչ այլ վերականգնում է հաջորդում, երբ մենք հարություն ենք առնում և «դատվում՝ համաձայն մեր գործերի»: (Տե՛ս Ալմա 41.3–6: Արդարները կվերականգնվեն երջանկության մեջ, իսկ ամբարիշտները՝ թշվառության մեջ:) Ի՞նչ է նշանակում վերականգնված լինել բարու կամ չարի համար:

  Երեց Բրյուս Ռ. Մակ-Քոնկին ասել է. «Հարությունը իրականացնում է ինչպես մարմնի և հոգու վերականգնումը, այնպես էլ՝ կյանքի ընթացքում անհատի ունեցած մտավոր և հոգևոր առանձնահատկությունների և հատկանիշների վերականգնումը» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 641):

- Ի՞նչ իմաստով ենք մենք «մեր սեփական դատավորները» հանդիսանում: (Տե՛ս Ալմա 41.7–8: Մենք ընտրում ենք բարին կամ չարը և, այդպիսով, այն, թե ինչպիսին կլինենք վերականգնումից հետո:)

- Ալման բացատրեց, որ Կորիանթոնը չի կարող վերականգնվել մեղքից դեպի երջանկություն, որովհետև ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել» (Ալմա 41.10): Ինչո՞ւ ամբարշտությունը չի կարող երջանկություն բերել: (Տե՛ս Ալմա 41.10–13; Հելաման 13.38:) Ինչպե՞ս դուք կապատասխանեիք այն փաստին, որ որոշ մարդիկ, թվում է թե, երջանկություն են գտնում այն գործունեության մեջ, որը հակասում է պատվիրաններին:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Մինչդեռ մարդիկ կարող են մեղքի մեջ գտնել ժամանակավոր հաճույք, որի վերջնական արդյունքը դժբախտությունն է: . . . Մեղքը խախտում է Աստծո հետ ներդաշնակությունը և ճնշում է հոգին» (in Conference Report, Oct. 1974, 91; or *Ensign,* Nov. 1974, 65–66):

- Ի՞նչ, ըստ Ալմայի, պետք է աներ Կորիանթոնը, որպեսզի բարին վերականգնվեր նրա համար: (Տե՛ս Ալմա 41.14–15:) Ինչպե՞ս եք համոզվել հետևյալ արտահայտության ճշմարտացիության մեջ . «ինչ դու դուրս ես ուղարկում, պիտի կրկին վերադառնա քեզ»:

3. Ալման Կորիանթոնին սովորեցնում է արդարադատության և ողորմածության մասին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 42-ից: Բացատրեք, որ Կորիանթոնը մտահոգվել էր իր հոր ուսմունքներից: Նա չէր հասկանում, ինչու «մեղսագործը պիտի մատնվի թշվառության մի վիճակի» (Ալմա 42.1): Ի պատասխան այդ մտահոգությանը Ալման սովորեցրեց Աստծո արդարադատության մասին: Նա նաև սովորեցրեց, որ Քրիստոսը քավեց աշխարհի մեղքերը «իրականացնելու ողորմածության ծրագիրը, բավարարելու արդարադատության պահանջները» (Ալմա 42.15):

Դասարանի անդամներին օգնելու համար հասկանալ արդարադատության մասին Ալմայի ուսմունքները խնդրեք նրանց բարձրաձայն կարդալ Ալմա 42.6–7, 10, 18: Կարդալու ընթացքում նրանց օգնեք հասկանալ ստորև տրված ճշմարտությունները.

ա. Ադամի և Եվայի Անկման հետևանքով մենք հայտնվեցինք անկման վիճակում: Մենք մահկանացու ենք, այսինքն, ենթակա ենք մահվան, և անկատար ենք: Այս ընկած վիճակում մենք չենք կարող բնակվել Աստծո ներկայության մեջ, որը անմահ է և կատարյալ: Արդարադատությունը պահանջում է, որպեսզի մենք մարմնապես և հոգեպես կտրվենք Աստծո ներկայությունից:

բ. Երբ մենք մեղք ենք գործում, ավելի ենք հեռանում Աստծուց, որովհետև «ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո հետ» (1 Նեփի 10.21): Արդարադատությունը պահանջում է, որպեսզի մենք պատժվենք մեր մեղքերի համար:

- Ի՞նչ կպատահեր մեզ հետ, եթե մենք ենթակա լինեինք միայն արդարադատությանը: (Տե՛ս Ալմա 42.14:) Ի՞նչ է պահանջվում, որպեսզի բավարարվեն արդարադատության պահանջները, և որպեսզի մենք կարողանանք վերադառնալ և բնակվել Երկնային Հոր ներկայության մեջ: (Տե՛ս Ալմա 42.15:)

Կարդացեք կամ պատմեք առակը: Նշեք, որ պարտապանը ներկայացնում է մեզանից յուրաքանչյուրին, պարտատերը ներկայացնում է արդարադատությունը, իսկ պարտապանի ընկերը ներկայացնում է Փրկչին:

- Հիսուս Քրիստոսի Քավությունն ինչպե՞ս բավարարեց արդարադատության պահանջները: (Տե՛ս Մոսիա 15.7–9: Նա Իրեն ենթարկեց մահվան և Իր վրա վերցրեց ամբողջ մարդկության մեղքերը:)

- Ալման վկայեց, որ «ողորմածությունը գալիս է քավության շնորհիվ» (Ալմա 42.23): Ի՞նչ մենք պետք է անենք, որպեսզի ի վիճակի լինենք ստանալ Աստծո ողորմածության ամբողջությունը: (Տե՛ս Ալմա 42.13, 23, 27, 29–30; տե՛ս նաև Ալմա 41.14; Վ. և Ու. 19.15–18:)

Եզրափակում

Նշեք, որ հոր խորհուրդը ստանալուց հետո, Կորիանթոնը ապաշխարեց և վերադարձավ միսիոներական աշխատանքին (Ալմա 43.1; 49.30): Շեշտեք, որ հետևելով Աստծո պատվիրաններին և ապաշխարելով մեր մեղքերը, մենք ի վիճակի կլինենք ճաշակել այդ ողորմածությունից, որը հասանելի դարձավ Փրկչի Քավության շնորհիվ:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ընթացքում քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս

31

«Հաստատուն Քրիստոսի հավատքում»

Ալմա 43–52

Նպատակը

Օգնել դասարանի անդամներին տեսնել, թե պատերազմների ժամանակ Նեփիացիների վերաբերմունքը և գործողություններն ինչպես կարող են մեզ համար օրինակ հանդիսանալ մեր երկրային խնդիրներում և Սատանայի դեմ պայքարում:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 43–44: Հետևելով Զարահեմլացիներին Լամանացիները սկսեցին պատերազմել Նեփիացիների դեմ, ցանկանալով նրանց գերի վերցնել: Մորոնիի կողմից առաջնորդվող Նեփիացիները կռվում էին՝ պաշտպանելու համար իրենց ընտանիքները և իրենց ազատությունը: Նեփիացիները հաղթեցին, քանզի «ոգեշնչված էին ավելի արդար դրդապատճառից» և հավատք ունեին Հիսուս Քրիստոսի հանդեպ:

   բ. Ալմա 45.20–24; 46: Ամաղիկիան ցանկանում է թագավոր դառնալ և Նեփիացիների մեջ դավադրություն է կազմակերպում: Մորոնի հրամանատարը բարձրացնում է «ազատության դրոշը» իր մարդկանց ոգեշնչելու համար, և նրանք ուխտ են կապում հետևել Աստծուն: Ամաղիկիան և նրա հետևորդներից մի քանիսը միանում են Լամանացիներին:

   գ. Ալմա 47–48: Ամաղիկիան խաբեությամբ դառնում է Լամանացիների թագավորը: Նա Լամանացիներին դրդում է Նեփիացիների դեմ պատերազմելու: Մորոնի հրամանատարը պատրաստում է Նեփիացիներին արդար ձևով պաշտպանվելուն:

   դ. Ալմա 49–52: Նեփիացիների և Լամանացիների միջև պատերազմը շարունակվում է: Թագավորասերները ցանկանում էին Նեփիացիների երկրում թագավոր նշանակել, սակայն Նեփիացիները դիմադրում էին: Թեանկումը սպանում է Ամաղիկիային, որը Լամանացիների թագավորն էր դարձել իր եղբայր Ամմորոնից հետո:

2. Եթե առկա է «Մորոնի հրամանատարը բարձրացնում է Ազատության դրոշը» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ժամանակ (62051; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 312):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին հարցրեք.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Մորմոնը Մորմոնի Գրքում պատերազմներին այդքան շատ տեղ հատկացրել:

  Ի լրումն դասարանի անդամների պատասխաններին կարող եք առաջարկել հետևյալը:

  1. Մորմոնը գիտեր, որ Մորմոնի գիրքը պետք է կարդան և ուսումնասիրեն այնպիսի ժամանակներում, երբ պատերազմները տարածված են լինելու երկրի երեսին: Այս գրվածքները մեզ սովորեցնում են, թե խռովությունների ժամանակ ինչպես կարելի է մնալ Քրիստոսանման ժողովուրդ:

2. Մորմոնը մեծ մանրամասնությամբ գրի առավ Նեփիացիների պատմությունը Փրկչի գալստից առաջ: Մենք կարող ենք կարդալ Նեփիացիների փորձի մասին և պատրաստվել նմանատիպ իրադարձությունների, որոնք տեղի են ունենում այսօր՝ Քրիստոսի Երկրորդ Գալստից առաջ:

Բացատրեք, որ այս դասը քննարկում է Նեփիացիների և նրանց թշնամիների միջև եղած այն պայքարը, որը սովորեցնում է մեզ ճիշտ վարվել երկրային հակառակությունների դեպքում և պաշտպանել մեզ և մեր ընտանիքները Սատանայի դեմ պայքարում:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրությունները առօրյա կյանքում խաղաղության և պատերազմների ժամանակ: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Նեփիացիները պաշտպանում են իրենց ընտանիքները և իրենց ազատությունը:

Քննարկեք Ալմա 43–44: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Ինչո՞ւ էին Նեփիացիները պայքարում Լամանացիների դեմ: (Տե՛ս Ալմա 43.3–4, 9–11, 45–47; 48.14:) Ի՞նչ հանգամանքներում կարող է Տերը պատերազմելու հավանություն տալ:

  Նախագահ Չարլզ Վ. Պենրոուզը ասել է. «Մեզ համար ճիշտ չէ թափել մարդու արյունը, վրեժխնդրության նպատակով: Սակայն երբ Տերն իր ծառաներին պատվիրում է, կամ ոգեշնչում է Իր ծառաներին՝ Իսրայելի որդիներին և դուստրերին խորհուրդ տալ, օգնություն ցուցաբերել պատերազմի արդար նպատակների համար, դա ուրիշ է . . . Մենք պետք է կանգնենք մեր հզորության և ուժի մեջ և առաջ գնանք դեպի հաղթանակը՝ ոչ թե արյուն թափելու ցանկությամբ, ոչ թե մեզ հավասար էակներին ոչնչացնելու ցանկությամբ, այլ ինքնապաշտպանության նպատակով և նրա համար, որ մենք ցանկանում ենք պահպանել և շարունակել մեր բարգավաճումը, ազատության այն սրբազան սկզբունքները, որոնք տրվել են վերևից» (in Conference Report, Oct. 1917, 21):

  Երեց Դեյվիդ Օ. ՄակՔեյն ասել է. «Գոյություն ունի . . . երկու հանգամանք, որոնք կարող են արդարացնել ճշմարիտ Քրիստոնեայի մուտքը պատերազմ, ուշադրություն դարձրեք, ես ասում եմ *մուտքը, ոչ թե նախաձեռնելը*. (1) Եթե փորձ է արվում իշխելու և մյուսին զրկելու ազատ ընտրության իր իրավունքից, և, (2) Իր երկրին հավատարիմ մնալու նպատակով: Հնարավոր է, կա երրորդ հանգամանքը: Թույլ ազգի պաշտպանությունը, որն անարդարացիորեն ջախջախվում է ուժեղ և դաժան ազգի կողմից» (in Conference Report, Apr. 1942, 72):

- Երբ Մորոնին խոսեց Զերահեմնայի հետ, ի՞նչը նա նշեց որպես Նեփիացիների հաղթանակի պատճառ: (Տե՛ս Ալմա 44.3–4:) Ինչպե՞ս Նեփիացիները դրսևորեցին Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը: (Տե՛ս Ալմա 43.23, 49–50:)

- Ի՞նչ կարող ենք անել մեր ընտանիքներում և համայնքներում, որպեսզի պահպանենք այն ազատությունը, որի համար զոհվեցին Նեփիացիները:

- Քննարկեք հետևյալ սկզբունքները, որոնցով ղեկավարվում էին արդար Նեփիացիները պատերազմների ժամանակ: Այդ սկզբունքների ըմբռնումը և կիրառումն այսօր ինչպե՞ս կարող են օգնել աշխարհն ավելի խաղաղ դարձնել: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այդ սկզբունքներն անձնական կյանքի հակասությունները լուծելու համար:

  ա. Պայքարեք միայն արդար նպատակների համար, օրինակ՝ ինքնապաշտպանության (Ալմա 43.8–10, 29–30, 45–47; 48.14; կարող եք նշել, որ Նեփիացիների կողմից պատերազմ սկսելու առաջին դեպքը նկարագրված է Մորմոն 4.1–4-ում):

բ. Ատելություն մի ունեցեք ձեր թշնամիների նկատմամբ. փնտրեք նրանց և ձեր շահերը (Ալմա 43.53–54; 44.1–2, 6):
գ. Ապրեք արդար կյանքով և ապավինեք Աստծուն (Ալմա 44.3–4; 48.15, 19–20):
դ. Հետևեք արդար և իմաստուն ղեկավարներին (Ալմա 43.16–19; 48.11–13, 17–19; տե՛ս նաև Վ. և Ու. 98.10):

2. Մորոնի հրամանատարը բարձրացնում է «ազատության դրոշը» մարդկանց ոգեշնչելու համար:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 45.20–24; 46: Բացատրեք, որ Լամանացիների հետ ճակատամարտելուց հետո, Հելամանը և նրա եղբայրները ճանապարհորդեցին ամբողջ երկրով, քարոզելով և վերահաստատելով Եկեղեցու կառուցվածքը (Ալմա 45.20–22): Ինչևէ, որոշ Նեփիացիներ դարձան հպարտ և ապստամբեցին Եկեղեցու դեմ: Պառակտիչների խմբի ղեկավարը Ամաղիկիան էր, որը ցանկանում էր դառնալ Նեփացիների թագավորը (Ալմա 45.23–24; 46.1–4):

- Ինչպե՞ս Ամաղիկիան համոզեց ուրիշներին հետևել իրեն: (Տե՛ս Ալմա 46.1–7, 10:) Ի՞նչ շահ ունեին նրան աջակցողները: (Տե՛ս Ալմա 46.4–5:) Ի՞նչ կարող ենք սովորել Ամաղիկիայի և նրա հետևորդների մասին այդ պատմությունից: (Տե՛ս Ալմա 46.8–9:)
- Ցուցադրեք «Հրամանատար Մորոնին բարձրացնում է ազատության դրոշը» նկարը: Ինչո՞ւ Մորոնին պատրաստեց ազատության դրոշը: (Տե՛ս Ալմա 46.11–13, 18–20:) Ինչպե՞ս մարդիկ արձագանքեցին ազատության դրոշին: (Տե՛ս Ալմա 46.21–22:) Ուխտեր կապելը և պահելը ինչպե՞ս կարող է ազդել մեր կյանքի վրա:

3. Ամաղիկիան դառնում է Լամանացիների թագավորը և դրդում է նրանց պատերազմի:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 47–48:

- Ի՞նչ արեց Ամաղիկիան, երբ չկարողացավ դառնալ Նեփիացիների թագավորը: (Տե՛ս Ալմա 46.33; 47.1, 4: Դասարանի անդամներին խնդրեք ամփոփել Լամանացիների թագավոր դառնալու պատմությունը [Ալմա 47.1–35], կամ ամփոփեք այն ինքներդ:)
- Նեփիացիների ամենամեծ ախոյանները նախկինում եղել էին Նեփիացիները, ներառյալ Ամաղեկացիները (Ալմա 24.29–30; 43.6–7), Զորամացիները (Ալմա 30.59; 31.8–11; 43.4), Ամաղիկիա (Ալմա 46.1–7), Մորիանթոն (Ալմա 50.26, 35), և Ամաղիկիայի եղբայր Ամմորոնը (Ալմա 52.3). Ինչո՞ւ նրանք, ովքեր թողնում են Եկեղեցին, այդքան ուժգին են պայքարում դրա դեմ: (Տե՛ս Մոսիա 2.36–37; Ալմա 47.35–36:)

  Նախագահ Ջոզեֆ Սմիթը այսպես է պատասխանել մի մարդու, որը զարմանում էր, թե ինչու են Եկեղեցուց հեռացած մարդիկ հաճախ այդպես խստորեն պայքարում Եկեղեցու դեմ. «Եկեղեցուն միանալուց առաջ դու կանգնած ես չեզոք հողի վրա: Երբ ավետարանը քարոզվում է, բարին ու չարը դրվում են քո առջև: Դու կարող ես ընտրել դրանցից մեկը: Երկու հակառակորդ տերեր հրավիրում են քեզ ծառայել իրենց: Երբ միանում ես Եկեղեցուն, ապա հավակնում ես ծառայելու Աստծուն: Երբ անում ես դա, ընդմիշտ թողնում ես չեզոք հողը և այլևս չես կարող վերադառնալ դրան: Եթե թողնում ես Տիրոջը, որին հավակնել ես ծառայել, ապա միայն չար Տիրոջ սադրանքի հետևանքով կարող ես հետևել նրա հրամանին և լինել նրա ծառան» (in "Recollections of the Prophet Joseph Smith," *Juvenile Instructor,* 15 Aug. 1892, 492):
- Համեմատեք Ամաղիկիային և Մորոնիին (Ալմա 48.1–17): Շեշտեք, որ, ինչպես մեկ անարդար մարդ կարող է մեծ անարդարություն ստեղծել մարդկանց մեջ (Ալմա 46.9), այնպես էլ մեկ արդար մարդ, ինչպես Մորոնին էր, կարող է շատերին ոգեշնչել արդարության: Ինչպե՞ս կարող է մեզանից յուրաքանչյուրը արդարություն ներշնչել ուրիշներին:

4. Պատերազմը Նեփիացիների և Լամանացիների միջև շարունակվում է:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 49–52: Բացատրեք, որ այս գլուխ-ները շարունակում են պատմել Նեփիացիների և Լամանացիների պատերազմների մասին: Այս հատվածները կարող են օգնել մեզ, երբ պայքարում ենք Սատանայի և նրա զորքի դեմ, որոնք պատերազմ են հայտարարել ճշմարտության և արդարության դեմ, փորձելով ոչնչացնել հավերժական կյանքի մեր բոլոր հնարավորությունները:

- Մորմոնի Գրքի պատերազմների մասին պատմություններն ինչպե՞ս կարող ենք օգտագործել, երբ պայքարում ենք Սատանայի ազդեցության դեմ: (Որոշ օրինակներ քննարկման հարցերի հետ միասին տրված են ստորև: Դասարանի անդամները կարող են նույնպես օրինակներ առաջարկել:)

  ա. Նեփիացիները պատեր էին կառուցում իրենց քաղաքները Լամանացիների հարձակումներից պաշտպանելու համար (Ալմա 48.7–9; 49.2–4, 13, 18): Ինչպիսի՞ միջոցներով կարող ենք պաշտպանվել սատանայի ազդեցությունից:
  բ. Նեփիացիները շարունակ ամրացնում էին իրենց պաշտպանական միջոցները (Ալմա 50.1–6): Ինչո՞ւ մենք պետք է շարունակ ամրացնենք Սատանայից պաշտպանվելու մեր միջոցները:
  գ. Նեփիացիները պահում էին Աստծո պատվիրանները և հետևում էին Եկեղեցու իրենց առաջնորդներին (Ալմա 44.3–4; 49.30; 50.20–22): Աստծո պատվիրանները և Եկեղեցու ղեկավարների խորհուրդներն ինչպե՞ս են օգնում մեզ պայքարել անարդարության դեմ:
  դ. Նեփիացիները շնորհակալություն էին հայտնում Աստծուն մարտերի ժամանակ իրենց պաշտպանելու համար (Ալմա 45.1; 49.28): Տիրոջ հանդեպ մեր երախտագիտությունն ինչպե՞ս կարող է պաշտպանել մեզ Սատանայից:
  ե. Հակառակությունները ստիպեցին Նեփիացիներին պատերազմել իրար մեջ և թույլ տվեցին Լամանացիներին առավելություն ձեռք բերել (Ալմա 51.2–7, 12–23; 53.8–9): Ինչպե՞ս են հակառակությունները սատանային թույլ տալիս առավելություն ձեռք բերել մեր հանդեպ: Միասնությունը և ուրիշների աջակցությունն ինչպե՞ս կարող են օգնել մեզ, երբ պայքարում ենք անարդարության դեմ:
  զ. Արդար Նեփիացիները բարգավաճում էին և երջանիկ էին անգամ պատերազմների ժամանակ (Ալմա 49.30; 50.23): Ինչպե՞ս կարող ենք խաղաղություն և երջանկություն գտնել անգամ սաստիկ անարդարության պայմաններում:

Եզրափակում

Նշեք, որ Մորմոնի Գրքի այս գլուխների սկզբունքները կարող են մեզ և մեր ընտանիքներին պաշտպանել չարի կատաղի գրոհներից: Դրանք նաև կարող են մեզ օգնել պատերազմների և ձախորդությունների ժամանակ հոգու խաղաղություն ունենալ:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս 32

«Նրանք հնազանդվում…էին ճշգրիտ կատարել հրամանի ամեն մի բառը»

Ալմա 53–63

Նպատակը

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, որ Տերը կզորացնի նրանց, եթե նրանք հետևեն Հելամանի անվեհեր երիտասարդ զինվորների օրինակին:

Նախապատրաստություն

1. Կարդարցեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Ալմա 53.10–19; 56.1–8: Երկու հազար անվեհեր երիտասարդ Ամմոնացիներ ուխտ կապեցին՝ պայքարելու Նեփիացիների ազատության համար: Նրանք խնդրեցին Հելամանին լինել իրենց առաջնորդը:

   բ. Ալմա 56.9–58.41: Հավատարիմ մնալով իրենց մայրերի ուսմունքներին, երիտասարդ զինվորները դրսևորում են Աստծո հանդեպ իրենց հավատքը և քաջությամբ պայքարում են: Նրանց են միանում 60 երիտասարդ Ամմոնացիներ: Բոլոր 2,060 երիտասարդ զինվորները վիրավորվում են, սակայն նրանցից ոչ մեկը չի սպանվում:

2. Եթե առկա է «Երկու Հազար Երիտասարդ Մարտիկները» նկարը, պատրաստվեք ցուցադրելու այն դասի ժամանակ (62050; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 313):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ցուցադրեք երիտասարդ մարտիկների նկարը: Բարձրաձայն կարդացեք Ալմա 57.25–26, կանգ առնելով տող 26 -ում *սպանվել* բառի վրա:

Նշեք, որ Նեփիացիների և Լամանացիների մեջ մարտերի ժամանակ կային այլ Նեփիացիներ, որոնց կյանքը զարմանալի ձևով խնայվեց: Ինչևէ, կային նաև շատ արդար Նեփիացիներ, որոնք սպանվեցին (Ալմա 56.10–11; 57.36): Երիտասարդ մարտիկների Հելամանի բանակը Մորմոնի Գրքում նշված զինվորական միակ բանակն էր, որի անդամներից ոչ մեկը չսպանվեց պայքարում:

Դասարանի անդամներին ասացեք, որ Հելամանի երիտասարդ մարտիկների նման, մենք նույնպես մի մեծ բանակի մաս ենք: Այնուհետև, կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը: Բացատրեք, որ, թեպետև այս խոսքերն ուղղված են Ահարոնյան քահանայություն կրողներին, դրանք վերաբերվում են Եկեղեցու բոլոր անդամներին:

«Դուք ծնվել եք այս ժամանակ մի սրբազան և փառավոր նպատակի համար: Դա պատահական չէ, որ դուք պահվել եք երկիր գալու ժամանակների լրության այս վերջին ժամանակաշրջանում: Հավերժության մեջ կանխորոշվել էր, որ հատկապես այս ժամանակներում դուք պետք է ծնվեք:

Դուք պետք է լինեք վերջին օրերում Տիրոջ թագավորական բանակը:

Դուք պայքարում եք հոգևոր ճակատամարտերում, ես ձեզ դիտում եմ որպես այսօրվա Հելամանի որդիներ: Լավ հիշեք Մորմոնի Գրքի Հելամանի երկու հազար պատանի մարտիկներին» (in Conference Report, Apr. 1986, 55; or *Ensign,* May 1986, 43):

- Ի՞նչ է նշանակում լինել «Տիրոջ թագավորական բանակը»: (Տե՛ս Եփեսացիս 6.11–18; 1 Պետրոս 2.9; Վ. և Ու. 138.55–56:) Ի՞նչ «հոգևոր ճակատամարտերում» ենք մենք պայքարում որպես Տիրոջ բանակի զինվորներ:

Բացատրեք, որ այս դասը քննարկում է այնպիսի սկզբունքներ և հատկանիշներ, որոնք օգնեցին 2,060 Ամմոնացիներին Տիրոջից ստանալ այդքան մեծ զորություն: Եթե ապրենք համաձայն այդ սկզբունքների և զարգացնենք մեր մեջ այդ հատկանիշները, ապա մեր հոգևոր զորությունը կմեծանա: Մենք ավելի արդյունավետ ծառաներ կլինենք «Տիրոջ թագավորական բանակում»:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես են այդ սուրբ գրությունները վերաբերվում առօրյա կյանքին: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. **Երկու հազար պատանի Ամմոնացիներ ուխտ են կապում պայքարելու Նեփիացիների ազատության համար:**

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Ալմա 53.10–19; 56.1–8-ից: Այս պատմությունը քննարկելուց առաջ, դասարանի անդամներին խնդրեք վերհիշել խաղաղության ուխտը, որն Ամմոնացիները (Անթի-Նեփի-Լեքիները) կապեցին իրենց դարձի գալու ժամանակ (Ալմա 24.15–18; 53.10–11):

- Նեփիացիները խոստացան պաշտպանել Ամմոնացիներին Լամանացիներից (Ալմա 27.22–24; 53.12): Ի՞նչ ցանկացան անել Ամմոնացիները, երբ Նեփիացիների դժբախտությունների ականատեսը եղան: (Տե՛ս Ալմա 53.13:) Ինչո՞ւ Հելամանը համոզեց մարդկանց չխախտել իրենց ուխտը: (Տե՛ս Ալմա 53.14–15; 56.8:) Ի՞նչ է սա սովորեցնում պատվիրանները պահելու կարևորության մասին:
- Ի՞նչ արեցին Ամմոնացիների որդիները Նեփիացիներին օգնելու համար: (Տե՛ս Ալմա 53.16:) Ինչպե՞ս պատանի Ամմոնացիները դրսևորեցին Նեփիացիներին օգնելու իրենց խոստումի զորությունը: (Տե՛ս Ալմա 53.17: Նրանք ուխտի մեջ մտան և որոշեցին պահել իրենց ուխտը ամեն դեպքում: Գրատախտակին գրեք *Կապել և պահել սրբազան ուխտերը:*)
- Ինչպե՞ս Տերը կզորացնի մեզ, եթե մենք ուխտեր կապենք Նրա հետ և պահենք այդ ուխտերը «բոլոր դեպքերում»:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Տղամարդիկ և կանայք, որոնք իրենց կյանքերը դարձնում են դեպի Աստված, կհայտնաբերեն, որ Նա շատ ավելին կարող է անել իրենց համար, քան իրենք կարող են անել իրենց համար: Նա կմեծացնի նրանց ուրախությունը, կլայնացնի նրանց տեսադաշտը, կարագացնի նրանց միտքը, կուժեղացնի նրանց մկանները, կբարձրացնի նրանց հոգիները, կբազմապատկի նրանց օրհնությունները, կավելացնի նրանց հնարավորությունները, կմխիթարի նրանց հոգիները, կպարգևի ընկերներ և կտա խաղաղություն: Ով որ կորցնի իր կյանքը Աստծուն ծառայելու մեջ կգտնի հավերժական կյանք» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 361):
- Երիտասարդ Ամմոնացիները Հելամանին խնդրեցին լինել իրենց ղեկավարը (Ալմա 53.19; 56.1, 5): Հելամանը մարգարե էր և Եկեղեցում բարձրագույն քահանա (Ալմա 37.1–2, 14; 46.6): Մարգարեին հետևելու որոշումն ինչպե՞ս կարող էր մեծացնել երիտասարդ Ամմոնացիների պայքարի արդյունավետությունը: Ինչպիսի՞ առաջնորդներ կարող են թուլացնել մարդկանց՝ իրենց հոգևոր պայքարում:
- Ինչպե՞ս արձագանքեցին երիտասարդ Ամմոնացիներն իրենց ստացած հրամաններին: (Տե՛ս Ալմա 57.21: Գրատախտակին գրեք *Հետևեք մարգարեին ճշգրտությամբ:*) Ինչո՞ւ է կարևոր ճշգրտությամբ հետևել Տիրոջ մարգարեի ուսմունքներին: (Տե՛ս հաջորդ էջի վրա տրված մեջբերումը:) Ի՞նչ հատուկ բաներ կարող ենք անել այսօր, որպեսզի ճշգրտությամբ հետևենք մարգարեին:

Նախագահ Հարոլդ Բ. Լին սովորեցրել է.

«Սատանայի զորությունը կմեծանա. մենք տեսնում ենք դրա նշանները . . .

Այժմ, որպես Եկեղեցու անդամներ, մենք կարող ենք ապահով լինել միայն այն դեպքում, եթե ճշգրտությամբ անենք այն, ինչ Տերն ասեց Եկեղեցուն այն նույն օրը, երբ Եկեղեցին հիմնվեց: Մենք պետք է սովորենք ուշադրություն դարձնել այն խոսքերին և պատվիրաններին, որ Տերը տալիս է իր մարգարեի միջոցով, որը ստանում է դրանք ինչպես Նրա բերանից, քայլելով սրբությամբ Նրա առջև, համբերության և հավատքի մեջ: (Տե՛ս Վ. և Ու. 21.4–5:) Կան բաներ, որոնց համար համբերություն և հավատք կպահանջվի: Ձեզ կարող է դուր չգալ այն, ինչ գալիս է Եկեղեցու իշխանություններից: Դրանք կարող են հակասել քաղաքական ձեր հայացքներին: Դրանք կարող են հակասել հասարակական ձեր հայացքներին: Դրանք կարող են առնչվել ձեր քաղաքացիական կյանքի հետ: Սակայն, եթե դուք լսեք այդ ամենին այնպես, ասես դա գալիս է Տիրոջից, համբերությամբ և հավատքով, խոստումն այն է, որ «դժոխքի դռները չեն հաղթի ձեզ. այո, և Տեր Աստված ձեր առջևից կցրի խավարի զորությունները, և երկինքները կցնցի ձեր բարիքի և իր անվան փառքի համար»: (Տե՛ս Վ. և Ու. 21.6:)» (in Conference Report, Oct. 1970, 152; or *Improvement Era,* Dec. 1970, 126):

2. **Երիտասարդ զինվորները դրսևորում են հավատք առ Տերը և պայքարում են քաջությամբ:**

Քննարկեք Ալմա 56.9–58.41: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Ցուցադրեք երիտասարդ մարտիկների նկարը:

- Առաջին բանակը, որին հանդիպեցին երիտասարդ Ամմոնացիները, դա Լամանացիների ամենաուժեղ և մեծաքանակ բանակն էր (Ալմա 56.34–43): Ո՞րն էր երիտասարդ զինվորների պատասխանը, երբ Հելամանը հարցրեց նրանց, արդյոք նրանք ցանկանում են գնալ այդ բանակի դեմ: (Տե՛ս Ալմա 56.44–47:) Ո՞ւմից այդ մարտիկները սովորեցին այդպիսի մեծ հավատք և քաջություն: (Տե՛ս Ալմա 56.47–48; տե՛ս նաև Ալմա 53.21; 57.21: Եթե սովորեցնում եք մեծահասակներին, ապա գրատախտակին գրեք *Սովորեցնել մեր երեխաներին հավատալ Աստծուն*: Եթե սովորեցնում եք երիտասարդներին, ապա գրատախտակին գրեք *Հետևել ծնողների արդար ուսմունքներին:*)

  Երեխաների վրա ունեցած մայրերի ազդեցությունը շեշտելու համար, կարող եք կարդալ Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի հետևյալ խոսքերը.

  «Փրկչի Երկրորդ Գալստից առաջ Երկրի երեսին տեղի ունեցող այս ավարտական տեսարանների պայմաններում արդար կին լինելը հատկապես ազնվական կոչում է: Արդար կնոջ զորությունը և ազդեցությունը այսօր տասնապատիկ մեծ է, քան խաղաղ ժամանակներում: Նա այստեղ է՝ օգնելու հարստացնել, պաշտպանել և պահպանել տունը, ինչը հասարակության հիմնական և առավել ազնվական կառուցվածքն է: Հասարակության այլ կառուցվածքներ կարող են տատանվել և անգամ փլուզվել, սակայն արդար կինը կարող է օգնել փրկել տունը, որը կարող է դառնալ վերջին և միակ սրբավայրը որոշ մահկանացուների համար՝ փոթորկի և պայքարի թեժ պահերին» (*The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball [1982], 326–27):

- Երիտասարդ զինվորները չէին կասկածում իրենց մայրերի վկայությունների մեջ (Ալմա 56.48): Ինչո՞ւ է երեխաների համար կարևոր վստահ լինել իրենց ծնողների վկայությունների զորության և ճշգրտության մեջ: Ինչպե՞ս կարող են ծնողները կիսել իրենց վկայությունները իրենց երեխաների հետ:

- Առանձնապես դժվարին մի ճակատամարտի ժամանակ շատ Նեփիացիներ «քիչ էր մնում տեղի տային» (Ալմա 57.20; տե՛ս նաև 12–19): Ո՞րն էր երիտասարդ Ամմոնացիների պատասխանն այդ ճակատամարտի ժամանակ: (Տե՛ս Ալմա 57.19–20: Գրատախտակին գրեք *Լինել «անսասան ու անվեհեր», անգամ երբ մյուսները «տեղի են տալիս»:*)

- Ո՞րն էր երիտասարդ Ամմոնացիների հավատքի և քաջության արդյունքը: (Տե՛ս Ալմա 57.22–25; 58.31–33, 39:) Ինչպե՞ս կարող ենք մնալ «անսասան ու անվեհեր» անգամ, երբ

մեր ընկերները, աշխատակիցները կամ ուրիշները «քիչ է մնում տեղի տան»: Ինչպե՞ս կարող ենք զորացնել նրանց, ովքեր «քիչ է մնում տեղի տան»:

- Ի՞նչ ձևով էին երիտասարդ Ամմոնացիները «անսասան և անվեհեր»: (Օրինակների համար տե՛ս Ալմա 53.20–21; 57.26–27; 58.40:)

  ա. «Նրանք անսահման անվեհեր էին՝ խիզախության մեջ» (Ալմա 53.20):
  բ. «Նրանք … հավատարիմ էին բոլոր դեպքերում, ինչ բան էլ որ նրանց վստահվում էր» (Ալմա 53.20):
  գ. «Նրանք ճշմարտության և լրջամտության տղաներ էին» (Ալմա 53.21):
  դ. Նրանք ունեին «արտասովոր հավատք առ այն, ինչին նրանք սովորեցվել էին հավատալ» (Ալմա 57.26):
  ե. «Նրանք շարունակ դնում էին իրենց վստահությունը՝ Աստծո վրա» (Ալմա 57.27):
  զ. Նրանք կանգնած էին հաստատուն այն ազատության մեջ, որով Աստված դարձրել էր նրանց ազատ» (Ալմա 58.40):
  է. Նրանք «ճշգրիտ էին Տիրոջը՝ իրենց Աստծուն օրեցօր հիշելիս» (Ալմա 58.40):
  ը. Նրանք շարունակ պահպանում էին Աստծո «կանոնները, և նրա դատաստանները, և նրա պատվիրանները» (Ալմա 58.40):
  թ. «Նրանց հավատքը մարգարեությունների հանդեպ … ամուր էր» (Ալմա 58.40):

  Ծեշտեք, որ երիտասարդ Ամմոնացիները զարգացրել են այդ հատկանիշները պատանեկության տարիներին, դեռ զինվորներ դառնալուց առաջ: Եթե սովորեցնում եք երիտասարդներին, ապա գրատախտակին գրեք *Զարգացնել արդար հատկանիշներ պատանեկության տարիներին:*

- Ճակատամարտերից մեկի ժամանակ Նեփիացիների բանակները, որոնց առաջնորդում էին Հելամանը, Գիդը և Թեոմները, հանդիպեցին մի թշնամու, որը մեծաթիվ էր, սակայն նրանք Զարահեմլայից շատ քիչ օգնություն ստացան (Ալմա 58.1–9):Ո՞ւմ դիմեցին Նեփիացիները զորության համար: (Տե՛ս Ալմա 58.10: Գրատախտակին գրեք *Աղոթել զորության և ազատության համար:*)

- Ինչպե՞ս Տերը պատասխանեց Նեփիացիների աղոթքներին: (Տե՛ս Ալմա 58.11–12:) Մեր աղոթքների պատասխաններն ինչպե՞ս կարող են օգնել մեզ «արիանալ»:

Եզրափակում

Կարդացեք էջ 142-ում տրված Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի խոսքերը: Այդ մեջբերման հետ կապված վերհիշեք այն սկզբունքները, որոնք գրել էիք գրատախտակին:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այն որպես դասի մաս:

Հոգևոր նկատառումներ Ալմա 60–61-ից

Քննարկեք Ալմա 60 և 61 գլուխները, որոնք պարունակում են Մորոնիի նամակը երկրի կառավարիչ Պառրանին, և Պառրանի պատասխանը: Այս գլուխներում ընդգրկված են հետևյալ դասերը.

ա. Օգտագործել այն բոլոր միջոցները, որ Տերը տրամադրել է մեզ (Ալմա 60.21):
բ. Մաքրել «անոթի ներսը» (Ալմա 60.23):
գ. Լինել «հարկադրված …, համաձայն այն ուխտի, որ ես արել եմ, պահել իմ Աստծո պատվիրանները» (Ալմա 60.34):
դ. Փնտրել Աստծո փառքը, ոչ թե «աշխարհի հարգանքը» (Ալմա 60.36):
ե. Զվիրավորվել ուրիշներից (Ալմա 61.9):

Դաս
33

«Հաստատուն հիմք»

Հելաման 1–5

Նպատակը

Խրախուսել դասարանի անդամներին կառուցել իրենց վկայությունները Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:

Նախապատ-րաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Հելաման 1–2: Ներքին խռովություններն աճում են Նեփիացիների շարքերում, երբ զարգանում են գաղտնի գործերը և ամբարշտությունը: Գադիանթոնը դառնում է Կիսկումենի ավազակների գաղտնի հրոսակախմբի ղեկավարը:

   բ. Հելաման 3: Հազարավոր մարդիկ միանում են Եկեղեցուն և սկսում են բարգավաճել: Եկեղեցու որոշ անդամներ հպարտությունից բարձրամտանում են:

   գ. Հելաման 4: Նեփիացի պառակտիչներն ու Լամանացիները հաղթում են Ներփիացիներին վերջիններիս ամբարշտության և հպարտության պատճառով:

   դ. Հելաման 5: Նեփին և Լեքին հիշում են Քրիստոսի վրա հիմք կառուցելու իրենց հայրերի խորհուրդը: Հրաշքներն այցելում են նրանց իրենց ծառայության ժամանակ, երբ նրանք քարոզում են ապաշխարություն:

2. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժություն, ընտրեք հետևյալ տարբերակներից մեկը.

   ա. Դասարանի անդամների փոքր խմբերի խնդրեք դասարանում երգել «Աստծո Սրբեր» օրհներգի 1, 2, 3 և 7 քառյակները (*Օրհներգեր,* հ. 85):

   բ. Նախապատրաստվեք դասարանի անդամների հետ միասին երգել կամ կարդալ “How Firm a Foundation” օրհներգի 1, 2, 3 և 7 քառյակները:

   գ. Երեխաների Խմբի սաներին խնդրեք գալ դասարան և երգել «Իմաստուն մարդը և հիմար մարդը» երգը (*Երեխաների Երգահան,* 281): Նախօրոք դրա մասին պայմանավորվեք Երեխաների Խմբի ղեկավարների և ուսուցիչների հետ:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ներկայացրեք ձեր պատրաստած ելույթը (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 2):

Օրհներգի կամ երգի կատարումից հետո, բացատրեք, որ այսօրվա դասը բացահայտում է տարբերությունները այն մարդկանց միջև, որոնք թույլ հիմք են կառուցում, օրինակ՝ որոնք վստահում են նյութական կամ ֆիզիկական ուժին, և այն մարդկանց միջև, որոնք կառուցում են իրենց հիմքը «Քավիչի վեմի վրա, . . . որը հաստատուն հիմք է» (Հելաման 5.12):

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես են այդ սուրբ գրությունները վերաբերվում առօրյա կյանքին: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ներքին խռովություններն աճում են Նեփիացիների մեջ:

Քննարկեք Հելաման 1–2: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ Պառրանը, որը գլխավոր դատավորն էր, մահացավ, և նրա որդիներից երեքը՝ Պառրանը, Պաանքին և Պակումենին, մրցեցին դատավորի աթոռի համար (Հելաման 1.1–4):

- Ինչպե՞ս արձագանքեցին Պաանքին և Պակումենին, երբ Պառրանն ընտրվեց լինելու գլխավոր դատավոր: (Տե՛ս Հելաման 1.5–7:) Ի՞նչ պատահեց Պաանքիի ըմբոստության արդյունքում: (Տե՛ս Հելաման 1.8–13:)
- Նրանից հետո, երբ Պակումենին դարձավ գլխավոր դատավոր, Լամանացիներն եկան պատերազմելու Նեփիացիների դեմ (Հելաման 1.13–17): Ինչո՞ւ էին Նեփիացիներն անպատրաստ պաշտպանելու իրենց Լամանացիների հարձակումներից: (Տե՛ս Հելաման 1.18) Ինչպե՞ս են խռովությունները թուլացնում ազգերը և համայնքները, ծխերը և ցցերը, ընտանիքները և անհատներին: Ի՞նչ կարող ենք անել հակառակություններից խուսափելու կամ դրանք հաղթահարելու համար:
- Գադիանթոնը, որը «մեծ գիտակ էր ճարտարախոսության մեջ, և նաև՝ իր նենգության մեջ», դարձավ Կիսկումեն երկրի առաջնորդը (Հելաման 2.4): Ի՞նչ խոստացավ Գադիանթոնը Կիսկումենի հետևորդներին, որպեսզի նրանք հետևեցին իրեն: (Տե՛ս Հելաման 2.5; տե՛ս նաև Հելաման 5.8:) Ինչո՞ւ են մարդիկ երբեմն ազդվում շողոքորթությունից և իշխանության խոստումներից: Ինչպե՞ս կարող ենք խուսափել նման ազդեցություններից:

2. Հազարավոր մարդիկ միանում են Եկեղեցուն, Եկեղեցու որոշ անդամներ բարձրամտանում են հպարտությունից:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 3-ից:

- Հելաման 3 տալիս է Նեփիացիների 11 տարիների պատմությունը: Այդ 11 տարիների ընթացքում, Նեփիացիները ապրել են ինչպես խաղաղության, այնպես էլ հակառակությունների ժամանակներ: Ի՞նչը խախտեց Նեփիացիների խաղաղությունը այդ տարիների ընթացքում: (Տե՛ս Հելաման 3.1, 33–34:) Ո՞րն էր Նեփիացիների հպարտության պատճառը: (Տե՛ս Հելաման 3.36:) Ինչպե՞ս հպարտությունը կարող է խաթարել մեր խաղաղ կյանքը: Ի՞նչ կարող ենք անել հպարտությունից պաշտպանվելու համար: (Տե՛ս Հելաման 3.27–30; տե՛ս նաև Երկրորդ Օրինաց 8.11, 17–18; Ալմա 62.48–51:)
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 3.29: Ի՞նչ է նշանակում «կառչած մնալ Աստծո խոսքից»: Ինչպե՞ս կարող ենք օրինվել, եթե «կառչած մնանք Աստծո խոսքից»: (Տե՛ս Հելաման 3.27–30; տե՛ս նաև 1 Նեփի 11.25; 15.24:)
- 51-րդ տարում Եկեղեցու որոշ անդամներ սկսեցին հալածել մյուսներին (Հելաման 3.33–34): Ինչպե՞ս արձագանքեցին Քրիստոսի խոնարհ ծառաները Եկեղեցու հպարտ անդամների հալածանքին: (Տե՛ս Հելաման 3.35:) Ինչպե՞ս կարող է նրանց օրինակը մեզ օգնել հալածանքներին, քննադատությանը կամ դժվարություններին հանդիպելիս:
- Եկեղեցու խոնարհ անդամները սրբագործվեցին, որովհետև իրենց սրտերը ենթարկեցին Աստծուն (Հելաման 3.35): Ի՞նչ է սրբագործումը: (Մի գործընթաց, որի միջոցով կարելի է դառնալ մաքուր, անարատ և ազատ մեղքից Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ: Տե՛ս Վ. և Ու. 76.41; 88.74–75:) Ի՞նչ է նշանակում ենթարկել մեր սրտերը Աստծուն:

3. Լամանացիները և Նեփիացի պառակտիչները հաղթում են Նեփիացիներին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 4-ից:

- Նեփիացի պառակտիչները Լամանացիներին համոզում են պատերազմել Նեփիացիների դեմ: Լամանացիները պատերազմում են Նեփիացիների դեմ և ձեռք են բերում նրանց հողերի մեծ մասը (Հելաման 4.5): Ըստ Մորմոնի, որը կրճատել էր Հելամանի

գիրքը, ո՞րն էր Նեփիացիների թուլությունների պատճառը: (Տե՛ս Հելաման 4.11–13:) Ինչպիսի՞ զուգահեռներ կարելի է անցկացնել Նեփիացիների և մեր օրերի շատ մարդկանց վարքագծի միջև: Ընդունելով այն փաստը, որ մենք կախված ենք Տիրոջից, ինչպե՞ս կարող ենք զորանալ:

- Մորոնիան, Լեքին և Նեփին մարգարեացան «ժողովրդին շատ բաներ . . . իրենց անօրինությունների վերաբերյալ, և ինչ պիտի պատահեր նրանց, եթե նրանք չապաշխարեին իրենց մեղքերից» (Հելաման 4.14): Ի՞նչ պատահեց, երբ մարդիկ սկսեցին ապաշխարել: (Տե՛ս Հելաման 4.15–16; տես նաև հատվածներ 21–26:)

4. Նեփին և Լեքին հիշում են իրենց հոր խորհուրդը: Հրաշքներն այցելում են նրանց ծառայության ժամանակ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 5-ից:

- Ինչո՞ւ Նեփին հրաժարվեց դատավորի աթոռից Աստծո խոսքը քարոզելու համար: (Տե՛ս Հելաման 5.1–4:) Ի՞նչ հիշեցին Նեփին և Լեքին այն մասին, թե ինչ էր իրենց հայրը նրանց ասել իրենց անունների վերաբերյալ: (Տե՛ս Հելաման 5.5–7:) Ինչպե՞ս են ձեզ օգնել մարգարեների, Եկեղեցու այլ ղեկավարների և այլ արդար մարդկանց օրինակները:
- Ի՞նչ էր սովորեցնում Հելամանն իր որդիներին Հիսուս Քրիստոսի Քավության մասին: (Տե՛ս Հելաման 5.9–11:)
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 5.12: Ի՞նչ է նշանակում կառուցել Քրիստոսի վեմի վրա: (Տե՛ս նաև 3 Նեփի 14.24–27:) Ինչպիսի՞ հզոր քամիներ և փոթորիկներ է ուղարկում Սատանան մեզ վրա: Ինչպե՞ս կարող է Քրիստոսն օգնել մեզ դիմակայել այդ քամիներին և փոթորիկներին:
- Ինչո՞ւ ենք մենք համարում Քրիստոսին մեր վեմը: Բացի Քիրստոսից, ինչպիսի՞ այլ վեմերի վրա են մարդիկ երբեմն կառուցում իրենց կյանքը: Ինչպե՞ս եք օրհնվել, երբ ձեր հիմքը կառուցել եք Քրիստոսի վեմի վրա:
- Ի՞նչ մեծ հրաշքներ տեղի ունեցան Զարահեմլայում, երբ Նեփին և Լեքին քարոզում էին այնտեղ ավետարանը: (Տե՛ս Հելաման 5.17–19:) Ինչո՞ւ էր կարևոր, որպեսզի Լամանացիները հրաժարվեին «իրենց հայրերի ավանդությունների ամբարշտությունից»: (Տե՛ս Հելաման 5.19, 51; տե՛ս նաև Մոսիա 1.5:)

  Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է. «Ես վկայում եմ, որ դուք կվերացնեք երջանկության խոչընդոտները և ավելի մեծ խաղաղություն կգտնեք, եթե ձեզ համար առաջին տեղում դնեք ձեր հավատարմությունը Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն և Նրա ուսմունքները դարձնեք ձեր կյանքի հիմքը: Երբ ընտանիքը, ազգային ավանդույթները կամ սովորությունները հակասում են Աստծո ուսմունքներին, ապա այդ սովորույթները մի կողմ դրեք: Երբ ավանդույթները և սովորությունները Նրա ուսմունքների հետ ներդաշնակության մեջ են գտնվում, ապա փայփայեք և հետևեք դրանց, որպեսզի պահպանեք ձեր մշակույթը և ժառանգությունը: Մի ժառանգություն կա, որը դուք երբեք չպետք է փոխեք: Դա այն ժառանգությունն է, որը գալիս է Երկնային Հոր որդին կամ դուստրը լինելուց» (in Conference Report, Apr. 1998, 114; or *Ensign,* May 1998, 87):
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 5.21–32: Ի՞նչ պատահեց, երբ մարդիկ սկսեցին ապաշխարել: (Տե՛ս Հելաման 5.43–45:) Ինչպե՞ս Սուրբ Հոգին վկայություն բերեց մարդկանց: (Տե՛ս Հելաման 5.45–47:) Ինչպե՞ս է Սուրբ Հոգին ձեզ վկայել ճշմարտության մասին:
- Ի՞նչ արեցին մարդիկ, երբ ստացան Փրկչի մասին վկայությունը: (Տե՛ս Հելաման 5.49–52:) Ո՞րն է մեր պատասխանատվությունը նրանից հետո, երբ մենք վկայություն ենք ստանում Հիսուս Քրիստոսի աստվածային և փրկող զորության մասին: (Տե՛ս Վ. և Ու. 33.9; 88.81:)

Եզրափակում

Դասարանի անդամներից մեկին խնդրեք կրկին բարձրաձայն կարդալ Հելաման 5.12: Շեշտեք, որ մենք կարող ենք պաշտպանվել հպարտությունից, հակառակություններից և Սատանայի հզոր քամիներից. եթե կառուցենք մեր հիմքը Հիսուս Քրիստոսի վեմի վրա:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք այս դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք այն օգտագործել որպես դասի մաս:

1. «Հիշե՛ք, հիշե՛ք, ի՛մ որդիներ» (Հելաման 5.5–14)

- Մորմոնի Գրքում *հիշել* բառի ավելի քան 240 տարբերակներ կամ ձևեր են օգտագործվում (օրինակ, *հիշվել, հիշողություն կամ չմոռանալ*): Այդ բառի տասնհինգ օրինակներ օգտագործվում են Հելաման 5-ում: Ի՞նչ մենք պետք է հիշենք: (Տե՛ս Հելաման 5.9; տե՛ս նաև Մոսիա 3.17:) Ինչո՞ւ է դա կարևոր հիշել:

  Երեց Սպենսեր Վ. Քիմբալն ասել է.

  «Երբ նայում եք բառարանի մեջ ամենակարևոր բառը գտնելու համար, գիտե՞ք արդյոք, որն է դա: Դա կարող է լինել «հիշել» բառը»: Քանի որ մենք բոլորս ուխտեր ենք կապել . . . մեր մեծագույն կարիքը հիշելն է: Այդ պատճառով Հանգստի Օրը ամեն մեկս գնում ենք հաղորդության ժողովի՝ ընդունելու հաղորդությունը և լսելու, թե ինչպես են քահանաներն աղոթում, «որ բոլորս հիշենք նրան և պահենք նրա պատվիրանները, որ նա տվել է մեզ . . .» . . . «Հիշել»-ն է բառը» (“Circles of Exaltation” [ուղղված կրոնական ուսուցիչներին, Բրիգամ Յանգի Համալսարան, 28 Հունիս 1968], 8):

2. «Իրենց սրտերն Աստծուն ենթարկելուց» (Հելաման 3.35)

Հելաման 3.35-ը քննարկելիս կիսվեք Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ խոսքերով.

«Միայն ենթարկվելով Աստծուն մենք կարող ենք սկսել հասկանալ Նրա կամքը մեր վերաբերյալ: Եվ, եթե մենք իսկապես ապավինում ենք Աստծուն, ինչո՞ւ չենթարկվենք Նրա սիրող ամենագիտությանը: Վերջ-ի-վերջո Նա գիտի մեզ և մեր հնարավորությունները շատ ավելի լավ, քան մենք ինքներս» (in Conference Report, Apr. 1985, 91; կամ *Ensign,* Մայիս 1985, 72):

Դաս
34

«Ինչպես կարողացաք մոռանալ ձեր Աստծուն»

Հելաման 6–12

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ արդարությունից դեպի անարդարություն, և անարդարությունից դեպի արդարություն տանող շրջանը:

Նախապատ-րաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Հելաման 6.1–14: Լամանացիները դառնում են Նեփիացիներից ավելի արդար: Մարդիկ օրհնվում են խաղաղությամբ և բարեկեցությամբ:

   բ. Հելաման 6.15–10.1: Նեփիացիները դառնում են հպարտ և ամբարիշտ: Նեփիին մարդկանց ապաշխարության է կոչ անում: Ականատես լինելով գլխավոր դատավորի սպանության իրադարձություններին ոմանք ընդունում են Նեփիին որպես մարգարե, սակայն շատերը մնում են առանց ապաշխարելու:

   գ. Հելաման 10.2–11.6: Տերը Նեփիին կնքելու զորություն է տալիս: Նեփին Տիրոջը խնդրում է խրատել ժողովրդին սով ուղարկելով նրանց վրա:

   դ. Հելաման 11.7–38; 12: Նեփիացիները խոնարհեցնում են իրենց և ապաշխարում են: Տերն ի պատասխան Նեփիացիների խնդրանքին անձրև է ուղարկում և կրկին օրհնում Նեփիացիներին խաղաղությամբ և բարեկեցությամբ: Մորմոնը նկարագրում է արդարության և անարդարության ցիկլը և ասում է, թե ինչպես կարելի է այն խախտել:

2. Պատրաստեք հետևյալ բառաշերտերը.

Արդարություն և Բարեկեցություն
Հպարտություն և Ամբարշտություն
Կործանում և Տառապանքներ
Խոնարհություն և Ապաշխարություն

Եթե չեք ցանկանում օգտագործել բառաշերտերը, գրեք խոսքերը գրատախտակին:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրեք հետյալ համարները գրատախտակին. *2, 3, 5, 8, 12*

Նշեք, որ այս թվերը որոշակի հերթականություն ունեն: Դասարանի անդամներին հարցրեք, թե որոնք պետք է լինեն հաջորդ երեք թվերը: (Հաջորդ երեք թվերը պետք է լինեն 17, 23 և 30:

Կարիք կլինի բացատրելու, որ ամեն հաջորդ թիվը ստացվում է հետևյալ կերպ. առաջին թվին գումարվում է 1; երկրորդին՝ 2, երրորդին՝ 3, և այդպես շարունակ:)

Բացատրեք, որ Մորմոնի Գրքում կա մի հերթականություն, որը գրեթե կանխատեսելի է, ինչպես և այս թվերը: Այն կրկնվում է մի քանի անգամ: Հասկանալով այդ կառուցվածքը, մենք կարող ենք խուսափել այն բաներից, որոնք Նեփիացիներին տարան կործանման:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

Այս դասը բաժանված է չորս մասերի: Ամեն բաժին կապված է հպարտության ցիկլի մեկ փուլի հետ: Նշված պահին գրատախտակին փակցրեք յուրաքանչյուր բաժնին համապատասխանող բառաշերտերը: Սլաքներ նկարեք բառաշերտերն իրար հետ միացնելու համար, ինչպես ցույց է տրված ստորև.



1. Մարդիկ արդար են և օրհնվում են խաղաղությամբ և բարեկեցությամբ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 6.1–14: Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Նեփին և Լեքին միսիոներներ են եղել Լամանացիների մեջ և նրանցից շատերին օգնել են ապաշխարել և մկրտվել: Լամանացիները շուտով դարձան ավելի արդար, քան Նեփիացիները:

- Լամանացիների ո՞ր հատկանիշները նրանց օգնեցին դառնալ շատ Նեփիացիներից ավելի արդար: (Տե՛ս Հելաման 6.1:) Դարձի եկած Լամանացիներն ինչպե՞ս փորձեցին օգնել Նեփիացիներին: (Տե՛ս Հելաման 6.4–6:) Ո՞րն էր արդյունքը: (Տե՛ս Հելաման 6.7–14:)

Գրատախտակին փակցրեք *Արդարություն և Բարգավաճում* բառաշերտը:

2. Նեփիացիները դառնում են հպարտ և ամբարիշտ: Նեփին նրանց կոչ է անում ապաշխարության:

Քննարկեք Հելաման 6.15–10.1: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Նշեք, որ բարեկեցիկ դառնալուց հետո շատ Նեփիացիներ սկսեցին մոռանալ Աստծուն և որոնել հարստություն և աշխարհիկ այլ բաներ:

Գրատախտակին փակցրեք *Հպարտություն և Ամբարշտություն* բառաշերտը:

- Ինչո՞ւ է բարեկեցությունը հաճախ տանում դեպի ամբարշտություն: (Տե՛ս Հելաման 6.17; 7.20–21:)

- Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Հելաման 6.21–24 և 7.4–5 և գտնել Գադիանթոնի ավազակներին բնորոշ հատկանիշները: Այդ հատկանիշներից որոնք են առկա մեր օրերում: Ինչպե՞ս կարող ենք մեր համայնքներում պատշաճ ձևով պայքարել չարիքի դեմ:
- Ո՞վ էր գաղտնի խմբակցությունների աղբյուրը: (Տես Հելաման 6.25–30:) Ի՞նչ արեցին Նեփիացիները, երբ Սատանան «մեծ ազդեցություն էր ձեռք բերել (նրանց) սրտերի վրա»: (Տե՛ս Հելաման 6.31:)

Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Հելաման 6.34–38, և գտնել Նեփիացիների և Լամանացիների միջև եղած տարբերությունները: Դասարանի անդամների պատասխանները կարող եք ամփոփել գրատախտակի վրա մի սխեմայի տեսքով, որի օրինակը տրվում է ստորև.

ՆԵՓԻԱՑԻՆԵՐ	ԼԱՄԱՆԱՑԻՆԵՐ
Ընկան անհավատության մեջ (հատված 34):	Աճեցին Աստծո գիտության մեջ (հատված 34):
Աճել էին ամբարշտության և պղծությունների մեջ (հատված 34):	Քայլում էին ճշմարտության և ուղղամտության մեջ Աստծո առջև (հատված 34):
Կորցրեցին Տիրոջ Հոգու առաջնորդությունը (հատված 35):	Ստացան Սուրբ Հոգին (հատված 36):
Զորացրեցին և աջակցեցին Գադիանթոնի ավազակներին (հատված 38):	Քարոզեցին Աստծո խոսքը Գադիանթոնի ավազակներին (հատված 37):

- Ինչո՞ւ Սուրբ Հոգին «ետ քաշվեց Նեփիացիներից»: (Տե՛ս Հելաման 6.35:) Ինչո՞ւ Տերը «դուրս թափեց իր Հոգին Լամանացիների վրա»: (Տե՛ս Հելաման 6.36:) Ի՞նչ սա կարող է մեզ սովորեցնել այն մասին, թե ինչպես մենք կարող ենք ստանալ Սուրբ Հոգու ազդեցությունը:

Բացատրեք, որ, երբ Նեփիացիները շարունակեցին իրենց ամբարշտությունները, Տերը Հելամանի որդի Նեփիին ուղարկեց՝ նրանց ապաշխարության կոչ անելու: Երբ Նեփին տեսավ մարդկանց անօրինությունները, «նրա սիրտը լցվեց վշտով» (Հելաման 7.6): Իր պարտեզի աշտարակի վրա նա ծնկի իջավ աղոթելու: Երբ նա իր հոգին էր թափում Աստծո առաջ, մարդկանց մի խումբ հավաքվեց, ցանկանալով իմանալ, թե ինչու էր նա ողբում մարդկանց անօրինությունների համար (Հելաման 7.11):

Դասարանի անդամներից մեկին, որին նախօրոք հանձնարարություն էիք տվել, խնդրեք համառոտ պատմել Հելաման 7.13–29; 8; 9-ում նկարագրված իրադարձությունները:

- Ինչպե՞ս արձագանքեցին մարդիկ, երբ Նեփին նախատեց նրանց իրենց անօրինությունների համար: (Տե՛ս Հելաման 8.1–10:) Ինչո՞ւ այդքան շատ մարդիկ մնացին առանց ապաշխարելու:
- Ինչպե՞ս մարդիկ արձագանքեցին, երբ Սեանթումը խոստովանեց, որ սպանել է իր եղբորը՝ գլխավոր դատավորին: (Տե՛ս Հելաման 9.39–10.1:) Նեփիի մարգարե կամ աստված լինելու վերաբերյալ վիճելուց հետո մարդիկ հեռացան, թողնելով նրան միայնակ: Ի՞նչը կարող է մեզ թույլ չտալ լսել վերջին օրերի մարգարեներին:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Մարգարեին հետևելու հետ կապված խնդիր ունեցող երկու խմբերից մեկը հպարտ ու կրթված խումբն է, մյուսը՝ հպարտ ու հարուստ: Կրթվածները կարծում են, թե մարգարեն ոգեշնչում է ստացել, միայն, եթե նա

համաձայնվում է իրենց հետ, հակառակ դեպքում, մարգարեն միայն հայտնում է իր կարծիքը, խոսելով ընդամենը որպես մի մարդ: Հարուստներին կարող է թվալ, թե իրենք կարիք չունեն լսելու ավելի ցածր դիրք ունեցող մարգարեին» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 138):

3. Տերը Նեփիին կնքելու զորություն է տալիս: Չապաշխարած Նեփիացիները պատերազմ և սով են տեսնում:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 10.2–11.6-ից: Նշեք, որ Նեփիացիները մոռացան Տիրոջը և շարունակեցին իրենց անօրինությունները: Իրենց անօրինությունների պատճառով մարդիկ ենթարկվեցին սաստիկ տառապանքների և կործանման:

- Տերը Նեփիին պարգևեց կնքելու զորություն, ասելով. «բոլոր բաները կարվեն քեզ՝ համաձայն քո խոսքի» (Հելաման 10.5–10): Ինչո՞ւ Տերը Նեփիին այդպիսի մեծ զորություն վստահեց: (Տե՛ս Հելաման 10.4–5:)
- Ի՞նչ պատահեց մարդկանց, երբ նրանք մերժեցին Նեփիին և չհնազանդվեցին Աստծուն: (Տե՛ս Հելաման 10.18–11.2:) Ինչի՞ համար աղոթեց Նեփին՝ օգնելու մարդկանց հիշել Տիրոջը և ապաշխարել: (Տե՛ս Հելաման 11.4:) Ինչո՞ւ Նեփին աղոթեց սովի համար, այլ ոչ թե պատերազմի: (Տե՛ս Հելաման 11.4:) Ինչպե՞ս տրվեց Նեփիի աղոթքի պատասխանը: (Տե՛ս Հելաման 11.5–8:)

Գրատախտակին փակցրեք *Կործանում և Տառապանքներ* բառաշերտը:

4. Նեփիացիները խոնարհեցնում են իրենց և ապաշխարում:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 11.7–38; 12-ից: Բացատրեք, որ սովի տառապանքները և կործանումը ազդեցին Նեփիացիների վրա, և նրանք շրջվեցին դեպի Տերն օգնության համար: Նրանք խոնարհեցրեցին իրենց և ապաշխարեցին:

Գրատախտակին փակցրեք *Խոնարհություն և Ապաշխարություն* բառաշերտը:

- Ի՞նչ մենք կարող ենք սովորել սովը դադարեցնելու Նեփիի աղոթքին տված Տիրոջ պատասխանից: (Տե՛ս Հելաման 11.10–17:) Ի՞նչ մարդկանցից պահանջեց Տերը սովը դադարեցնելուց առաջ: (Տե՛ս Հելաման 11.14–15:)
- Ինչպե՞ս մարդիկ մեկ անգամ ևս օրհնվեցին իրենց հավատարմության համար: (Տե՛ս Հելաման 11.20–21:)
- Ո՞րն էր խոնարհության և արդարության այդ կարճատև ժամանակահատվածի ավարտի առաջին նշանը: (Տե՛ս Հելաման 11.22:) Ինչպե՞ս Նեփին, Լեքին և նրանց եղբայրները դրեցին այդ հակառակությունների վերջը: (Տե՛ս Հելաման 11.23:) Ինչպե՞ս կարող է «վարդապետության ճշմարիտ կետերի» ուսուցանումը օգնել մեզ վերջ դնել հակառակություններին:
- Անօրինությունների և պատերազմների հաջորդ ժամանակահատվածը օգնեց մարդկանց ապաշխարել և դառնալ դեպի Տերը: (Տե՛ս Հելաման 11.28–34:) Երբ մենք շրջապատված ենք լինում անօրինություններով, ի՞նչ կարող ենք անել Տիրոջը միշտ հիշելու համար:
- Երկու տարի անց Նեփիացիները «սկսեցին կրկին մոռանալ Տիրոջը՝ իրենց Աստծուն» (Հելաման 11.36): Ձեր կարծիքով, ինչո՞ւ են մարդիկ այդքան արագ մոռանում Տիրոջը: Ինչպե՞ս ենք մենք մոռանում Տիրոջն այսօր:
- Մորմոնն ասել է, որ «մարդկանց զավակները . . . ավելի չնչին են, քան հողի փոշին» (Հելաման 12.7): Ինչի՞ հիման վրա է նա արել այս հայտարարությունը: (Դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ Հելաման 12.1–6, 8 հատվածները:)

- Մենք ազատ ենք՝ հնազանդվելու կամ չհնազանդվելու Աստծո պատվիրաններին, սակայն ազատ չենք՝ ընտրելու մեր արարքների հետևանքները: Ըստ Մորմոնի, ինչպիսի՞ն կլինի անհնազանդների ճակատագիրը: (Տե՛ս Հելաման 12.25–26:) Ինչպիսի՞ն կլինի նրանց ճակատագիրը, ովքեր ապաշխարում են և հնազանդվում Տիրոջ պատվիրաններին: (Տե՛ս Հելաման 12.23–24, 26:)
- Դասարանի անդամների ուշադրությունը դարձրեք գրատախտակի վրա պատկերված շրջանին: Ինչպե՞ս մարդիկ կարող են խախտել այս շրջանը: (Տե՛ս Ալմա 62.48–51; Հելաման 12.23–24:)

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Որոնե՛ք ճշմարիտ բաներ, ոչ թե արհեստական: Որոնե՛ք հավերժական ճշմարտություններ, ոչ թե անցողիկ քմահաճույքներ: Որոնե՛ք Աստծո հավերժական բաները, ոչ թե այնպիսի բաներ, որոնք այսօր կան, իսկ չկան վաղը: Նայե՛ք Աստծուն և ապրե՛ք» (*Teachings of Gordon B. Hinckley* [1997], 494):

Եզրափակում

Կարդացեք Երեց Գորդոն Բ. Հինքլիի հետևյալ խոսքերը Մորմոնի Գրքի մասին.

«Չկա որևէ այլ գրված վկայություն, որն այդքան պարզ պատկերի այն փաստը, որ, երբ մարդիկ և ազգերը Աստծո առաջ վախի մեջ են քայլում և հնազանդվում Նրա պատվիրաններին, ապա բարգավաճում և աճում են, սակայն, եթե անտեսում են Նրան և Նրա խոսքը, ապա անկում են ապրում, որը, եթե չկանգնեցվի արդարության կողմից, տանում է դեպի թուլություն և մահ» (in Conference Report, Oct. 1979, 10; or *Ensign,* Նոյ. 1979, 8):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. Խուսափել հպարտության շրջանից:

Դասարանի անդամներին խնդրեք մտածել մի անհեթեթ սխալի կամ ընտրության մասին, որի համար նրանք ամաչել են: Այնուհետև նրանց հարցրեք, թե ինչ են արել այդ սխալը չկրկնելու համար: Դասարանի անդամներին հնարավորություն տվեք կիսվել իրենց զգացմունքներով:

Քննարկեք, ինչու էին Նեփիացիները շարունակում այնպիսի որոշումներ ընդունել, որոնք նրանց հեռացնում էին արդարությունից, և արդյունքում տանում դեպի կործանում և տառապանքներ:

- Ի՞նչ կարող ենք սովորել Նեփիացիներից, որպեսզի խուսափենք նրանց կատարած սխալներից:

2. «Նրանք վկայել են Քրիստոսի գալստյան մասին» (Հելաման 8.22)

Բացատրեք, որ մարգարեները վկայել են Հիսուս Քրիստոսի մասին, ինչպես նաև երկնքի և երկրի բոլոր բաների մասին: Այնուհետև դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ Հելաման 8:11–24, փնտրելով Փրկչի մասին վկաներին: Որպես այդ քննարկման մաս կարող եք հատուկ ուշադրություն դարձնել Մովսեսի պղնձե օձի պատմությանը:

- Ի՞նչ էր խորհրդանշում պղնձե օձը: (Տե՛ս Հելաման 8.13–15; տե՛ս նաև Թուոց 21.6–9; Հովհաննես 3.14–16:) Ինչպե՞ս մենք կարող ենք մեծացնել Քրիստոսի հանդեպ մեր հավատքը: Ինչպե՞ս է ձեր կյանքի վրա ազդել Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ ունեցած ձեր հավատքը:

Որպես այս քննարկման ամփոփում կարող եք կարդալ Եկեղեցու ներկայիս մարգարեի վկայությունը, օգտվելով համաժողովի նյութերը պարունակող *Ensign* ամսագրի վերջին համարներից:

«Ապաշխարել ու վերադառնալ դեպի Տերը»

Դաս
35

Հելաման 13–16

Նպատակ

Հիշեցնել դասարանի անդամներին ապաշխարելու, դեպի Տերը դառնալու և մարգարեներին հետևելու կարևորության մասին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Հելաման 13: Սամուէլ անունով մի Լամանացի մարգարե մարգարեանում է այն մասին, որ Նեփիացիները կկործանվեն, եթե չապաշխարեն:

   բ. Հելաման 14: Սամուէլը մարգարեանում է այն նշանների մասին, որոնք պետք է նախորդեն Փրկչի ծննդին և մահվանը: Նա շարունակում է մարդկանց ապաշխարելու կոչ անել:

   գ. Հելաման 15–16: Սամուէլը Նեփիացիներին պատմում է Լամանացիների դարձի գալու մասին: Որոշ Նեփիացիներ հավատում են Սամուէլին և մկրտվում են: Մյուսները կարծրացնում են իրենց սրտերը և փորձում են սպանել Սամուէլին, սակայն Նա պաշտպանված էր Աստծո զորությամբ:

2. Եթե առկա է «Սամուէլ Լամանացին պատի վրա» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ընթացքում (62370; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 314):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին խնդրեք պատկերացնել մի վաճառողի, որը վաճառելու միայն մի բան ունի՝ թշվառություն:

- Ի՞նչ կարող է անել այդ վաճառողն իր ապրանքը վաճառելու համար: (Նա կարող է այնպես անել, որ թշվառությունը գրավիչ տեսք ունենա կամ կարող է խաբել մարդկանց, հավատացնելով նրանց, որ դա նրանց երջանկություն կպատճառի, ոչ թե՝ թշվառություն:)
- Սատանան բացի թշվառությունից առաջարկելու ոչինչ չունի (2 Նեփի 2.17–18, 27): Ինչպե՞ս կարող է սատանան թշվառությանը և մեղքին հրապուրիչ տեսք տալ: Ինչպե՞ս է նա փորձում մարդկանց համոզել, որ երջանկությունը և արդարությունը հրապուրիչ չեն:

Բացատրեք, որ այս դասի ժամանակ դուք կքննարկեք Լամանացի մարգարե Սամուէլի մարգարեությունները: Սամուէլը քարոզում էր Նեփիացիների մի խմբի, ովքեր անձնատուր էին եղել Սատանայի գայթակղություններին: Նրանք «փնտրել են երջանկություն անօրինություն անելու մեջ», ինչը հակասում է Աստծո էությանը (Հելաման 13.38):

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Սաուէլը Նեփիացիներին զգուշացնում է, որ նրանք կկործանվեն, եթե չապաշխարեն:

Քննարկեք Հելաման 13: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ Սամուէլ անունով Լամանացի մի մարգարե գնաց Զարահեմլա քարոզելու, սակայն Նեփիացիները դուրս գցեցին նրան երկրից: Տերը Սամուէլին կարգադրեց վերադառնալ Զարահեմլա և մարգարեանալ: Երբ Նեփիացիները թույլ չտվեցին Սամուէլին մտնել քաղաք, նա կանգնեց քաղաքի պատի վրա և սկսեց մարգարեանալ նրանց համար (Հելաման 13.1–4): Ցուցադրեք Սամուէլի նկարը դասի ընթացքում:

- Սամուէլը մարդկանց նախազգուշացրեց, որ իրենց սրտերի կարծրության պատճառով Տերը ետ կվերցնի Իր խոսքը և կհեռացնի Իր Հոգին նրանցից (Հելաման 13.8): Ինչո՞ւ են նման փորձությունների ենթարկվում այն մարդիկ, ովքեր կարծրացնում են իրենց սրտերը: (Տե՛ս Մոսիա 2.36–37:) Ի՞նչ մենք կարող ենք անել մեր սրտերը փափկացնելու համար:

- Սամուէլ մարգարեի միջոցով Տերն ասել է.«Օրհնված են նրանք, ովքեր կապաշխարեն ու կդառնան դեպի ինձ» (Հելաման 13.11): Ինչպե՞ս որոշ մարդիկ կարող են փորձել ապաշխարել առանց դառնալու դեպի Տերը: Ինչո՞ւ է դեպի Տերը դառնալն ապաշխարության կարևոր մասը հանդիսանում:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը սովորեցրել է.

  «Ապաշխարությունն ավելին է, քան պարզապես վարքի ուղղումը: Շատ տղամարդիկ և կանայք մեծ կամք և կարգապահություն են դրսևորում վատ սովորությունները և մարմնի թուլությունները հաղթահարելու ընթացքում: Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ նրանց միտքը ուղղված չի լինում Տիրոջը, երբեմն բացահայտորեն նրանք ժխտում են Նրան: Վարքի նման փոփոխությունները, եթե անգամ դրական ուղղվածություն ունեն, չեն տանում դեպի ճշմարիտ ապաշխարության: . . .

  . . . Ճշմարիտ ապաշխարությունը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի վրա և բխում է դրանից: Չկա որևէ այլ ճանապարհ: Ճշմարիտ ապաշխարությունը իր մեջ ներառում է սրտի փոփոխություն, այլ ոչ թե միայն վարքի փոփոխություն (տե՛ս Ալմա 5.13)» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 71):

- Նեփիացիները «դրել են իրենց սրտերը հարստությունների վրա» (Հելաման 13.20–21): Բացի դա, նրանք ականջ չեն դրել Տիրոջ խոսքերին, որը տվել է իրենց այդ հարստությունները (Հելաման 13.21): Այդ պատճառով Նեփիացիները և նրանց հարստությունները անիծվել էին (Հելաման 13.17–22): Ինչպե՞ս են մարդիկ ավելի շատ ուշադրություն և ժամանակ տրամադրում աշխարհիկ հոգսերին, քան հոգևոր մտահոգություններին: Ինչպե՞ս մենք կարող ենք գնահատել, արդյոք մենք բավականաչափ ուշադրություն ենք տրամադրում մեր հոգևոր բարեկեցությանը:

- Սամուէլն ասում էր, որ Նեփիացիները միշտ հիշում էին իրենց հարստությունները, սակայն երբեք չէին հիշում շնորհակալություն հայտնել Տիրոջն այդ հարստությունների համար (Հելաման 13.22): Ինչո՞ւ է որոշ մարդկանց համար դժվար պահպանել երախտագիտության զգացումը, երբ նրանք օրհնված են առատությամբ: Ինչպե՞ս է երախտագիտությունը հակազդում հպարտությանը: Ինչպե՞ս մենք կարող ենք ցույց տալ Տիրոջ հանդեպ մեր երախտագիտությունը:

- Նեփիացիները հալածեցին և սպանեցին իրենց օրերի մարգարեին, սակայն ասացին. «Եթե մեր օրերը եղած լինեին հնում, մեր հայրերի օրոք, մենք չէինք սպանի մարգարեներին» (Հելաման 13.24–25; համեմատեք Մաթեոս 23.29–39): Ինչո՞ւ են մարդիկ երբեմն գովք տալիս անցյալի մարգարեներին և ժխտում կենդանի մարգարեներին: (Տե՛ս Հելաման 13.26:) Ինչպե՞ս են որոշ մարդիկ հանդուրժում՝ «առաջնորդվելու թույլ և կույր առաջնորդների կողմից»: (Տե՛ս Հելաման 13.27–29:)

- Ըստ Սամուէլի, Նեփիացիները փնտրել են երջանկություն անօրինություն անելու մեջ» (Հելաման 13.38): Ինչո՞ւ է անհնար գտնել ճշմարիտ երջանկություն մեղքի մեջ:

(Տե՛ս Հելաման 13.38; տե՛ս նաև Ալմա 41.10–11:) Ինչպե՞ս մենք կարող ենք ճշմարիտ երջանկություն գտնել: (Բացի անդամների պատասխանները հարցնելուց, կարող եք ընթերցել հաջորդ էջի վրա տրված մեջբերումը:) Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել ուրիշներին ճշմարիտ երջանկություն ձեռք բերել:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Երջանկությունը մեր գոյության մտադրությունն ու նպատակն է. և կհարատևի մինչև վերջ, եթե հետևենք այն ուղիով, որը տանում է դեպի այն, իսկ այդ ուղին է առաքինությունը, արդարամտությունը, հավատարմությունը, սրբությունը և Աստծո բոլոր պատվիրանները պահելը» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 255–56):

2. Սամուէլը մարգարեանում է այն նշանների մասին, որոնք պետք է նախորդեին Փրկչի ծննդին և մահվանը:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 14-ից:

- Սամուէլը մարգարեանում էր Փրկչի ծննդի և մահվան վերաբերյալ (Հելաման 14.2, 15): Ըստ Սամուէլի ի՞նչ նշաններ կլինեն Փրկչի ծննդի և մահվան ժամանակ: (Տե՛ս Հելաման 14.3–7, 20–28: Այդ մարգարեությունները նշված են ուսուցանման լրացուցիչ մտքերում: Այդ մարգարեությունների իրականացումը կքննարկվի դաս 36-ում:)
- Սամուէլն ասաց, որ, եթե մարդիկ ապաշխարեն, ապա իրենց մեղքերի թողությունը կստանան Քրիստոսի արժանիքների միջոցով (Հելաման 14.13): Արժանիքներն այն հատկանիշներն են կամ գործերը, որոնք մարդուն արժանի են դարձնում պարգևատրման: Ինչո՞ւ միայն Փրկչի արժանիքների միջոցով մենք կարող ենք ստանալ մեր մեղքերի թողությունը: (Տե՛ս 2 Նեփի 2.7–9; Ալմա 22.14:)

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը սովորեցրել է. «Անգամ ամենաարդար և ազնիվ մարդը չի կարող փրկել ինքն իրեն իր արժանիքների միջոցով» (*The Teachings of Ezra Taft Benson,* 71):
- Ըստ Սամուէլի, ինչո՞ւ Հիսուսը պետք է մահանար: (Տե՛ս Հելաման 14.15–18:) Ինչպե՞ս է ձեզ վրա ազդում Փրկչի զոհաբերության մասին իմացությունը:
- Սամուէլն ասել է մարդկանց մասին. «Եթե նրանք դատապարտվում են, իրենք են իրենց վրա բերում իրենց իսկ դատապարտությունը» (Հելաման 14.29): Ինչո՞ւ է դա այդպես: (Տե՛ս Հելաման 14.30–31:) Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ մենք թույլատրված լինենք՝ գործելու ինքներս մեզ համար:

3. Որոշ մարդիկ հավատացին Սամուէլին և մկրտվեցին: Մյուսները կարծրացրեցին իրենց սրտերը և փորձեցին սպանել Սամուէլին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Հելաման 15–16-ից:

- Ինչո՞ւ Տերը խրատեց Նեփիացիներին: (Տե՛ս Հելաման 15.3; տե՛ս նաև Եբրայեցիս 12.6:) Ինչպե՞ս է Տիրոջ խրատը դրսևորում մեր հանդեպ Նրա սերը: Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ խրատից:

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հելաման 15.7–8: Միևնույն ժամանակ գրատախտակին նկարեք հետևյալ սխեման.



- Ի՞նչ ճանապարհներով կարող են ճշմարտության իմացությունը և սուրբ գրությունների հանդեպ հավատքը տանել դեպի հավատք և ապաշխարություն: Ինչպե՞ս կարող են հավատքը և ապաշխարությունը տանել դեպի սրտի փոփոխություն:
- Սրտի փոփոխություն ապրած Լամանացիները մնացին «կայուն և հաստատուն հավատքում» (Հելաման 15.8): Երբ մենք սրտի փոփոխություն ենք ապրում, ի՞նչ պետք է անենք որպեսզի այդ փոփոխությունը հարատև լինի: (Տե՛ս 2 Նեփի 31.19–20:)
- Ինչպե՞ս Նեփիացիներն արձագանքեցին Սամուէլի մարգարեություններին և նախազգուշացմանը: (Տե՛ս Հելաման 16.1–7:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ մարդիկ չհավատացին Սամուէլին, տեսնելով անգամ, որ նա հրաշալի ձևով պաշտպանված էր:
- Թեպետև նրանք տեսան, որ մարգարեի խոսքերն իրականանում էին, Նեփիացիների մեծ մասը սկսեցին կարծրացնել իրենց սրտերը և ապավինեցին իրենց սեփական ուժին և իմաստությանը (Հելաման 16.13–15): Ինչպե՞ս այդ անհավատ Նեփիացիները բացատրեցին իրենց տեսած նշանները: (Տե՛ս Հելաման 16.16–23:) Որո՞նք են միայն մեր խելքով ավետարանը հասկանալու վտանգները:

Եզրափակում

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Կարող եք օգտագործել ուսուցանման լրացուցիչ միտքը Սամուէլի մարգարեությունները վերանայելու համար և ցույց տալու, թե ինչպես կարող են այդ մարգարեությունների ուսումնասիրությունները մեզ օգնել պատրաստվել Փրկչի Երկրորդ Գալստին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք այն օգտագործել որպես դասի մաս:

Նախապատրաստություն Երկրորդ Գալստին

Կարդացեք Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Փրկչի գալստին նախորոշ Նեփիական պատմության մասին հիշատակարանը բազմաթիվ զուգահեռներն է բացահայտում կապված մեր օրերի հետ, երբ մենք սպասում ենք Փրկչի երկրորդ գալստին» (in Conference Report, Apr. 1987, 3; or *Ensign,* Մայիս 1987, 4):

Այս հատվածում Նախագահ Բենսոնի կողմից նշված «Նեփիական պատմության մասին հիշատակարանը» վերաբերում է 3 Նեփիի գրքին, որը Նեփիացիների պատմությունն է համբարձված Տիրոջ այցից առաջ: Հաջորդ էջի վրա տրված սխեման վերաբերում է Նախագահ Բենսոնի խոսքերին ասված Հելամանի գրքի մասին, որը Նեփիացիների պատմությունն է նրանից առաջ, երբ նրանք տեսան Փրկչի ծննդի նշանները:

Օգտվեք այս սխեմայից ցույց տալու համար, որ Հելաման 13–16 պարունակում է այնպիսի մարգարեություններ և իրադարձություններ, որոնք նման կլինեն Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին նախորդող նշաններին և իրադարձություններին:

Հելաման 13–16-ում գրի առված մարգարեությունները և իրադարձությունները	Մարգարեություն կամ Իրադարձություն	Նշանները և իրադարձությունները, որոնք պետք է նախորդեին Երկրող Գալստին
Հելաման 16.1, 3, 6, 10	Ուժեղ և արդար փոքրամասնություն	1 Նեփի 4.12; Հակոբ 5.70
Հելաման 16.13–14	Հոգևոր զեղումները և հրաշքները	Յովել 2.28–30; Վ. և Ու. 45.39–42
Հելաման 13.22; 16.12, 22–23	Մեծ ամբարշտություն	2 Տիմոթեոս 3.1–5; Վ. և Ու. 45.27
Հելաման 13.2, 6, 8, 10–11; 14.9, 11; 15.1–3, 17; 16.2	Տիրոջ մարգարեների և ապաշխարության համար նրանց կոչերի ժխտումը	Վ. և Ու. 1.14–16
Հելաման 15.4–11	Շատ Լամանացիների դարձի գալը	Վ. և Ու. 49.24
Հելաման 14.3–4	Մարգարեություն առանց խավար գիշերի մասին	Զաքարիա 4.7
Հելաման 14.5–6, 20	Մարգարեություններ երկնքի նշանների և հրաշքների մասին	Յովել 2.30–31; Վ. և Ու. 45.40
Հելաման 16.13–18	Նշանների, հրաշքների և Քրիստոսի գալստի ժխտումը	Բ Պետրոս 3.3–4; Վ. և Ու. 45.26
Հելաման 14.21, 23, 26	Մարգարեություններ մեծ փոթորիկների և բնական աղետների մասին	Հայտնություն 16.18, 21; Վ. և Ու. 88.88–90
Հելաման 14.24; 15.1	Մարգարեություն ամբարիշտների կործանման մասին	Եսայիա 26.21; Մաղաքիա 4.1; Վ. և Ու. 1.9; 133.41

- Ի՞նչ նմանություններ գոյություն ունեն այսօրվա մարդկանց և Քրիստոսի ծննդից առաջ ապրող Նեփիացիների միջև:

Կարդացեք Նախագահ Էզրա Թավտ Բենսոնի հետևյալ խոսքերը.

«Մորմոնի Գրքում մենք գտնում ենք մի ուղի Երկրորդ Գալստին պատրաստվելու համար: Գրքի մեծ մասը կենտրոնանում է մի քանի տասնամյակների վրա, որոնք նախորդում են Քրիստոսի այցին Ամերիկա: Այդ ժամանակահատվածի ուշադիր ուսումնասիրությունը կարող է մեզ օգնել հասկանալ, թե ինչու որոշ մարդիկ կործանվեցին այն սաստիկ դատաստաններում, որոնք նախորդեցին Նրա գալստին և ինչը ստիպեց մյուսներին կանգնել տաճարի մոտ Բաունթիֆուլ երկրում և մտցնել իրենց ձեռքերը Նրա ձեռքերի և ոտքերի վերքերի մեջ . . . . Կարո՞ղ է որևէ մեկը կասկածել, որ այս գիրքը գրվել է մեզ համար և, որ նրանում մենք գտնում ենք մեծ զորություն, մեծ սփոփանք և մեծ պաշտպանություն» (in Conference Report, Oct. 1986, 5–6; or *Ensign,* Nov. 1986, 6–7):

Դասարանի անդամներին խնդրեք կիսվել իրենց ներշնչումներով և տպավորություններով, որոնք ստացել են Հելաման 13–16 քննարկելիս: Նրանց հարցրեք, թե ինչպես դա կարող է օգնել իրենց պատրաստվել Փրկչի Երկրորդ Գալստին:

Դաս
36

«Էգուց ես գալիս եմ աշխարհ»

3 Նեփի 1–7

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ գայթակղության կամ փորձության պահերին հավատքով համբերելու կարևորությունը:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. 3 Նեփի 1.1–22: Չնայած երկրում նշանների և հրաշքների առկայությանը, անհավատները պնդում էին, որ Փրկչի գալստի ժամանակն անցել է: Ամբարիշտները պատրաստվում էին սպանել հավատացյալներին: Փրկչի ծննդի նշանները երևացին և արդարացրեցին նրանց, ովքեր հավատքով համբերում էին:

բ. 3 Նեփի 2–4: Ամբարշտությունը աճում է երկրում: Գադիանթոնի ավազակները դառնում են ավելի հզոր և սկսում են պատերազմել Նեփիացիների դեմ: Նեփիացիներն ապաշխարում են իրենց մեղքերից, և Տերը նրանց օգնում է հաղթել Գադիանթոնի ավազակներին:

գ. 3 Նեփի 5–7: Նեփիացիները դադարում են մեղք գործել և սկսում են արդար կյանքով ապրել: Բարգավաճման հետ մեկտեղ Եկեղեցում մեծանում են հպարտությունը և խռովությունները: Շուտով ժողովուրդը հայտնվում է «ամբարշտության մի սոսկալի վիճակում»: Նեփին քարոզում է ապաշխարություն և հավատք առ Քրիստոս, և որոշ մարդիկ դարձի են գալիս:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամների հետ կիսվեք Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Ջորջ Ա. Սմիթի հետևյալ առակով.

«Մի մարդ, որը ճանապարհորդում էր երկրով, հասավ մի մեծ քաղաք, շատ հարուստ և լիառատ: Նա նայեց և ասաց իր ուղեկցողին. «Սրանք պետք է որ շատ արդար մարդիկ լինեն, քանզի ես միայն մի փոքր ղև եմ տեսնում ամբողջ մեծ քաղաքում»:

Ուղեկցողը պատասխանեց. «Դուք չեք հասկանում, պարոն, այս քաղաքը այնքան կատարյալ ձևով է հանձնվել ամեն տեսակի ամբարշտությանը, կաշառակերությանը, անկմանը և գարշելիությանը, որ միայն մի ղև է պահանջվում այն այս վիճակում պահելու համար»:

Շարունակելով ճանապարհը, նա հասավ մի անհարթ ճանապարհի և տեսավ մի մարդու, որը փորձում էր բարձրանալ սարը, շրջապատված մեծ և վայրի տեսք ունեցող դևերով:

Ճանապարհորդը հարցրեց. «Սա պետք է որ շատ ամբարիշտ մարդ լինի: Տե՛ս, թե քանի դևեր են շրջապատել նրան»:

«Սա, – պատասխանեց ուղեկցողը, – միակ արդար մարդն է այս երկրում: Յոթ ամենամեծ դևերը փորձում են վար գցել նրան իր ճանապարհից, սակայն չեն կարողանում» (in *Deseret News*, 11 Nov. 1857, 7.287):

Բացատրե՛ք, որ փորձելով ապրել արդար կյանքով և պահել պատվիրանները, մենք ընդդիմության կհանդիպենք: Այսօրվա դասը քննարկում է այն ընդդիմությունը, որին հանդիպեցին Նեփիացի հավատացյալները: Որոշ մարդիկ համբերում են, չնայած ընդդիմությանը, մինչդեռ մեծ օրհնություններ ստացած մյուսները արագ «շրջվում են ... արդարակեցությունից» (3 Նեփի 7.8): Այս գլուխներից մենք կարող ենք սովորել փորձություններ և գայթակղություններ ժամանակ հավատարիմ մնալու կարևորության մասին:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Փրկչի ծննդի նշանները ամրացնում են նրանց, ովքեր հավատքով համբերել են:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 1.1–22-ից: Բացատրեք, որ այս գլխի իրադարձությունները տեղի են ունեցել հինգ տարի այն բանից հետո, երբ Սամուէլը մարգարեացավ Հիսուսի ծննդի մասին: Սամուէլն ասաց. «Կանցնի ևս հինգ տարի, և ահա, հետո գալիս է Աստծո Որդին» (Հելաման 14.2): Կարող եք համառոտ վերհիշել Սամուէլի մարգարեությունները Հիսուսի ծննդի նշանների մասին (Հելաման 14.2–7):

- Սպասելով Սամուէլի մարգարեությունների իրականացմանը «մարդիկ, ովքեր հավատում էին, սկսեցին շատ տրտմել» (3 Նեփի 1.7): Որո՞նք էին նրանց վշտի պատճառները: (Տե՛ս 3 Նեփի 1.5–9:)

  ա. Որոշ անհավատներ ասացին, որ ժամանակն անցավ և մարգարեությունները չիրականացան, և հավատացյալների հավատքը զուր էր (տե՛ս 3 Նեփի 1.5–6):
  բ. Անհավատները «մեծ աղմուկ բարձրացրեցին ամբողջ երկրում» (3 Նեփի 1.7):
  գ. Ընտրված էր օրը, երբ բոլոր հավատացյալները պետք է մահվան դատապարտվեին (3 Նեփի 1.9):

- Չնայած իրենց հավատքի հետ կապված այս փորձություններին, ինչպե՞ս վարվեցին հավատացյալները: (Տե՛ս 3 Նեփի 1.8:) Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի հաստատուն մնանք, երբ մեր հավատքը փորձվում է:

- Երբ Նեփին տեսավ անհավատների անօրինությունները, նա աղոթեց Տիրոջն իր ժողովրդի համար (3 Նեփի 1.10–11): Ի՞նչ ուղերձ հայտնվեց Նեփիին իր ժողովրդի համար ամբողջ օրվա ընթացքում աղոթելուց հետո: (Տե՛ս 3 Նեփի 1.12–14: Կարող եք դասարանի անդամներից մեկին խնդրել բարձրաձայն կարդալ այդ հատվածները:) Ինչպե՞ս իրականացան Սամուէլի մարգարեությունները:(Տե՛ս 3 Նեփի 1.15–21:) Այս պատմությունն ինչպե՞ս է մեզ օգնում զորացնել Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը:

2. Գադիանթոնի ավազակները Նեփիացիների դեմ պատերազմ են սկսում:

Քննարկեք 3 Նեփի 2–4: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Ինչպե՞ս է Սատանան մարդկանց շեղում Փրկչի և Նրա ծննդի հանդեպ ունեցած իրենց հավատքից: (Տե՛ս 3 Նեփի 1.22; 2.1–3: Նշեք, որ Սատանան աստիճանաբար գերում է մարդկանց սրտերը և շուտով մարդիկ մոռանում են այդ նշաններն ու հրաշքները:) Այդ եղանակներից որո՞նք եք դուք տեսել մեր այսօրվա կյանքում: Ի՞նչ մենք կարող ենք անել մեր հոգևոր փորձը հիշելու և պահպանելու համար:

- Երբ մարդիկ սկսեցին աճել ամբարշտության մեջ, ի՞նչ վտանգի նրանք հանդիպեցին: (Տե՛ս 3 Նեփի 2.11–13, 17–19:) Ինչպիսի՞ վարք և դիրք կարող է վտանգի տակ դնել մեր ապահովությունն այսօր:

- Քրիստոսի ծննդից հետո 16-րդ տարում Լաքոնիուս անունով մի մարդ, որը Նեփիացիների կառավարիչն ու գլխավոր դատավորն էր, մի նամակ ստացավ Գեդդիանիից՝ Գադիանթոնի ավազակների ղեկավարից (3 Նեփի 3.1): Ի՞նչ էր ցանկանում Գեդդիանին Լաքոնիուսից: (Տե՛ս 3 Նեփի 3.6–8:)

- Երբ Գադիանթոնի ավազակները հայտարարեցին Նեփիացիներին կործանելու իրենց մտադրության մասին, մարդիկ անմիջապես սկսեցին պատրաստվել պաշտպանության Լաքոնիուսի և Գեդգեդոնիի ղեկավարությամբ: Ի՞նչ կարող ենք մենք սովորել նրանց արարքներից, որպեսզի կարողանանք պաշտպանվել վախի և փորձության ժամանակ: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 3 Նեփի 3.12–26՝ այս հարցի պատասխանները գտնելու համար: Դասարանի անդամների պատասխաններն ամփոփեք գրատախտակին: Որոշ պատասխաններ քննարկման հարցերի հետ միասին տրված են ստորև:)

  ա. «Լաքոնիուսը՝ կառավարիչը, մի արդար մարդ էր, և չէր կարող ահաբեկվել (3 Նեփի 3.12): Ինչպե՞ս կարող է վախը որևէ մեկին գցել գայթակղության մեջ: Ինչպե՞ս կարող է անձնական արդարամտությունն օգնել մեզ քաջ մնալ փորձությանը կամ գայթակղությանը հանդիպելիս:
  բ. Լաքոնիուսը ժողովրդին ասաց «աղաղակել առ Տերը ուժի համար» (3 Նեփի 3.12): Ինչո՞ւ է կարևոր աղոթել ուժ ստանալու համար գայթակղությանը կամ փորձություններին հանդիպելիս:
  գ. Լաքոնիուսը մարդկանց ի մի հավաքեց (3 Նեփի 3.13, 22): Ինչո՞ւ էր կարևոր, որպեսզի Նեփիացիները մի տեղ հավաքվեին պաշտպանվելու համար: (Տե՛ս 3 Նեփի 4.3–4:) Մեր միացումը Եկեղեցու մյուս անդամների հետ ինչպե՞ս կարող է մեծացնել մեր ուժերը չարի ուժերին դիմակայելու համար: (Տե՛ս Մորոնի 6.4–6:)
  դ. «Նա կարգադրեց, որ ամրություններ կառուցվեին» և դրվեին «պահակներ շուրջբոլորը» (3 Նեփի 3.14): Ինչպե՞ս կարող ենք ամրացնել մեզ և պաշտպանվել գայթակղությունից:
  ե. Նեփիացիները «լարեցին իրենց ուժերը . . . անելու համաձայն Լաքոնիուսի խոսքերի (3 Նեփի 3.16): Ինչպե՞ս ենք մենք օրհնվում, երբ հետևում ենք ոգեշնչում ստացած առաջնորդներին:
  զ. «Նրանք ապաշխարեցին բոլոր իրենց մեղքերից» (3 Նեփի 3.25): Ինչպե՞ս է ապաշխարությունը մեզ օգնում ավելի մեծ զորություն ստանալ Տիրոջից:
  է. Նրանք ամուր էին զենքով (3 Նեփի 3.26): Ի՞նչ զենք նրանց առաջարկվեց վերցնել: (Տե՛ս Վ. և Ու. 27.15–18:) Ինչո՞ւ են մեզ սովորեցնում հագնել Աստծո սպառազինությունը: Ինչպե՞ս մենք կարող ենք այդ զենքերը կրել ամեն օր:

- Ո՞րն էր այդ նախապատրաստությունների արդյունքը, երբ Գադիանթոնի ավազակները հարձակվեցին Նեփիացիների վրա: (Տե՛ս 3 Նեփի 4.11–13, 16–29:) Ինչպե՞ս Նեփիացիներն ուրախացան իրենց հաղթանակից հետո: (Տե՛ս 3 Նեփի 4.30–33:) Ինչպե՞ս մենք կարող ենք արտահայտել մեր երախտագիտությունը Տիրոջ հանդեպ՝ մեզ պաշտպանելու և օրհնելու համար:

3. Նեփիացիներն ապրում են արդար կյանքով և բարգավաճում են, սակայն հպարտությունը և խռովություններն աճում են:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 5–7-ից: Բացատրեք, որ Նեփիացիները պաշտպանվեցին Գադիանթոնի ավազակներից Քրիստոսի ծննդից հետո 21-րդ տարում: 13 տարի հետո Փրկիչը կայցելի Նեփիացիներին և կծառայի նրանց:

- Գադիանթոնի ավազակներին հաղթելուց մի քանի տարի հետո Նեփիացիները վայելում էին մեծ խաղաղություն և բարեկեցիկ կյանք: (3 Նեփի 5.1–26; 6.1–9): Ի՞նչը խախտեց այդ խաղաղությունը: (Տե՛ս 3 Նեփի 6.10–15: Դուք կարող եք վերհիշել դաս 34-ում քննարկված հպարտության շրջանը:)

- Երբ մարդիկ շարունակեցին իրենց անօրինությունները, մարգարեները սկսեցին նրանց ապաշխարության կոչ անել, սակայն մարդիկ մերժեցին և սպանեցին նրանց

(3 Նեփի 6.17–23): Գաղտնի խմբակցությունները շատացան և մարդիկ շուտով ցեղերի բաժանվեցին (3 Նեփի 6.27–30; 7.1–5): Ի՞նչ արեց Նեփին ի պատասխան այդ անօրինությունների: (Տե՛ս 3 Նեփի 7.15–19:) Ո՞րն էր իր աշխատանքի արդյունքը: (Տե՛ս 3 Նեփի 7.21–26:)

Գրատախտակին գրեք ստորև նշված ամսաթվերը: Դասարանի տարբեր անդամների հանձնարարեք բարձրաձայն կարդալ համապատասխան հատվածները: Յուրաքանչյուր հատվածը կարդալիս, դասարանի անդամներին խնդրեք նկարագրել մարդկանց հոգևոր վիճակը:

Մ.թ. 21–26 թ.	3 Նեփի 5.1–3 (Մարդիկ ծառայեցին Աստծուն «ողջ ջանասիրությամբ»:)
Մ.թ. 26–27 թ.	3 Նեփի 6.4–5 (Մեծ կարգուկանոն էր և բարգավաճում:)
Մ.թ. 28 թ.	3 Նեփի 6.9 (Շարունակ խաղաղություն էր:)
Մ.թ. 29 թ.	3 Նեփի 6.10–16 (Եղան վիճաբանություններ, հպարտություն և պարծենկոտություն:)
Մ.թ. 30 թ.	3 Նեփի 6.17–18 («Նրանք ամբարշտության մի սոսկալի վիճակում էին»:)
Մ.թ. 31 թ.	3 Նեփի 7.21 (Մի քանի մարդ դարձի եկավ:)
Մ.թ. 32–33 թ.	3 Նեփի 7.23 (Նեփին շարունակում էր աղաղակել ապաշխարություն:)

- Ինչպիսի՞ օրհնություններ կարող էին վայելել մարդիկ, եթե հավատարիմ մնային: (Տե՛ս 3 Նեփի 10.18–19: Ժողովրդի առավել արդարակյաց մասը խնայվեց Փրկչի Խաչումը ուղեկցող կործանման ժամանակ: Նրանք մեծ օրհնություններ ստացան, երբ Փրկիչը Հարությունից հետո այցելեց իրենց: Ժողովրդի ամբարիշտ մասը կործանվեց: Այս դեպքերը կքննարկվեն հաջորդ դասի ժամանակ:)

Եզրափակում

Բացատրեք, որ մենք նույնպես սպասում ենք Փրկչի գալստին: Մինչ սպասում ենք, Սատանան կփորձի մեզ շեղել դեպի ամբարշտությունը, ինչպես նա արեց Նեփիացիների դեպքում: Եթե մենք պատրաստենք մեզ այնպես, ինչպես պատրաստվեցին Լաքոնիուսի ժամանակի մարդիկ, մենք արժանի կլինենք ստանալու այն ամենը, ինչով Տերը ցանկանում է օժտել մեզ:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այս միտքը որպես դասի մաս:

«Ես մի հետևորդ եմ Հիսուս Քրիստոսի» (3 Նեփի 5.13)

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 5.13: Բացատրեք, որ այս հատվածը պարունակում է մարգարե Մորմոնի խոսքերը:

- Ի՞նչ է նշանակում լինել Հիսուս Քրիստոսի հետևորդն այսօր:

Դաս
37

«Ով որ գա, նրան ես կընդունեմ»

3 Նեփի 8–11

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ Սամուէլի մարգարեությունների իրականացումը և այն օրհնությունները, որոնք մատչելի են նրանց, ովքեր գալիս են դեպի Փրկիչը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.
   ա. 3 Նեփի 8: Ամերիկայում Քրիստոսի մահվան ժամանակ մեծ կործանում է տեղի ունենում: Շատ քաղաքներ կործանվում են:
   բ. 3 Նեփի 9–10: Ողջ մնացածները լսում են Տիրոջ ձայնը, որը նրանց հրավիրում է վերադառնալ Իր մոտ, ապաշխարել և դարձի գալ:
   գ. 3 Նեփի 11: Հարություն առած Փրկիչն իջնում է երկնքից և սովորեցնում իր ժողովրդին:
2. Եթե առկա են հետևյալ նկարները, պատրաստվեք օգտագործել դրանք դասի ժամանակ. Քրիստոսը հայտնվում է Նեփիացիներին (62047; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 315) և Հիսուս Քրիստոսը սովորեցնում է արևմտյան Կիսագնդում (62380; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 316):
3. Դասը սկսելուց առաջ գրատախտակին պատկերեք էջ 165 վրա տրված սխեման:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Բացատրեք, որ 3 Նեփի 11-ն այն գլուխն է, որը միսիոներներն առաջարկում են կարդալ, երբ որևէ մեկին տալիս են Մորմոնի Գիրքը: Այս գլուխը պատմում է Նեփիացիներին հարություն առած Փրկչի այցի մասին:

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարող է 3 Նեփին 11-ն արդյունավետ ձևով ներկայացնել որևէ մեկին Մորմոնի Գիրքը: Ինչպիսի՞ զգացմունքներ կամ հոգևոր փորձ եք ունեցել, երբ կարդացել եք այս գլուխը:

Նշեք, որ Փրկչի այցը Նեփիացիներին պատկերող գլուխները Մորմոնի Գրքի ամենազորեղ հատվածներից են: Այս դասը քննարկում է այն արհավիրքները, որոնք տեղի ունեցան Ամերիկայում, երբ խաչվեց Հիսուսը: Դասը նաև տալիս է Նեփիացիների մեջ Նրա ծառայության պատմությունը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Ամերիկայում Հիսուսի մահվան ժամանակ մեծ կործանում է տեղի ունենում:

Քննարկեք 3 Նեփի 8: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Նրանց հիշեցրեք, որ Սամուէլ Լամանացին մարգարեացել էր կործանման

մասին, որը պետք է տեղի ունենար Հիսուսի խաչման ժամանակ (Հելաման 14.20–27): Հիսուսի ծննդի նշանը ստանալուց 33 տարի հետո ժողովուրդը «սկսեց մեծ լրջությամբ սպասել» Սամուէլի խոսքերի իրականացմանը (3 Նեփի 8.3):

Դասարանի անդամների ուշադրությանը ներկայացրեք գրատախտակին պատկերված սխեման.

ՍԱՄՈՒԷԼԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
Հելաման 14.21, 23	3 Նեփի 8.5–7, 17–18; 9.8
Հելաման 14.24	3 Նեփի 8.8–10, 14
Հելաման 14.20, 27	3 Նեփի 8.20–21

Դասարանի անդամներին խնդրեք կարդալ «Սամուէլի մարգարեությունները» վերնագրի տակ տրված հատվածները և այնուհետև կարդալ «Իրականացում» վերնագրի տակ տրված համապատասխան հատվածները:

- Կործանումից հետո, երկիրը պատված էր խավարով (3 Նեփի 8.19–23): Ինչո՞ւ է համատարած խավարը Փրկչի մահվան նշան հանդիսանում: (Տե՛ս 3 Նեփի 9.18; տե՛ս նաև Հովհաննես 8.12; Վ. և Ու. 11.28:) Ինչպե՞ս է Փրկիչը լույս բերել ձեր կյանքը:
- Ինչպե՞ս արձագանքեցին նրանք, ովքեր փրկվեցին կործանումից: (Տե՛ս 3 Նեփի 8.23–25:) Ինչպե՞ս է նրանց փորձը օգնում մեզ պատրաստվել Երկրորդ Գալստին:

2. Կենդանի մնացածները լսում են Տիրոջ ձայնը, որը նրանց հրավիրում է վերադառնալ Իր մոտ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 9–10-ից:

- Կործանումից հետո փրկված Նեփիացիները լսեցին Քրիստոսի ձայնը, որը նկարագրում էր, թե ինչպես են կործանվել տարբեր քաղաքներ (3 Նեփի 9.1–12): Ինչպե՞ս Տերը պատճառաբանեց այդ կործանումը: (Տե՛ս 3 Նեփի 9.12: Կարող եք նշել, թե որքան անգամ է Նա կրկնում այդ պատճառը 2–12 հատվածներում:) Ի՞նչ հրավերք նա տվեց փրկվածներին: (Տե՛ս 3 Նեփի 9.13–14: Կարող եք նշել, որ գալ բառը երեք անգամ կրկնվում է հատված 14-ում: Տե՛ս նաև ստորև բերված մեջբերումը:) Ի՞նչ պետք է մենք անենք այսօր այդ հրավերքն ընդունելու համար:

  Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդն ասել է. «Եկե՛ք, – ասում է Քրիստոսը սիրով, – Եկե՛ք, հետևե՛ք ինձ»: Ուր էլ որ գնաք, սկզբում եկեք և տեսեք, ինչ եմ ես անում, տեսեք, որտեղ և ինչպես եմ ես անցկացնում ժամանակս: Սովորեք ինձանից, քայլեք ինձ հետ, խոսեք ինձ հետ, հավատացեք: Լսեք ինձ աղոթելիս: Փոխարենը դուք կստանաք ձեր աղոթքների պատասխանները: Աստված հանգստություն կբերի ձեր հոգիներին: Եկե՛ք, հետևե՛ք ինձ» (in Conference Report, Oct. 1997, 88; or *Ensign,* Nov. 1997, 65):

Կարող եք դասարանի հետ միասին երգել «Արի՛ դեպի Քրիստոսը» երգը (*Օրհներգեր*, հմ. 117):

- Հիսուսը հայտարարեց, որ Մովսեսի օրենքը կատարվեց Իրենում և Ինքն այլևս չի ընդունի ողջակեզներ և զոհաբերություններ (3 Նեփի 9.17, 19): Ի՞նչ զոհաբերություններ մենք պետք է անենք ըստ Նրա խոսքերի: (Տե՛ս 3 Նեփի 9.20:) Ի՞նչ է նշանակում առաջարկել

«կոտրված սիրտ և ապաշխարող հոգի»: (Տե՛ս ստորև տրված մեջբերումը:) Ի՞նչ Փրկիչը խոստացավ նրանց, ովքեր կկատարեն այդ զոհաբերությունը: (Տե՛ս 3 Նեփի 9.20:)

Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերը, որն Առաջին Նախագահության անդամ էր, ասել է. «Նոր ուխտի համաձայն, որը տրվել է Քրիստոսի գալստի հետ, մեղսագործը պետք է զոհաբերի իր իսկ կյանքը, ոչ թե զոհաբերի որևէ կենդանի էակի արյունը. նա պետք է հրաժարվի իր մեղքերից, նա պետք է ապաշխարի, նա ինքը պետք է կատարի զոհաբերություն» (*Behold the Lamb of God* [1962], 107):

- Ըստ Քրիստոսի, ո՞ւմ համար է Նա տվել Իր կյանքը: (Տե՛ս 3 Նեփի 9.22:) Երեխաներին հատուկ ինչպիսի՞ հատկանիշներ մենք պետք է ունենանք Փրկչի մոտ գալու համար: (Տե՛ս Մոսիա 3.19:)
- Նրանից հետո, երբ Հիսուսը հայտարարեց կործանման մեծությունը և փրկություն խոստացավ նրանց, ովքեր կհավատան, լռության շատ ժամեր անցան: Երբ Հիսուսը կրկին խոսեց, ի՞նչ նմանություն նա օգտագործեց նկարագրելու համար Իր ժողովրդին հավաքելու Իր մտադրությունը: (Տե՛ս 3 Նեփի 10.4–6: Նշեք, որ Հիսուսն այս նմանությունը երեք անգամ մի փոքր փոփոխված երանգներով օգտագործեց ամեն հատվածում:) Ինչո՞ւ է Նա ցանկանում հավաքել մեզ: (Տե՛ս ստորև տրված մեջբերումը:) Ինչպե՞ս մենք կարող ենք նպաստել այդ հավաքմանը: (Տե՛ս Վ. և Ու. 4.1–7:)

  Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է. «Ո՞րն էր ցանկացած ժամանակաշրջանում Աստծո ժողովրդին հավաքելու նպատակը: Հիմնական նպատակը դա Տիրոջ տունը կառուցելն էր, որտեղ նա կարող էր Իր ժողովրդին հայտնել Իր տան արարողությունները և Իր արքայության փառքերը, և որտեղ Նա մարդկանց կարող էր սովորեցնել փրկության ճանապարհները: . . . Այդ նույն նպատակով է Տերը ի մի հավաքում իր ժողովրդին վերջին օրերում» (*Teachings of the Prophet Joseph Smith*, sel. Joseph Fielding Smith [1976], 307–8):
- Մարդկանց ապաշխարության և Իր մոտ գալու կոչ անելուց հետո Քրիստոսը դադարեց խոսել ժողովրդի հետ: Ողբի երեք օրեր անցան: Այնուհետև խավարը ցրվեց, աղմուկը և կործանումը դադարեցին, և մարդկանց վիշտը վերածվեց ուրախության (3 Նեփի 10.9–10): Ինչո՞ւ մարդիկ փրկվեցին: (Տե՛ս 3 Նեփի 10.12–13:) Ի՞նչ օրհնություններ ստացան նրանք: (Տե՛ս 3 Նեփի 10.18–19:)
- Ի՞նչ է խորհուրդ տալիս Մորմոնը մեզ՝ ընթերցողներիս: (Տե՛ս 3 Նեփի 10.14:)

3. Հիսուս Քրիստոսն իջնում է երկնքից և սովորեցնում մարդկանց:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 11: Բացատրեք, որ մարդիկ հավաքվեցին Լիառատ երկրում տաճարի շուրջ, զարմանալով կատարված փոփոխության վրա, և «խոսում էին այս Հիսուս Քրիստոսի մասին, որի մահվան վերաբերյալ տրվել էր նշանը» (3 Նեփի 11.1–2):

- Մինչ մարդիկ խոսում էին այն մասին, ինչ պատահել էր, նրանք Աստծո՝ Հոր, ձայնը լսեցին: Ինչի՞ էր նման ձայնը: (Տե՛ս 3 Նեփի 11.3:) Քանի՞ անգամ մարդիկ լսեցին ձայնը, մինչև հասկացան այն (Տե՛ս 3 Նեփի 11.4–6:)
- Ինչպե՞ս մարդիկ վերջապես կարողացան հասկանալ ձայնը: (Տե՛ս 3 Նեփի 11.5:) Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «բացեցին իրենց ականջները՝ լսելու այն»: (3 Նեփի 11.5): Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի ավելի լավ լսենք և հասկանանք մեզ ուղղված Աստծո խոսքը:
- Ինչպե՞ս Հայր Աստվածը ներկայացրեց Փրկչին: (Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.7:) Ինչպե՞ս Փրկիչը ներկայացրեց Իրեն: (Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 11.8–11: Ցույց տվեք «Հիսուսը հայտնվում է Նեփիացիներին» նկարը:)

- Ի՞նչ հրավերք տվեց Հիսուսը բազմության բոլոր մարդկանց: (Տե՛ս 3 Նեփի 11.13–15; տե՛ս նաև 3 Նեփի 17.25, որտեղ ասվում է, որ 2,500 մարդ էր հավաքված: Ցույց տվեք «Հիսուսը սովորեցնում է» նկարը:) Ի՞նչ կարող ենք սովորել Փրկչի սիրո այս օրինակից:
- Նեփիին և մյուսներին մկրտելու իշխանություն տալուց հետո, ի՞նչ Փրկիչը սովորեցրեց նրանց մկրտության մասին: (Տե՛ս 3 Նեփի 11.22–27:) Ինչո՞ւ է կարևոր մկրտվել ճիշտ ձևով և մեկի կողմից, ով մկրտելու իշխանություն ունի:
- Հիսուսը սովորեցնում էր, որ մարդկանց մեջ չպետք է լինի որևէ «վիճաբանություն» մկրտության կամ Իր վարդապետության որևէ դրույթի վերաբերյալ (3 Նեփի 11.22, 28): Ինչո՞ւ է ավետարանի վարդապետությունների վերաբերյալ վիճաբանությունը վտանգավոր: (Տե՛ս 3 Նեփի 11.29; Վ. և Ու. 10.62–63:) Ինչպե՞ս մենք կարող ենք միավորվել ճշմարիտ վարդապետության ներքո:
- Ի՞նչ Փրկիչը ուսուցանեց որպես Իր վարդապետություն: (Տե՛ս 3 Նեփի 11.30–38: Պատասխանները կարող են ընդգրկել՝ հավատալ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, ապաշխարել և դառնալ երեխայի նման, մկրտվել և Սուրբ Հոգի ստանալ:) Ի՞նչ խոստում տվեց Նա նրանց, ովքեր իրենց կյանքը կառուցել էին Իր վարդապետության հիման վրա: (Տե՛ս 3 Նեփի 11.39:)
- Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի լիարժեք հետևել Փրկչի ցուցումին՝ հրապարակել այս խոսքերը «մինչև աշխարհի ծայրերը» (3 Նեփի 11.41):

Եզրափակում

Կարդացեք 3 Նեփի 10.14 և դասարանի անդամներին հիշեցրեք սուրբ գրությունները հասկանալու և ուսումնասիրելու կարևորության մասին: Թեպետ և՛ արդարների, և՛ ամբարիշտների առանձնացման հետ մեկտեղ հալածանքը կուժեղանա, մենք կզորանանք, եթե ուսումնասիրենք սուրբ գրությունները և հետևենք մարգարեներին:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այս միտքը որպես դասի մի մաս:

Վերանայում

Որպես վերանայում ցույց տվեք «Հիսուսը սովորեցնում է Արևմտյան Կիսագնդում» նկարը (62380; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 316): Կարդացեք հետևյալ պնդումները և դասարանի անդամներին խնդրեք որոշել, արդյոք ճիշտ է պնդումը, թե սխալ: Դասարանի անդամներին խնդրեք կարդալ համապատասխան սուրբ գրությունները:

1. Այս նկարի վրա պատկերված դեպքերը տեղի ունեցան Զարահեմլա քաղաքում: (Սխալ է, տե՛ս 3 Նեփի 11.1:)
2. Մարդիկ արդեն լսել էին Տիրոջ ձայնը: (Ճիշտ է, տե՛ս 3 Նեփի 9.1–2:)
3. Տերը նրանց խնդրեց չդիպչել Իրեն: (Սխալ է, տե՛ս 3 Նեփի 11.14:)
4. Հիսուս Քրիստոսը հարություն առած մարմին ուներ, երբ այցելեց Նեփիացիներին: (Ճիշտ է, տե՛ս 3 Նեփի 11.15:)
5. Կործանումից փրկվածները ազատ էին մեղքերից: (Սխալ է, տե՛ս 3 Նեփի 9.13:)
6. Հիսուսը սովորեցրեց մարդկանց մկրտության ճիշտ ձևը: (Ճիշտ է, տե՛ս 3 Նեփի 11.21–26:)

Դաս
38

«Հին բաներին վերջ տրվեց և բոլոր բաները դարձան նոր»

3 Նեփի 12–15

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին լինել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդները, հետևելով Նրա օրինակին և ապրելով ավելի բարձր օրենքով, որը Նա տվեց Նեփիացիներին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 3 Նեփի 12.1–12: Հիսուսը սովորեցնում է Երանությունները Նեփիացիներին:
   բ. 3 Նեփի 12.13–16: Հիսուսը հայտարարում է, որ Իր հետևորդները պետք է լինեն երկրի աղը և լույսը ուրիշների համար:
   գ. 3 Նեփի 12.17–48; 15.1–10: Հիսուսը հայտարարում է, որ Նա կատարել է Մովսեսի օրենքը: Նա մարդկանց ավելի բարձր օրենք է տալիս:
   դ. 3 Նեփի 13–14: Հիսուսը սովորեցնում է Նեփիացիներին, թե ինչպես նրանք պետք է ապրեն, որպեսզի լինեն Նրա ճշմարիտ հետևորդները: Նա ասում է, որ ով լսում և կատարում է Իր ասածները, նման է իմաստուն մարդուն, որը կառուցում է իր տունը քարի վրա:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Մաթեոս 5–7; Վ. և Ու. 101.39–40; 103.9–10:

3. Եթե անց եք կացնում ուշադրության վարժությունը, ապա դասարան բերեք Հիսուս Քրիստոսի նկարը (հավաքատան գրադարանից կամ Ավետարանի արվեստի նկարների ժողովածուից):

4. Եթե պատրաստվում եք անցկացնել էջ 170-ում տրված վարժությունը, ապա դասարան բերեք երկու թափանցիկ անոթ, մեկը լցված մաքուր աղով, մյուսը՝ աղի և ավազի խառնուրդով:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ցուցադրեք Հիսուս Քրիստոսին պատկերող մի քանի նկարներ: Նշեք, որ փորձելով ներկայացնել Հիսուսի բնավորությունը, տարբեր նկարիչներ տարբեր ձևով են պատկերել Հիսուսին: Այնուհետև դասարանի անդամներին խնդրեք մտովի խորհել հետևյալ հարցի շուրջ.

- Եթե որևէ մեկը խնդրեր ձեզ նկարագրել Հիսուսի բնավորությունը, ի՞նչ դուք կասեիք:

Բացատրեք, որ Նախագահ Հարոլդ Բ. Լին մեկ առիթով ճշգրիտ նկարագրել է Հիսուսի բնավորությունը: Այնուհետև կարդացեք Նախագահ Լիի հետևյալ խոսքերը.

«Լեռան Քարոզում Վարդապետը մեզ հստակ հայտնություն է տվել Իր բնավորության վերաբերյալ, որը կատարյալ էր, կամ, կարելի է ասել, որ Իր կենսագրության մեջ գրված ցանկացած առակ համատասխանում է իրական կյանքում կատարած իր գործերին, և այդպիսով նա մեզ տվեց մեր կյանքը ապրելու ձևը» (*Stand Ye in Holy Places* [1974], 342):

Բացատրեք, որ, երբ Հիսուսն այցելեց Նեփիացիներին, Նա մի քարոզ կարդաց, որը նման էր Լեռան Քարոզին: Ուսումնասիրելով և կիրառելով այդ քարոզի մեջ պարունակվող

ուսմունքները, մենք ավելի շատ կիմանանք Փրկչի բնավորության մասին: Մենք նաև կկարողանանք մշակել այն ձևը, կամ ծրագիրը, որով պետք է ապրենք, նմանեցնելով մեր կյանքը Վարդապետի կյանքին:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Հիսուսը Նեփիացիներին սովորեցնում է Երանությունները:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 12.1–12 ստորև տրված եղանակով: Կարող եք դասարանի անդամներին խնդրել համեմատել 3 Նեփի 12.3–12 հատվածները Լեռան Քարոզի նմանատիպ ուսմունքների հետ, որոնք գտնվում են Մաթևոս 5.3–12-ում:

- *3 Նեփի 12.3:* Ի՞նչ է նշանակում գալ դեպի Քրիստոսը: (Երբ դասարանը կքննարկի այս հարցը, կարող եք անդրադառնալ 3 Նեփի 9.13–14, 20–22 և Եթեր 12.27 հատվածներին:) Ինչպե՞ս կարող է «հոգով աղքատ» լինելը կամ խոնարհ լինելը օգնել մեզ գալ դեպի Քրիստոսը:
- *3 Նեփի 12.4:* Ի՞նչ ճանապարհներով է Տերը սփոփում մեզ: (Օրինակների համար տե՛ս Հովհաննես 14.26–27; Մոսիա 18.8–9:)
- *3 Նեփի 12.5:* Ի՞նչ է նշանակում հեզ լինել:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Լինել հեզ նշանակում է ունենալ երախտապարտ ոգի, ի տարբերություն ինքնագոհության զգացումի, ընդունել քո զորությունից ավելի մեծ զորություն, ճանաչել Աստծուն և ընդունել Նրա պատվիրանները» (“With All Thy Getting Get Understanding,” *Ensign,* Aug. 1988, 3–4):
- *3 Նեփի 12.6:* Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում լինել «քաղցած և ծարավ . . . արդարության»: Ինչո՞վ մենք կարող ենք լցվել, եթե լինենք «քաղցած և ծարավ . . . արդարության»:
- *3 Նեփի 12.7:* Ինչո՞ւ է կարևոր գթասիրտ լինելը: Ինչո՞ւ ենք մենք զգում Տիրոջ գթասրտության կարիքը: (Տե՛ս 2 Նեփի 2.8–9:)
- *3 Նեփի 12.8:* Ինչո՞ւ մենք պետք է սրտով մաքուր լինենք, որպեսզի ի վիճակի լինենք տեսնել Աստծուն: (Տե՛ս 1 Նեփի 10.21:) Ինչպե՞ս մենք կարող ենք մաքրել մեր սրտերը: (Տե՛ս Վ. և Ու. 93:1 այս հարցի պատասխանները գտնելու համար:)
- *3 Նեփի 12.9:* Ինչպե՞ս մենք կարող ենք մեր տներում և համայնքներում խաղաղություն հաստատել:
- *3 Նեփի 12.10–12:* Ինչո՞ւ են արդարները երբեմն հալածվում: Ինչպե՞ս մենք պետք է վարվենք հալածանքի ժամանակ:(Տե՛ս 3 Նեփի 12.44; Ղուկաս 6.35:)

2. Հիսուսը հայտարարում է, որ Իր հետևորդները պետք է լինեն երկրի աղը և մարդկանց լույսը:

Կարդացեք և քննարկեք 3 Նեփի 12.13–16:

Հիսուսն ասաց. «Ես տալիս եմ ձեզ՝ լինելու երկրի աղը» (3 Նեփի 12.13): Օգնելու համար դասարանի անդամներին հասկանալ, թե ինչ է նշանակում լինել «երկրի աղը», կարդացեք Երեց Բրյուս Մակ-Քոնկիի խոսքերը.

«Հին ժամանակների Եբրայեցիների մոտ աղը . . . օգտագործվում էր սնունդը պահպանելու, սննդին համ տալու և կենդանիներ զոհաբերելիս: (Ղևտ. 2.13; Եզեկ. 43.24; Մարկոս 9.49–50:) Այն այնքան կարևոր էր զոհաբերության արարողությունների ժամանակ, որ դարձավ ուխտի

խորհրդանիշ Աստծո և Իր ժողովրդի միջև՝ կապված այդ սրբազան արարողության հետ: (Ղևտ. 2.13; Թվոց 18.19; 2 Մնաց. 13.5:)

Հետևաբար, մեր Տիրոջ խոսքերը, սկզբում ուղղված լինելով հրեաներին, այնուհետև Եբրայեցիների ավելի մեծ մասին՝ Նեփիացիներին, որը նշանակում էր, որ նրանք ունեին մեծ զորություն լինելու *երկրի աղը*, մեծ նշանակություն ունի . . . Այլ խոսքերով, նրանք մեծ զորություն ունեն՝ լինելու աշխարհի համը, փրկությունը և պահպանման միջոցը, ազդեցություն, որը շատ ուրիշներին խաղաղություն և օրհնություններ կարող է բերել» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 667–68):

- Ինչպե՞ս կարող է մեր ազդեցությունն օգնել մյուսներին խաղաղություն և այլ օրհնություններ ստանալ:

Ցուցադրեք աղով անոթներ (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 4): Դասարանի անդամներին հարցրեք, ո՞ր աղը նրանք կօգտագործեին: Այնուհետև կարդացեք Երեց Կարլոս Ե. Ասայի հետևյալ խոսքերը. «Աշխարհահռչակ մի քիմիկոս ասել է ինձ, որ աղը չի կորցնում իր համը տարիների ընթացքում: Համը կորում է, երբ այն աղտոտվում է, կամ խառնվում այլ նյութի հետ» (in Conference Report, Apr. 1980, 60; or *Ensign,* May 1980, 42):

- Ինչպե՞ս մենք կարող ենք խուսափել աշխարհիկ բաներից աղտոտվելուց:
- Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետութուն և Ուխտեր 101:39–40 և 103:9–10: Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները «երկրի աղը» և «մարդկանց լույսը» լինելու մասին: Ինչպե՞ս կարող են Վերջին Օրերի Սրբերը լինել մարդկանց փրկիչները»: (Կիսվելով ավետարանով և կատարելով տաճարային աշխատանքը:)
- Ինչպե՞ս կարող ենք այնպես անել, որպեսզի մեր լույսը «շողա ժողովրդի առաջին» (Տե՛ս 3 Նեփի 12.16; 18.24:) Ո՞րը պետք է լինի դրա արդյունքը: (Տե՛ս 3 Նեփի 12.16:)

3. Հիսուսը հայտարարում է, որ Նա կատարեց Մովսեսի օրենքը: Նա մարդկանց ավելի բարձր օրենք է սովորեցնում:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 12.17–48; 15.1–10-ից: Բացատրեք, որ այս տողերում խոսվում է Մովսեսի օրենքի մասին: Մովսեսի օրենքը արարողությունների և ծեսերի մի խիստ համակարգ էր, որն ընդգրկում էր նաև կենդանիների զոհաբերությունը (Մոսիա 13.29–30): Այն տրվել էր Իսրայելացիներին՝ օգնելու պատրաստվել Հիսուս Քրիստոսի Քավությանը (2 Նեփի 25.24; Մոսիա 13.31–33; Ալմա 34.13–14):

- Ո՞վ տվեց Մովսեսի օրենքը Իսրայելացիներին: (Տե՛ս 3 Նեփի 15.4–5:)
- Հիսուսը հայտարարեց Նեփիացիներին, որ Նա կատարեց Մովսեսի օրենքը (3 Նեփի 12.17–19; 15.2–5): Ինչպե՞ս Հիսուսը կատարեց այդ օրենքը:

  Փրկիչը կատարեց Մովսեսի օրենքը, երբ քավեց մեր մեղքերը (Ալմա 34.13–16): Նրա Քավությունից հետո, մարդկանց չէր պատվիրվում կենդանիների զոհաբերություններ կատարել, ինչը պահանջվում էր Մովսեսի օրենքով, նշելու համար Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերությունը: Փոխարենը մարդիկ պետք է զոհաբերեին իրենց կոտրված սրտերը և ապաշխարող հոգիները (3 Նեփի 9.20; տե՛ս նաև հատված 19):

Բացատրեք, որ Հիսուսը Նեփիացիներին ավելի բարձր օրենք տվեց այն բանից հետո, երբ հայտարարեց, որ Ինքը կատարել է Մովսեսի օրենքը: Գրատախտակին նկարեք հետևյալ սխեման, որը թվարկում է այն սուրբ գրությունները, որոնք, ձեր կարծիքով, ամենանպաստավորը կլինեն դասարանի անդամների համար: Անդամներին խնդրեք կարդալ «Մովսեսի Օրենքը» վերնագրի տակ գրված հատվածները, այնուհետև համապատասխան հատվածները «Ավելի Բարձր Օրենք» վերնագրի տակ: Նրանց խնդրեք քննարկել այդ երկու օրենքների տարբերությունը: Նրանց խնդրեք կիսվել այն ուղիներով, որոնց միջոցով ավելի բարձր օրենքը կարող է մեզ օգնել էլ ավելի մոտենալ Տիրոջը:

ՄՈՎՍԵՍԻ ՕՐԵՆՔԸ	ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՕՐԵՆՔ
3 Նեփի 12.21	3 Նեփի 12.22–24
3 Նեփի 12.27	3 Նեփի 12.28–30
3 Նեփի 12.31	3 Նեփի 12.32; տե՛ս նաև ուսուցանման առաջին լրացուցիչ միտքը
3 Նեփի 12.33	3 Նեփի 12.34–37
3 Նեփի 12.38	3 Նեփի 12.39–42
3 Նեփի 12.43	3 Նեփի 12.44–45

- Այն ամենից հետո, երբ Հիսուսը Նեփիացիներին սովորեցրեց սիրել իրենց թշնամիներին, Նա ասաց. «Հետևաբար, ես կամենում եմ, որ դուք լինեք կատարյալ, ճիշտ՝ ինչպես ես, կամ՝ ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է» (3 Նեփի 12.48): Ինչո՞ւ մենք Հիսուս Քրիստոսի Քավության կարիքն ունենք՝ կատարյալ դառնալու համար: (Տե՛ս 2 Նեփի 2.7–9; 3 Նեփի 19.28–29; Մորոնի 10.32–33:)

4. Հիսուսը Նեփիացիներին սովորեցնում է, թե ինչպես նրանք պետք է ապրեն, որպեսզի կոչվեն Իր ճշմարիտ աշակերտները:

Կարդացեք ընտրված հատվածները 3 Նեփի 13–14-ից: Բացատրեք, որ այս գլուխները պարունակում են ուսմունքներ այն մասին, թե ինչպես մենք կարող ենք լինել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ: Քննարկեք այդ ուսմունքներից մի քանիսը կամ բոլորը ստորև տրված եղանակով:

- *3 Նեփի 13.1–8, 16–18:* Ինչո՞ւ Հիսուսը քննադատեց որոշ մարդկանց, որոնք շատ բարիք էին գործել, օրինակ՝ ողորմածությունը (տալ աղքատին), աղոթքը և ծոմը: Ինչպիսի՞ն պետք է լինեն մեր նպատակները, երբ ծառայություն ենք մատուցում որևէ մեկին կամ որևէ այլ բարիք ենք գործում:
- *3 Նեփի 13.9–13; 14.7–11:* Այս հատվածներում Հիսուսի խոսքերը ի՞նչ են մեզ սովորեցնում աղոթքի ձևի մասին:
- *3 Նեփի 13.14–15:* Ինչո՞ւ է կարևոր ներել ուրիշներին: Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի ներողամիտ դառնալ:
- *3 Նեփի 13.19–24:* Ի՞նչ է նշանակում ունենալ աչք, որը միակն է: (Տե՛ս Վ. և Ու. 88.67–69:) Ինչո՞ւ հնարավոր չէ ծառայել Աստծուն և մամոնային (աշխարհիկին) միևնույն ժամանակ:
- *3 Նեփի 13.25–34:* Ո՞ւմ էին ուղղված այս հատվածներում գրված Փրկչի խոսքերը: (Տե՛ս 3 Նեփի 13.25:) Ինչպե՞ս կարող ենք կիրառել այս խոսքերը մեր կյանքում, անգամ, եթե չենք ստացել պատվիրան «չմտահոգվելու» ուտելիքի, խմիչքի և հագուստի համար: (Տե՛ս 3 Նեփի 13.33:) Ինչպիսի՞ օրհնություններ են ստանում այն մարդիկ, ովքեր Աստծո բաները առաջին տեղում են դնում իրենց կյանքում:
- *3 Նեփի 14.1–5:* Ինչպե՞ս մենք կարող ենք խուսափել ուրիշներին սխալ դատելուց կամ քննադատելուց:
- *3 Նեփի 14.6:* Այս նույն ուսմունքը կարելի է գտնել Մաթեոս 7.6: Այդ հատվածի Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ Հիսուսն Իր աշակերտներին պատվիրում է քարոզել ապաշխարություն, արքայության գաղտնիքները սովորեցնելու փոխարեն (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մաթեոս 7.9–11): Ինչո՞ւ է կարևոր կենտրոնացնել ավետարանի մեր ուսուցանումը հիմնական ուսմունքների վրա:

- *3 Նեփի 14.12:* Այս սկզբունքին հետևելն ինչպե՞ս կարող է դարձնել մեզ Քրիստոսի ավելի լավ աշակերտներ:
- *3 Նեփի 14.13–14:* Ինչո՞ւ է կարևոր այն փաստը, որ հավիտենական կյանք տանող ճանապարհը նեղ է, մինչդեռ դեպի կործանում տանող ճանապարհը լայն է:
- *3 Նեփի 14.15–20:* Ինչո՞ւ է այս ուսմունքը հատկապես կարևոր այսօր: (Տե՛ս Ջոզեֆ Սմիթ – Մաթևոս 1.22, որտեղ նկարագրվում են վերջին օրերը:)
- *3 Նեփի 14.21–23:* Ինչո՞ւ մենք պետք է կատարենք Երկնային Հոր կամքը, որպեսզի կարողանանք մտնել երկնային արքայություն: (Տե՛ս Վ. և Ու. 130.20–21:)
- *3 Նեփի 14.24–27:* Տունը քարի կամ ավազի վրա կառուցելու մասին Հիսուսի առակը ինչպե՞ս կարող է կիրառվել մեր այսօրվա կյանքում: (Տե՛ս Հելաման 5.12:)

Եզրափակում

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 15.1: Բացատրեք, որ, եթե մենք ապրենք Փրկչի ուսմունքներին համաձայն, ապա կունենանք հաստատուն հիմք և կուժեղացվենք՝ դիմակայելու ցանկացած փորձության կամ գայթակղության: Մենք կդառնանք «երկրի աղը» և «մարդկանց լույսը», և կկարողանանք օգնել ուրիշներին մոտենալ Փրկչին (3 Նեփի 12.13–16):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերը որպես դասի մաս:

1. Հիսուսի ուսմունքը բաժանության մասին

3 Նեփի 12.32-ում գրված Փրկչի ուսմունքը քննարկելիս կարող եք կիսվել հետևյալ տեղեկությամբ.

Հին Իսրայելում տղամարդը կարող էր հեռանալ կամ բաժանվել իր կնոջից ոչ էական պատճառներով: Սակայն, կատարյալ աշխարհում, ինչպիսին է սելեստիալ արքայությունը, բաժանում գոյություն չունի: Քանի դեռ երկիրը կատարյալ չէ, բաժանումը թույլ է տրվում, սակայն այն պետք է կատարվի միայն լուրջ պատճառների առկայությամբ: Մաթևոս 19.9-ում Հիսուսը նշում է, որ, եթե տղամարդը կնոջից բաժանվել է անհիմն պատճառով, նա դեռ ամուսնացած է Աստծո աչքում, իսկ, եթե այդ տղամարդն ամուսնանա այլ կնոջ հետ, ապա շնություն կգործի: (Տե՛ս James E. Talmage, *Jesus the Christ,* 3rd ed. [1916], 473–75, 484; տե՛ս նաև Բրյուս Ռ. Մակ-Քոնկի, *The Mortal Messiah,* 4 vols. [1979–81], 2:138–39:)

2. «Դուք եք նրանք, ում մասին ես ասացի. Այլ ոչխարներ ես ունեմ» (3 Նեփի 15.21)

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Հովհաննես 10.16: Ովքե՞ր էին այդ «այլ ոչխարները»: (Տե՛ս 3 Նեփի 15.21; 16.1–3:) Աշակերտները Երուսաղեմում ինչո՞ւ ի վիճակի չէին հասկանալ այլ ոչխարների մասին Հիսուսի ուսմունքը: (Տե՛ս 3 Նեփի 15.14–19:) Չհավատալն ինչպե՞ս է խանգարում մարդկանց հասկանալ Աստծո խոսքն ամբողջության մեջ:

«Ահա, իմ ցնծությունը լիակատար է»

Դաս
39

3 Նեփի 17–19

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին զգալ Տեր Հիսուս Քրիստոսի սերը և ավելի մեծ ցանկություն ունենալ գործադրելու Նրա հանդեպ հավատքը և բերելու վկայություն Նրա մասին:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 3 Նեփի 17: Նեփիացիներին սովորեցնելուց հետո Հիսուսը նրանց պատվիրեց վերադառնալ իրենց տները, խորհել, աղոթել և պատրաստվել հաջորդ օրն Իր վերադարձին: Տեսնելով Իր այնտեղ մնալու մարդկանց ցանկությունը Նա որոշ ժամանակ մնում է և բուժում հիվանդներին, օրհնում երեխաներին և աղոթում մարդկանց համար:

   բ. 3 Նեփի 18: Հիսուսը հաղորդությունն է հիմնում և երկինք բարձրանալուց առաջ Նեփիացիներին լրացուցիչ խորհուրդներ է տալիս:

   գ. 3 Նեփի 19: Նեփիացիները տարածում են Հիսուսի այցի լուրը և բազմությունները հավաքվում են Նրա վերադարձին ականատես լինելու: Աշակերտները մկրտվում են և ստանում Սուրբ Հոգին ու հրեշտակների սպասավորությունը: Փրկիչը վերադառնում է մարդկանց սովորեցնելու և նրանց համար աղոթելու համար:

2. Եթե անց եք կացնում ուշադրության վարժությունը, ապա պատրաստվեք ցուցադրելու «Հիսուս Քրիստոսը բուժում է Նեփիացիներին» (62541; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 317) և «Հիսուսը օրհնում է Նեփիացի երեխաներին» նկարները (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 322): Դասարանի անդամներից մեկին խնդրեք պատրաստվել բարձրաձայն կարդալու 3 Նեփի 17.5–13, 17–24 հատվածները:

3. Պատկառանքի մթնոլորտ հաստատելու համար կարող եք երաժշտության ղեկավարին խնդրել նվագել Փրկչի մասին օրհներգերի մեղեդիները, երբ դասարանի անդամները մտնում են սենյակ:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար:

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ցուցադրեք «Հիսուսը բուժում է Նեփիացիներին» և «Հիսուսն օրհնում է երեխաներին» նկարները: Դասարանի այն անդամին, որին նախօրոք հանձնարարված էր, խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 17.5–13, 17–24:

Դասարանի անդամներին խնդրեք կիսվել իրենց մտքերով այն մասին, թե ինչ նրանք կզգային, լինելով այդ բազմության մեջ և այդ դեպքերի ականատեսը լինելով: Բացատրեք, որ այս դասը քննարկում է այս իրադարձությունները և այն, ինչ արեց և սովորեցրեց հարություն առած Փրկիչը, երբ այցելեց Նեփիացիներին Իր մահից և Հարությունից հետո:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Հիսուսը Նեփիացիներին պատվիրում է խորհել և աղոթել այն ամենի մասին, ինչ Ինքը սովորեցրել էր: Նա բուժում է հիվանդներին, օրհնում երեխաներին և աղոթում մարդկանց համար:

Քննարկեք 3 Նեփի 17: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները:

- Երբ Հիսուսը պատրաստվեց հեռանալ Նեփիացիներից, Նա զգաց, որ մարդիկ չեն հասկացել այն ամենը, ինչ Նա սովորեցրել էր (3 Նեփի 17.1–2): Ի՞նչ Նա պատվիրեց նրանց անել: (Տե՛ս 3 Նեփի 17.3:) Ի՞նչ է նշանակում խորհել: Ինչպե՞ս կարող է խորհելն օգնել Նեփիացիներին նախապատրաստվել Փրկչի հետագա ցուցումներին: Ինչպե՞ս կարող է խորհելն օգնել մեզ ավելի լավ հասկանալ ավետարանի սկզբունքները:

  Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը սովորեցրել է. «Խորհել, որը նշանակում է մտքում կշռադատել, խորհել, մտորել, կարող է բացել հասկացողության հոգևոր աչքերը: Տիրոջ Հոգին կարող է իջնել խորհողի վրա» (in Conference Report, Apr. 1982, 33; or *Ensign,* May 1982, 23):

- Հիսուսը նաև պատվիրեց մարդկանց աղոթել այն ամենի մասին, ինչ Ինքը սովորեցրել էր: Ինչպե՞ս է աղոթքը մեզ օգնում ավելի լավ հասկանալ ավետարանի սկզբունքները: Ի՞նչ այլ ճանապարհներով կարող ենք պատրաստել մեր միտքը Տիրոջ ճշմարտությունները ստանալու համար:

- Ինչո՞ւ Հիսուսը «մի քիչ էլ մնաց» ժողովրդի հետ» (Տե՛ս 3 Նեփի 17.5–6:) Ինչպե՞ս է դա դրսևորում մարդկանց հանդեպ Նրա զգացմունքները: Ինչպե՞ս եք զգացել Հիսուսի սերը ձեր հանդեպ:

Եթե չեք անցկացրել ուշադրության վարժությունը, ապա կարող եք խնդրել դասարանի անդամներին ամփոփել Փրկչի գործողությունները, երբ Նա մի քիչ էլ մնաց Նեփիացիների հետ (3 Նեփի 17.7–25):

- Ի՞նչն օգնեց հիվանդներին և կաղերին բուժվել Փրկչի կողմից: (Տե՛ս 3 Նեփի 17.7–9, 20:) Ի՞նչ արեցին մարդիկ, երբ հիվանդներն ու կաղերը բուժվեցին: (Տե՛ս 3 Նեփի 17.10:) Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ Փրկչի հանդեպ մեր երախտագիտությունը այն օրհնությունների համար, որ Նա տվել է մեզ:

- Ինչպե՞ս օրհնվեցին Նեփիացի երեխաները: (Տե՛ս 3 Նեփի 17.21: Շեշտեք, որ Փրկիչն օրհնեց նրանց մեկ առ մեկ, դրսևորելով փոքր երեխաների հանդեպ ունեցած Իր սիրո խորությունը: Դուք նաև կարող եք կարդալ Մաթևոս 19.13–15:)

- Փրկիչը Նեփիացիներին պատվիրեց դառնալ փոքր երեխաների նման (3 Նեփի 11.37–38): Երեխաներին հատուկ ինչպիսի՞ հատկանիշներ է ցանկանում Հիսուսը, որ մենք ունենանք: (Տե՛ս Մոսիա 3.19:) Ի՞նչ մենք կարող ենք անել այս հատկանիշները զարգացնելու համար:

2 .Հիսուսը հիմնում է հաղորդությունը Նեփիացիների մեջ:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 18:

- Երեխաներին օրհնելուց հետո Նա հիմնեց հաղորդությունը Նեփիացիների մեջ (3 Նեփի 18.1–4): Ի՞նչ ենք մենք սովորում հաղորդության արարողության մասին 3 Նեփի 18.1–11-ում: (Պատասխանները կարող են ընդգրկել ստորև նշվածները:)

  ա. Հաղորդությունը պետք է օրհնվի և բաժանվի նրանց կողմից, ովքեր կարգվել են դա անելու (3 Նեփի 18.5):
  բ. Հաղորդությունը պետք է մատուցվի Եկեղեցու բոլոր արժանի անդամներին (3 Նեփի 18.5, 11):
  գ. Հացը և գինին ներկայացնում են Փրկչի մարմինը և արյունը (3 Նեփի 18.7, 11; տե՛ս նաև Վ. և Ու. 27.2, նշեք, որ այսօր գինու փոխարեն մենք ջուր ենք օգտագործում):

- Ի՞նչ ենք մենք վկայում, երբ ընդունում ենք հաղորդությունը: (Տե՛ս 3 Նեփի 18.7, 10–11:) Ինչպիսի՞ օրհնություն է խոստացվել նրանց, ովքեր հիշում և հետևում են Քրիստոսին: (Տե՛ս 3 Նեփի 18.7, 11:) Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի պատրաստվենք ամեն շաբաթ ընդունել հաղորդությունը: Ինչպե՞ս է հաղորդությունն ընդունելը օրհնություն եղել ձեզ համար:
- Ի՞նչ էր սովորեցնում Փրկիչն Իր աշակերտներին հաղորդությունն արժանի ձևով ընդունելու կարևորության մասին: (Տե՛ս 3 Նեփի 18.26–29; տե՛ս նաև 1 Կորնթացիս 11.28–29:) Ինչպե՞ս կարող է անարժան ձևով հաղորդության ընդունումը դատապարտություն բերել մեզ:
- Ի՞նչ ասաց Փրկիչը, որ անեն աշակերտներն այն մարդկանց համար, ովքեր անարժան ձևով են ընդունում հաղորդությունը: (Տե՛ս 3 Նեփի 18.29–32:) Ինչո՞ւ Նա նրանց պատվիրեց չվտարել նրանց, ովքեր արժանի չեն հաղորդությունն ընդունելու համար: (Տե՛ս 3 Նեփի 18.32:) Ինչո՞ւ է կարևոր շարունակել ծառայել նրանց, ովքեր շրջվել են ավետարանից: Ինչպե՞ս մենք կարող ենք անել դա:
- Ի՞նչ պատճառով Տերը պատվիրեց մարդկանց գալ դեպի Իրեն: (Տե՛ս 3 Նեփի 18.25:) Ինչո՞ւ է մեզ համար կարևոր Հիսուս Քրիստոսի մասին վկայություն բերելը:

3. Աշակերտները սովորեցնում և ծառայում են մարդկանց: Փրկիչը վերադառնում է սովորեցնելու մարդկանց և աղոթելու նրանց համար:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 19:

- Ի՞նչ արեցին Փրկչին տեսած Նեփիացիները, երբ Նա բարձրացավ երկինք: (Տե՛ս 3 Նեփի 19.1–3:) Ինչպե՞ս վարվեցին նրանք, ովքեր լսեցին Փրկչի մասին Նեփիացիների վկայությունները: (Տե՛ս 3 Նեփի 19.3:) Փրկչի մասին վկայություն բերելու ինչպիսի՞ հնարավորություններ ունենք մենք:
- Մինչ բազմությունը սպասում էր հաջորդ օրը Փրկչի վերադարձին տասներկու աշակերտները սովորեցնում էին մարդկանց, աղոթում էին նրանց հետ և ծառայում էին նրանց (3 Նեփի 19.4–8; նշեք, որ դրանով նրանք կատարում էին նախորդ օրը Փրկչի տրված հրահանգը, ինչպես գրված է 3 Նեփի 18.16 հատվածում): Ինչի՞ համար աղոթեցին աշակերտները: (Տե՛ս 3 Նեփի 19.9; տե՛ս նաև 10–15 հատվածները և ուսուցանման երկրորդ միտքը:) Ձեր կարծիքով, ինչո՞ւ էին աշակերտներն այդքան փափագում, «որ Սուրբ Հոգին շնորհվեր նրանց» (3 Նեփի 19.9): Ինչո՞ւ է այդքան կարևոր, որպեսզի մենք ստանանք Սուրբ Հոգին:
- Աշակերտներին պատվիրելով աղոթել, Հիսուսը «գնաց մի քիչ հեռու» առանձին աղոթելու համար (3 Նեփի 19.17, 19): Ինչի՞ համար աղոթեց Հիսուսը: (Տե՛ս 3 Նեփի 19.21, 23: Դուք կարող եք համեմատել այս աղոթքը Խաչումից առաջ Նրա մեծ աղոթքի մի մասի հետ, ինչպես գրված է Հովհաննես 17.20–23-ում:) Ինչո՞ւ է կարևոր, որ Հիսուս Քրիստոսի հետևորդները լինեն «մեկ» Իր և Հոր հետ: Ինչպե՞ս մենք կարող ենք Նրանց հետ մեկ լինել:
- Ինչո՞ւ էին Նեփիացի աշակերտների աղոթքները հաճելի Տիրոջը: (Տե՛ս 3 Նեփի 19.24–25: Կարող եք գրել դասարանի անդամների պատասխանները գրատախտակին:) Ինչպե՞ս կարող ենք մենք մեր աղոթքներում հետևել աշակերտների օրինակին:
- Ինչո՞ւ բազմությունը կարողացավ լսել և հասկանալ Հիսուսի խոսքերը, երբ Նա աղոթեց երրորդ անգամ: (Տե՛ս 3 Նեփի 19.31–33:) Ի՞նչ է նշանակում ունենալ բաց սիրտ: Ի՞նչ մենք պետք է անենք մեր սրտերը բացելու համար, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա սովորեցնել մեզ:

Եզրափակում

Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Նեփիացիներն իրենց մեծ հավատքի (3 Նեփի 17.20; 19.35) և իրենց աղոթքների շնորհիվ (3 Նեփի 19.6–9) օրհնված էին տեսնելու և լսելու հրաշալի բաներ: Նշեք, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը գործադրելու

և անհատապես ու ընտանիքով աղոթելու արդյունքում, Տիրոջ Սուրբ Հոգին մեզ հետ կլինի՝ մեզ օրհնելու և օգնելու այն ամենում, ինչ մենք անում ենք:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. «Դուք պետք է արթուն կենաք և միշտ աղոթեք» (3 Նեփի 18.15)

Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 3 Նեփի 18.15, 18–19, 21:

- Ինչպե՞ս կարող է աղոթքը մեզ պաշտպանել Սատանայի գայթակղություններից: Ինչպե՞ս է ընտանեկան աղոթքն ազդել ձեր ընտանիքի վրա: Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի պարտավորված զգալ ամեն օր ընտանեկան աղոթք ասելու համար:

2. «Եվ նրանք աղոթեցին նրա համար, ինչն իրենք ամենաշատն էին փափագում» (3 Նեփի 19.9)

3 Նեփի 19.9 քննարկելուց առաջ դասարանի անդամներին թուղթ և մատիտներ բաժանեք, խնդրեք նրանց գրել իրենց վեց ամենամեծ ցանկությունները: (Թղթի և մատիտների բացակայության դեպքում, խնդրեք նրանց մտածել իրենց վեց ցանկությունների մասին:) Այնուհետև նրանց խնդրեք այդ ցուցակից ջնջել այն բաները, որոնց համար նրանք չէին ցանկանա աղոթել: Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 3 Նեփի 19.9:

- Ի՞նչ էին ամենաշատը փափագում Նեփիացի աշակերտները: Ինչպե՞ս մենք կարող ենք մեծացնել արդարության և հոգևորի մեր ցանկությունը:

3. «Նրանք աղոթեցին առ Հիսուսը» (3 Նեփի 19.18)

Պարզաբանելու համար, թե ինչու Նեփիացի աշակերտներն աղոթեցին առ Հիսուսը (3 Նեփի 19.18, 24–25, 30), դասարանի անդամներին խնդրեք կարդալ 3 Նեփի 19.22: Կարող եք նաև կարդալ Երեց Բրյուս Մակ-Քոնկիի հետևյալ խոսքերը.

«Սուրբ գրություններում եզակի օրինակ են հանդիսանում այն աղոթքները, որոնք ուղղվել են անմիջապես Որդուն, որոնք հղվել են այն ժամանակ և այն պատճառով, երբ որ այդ Սուրբ Էակը, որպես հարություն առած կերպար, կանգնել է աղոթողների առջև» (*Doctrinal New Testament Commentary,* 3 vols. [1966–73], 2.79):

Նշեք, որ Հիսուսն Ինքն աղոթեց Հորն այդ ժամանակ (3 Նեփի 19.19–24, 27–29, 31): Մեր բոլոր աղոթքները պետք է ուղղված լինեն մեր Երկնային Հորը և ավարտվեն Հիսուս Քրիստոսի անունով:

«Եվ այդ ժամանակ կհավաքեմ ես նրանց»

Դաս
40

3 Նեփի 16; 20–21

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ վերջին օրերում Իսրայելը հավաքելու և Սիոնը հաստատելու աշխատանքը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք 3 Նեփի 16, 20 և 21, խորհեք և աղոթեք այդ սուրբ գրությունների մասին: Այս գլուխներում պարունակվում են Նեփիացիներին ուղղված հարություն առած Փրկչի ուսմունքները: Այս գլուխներում Տերը սովորեցնում և մարգարեանում է վերջին օրերում ավետարանի Վերականգնման և Իսրայելի տան հավաքման մասին:
2. Լրացուցիչ ընթերցանություն. 3 Նեփի 29–30; Մորմոն 5.9–24; Հավատո Հանգանակ 1.10:
3. Դասը սկսելուց առաջ գրատախտակին գրեք հետևյալ հարցերը.

> Ո՞րն է Իսրայելի տունը:
>
> Ինչո՞ւ Իսրայելը ցրվեց:
>
> Ովքե՞ր են Հեթանոսները:
>
> Ի՞նչ կապ ունեն Հեթանոսները Իսրայելի ցրվելու և հավաքվելու հետ:
>
> Ի՞նչ է Իսրայելի հավաքումը:
>
> Ի՞նչ նշաններ են տրվել՝ ցույց տալու համար, որ վերջին օրերի Իսրայելի հավաքումը սկսել է:
>
> Որպես Եկեղեցու անդամներ, ի՞նչ պատասխանատվություններ ենք կրում Իսրայելի հավաքման գործում:

4. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժությունը, ապա դասարան բերեք հետևյալ իրերը.
   ա. «Հակոբն օրհնում է իր որդիներին» (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 122); «Ջոզեֆ Սմիթ» (62449; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 400); և «Մկրտվող տղան» (62018) կամ «Մկրտություն» (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 601) նկարները:
   բ. Մորմոնի Գիրք:
   գ. Միսիոներական կրծքանշան կամ միսիոներական աշխատանքը ներկայացնող որևէ այլ առարկա:
   դ. Ձեր կամ ձեր ընտանիքի լուսանկարը:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Ցույց տվեք դասարան բերված առարկաները (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 4): Բացատրեք, որ այդ առարկաներից յուրաքանչյուրը այսօրվա դասի կարևոր մասերից

մեկն է ներկայացնում: Դասարանի անդամներին խնդրեք հիշել այդ առարկաները դասի ժամանակ և կռահել, թե ինչ կապ ունեն դրանք 3 Նեփի 16, 20, և 21 հատվածների հետ:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է կիրառել ընտրված սուրբ գրությունները առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Փրկիչը մարգարեանում է Իսրայելի տան ցրվելու մասին:

Դասարանի անդամներին խնդրեք ուշադրություն դարձնել գրատախտակի վրա գրված առաջին հարցին (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 3):

- Ո՞րն է Իսրայելի տունը:

  Բացատրեք, որ *Իսրայելի տուն և Իսրայել* անունները վերաբերվում են Հակոբի (որի անունը դարձավ Իսրայել) սերնդին (եթե օգտագործում եք ուշադրության վարժությունը, կարող եք ցուցադրել «Հակոբն օրհնում է իր որդիներին» նկարը որպես այս մասի բացատրություն): Իսրայելի տան անդամները սուրբ գրություններում կոչվում են «Տիրոջ ուխտի ժողովուրդ» (1 Նեփի 15.14) և «ուխտի զավակներ» (3 Նեփի 20.25–26): Նեփիացիներն Իսրայելի տնից էին, քանի որ Հակոբի որդի Հովսեփի սերնդից էին (1 Նեփի 5.14):

Բացատրեք, որ Փրկիչը սովորեցնում էր Իսրայելի ցրվելու մասին: Այնուհետև դասարանի անդամներին խնդրեք ուշադրություն դարձնել գրատախտակի երկրորդ հարցին.

- Ինչո՞ւ Իսրայելը ցրվեց:

  Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 16.4: Դասարանի մյուս անդամներին խնդրեք հետևել՝ այս հարցի պատասխանը գտնելու համար: Երբ դասարանի անդամները կքննարկեն այս հարցը, հետևեք, որպեսզի նրանք հասկանան, որ Իսրայելի տունն անհավատության պատճառով ցրվեց ամբողջ աշխարհի երեսով:

2. Փրկիչը մարգարեանում է Իսրայելի տան հոգևոր հավաքման մասին:

Դասարանի անդամներին խնդրեք ուշադրություն դարձնել գրատախտակին գրված երրորդ հարցին.

- Ովքե՞ր են հեթանոսները:

  Բացատրեք, որ սուրբ գրություններում *Հեթանոսներ* բառը օգտագործվում է այն մարդկանց համար, ովքեր չեն ծնվել Իսրայելի տնից, կամ այն ազգերի համար, որոնք չունեն ավետարանը, թեպետև այդ ազգերի որոշ անհատներ կարող են լինել Հակոբի սերնդից:

Դասարանի անդամներին խնդրեք ուշադրություն դարձնել գրատախտակին գրված չորրորդ հարցին.

- Ի՞նչ առնչություն ունեն Հեթանոսները Իսրայելի ցրվելու և հավաքվելու հետ:

  Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 3 Նեփի 16.7–9 և 21.1–5: Դասարանի մյուս անդամներին խնդրեք հետևել՝ այս հարցի պատասխանները գտնելու համար:

  Շեշտե՛ք, որ համաձայն Փրկչի մարգարեության Հեթանոսները մեծ դեր են խաղացել Իսրայելի ցրման գործում: Շեշտե՛ք նաև, որ Հեթանոսների միջոցով Իսրայելը վերջապես կստանա վերականգնված ավետարանը և կհավաքվի:

Դասարանի անդամներին խնդրեք ուշադրություն դարձնել գրատախտակին գրված հինգերորդ հարցին.

- Ի՞նչ է Իսրայելի հավաքումը:

  Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 3 Նեփի 16.4, 12; 20.10–13: Դասարանի մյուս անդամներին խրախուսեք հետևել, փնտրելով այս հարցի պատասխանները: Երբ դասարանի անդամները քննարկում են այս հարցը, հետևեք, որպեսզի նրանք հասկանան հետևյալը.

  Իսրայելը հավաքվում է, երբ մարդիկ ստանում են Քավիչի և Նրա վերականգնված ավետարանի մասին վկայությունը և միանում են Նրա Եկեղեցուն (եթե անց եք կացնում ուշադրության վարժությունը, ապա ցուցադրեք մկրտության արարողությունը պատկերող մի նկար):

  Վերականգնված Եկեղեցու վաղ օրերին Իսրայելի հավաքման հետ է կապված Իր Եկեղեցու անդամներին ուղղված Տիրոջ կոչը՝ միավորվել Հյուսիսային Ամերիկայում, լինի դա Միսուրիում, Իլինոյսում կամ Սոլթ Լեյքի հարթավայրում: Ապագայում մեկ այլ հավաք տեղի կունենա, երբ Իսրայելի տան անդամները կհավաքվեն իրենց ժառանգության հողերում (տե՛ս այս դասի 3 բաժինը): Ինչևէ, հավաքումն այժմ տեղի է ունենում հոգևոր առումով:

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է. «Իսրայելի հավաքումն իրականացվում է, երբ հեռու երկրների մարդիկ ընդունում են ավետարանը և մնում են իրենց հայրենի հողերում: Մեքսիկացիների հավաքումը Մեքսիկայում է, հյուսիսային երկրների հավաքումը՝ Սկանդինավիայում, Գերմանացիների հավաքման վայրը Գերմանիան է, Պոլինեզիացիներինը՝ կղզիներում, Բրազիլացիներինը՝ Բրազիլիայում, Արգենտինացի-ներինը՝ Արգենտինայում» (in Conference Report, Apr. 1975, 4; or *Ensign,* May 1975, 4):

Դասարանի անդամներին խնդրեք ուշադրություն դարձնել գրատախտակին գրված վեցերորդ հարցին.

- Ի՞նչ նշան տրվեց՝ ցույց տալու համար, որ Իսրայելի վերջին օրերի հավաքումը սկսել է:

  Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 3 Նեփի 21.2–7 և 29.1–2: Դասարանի մյուս անդամներին խրախուսեք հետևել, փնտրելով հարցի պատասխանը:

- Նեփիացիների «ասածները» և «գործերը» ինչպե՞ս եկան դեպի Հեթանոսները: (Մորմոնի Գրքի թարգմանության միջոցով: Եթե օգտագործում եք ուշադրության վարժությունը, կարող եք այն օգտագործել Մորմոնի Գրքի քննարկման ընթացքում:) Ի՞նչ դեր է խաղում Մորմոնի Գիրքը Իսրայելի հավաքման գործում: (Օրինակների համար համեմատեք 3 Նեփի 16.4, 12 և 20.10–13՝ 1 Նեփի 6.3–4-ի և Մորմոնի Գրքի վերնագրի էջի հետ: Շեշտեք, որ Մորմոնի Գիրքը գրվել է Տիրոջ ուխտերը սովորեցնելու և համոզելու բոլոր մարդկանց, որ Հիսուսը Քրիստոսն է:)

- Տերը խոսեց մի ծառայի մասին, որը պետք է օգներ Մորմոնի Գիրքը աշխարհ բերելու «մեծ և . . . հրաշալի գործում» (3 Նեփի 21.9–10): Ո՞վ էր այդ ծառան: (Ջոզեֆ Սմիթը: Եթե անցկացրել եք ուշադրության վարժությունը, կարող եք ցուցադրել Ջոզեֆ Սմիթի նկարը քննարկման ընթացքում:)

  Կարող եք նշել, որ Ջոզեֆ Սմիթը բառացիորեն Հակոբի հետնորդն էր (2 Նեփի 3.3–8, 11–12), սակայն նա ապրում էր Հեթանոսների ազգի մեջ: Ավետարանը վերականգնելու և Մորմոնի Գիրքը աշխարհ բերելու նրա գործը հանդիսանում են Տիրոջ խոստումի իրականացման մի մասը, այն է՝ «ճշմարտությունը կհասնի Հեթանոսներին» (3 Նեփի 16.7):

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 16.11–12: Ի՞նչ խոստացավ Տերը կատարել այն բանից հետո, երբ ավետարանի լրիվությունը կվերականգնվեր Հեթանոսների միջոցով: (Նա խոստացավ հիշել Իսրայելի տան հետ կապած Իր ուխտը:)

- Այն ուխտը, որ Տերը խոստացավ հիշել, Աբրահամի ուխտն էր (3 Նեփի 20.25, 27, 29; 21.4; Մորմոն 5.20): Որո՞նք են Աբրահամի ուխտի օրհնությունները և պատասխանատվությունները: (Տե՛ս Ծննդոց 17.1–8; Աբրահամ 2.6, 9–11:)

- Ի՞նչ կպատահի այն Հեթանոսների հետ, որոնք կապաշխարեն և կդառնան դեպի Աստված: (Տե՛ս 2 Նեփի 30.2; 3 Նեփի 16.13; 21.6, 22: Բոլոր մարդիկ, որոնք ապաշխարում և մկրտության միջոցով դառնում են դեպի Տերը, կհամարվեն Իր ուխտյալ ժողովրդի շարքում:)

  Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «*Յանկացած մարդ, ով ընդունում է ավետարանը, դառնում է Իսրայելի տան անդամը*: Այլ խոսքերով, նա դառնում է *ընտրված գծի* անդամ, կամ Աբրահամի զավակը, Իսահակի և Հակոբի միջոցով, որոնց այդ խոստումները տրվել են: Եկեղեցու անդամներ դարձող մարդկանց *մեծամասնությունը* Հովսեփի որդի Եփրեմի միջոցով Աբրահամի *բառացի հետնորդներն են*: Նրանք, ովքեր Աբրահամի և Իսրայելի բառացի հետնորդները չեն, պետք է *դառնան* այդպիսիները, և, *երբ նրանք մկրտվում և հաստատվում են, ապա պատվաստվում են այդ ծառին, արժանանում արքայության բոլոր իրավունքներին և արտոնություններին*» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 3.246):

Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ գրատախտակին գրված յոթերորդ հարցը.

- Որպես Եկեղեցու անդամներ, մենք ի՞նչ պատասխանատվություններ ունենք Իսրայելի հավաքման գործում:

  Դասարանի անդամներին հնարավորություն տվեք պատասխանել հարցին: Կարող եք նաև ուղղել ստորև տրված հարցը ավելի ծավալուն քննարկում սկսելու համար: Եթե անցկացրել եք ուշադրության վարժությունը, քննարկման ժամանակ կարող եք ցուցադրել մի լուսանկար և միսիոներական մի կրծքանշան (կամ որևէ այլ առարկա):

- Եկեղեցու առաքելությունն է՝ հրավիրել բոլոր մարդկանց գալ դեպի Քրիստոսը: Մենք կատարում ենք այս առաքելությունը՝ ավետարանը քարոզելու, մահացածներին փրկելու և Սրբերին կատարելագործելու միջոցով: Ինչպե՞ս է Եկեղեցու առաքելությունը նպաստում Իսրայելի հավաքմանը:

3. Փրկիչը մարգարեանում է Իսրայելի տան ժամանակավոր հավաքման մասին:

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 16.16 և 20.14: Համաձայն այս տողերի, ի՞նչ խոստում է տալիս Տերը Նեփիացիներին: (Որպես ժառանգություն նրանց կտրվեն Ամերիկայի հողերը: Տե՛ս նաև 2 Նեփի 1.5–7:) Ի՞նչ պատասխանատվություններ են ուղղեկցում այս խաստումը: (Տե՛ս Ենովս 1.10; Եթեր 2.8–9:)

- Դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ 3 Նեփի 21.22–29 հատվածները: Համաձայն այս տողերի, ի՞նչ կպատահի ժառանգության այդ հողերում վերջին օրերին: (Կկառուցվի Նոր Երուսաղեմ քաղաքը:)

Նշեք, որ նախկին Երուսաղեմ քաղաքը նույնպես կվերականգնվի (3 Նեփի 20.29–34): Որպես ժառանգություն Հրեաներին կտրվի այս հողը:

- Փրկիչն ասել է, որ կհավաքի Իր մարդկանց և կհիմնի Սիոնը նրանց մեջ (3 Նեփի 21.1): Թեպետև *Սիոն* բառը հաճախ վերաբերում է հատուկ վայրերի, այն նաև սրտի և մտքի վիճակ է: Ինչպե՞ս է նկարագրվել Սիոնը սուրբ գրություններում: (Օրինակների համար տե՛ս Վ. և Ու. 97.21 և Մովսես 7.18–19:) Ինչպե՞ս մենք կարող ենք հիմնել Սիոնն այսօր մեր տներում, ծխերում և ցցերում:

Եզրափակում

Դասարանի անդամներին հիշեցրեք, որ վերջին օրերին *Իսրայելի տուն* արտահայտությունն ընդգրկում է բոլոր նրանց, ովքեր ապաշխարում են, հետևում են Հիսուս Քրիստոսին և մկրտվում են Նրա Եկեղեցում: Դասարանի անդամներին խրախուսեք ապրել այնպես, որպեսզի արժանանան լինելու Տիրոջ ուխտյալ ժողովրդի շարքերում: Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

«Նա մեկնաբանեց նրանց բոլոր բաները»

Դաս
41

3 Նեփի 22–26

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին մեծացնել մարգարեների խոսքերը ուսումնասիրելու իրենց ցանկությունը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 3 Նեփի 22; 23.1–5: Փրկիչը մեջ է բերում Եսայիայի մարգարեությունները վերջին օրերի Իսրայելի տան մասին: Նա պատվիրում է մարդկանց ուսումնասիրել Եսայիայի և մյուս մարգարեների խոսքերը:

   բ. 3 Նեփի 23.6–14; 24; 25: Փրկիչը ժողովրդին պատվիրում է իրենց հիշատակարանում ավելացնել Սամուէլ Լամանացու և Մաղաքիայի խոսքերը:

   գ. 3 Նեփի 26: Փրկիչը բացատրում է բոլոր բաները աշխարհի սկզբից մինչև այն ժամանակը, երբ Նա կգա Իր փառքի մեջ:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Եսայիա 54; Մաղաքիա 3–4:

3. Եթե առկա է «Քրիստոսը խնդրում է Հիշատակարանը» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ընթացքում (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 323):

4. Եթե պատրաստվում եք անցկացնել ուշադրության վարժությունը, ապա Երեխաների Խմբի անդամներին խնդրեք պատրաստվել երգել “Search, Ponder, and Pray” երգը (*Childrenդs Songbook,* 109): Կամ կարող եք պատրաստվել օգտագործել երգի ձայնագրությունը կամ կարդալ երգի բառերը:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրեք հետևյալ խոսքերը գրատախտակին. *Ուսումնասիրել, Խորհել, Աղոթել*

Հարցրեք անդամներին, թե ինչպես են այս խոսքերը վերաբերում սուրբ գրությունների ուսումնասիրման եղանակներին:

Այնուհետև բացատրեք, որ այս դասը ցույց է տալիս, թե ինչպես էր Փրկիչը օգտագործում սուրբ գրությունները թանկարժեք ճշմարտությունները սովորեցնելու համար: Երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, խորհում և աղոթում դրանց մասին, մենք ավելի լավ ենք հասկանում այդ ճշմարտությունները:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. **Փրկիչը մեջ է բերում Եսայիայի մարգարեությունները Իսրայելի տան մասին:**

Քննարկեք 3 Նեփի 22; 23.1–5: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ գլուխ 22-ում Փրկիչը մեջ է բերում Եսայիայի ուսմունքների մի ամբողջ գլուխ (Եսայիա 54), որը վերաբերվում է վերջին օրերում Սիոնի փառքին:

- Եսայիան կոչ է անում Իսրայելի տանը «Մեծացրու՛ քո վրանի տեղը . . . երկարացրու՛ պարաններդ, և ամրացրու՛ ցցերդ» (3 Նեփի 22.2): Ի՞նչ են խորհրդանշում վրանը և ցցերը: (Տե՛ս ստորև բերված մեջբերումը:) Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում «մեծացրու՛ քո վրանի տեղը» և «ամրացրու՛ ցցերդ» արտահայտությունները:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է.

  «Մարգարեները նմանեցնում են վերջին օրերի Սիոնը մի մեծ վրանի, որը կծածկի ամբողջ երկրագունդը: Այդ վրանը պարաններով կամրացվի ցցերին: Այդ ցցերը, իհարկե, երկրի վրա սփռված տարբեր աշխարհագրական օբյեկտներն են: Ներկայումս Իսրայելը հավաքվում է Սիոնի տարբեր ցցերի մոտ. . . .

  . . . Ցցերը Սրբերի համար պաշտպանություն են հանդիսանում տեսանելի և անտեսանելի թշնամիներից: Պաշտպանությունը՝ դա այն ուղղությունն է, որը տրվում է քահանայության միջոցով, որը զորացնում է վկայությունը, նպաստում է ընտանեկան միասնությանը և անհատական արդարամտությանը» (“Strengthen Thy Stakes,” *Ensign,* Jan. 1991, 2, 4):

- Ի՞նչ մենք կարող ենք անել անհատապես և ընտանիքներով, որպեսզի մեր ցցերը ապաստարան և պաշտպանություն դառնան մեզ՝ չարից պաշտպանվելու համար:

- Ինչպե՞ս էր Եսայիան նկարագրում Տիրոջ և Իսրայելի տան միջև եղած հարաբերությունները: (Տե՛ս 3 Նեփի 22.4–10: Նա ներկայացրեց Տիրոջը որպես ամուսին, իսկ Իսրայելը՝ որպես կին:) Այս նկարագրությունն ի՞նչ կարող է մեզ սովորեցնել Իր ժողովրդին Տիրոջ նվիրվածության մասին:

  Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը սովորեցրել է. «Որպես փեսացու Եհովայի կերպարը և որպես հարսնացու Իսրայելի կերպարը սուրբ գրություններում ամենատարածված փոխաբերություններից են, որոնք Տերը և Նրա մարգարեները օգտագործում են Աստվածության և ուխտի զավակների միջև փոխհարաբերությունները նկարագրելու համար. . . . Երբեմն Քրիստոսը արդարացիորեն զայրանում է ուրացող Իսրայելի վրա, սակայն դա կարճատև և ժամանակավոր բնույթ է կրում՝ «մի փոքր պահ»: Կարեկցանքը և ողորմածությունը միշտ վերադառնում և իշխում են ամենաաջակցող ճանապարհով: Լեռները և սարերը կարող են անհետանալ: Մեծ ծովերի ջրերը կարող են չորանալ . . . Սակայն Տիրոջ բարությունը և խաղաղությունը երբեք չեն վերցվի Նրա ուխտի զավակներից: Նա երդվել է երկնային ուխտով, որ Իր ցասումը չի լինի նրանց հետ հավիտյան» (*Christ and the New Covenant* [1997], 290):

- Ինչպե՞ս է Տերը նկարագրում այն վայրը, ուր Իսրայելի տունը պետք է հավաքվի վերջին օրերերում: (Տե՛ս 3 Նեփի 22.11–12; տե՛ս նաև Հայտնություն 21.18–21:) Ի՞նչ խոստումներ են տրվել նրանց, ովքեր կապրեն այդ վայրում: (Տե՛ս 3 Նեփի 22.13–17:) Ինչպե՞ս են այդ խոստումները ուժ տալիս նրանց, ովքեր չարչարանքների մեջ են:

- Այս մարգարեություններից մեջբերումներ կատարելուց հետո Հիսուսն ասաց ժողովրդին. «Դուք պարտավոր եք քննել այս բաները» (3 Նեփի 23.1): Ի՞նչ է նշանակում ուսումնասիրել սուրբ գրությունները դրանք պարզապես կարդալու փոխարեն:

  Երեց Հենրի Բ. Այրինգն ասել է. «Մենք գնահատում ենք Աստծո խոսքը, ոչ միայն կարդալով սուրբ գրությունները, այլ ուսումնասիրելով դրանք: Մենք կսնվենք ավելի շուտ, եթե խորհենք դրանցից մի քանիսի շուրջ, թույլ տալով, որ Սուրբ Հոգին դրանք մեզ համար գանձեր դարձնի, քան արագ և մակերեսորեն կարդալով սուրբ գրությունների բոլոր գլուխները:» (in Conference Report, Oct. 1997, 115; or *Ensign,* Nov. 1997, 84):

- Ինչպե՞ս եք օրհնվել, երբ ուսումնասիրել եք սուրբ գրությունները: (Կարող եք դասարանի անդամներին խնդրել կիսվել իրենց փորձով, երբ սուրբ գրությունների առանձին հատվածներ ոգեշնչում և ներըմբռնում են պարգևել կամ անձնական խնդիրների լուծումներ տվել նրանց:)
- Ինչո՞ւ էր կարևոր, որ մարդիկ գրի առնեին Փրկչի խոսքերը: (Տե՛ս 3 Նեփի 23.3–5:)
- Փրկիչը մարդկանց պատվիրեց. «Ուսումնասիրեք մարգարեներին, քանզի շատերը կան, որ վկայում են այս բաների մասին» (3 Նեփի 23.5): Ինչի՞ մասին են վկայում մարգարեները: Ինչպե՞ս եք ուժ ստացել հին և մեր օրերի մարգարեների վկայությունների միջոցով:

2. Փրկիչն իր ժողովրդին պատվիրում է լրացումներ կատարել իրենց հիշատակարանում:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 23.6–14; 24; 25-ից: Բացատրեք, որ մարդկանց պատվիրելուց հետո ամեն-ինչ գրի առնել, Հիսուսը շարունակեց սովորեցնել սուրբ գրությունների վերաբերյալ: Ցուցադրեք «Հիսուսը խնդրում է հիշատակարանը» նկարը:

- Հիսուսը Նեփիացիներին պատվիրեց իրենց հիշատակարանում ավելացնել Սամուէլ Լամանացու մարգարեությունը: Այդ մարգարեության մեջ Սամուէլն ասել է, որ «կլինեն շատ սրբեր, որ կբարձրանան մեռելներից, և կհայտնվեն շատերին, և կծառայեն նրանց» (3 Նեփի 23.6–13): Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր կարևոր այդ գրվածքը: (Որպես պատասխան կարող եք ասել, որ Սամուէլի մարգարեության իրականացումը վկայում է Հարության իրական լինելու մասին:)
- Այն ամենից հետո, երբ Հիսուսը մարդկանց պատվիրեց գրի առնել Սամուէլի մարգարեությունները, ի՞նչ Նա պատվիրեց նրանց անել: (Տե՛ս 3 Նեփի 23.14:) Ի՞նչ հատուկ եղանակներով մենք կարող ենք ավելի արդյունավետ սովորեցնել Փրկչի խոսքերը:
- Հիսուսը մարդկանց պատվիրեց նաև գրի առնել Մաղաքիա մարգարեի մի քանի խոսքերը (3 Նեփի 24.1): Ինչո՞ւ էին Մաղաքիայի խոսքերը բացակայում Նեփիացիների հիշատակարաններից: (Մաղաքիան Հին Կտակարանի մարգարե էր, որի խոսքերը չէին ընդգրկվել արույրե թիթեղների վրա, քանի որ նա ապրել էր ավելի վաղ՝ մոտ 200 տարի անց այն ժամանակից, երբ Լեքին հեռացավ Երուսաղեմից:)
- Մաղաքիայի ո՞ր ուսմունքները հատկապես մեծ կարևորություն ունեն մեզ համար: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 3 Նեփի 24.1, 8–18 և 25.1–6 այս հարցի պատասխանները գտնելու համար: Կարող եք դասարանը բաժանել երկու խմբի: Յուրաքանչյուր խմբի խնդրեք կարդալ հետևյալ հատվածները և նկարագրել Մաղաքիայի մտքերը: Այնուհետև քննարկեք այդ հատվածները ստորև տրված եղանակով:)

  ա. 3 Նեփի 24.1; համեմատեք Մաղաքիա 3.1: Ի՞նչ սուրհանդակ է ուղարկվել Տիրոջ Երկրորդ Գալստի համար ճանապարհ պատրաստելու: (Տե՛ս Վ. և Ու. 45.9: Վերականգնված ավետարանը, ինչպես նաև երկնային սուրհանդակների կողմից վերականգնած բանալիները և զորությունները:) Ի՞նչ առումով կարող է Ջոզեֆ Սմիթը համարվել վերջին ժամանակաշրջանի սուրհանդակ:

  բ. 3 Նեփի 24.8–12; համեմատեք Մաղաքիա 3.8–12: Ի՞նչ օրհնություններ են այս հատվածներում խոստացվել նրանց, ովքեր վճարում են տասանորդը և նվիրատվությունները:

  գ. 3 Նեփի 24.13–18; համեմատե՛ք Մաղաքիա 3.13–18: Ինչո՞ւ են որոշ մարդիկ հավատացած, որ զուր է Աստծուն ծառայելը: (Տե՛ս 3 Նեփի 24.14–15:) Ինչպե՞ս մենք կարող ենք հաստատուն մնալ մեր հավատքում, երբ թվում է, որ չարը բարգավաճում է:

  դ. 3 Նեփի 25.1–6; համեմատե՛ք Մաղաքիա 4.1–6: Ի՞նչ է նշանակում մնալ առանց արմատի կամ ճյուղի: (Մտածեք, որ ձեր *արմատները* ձեր ծնողներն ու նախնիներն են, իսկ ձեր *ճյուղերը* ՝ ձեր երեխաները և սերունդը: Մեր արմատների և ճյուղերի հետ միավորվելու համար, մենք պետք է ստանանք տաճարային արարողություններ:) Ո՞ւմ Տերը պետք է ուղարկեր Երկրորդ Գալստից առաջ: Ե՞րբ և որտե՞ղ վերադարձավ

Եղիան: (Տե՛ս Վ. և Ու. 110.13–16:) Ի՞նչ բանալիներ նա վերականգնեց: (Կնքման զորության բանալիները, որոնք մեզ հնարավորություն են տալիս միանալ մեր նախնիների և սերունդների հետ:)

3. Փրկիչը մեկնաբանում է բոլոր բաները աշխարհի սկզբից:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 26-ից:

- Ինչպե՞ս բացատրեց Փրկիչը Մաղաքիայի մարգարեությունները Նեփիացիներին սովորեցնելու պատճառը: (Տե՛ս 3 Նեփի 26.2:) Մաղաքիայի ո՞ր ուսմունքներն են, հատկապես, կարևոր ձեզ համար:
- Ի՞նչ Փրկիչը սովորեցրեց մարդկանց Մաղաքիայի մարգարեությունները քննարկելուց հետո: (Տե՛ս 3 Նեփի 26.1, 3–5: Եթե անհրաժեշտ է, բացատրեք, որ *մեկնաբանել* նշանակում է մանրամասնորեն և հանգամանորեն բացատրել:) Ինչո՞ւ մենք պետք է ավետարանը սովորեցնենք «սկզբից», ինչպես արեց Հիսուսը:
- Իր հիշատակարանում Մորմոնը ընդգրկել է միայն Հիսուսի սովորեցրածի «փոքրագույն մասը» (3 Նեփի 26.8): Միայն այս փոքր մասի առկայությունն ինչպե՞ս է փոխում մեր հավատքը: Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի մեծ օրհնություններ ստանալ: (Տե՛ս 3 Նեփի 26.9:)

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Տարիների ընթացքում շատ մարդիկ ինձ հարցրել են. «Ե՞րբ մենք կստանանք Մորմոնի Գրքի մնացած մասը»: Ես ասում եմ. «Համայնքից քահանան կցանկանային կարդալ թիթեղների կնքված մասը»: Եվ համարյա միշտ ստանում եմ 100–տոկոսանոց պատասխան: Եվ, այնուհետև, ես հարցնում եմ լսարանին.«Ձեզանից ովքե՞ր են կարդացել այն մասը, որը բացվել է մեզ»: Եվ կան շատերը, ովքեր չեն կարդացել Մորմոնի Գիրքը, չկնքված մասը: Մենք շատ հաճախ սպասում ենք տպավորիչ և անհասանելի բաների: Ես շատերին եմ հանդիպել, որոնք ցանկություն են հայտնում ապրել ավելի բարձր օրենքներով, մինչդեռ չեն ապրում ավելի ցածր օրենքներով» (*The Teachings of Spencer W. Kimball,* ed. Edward L. Kimball [1982], 531–32):
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք կարդալ 3 Նեփի 26.14, 16: Ի՞նչ են ասում այս հատվածները երեխաների նկատմամբ Փրկչի վերաբերմունքի մասին:
- Ինչպե՞ս էին այս իրադարձություններին ականատես եղած Նեփիացիները վարվում միմյանց հետ: (Տե՛ս 3 Նեփի 26.19–21:) Ինչպե՞ս մենք կարող ենք հետևել նրանց օրինակին՝ մեր ամուսինների հետ մեր փոխհարաբերություններում, մեր ընտանիքներում, ծխերում և ցցերում:

Եզրափակում

Բացատրեք, որ Փրկիչը ցույց տվեց սուրբ գրությունների կարևորությունը, կատարելով մեջբերումներ դրանցից, պատվիրելով մարդկանց ուսումնասիրել դրանք, և ավելացումներ կատարել: Երբ մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները, խորհում ենք դրանց շուրջ կամ աղոթում ենք դրանց մասին, մենք հասկանում ենք ավելի խորը և ի վիճակի ենք լինում ավելի արդյունավետ սովորեցնել մյուսներին:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

«Այս է իմ ավետարանը»

Դաս
42

3 Նեփի 27–30; 4 Նեփի

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ Հիսուս Քրիստոսի ավետարանի հիմնական վարդապետությունները և սովորեցնել նրանց, որ կենդանի ավետարանը դեպի ճշմարիտ և հավերժական երջանկություն տանող միակ ճանապարհն է:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. 3 Նեփի 27: Փրկիչն Իր տասներկու Նեփիացի աշակերտներին պատվիրում է անվանել Եկեղեցին Իր անունով: Նա մեկնաբանում է Իր ավետարանը:

   բ. 3 Նեփի 28: Մեկ առ մեկ Փրկիչն Իր տասներկու Նեփիացի աշակերտներին պարգևում է իրենց սրտի ցանկությունները: Աշակերտներից երեքը ցանկանում և ստանում են զորություն մնալու երկրի վրա և քարոզելու ավետարանը մինչև Փրկիչը կվերադարձնա Իր փառքի մեջ:

   գ. 4 Նեփի 1: Բոլոր մարդիկ դարձի են գալիս և հաստատում են մի հասարակություն կատարյալ խաղաղության մեջ: Շատ տարիներ անց, մարդկանց մեծամասնությունն ընկնում է անհավատության մեջ և մերժում ավետարանը:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Վարդապետություն և Ուխտեր 39.1–6:

3. Եթե առկա է «Քրիստոսը Երեք Նեփիացիների հետ» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ընթացքում (Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 324):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Գրատախտակին գրեք *Մորմոնական Եկեղեցի:* Դասարանի անդամներին խնդրեք մտքում մտածել այս անվան հետ կապված իրենց զգացումների մասին: Այնուհետև կարդացեք Նախագահ Բոյդ Ք. Փաքերի հետևյալ խոսքերը.

«Ուրիշները մեզ Մորմոններ են կոչում: Ես դեմ չեմ, եթե նրանք օգտագործում են այդ անունը: Սակայն, երբեմն, մենք միտում ունենք մեզ «Մորմոնական Եկեղեցի» կոչել: Ես չեմ կարծում, որ ճիշտ ենք վարվում» (“The Peaceable Followers of Christ,” *Ensign,* Apr. 1998, 64):

- Ինչո՞ւ է ճիշտ, երբ մենք մեզ չենք կոչում «Մորմոնական Եկեղեցի»:

  Առաջին Նախագահությունն ասել է. «Հիշեք, որ սա Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, շեշտե՛ք այդ փաստը, երբ ծանոթանում եք ուրիշների հետ . . . Մենք զգում ենք, որ շատ հաճախ ոմանք կարող են թյուրիմացության մեջ ընկնել «Մորմոնական Եկեղեցի» անվան օգտագործման պատճառով» (“Policies and Announcements,” *Ensign,* Mar. 1983, 79):

Ջնջե՛ք *Մորմոնական Եկեղեցի* բառը: Դասարանի անդամներին ասացեք, որ 3 Նեփի 27 պարունակում է Իր Եկեղեցու անվան վերաբերյալ Հիսուսի հրահանգները՝ տրված Նեփիացի Իր աշակերտներին:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Փրկիչը Նեփիացի Իր աշակերտներին պատվիրում է կոչել Եկեղեցին Իր անունով: Նա մեկնաբանում է Իր ավետարանը:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 27:

- Հիսուսի Նեփիացի աշակերտները միավորված են հզոր աղոթքի և ծոմի մեջ, երբ Հիսուսը եկավ նրանց մոտ և ասաց. «Ի՞նչ եք կամենում, որ ես ձեզ տամ» (3 Նեփի 27.1–2): Ի՞նչ խնդրեցին Նրանից աշակերտները: (Տե՛ս 3 Նեփի 27.3:) Ո՞րն էր այս հարցին տված Նրա պատասխանը: (Տե՛ս 3 Նեփի 27.4–9:)
- Տերը պատվիրեց, որպեսզի Իր վերականգնված Եկեղեցին, ինչպես Նեփիացիների մոտ, կոչվի Իր անունով (Վ. և Ու. 115.4): Ինչո՞ւ է կարևոր հիշել, որ Եկեղեցին կոչվեց Հիսուս Քրիստոսի անունով:
- Հիսուսն ասաց. «Ինչ որ դուք անեք, դուք դա պիտի անեք իմ անունով» (3 Նեփի 27.7): Ի՞նչ ենք մենք անում Քրիստոսի անունով: (Ի լրումն դասարանի անդամների պատասխանների կարող եք կարդալ ստորև տրված հարցը:)

  Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ասել է.

  «Ամեն մի աղոթք մենք ասում ենք Նրա անունով: Ամեն մի արարողություն կատարում ենք Նրա անունով: Ամեն մի մկրտություն, հաստատում, օրհնություն, քարոզ, վկայություն ավարտվում է Նրա սուրբ անունով: Նրա անունով է, որ մենք բուժում ենք հիվանդներին և այլ հրաշքներ ենք կատարում, որոնց մասին չենք կարող խոսել:

  Հաղորդության ժամանակ մենք մեզ վրա ենք վերցնում Քրիստոսի անունը: Մենք ուխտ ենք կապում հիշել Նրան և պահել Նրա պատվիրանները: Նա ներկա է այն ամենին, ինչին մենք հավատում ենք» (“The Peaceable Followers of Christ,” *Ensign,* Apr. 1998, 64):
- Հիսուսը սովորեցրել է, որ բացի Իր անվամբ կոչվելով, Իր Եկեղեցին պետք է կառուցվի Իր ավետարանի վրա: Նա ասել է. «Եվ եթե այնպես լինի, որ Եկեղեցին կառուցված լինի իմ ավետարանի վրա, այդ ժամանակ Հայրը ցույց կտա իր սեփական գործերը դրանում» (3 Նեփի 27.10): Որո՞նք են Հոր գործերը: (Պատասխանների համար տե՛ս 3 Նեփի 21.1–9, 24–29; Մովսես 1.39:) Ինչպե՞ս եք տեսել այդ գործերը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:

Նշեք, որ, երբ Եկեղեցու անդամները բերում են իրենց վկայությունները, նրանք հաճախ նշում են, որ ավետարանը ճշմարիտ է: Դասարանի անդամներին խնդրեք մտքում մտածել, թե ինչ կպատասխանեին, եթե «Ես գիտեմ, որ ավետարանը ճշմարիտ է» իրենց հայտարարությունից հետո նրանց հարցնեին «Ի՞նչ է ավետարանը»:

Գրատախտակին գրեք *«Սա իմ ավետարանն է»:* Բացատրեք, որ այն բանից հետո, երբ Հիսուսն ասաց, որ Իր Եկեղեցին պետք է կառուցվի Իր ավետարանի վրա, Նա Իր աշակերտներին տվեց Իր ավետարանի հակիրճ, սակայն ամբողջական սահմանումը: Դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ 3 Նեփի 27.13–22 հատվածները, ուշադրություն դարձնելով Հիսուս Քրիստոսի ավետարանի տարբեր ասպեկտներին: Կարող եք դասարանի անդամներից մեկին հրավիրել պատասխանները գրատախտակին գրել: Որոշ հնարավոր պատասխաններ տրվում են ստորև.

ա. Հիսուսի ենթարկվելը Հոր կամքին (3 Նեփի 27.13)
բ. Քավությունը (3 Նեփի 27.14)
գ. Հարությունը (3 Նեփի 27.14–15)

դ. Դատաստանը (3 Նեփի 27.14–15)
ե. Ապաշխարությունը (3 Նեփի 27.16, 19–20)
զ. Մկրտությունը (3 Նեփի 27.16, 20)
է. Հավատք առ Հիսուս Քրիստոսը (3 Նեփի 27.19)
ը. Սուրբ Հոգու պարգևը (3 Նեփի 27.20)
թ. Մինչև վերջ համբերելը (3 Նեփի 27.16–17, 19)

- Ի՞նչ Փրկիչը խոստացավ նրանց, ովքեր ապրում են ըստ Իր ավետարանի: (Տե՛ս 3 Նեփի 27.21–22:)

- Հիսուսը հարցրեց Իր աշակերտներին, թե ինչպիսի մարդիկ նրանք պետք է լինեն: Ո՞րն էր այդ հարցի պատասխանը: (Տե՛ս 3 Նեփի 27.27: Դասարանի անդամներին խնդրեք մտովի խորհել, թե ինչ իրենք կարող են անել Փրկչին նմանվելու համար:)

2. Փրկիչը բավարարում է Իր տասներկու աշակերտների ցանկությունները: Աշակերտներից երեքը ցանկանում են մնալ երկրի վրա մինչև Նրա Երկրորդ Գալուստը:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 3 Նեփի 28-ից: Բացատրեք, որ Իր Հոր մոտ վերադառնալուց առաջ Փրկիչը մեկ առ մեկ խոսեց Իր աշակերտների հետ և հարցրեց նրանցից յուրաքանչյուրի ցանկությունը: Աշակերտներից ինը խնդրեցին, որ իրենց ծառայություններն ավարտվեն, երբ իրենք հասնեն որոշակի տարիքի և այնուհետև շտապ գնան Նրա մոտ՝ Նրա արքայություն: Երեքը տատանվում էին հայտնել իրենց ցանկությունները, սակայն Փրկիչը գիտեր նրանց մտքերը (3 Նեփի 28.1–5): Ցուցադրեք երեք Նեփիացիների հետ Հիսուսի նկարը:

- Ո՞րն էր վերջին երեք Նեփիացի աշակերտների ցանկությունը: (Տե՛ս 3 Նեփի 28.7–9: Նրանք ցանկանում էին մնալ երկրի վրա և հոգիներ բերել դեպի Քրիստոսը մինչև աշխարհի վերջը:) Հիսուսն ասաց, որ այդ աշակերտներն ավելի շատ օրհնվեցին իրենց ցանկության համար (3 Նեփի 28.7): Ի՞նչ մենք կարող ենք սովորել այս հատվածից: (Տե՛ս Վ. և Ու. 15.6; 16.6; 18.10–16:)

- Ի պատասխան իրենց խնդրանքին այդ երեք աշակերտները կերպարանափոխվեցին, այսինքն, նրանց մարմինները փոխվեցին այնպես, որպեսզի «կարողանային տեսնել Աստծո բաները» (3 Նեփի 28.13–15): Այնուհետև նրանք փոխվեցին: Ի՞նչ է սովորեցնում 3 Նեփի 28 գլուխը կերպարանափոխված էակների մասին: (Տե՛ս 3 Նեփի 28.7–40 և ստորև բերված ցուցակը: Կարող եք դասարանը երեք խմբի բաժանել, առաջին խմբին հանձնարարելով կարդալ 7–17 հատվածները, երկրորդին՝ 18–28 հատվածները, իսկ երրորդին՝ 29–40 հատվածները: Յուրաքանչյուր խմբի խնդրեք պատմել, թե ինչ են պատմում իրենց հատվածները կերպարանափոխված էակների մասին:)

  ա. Կերպարանափոխված էակները երբեք չեն իմանում, ինչ է մահը կամ մահվան ցավերը (3 Նեփի 28.7–8, 38):
  բ. Երբ Փրկիչը գա Իր փառքի մեջ, նրանք «պիտի փոխվեն մի ակնթարթում մահկանացությունից անմահության» (3 Նեփի 28.8):
  գ. Բացի աշխարհի մեղքերի համար ունեցած իրենց վշտից, նրանք չեն ապրում ցավ կամ դժբախտություն (3 Նեփի 28.9, 38):
  դ. Նրանք օգնում են մարդկանց դարձի գալ դեպի Տերը (3 Նեփի 28.9, 18, 23, 29–30):
  ե. Նրանք չեն կարող սպանվել կամ որևէ ձևով վնասվել (3 Նեփի 28.19–22):
  զ. Սատանան չի կարող փորձել նրանց կամ նրանց վրա որևէ զորություն ունենալ (3 Նեփի 28.39):
  է. Նրանք մնում են այդ կերպարանափոխված վիճակում մինչև Դատաստանի Օրը, երբ նրանք հարություն կառնեն և կընդունվեն Աստծո արքայություն (3 Նեփի 28.40):

Ծանոթություն. Տարբեր պատմություններ են շրջում այդ երեք Նեփիացիների մասին, որոնք կերպարանափոխվել են: Եկեղեցու անդամները պետք է ուշադիր լինեն այդ պատմություններին հավատալու կամ ուրշներին պատմելու հարցում: Դուք չպետք է քննարկեք դրանք դասարանում:

3. Խաղաղության շատ տարիներից հետո մարդկանց մեծ մասն ընկավ անհավատության մեջ և մերժեց ավետարանը:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները 4 Նեփիից: Բացատրեք, որ 4 Նեփիի փոքր գիրքը պարունակում է 300 տարիների պատմության Մորմոնի կրճատումները: Նախնական պատմությունը գրել են չորս հոգի՝ Նեփին, որը Փրկչի տասներկու Նեփիացի աշակերտներից մեկն էր, Նեփիի որդի Ամովսը և Ամովսի որդիներ Ամովսը և Ամմարոնը: Գրքի առաջին մասը նկարագրում է մեծ արդարության ժամանակաշրջանը, իսկ երկրորդ մասը պատմում է, թե ինչպես մարդիկ ընկան ամբարշտության մեջ:

4 Նեփիի մասին քննարկումները սկսելու համար դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ 4 Նեփի 1.1–18 հատվածները: Նրանց խնդրեք ուշադրություն դարձնել այս տողերում նկարագրված մարդկանց բնութագրերին: Այդ բնութագրերը գրեք գրատախտակին:

- Հիսուսի այցից հետո շատ տարիների ընթացքում ժողովրդի մեջ հակառակություններ չկային (4 Նեփի 1.2, 4, 13, 15–18): Ինչո՞ւ հակառակություններ չկային: (Տե՛ս 4 Նեփի 1.15:) Ինչպե՞ս մենք կարող ենք նմանվել 4 Նեփի-ում նկարագրված մարդկանց: Ի՞նչ մենք պետք է անենք, որ Աստծո սերը բնակվի մեր սրտերում:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Որպեսզի աշխարհը բարելավվի, սերը պետք է փոփոխություն կատարի մեր սրտերում . . . Դա կարող է կատարվել, եթե մենք մեր եսից այն կողմ նայենք և մեր սերը տանք Աստծուն և ուրիշներին, և անենք դա մեր ամբողջ սրտով և մեր ամբողջ մտքով» (“And the Greatest of These Is Love,” *Ensign,* Mar. 1984, 5):

- Խաղաղության այս ժամանակաշրջանում չկային «որևէ ձևի-ացիներ» (4 Նեփի 1.17): Ի՞նչ է դա նշանակում: (Տե՛ս 4 Նեփի 1.2–3, 15–17:) Ի՞նչ խնդիրներ են առկա այսօր մարդկանց խմբերի տարբերությունների պատճառով: Ինչպե՞ս կարող է ավետարանն օգնել մեզ միավորվել անկախ մեր տարբերություններից:

- Ի՞նչը դարձավ խաղաղության այդ երկարատև ժամանակաշրջանի ավարտի պատճառը: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ 4 Նեփի 1.20–46 այս հարցի պատասխանները գտնելու համար: Ամփոփեք նրանց պատասխանները գրատախտակի վրա: Որոշ հնարավոր պատասխաններ տրվում են ստորև:)

  ա. Բաժանումը և դասակարգերի ձևավորումը (4 Նեփի 1.20, 26, 35)
  բ. Հպարտությունը և ժլատությունը հարստությունների պատճառով (4 Նեփի 1.23–25, 41, 43; տե՛ս նաև 3 Նեփի 27.32)
  գ. Եկեղեցիները, որոնք հայտարարում են, որ գիտեն Քրիստոսին, սակայն մերժում են Նրա ավետարանի մեծ մասը (4 Նեփի 1.26–29, 34)
  դ. Եկեղեցիներ են կառուցվում՝ օգնելու մարդկանց շահ ստանալ (4 Նեփի 1.26–29, 41)
  ե. Սրտերի կարծրությունը (4 Նեփի 1.31)
  զ. Քրիստոսի հետևորդների հալածանքը (4 Նեփի 1.29–34)
  է. Ծնողներն իրենց երեխաներին սովորեցնում են չհավատալ Քրստոսին (4 Նեփի 1.38)
  ը. Ծնողները երեխաներին ատելություն են սովորեցնում (4 Նեփի 1.39)
  թ. Գաղտնի խմբակցությունները (4 Նեփի 1.42, 46)

- 4 Նեփի 1.40–46-ում նկարագրված վերաբերմունքը և արարքները Նեփիացիներին տարան դեպի կործանում: Ինչո՞ւ է մեզ համար կարևոր քննել այս հատվածը:

Եզրափակում

Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ 3 Նեփի 27.10, 22, 28–29-ում տրված Տիրոջ խոստումը: Նշեք, որ, երբ մարդիկ հավատարիմ են մնում ավետարանին, նրանք չեն կարող ավելի երջանիկ մարդիկ լինել (տե՛ս 4 Նեփի 1.16):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ երկուսը որպես դասի մաս:

1. Արձագանքել հալածանքին

- Ինչպե՞ս Հիսուսի մարդիկ արձագանքեցին հալածանքներին: (Տե՛ս 4 Նեփի 1.34:) Ինչպե՞ս նրանց պատասխանն ապացուցեց, որ նրանք իսկապես Հիսուսի ժողովուրդն են: (Տե՛ս 3 Նեփի 12.10–12, 38–39:) Ինչպե՞ս մենք պետք է վարվենք, երբ հալածվում ենք:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Եկեք սիրով և բարությամբ վերաբերվենք մեզ վիրավորողներին . . . Քրիստոսի հոգով, որը մեզ պատվիրել է շրջել մյուս այտը, եկեք հաղթահարենք չարը բարու միջոցով» (in Conference Report, Oct. 1982, 112; or *Ensign,* Nov. 1982, 77):

2. Հոգևոր ներըմբռնումներ 3 Նեփի 29–30

Քննարկեք 3 Նեփի 29–30 գլուխները: Գլուխ 29 բացահայտում է Մորմոնի Գրքի ի հայտ գալու և Իսրայելի հետ ունեցած Տիրոջ ուխտի իրականացման միջև եղած կապը (3 Նեփի 29.1–4, 8–9): Գլուխ 30 պարունակում է Տիրոջ պատվիրանի խոսքերը տրված Մորմոնին՝ վերջին օրերի Հեթանոսներին գրելու վերաբերյալ:

Դաս
43

«Ինչպե՞ս կարողացաք հեռանալ Տիրոջ ուղիներից»

Մորմոն 1–6; Մորոնի 9

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ ավետարանի սկզբունքներով ապրելու կարևորությունը աշխարհում աճող ամբարշտության պայմաններում:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Մորմոն 1: Լինելով տղա Մորմոնը ստանում է սուրբ հիշատակարանի պատասխանատվությունը: Ամբարշտությունն իշխում է երկրում, սակայն Մորմոնն արդար է: Նրան այցելում է Փրկիչը, սակայն նրան արգելվում է քարոզել մարդկանց:

   բ. Մորմոն 2; 3.1–16: Մորմոնը դառնում է Նեփիացիների բանակի առաջնորդը և առաջնորդում է Նեփիացիներին Լամանացիների դեմ բազմաթիվ ճակատամարտերում: Նեփիացիները կորուստներ են կրում իրենց ամբարշտությունների պատճառով: Մորմոնը ձեռք է բերում Նեփիի թիթեղները և շարունակում է գրել հիշատակարանում: Վերջիվերջո, Նեփիացիների ամբարշտությունների պատճառով Մորմոնը հրաժարվում է լինել նրանց առաջնորդը:

   գ. Մորմոն 3.17–22; 5.8–24: Մորմոնը խոսում է վերջին օրերի մարդկանց հետ, բացատրելով իր կողմից կրճատած և գրած հիշատակարանի նպատակների մասին:

   դ. Մորմոն 4; 5.1–7; 6; Մորոնի 9: Նեփիացիները շարունակում են ճակատամարտել Լամանացիների դեմ: Մորմոնը մեկ անգամ ևս համաձայնվում է առաջնորդել բանակը: Նա վերցնում է հիշատակարանը Սիմ սարից և թաքցնում է այն Կումորա սարում: Վերջին ճակատամարտում բացի 24 հոգուց բոլոր Նեփիացիները զոհվում են:

2. Պատրաստվեք ցուցադրել «Մորմոնը հրաժեշտ է տալիս ժամանակին մեծ եղած ազգին» (62043; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 319) և դասարանի անդամներից մեկին խնդրեք պատրաստվել բարձրաձայն կարդալ Մորմոն 6.16–22:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին հարցրեք.

- Եթե դուք նավակ ունենայիք, ինչպիսի՞ սարքավորում կցանկանայիք, որ լինել դրա վրա:

Լսելով բոլոր պատասխանները, բացատրեք, որ Մորմոնն իր ժողովրդին՝ Նեփիացիներին, համեմատում էր մի նավակի հետ, որի վրա բացակայում էին կարևոր սարքերը: Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 5.17–18:

- Ինչպե՞ս կարող են Փրկչին չհետևող մարդիկ նմանվել «առանց առագաստի կամ խարսխի» նավակի:

Նշեք, որ ի տարբերություն շատ Նեփիացիների, Մորմոնն օգտագործում էր ավետարանը որպես իր կյանքի առագաստ և խարիսխ: Նա արդար կյանքով էր ապրում, երբ բոլորն իր շուրջը, կարծես, ամբարիշտ էին: Այս դասը քննարկում է այն, ինչ պատահեց Մորմոնի և նրա ժողովրդի հետ, և ինչպես մենք կարող ենք օգտագործել ավետարանը որպես մեր կյանքի առագաստ և խարիսխ:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Մորմոնին տրվում է սուրբ հիշատակարանի պատասխանատվությունը:

Քննարկեք Մորմոն 1: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ Մորմոնի պատասխանատվությունը կայանում էր բոլոր թիթեղները կրճատելու և դրանք բերելու այն տեսքի, որը մենք այժմ գիտենք որպես Մորմոնի Գիրք: Մորմոն 1–6 գլուխները պարունակում են նրա ժամանակի և ժողովրդի պատմությունը:

- Ինչպիսի՞ տարիքում Մորմոնը ստացավ սուրբ հիշատակարանի պատասխանատվությունը: (Տե՛ս Մորմոն 1.2–3; տե՛ս նաև ուսուցանման լրացուցիչ միտքը:) Ի՞նչ պատվիրեց Ամմարոնը Մորմոնին թիթեղների վերաբերյալ: (Տե՛ս Մորմոն 1.3–4:) Մորմոնի ո՞ր հատկանիշները դեր խաղացին սուրբ հիշատակարանը պահպանելու և կրճատելու նրա պատրաստակամության մեջ:
- Երբ Մորմոնը 15 տարեկան էր, Տերն այցելեց նրան, և նա ճաշակեց և իմացավ Հիսուսի բարության մասին (Մորմոն 1.15): Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ Հիսուսի բարության մասին:
- Ինչո՞ւ Տերն արգելեց Մորմոնին քարոզել Նեփիացիներին: (Տե՛ս Մորմոն 1.16–17:) Ի՞նչ այլ կորուստներ կրեցին Նեփիացիներն իրենց սրտերի կարծրության պատճառով: (Տե՛ս Մորմոն 1.13–18: Նշե՛ք, որ «սիրելի աշակերտները, որոնք հետ վերցվեցին, այն երեք Նեփիացիներն էին, որոնք ցանկացան մնալ երկրի վրա մինչև Փրկչի Երկրորդ Գալուստը, տե՛ս 3 Նեփի 28.1–9:) Ի՞նչ կորուստներ մենք կարող ենք կրել, եթե կարծրացնենք մեր սրտերը Տիրոջ և Նրա ծառաների հանդեպ:

2. Մորմոնը դառնում է Նեփիացիների բանակի առաջնորդը: Նեփիացիները ճակատամարտում կորուստներ են կրում իրենց ամբարշտությունների պատճառով:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորմոն 2; 3.1–16-ից:

- Ինչպիսի՞ն էին Նեփիացիների հասարակական պայմանները Մորմոնի ժամանակներում: (Տե՛ս Մորմոն 1.19; 2.1, 8, 10, 18:) Այդ պայմաններն ինչպե՞ս էին ապացուցում ավելի վաղ մարգարեների խոսքերը: (Տե՛ս Մորմոն 1.19; Մոսիա 12.4–8; Հելաման 13.5–10:) Մորմոնի նման ապրելով ամբարիշտ ժամանակներում ինչպե՞ս մենք կարող ենք պահպանել մեր հավատքը և անձնական արդարակեցությունը: (Հնարավոր պատասխանների համար տե՛ս Ալմա 17.2–3; Հելաման 3.35; Վ. և Ու. 121.45–46:)
- Ինչո՞ւ Մորմոնը ուրախացավ, երբ տեսավ մարդկանց վիշտը: (Տե՛ս Մորմոն 2.10–12:) Ինչո՞ւ էր նրա ուրախությունը զուր: (Տե՛ս Մորմոն 2.13–14:) Ո՞րն է «վշտանալ ի ապաշխարություն» և «վշտանալը նզովվածների» միջև տարբերությունը: (Տե՛ս նաև 2 Կորնթացիս 7.9–10:)
- Ի՞նչ է նշանակում «զալ դեպի Քրիստոսը՝ կոտրված սրտով և ապաշխարող հոգով»: (Մորմոն 2.14; տե՛ս նաև 3 Նեփի 9.20; Վ. և Ու. 59.8):
- Ի՞նչը Մորմոնին հույս և խաղաղություն պարգևեց, թեպետև նա տեսնում էր իր ժողովրդի ամբարշտությունը: (Տե՛ս Մորմոն 2.19:) Ինչպե՞ս մենք կարող ենք պահպանել մեր հույսը և խաղաղությունը այսօրվա աշխարհի ամբարշտության պայմաններում:
- Մորմոնն ասաց, որ, երբ իր մարդիկ կռվում էին Լամանացիների դեմ, «նրանք չգիտակցեցին, որ դա Տերն էր, որ խնայեց նրանց» (Մորմոն 3.3): Ինչո՞ւ է կարևոր, որ մենք գիտակցենք, որ օրհնությունները մենք ստանում ենք Տիրոջից: (Տե՛ս Մորմոն 3.9:)

- 30 տարուց ավելի Նեփիացիների բանակներն առաջնորդելուց հետո Մորմոնը հրաժարվեց առաջնորդ լինելուց նրանց ա՛բարշտության և վրեժխնդիր լինելու ցանկության պատճառով (Մորմոն 3.9–13): Տերը նրանց պատվիրել էր չլինել վրեժխնդիր: Նա հայտարարել էր. «Վրեժն իմն է» (Մորմոն 3.14–15): Որո՞նք են վրեժխնդրության հետևանքները: Ինչպե՞ս մենք կարող ենք հաղթահարել վրեժխնդրության ցանկությունը, եթե դա արթնանում է մեր սրտում:

- Ի՞նչ մենք կարող ենք սովորել Մորմոնից կարծրասիրտ մարդկանց հանդեպ ճիշտ վերաբերվելու մասին: (Տե՛ս Մորմոն 3.12:) Ինչպե՞ս մենք կարող ենք նման մարդկանց հանդեպ ավելի մեծ սեր դրսևորել: Ինչո՞ւ է կարևոր շարունակել աղոթել այդ մարդկանց համար:

3. Մորմոնը բացատրում է իր կողմից կրճատված և գրված հիշատակարանի նպատակները:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորմոն 3.17–22; 5.8–24: Նշե՛ք, որ Նեփիացիների բանակներն առաջնորդելուց հետո Մորմոնն ասաց, որ կկանգնի որպես ականատես, գրի առնելով այն դեպքերը, որոնք տեղի կունենան Նեփիացիների մեջ (տե՛ս Մորմոն 3.16): Այս տողերում Մորմոնն ուղղակիորեն դիմում է նրանց, ում համար նախատեսված էին իր գրառումները:

- Ո՞ւմ համար էին նախատեսված Մորմոնի գրառումները: (Տե՛ս Մորմոն 3.17–19; 5.9–10, 14: Գրեք դասարանի անդամների պատասխանները գրատախտակի վրա:)

- Ի՞նչ նպատակների համար էր գրվում և պահվում հիշատակարանը: (Տե՛ս Մորմոն 3.20–22; 5.14–15: Կարող եք օգտվել ստորև տրված պատասխաններից:) Մորմոնի գրառումներն ինչպե՞ս օգնեցին իրականացնել այդ նպատակները ձեր կյանքում:

  ա. «Որպեսզի կարողանաք իմանալ, որ դուք բոլորդ պետք է կանգնեք Քրիստոսի ատյանի առջև . . . դատվելու ըստ ձեր գործերի» (Մորմոն 3.20):
  բ. «Որպեսզի դուք կարողանաք հավատալ Հիսուս Քրիստոսի ավետարանին» (Մորմոն 3.21; տե՛ս նաև Մորմոն 5.15):
  գ. Բերել վկայություն, «որ Հիսուսը . . . իրոք Քրիստոսն է և իրոք՝ Աստված» (Մորմոն 3.21; տե՛ս նաև Մորմոն 5.14):
  դ. «Համոզել աշխարհի բոլոր ծայրերին ապաշխարել» (Մորմոն 3.22):

4. Վերջին ճակատամարտում բացի 24 հոգուց բոլոր Նեփիացիները զոհվում են:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորմոն 4; 5.1–7; 6; Մորոնի 9:

- Մեկնաբանելով Նեփիացիների կորուստները Մորմոնը բացատրեց, որ «ամբարիշտները պատժվում են. քանզի ամբարիշտներ են» (Մորմոն 4.5): Ի՞նչ է դա նշանակում: Ինչպե՞ս է դա կատարվում այսօրվա աշխարհում:

- Ի՞նչ էր զգում Մորմոնը, երբ համաձայնվեց նորից առաջնորդել բանակը: (Տե՛ս Մորմոն 5.2:) Ի՞նչ Մորմոնը հասկացավ այն մասին, թե ով պետք է Նեփիացիներին առաջնորդի դեպի հաղթանակ: Ինչպե՞ս էր այն տարբերվում հաղթանակ տանելու Նեփիացիների համոզմունքից: (Տե՛ս Մորմոն 5. 1.)

- Ինչո՞ւ Մորմոնը վերցրեց թիթեղները Սիմ բլրից: (Տե՛ս Մորմոն 4.23; տե՛ս նաև Մորմոն 1.3–4:) Ինչո՞ւ նա դրանք պահեց Կումորա բլրում: (Տե՛ս Մորմոն 6.6:) Ինչո՞ւ էր կարևոր պահել թիթեղները:

- Ո՞րն էր Կումորայում վերջին ճակատամարտի արդյունքը: (Տե՛ս Մորմոն 6.7–15:)

Ցուցադրեք «Մորմոնը հրաժեշտ է տալիս Նեփիացիների ազգին» նկարը և դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 6.16–22:

- Կումորայի ճակատամարտից հետո Լամանացիները հետապնդեցին մնացած 24 Նեփիացիներին և սպանեցին նրանց բոլորին, բացի Մորոնիից (Մորմոն 8.2–3): Այդպիսով Նեփիացիների ազգն ամբողջովին կործանվեց: Ինչո՞ւ այդ մեծ կործանումը

եկավ Նեփիացիների վրա: (Տե՛ս Մորմոն 1.13, 16; 2.26–27; 3.2–3; 4.12; 5.2, 16–19; Մորոնի 9.3–5, 18–20:)

- Մենք նույնպես ապրում ենք հասարակության մեջ, ուր տիրում է ամբարշտությունը: Ինչպե՞ս կարող է անհատական արդարությունը ազդեցություն ունենալ անարդար հասարակության վրա:

  Երեց Նիլ Ա. Մաքսվելը նախազգուշացրել է. «Միայն բարեփոխումները և ինքնասահմանափակումը, ինստիտուցիոնալ և անհատական մակարդակով, կարող են փրկել հասարակությունը: Մեղքին դիմակայող բավականին թվով հոգիներ միայն կարող են փոխել մեզ շրջապատող աշխարհը: Որպես Եկեղեցու անդամներ մենք պետք է լինենք մեղքին դիմակայող այդ մարդկանց շարքերում» (in Conference Report, Apr. 1993, 96; or *Ensign,* May 1993, 77):

Եզրափակում

Շեշտե՛ք, որ Նեփիացիների հասարակությունը կործանվեց մեծ ամբարշտության պատճառով: Թեպետև մենք նույնպես ապրում ենք մեծ ամբարշտության պայմաններում, մենք չպետք է լինենք դրա մասը: Հետևելով հաստատակամության և հավատքի Մորմոնի օրինակին և ուսումնասիրելով նրա կողմից այդպես խնամքով պահպանված հիշատակարանը, մենք կարող ենք դիմակայել մեր օրերի չար ազդեցություններին և ուրիշների համար լինել քաջության և հույսի օրինակ:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք այս մտքերն օգտագործել որպես դասի մաս:

1. Արդար երիտասարդություն

- Քանի՞ տարեկան էր Մորմոնը, երբ Ամմարոնը վստահեց նրան հիշատակարանը: (Տե՛ս Մորմոն 1.2–4:) Քանի՞ տարեկան էր Մորմոնը, երբ նա տեսավ Հիսուս Քրիստոսին: (Տե՛ս Մորմոն 1.15:) Նշե՛ք, որ Ջոզեֆ Սմիթը 14 տարեկան էր, երբ ունեցավ Հոր և Որդու Առաջին Տեսիլքը, և 21 տարեկան էր, երբ ստացավ ոսկե թիթեղները հրեշտակ Մորոնիից:

Շեշտե՛ք, որ արդարությունը և իմաստությունը չեն սահմանափակվում տարիքով կամ հանգամանքներով: Տերը կօրհնի նրանց, ովքեր ցանկացած տարիքում ծառայում են Իրեն:

2. Քննարկում երիտասարդների համար

Դասարանի անդամներին հիշեցրեք, որ Մորմոնն արդար և հավատարիմ մնաց, անգամ, երբ նրան շրջապատող մարդիկ ամբարիշտ էին:

- Ինչպե՞ս մենք կարող ենք հավատարիմ մնալ անարդար հասարակության ճնշման պայմաններում: Որո՞նք են այդպես վարվելու առավելությունները:
- Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել նրանց, ովքեր չեն ապրում ըստ ավետարանի: Ինչպե՞ս Մորմոնը վերաբերվեց իր շուրջը գտնվող ամբարիշտներին: (Տե՛ս, որպես օրինակ, Մորմոն 3.12:) Ինչպե՞ս մենք կարող ենք սեր և ընկերներ ձեռք բերել առանց ներքաշվելու այնպիսի իրավիճակների մեջ, երբ ստիպված կլինենք զիջել մեր սկզբունքները:

Դաս

44

«Ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք»

Մորմոն 7–9

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ այն նախազգուշացումներն ու խորհուրդները, որոնք տվել են Մորմոնը և Մորոնին վերջին օրերի մարդկանց:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Մորմոն 7: Մորմոնը Լեքիի վերջին օրերի հետնորդներին կոչ է անում ապաշխարել, հավատալ Քրիստոսին և մկրտվել:
   բ. Մորմոն 8: Մորոնին մարգարեանում է, որ Մորմոնի Գիրքը աշխարհ կգա մեծ անարդարությունների օրում:
   գ. Մորմոն 9: Մորոնին վերջին օրերի մարդկանց կոչ է անում հավատալ Քրիստոսին: Նա հայտարարում է, որ Տերը հրաշքների Աստված է:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Մորմոնի Գրքի վերնագրի էջը:

3. Կարող եք դասարանի չորս անդամների նախօրոք խնդրել պատրաստվել բարձրաձայն կարդալ հետևյալ հատվածներից մեկը. 2 Նեփի 28.2–6; Մորմոն 9.7; Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.17–19, 21–22; և Հավատո Հանգանակ 1.7:

4. Եթե անց եք կացնում ուշադրության վարժությունը, ապա դասից առաջ գրատախտակին գրեք հետևյալ նախադասությունները.

   «Ես խոսում եմ ձեզ հետ, կարծես դուք ներկա լինեք, սակայն դուք ներկա չեք»:

   «Հիսուս Քրիստոսը ձեզ ցույց է տվել ինձ, և ես գիտեմ ձեր արարքները»:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Բացատրեք, որ ուսուցիչները հաճախ օգտագործում են պատմություններ, առարկաներ կամ հետաքրքիր հարցեր դասի սկզբում մարդկանց ուշադրությունը գրավելու համար: Այնուհետև խնդրեք նրանց կարդալ գրատախտակի վրա գրված նախադասությունները (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 4):

- Ինչո՞ւ այս նախադասությունները պետք է գրավեն մեր ուշադրությունը: (Մոտ մ.թ. 400թ., երբ Մորոնին ասաց այս խոսքերը, նա ուղղակիորեն դիմում էր մեզ: Տե՛ս Մորմոն 8.35:)

Նշեք, որ Մորմոն 7–9-ի բոլոր ուսմունքները ուղղված են վերջին օրերում ապրող մարդկանց: Մորմոն 7 պարունակում է խորհուրդ, որն ուղղված է Լեքիի վերջին օրերի հետնորդներին, իսկ Մորմոն 8–9 պարունակում է խորհուրդ, ուղղված վերջին օրերի բոլոր մարդկանց:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում:

Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Մորմոնը Լեքիի վերջին օրերի հետնորդներին կոչ է անում ապաշխարել, հավատալ Քրիստոսին և մկրտվել:

Կարդացեք և քննարկեք Մորմոն 7, որը պարունակում է Լեքիի վերջին օրերի հետնորդներին ուղղված Մորմոնի խոսքերը: Կարող եք բացատրել, որ Լեքիի վերջին օրերի հետնորդները բնակվում են Հյուսիսային, Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի և Խաղաղ օվկյանոսի կղզիների ժողովուրդների մեջ:

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 7.2: Նշեք, որ իր վերջին ուղերձում սրանք էին Լեքիի վերջին օրերի հետնորդներին ուղղված Մորմոնի խոսքերը: Ինչո՞ւ էր կարևոր, որպեսզի Լեքիի հետնորդներն իմանային, որ իրենք «Իսրայելի տնից» էին: Ի՞նչ օրհնություններ խոսք տվեց Տերը Իսրայելի տան արդար անդամներին: (Տե՛ս Աբրահամ 2.8–11:)
- Ի՞նչ հրահանգներ տվեց Մորմոնը Լեքիի վերջին օրերի հետնորդներին: (Տե՛ս Մորմոն 7.3–10 և ստորև բերված ցուցակը: Այս ցուցակի որոշ կետեր պարունակում են քննարկման հարցեր:)

  ա. Ապաշխարել, մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը (Մորմոն 7.3, 5, 8, 10):
  բ. Ցած դնել պատերազմի զենքերը քանի դեռ Աստված չի պատվիրում պատերազմել (Մորմոն 7.4):
  գ. Գալ իրենց նախնիների գիտելիքին (Մորմոն 7.5): Ինչո՞ւ է Լեքիի վերջին օրերի հետնորդների համար կարևոր ձեռք բերել իրենց նախնիների գիտելիքը: (Տե՛ս Մորմոն 7.9 և Մորմոնի Գրքի վերնագրի էջը:) Ինչպե՞ս մենք բոլորս կարող ենք օգուտ ստանալ, իմանալով մեր նախնիների մեջ Աստծո գործերի մասին:
  դ. Հավատալ Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությանը (Մորմոն 7.5–7, 10):
  ե. Ուսումնասիրել Աստվածաշնչի ավետարանը և Մորմոնի Գիրքը (Մորմոն 7.8–9): Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը օգնում մարդկանց հավատալ Աստվածաշնչին: (Տե՛ս Մորմոն 7.9; տե՛ս նաև 1 Նեփի 13.38–40; 2 Նեփի 3.11–12:)
- Այս ժամանակաշրջանում, Տերն ասել է, որ Լամանացիները վարդի նման կծաղկեն (տե՛ս Վ. և Ու. 49.24): Ինչպե՞ս է այս մարգարեությունն իրականանում այսօր:

2. Մորոնին մարգարեանում է, որ Մորմոնի Գիրքն աշխարհ կգա մեծ անարդարությունների օրում:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորմոն 8-ից: Բացատրեք, որ այս գլուխը պարունակում է Մորոնիի առաջին գրվածքները իր հոր՝ Մորմոնի մահից հետո:

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 8.1–5: Մորոնիի ինչպիսի՞ զգացմունքներ եք նկատում, երբ կարդում եք այդ տողերը: Ի՞նչ կարող ենք սովորել Մորոնիի ջանասիրությունից, թեպետև նա այդքան միայնակ էր:
- Մորոնին մարգարեանում էր Ջոզեֆ Սմիթի մասին, ասելով. «Օրհնված կլինի նա, ով դեպի լույս կբերի այս բանը [Մորմոնի Գիրքը]» (Մորմոն 8.16; տե՛ս նաև հատվածներ 14–15): Ի՞նչ դեր խաղաց Մորոնին Ջոզեֆ Սմիթի կողմից Մորմոնի Գիրքը խավարից լույս բերելու գործում: (Տե՛ս Մորմոն 8.14; Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.30–35, 46, 59:) Ի՞նչ մենք կարող ենք անել, որպեսզի Մորմոնի Գիրքը շարունակվի դուրս բերվել խավարից դեպի լույս:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Ես գովք եմ տալիս ձեզ, հավատարիմ Սրբեր, որ լցնում եք երկիրը և ձեր կյանքերը Մորմոնի Գրքով: Ոչ միայն մենք պետք է հաստատակամորեն առաջ մղենք Մորմոնի Գիրքը, այլ առաջ մղենք մեր կյանքում և ամբողջ երկրով մեկ դրա հրաշալի ուղերձները» (in Conference Report, Apr. 1989, 3; or *Ensign,* May 1989, 4):

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 8.21–22: Մորմոն 8.22-ում պարունակվող Մորոնիի խոսքերն ինչպե՞ս կարող են ամրացնել մեզ Տիրոջ գործը կատարելու մեր ջանքերում:
- Ի՞նչ Մորոնին մարգարեացավ այն պայմանների մասին, որ պետք է տիրեին աշխարհում Մորմոնի Գրքի ի հայտ գալու ժամանակ: (Դասարանի անդամներին խնդրեք հերթով կարդալ հատվածները Մորմոն 8.26–33-ից: Երբ նրանք կարդում են, խնդրեք նրանց քննարկել, թե ինչպես են այդ տողերում նկարագրված պայմաններն ի հայտ գալիս այսօր:) Ինչո՞ւ էր Մորոնին ի վիճակի այդքան հստակ մարգարեանալ վերջին օրերի մասին: (Տե՛ս Մորմոն 8.34–35:)
- Մորոնին ասաց, որ վերջին օրերում կխոսի այնպես, կարծես մենք ներկա լինենք (Մորմոն 8.35): Այնուհետև նա ասաց. «Ես գիտեմ, որ դուք քայլում եք ձեր սրտերի հպարտությամբ» (Մորմոն 8.36): Ի՞նչ ասաց Մորոնին հպարտության մասին վերջին օրերում: (Տե՛ս Մորմոն 8.36–41:)
- Ինչպե՞ս է հպարտությունն ազդում կարիքավորների հանդեպ մարդկանց վերաբերմունքի վրա: (Տե՛ս Մորմոն 8.37, 39:)
- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորմոն 8.38: Ինչո՞ւ են որոշ մարդիկ «ամաչում վերցնել իրենց վրա Քրիստոսի անունը»: Ինչո՞ւ դա կարող է մեզ օգնել հիշել, որ անվերջ երջանկությունն ավելի մեծ արժեք ունի, քան աշխարհի գովքը:
- Ինչպիսի՞ պետք է լինի մեր պատասխանը հպարտության մասին Մորոնիի մարգարեություններին:

  Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է.

  «Հպարտության հականիշը հնազանդությունն է, խոնարհությունը, հեզությունը (տե՛ս Ալմա 7.23): Դա կոտրված սիրտը և ապաշխարող հոգին է (տե՛ս 3 Նեփի 9.20; 12.19; Վ. և Ու. 20.37; 59.8; Սաղմոս 34.18; Եսայիա 57.15; 66.2) . . .

  Աստված կունենա հնազանդ մարդկանց: Մենք կարող ենք ընտրել լինել հնազանդ կամ կարող ենք ստիպված լինել հնազանդ . . .

  Եկե՛ք ընտրենք լինել հնազանդ» (in Conference Report, Apr. 1989, 6; or *Ensign,* May 1989, 6):

3. Մորոնին հորդորում է մարդկանց վերջին օրերում հավատալ Քրիստոսին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորմոն 9-ից:

- Մորմոն 9 սկսում է Մորոնիի խոսքերից, որոնք ուղղված են Քրիստոսին չհավատացող վերջին օրերի մարդկանց (Մորմոն 9.1): Ինչո՞ւ այդ մարդիկ կլինեն «ավելի թշվառ՝ բնակվելով սուրբ և արդար Աստծո հետ . . ., քան . . . ապրելով նզովված հոգիների հետ դժոխքում»: (Տե՛ս Մորմոն 9.3–5:) Ի՞նչ է սովորեցնում Մորմոն 9.6 այն մասին, թե ինչ մենք պետք է անենք Աստծո ներկայության մեջ բնակվելու համար: (Տե՛ս նաև Վ. և Ու. 121.45:)
- Դասարանի չորս անդամների խնդրեք կարդալ հետևյալ հատվածները. 2 Նեփի 28.2–6; Մորմոն 9.7; Ջոզեֆ Սմիթ – Պատմություն 1.17–19, 21–22; և Հավատո Հանգանակ 1.7 (տե՛ս «Նախապատրաստություն», կետ 3): Ինչպե՞ս են այս չորս հատվածները կապված միմյանց հետ: Ի՞նչ է ասում Մորոնին նրանց, ովքեր չեն հավատում Հոգու պարգևներին: (Տե՛ս Մորմոն 9.8–10:)
- Նրանց, ովքեր հավատում են, որ Աստված այլևս չի կատարում հրաշքներ, Մորոնին ասաց. «Ես ցույց կտամ ձեզ հրաշքների մի Աստված» (Մորմոն 9.11): Ի՞նչ նա սովորեցրեց ցույց տալու, որ Տերը հրաշքների Աստծվածն է: (Տե՛ս Մորմոն 9.11–17, որը տրվում է հաջորդ էջին: Նշե՛ք, որ այս վարդապետություններն ամփոփում են փրկագնման ծրագիրը:)

ա. Երկնքի, երկրի և մարդկության արարումը (Մորմոն 9.11–12, 17):
բ. Անկումը (Մորմոն 9.12):
գ. Փրկագնումը Հիսուս Քրիստոսի միջոցով (Մորմոն 9.12–13):
դ. Բոլոր մարդկանց հարությունը (Մորմոն 9.13):
ե. Բոլոր մարդկանց վերադարձը Տիրոջ ներկայություն՝ դատվելու համար (Մորմոն 9.13–14):

- Մորոնին խոսում է Հիսուսի և Նրա Առաքյալների կատարած «շատ զորավոր հրաշքների» մասին (Մորմոն 9.18): Որո՞նք են Հիսուսի և Նրա Առաքյալների կողմից կատարած այն հրաշքները, որոնք ոգեշնչել են ձեզ:
- Ինչո՞ւ են հրաշքները որոշ մարդկանց համար դադարում: (Տե՛ս Մորմոն 9.20:) Ինչպիսի՞ նշաններ կշարունակեն ստանալ նրանք, ովքեր հավատում են Քրիստոսին: (Տե՛ս Մորմոն 9.21–25:)
- Եթե որևէ մեկը ձեզ ասի, որ Տերը հրաշքների Աստվածը չէ, ի՞նչ դուք կպատասխանեք: Ինչպիսի՞ համապատասխան փորձով դուք կկիսվեք վկայելու համար, որ Տերը հրաշքների Աստվածն է:
- Մորոնին մեզ կոչ է անում «Մի՛ կասկածեք, այլ եղե՛ք հավատացող» (Մորմոն 9:27): Այս ժամանակաշրջանում Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է. «Որտեղ կասկած կա, այնտեղ հավատքն ուժ չունի» (*Lectures on Faith* [1985], 46): Ի՞նչ մենք կարող ենք անել մեր կասկածները հաղթահարելու համար:

Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է. «Նրանք, ովքեր գիտեն իրենց թուլությունները և մեղք գործելու հակում ունեն, պետք է որ անընդհատ կասկածեն փրկության մասին, եթե չունենան Աստծո զորավոր լինելու մասին այն միտքը, որ Նա դանդաղ է զայրանալու մեջ, երկայնամիտ է և ունի ներողամիտ բնավորություն, և ներում է անօրինությունը, զանցանքը և մեղքը: Այդ միտքը պետք է վերացնի կասկածը և դարձնի հավատքը չափազանց ամուր» (*Lectures on Faith,* 42):

Եզրափակում

Խնդրեք դասարանի անդամներից մեկին կարդալ Մորմոն 9.27, եթե չեք արել դա դասի ընթացքում: Նշե՛ք, որ, թեպետև Մորոնին նախազգուշացրեց Աստծո դատաստանի մասին, նա նույնպես վկայեց Տիրոջ որպես «հրաշքների Աստծո» մասին, որի Քավությունը իրականացնում է «մարդու փրկագնումը» (Մորմոն 9.11–12):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Դաս
45

«Երբեք մարդը չի հավատացել ինձ, ինչպես դու»

Եթեր 1–6

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին Հարեդի եղբոր օրինակի վրա հասկանալ, թե ինչպես հավատքը կարող է մեզ հնարավորություն տալ հավերժորեն մտնել Տիրոջ արքայությունը:

Նախապատրաստություն

1. Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

   ա. Եթեր 1: Տերը բավարարում է Հարեդի եղբոր խնդրանքը և խոստանում է առաջնորդել Հարեդացիներին խոստացված երկիր:
   բ. Եթեր 2: Հարեդացիները սկսում են իրենց ճանապարհորդությունը խոստացված երկիր:
   գ. Եթեր 3: Հարեդի եղբայրը տեսնում է Հիսուս Քրիստոսին:
   դ. Եթեր 4: Մորոնին կնքում է Հարեդի եղբոր գրվածքները մինչև այն ժամանակները, երբ Հեթանոսները կաղոթեն և հավատք կգործադրեն:
   ե. Եթեր 6.1–12: Հարեդացիները ճանապարհորդում են դեպի ավետյաց երկիր: Երբ նրանք ժամանում են, գովաբանում են Աստծուն՝ Նրա գովագութ ողորմությունների համար:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Ծննդոց 11.1–9; Մոսիա 8.7–11:

3. Եթե առկա է «Հարեդի եղբայրը տեսնում է Տիրոջ մատը» նկարը, պատրաստվեք օգտագործել այն դասի ժամանակ (62478; Ավետարանի արվեստի նկարների ժողովածու 318):

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամների հետ կիսվեք հետևյալ պատմությունով.

«Երբ Երեց Ռեյնոլդս Քանոնն ապրում էր Քրտլենդում, նա որդի ունեցավ: Մի օր, երբ Նախագահ Ջոզեֆ Սմիթն անցնում էր նրա դռան մոտով, նա ներս հրավիրեց Մարգարեին և խնդրեց նրան օրհնել և անուն տալ իր փոքրիկին: Ջոզեֆն արեց դա և տվեց տղային Մահոնրի Մորիանքումեր անունը: Երբ նա վերջացրեց օրհնությունը, տեղավորեց երեխային մահճակալում, և, շրջվելով Երեց Քահունի կողմն ասաց. «Անունը, որ ես շնորհեցի քո որդուն, Հարեդի եղբոր անունն է, Տերը հենց նոր հայտնեց դա ինձ: Երեց Ուիլիամ Ֆ. Մահունը . . . լսեց, թե ինչպես Մարգարեն ասաց այս խոսքերը իր հորը; և դա առաջին անգամ էր, երբ Հարեդի եղբոր անունը հայտնի դարձավ Եկեղեցում այս ժամանակաշրջանում» (George Reynolds, “The Jaredites,” *Juvenile Instructor,* 1 May 1892, 282):

Բացատրեք, որ այս դասը քննարկում է Հարեդի եղբայր Մահոնրի Մորիանքումերի պատմությունը, որի մասին Տերն ասել է. «Երբեք մարդ չի հավատացել ինձ, ինչպես դու» (Եթեր 3.15): Նրա հավատքի շնորհիվ Հարեդացիներն օրհնվեցին՝ իրենց լեզվով, որը պահպանվել էր Բաբելոնի աշտարակից հետո, և նրանք ապահով առաջնորդվել էին խոստացված երկիր: Նրա օրինակը խորացնում է հավատքի կարևորության և զորության վերաբերյալ մեր հասկացողությունը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Տերը բավարարում է Հարեղի եղբոր խնդրանքը:

Քննարկեք Եթեր 1: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Բացատրեք, որ մարգարե Եթերը գրել է Հարեղացիների պատմությունը, որոնք հեռացան Բաբելոնից այն ժամանակ, երբ Տերը խառնեց Բաբելոնի աշտարակը կառուցած մարդկանց լեզուները (Եթեր 1.33–43; տե՛ս նաև Ծննդոց 11.1–9): Եթերն իր հիշատակարանը գրել է 24 ոսկե թիթեղների վրա, որոնք հետագայում գտան Լիմքիի մարդիկ (Մոսիա 8.7–11): Եթերի գիրքը պարունակում է Եթերի գրվածքների Մորոնիի կրճատումները:

- Երբ մարդիկ ցրվեցին և նրանց լեզուները խառնվեցին, Հարեղը խնդրեց իր եղբորը գնալ Տիրոջ մոտ: Ինչպիսի՞ անձնավորություն էր Հարեղի եղբայրը: (Տե՛ս Եթեր 1.34:)
- Ի պատասխան Հարեղի խնդրանքի, Հարեղի եղբայրը «աղաղակեց առ Տերը» (Եթեր 1.34–39): Ո՞րն է տարբերությունը «առ Տերը աղաղակելու» և պարզապես աղոթք ասելու միջև: Ի՞նչ մենք կարող ենք անել մեր աղոթքներն ավելի արդյունավետ դարձնելու համար: (Տե՛ս Ալմա 34.17–28:)
- Ամեն անգամ, երբ Հարեղի եղբայրն աղոթում էր, Տերը «գութ ունեցավ» նրա և նրա ժողովրդի հանդեպ (Եթեր 1.35, 37, 40): Ինչպե՞ս եք դուք զգացել Տիրոջ գութը ձեր աղոթքների պատասխանների մեջ:
- Ի՞նչ նախապատրաստություններ Տերը պատվիրեց մարդկանց կատարել: (Տե՛ս Եթեր 1.41–42:) Ի՞նչ պատճառով Տերը խոսք տվեց Հարեղացիներին առաջնորդել դեպի խոստացված երկիր: (Տե՛ս Եթեր 1.43: Նշեք Տիրոջ խոսքերը. «Այս երկար ժամանակաընթացքում դու աղաղակել ես առ ինձ»:) Այս օրինակից ի՞նչ մենք կարող ենք սովորել աղոթքի զորության մասին:

2. Հարեղացիները սկսում են իրենց ճանապարհորդությունը դեպի խոստացված երկիր:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Եթեր 2-ից:

- Տերը խոստացավ առաջնորդել Հարեղացիներին դեպի «խոստումի երկիրը, որն ընտիր էր բոլոր մյուս երկրներից առավել» (Եթեր 2.7): Ո՞ւմ համար էր Տերը պահպանել այդ ընտիր երկիրը: (Տե՛ս Եթեր 2.7:) Ի՞նչ նախազգուշացում տվեց Տերը Հարեղի եղբորը խոստացված երկրի վերաբերյալ: (Տե՛ս Եթեր 2.8:)
- Ի՞նչ ասաց Մորոնին խոստումի երկրի վերաբերյալ Աստծո հրամանների մասին: (Տե՛ս Եթեր 2.9–12: Նշեք, որ նախազգուշացումը և խոստումը վերաբերվում էին ոչ միայն Հարեղացիներին, այլ բոլոր մարդկանց, ովքեր կբնակվեին Ամերիկայում:)
- Երբ Հարեղացիները հասան ծովի ափ, նրանք խփեցին իրենց վրանները և մնացին այնտեղ չորս տարի (Եթեր 2.13): Չորրորդ տարվա վերջին Տերը խոսեց Հարեղի եղբոր հետ: Ինչո՞ւ Տերը խրատեց նրան: (Տե՛ս Եթեր 2.14:) Ինչո՞ւ ենք մենք երբեմն մոռանում կանչել առ Տերը:
- Հարեղի եղբայրն ապաշխարեց և սկսեց բեռնանավեր կառուցել ծովով անցնելու համար (Եթեր 2.15–17): Ի՞նչ խնդիրների առջև կանգնեց Հարեղի եղբայրը բեռնանավերը կառուցելուց հետո: (Տե՛ս Եթեր 2.19:) Ի՞նչ հրահանգներ տվեց Տերը Հարեղի եղբորը բեռնանավերում օդ ունենալու համար: (Տե՛ս Եթեր 2.20:)

- Ինչպե՞ս պատասխանեց Տերը, երբ Հարեղի եղբայրը հարցրեց, թե ինչպես լուսավորել բեռնանավերի ներսը: (Տե՛ս Եթեր 2.23–25:) Ի՞նչ մենք կարող ենք սովորել Տիրոջ պատասխանից: (Տե՛ս ստորև տրված մեջբերումը:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի մենք բոլորս Տիրոջից օգնություն խնդրելու հետ մեկտեղ անենք այն ամենը, ինչ կարող ենք:

  Երեց Ռասել Մ. Նելսոնը պատմում է, որ հաճախ լսել է, թե ինչպես է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել. «Ես չգիտեմ ինչպես կարելի է ինչ-որ բան անել, եթե ծնկի չգանք և չաղաչենք օգնության համար, այնուհետև գնանք աշխատելու» (in Conference Report, Oct. 1997, 18; or *Ensign,* Nov. 1997, 16):

- Բեռնանավերը լուսավորելու խնդիրն ինչպե՞ս օգնեց Հարեղի եղբորը աճել: Ինչպե՞ս են մեր կյանքի խնդիրները օգնում մեզ:

3. Հարեղի եղբայրը տեսնում է Հիսուս Քրիստոսին:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Եթեր 3-ից:

- Ինչպե՞ս Հարեղի եղբայրն առաջարկեց լուծել բեռնանավերի լուսավորության խնդիրը: (Տե՛ս Եթեր 3.1–5:) Ինչպե՞ս դա արտահայտեց նրա խոնարհությունը և հավատքը: (Կարող եք դասարանի անդամներին խնդրել գտնել Հարեղի եղբոր այն խոսքերն ու արտահայտությունները, որոնք ցույց են տալիս նրա խոնարհությունն ու հավատքը:)

- Երբ Հարեղի եղբայրն ավարտեց խոսելը, Տերը դիպչեց քարերին Իր մեկ մատով (Եթեր 3.6): Ինչո՞ւ էր Հարեղի եղբայրն այդքան վախեցել, տեսնելով Տիրոջ մատը: (Տե՛ս Եթեր 3.6–8: Ցույց տվեք «Հարեղը տեսնում է Տիրոջ մատը» նկարը:) Ի՞նչ ասաց Տերը Հարեղի եղբոր հավատքի մասին: (Տե՛ս Եթեր 3.9:)

- Ի՞նչ հարց տվեց Տերը՝ Հարեղի եղբորն Իրեն ցույց տալուց առաջ: (Տե՛ս Եթեր 3.11:) Ինչպե՞ս Հարեղի եղբոր պատասխանը ցուցադրեց նրա հավատքի խորությունը: (Տե՛ս Եթեր 3.12: Նա ընդունեց Տիրոջ խոսքերը, երբ դեռևս չէր լսել դրանք:) Ի՞նչ մենք կարող ենք անել նրա օրինակին հետևելու համար:

- Ինչպե՞ս Տերը նկարագրեց Իրեն Հարեղի եղբորը: (Տե՛ս Եթեր 3.13–14: Կարող եք դասարանի անդամներից մեկին խնդրել բարձրաձայն կարդալ այդ հատվածները:) Ի՞նչ էր անհրաժեշտ Հարեղի եղբորը Տիրոջ ներկայության մեջ լինելու համար: Ի՞նչ է անհրաժեշտ մեզ Տիրոջ ներկայության մեջ լինելու համար:

- Ի՞նչ Տերը ցույց տվեց Հարեղի եղբորը: (Տե՛ս Եթեր 3.15–18, 25–26:) Ի՞նչ Տերը պատվիրեց Հարեղի եղբորն անել այդ բաները տեսնելուց հետո: (Տե՛ս Եթեր 3.21–24, 27–28; 4.1:)

4. Մորոնին կնքում է Հարեղի եղբոր գրվածքները:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Եթեր 4-ից:

- Ինչպե՞ս է Մորոնին նկարագրում Հարեղի եղբոր տեսիլքը: (Տե՛ս Եթեր 4.4:) Ի՞նչ պատվիրեց Տերը Մորոնիին Հարեղի եղբոր գրվածքների և մեկնիչների վերաբերյալ: (Տե՛ս Եթեր 4.3, 5:) Ե՞րբ մենք կկարողանանք ստանալ այդ գրվածքները: (Տե՛ս Եթեր 4.6–7: Մենք կկարողանանք ստանալ դրանք այն ժամանակ, երբ ունենանք նույնքան հավատք, որքան ուներ Հարեղի եղբայրը, և մաքրվենք:)

- Ի՞նչ էր սովորեցնում Տերը նրանց մասին, ովքեր վերջին օրը կժխտեն Իր խոսքերը: (Տե՛ս Եթեր 4.8, 10, 12:) Ի՞նչ օրհնություններ կստանան նրանք, ովքեր կհավատան Տիրոջ խոսքերին: (Տե՛ս Եթեր 4.11:) Ի՞նչ ճանապարհներով է Սուրբ Հոգին օգնում մեզ իմանալ, որ Տիրոջ խոսքերը ճշմարիտ են:

- Տերը հորդորում է Հեթանոսներին և Իսրայելի տան անդամներին գալ դեպի Իրեն և ստանալ մեծ օրհնություններ և գիտելիք (Եթեր 4.13–14): Ի՞նչ Նա ասաց, որ մենք պետք է անենք, Իր մոտ գնալու համար: (Տե՛ս Եթեր 4.15, 18:) Ի՞նչ օրհնություններ է Նա խոստացել նրանց, ովքեր կանեն այդ բաները: (Տե՛ս Եթեր 4.15–19:)

5. Հարեդացիները ճանապարհորդում են դեպի խոստումի երկիր:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Եթեր 6.1–12-ից: Բացատրեք, որ այս տողերը շարունակում են դեպի խոստումի երկիր Հարեդացիների ճանապարհորդության պատմությունը: Բացատրեք, թե ինչպես կարելի է դեպի խոստումի երկիր Հարեդացիների ճանապարհորդությունը նմանեցնել կյանքի մեր ճանապարհորդության հետ:

- Տերն այնպես արեց, որ բեռնանավերի քարերը «փայլեցին խավարում, լույս տալով տղամարդկանց, կանանց և երեխաներին» (Եթեր 6.3): Ի՞նչ «լույսեր» է Տերը տալիս մեզ՝ մեր կյանքի ճանապարհորդության ընթացքում:
- Ի՞նչ արեցին Հարեդացիները, երբ կատարեցին հնարավոր ամեն-ինչ ճանապարհորդությանը պատրաստվելու համար: (Տե՛ս Եթեր 6.4: Նրանք իրենց վստահությունը դրեցին Տիրոջ վրա:) Ինչպե՞ս մենք կարող ենք նմանատիպ վստահություն ցուցաբերել Տիրոջ հանդեպ:
- Երբ քամիները փչում էին և Հարեդացիներն առաջ քշվում, ի՞նչ էին անում նրանք օր ու գիշեր: (Տե՛ս Եթեր 6.8–9:) Ինչպե՞ս մենք կարող ենք գովերգել Տիրոջը:
- Ի՞նչ արեցին Հարեդացիները, երբ ժամանեցին խոստումի երկիր: (Տե՛ս Եթեր 6.12:) Ինչպե՞ս սա կարելի է նմանեցնել Երկնային Հոր մոտ մեր վերադարձի հետ:

Եզրափակում

Կարդացեք Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդի հետևյալ խոսքերը.

«Հարեդի եղբայրը, հնարավոր է, չուներ մեծ հավատ իր հանդեպ, սակայն նրա հավատքը Աստծո հանդեպ աննախադեպ էր: Դրանում հույս կա մեզ բոլորիս համար: Նրա հավատքն առանց կասկածի էր ու անսահման . . . Մեկ անգամ և բոլորի համար հայտնվեց, որ սովորական խնդիրներով հասարակ մարդիկ կարող են պատռել անհատության վարագույրը և մտնել հավերժության ոլորտները» (*Christ and the New Covenant* [1997], 29):

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ միտքը որպես դասի մաս:

Ուսմունքներ Եթեր 5-ից

- Ո՞մ է ուղղված Եթեր 5: (Ջոզեֆ Սմիթ:) Ովքե՞ր են այն երեք վկաները, որոնց մասին խոսում է Մորոնին Եթեր 5.3-ում: (Օլիվեր Քաուդերի, Դեյվիդ Ուիթմեր և Մարթին Հարիս: Տե՛ս Երեք Վկաների Վկայությունը Մորմոնի Գրքի ներածական մասում:) Երեք Վկաների վկայությունն ինչպե՞ս օգնեց ձեզ զորացնել Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունը:

Դաս
46

«Հավատքով են բոլոր բաները կատարվում»

Եբեր 7–15

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ հավատք գործադրելու, հնազանդ լինելու և մարգարեների խորհուրդներին ականջ դնելու կարևորությունը:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. Եբեր 12.1–22: Մորոնին բացատրում է հավատքի կարևորությունը և տալիս է հավատքի զորության օրինակներ:
բ. Եբեր 12.23–41: Տերը Մորոնիին սովորեցնում է, որ Նա մեզ թուլություններ է տալիս, որպեսզի մենք կարողանանք հնազանդ լինել: Մորոնին մեզ ասում է «փնտրեք այս Հիսուսին, որի մասին գրել են մարգարեներն ու առաքյալները»:
գ. Եբեր 13.1–12: Մորոնին գրում է խոստումի երկրի վերաբերյալ Եբերի մարգարեությունները:
դ. Եբեր 13.13–15.34: Մորոնին գրի է առնում Եբերի պատմությունը Հարեդացիների քաղաքակրթության կործանման մասին:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Մոսիա 8.8–9, 12, 19; 28.17–19:

- Ի՞նչ գրվածքների մասին է խոսվում այստեղ: (Հարեդացիների գրվածքները, որոնք Մորոնիի կողմից կրճատվել են և կազմվել Եբերի գրքում:) Ինչպիսի՞ ազդեցություն գործեցին այդ գրվածքները Մոսիայի ժողովրդի վրա: Ինչո՞ւ է մեզ համար կարևոր կարդալ այդ գրվածքները:

Բացատրեք, որ այս դասը քննարկում է Հարեդացիների պատմությունը սկսած խոստումի երկիր նրանց ժամանելուց մինչև շատ սերունդներ հետո նրանց լիովին կործանումը: Թեպետև նրանց կործանման պատմությունը ողբերգական էր, մենք, ինչպես և Մոսիայի ժողովուրդը, կարող ենք ուրախանալ այն գիտելիքով, որը հիշատակարանը տալիս է մեզ:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Մորոնին բացատրում է հավատքի կարևորությունը:

Բացատրեք, որ խոստումի երկիր ժամանելուց հետո Հարեդացիները սկսեցին «բազմանալ . . . և նրանք զորացան երկրում» (Եբեր 6.18): Երբ Հարեդը և նրա եղբայրը մահացան, թագավոր նշանակվեց՝ մարդկանց ղեկավարելու համար (Եբեր 6.21–30): Եբեր 7–11 պատմում է արդար և ամբարիշտ թագավորների, մարդկանց մեջ գաղտնի խմբակցությունների և մարգարեների ուսմունքների մասին, որոնք կանչված էին Հարեդացիներին ապաշխարություն

քարոզելու (տե՛ս ուսուցանման լրացուցիչ առաջին և երկրորդ մտքերը Եթեր 7–11 քննարկելու համար): Եթեր 12-ը սկսվում է Եթերի ուսմունքներով: Եթերն այդ մարգարեներից մեկն էր:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Եթեր 12.1–22:

- Եթերը հորդորեց մարդկանց հավատալ Աստծուն, ասելով, որ «հավատքով են բոլոր բաները կատարվում» (Եթեր 12.3): Ինչպե՞ս Եթերը նկարագրեց նրանց, ովքեր հավատում էին Աստծուն: (Տե՛ս Եթեր 12.4:) Ինչպե՞ս հավատքը և հույսը կարող են մեզ համար խարիսխ լինել: Որո՞նք են այն օրինակները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է հավատքը տանում դեպի Աստծուն փառավորող լավ գործեր:
- Եթերը «մեծ և զարմանալի բաներ» մարգարեացավ ժողովրդին, սակայն նրանք չհավատացին նրան: Ինչո՞ւ: (Տե՛ս Եթեր 12.5:)

  Դասարանի անդամներին խնդրեք մտածել այն ժամանակների մասին, երբ իրենք կամ այլ մարդիկ օրհնվել են մարգարեական խորհրդին հետևելու շնորհիվ, թեպետև չեն կարողացել «տեսնել» կամ հասկանալ այդ խորհրդի պատճառները: Նրանց խնդրեք կիսվել իրենց օրինակներով:
- Մորոնին գրեց, որ մարդիկ չէին հավատում Եթերի մարգարեություններին, քանի որ չէին կարող տեսնել դրանք: Այնուհետև Մորոնին սահմանում է հավատքը և դրան վերաբերող օրինակներ բերում: Ինչպե՞ս նա սահմանեց հավատքը: (Տե՛ս Եթեր 12.6; տե՛ս նաև Եբրայեցիներին 11.1; Ալմա 32.21:) Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում հետևյալ խոսքերը «նախքան ձեր հավատքի փորձությունը, դուք վկայություն չեք ստանում» (Եթեր 12.6; տե՛ս նաև Եթեր 12.29–31; Վ. և Ու. 58.2–4): Ինչպե՞ս են փորձությունները զորացրել և անսասան դարձրել ձեր հավատքը:
- Մորոնին նշեց մի քանի դեպքեր, որոնք տեղի ունեցան հավատքի արդյունքում: Ի՞նչ դեպքեր նա նշեց: (Տե՛ս Եթեր 12.7–22: Դասարանի անդամների պատասխանները գրեք գրատախտակին: Դասարանի անդամներին առաջարկեք նշել *հավատք* բառը, ամեն անգամ այդ հատվածներում այն հանդիպելիս:) Սուրբ գրություններից ի՞նչ այլ օրինակներ կան, որոնք ցույց են տվել հավատքի զորությունը:
- Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է. «Բոլոր ֆիզիկական օրհնությունները, որ մենք ստանում ենք, ստանում ենք հավատքի միջոցով . . . Նույն ձևով, բոլոր հոգևոր օրհնությունները, որ մենք ստանում ենք, ստանում ենք հավատքի միջոցով» (*Lectures on Faith* [1985], 3): Որո՞նք են այն օրհնությունները, որոնք դուք ստացել եք հավատքի շնորհիվ: (Կարող եք դասարանի անդամներին խնդրել մտովի խորհել այս հարցի շուրջ և չպատասխանել բարձրաձայն:)

2. Տերը Մորոնիին սովորեցնում է, որ մեզ թուլություններ է տալիս, որպեսզի մենք հնազանդ լինենք:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Եթեր 12.23–41-ից:

- Ո՞րն էր Մորոնիի մտահոգությունը կապված նրա հետ, թե ինչպես էին Հեթանոսները ստանալու իր հիշատակարանը: (Տե՛ս Եթեր 12.23–25:) Ո՞րն էր Տիրոջ պատասխանը: (Տե՛ս Եթեր 12.26:) Ինչո՞ւ է կարևոր խոնարհաբար կարդալ Մորոնիի խոսքերը, և բոլոր սուրբ գրությունները:

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Եթեր 12.27: Դասարանի անդամներին խնդրեք ուշադրություն դարձնել Տիրոջ խոստումին, որը տրվել է նրանց, ովքեր հնազանդեցնում են իրենց և հավատում Իրեն («Այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ»): Դասարանի անդամներին խնդրեք մտածել, թե ինչպես է այս խոստումն իրականացել սուրբ գրություններում, իրենց կյանքում կամ ուրիշների կյանքում: Հրավիրեք նրանց կիսվել իրենց օրինակներով:

- Մորոնին գրել է հավատքի, հույսի և գթության կարևորության մասին (Եթեր 12.28–34): Ինչպե՞ս են այս հատկանիշները բերում մեզ Քրիստոսի մոտ:

- Մորոնին մեզ հորդորում է «փնտրել այս Հիսուսին, որի մասին գրել են մարգարեները» (Եթեր 12.41): Ինչպե՞ս մենք կարող ենք «փնտրել Հիսուսին» այսօր: (Տե՛ս Եթեր 12.41:) Ինչո՞ւ է մեզ հարկավոր Աստծո և Նրա Որդու գթությունը:

3. Մորոնին գրի է առնում Եթերի մարգարեությունները խոստումի երկրի վերաբերյալ:

Կարդացեք և քննարկեք Եթեր 13.1–12:

- Ի՞նչ մարգարեացավ Եթերը Նոր Երուսաղեմի և Հին Երուսաղեմի մասին: (Դասարանի անդամներին խնդրեք կարդալ Եթեր 13.2–12 այս հարցի պատասխանները գտնելու համար; տե՛ս նաև ստորև նշված պատասխանները:)

  ա. Հին Երուսաղեմը (որտեղից եկել էր Լեքին), կրկին կկառուցվի և կլինի Տիրոջ սուրբ քաղաքը (տե՛ս Եթեր 13.5): Դա կարվի Հուդայի հետնորդների կողմից Երկրորդ Գալստից առաջ:
  բ. Երկրորդ Գալստից առաջ նոր Երուսաղեմ պետք է կառուցվի Ամերիկայի հողի վրա (տե՛ս Եթեր 13.6): Նոր Երուսաղեմը կլինի սուրբ քաղաք, կառուցված Հովսեփի տան մնացորդի կողմից (Եթեր 13.8):
  գ. Ենոքի քաղաքը կիջնի երկնքից և կդառնա Նոր Երուսաղեմի մասը (Եթեր 13.3, 10; տե՛ս նաև Հայտնություն 21.2, 10): Սա տեղի կունենա Երկրոդ Գալստից առաջ:

- Ինչպե՞ս էր Մորոնին նկարագրում նրանց, ովքեր արժանի կլինեն ապրելու այդ սուրբ քաղաքներում: (Տե՛ս Եթեր 13.10–11:) Ի՞նչ է նշանակում «մաքրվել Գառի արյունով» (Մաքրվել մեղքից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:)

4. Պատերազմը մոլեգնում է երկրով մեկ: Հարեդացիների քաղաքակրթությունը կործանվում է:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Եթեր 13.13–15.34-ից: Բացատրեք, որ մարդիկ արտաքսեցին Եթերին, և իր հիշատակարանի մնացած մասը նա գրեց այն ժամանակ, երբ թաքնված էր քարանձավում (Եթեր 13.13–14): Շուտով մարդիկ ներքաշվեցին պատերազմների և գաղտնի խմբերի մեջ:

- Քարանձավում երկրորդ տարին անցկացնելու ժամանակ Տիրոջ խոսքը եկավ Եթերին: Ի՞նչ հրահանգ տվեց նրան Տերը: (Տե՛ս Եթեր 13.20–21:) Ինչպե՞ս Կորիանթումրն արձագանքեց Եթերի մարգարեություններին: (Տե՛ս Եթեր 13.22:)

Բացատրեք, որ Եթեր 13.23–15.28 նկարագրում է անընդհատ արյունահեղություն, որի պատճառը տարբեր խմբերի կողմից իշխանություն ձեռք բերելու ցանկությունն էր: Միլիոնավոր Հարեդացիներ զոհվեցին: Կորիանթումրը պարտություններ կրեց և մի քանի անգամ վիրավորվեց, սակայն չմահացավ: Հիշատակարանի վերջում Կորիանթումրը և Սիզը հավաքեցին ամբողջ ժողովրդին վերջին ճակատամարտի համար: Կռվից մի քանի օր հետո միայն Կորիանթումրը և Սիզը ողջ մնացին:

- Ինչպե՞ս ավարտվեց ճակատամարտը: (Տե՛ս Եթեր 15.29–32:) Ինչպե՞ս այն իրականացրեց Եթերի մարգարեությունը: (Տե՛ս Եթեր 13.20–21:)

- Ի՞նչ մենք կարող ենք սովորել Հարեդացիների հիշատակարանից ապաշխարելու կարևորության մասին նախքան մեղքերի մեջ ավելի շատ ներքաշվելը: (Տե՛ս Եթեր 15.1–5, 18–19; տե՛ս նաև Հելաման 13.32–33, 38:) Ինչպե՞ս է մեղքը սահմանափակում մեր ազատությունը:

- Ի՞նչ նմանություններ կան Նեփիացիների և Հարեդացիների պատմության մեջ: Ի՞նչ մենք կարող ենք սովորել այդ քաղաքակրթությունների պատմություններից:

Եզրափակում

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այդ մտքերից մեկը կամ մի քանիսը որպես դասի մաս:

1. Մարգարեներին հետևելու կարևորությունը

Նշեք, որ Հարեդացիների պատմությունը շատ օրինակներ է տալիս հետևյալ մոդելի մասին.

ա. Մարդիկ դառնում են ամբարիշտ:
բ. Մարգարեները մարդկանց կոչ են անում ապաշխարության:
գ. Մարդիկ ընդունում են մարգարեներին և օրհնվում են, կամ չեն ընդունում մարգարեներին, և իրենց անարդարությունների հետևանքով տառապանքներ են կրում:
դ. Ի պատասխան այդ հետևանքների, մարդիկ ապաշխարում և հետևում են մարգարեներին, կամ շարունակում են ամբարշտության մեջ ապրել մինչև լիակատար կործանում:

Կարող եք կարդալ և քննարկել այս օրինակները Եթեր 7.23–27; 9.23–35; 11.1–8, 11–14, 19–23-ում:

2. Մորոնին նախազգուշացնում է գաղտնի խմբակցությունների մասին:

Հարեդի և նրա եղբոր մահից հետո հաջորդաբար կառավարեցին թագավորները: Սերնդե սերունդ գահի համար պայքարն ավելի էր սաստկանում: Այդ պայքարի աճը տեսնելով, Հարեդի դուստրը մշակեց մի ծրագիր իր հորը թագավոր դարձնելու նպատակով (Եթեր 8.8; դասարանի անդամներին հիշեցրեք, որ այս հատվածում Հարեդ անունով մարդը այն Հարեդի հետնորդն է, որի մասին խոսվում է Եթեր 1–6-ում):

- Ի՞նչ ծրագիր էր մշակել Հարեդի դուստրը: (Տե՛ս Եթեր 8.9–12:) Ինչպե՞ս է այս ծրագիրը ներկայացնում երկրում գոյություն ունեցող գաղտնի խմբակցություններին: (Տե՛ս Եթեր 8.13–18:)
- Ի՞նչ էր Մորոնին սովորեցնում գաղտնի խմբակցությունների մասին: (Տե՛ս Եթեր 8.21–22:) Ինչո՞ւ նա իր հիշատակարանում ընդգրկեց այդ խոսքերը: (Տե՛ս Եթեր 8.23, 26:) Ինչպե՞ս մենք կարող ենք ճանաչել գաղտնի խմբակցությունները և պաշտպանվել դրանցից: (Տե՛ս Եթեր 8.23–25:)

3. «Քանի որ դու տեսար քո թուլությունը, դու կդարձվես ուժեղ» (Եթեր 12:.7)

- Երբ Հայրում Սմիթը պատրաստվեց գնալ Քարթրիջի բանտը, որտեղ նա և Մարգարե Ջոզեֆ Սմիթը սպանվեցին, նա կարդաց Եթեր 12.36–38 հատվածները և ծալեց այդ էջը (Վ. և Ու. 135.4–5): Ինչպիսի՞ մխիթարություն են առաջարկում այս տողերը: Սուրբ գրության ո՞ր հատվածներն են զորացրել կամ մխիթարել ձեզ:

Դաս
47

«Պահելու նրանց ճշմարիտ ուղու վրա»

Մորոնի 1–6

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ ավետարանի արարողությունները և միմյանց զորացնելու կարևորությունը:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. Մորոնի 1: Նեփիացիների կործանումից հետո ողջ մնալով Մորոնին շարունակում է իր գրառումները: Նա պետք է թաքնված մնա, քանի որ չի կամենում ուրանալ Քրիստոսին:

բ. Մորոնի 2–5: Մորոնին սովորեցնում է ավետարանի հիմնական արարողությունների մասին:

գ. Մորոնի 6: Մորոնին բացատրում է Եկեղեցու անդամ դառնալու պահանջները, գրառումներ կատարելու և ընկերակցելու կարևորությունը:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին խնդրեք մտածել, թե երբ են վերջին անգամ նրանք ներկա եղել որևէ այլ ճյուղի կամ ծխի հաղորդության ժողովին:

- Հաղորդության ժողովի ո՞ր մասերն են նույնը ամբողջ Եկեղեցում: (Պատասխաններ. աղոթքը, հիմների կատարումը, հաղորդության օրհնումը և բաժանումը, նորադարձներին Սուրբ Հոգու պարգևի շնորհումը և վկայությունների ու քարոզների եզրափակումը Հիսուս Քրիստոսի անունով:) Ինչո՞ւ է կարևոր միավորված լինել այդ ամենում:

Բացատրեք, որ այս դասը քննարկում է ավետարանի ծեսերի վերաբերյալ Մորոնիի ուսմունքները: Ավետարանի արարողություններն են՝ Սուրբ Հոգու պարգևի շնորհումը, քահանաների և ուսուցիչների ձեռնադրումը, հաղորդության սպասավորումը, մկրտությունը, որոնք վերականգնված Եկեղեցու բաղկացուցիչ մասերն են այսօր: Նրա ուսմունքները կարող են մեզ օգնել տեսնել այդ նույն արարողությունների շարունակությունը, որոնք գոյություն ունեին հնում՝ Փրկչի հիմնած Եկեղեցում: Դրանք նույնպես օգնում են մեզ՝ որպես Եկեղեցու անդամներ, կատարել մեր պարտականությունները՝ ամրացնել միմյանց՝ մնալու համար ճիշտ ուղու վրա (տե՛ս Մորոնի 6.4; տե՛ս նաև 2 Նեփի 25.28–29):

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. **Նեփիացիների կործանումից հետո ողջ մնալով, Մորոնին շարունակում է իր գրառումները:**

Կարդացեք և քննարկեք Մորոնի 1: Բացատրեք, որ Մորոնին գիտեր, որ Եթերի հիշատակարանի կրճատումներն իր վերջին գրառումներն են լինելու: Այնուամենայնիվ, քանի որ նա դեռ ողջ էր, նա շարունակում էր գրել:

- Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորոնի 1.1–4: Ի՞նչ պայմաններում էր գտնվում Մորոնին, երբ գրում էր այս գլուխը: (Տե՛ս Մորոնի 1.1: Նա միայնակ էր և թաքնված էր Լամանացիներից:) Ինչո՞ւ Լամանացիները կսպանեին նրան, եթե գտնեին: (Տե՛ս Մորոնի 1.2–3:) Ի՞նչ է սա ասում Մորոնիի հավատքի մասին: Ինչպե՞ս մենք կարող ենք այդպիսի ամուր վկայություն ձեռք բերել Հիսուս Քրիստոսի մասին:

- Ինչո՞ւ էր Մորոնին շարունակում գրել: (Տե՛ս Մորոնի 1.4: Նշե՛ք, որ, թեև իր օրերի Լամանացիները պատրաստ էին սպանել նրան, Մորոնին շարունակում էր մտահոգվել նրանց հետնորդների մասին:)

2. **Մորոնին սովորեցնում է ավետարանի հիմնական արարողությունները:**

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորոնի 2–5-ից: Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը մեզ սովորեցնում է ավետարանի արարողությունների կարևորության մասին: Սակայն, մինչև Մորոնիի գիրքը համեմատաբար քիչ էր գրված այն մասին, թե ինչպես պետք է կատարվեն արարողությունները: Քննարկեք, թե ինչպես է Մորոնին խորացնում մեր գիտելիքներն այն մասին, թե ինչպես էին հնում կատարվել Եկեղեցու արարողությունները:

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորոնի 2, որտեղ գրված են Փրկչի խոսքերը, որոնք Նա խոսեց Իր Նեփիացի աշակերտների համար, նրանց ձեռնադրելիս: Գրատախտակին գրեք *Սուրբ Հոգու Պարգևի շնորհումը* վերնագիրը:

- Ինչպե՞ս Փրկիչը սովորեցրեց աշակերտներին շնորհել Սուրբ Հոգու պարգևը: (Տե՛ս Մորոնի 2.2: Գրատախտակին գրված վերնագրի տակ գրեք *Ձեռնադրելով Հիսուս Քրիստոսի անունով:*)

Դասարանի անդամներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Մորոնի 3, որը նկարագրում է, թե ինչպես էին աշակերտները քահանաների և ուսուցիչների կարգում: Գրատախտակին գրեք *Քահանաների և ուսուցիչների կարգումը* վերնագիրը:

- Ի՞նչ աշխատանքի համար էին կարգվում քահանաները և ուսուցիչները: (Տե՛ս Մորոնի 3.3: Երկրորդ վերնագրի տակ գրեք *Քարոզել ապաշխարություն և մեղքերի թողություն:*) Որքանո՞վ են նման այս պարտականություններն այսօր քահանայություն կրողների պարտականություններին: (Տե՛ս Վ. և Ու. 20.46–59:) Ինչպե՞ս մենք կարող ենք օգնել Ահարոնյան Քահանայություն կրողներին հասկանալ և կատարել իրենց հանձնարարված պարտականությունները:

Դասարանի երկու անդամների հրավիրեք բարձրաձայն կարդալ Մորոնի 4 և 5, որոնք նկարագրում են հաղորդությունն անցկացնելու ձևը: Գրատախտակին գրեք *Հաղորդության սպասավորումը* վերնագիրը:

- Ի՞նչ ուխտեր ենք մենք կապում հաղորդության միջոցով: (Տե՛ս Մորոնի 4.3; 5.2: Վերնագրի տակ գրեք *Հիշել, հետևել և հնազանդվել Փրկչին:*) Ի՞նչ է մեզ խոստացվում փոխարենը: Ինչպե՞ս եք ձեզ զգում, երբ պատկառանքով և արժանի լինելով եք ընդունում հաղորդությունը:

- Ինչո՞ւ են 2–5 գլուխները կարևոր մեր օրերի համար: (Պատասխաններ. դրանք մեզ օգնում են տեսնել ավետարանի արարողությունների հետևողականությունը տարբեր ժամանակահատվածներում:) Ինչպե՞ս եք ամրանում, տեսնելով, որ նույն արարողությունները կատարվում են Տիրոջ Եկեղեցում տարբեր ժամանակաշրջաններում:

3. Մորոնին բացատրում է Եկեղեցու անդամ դառնալու պահանջները և գրառումներ պահելու ու ընկերակցելու անհրաժեշտությունը:

Կարդացեք և քննարկեք Մորոնի 6:

- Ի՞նչ է սովորեցնում Մորոնին մկրտության պահանջների մասին: (Տե՛ս Մորոնի 6.1–3:)

  Դասարանի անդամներին խնդրեք մտածել այն մարդկանց օրինակի մասին, որոնք մկրտվելուց հետո շարունակել են կատարել այդ պահանջները: Հնարավորության դեպքում, նրանց խնդրեք կիսվել այդ օրինակներով:

- Մորոնին սովորեցնում էր, որ մկրտվելուց և Սուրբ Հոգու պարգևը ստանալուց հետո մարդիկ «համարվում էին Քրիստոսի եկեղեցու ժողովրդի թվում. և նրանց անունները գրի էին առնվում» (Մորոնի 6.4): Ինչո՞ւ էին նրանց անունները գրի առնվում: (Տե՛ս Մորոնի 6.4:) Ո՞վ էր պատասխանատու հետևելու, որպեսզի հին և նոր անդամները «հիշվեին և սնուցվեին Աստծո բարի խոսքով» (Շեշտե՛ք, որ մեզանից յուրաքանչյուրն ունի այդ հնարավորությունը և պատասխանատվությունը: Այնուհետև, կիսվեք ստորև տրված մեջբերումներով:)

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին սովորեցրել է. «Ցանկացած նորադարձ, ում հավատքը սառչում է, ողբերգություն է: Ցանկացած անդամ, որն այլևս ակտիվ չէ, դառնում է լուրջ մտահոգության պատճառ: Տերը թողեց իննսուն իններին միայն մեկ կորած ոչխարին գտնելու համար: Նրա մտահոգությունը հեռացողների համար այնքան խորն է, որ Նա դարձրեց դա Իր մեծ դասերի կարևոր թեմաներից մեկը: Մենք շարունակ պետք է Եկեղեցու ծառայողներին և անդամներին տեղյակ պահենք այդ վիթխարի պատասխանատվության մասին՝ ընկերակցել անկեղծ, ջերմ և սքանչելի ձևով նրանց, ովքեր գալիս են դեպի Քրիստոսը որպես նորադարձներ, և սիրով հետ բերել նրանց, ովքեր այս կամ այն պատճառով անցել են պասիվության ստվերի տակ» (in *Church News,* 8 Apr. 1989, 6):

  Նախագահ Հինքլին նաև ասել է. «Նորադարձների թվի այս չտեսնված աճի պայմաններում մենք պետք է ավելի մեծ ջանքեր գործադրենք՝ օգնելու նրանց գտնել իրենց ուղին: Նրանցից յուրաքանչյուրը երեք բանի կարիք ունի. ընկերոջ, պատասխանատվության և սնվելու «Աստծո բարի խոսքով» (Մորոնի 6.4)» (in Conference Report, Apr. 1997, 66; or *Ensign*, May 1997, 47):

- Ի՞նչ մենք կարող ենք անել Նախագահ Հինքլիի խորհրդին հետևելու համար: Ինչպե՞ս եք օրհնվել, երբ ուրիշները հիշել և սնուցել են ձեզ:

- Մորոնին գրում է, որ Եկեղեցին «հաճախ հավաքվում էր» (Մորոնի 6.5): Ինչո՞ւ: (Տե՛ս Մորոնի 6.5–6:) Ինչպե՞ս մենք կարող ենք ամրանալ, եթե ծոմ պահենք և աղոթենք միասին: Եկեղեցու ժողովները ինչպե՞ս են մեզ հնարավորություն տալիս խոսելու միմյանց հետ՝ մեր «հոգիների բարօրության վերաբերյալ»: Ինչո՞ւ է կարևոր, որ հաղորդությունն ընդունելու համար մենք հավաքվենք միասին:

- Ի՞նչ էր սովորեցնում Մորոնին Եկեղեցու ժողովների վարման մասին: (Տե՛ս Մորոնի 6.9:) Ի՞նչ կարող է անել մեզանից յուրաքանչյուրը Սուրբ Հոգին մեր ժողովներին հրավիրելու համար:

Եզրափակում

Բացատրեք, որ Մորոնին սովորեցնում էր որպես Եկեղեցու անդամներ միմյանց ամրացնելու կարևորության մասին: Դասարանի անդամներին խրախուսեք գտնել եղանակներ, որոնցով նրանք կարող են «հիշել և սնուցել» ծխի կամ ճյուղի մյուս անդամներին:

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Հետևյալ նյութը լրացնում է դասի առաջարկվող ընթացքը: Կարող եք օգտագործել այն որպես դասի մաս:

Օգնել ուրիշներին մեր ծխերում և ճյուղերում ջերմության մթնոլորտ զգալ

Երեց Կառլ Բ. Փրատը պատմում է այն զգացմունքների մասին, որ իր ընտանիքն ունեցել է Եկեղեցու տարբեր ծխեր հաճախելիս: Դասարանի անդամների հետ կիսվեք հետևյալ հատվածով.

«Որոշ ծխեր մեր երեխաները շատ էին սիրում այցելել, որովհետև այնտեղ արագ ընկերներ էին գտնում երիտասարդների մեջ, և մենք բոլորս ջերմ և սիրալիր ընդունելության էինք արժանանում: Սակայն կային ծխեր, որտեղից մեր երեխաները ավելի քիչ ոգևորությամբ էին վերադառնում, չգտնելով այնտեղ ջերմություն և սիրալիրություն:

Այնուհետև մենք սկսեցինք ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ որոշ ծխերում. . . . եթե մենք հետաքրքրվողներ կամ նոր անդամներ լինեինք, ապա այդքան էլ ցանկալի մեզ չէինք զգա:

Այդ փորձը . . . մեզ ստիպեց մտածել այն մասին, որ մենք *բոլորս* կարիք ունենք բարելավելու մարդկանց հետ շփվելու մեր ունակությունները. . . .

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք ունենք ամենահարուստ օրհնությունները, որ Աստված տալիս է Իր զավակներին: Մենք ունենք Հիսուս Քրիստոսի ավետարանի ամբողջությունը: Մենք պետք է լինենք ամենաբաց, ընկերասեր, երջանիկ, բարի, ուշադիր, մտածող, սիրող մարդիկ ամբողջ աշխարհում. . . .

Արդյո՞ք ոչ անդամները, նորադարձները և մեր Եկեղեցի այցելողները չեն համարի մեզ որպես Նրա աշակերտներ՝ մեր ջերմ ընդունելության, մեր պարզ ժպիտների, մեր աչքերում շողացող բարության և անկեղծ մտահոգության շնորհիվ» (in Conference Report, Oct. 1997, 12; or *Ensign,* Nov. 1997, 11–12):

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս իրենց կզգան այցելուները կամ նորադարձները մեր ծխում կամ ճյուղում: (Դասարանի անդամներին խնդրեք մտքում մտածել այս հարցի շուրջ, ոչ թե բարձրաձայն պատասխանել:) Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի լավ վերաբերվել այցելուներին և նորադարձներին:

Դաս
48

«Եկե՛ք դեպի Քրիստոսը»

Մորոնի 7–8; 10

Նպատակ

Սովորեցնել դասարանի անդամներին տարբերել բարին և չարը, և ստանալ վկայություն ավետարանի և Մորմոնի Գրքի մասին:

Նախապատրաստություն

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները, խորհեք դրանց շուրջ և աղոթեք դրանց մասին.

ա. Մորոնի 7.1–19: Մորմոնը բացատրում է, թե ինչպես տարբերել բարին և չարը (նշե՛ք, որ այս խոսքերը գրի են առնվել Մորմոնի որդի Մորոնիի կողմից):
բ. Մորոնի 7.20–48: Մորմոնը բացատրում է, որ Քրիստոսի հանդեպ հավատքը զորություն է, որի միջոցով հրաշքներ են գործվում: Նա բացատրում է հավատքի, հույսի և գթության կարևորության մասին:
գ. Մորոնի 8: Մորոնիին ուղղված նամակում Մորմոնը պարզաբանում է, թե ինչ է անհրաժեշտ փրկություն ձեռք բերելու համար, և բացատրում է, որ փոքր երեխաները փրկվում են Քրիստոսի Քավության միջոցով:
դ. Մորոնի 10: Մորոնին բացատրում է, որ Սուրբ Հոգին բոլոր ճշմարտությունների մասին վկայություն է տալիս նրանց, ովքեր խնդրում են հավատքով: Նա նկարագրում է հոգևոր պարգևները և բոլորին հորդորում է գալ դեպի Քրիստոսը:

Առաջարկություններ դասը զարգացնելու համար

Ուշադրության վարժություն

Եթե նպատակահարմար է, օգտագործեք հետևյալ վարժությունը կամ ձեր կողմից պատրաստած որևէ վարժություն դասը սկսելու համար:

Պատմեք հետևյալ պատմությունը.

1910 թ. փետրվարյան մի ցուրտ օր Բողոքական եկեղեցու ծառայող Վինսենզո դի Ֆրանչեսկան գտավ քամուց պատառոտված մաշված կրոնական մի գիրք՝ առանց վերնագրի էջի: Հետաքրքրվելով, նա փաթաթեց գիրքը թերթի մեջ և տարավ իր հետ: Տանը նա մաքրեց և կարդաց գիրքը: «Ես կարդում և կարդում էի այն, կրկին և կրկին, և կարող եմ ասել, որ այն Քավիչի հինգերորդ ավետարանն էր», – ասում էր նա:

Գիրքը, որը նա գտել էր, Մորմոնի Գիրքն էր: Երբ նա կարդաց այն, որոշեց հետևել Մորոնի 10.4-ում տրված խորհրդին: «Օրվա վերջում ես փակեցի սենյակիս դուռը, գիրքը ձեռքերիս ծնկի իջա և կարդացի Մորոնիի գրքի տասներորդ գլուխը: Ես աղոթեցի Աստծուն, Երկնային Հորը, Նրա որդի Հիսուս Քրիստոսի անունով, որպեսզի Նա հայտներ ինձ, արդյոք այդ գիրքն Աստծուց էր, արդյոք այն բարի և ճշմարիտ էր, և արդյոք ես պետք է քարոզելիս չորս ավետարանի խոսքերի հետ մեկտեղ օգտագործեմ դրա խոսքերը:

Ես զգացի, թե ինչպես մարմինս դարձավ ծովի քամու պես սառը: Այնուհետև սիրտս սկսեց արագ խփել, և ուրախության մի զգացում, որը զգում ես, երբ գտնում ես մի թանկագին և արտասովոր բան, մխիթարություն պարգևեց հոգուս և թողեց իմ մեջ մի այնպիսի հրճվանք, որը հնարավոր չէ նկարագրել մարդկային լեզվով: Ես հավաստիացա, որ Աստված պատասխանեց իմ աղոթքին և գիրքը մեծ օգուտ կբերի ինձ և բոլոր նրանց, ովքեր ականջ կդնեն դրա խոսքերին»:

Վինսենզո դի Ֆրանչեսկայի ստացած այդ վկայությունն օգնեց նրան դիմակայել բազմաթիվ դժվարությունների: Նրան ազատեցին ծառայողի իր պաշտոնից, որովհետև նա սովորեց-

նում էր Մորմոնի Գրքից: Միայն 1930 թ. նա իմացավ գրքի անվանումը և այն հրատարակող Եկեղեցու անունը: Պատերազմի և քաղաքական իրադարձությունների պատճառով 21 տարի հետո միայն նա կարողացավ մկրտվել: Դժվարությունների այդ ամբողջ ժամանակաընթացքում նա պահպանում էր Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին իր ամուր վկայությունը: (Տե՛ս Վինսենզո դի Ֆրանչեսկա, "I Will Not Burn the Book!" *Ensign,* Jan. 1988, 18–21:)

Նշե՛ք, որ այս դասը քննարկում է Մորմոնի Գրքի վերջին գլուխները: Այս գրվածքները պարունակում են Մորմոնի ցուցումներն այն մասին, թե ինչպես մեզանից յուրաքանչյուրը կարող է անձնական վկայություն ստանալ Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Աղոթքով ընտրեք սուրբ գրությունների հատվածները, հարցերը և դասարանային այն նյութերը, որոնք ամենանպաստավորը կլինեն ձեր դասարանի անդամների համար: Քննարկեք, թե ինչպես կարելի է օգտագործել այդ սուրբ գրություններն առօրյա կյանքում: Դասարանի անդամներին խրախուսեք կիսվել սուրբ գրությունների սկզբունքների հետ առնչվող իրենց փորձով:

1. Մորմոնը բացատրում է, ինչպես դատել բարին չարից:

Քննարկե՛ք Մորոնի 7.1–19: Դասարանի անդամներին խնդրեք բարձրաձայն կարդալ ընտրված հատվածները: Նշե՛ք, որ Մորոնի 7 պարունակում է Մորմոնի խոսքերը, որոնք գրի է առել նրա որդի Մորոնին:

- Մորմոնը Եկեղեցու անդամներին անվանում է «Քրիստոսի խաղաղ հետևորդներ» (Մորոնի 7.3): Ինչի՞ հիման վրա էր Մորմոնն այդպես կոչում Եկեղեցու անդամներին: (Տե՛ս Մորոնի 7.4–5:) Ինչպե՞ս ենք մենք դառնում «Քրիստոսի խաղաղ հետևորդները»:
- Ի՞նչ սովորեցրեց Մորմոնը բարի գործեր կատարելու մեր դրդապատճառների մասին: (Տե՛ս Մորոնի 7.6–9:) Ի՞նչ է նշանակում պարզև տալ կամ աղոթել «անկեղծ միտումով»: Ինչպե՞ս մենք կարող ենք բարին գործելու մեր դրդապատճառները մաքուր դարձնել:
- Ի՞նչ է սովորեցնում Մորմոնն այն մասին, թե ինչպես մենք պետք է տարբերենք բարին չարից: (Տե՛ս Մորոնի 7.12–19:)

  Գրատախտակին գրեք. *Արդո՞ք* _____ *հրավիրում է ինձ սիրել և ծառայել Աստծուն: Արդյո՞ք* _____ *ոգեշնչված է Աստծուց:* Դասարանի անդամներին խրախուսեք օգտվել այս հարցերից, երբ նրանք փորձում են գնահատել որևէ արարք, որոշելու բարի է այն, թե չար: (Կարող եք նշել, որ ավելի հեշտ է դատել այն մասին, թե արդյոք ինչ-որ բան տանում է մեզ դեպի Աստված, քան դատել, արդյոք տանում է դա դեպի սատանան: Սատանայի խորամանկ հնարքները հաճախ խրախուսում են մեզ մտածել, որ ինչ-որ բան, ինչն իսկապես չարիք է, եթե անգամ լավ չէ, «այդքան էլ վատ չէ»: Շեշտե՛ք, որ ցանկացած բան, որը մեզ չի տանում դեպի Աստված, միայն հեռացնում է մեզ Նրանից:)
- Մորմոնը մարդկանց զգուշացնում է «Ու՛շք դարձրեք . . . որ դուք չդատեք այն, ինչը որ չարից է՝ Աստծուց լինի . . . ինչը որ բարի է և Աստծուց՝ դևից լինի» (Մորոնի 7.14; տե՛ս նաև 2 Նեփի 15.20): Ինչպե՞ս է դա կատարվում այսօր: (Դասարանի անդամների պատասխանները կարող եք գրել գրատախտակին *Չարը ներկայացված է որպես բարի* և *Բարին ներկայացված է որպես չար* վերնագրերի տակ:)
- Ինչպիսի՞ ազդեցություն ենք մենք ստանում, որն օգնում է տարբերել բարին չարից: (Տե՛ս Մորոնի 7.16, 18–19:)

  Բացատրե՛ք, որ «Քրիստոսի Հոգին» կամ «Քրիստոսի լույսը» ոգևորող, ազնվացնող և պաշտպանող ազդեցություն է, որը տրվում է ամբողջ մարդկությանը Հիսուս Քրիստոսի շնորհիվ» (Bible Dictionary, "Light of Christ," 725): Այն մատչելի է բոլոր մարդկանց և կարող է պատրաստել մարդուն գտնել ճշմարտությունը և ստանալ Սուրբ Հոգին: Ճիշտը և սխալը տարբերելու մեջ մեզ օգնելու գործում Քրիստոսի լույսը հաճախ կոչվում է խիղճ:

- Ինչպե՞ս է Քրիստոսի լույսն օգնել ձեզ տարբերել չարը բարուց: Ինչպե՞ս կարող ենք դառնալ ավելի ընդունակ՝ Քրիստոսի լույսով առաջնորդվելու համար:

2. Մորմոնը բացատրում է հավատքի, հույսի և գթության կարևորությունը:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորոնի 7.20–48-ից:

- Մորմոնը հարցնում է. «Ինչպես է դա հնարավոր, որ դուք կարողանաք որդեգրել այն ամենը, ինչ բարի է» (Մորոնի 7.20): Ինչպե՞ս նա պատասխանեց այս հարցին: (Տե՛ս Մորոնի 7.21–26: «Բոլոր բաները, որոնք բարի են, գալիս են Քրիստոսից», և մենք կարող ենք որդեգրել դրանք՝ հավատք գործադրելով առ Քրիստոս:)

  Դասարանի անդամներին խնդրեք մտածել այն օրհնությունների մասին, որոնք հավատքի շնորհիվ տրվում են նրանց և ուրիշներին: Խնդրեք նրանց կիսվել իրենց փորձով:

- Ինչպիսի՞ն է կապը հավատքի և հրաշքների միջև: (Տե՛ս Մորոնի 7.28–30, 35–38:) Ինչո՞ւ է կարևոր, որպեսզի հավատքը նախորդի հրաշքներին: (Տե՛ս Մորոնի 7.37; տե՛ս նաև Եթեր 12.12, 18 և ստորև տրված մեջբերումը:) Ինչո՞ւ միայն հրաշքները բավարար և ամուր հիմք չեն հավատքի համար:

  Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Հրաշքները, կամ Աստծո ուժի արտասովոր դրսևորումները, նախատեսված չեն անհավատի համար, դրանք Սրբերին մխիթարելու համար են, դրանք նախատեսված են զորացնելու և ամրացնելու նրանց հավատքը, ովքեր սիրում, ծառայում են Աստծուն և վախենում են Նրանից» (*Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe [1941], 341):

- Ի՞նչ է հույսը: Ինչպիսի՞ կապ կա հավատքի և հույսի միջև: (Տե՛ս Մորոնի 7.40–42:)

  Երեց Բրյուս Մակ-Քոնկին սովորեցրել է. «Ինչպես օգտագործվում է հայտնություններում, *հույսը* հավատացյալ մարդու ցանկությունն է՝ ստանալ հավիտենական փրկություն Աստծո արքայությունում . . . այսպիսով, հավատքը և հույսը անբաժանելի են: Հույսը մեզ հնարավորություն է տալիս առաջին հերթին հավատք ունենալ, այնուհետև հավատքի շնորհիվ հույսն աճում է մինչև փրկություն ստանալը» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 365–66):

- Ինչպիսի՞ հատկանիշներ պետք է նախորդեն հավատքին և հույսին: (Տե՛ս Մորոնի 7.43:) Ինչո՞ւ մարդը պետք է լինի «հեզ և սրտով խոնարհ» ճշմարիտ հավատք և հույս ունենալու համար:

- Մորմոնը սովորեցնում էր, որ բացի հավատքից և հույսից մենք պետք է գթություն ունենանք: (Տե՛ս Մորոնի 7.46–47:) Որո՞նք են գթության հատկանիշները: (Տե՛ս Մորոնի 7.45: Դասարանի անդամների պատասխանները կարող եք գրի առնել գրատախտակի վրա:) Ձեր կյանքի փորձն ինչպե՞ս է հաստատել այն փաստը, որ «գթությունը երբեք չի խափանվում»:

- Ինչպե՞ս մենք կարող ենք մեծացնել մեր հավատքը և հույսը: Ինչպե՞ս մենք կարող ենք լցվել Քրիստոսի մաքուր սիրով: Ինչո՞ւ մենք պետք է ձգտենք ունենալ հավատք, հույս և գթություն: (Տե՛ս Մորոնի 10.20–21:)

3. Մորմոնը սովորեցնում է, որ փոքր երեխաները փրկված են Քրիստոսի Քավության միջոցով:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորոնի 8-ից: Նշեք, որ այս գլուխը պարունակում է Մորմոնի նամակը, ուղղված իր որդի Մորոնիին:

- Ինչո՞ւ փոքր երեխաները կարիք չունեն մկրտության: (Տե՛ս Մորոնի 8.8–9, 11, 19–20: Նշեք, որ փոքր երեխաների մասին Մորմոնի ուսմունքները կիրառվում են նաև բոլոր նրանց համար, «ովքեր առանց օրենքի են» [Մորոնի 8.22], ինչը վերաբերվում է մտավոր թերություններ ունեցողներին, և ի վիճակի չեն հասկանալու ավետարանի պատվիրաններն ու արարողությունները:) Ինչո՞ւ փոքր երեխաների մկրտությունը «ծաղր է Աստծո առաջ»: (Տե՛ս Մորոնի 8.20, 22–23:)

- Փոքր երեխաները փրկված են, որովհետև անմեղ են և անընդունակ մեղք գործելու: Ինչպե՞ս նրանք, ովքեր մեղք են գործել, փրկություն կարող են ստանալ Քրիստոսի Քավության միջոցով: (Տե՛ս Մորոնի 8.10, 24–26:)

4. Սուրբ Հոգին վկայում է բոլոր ճշմարտությունների մասին: Հոգևոր պարգևները տրվում են նրանց, ովքեր գալիս են դեպի Քրիստոսը:

Կարդացեք և քննարկեք ընտրված հատվածները Մորոնի 10-ից:

- Մորմոնի Գրքի վերջին գլուխը՝ Մորոնի 10-ը, պարունակում է Մորոնիի ավարտական խոսքերը: Ո՞ւմ է ուղղված այս գլուխը: (Տե՛ս Մորոնի 10.1:) Մորոնին եզրափակում է «հորդորանքի ձևով մի քանի խոսքեր խոսելուց հետո» (Մորոնի 10.2): Ի՞նչ է նշանակում *հորդորել* բառը: (Խորհուրդ տալ կամ խստորեն կոչ անել:) Դասարանի անդամներին խնդրեք արագ կարդալ գլուխը և գտնել այն ամենը, ինչի համար Մորոնին հորդորում է ընթերցողներին: (Պատասխանները տրված են ստորև: Կարող եք դասարանի անդամներին խնդրել բարձրաձայն կարդալ յուրաքանչյուր հատվածը, որը հորդորանք է պարունակում:)

  ա. «Հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը մարդկանց զավակների համար» (հատված 3):
  բ. «Հարցրեք Աստծուն՝ Հավիտենական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չե՞ն» (հատված 4):
  գ. «Չուրանաք Աստծո զորությունը» (հատված 7):
  դ. «Չուրանաք Աստծո պարգևները» (հատված 8):
  ե. «Հիշեք, որ ամեն բարի պարգև գալիս է Քրիստոսից» (հատված 18):
  զ. «Հիշեք, որ նա նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյանս» (հատված 19):
  է. «Հիշեք այս բաները [որոնք Մորոնին գրել է]» (հատված 27):
  ը. «Եկեք դեպի Քրիստոսը» (հատված 30):

- Դասարանի անդամներին խնդրեք մտածել, արդյոք նրանք վկայություն ստացան այն մասին, որ Մորմոնի Գիրքն Աստծո խոսքն է: Ո՞րն է Սուրբ Հոգու դերը հոգևոր բաների մասին վկայություն ստանալու գործում: (Տե՛ս Մորոնի 10.4–5:) Ինչո՞ւ միայն գիտակցության շնորհիվ մենք չենք կարող վկայություն ստանալ: (Տե՛ս 1 Կորնթացիս 2.11; Ալմա 26.21–22; Մորոնի 10.6–7:)

- Մորոնին հորդորում է «չուրանալ Աստծո զորությունը» (Մորոնի 10.7): Ինչպե՞ս ենք մենք երբեմն ուրանում Աստծո զորությունը: (Դասարանի անդամների պատասխաններից առաջ կարող եք կարդալ ստորև տրված մեջբերումը:)

  Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը սովորեցրել է.

  «Փրկիչն ասել է. «Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ . . . ձեր սիրտը չխռովվի և չվախենայ» (Հովհաննես 14.27):

  Ես ասում եմ ձեզ, որ դա կարող է լինել Փրկչի այն պատվիրաններից մեկը, որին անգամ հավատարիմ Վերջին Օրերի Սրբերը իրենց սրտում, ընդհանուր առմամբ, չեն հնազանդվում: Ես մտածում եմ, թե այս հրավերքին մեր դիմադրությունը որքան մեծ ցավ կարող է պատճառել ողորմած Տիրոջ սրտին: Ես կարող եմ ասել ձեզ որպես ծնող, թե որքան մտահոգված կլինեի, եթե զավակներիցս մեկն իր կյանքում լուրջ անախորժություն ունենար, դժբախտ լիներ կամ անհնազանդ: Այնուամենայնիվ ես անսահման դժբախտ կլինեի, եթե զգայի, որ այդ պահերին զավակս չի վստահում ինձ օգնության համար, կամ կարծում է, որ իր կարիքները կարևորություն չեն ներկայացնում ինձ համար, կամ նա ապահովություն չի կարող գտնել ինձ մոտ: Այդ նույն առումով, ես համոզված եմ, որ մեզանից ոչ մեկը չի կարող գնահատել, թե որքան խորն է խոցվում աշխարհի Փրկչի սիրող սիրտը, երբ Նա տեսնում է, որ Իր ժողովուրդը չի վստահում Իր հոգատարությանը կամ ապահով չի զգում Իր ձեռքերում, կամ չի ապավինում Իր պատվիրաններին» (“Come unto Me,” *Ensign,* Apr. 1998, 19):

- Ի՞նչ սովորեցրեց Մորոնին հոգևոր պարգևների մասին: (Տե՛ս Մորոնի 10.8–19:) Ինչո՞ւ է մեզանից յուրաքանչյուրը Աստծուց տարբեր պարգևներ ստանում: (Տե՛ս Վ. և Ու. 46.11–12:)
- Ի՞նչ դուք սովորեցիք և զգացիք, երբ խորհեցիք Մորմոնի Գրքի ուղերձների շուրջ: (Դասարանի անդամներին հրավիրեք մտքում մտածել այս հարցի շուրջ, եթե նրանք չեն ցանկանում բարձրաձայն կիսվել իրենց մտքերով դասարանի հետ:)
- Մորոնիի հորդորը՝ «գալ դեպի Քրիստոսը» ինչպե՞ս է արտացոլում Մորմոնի Գրքի ամբողջ ուղերձը: (Մորոնի 10.30, 32): Այս տարի Մորմոնի Գրքի ուսումնասիրությունն ինչպիսի՞ առանձնահատուկ ուղիներով օգնեց ձեզ գալ դեպի Քրիստոսը:

Եզրափակում

Առաջնորդվելով Սուրբ Հոգով վկայեք դասի ժամանակ քննարկված ճշմարտությունների մասին և հրավիրեք դասարանի անդամներին անել նույնը:

Ուսուցանման լրացուցիչ միտք

Խրախուսելով դասարանի անդամներին շարունակել Մորմոնի Գրքի ուսումնասիրությունը, կարող եք կիսվել հետևյալ խոսքերով.

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Ես կցանկանայի հորդորել յուրաքանչյուր տղամարդու և կնոջ . . . յուրաքանչյուր տղայի և աղջկա, որոնք բավականին մեծ են Մորմոնի Գիրքը հաջորդ տարի կարդալու համար . . . Չկա ավելի կարևոր բան, որ մենք կարող ենք անել, քան ամրացնելը մեր անձնական կյանքում այն համոզմունքը, որ Հիսուսը Քրիստոսն է, Կենդանի Աստծո Կենդանի Որդին . . . Սա է այս նշանավոր և հիանալի գրքի աշխարհ գալու պատճառը» (in *Church News,* 4 May 1996, 2):

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Այս Եկեղեցու ոչ մի անդամ չի կարող հաստատուն կանգնել Աստծո ներկայության մեջ, եթե լրջորեն և ուշադիր չի կարդացել Մորմոնի Գիրքը» (in Conference Report, Oct. 1961, 18):

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Մորմոնի Գիրքն ուսուցանվում է Կիրակնօրյա մեր դպրոցներում և ճեմարաններում չորս տարին մեկ անգամ: Սակայն Եկեղեցու անդամները Մորմոնի Գրքի իրենց անձնական և ընտանեկան ուսումնասիրության համար *չպետք է* առաջնորդվեն չորս տարին մեկ անգամ ուսումնասիրելու սխեմայով: Մենք պետք է կարդանք այդ գրքի էջերն ամեն օր, քանզի իր սկզբունքներով այն ավելի է մոտեցնում մարդուն Աստծուն, քան որևէ այլ գիրք (*History of the Church,* 4:461)» (in Conference Report, Oct. 1988, 3; or *Ensign,* Nov. 1988, 4):

Նախագահ Բենսոնը նաև ասել է. «Վերջին Օրերի Եկեղեցու ցանկացած անդամ պետք է դարձնի այս գրքի ուսումնասիրությունը կյանքի գործ» (in Conference Report, Apr. 1975, 97; or *Ensign,* May 1975, 65):

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02356 83201 2
35683 201